ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՍԱՂՄՈՍԱՑ

Յօրինեալ ՚ի Տ. Միքայէլ վարդապետէ Չամ-
չեանց՝ Յաշակերտութենէ ամենապատիւ
Մխիթարայ Աբբայհօր ։

Տպագրեալ հրամանաւ Տեառն Տն. Ստեփաննոսի [illegible]
Աբբայի Ագոնց, տիտղոսաւորի Արքեպիսկոպոսի ։

Յամի Տն. 1820. և Հայոց. ՌՄԿԹ.

Բաժանեալ ՚ի տասն հատորս ։

ՀԱՏՈՐ. Է.



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ



Տէր ապաւէն եղեր մեր ազգէ մինչև յազգ։

ԿԱՆՈՆ Ժ.

ՍԱՂՄՈՍ ՁԹ.

Յայտարարութի՛ն ա՛ծային մեծութե՛ն ըստ յաւիտենականութե՛ն, և ըստ ամենակարողութեան, եւ և ըստ ողորմութե՛ն, առաջի դնելով և զհանգամանս մարդկային փոքրկութե՛ն՝ ըստ կարճութե՛ն աւուրց, և ըստ անցաւորութե՛ն կենաց, եւ և ըստ թշուառութե՛ն, առ՚ի յորդոր ապաւինելոյ յա՛ծ, և ունելոյ փոյթ արժանաւորելոյ յաւիտենական կենաց. միանգամայն և ցոյց ուրախութե՛ն՝ որ զհետ գայ համբերութե՛ն աւուրց նեղութեան.

Աղօթք ՚ի Մովսէսի յայրն այ:

1 Տէր ապաւէն եղեր մեր յազգէ մինչեւ յազգ. մինչչեւ լե-
րինք հաստատեալ էին, մինչչեւ ստեղծեալ էր երկիր
և աշխարհ տիեզերս: 2 Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու
ես. մի դարձուցաներ զմարդ ՚ի տառապանս. և ասացեր, դար-
ձարուք որդիք մարդկան: 3 Հազար ամ յաչս քո որպէս
օր երեկին՝ որ անց. որպէս պահ մի գիշերոյ. և ամք նոցա ա-
նարգանք եղիցին: 4 Ընդ առաւօտս որպէս դալար անց-
ցէ. ընդ առաւօտս որպէս դալար շառաւիղեսցէ և ծաղկես-
ցէ. ընդ երեկոյս թառամեսցէ՝ չորասցէ և անկցէ: 5 Նուա-
ղեցաք մեք ՚ի բարկութենէ քումմէ, և ՚ի սրտմտութենէ քումմէ
խռովեցաք: 6 Եդեր զմեղս մեր առաջի քո, և զկեանս մեր ՚ի
լոյս երեսաց քոց: 7 Ամենայն աւուրք մեր նուաղեցան. և

ի, է բարկութիւնէ տուտմէ խոտվեցեալ: 8 Յոմանսոկ ասացեալ ոմն ասէ պատասխանի տալ մեզ. ի

սէսի. որպէս դնին այլ ամենայն օրհնութիւնք նորա: Երկրորդ՝ զի 'ի սաղմոսի աստ կեանք մարդոյ չափին եօթանասուն ամ՝ ապա թէ առաւել՝ ութսուն, և որ ինչ աւելի քան զայն՝ ցաւօք և հեծութբ: Իսկ յաւուրս մովսէսի կեանք մարդոյ երկարագոյն ևս տևէին. որպէս յայտ է 'ի նոյն իսկ 'ի մովսէս, որ ութսնամեայ ընտրեցաւ յառաջնորդութն իսրայէլի, և յետ քառասուն ամաց մեռաւ 'ի հասակի ճի. ամաց. նոյնպէս և ահարոն եկաց զամս ճիգ. և քոյր նորա մարիամ ճլ. և յեսու ամս ճժ. որպէս և քաղէբ: Զայս հաստատուն համարեալ բազմաց՝ ասեն, թէ այս սաղմոս ասացաւ 'ի ժամանակս գերութե բաբելացւոց 'ի մովսիսէ ումեմնէ հոգեկիր անձնէ. որոյ աղագաւ կոչի այր այ:

Իսկ դաւիթ անյաղթ ոչ ընդ այս հաւանի և ոչ ընդ այն. այլ իբր զմիջին ճանապարհ կալեալ գրէ այսպս 'ի յառաջաբանութե սաղմոսաց. * 'ի վերայ ձթ սաղ-
,, մոսի ասի թէ մովսէսի է. բայց մովսէս յորժամ
,, պատերազմեցաւ ընդ ամաղեկայ, և յաղթեաց,
,, գրեալ է անդ. շինեաց սեղան տն, և մովսէս կար-
,, դաց, տէր ապաւէն. և յայսմանէ կարծիս առին
,, մովսէսի լեալ սաղմոսդ‖:

Պանծագոյն ևս գրէ աստ լամբրոնացին ըստ անյաղթին, և ասէ. մովսէսի ասի այս սաղմոս. * իբր ոչ
,, եթէ 'ի նմանէ բովանդակ բանքս ասացան, այլ զի
,, նախասկիզբն աղօթիցս է նորա. որպէս ցուցանէ
,, պատմութին... շինեաց մովսէս սեղան տն, և
,, անուանեաց զանուն նորա՝ տր ապաւէն իմ. և ա-
,, սէ. զի ծածուկ ձեռամբ պատերազմի տր ընդ ա-
,, մաղեկայ ազգաց յազգս‖:

'Ի սոյն կարծիս է և մովսէս վարդապետ 'ի մեկն. ժամագր. երես. 205. յասելն. * Նախամարգարէն
,, մովսէս կարդաց զանուն տն այ մերոյ, տէր ապա-
,, ւէն. և ածահայրն դաւիթ առեալ (զայն) դնէր
,, յերգս սաղմոսին իւրոյ... զի ապաւէն եղև բնու-
,, թեա. և 'ի խաւարէ անգիտութե առաջնորդեաց
,, 'ի լոյս ճշմարիտ ածգիտութե՝ յազգացն առաջ-
,, նոց՝ որ 'ի սկզբանէ մինչև 'ի վերջինս՝ որ քոիւ լու-
,, սաւորեցաք, ապաւէն եղեալ մարդասիրապէս ա-

„ բարչական խնամօքն Տ՟րն 'ի վերայ արարածոց իւ-
„ րոց, և միշտ լինի մինչ 'ի կատարած ||:

Վարդան հաստատէ ընդ այլս ոմանս, թէ այս սաղմոս թէպէտ 'ի դաւթայ ասացաւ, բայց քանզի բանք լինին 'ի սմա 'ի սկզբան 'ի վերայ ստեղծման աշխարհի՝ յայն հայելով գրեցաւ ասեն 'ի վերնագրիդ անուն մովսէսի. որպէս թէ եդեալ էր. այս սաղմոս ասացեալ է 'ի դաւթայ՝ հայելով յայն՝ զոր գրեալ է մովսէս այրն Այ 'ի սկիզբն գրոց իւրոց վ՟ա ստեղծման աշխարհի: Յայսոցիկ երկուց և երից կարծեաց՝ որն իցէ ճշմարիտ, ոչ է մեզ համարձակելի հաստատել, դաւիթ անյաղթին և լամբրոնացւոյն երևին հաւաստագոյն:

Մեք 'ի մեկնելն՝ ոչ հայիմք յանձն՝ որ ասաց հոգւոյն Ս՟րբ, այլ յայն որ ասացաւ 'ի հոգւոյն Ս՟բյ. և զանուն յօրինողին 'ի մէջ բերեմք բառիս Տարփարէ: Իսկ ասացեալքն 'ի սաղմոսիս ուղղակի հային 'ի ցուցանել զմեծութ՟ին Այ և զփոքրկութիւն մարդկան, որպէս եդաք 'ի սկզբան:

Զայսոսիկ առաջի Այ դնելով մարգարէին պաղատի առնա, զի խնայեսցէ 'ի մարդիկ՝ հայելով յողորմելի վիճակ նոցա, և մի ըստ արդարութեան իւրում խնդրեսցէ խստիւ վրէժս 'ի նոցանէ: Յայս իմացուած վերածելով ունիմք մեկնել զայս սաղմոս. որոյ բանք թէպէտ և երևին լինել պարզ, բայց ընթացք բանիցն կամ շարադրութ՟ի նոցին յոյժ խրթին և մթին են կարգեալ, ոչ միայն 'ի մերում, այլև 'ի բնագիրն եբր". և յայլ թարգ":

Բ Ա Ն Ի

ՈՒԺ. Տէր ասաւէն եղեր ձեր յաղթէ ինձի յաղթ. ինձէն
լերինք հաստատեալ էին. և ինձէն ապենձեալ էիր
լերինք և սահմանայն փոխեցար։

ՔԺ. Յաւէտեան ինձի յաւէտեան պու՛ ես. ի՛ պարծո-
ցանէր սմարտ՛ ի պատապան. և ատոյնէր՝ պարծո-
ցո՛ս ոչ ես ոչինչ հարցէիւն։

Մ Ե Ն Ո Ւ Ծ Ե Ա Ն

Աբ յաւոք մծբնայ հայրապետ փոփոխուԹբ իւիք
ընԹեռնու զայսոսիկ բանս. ՚ի Ձառն. ԺՂ. յասելն.
* մինչեւ լերինք հաստատեալ էին (և) ստեղծեալ
„ երկիր, և ամենայն տիեզերք. յաւիտենից մինչեւ
„ յաւիտեանս դու ես ‖. և ապա այլոյ կարգաւ
կրկնէ անդ ասելով. * տէր ասպատն եղեր մեր յազ-
„ գ և մինչեւ յազդ. մինչեւ լերինք ստեղծեալ էին.
„ մինչեւ հաստատեալ էիր զերկիր և զամենայն տիե-
„ զերս ‖։ Ա.յլ այս այլայլուԹիւն ոչ ինչ ՚ի նուազ մտաց
բանին։

ԱկզբնաւորուԹիւն սաղմոսիս նախ ակնարկէ ՚ի շնոր-
հակալուԹիւն այ վասն լինելոյ ասպատն ազգին իս-
րայէլի. և երկրորդ՝ ՚ի գովուԹիւն մեծուԹենէ նորա,
ըստ ամենակարողուԹեան՝ ՚ի ստեղծանելն զամենայն.
ըստ յաւիտենականուԹեան՝ ՚ի գոլն յինքեան անփո-
փոխ յաւիտեանս յաւիտենից. և ըստ ողորմուԹեան՝
՚ի խնայելն յորդիս մարդկան, և ՚ի կոչելն զնոսա
առ ինքն։ Ո այսոսիկ ՚ի սկզբան դնելով՝ դիտել մար-
գարէն օրհնել զայծ և օրհնիլ յայ. օրհնել՝ խոս-
տովանելով զմեծուԹիւն նորա, օրհնիլ՝ հաղորդ գտա-
նելով ողորմուԹենէ նորին։ Ւ.ւ նախ շնորհակալ լինե-
լով ասէ։

Տէր ասպատն եղեր ձեր յաղթէ ինձի յաղթ։ Ա.պատն ա-
սէ այն, յոր ՚ի գիմել ուրուք՝ պատապարի ՚ի վտան-

պէ. և եթէ այն ինչ տեղի՝ ասի ապաստան կամ ա-
պաստանարան. (ըստ որոյ յԵբր" դնի աստ Տաճն, որ
զերկուսին ևս նշանակէ.) և թէպէտ այս բառք այս-
ինքն ապաւէն և ապաստան երբեմն ՚ի տեղի միմեանց ՚ի
դոյժ ածին, բայց յատուկ նշանակութիւն նոցա ըստ
այդմ կարէ որոշիլ:

Ա՛յլ յայտ է թէ յատնուլն այդ զորդիսն խորհելի
յիւր ժառանգութի՝ եղև նոցա ապաւէն կամ տեղի
ապաստանի. այսինքն այնպիսի ինչ՝ որով պատսպա-
րեալ լինէին նոքա յն և էին վտանգէ ըստ հոգւոյ և
ըստ մարմնոյ. և այս՝ ՚ի կոչմանէ անտի աբրահամու
մինչև ՚ի լրումն խոստացեալ ժամանակին. վ՚որ որոյ
ասէ ապիկ յազգ՝ այսինքն յազգէ անտի՝ յորմէ ընտ-
րեցաւ աբրահամ՝ մինչև ցազգ վերջին, կամ ՚ի դա-
րէ անտի մինչև ՚ի դարն. յորում էր հեղինակ սաղ-
մոսիս:

Ա՛յս բան ասի և ՚ի բերանոյ մարդկային ազգի առ
հասարակ՝ խօսելով առ քս այսպէս. դու բանդ ՚ամբ
եղեր ապաւէն մեր յազգամայ և այսր. զի ՚ի մեղան-
չել նորա՝ դու եղեր նմա տեղի ապաւինի, նոյնպէս
և այլոց ամենեցուն՝ որք ակնուն էին գալստեան քո:
Կամ ըստ լամբ" դու եղեր ապաւէն յառաջին ազգն
քրիստոնէից, դու և այժմ ապաւէն մեր ես, և ալ-
զին՝ որ գիկնի մեր գան: Եւ առ ՚ի ցուցանել՝ թէ
որ եղև ապաւէն խորհելի և ազգի մարդկան, տէր է
ամենայնի, և կարօղ յամենայնի՝ ՚ի պաշտպանել և
յօգնել նոցա յամենայնի՝ գիւրդ և կամի, առաջի
մատուցանէ զամենակարօղութի նորա ՚ի ստեղծանելն
զամենայն տիեզերս. վ՚որ որոյ յարէ գիկնի և ասէ:

Ինչպէ՞ էիր յերկինս ապեղծեալ էիմ, և ինչպէ՞ ապեղծեալ էիր
գերկիր և զամենայն փեղեցս: Ա՛յս բան առաջի առնէ
զայն՝ զոր աւանդէ մովսէս, թէ ՚ի սկզբան արար
ՅԻ ՚ի երկինս և զերկիր. և ՚ի բաժանել զջուրս յե-
րեսաց երկրի՝ երևեցոյց զհաստատութի լերանց ՚ի
նմա. և յետ այնորիկ կարգ եղ յամենայնի, և բղխե-
ցոյց զբանջար խոտոյ. և ստեղծ զձկունս և զթռչունս
և զայլ ամենայն կենդանիս: Յայս հայելով՝ յետ ա-
սելոյ՝ մինչև լերինք հաստատեալ էին, և մինչև
ստեղծեալ էր գերկիր՝ յաւելու ասել, և զամենայն

տիեզերս. որով տայ իմանալ զբովանդակութիւն ստոր-նայնոցս, որ 'ի հող՝ և որ 'ի ջուր, և որ 'ի յօդս ։

Այլ զլերինս յառաջ յիշէ վ՟ս երից է. մի՝ ըստ լինելոյ նոցա երևելի մասունք երկրի ։ Երկրորդ՝ վ՟ս յարմարութեան բանին. զի որովհետև ապաւէն կոչեաց զա՟ծ՝ 'ի մէջ բերէ զլերինս, որք են տեղի ապաւինելոյ. 'ի ցուցանել՝ թէ 'ի լինել լերանց ապաւէն այլոց՝ ստեղծիչն լերանց լինի ապաւէն ինքեանց ։ Երրորդ՝ վ՟ս իւրն. զի 'ի բաժանիլ ջուրց յառաջ քան զերևիլ երկրի՝ երևեցան լերինք իբրև թէ ծնանելով ։ Մարթ է աստ լերամբք իմանալ և զհրեշտակս, որպէս դնէ լամբ״ ։

Արդ մինչև լեալ էր ասէ այս ամենայն, դու էիր 'ի յաւիտենից, և կաս յաւիտեանս ։ Ուր բառդ մինչև՝ ոչ հայի յայն, զոր ասաց՝ տէր ապաւէն եղեր մեր. զի չև էին. այլ յայն, զոր ունի ասել 'ի յաջորդ համարն, առ 'ի ցուցանել թէ մինչև արարեալ էր ա՟յ զայս ամենայն, ինքն 'ի յաւիտենից էր, և է 'ի յաւիտեան. վ՟ս որոյ ասէ ։

Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես ։ Կամի ասել. որ ինչ է՝ և որ ինչ տեսանի արտաքոյ քո՝ ամենայնն 'ի ժամանակի է. դու միայն ես յանսկիզբն յաւիտենից, և կաս յանվախճան յաւիտեանս ։

Լամբ״ զյաւիտեանն վերածէ յապաւէն լինելն ա՟յ.
* յայս յաւիտեանս ասէ մինչև 'ի գալ հանդերձեալ
,, յաւիտենին ապաւէն է ք՟ս, և քաւիչ ամենեցուն՝
,, որք ապաւինին առ նա. իսկ 'ի գալ այնր յաւիտե-
,, նի՝ ընդունի իւրաքանչիւրոք զոր ինչ աստ ստա-
,, ցաւ՝ եթէ բարի և եթէ չար ‖ ։

Բայց գիտելի է, զի դիտումն մարգարէին ըստ նկարագրին յայլ ինչ հայի աստ. իբր զի 'ի մեծացուցանել իւր զամենակարողութիւն ա՟յ և զյաւիտենականութիւն նորա, դիտէ զամենակարողութիւն դնել դէմ ընդդէմ տկարութեան մարդկան, և զյաւիտենականութիւն նորին՝ անցաւորութեան նոցին, առ 'ի շարժել զնա յողորմութիւն 'ի վերայ մարդկան. և յայս հայելով յարէ զկնի և ասէ ։

Մի՛ դարձուցաներ զմարդ 'ի տառապանս ։ Ուր եթէ տառապանօք իմացեալ լիցին թշուառութիւնք աստի կե-

նայ, մեռ բանին լինի այս. դու որ ամենակարող տէրդ ես, և մեծ յաւիտենական, հայելով 'ի տկարութիւն և յանցաւորութիւն մարդկան, և տեսանելով զպակասութիւն նոցա և զխաղանս նոցին, մի 'ի բաց դարձուցանէր զնոսա 'ի քէն, և մի մատներ 'ի թշուառութիւնս՝ որոց արժանաւորին. այլ խնայեա՛ 'ի նոսա ։

Իսկ եթէ խնայեալ լիցին թշուառութեանց հանդերձեալ կենաց, կամի ասել զի լամբ". մի զտառապեալս յաշխարհի աստ՝ մատներ 'ի տառապանս դժոխոց 'ի հանդերձեալն ։

Բարոյապէս առեալ՝ կամի ասել. 'ի դառնալ մեղաւորին առ քեզ, մի 'ի բաց դարձուցաներ զնա, և մի թողուր մնալ նմա 'ի տառապանս մեղաց, և մաշիլ 'ի նմին. քանզի ողորմած ես. և ոչ խօթէր՝ հայի 'ի կռուեմն յայն, որով առ ինքն ձգէ մեծ զմարդիկ՝ երբեմն 'ի ներքուստ խօսելով, և երբեմն արտաքուստ յորդորելով որպէս առ նոյն. և ըստ այսմ կամի ասել. խնայեա՛ տէր յորդիս մարդկան, որպէս և կամիս իսկ խնայել. որոյ մեծ բազմապատիկ օրինակս կուտեցեր զնոսա առ քեզ՝ առաջի դնելով նոցա զդարձ նոցին, և ցուցանելով՝ թէ քանի բարի է նոցա յարիլ 'ի քեզ՝ առ 'ի գտանել հանգիստ անձանց իւրեանց ։

Օրյստնիկ եդեալ մարգարէին 'ի ցուցանել զմեծութիւն մեծ ըստ ամենակարողութեան, ըստ յաւիտենականութեան և ըստ ողորմութեան, առաջի մատուցանէ այժմ զփոքրկութիւն մարդկան ըստ սակաւութեան ամաց, և ըստ տկարութեան կամ ըստ անցաւորութեան կենաց, և ըստ թշուառութեան գոլոյ իւրեանց. որպէս եդաք 'ի վերոյ. և նախ կամելով խօսել զսակաւութիւն աւուրց նոցա՝ համեմատէ զայն յաւիտենականութեան մեծ, և ասէ ։

Գ. Հազար ամ յաչս քո՝ որպէս օր երեկին՝ զի անց. որպէս պահ մի գիշերոյ. և ամք նոցա անարգութեանք եղիցին ։

Այս բան և յաջորդք սորա այս նշանակելոյ մեր այժմ՝ կարգին 'ի շարժել զմեծ 'ի գութ 'ի վերայ մարդ-

կան՝ հայելով ի սակաւօրեայ և յանցաւոր կենա-
նոցա. որպէս ասաց և ի նախընթաց սաղ· ի հա-
մարն· 44· և յայլ սաղմոս· այսմիջոց է լը· 5· և 6·
և ձգ· 14-- 17· ևն· Օ այս և ի դիս այլոց մար-
գարէից տեսանելով. զի ի կամել նոցա ի գոհ շար-
ժել զնա՝ զայս մատուցանել ին առաքն· որպէս առ-
նէր և յոբ· է· 6-- 18· և ե· 5· ևն· Արդ այս սա-
կաւութիւն ամաց մարդկան թէպէտ և յայտնի է,
բայց պայծառ ևս տեսանի ի համեմատել զայն ընդ
յաւիտենականութիւնն այ, վասն որոյ և մարգարէս
ի նոյն հայելով դնէ զայս՝ յասելն·

Ցաղաք ամ յաչս քո որպէս օր երեկի՛ անց· որպէս պահ
մ գիշերոյ· Կամի ասել· Հազար ամք կենաց որք առ-
մարդիկ մեծ երևին և երկար, եթէ համեմատեսցին
առ նա՛ւ կամ առ յաւիտենականութիւնն այ, են իբրև
երեկեան օր, որ ոչ ևս է՝ այլ անցեալ է· կամ է որ-
պէս մի մասն յերից մասանց գիշերոյ· կամ ըստ երբ՞
յետին պահ գիշերոյ, որ անցեալ գոլով՝ ոչ ևս է·
որ և ասէ· քանի և քաղցրագոյն իցեն ամք կենաց մարդ-
կան՝ թէ և հազարաւորք և բիւրաւորք ևս իցեն՝ են
իբրև ոչինչ յայս այ· և այս ըստ երկուց·

Այ՝ ի կողմանէ մերմէ մտածելով՝ ի համեմատել
մեր զաւուրսն ամաց մերոց ընդ աւուրսն յաւի-
տենականութեան· իբր զի աւուրսն ամաց մերոց ու-
նելով զսկիզբն և զվատաբած՝ քանի և իցէ, համե-
մատութիւն այնր աւուրսն՝ որոյ ոչ սկիզբն է և ոչ
կատարած՝ որպիսի է յաւիտենականութիւնն, համա-
րեալ լինի անարգ և ոչինչ· մանաւանդ զի անցեալն
ոչ ևս է, և որ ապագայն է՝ ոչ գոյ· զի միայն ի
սուրբ ներկայն հոլովին կեանք մեր·

Այրկրորդ՝ ի կողմանէ այ մտածելով· իբր զի գոլով
նա յինքեան անփոփոխ՝ յաւիտենականութեն նորա է
այնպիսի իմն, որ յինքեան անբաժանելի գոլով՝ պա-
րագրել զամենայն աւուրսն ըստ ամենայն բանի և
ըստ ամենայն տարածութեան· և որ մեզ երևի այսչափ
և այնչափ բիւրաւոր ամք տևել, յաչս նորա ի ներ-
կայ վայրկեան մի՝ եթէ անցեալ իցէ և եթէ ապա-
գայ· զի ամենայն աւուրսն զիարդ և իցեն, ա-
ռաջի նորա վայրկենիւ չափին, իսկ ինքն կայ յանան-

ցանելի, յանյաջորդելի և յանփոփոխելի գոլ իւր։
Յայս իսկ մարգարէք զապագայ իրսն՝ հայելով 'ի
տևողութիւն նոցա առաջի ա՟յ՝ իբրև զներկայ դնէին.
զայն ինչ՝ որ լինելոցն էր յետ հազարաւոր ամաց՝ ա-
ւասիկ հասեալ է ասէին։ Որպէս և առաքեալքն ըղ-
ձալուստ տ՟ն մերձ դնէին և իբր հասեալ քարոզէին.
զի թէպէտ առ մեզ հայելով՝ այլ ևս հազարաւոր
ամք էին պիտոյ, բայց առ ա՟ծ հայելով՝ այն ամք
իբր օր մի են։ Նյամ ունիմք օրինակ զամս կենացն
ադամայ. մահ նորա հասանելոց էր յետ ինն հարիւր
ամաց. իսկ ա՟ծ ասաց, 'ի նմին աւուր մեռանիլ. ո-
րով եցոյց թէ այն ինն հարիւր ամք իբրև մի օր են
առաջի իւր. սոյնպէս և այլ ամենայն ամք քանի և
բազում իցեն՝ իբրև զպահ մի գիշերոյ համարեալ
են առաջի նորա, և իբրև ոչինչ։ Նա ընդ հակա-
ռակն խորհելով՝ որպէս հազար ամս իբրև զմի օր
համարի առաջի ա՟յ, սոյնպէս և մի օր տ՟ն՝ իբրև ըզ-
հազար ամ համարի առ մեզ. որպէս գրէ սարգիս
շնորհալի. 'ի մեկն. բ. պետ. գ. 8. ճառ. ե. յա-
ւելն. * մի օրն առ ա՟յ սակս իւրոյ յաւէժ կենդա-
,, նութեան՝ առ մարդկան իբրև զհազար ամ է. և
,, առ մարդկան հազար ամս առ ա՟յ իբրև զմի օր ‖։
Նա 'ի մեկն. յակ. ե. 8. ճառ. ժ. ասէ. * հազար
,, ամս՝ առ ա՟յ իբրև զմի օր է. և մի օրն իբրև զհա-
,, զար ամ ‖։

Սբ յակոբ մծբնայ հայրապետ 'ի ճառն. բ. զայս
հազարաւոր ամս 'ի վեց դարս վերածելով՝ յօրն յա-
ւիտենականութեան բովանդակէ. և գրէ այսպէս.
* զի այսպէս գրէ դաւիթ 'ի սաղմոսին ութսուն և
,, իններորդի. հազար ամ յաչս տ՟ն իբրև զօր երէ-
,, կի, զի անցանէ. զի և վարդապետք մեր իմաս-
,, տունք այսպէս ասեն՝ թէ 'ի նմանութիւն վեց ա-
,, ւուր եղեալ է զաշխարհս ա՟յ. և 'ի կատարածի
,, վեց հազար ամին լուծանի աշխարհս, և լինի շա-
,, բաթն ա՟յ 'ի նմանութիւն աւուրց շաբաթու՝ որ է
,, զկնի վեց աւուր. որպէս մեկնեաց և եցոյց մեզ
,, փրկիչն մեր վասն աւուրն շաբաթու ասելով. յա-
,, ղօթս կացէք, զի մի լիցի փախուստ 'ի ձմերայնի
,, և մի յաւուր շաբաթու ‖։ Զայս ասէ տ՟րն ոչ յիրն

հայելով՝ այլ 'ի համարումն ։

Ոմանք 'ի րաբունեաց 'ի վերայ այսր ամի զայլ իմն մտացածին բան խորհեցան՝ համարելով՝ թէ մարդարէն զայս ասացեալ իցէ վասն ադամայ. իբր թէ հազար ամ կացեալ իցէ նա 'ի դրախտին, և ապա անկեալ իցէ անտի, և յետ այնորիկ կեցեալ իցէ զամս ինն հարիւր երեսուն ։ Բայց այս կարծիք 'ի կեղծեաց համարի է. զի բանն աստ ոչ կարէ հայիլ յայդպիսի մտացածին տեսութիւն, այլ 'ի յայտնի ճշմարտութիւն՝ այսինքն թէ հազարաւոր ամք իբրև զմի օր են առաջի տյ. և զի այսպիսի են տևողութիւնք ամաց մարդկան, ուրեմն անարգ իմն են. և առ այս յարէ և ասէ ։

ԱՄՔ ՆՈՑԱ ԱՆԱՐԳՈՒԹԻՒՆ ԵՂԻՑԻՆ ։ Որպէս թէ ասէր. եթէ հազար ամք իբրև օր մի երեկեան են առաջի քո, ապա քանի ևս անարգ իցեն սակաւաւոր ամք նոցա՝ այսինքն ութսնամեայ ժամանակ նոցա, ևս և հարիւրամեայն ։ Արդ է աստ անարգութիւն իմանալ և զթշուառութիւն. յոր միտ՝ կամի ասել. սակաւ են աւուրք կենաց մարդկան. և այն՝ ոչ եթէ երջանկութեամբ, այլ տառապանօք և թշուառութեամբ. յորս եթէ համբերեսցէ՝ 'ի հազարամեայ այսինքն յանանց երանութիւն յաւիտենական կենաց ժամանեսցէ. իսկ եթէ անհամբեր գտցի, և առանց ցաւոց կամիցի կեալ՝ զրկեսցի. * Եօթանասուն ամ է կար-
,, գեալ կենաց քոց (ասէ եզնակ կողբացի կամ նե-
,, ղոս 'ի խրատսն.) և զայլն ցաւօք և հեծութեամբ.
,, դու զհազարամեայ օրն առանց ցաւոց կամիս ստա-
,, նալ ‖ ։

Բարոյապէս առեալ՝ այս բան ցուցանէ՝ թէ որք յայսպիսի ունայն և անցաւոր կեանս ոչ աշխատին վասն յաւիտենական կենաց, ամենայն ամք նոցա՝ յորս կեցին և յորս գործեցին, անարգ և անպիտան համարեսցին. թող զայն՝ զի իբրև ստուեր անցին. և իբրև երազ զարթուցելոց ցնդեսցին ։ Եւ զայս այլով իմն նմանութեամբ առաջի առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով ։

Ի. Բնդ առաւօտս որպէս գալոյն բառնային. ընդ առաւօտս որպէս գալոյն ղառաջնոյն և ծաղիկնոյն. ընդ երեկոյս խոտանիցին՝ լորասցին և անիցին.

Օ կեանս մարդոյ նմանեցուցանէ գալոյս, այսինքն փափուկ խոտոյ. իսկ զանցաւորութիւն կենաց և սմաց նորա՝ առուր միւյ անցելոյ, որպէս եդ՝ Ի վեղոյ. և ըստ կարգի խօսելով՝ զժամանակ տղայութեան և մանկութեան նմանեցուցանէ առաւօտու, ընդ նմին և զժամանակ պատանեկութեան և երիտասարդութեան. իսկ զժամանակ ծերութեան և զառամութեան՝ նմանեցուցանէ երեկոյի, որում յաջորդէ խաւար մահու, առ Ի ցուցանել՝ թէ քանի անարգ և մնոտի է կեանք մարդոյ. ուստի ասէ.

Բնդ առաւօտս որպէս գալոյն բառնային. ընդ առաւօտս որպէս գալոյն ղառաջնոյն և ծաղիկնոյն. ընդ երեկոյս խոտանիցին՝ լորասցին և անիցին. Այսի ասէ. կ՚ելանել մարդկան Ի խաւարէ սրգանդի Ի լոյս, այսինքն Ի ծնանիլ մարդկան՝ կեանք նոցա լինիցի իբրև զմիօրեայ գալոյս. զի յառաւօտու տղայութիւն բուսցին և մնանիցին. յառաւօտու մանկութիւն ածիսցին. և եթէ հասցին Ի պատանեկութիւն՝ յառաւօտու անդ պատանեկութիւն որպէս գալոյն զուարճացեալ երևեսցին. նոյնպէս և յառաւօտու երիտասարդութիւն ծաղկեսցին բնական զօրութիւք, և արտաքին իրօք, Ի ծաղկիլ մօրուաց կ՚երևեսս, Ի զօրանալ ոգւոց Ի ջիղսն, եւ. Եւս և կ՚երևեցուցանել նոցա զինքեանս գործել իբր Ի ցերեկի զգործս մարդկային կենաց Ի վաստակիլն և Ի շահիլն. Նաև Ի պարծիլն իբր ոչ մեռանիցս. Իսկ Ի հասանել կ՚երեկոյ ծերութեան՝ թաթախմեսցին՝ կորուսանելով զոյժ երիտասարդութեան. և Ի ժամանել Ի զառամութեան՝ լորացին, այսինքն խաւար ցամաքեսցին Ի զօրութենէ. և Ի գալ մահու՝ անկցին յայն կողմն յոր հակեալ կացին Ի կեանս իւրեանց. Օ՚ի ծառն յոր կողմն հակի յաձէն՝ անկ Ի հիւսիս և անկ Ի հարաւ յորժամ հատանի, յայն կողմն անկանի, և անդ մնայ. որպէս ասէ սաղմոսն. Ջես զայսմանէ և Ի դէպ յորայ. Ը. 9, և ԺԲ. 1—3, և սաղ. ՃԽԶ. 5, և ելայի. Խ. 6—8.

խորհրդաբար՝ այս բան կարէ հայիլ յաղդն հրէից. որք յառաւօտու՝ այսինքն ի սկզբան կոչման իւրեանց իբրև գալաբի բուսան յաբրահամէ. և ի ծագմանն առաւօտու արեգականն արդարութեան՝ որպէս գալաբի զուարճացան վարդապետութիւնք նորա, և ծաղկեցան աքանչելեաք նորին. ոչ զի ինքեանք զուարճացան և ծաղկեին, այլ զի ի նոսա կատարեցաւ այս. և զի հասեալ էին ինքեանք յերեկոյ, ի մանել ա րեգականն յերկինս, այսինքն ի համբառնալ նորա՝ Թարշամեցան, չորացան, և անկան ի հաւատոց և ի փտաց անտի՝ զոր ունէին. և զայսմանէ խօսի ի յաջորդսդ.

Բարբոյակս, յառաւօտու անմեղութիւն վարուց՝ իբրև գալաբի երեկին մարդիկ զուարճանան ի հոգիս, և ծաղկին առաքինութիւք. ընդ երեկոյս փոքանութեց Թարշամին. և եթէ տեղի տացեն և հաւանեսցին, չորանան. և եթէ զառամեսցին, այսինքն անապաշաւ մեռցեն՝ անկին ի դատաստարութիւն. Վարձեալ յառաւօտու յաջողութիւն զուարճանան մարդիկ և մեծամեծ գործեն. իսկ յերեկոյի ձախորդութիւն Թարշամին և երբեմն չորանան. Օ այս եղեալ մարդաբէին՝ ի մէջ բերէ այժմ և զայն՝ Թէ ուստի եղև մարդկան այսպիսուի Թշուառ կենաց վիճակիւ. վա

որդ ասէ.

Ա. Ա ուաղեցաք ևս ի բարկութենէ քումէ. և ի սրտմտութենէ քումէ խռովեցաք.

Բ. Եդեր զանգղ մեր առաջի քո. և զկեանս մեր ի լոյս երեսաց քոց.

Գ. Զի ամենայն աւուրք մեր նուազեցան. և ի բարկութենէ քումէ խռովեցաք.

Ընդայս է ի գրոց՝ Թէ ի սկզբան անդ չարսիսի երա նական կեանս եգ ած զմարդն. ոչ մահ տերկը նմա, և ոչ կիրք տառապեցուցանէր. որովհետև տեղութիւն մահու և բռնութիւն կրից չէր մեղաց զօրացաւ. բայց ի բարկացուցանել մարդոյ զարարիչ իւր՝ կորոյս զբանութենէն, յոր վայելէր. և եգեալ զիւռովութենէն՝

զոր ոչ ուներ, զկենցաւ յանմահական կենաց, և զբաւեցոյց զինքն և զոր-
դիս իւր ընդ դատապարտութիւնէ։ Այս հայելով ասէ
մարգարէն։

Ցուսացէք ոչ ի բարիս զոհել. և ի սպառնալիս
զոհել խոովեցար։ Այսինքն՝ ի բարկանալդ ի վերայ
մեր՝ նուազեցաք այսինքն պակասեցաք և զրկեցաք
ի սկզբնական արդարութենէ և յանմահական կենաց.
և ապա ի տալ քո մեզ զանէծս՝ սրտմտութիւնէ խոո-
վեցաք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. զի ըստ հոգւոյ
անդադար խռովայոյզ խորհուրդք և կիրք յարուցեալ
տագնապեն զմեզ. և ըստ մարմնոյ անկարգութիւնք
հիւծոյ այլայլեալ վըշտոլեն, և ի մահ տրամադրեն
զկեանս մեր։ Ընդ ասա և զմեղսն՝ որ եղև պատ-
ճառ բարկանալոյն այդ՝ և ասէ։

Եդէր զմեղս մեր առաջի քո. և զկեանս մեր ի լոյս երեսաց
քո։ Այսինքն՝ զմեղս մեր ասէ մեր, զի ի մեղանչել ա-
դամայ՝ մեք ևս մեղաք ընդ նմա. ըստ որում գրէ ա-
ռաքեալն Թէ. * ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ
,, մտին. և ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն
,, մարդիկ տարածեցաւ մահ. որով ամենեքեան մեղան ‖.
(Հռոմ. Ե. 12։) և Թէ. * ադամաւն ամենեքեան մե-
,, ռանին ‖. (Ա. Կոր. ԺԵ. 22։) Այս մեղս մեր
ասէ ոչ կամեցար ծածկել յերեսաց քոց, այլ եդեր
առաջի քո։ Նմա յաւելու և սա ասել։

Զի- կենաւն ոչ ի լոյս երեսաց քոց։ Կենօք իմացեալ
լինի աստ կեանքն այն՝ զոր ստացաւ ադամ՝ ի մեղան-
չելն. այս և մեր ասէ, զի և մեր կեանք ի նոյն վի-
ճակեցաւ։ Զայսպիսի կեանս մեր ասէ եդեր ի լոյս
երեսաց քոց. այսինքն եդեր առաջի ամենատեսչաւ
տեսութենէ քո, ի քննել և ի դատել, և ըստ արժա-
նեաց պատուհասել։

Ընդ ի տեսանելն այ զկեանս մարդկան՝ եկեալ զայն
օր քան զօր վատթարացեալ. յորմէ տաղտկացեալ՝
օր քան զօր նուազեցոյց զնոսին. զի յադամայ մինչև
ցնոյ տևէին կեանք մարդկան մօտ ի հազար ամ.
յետ նոյի՝ մօտ ի ջրոս հարիւր ամ. և յաւուրցն աբ-
րահամու ցաւուրս մուկեսի՝ մօտ ի հարիւր երեսուն
ամ՝ ի հարիւր քսան ամ. և յաւուրց անտի մինչև ի

պաւիլէ՝ մօտ՝ի հարիւր ամ: Յայս հայելովասկ:
Ա՚ղեռնայն աւուրս մեր նուաղեցան. և՝ է բարկութիւն տումն
խռովեցեալ: Ա՚յսինքն այն ամենայն աւուրք մեր՝ որք
ձգէին յերկար ժամանակ, հետ զհետէ նուաղեցան
այսինքն պակասեցան, մինչև հասին յեօթանասուն
կամ, յուեթասուն ամ, և փոքը մի և աւելի մօտ՝ի
հարիւր ամ, զորմէ խօսի՝ի յաջորդ համարսդ: Այս
սորա պատճառն է ասէ. զի՝ի բարկանալ քո՝ տի-
բեաց՝ի վերայ մեր խռովութիւն ըստ հոգւոյ և ըստ
մարմնոյ. յորոց պատճառի նուաղութիւն կենաց:
Ա՚յս բանք որք դնին յերեսին համարսդ՝ Թէպէտև
հայելով՝ի մեղս ադամայ և որդւոց նորա մեկնեցան,
բայց մեկնին և ըստ այլ կարգի՝ երիւք. մի՝ հայե-
լով յորդիսն իսրայէլի՝ի ձանապարհորդել նոցա ընդ
անապատն. յորում բարկութիւնքն այ նուաղեցան նոքա
և խռովեցան. զի զմեղս նոցա և զմոլի կեանս նոցա
եդ ած առաջի իւր, և պէսպէս պատժովք պատու-
հասեաց. որով և աւուրք նոցա և նուաղեցան: Երկ-
րորդ՝ հայելով դարձեալ՝ի նոյն որդիսն իսրայէլի՝ի
Թշուառանալ նոցա՝ի ժամանակի անդ՝ յորում գե-
րեցան՝ի բաբելոն. ուր այս ամենայն անցք անցին
ընդ նոսա: Երրորդ՝ հայելով՝ի կեանս մարդկան.
ըստ որոյ ամենեքին կարեն ասել՝ի բարկանալ քո ած
՝ի վր՚ մեր նուաղեցաք և Թշուառացաք, և յառաքելդ
՝ի վր՚ մեր զբռտմտուն քո այսինքն զսպառնալիս կիր
պատիժս, խռովեցաք. և Թէպէտ դու ոչ վ՚ս պատ-
ժեալ արարեր զմեզ, բայց մեք մեղօք մերովք շար-
ժեցաք զքեզ՝ի պատժել զմեզ. զի մեղաք առաջի
քո. և փոխանակ ապաշխարելոյ առաւել և յաձա-
խեցաք՝ի նոյն. և այնչափ զայրացուցաք զքեզ, մին-
չև ոչ և ս կամեցար անտես առնել զմեղս մեր, այլ
եդեր առաջի քո, և՝ի քննութիւն մատուցեր զամե-
նայն զկեանս մեր. որով և պարտաւոր գտեր զմեզ
նաև այնց մեղաց՝ զորս մեք ոչ յիշեաք: Եւ ահա ա-
մենայն աւուրք մեր՝ յոր վաստակեցաք, նուաղեցան՝
այսինքն պակասեցան և դատարկ եղեն՝ի բարեաց:
Ա՚յս կետին բան՝ զոր ասէ, ամենայն աւուրք մեր
նուաղեցան ևն, այլազգ և ս մեկնի, և այն՝ ըստ փու-
թով անցանելոյ. որպէս Թէ ասէր. աւուրք մեր ոչ

ևն հաստատուն՝ այլ մնասի. զի իբրև անիւ հոլովի-
եան և մեկնեցան, և ամենայն վաստակք մեր զուր
վաստակեցաք ի նոսին, իբրև ծուխ ցնդեցան. և
ոչինչ մնաց մեզ անտի. քանզի իբրև ստուեր ունայ-
նացան, կամ իբրև երազ ցրուեցան. և մեք ի բար-
կութիւնդ քումմէ խռովեցաք և խռովիմք, կամ ի բար-
կանալ քո ի վերայ մեր՝ պակասալ գտանիմք ի բա-
րեաց, և նուազիմք ի կենաց. ահա զայսմանէ և ի
յաջորդ համարն։

Այս նուազութիւնէ ստուերոյ հոյի և ի սակաւ տեւողու-
թիւն կենաց. զի թէպէտ կեանք մարդոյ որպէս յայտ-
նի ասացեալ մարգարէին ի յետագայ՝ կարի տեւել
տեւելի քան զերեսուն ամ, բայց սակաւուց է այդ.
քանզի բազումք ի տղայութիւնէ մեռանին, բազումք
ևս ի մանկութենէ. մինչև եթէ հնար էր ասենայն
ոսկերս մարդկան մեռելոց որոնել, և ի կրճա գնել
զգալամանայց և զսակաւամնից, հազարապատիկ ծան-
րանայր սակաւօրեայցն քան զազմօրեայց։

Վասնիք ի հասակի երիտասարդութենէ կանգնեցին
ի միտս իւրեանց չքնաղ իմն մեքենայս՝ դրծել զմե-
ծամեծս, տիրել, փառաւորիլ ևն. բայց նուազեցան
խորհուրդք նոցա, և պակասեցան. և բազումք ի
նոցանէ անարգ իրօք անակնոյնելի մեռան։ վասքիոս
սպարապետ՝ բարձումս խորհէր. այլ յիմնել զմայ-
մի ընդ կամեին՝ խեղդեցաւ։ Փուշ մի ձկան սպան
զարկուածնոյն հանիմսեցի։ Հատ մի խաղողոյ մա-
հացոյց զանակրնդիս վիպասան։ Հանէ մի ըմպել
ընդ ջրոյ, զրկեաց ի կենաց զարբիանոս դ։ Իսպա-
թաճան մի սպան՝ կորոյս զլուկիոս լաբիենան։ Վա-
ղիէ հասեալ յինքեանէն՝ համաքիեն ի մեծութենէ
վայելել. այլ ստուեր նոցա նուազեցան. որպէս յայտ
ի ի պատմէ կայսերաց և թագաւորաց. նաև քա-
հանայապետք իսկ ըստ նոցին մեկնեցան։ Ի հաշուել
մեր զամանակն քառասնեակին քահանայապետս՝ որք
ոչ կեցին ի քահանայապետութենէ զամ մի ոգւոյն։
Զամանակն և զքսանեակին քահանայապետս, որք
ոչ աւելցին զամիս վեց։ Որպէս իբրև արեգ ահաւոյ էին,
և ի սահս ստուեր խաւարեցան. հնձեցին սոքա,
զի այլք զարմիջեն, և ծանիցեն զնուազութիւն ա-

ուրոյ իբրեանց, և ի նուագարանէն անդ փութասցին զառաւելութեն վարձուց դանձել. Այս օրոյ յաւուր նստելոյ նոր քահանայապետի՝ վառեն առաջի աչաց նորա վառ լինչ, առելով. այսպէս անցանեն ամենայն փառք աշխարհի.

Վանիք յընթանալ զաւտի կեանս յերջանիկ ընթացս, կարծելին՝ թէ օրւոյն յառաջանան՝ այնչափ երջանկանան, որպէս թէ առաւելեալ լինելով ի կեանս քան նուագելով ի կենաց. բայց յայտ է թէ որչափ յառաջեցին ի կեանս՝ այնչափ մերձենան ի կատարած կենաց. * որչափ արևն բարձրանայ՝ այնչափ երեկին մերձենայ ‖. Օ ի ընդ ծնանիլ մարդոյ՝ որչափ աւուրքն մեծանայ, այնչափ աւուրքն նուազանայ. և ի կարծելն հեռանալ ի մահուանէ՝ ի մահ մերձենայ. զի աւուրքն նորա պակասին, և կեանք նորին սպառին.

Լամբ՝ հայելով յայն առացուած, եդեր զկեանս մեր ի լոյս երեսաց քոց, այլազգ մեհենի զայս բան. զի լուասով երեսացն այ իմանայ զքո. և ասէ, թէ հայրն երկնաւոր եդ զկեանս մեր ի քո, որ և ասէր քեռ կամեցաւ կեցուցանել զմեզ, որք մեռեալ էաք մեղաց ողջոյց. և ակնարկմամբ հաստատել այնմ կենդանի, թէպէտ և աստ կեանք մեր նուազին, և ի նաց, թէպէտ և աստ կեանք մեր նուազին, և ի խաւարտեն մարին, և ժամանակք մեր յունայնութեն ընթանան. և այն ի սակաւ ամս. զբազմ խօսի մարգարէն ի յաջորդ հատուն, առելով.

Ը. Ամանակ ամաց մերոց անթափանց երեսս ասրդի. և ի ամաց մերոց ի նոսա եօթանասուն ամ.

Ը. Պա թէ առասել եւս՝ ուրեսան ամ. որոնք առելի ի նոսա զշեն՝ յաւօթ և հիճասութեն.

Լ.յս օրինակ ասրդի (որ է մամուկ) բաւուրք բազասրբ զժամանակ կենաց մերոց. քանզի երեք ինչ տեսանի ի ասրդն. այսինքն է զրծն՝ զոր առնէ, վասն՝ զոր բնութեն դիտէ, և հոդն՝ զոր ունի. Ծառծն է ամենևին տկար և անարդ. հիւսուած ասացեալ՝ (այն է էօրիամձեք) որ փոքու իւրք եղծանի, մանաւանդ աւելածութեն. և չէ իմիք պետանացու.

Այսպիսեան նորա է օրսալ զնանձն և զնձիս, և այն՝ պատառմամբ ոստայնին։ Հոգ նորա է ծանը և անհը-նարին. զի յետ բաղում տառապանաց հիւանդոյ զոս-տանն՝ պաշարի ի հոգ, և գաղեալ ի խորչ իւր սպա-սէ օրսոյն տագնապաւոր. և յառաւելութիւն հոգոյն զի ի թեւիցն՝ զորս ձգէ, առնու ի մատին նմանս կարթընդիւց ձկնորսաց. զի յըմբռնիլ օրսոյ, և ի շարժիլ ոստայնի՝ զգայցէ և դիմասցէ ի վերայ նորին։ Յսպիսիք են աշա և կեանք մարդկան ի բնական կարգի մտածեալ. զի գործք նոցա, յորս պատային՝ եթէ փառք իցեն և եթէ համաբաւք, եթէ մեծութիք իցեն և եթէ հեշտութիք, անարգ իմն են և անպէ-տան. և փոքու իւիք պատառեալ պակասին. և ի հասանել մահու՝ իբր աւերածութիք ընկնին. կամ մա-նաւանդ ի բարկանալ ոյ՝ բարկութեն նորա իբրև ա-ւել եղծանէ զնոսա ի միջոյ, յոր միտ ասաց մարգա-բէն ի վերոյ. * ի բարկութեն քումմէ խոտորեցաք ‖։ Յոկ վախճան նոցա է որսալ զնանձն աշխարհայինն ի բաց, այսինքն զինչս և զմեծութիս, կամ զփառս և զպատիս, կամ զբերկրութեն անցաւոր և զհանգիստ սուտ ես։ Յայլ հոգ նոցա է անհնարին, որ զբեղէ խեղդէ զնոսա հանապազ, չունելով երբէք դադար, ոչ այնչափ ի տրտմիլն զանցելոց, և ի տագնապիլն գներկայից, որչափ ի վաթանիլն զապագայից, թէ զինչ լինիցի, զիարդ լինիցի, երբ լինիցի ես. և կի-նչ արասցեն, զիարդ գործեսցեն ես. գիտելով՝ թէ այս ամենայն անցաւոր են և ունայն. քանզի և ինքեանք յետ սակաւ ժամանակաց ունին վերջանալ։

Ձայս ամենայն հայելով ասէ.

Յամանակ ամոյ ընդ՝ անցեալ ասէ. Յառաջ ժամանակ՝ կարէ առեալ լինել ասա ի թանձրացեալն, և ի վերացեալն. ի թանձրացեալն առեալ՝ նշանա-կի այնու կեանք մարդոյ ժամանակաւ փակեալ. կամ որ նոյն է ժամանակաւոր կեանք մարդոյ, որ գնայ աստուածի ի տարի մինչև սպառեսցի. Այլն այս կեանք մեր ասէ, և հանգոյն կենաց սարդի. զի որպէս կեանք սարդի պատային ի գործել զանարգ ոստայն՝ առ ի որսալոյ զնանձս, և չունի դադար հանգստեան, այլ պէս է և ժամանակ ամոյ մերոյ, և կեանք մեր ի

նման, ՚ի պատահել մեր ՚ի գործս անցաւորս և յաւ-
րաս վաստակեաս։

Իսկ ըստ այսմ բառդ անդրադարձ՝ զոր յաւելու, լերկու-
ակնարկէ. մի՝ յանցաւորութեանն կենաց մերոց. իբր զի
կեանք մեր և ժամանակ սակաւ մերոց անդադար և
միշտ յանցանն և ՚ի հոսմանն են ըստ բովակից և ըստ
ժամուց, ըստ աւուրց և ըստ ամաց, ըստ հասակի
և ըստ վիճակի. զորմէ երկար գրեալ եմք՚՚. և յայս
միտ ՚ի ձեռն՚՚ արար՚՚ դնի, Հոռմոսաւ, կամ դիւ-
բասաց և դիւբերձական, յասելն. * ամէն մեր իբրև
զոստայն սարդի հոռմոսաւք են՚՚. յոր միտ այս նմա-
նութեան ոստայնի սարդին ՚ի մէջ բերի ըստ դիւբեր-
ձանելի գոլոյ և ըստ պահանջոյ. ուստի յոստոյնն
դնի պահանջել՝ միայնակեալ ՚ի սոյն գիտէն բան նա-
խընթաց համբոյն, յասելն. * պահանջան ամէն
մեր որպէս զոստոյնս սարդից՚՚։

Իսկ երկրորդ բառդ անդրադարձ՝ ակնարկէ յանհանգիստ
սիրել կենաց մերոց. կամ յոմնինն զՀոգս և ՚ի չա-
նելն զդադար՝ այսինքն զՀանգիստ ՚ի ըստ
Եօվէ՚՚ և յատ՚՚ և եհեղովսէ՚՚ դնի Հոգալ կամ ՚ի Հոգս
կալ, յասելն. * ամէն մեր որպէս զսարդ ՚ի Հոգս են՚՚.
(կամ ՚ի լինել մտայղդ). որով և խորհուրդք սրտից
մերոց ՚ի միասակաւս ծիւրալ՝ ոչ թոյլ ասեն մեզ՝ զա-
րեին բարւոք տեսանել, յոր միտ ասէ յուսաւորչին մեր
՚ի յանձնառատասեան իւր. (Հաւ. իւս.) * մնացեալս
՚՚ կան խորհուրդք երկրաւորեաց ոչ թոյլատուցանեն
՚՚ տեսանել զատաշաձն. այլ ՚ի Հոգս միասակաս
՚՚ ծիւին. յորոց բարի ինչ ոչ յատաջագայի, այլ չար՚՚։
Իսկ եթէ բառդ ժամանակ առեալ լիցի ՚ի վերացեալն
փոխանակ խնդրելի ժամանակի, յայնժամ բառդ
անդրադարձ՝ յայս առնի՝ թէ ժամանակ մեր ՚ի միում
հոսական վայրկենի միայն կայ. զի վայրկեանն նախ
ընթաց ոչ կայ ՚ի մէջ, և վայրկեանն որ գալոցն
է՝ տակաւին չէ եկեալ. և այսպէս անդադար վայր-
կեան զՀետ վայրկենի Հոսելով՝ միայն ՚ի ներկայ
վայրկենի ունի ժամանակ մեր զդոլ. Որով նաև
կեանք մեր կեայ միայն յանդաժանելի ներկայ վայր-
կենի, Իսկ ըստ այսմ որպէս սարդն ոչ Համարի լի-

նել նեղութիւնք՝ գործող ոչ ի գործեալն. և ոչ ի գործելին, այլ յայն միայն՝ յորում գործէ, ասէ պէս և կենդանի մեր՝ ոչ է կեցօղ (այսինքն ոչ կեայ) յայնմ վայրկենի՝ յորում եր և գործէր, և ոչ յայնմ վայրկենի՝ յորում լինելոց է, այլ յայնմ միայն՝ յորում է, և գործէ, և զի այն վայրկեան յորում է և գործէ՝ է անբաժանելի և հոսական, այսմ զհետ գայ՝ թէ կեանք մեր է՝ յանբաժանելի վայրկենի, յորում անդադար հոսի. վասն որոյ ասէ. Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի։ Օ այս է դեռ մարգարէին ի ցոյց անցաւորութէն կենաց մերոց, հոսի և զսակաւութէ աւուրց և ամաց՝ ասելով՝

Ի- թէ սակաւ ամք հազար ի հոսի՝ եօթանասուն ամ. եօթանասնամեայ և ութսնամեայ կեանք՝ հասաբար։ կաց երեւի յետ աւուրցն գաղթի՝ ընդ ամենայն տեղիս. որպէս տեսանի այս և ի բանս իմաստասիրացն. զի սորքն՝ որ երկեցաւ իբր ի ծ. ոլիմպիադին առ ժամանակաւք գերութէն բաբելացւոց, զամն կենաց մարդկան յեօթանասուն բովանդակեաց։ Հիպոկրատ տէս որ զկնի սորունի, զնոյն հաստատեաց այսինքն եօթանասուն ամ. յորում վերջանայ ժամանակ ծերութէն՝ և սկսանի զառամութէն. առ որ հասոյց պիւթագորաս զկեանս մարդկան. բայ այսմ և մարգարէն նախ դնէ եօթանասուն ամ, և ապա ութսուն, և յետոյ աւելի եւս, որ կարէ ձգիլ մինչև ճկարիւրն. յոր միտ գրէ սիրաք՝ որ ծադկեցաւ յետ գերութէն. (ՃՀ. 8.) * Թէ աւուրց մարդկան որքան բազում՝ ,, հարիւր ամ. իբրև զկաթիլ ջրոյ ծովու համարեալ ,, է, և որպէս զչատ աւազոյ. այսպէս նուազ ամք ,, յաւուր երկայնակեցի ։

Ամենց թուեցաւ թէ հարիւրևքսան ամք չտիեցան վասն կենաց մարդկան առ նոյին. բայց չտիեն այն ոչ էր վասն ամենայն մարդկան, այլ վասն այնոցիկ՝ որք էին առ նոյին. (ծնն. Զ. 3.) զի տեսեալ ոյն, թէ ապականեալ էին մարդիկ՝ խոսեցաւ ընդ նոյին ջնջել զնոսա յետ հարիւրևքսան ամաց. և թէպէտ ամանք ասեն թէ զքսան եւս պահպանեցոյց վա առաքելոյն յաւուրն՝ մարդկան, որպէս համարի և եզնիկ

ցին (՚ի մեկն. մատ. գլ. ժԶ. 40.) յասէր. * առ ,, նոյնպէս Ձի տայ զայդ քրիստոնէին. և զբանին ,, վա յաձախութիւն չարեացն պակասեցոյց՝. բայց այս կարծիք չէ հաստատուն. զորովհետև ՚ի պատմ. հոյոց. ա. ՚ի ծան. ա. 4.

Այլ արդ քանզի յայսչափ ատն մարդկան հօթանա. սունն տանելի է. զի ոչ այնչափ տիրեին յոյնժամ ցաւք՝ որչափ զինի, վա որոյ ասէ, թէ աւուրց ատց մերոց ՚ի նոսա հօթանասուն ամ. որպէս թէ ասէը. ամք կենաց մերոց՝ յորս կարեմք վայելել ՚ի բարութիւս աշխարհի, տեւեն հօթանասուն ամ. և այս ՚ի հա. ւատակի խոսելով. ապա թէ ոչ՝ ոմանք ցութասուն ամ հանգ ստեամբ և առողջութիւք կեան. և ոմանք բնդ հակառակն ՚ի մեռնելենէ սկսանին կրել զվիշտս հանգոյն ծերոց.

Իսկ բառդ ՚ի նոսա՝ հոյի յաման ըստ երբայական և յունական ոճոյ. որպէս թէ եղեալ կէր. թէ աւուրց ատց մերոց ՚ի նոսա՝ այսինքն թէ յինքեանս տեւեն հօթանասուն ամ, կամ ըստ ինքեան են հօթանասուն ամ.

Օ այս հօթանասուն ատն ոմանք յարմարական մեկնութիւք վերածեն յհօթանասուն ամ գերութիւն բաբելացւոց. որպ ՚ի դարձին՝ ծագին ոմանք ցութասուն ամ ՚ի բաբելոն. իսկ որք առաւել ևս կացին անդ, կենաւք նոցա ցաւք և հիծութիւք ծախեցաւ. զորմէ խոսի մարգարէն ՚ի յաջորդ համարն՝ հոյելով ՚ի հաւատակաց կենաս մարդկան յասելն.

Ա՛ր ևս առաւել ևս՝ ասելոյն ամ. որ՝ ինչ առաւել քան ցաւօք և հիծութիւք. Ա՛յսինքն՝ եթէ որ առաւել քան զհօթանասուն ատն կեցցէ՝ կարէ տասն ամ ևս առելի վայելել ՚ի կեանս՝ մինչև ցութասուն ատն, որ է Հաւակ զառամութեան. Ա՛ւ եթէ որ առելի քան զութասուն ատն կեցցէ՝ հաւաբախօրէն այն ամք նորա ցաւօք և հիծութիւք անցանիցեն.

Ցաւօք ասելով՝ ցուցանէ զառապանս, զորս կրեն ծերք յինքեանս. զի ինքն իսկ ծերութիւն մանաւանդ զառամութիւն է հիւանդութիւն ինչ. ապա թէ որ անցեալ իցէ զծերութիւն, և ևս զառամութիւն, քանի ևս առաւել զգայցէ զառապանս. զի զգայարանք նորա

ակարանան, տեսանելիք, լսելիք, շօշափելիք, և ա-
ռաւմունք. ընդ որս և ձեռք դողդոջան, և ոտք թա-
լանան, նոյնպէս և նեբբին զգայութիւնք մանաւանդ
յիշողութեին խոպան ակարանայ. և ոգիք, և զօրու-
թիւնք, և հիւթք այլայլին. և որք փախաբելի լինն
նմա՝ տապալելի լինին. վասն որոյ և ի հրաւիրել
գաւթի զերբգելի գաղաղացի, և յասել, կերակրե-
ցից զձերոսնի քո, ասաց ցդաւիթ. * քանի՞ ինչ ի-
,, ցեն աւուրք կենաց իմոց. զի ելանիցեմ ընդ որ-
,, քայի յերուսաղէմ. որդի ամոյ ուրանիդ եմ ես
,, այսօր. միթէ գիտիցեմ ինչ ի մէջ բարւոյ և չա-
,, րի, կամ թէ իմանայցէ ծառայ քո զոր ուտեմ
,, կամ զոր ըմպեմ. կի՞ թէ լսիցեմ տակաւին զձայն
,, գուսանաց և վարձակաց ։ (ՅԲ. Թագ. ԺԹ. 34)։
Օ այսմանէ տես ի գիրս Ժողովողի. (ԳԼ. ԺԲ. 1–8.)
Լուկ հեծումն՝ ասելով՝ ցուցանել զվշտանալ ծերոց
նախ ի վերայ անցեալ իրաց. զի յիշելով՝ զորս արա-
բին, և տեսանելով՝ թէ ոչ ևս կարեն առնել, հե-
ծեն՝ այսինքն յոգւոց հանեն։ Լբիկորդ՝ ի վերայ
ներկայ Քրիստոսէն զի տեսեալ զինքեանս յայսմ
և յայնմ ակար, և այլոց ծանրութիւն լեալ, հեծեն՝
ահ ասելով և ահ հանելով։ Լբրորդ՝ ի վերայ այլոց՝
մանաւանդ ի վերայ մանկանց և երիտասարդաց, զի
ինքեանք գոլով փորձ և տեղեակ, յորժամ տեսանեն
զերիտասարդս գործել զայնպիսիս՝ որ այլազգ կը
գործելի՝ ահա և վահ ելուզմանեն։

Լ ամբ" ասասիսը զիաղ ասէլ «ան ջան՝ յարկ յեօթա-
նասունն, և ասց բարեյաին ինչ պատճառ տսելով,
Թէ եօթն Քրիստ խորհրդաւոր գոլով՝ եօթանասուն
ամով չափի կենաց մեր. յոր յաւելուն ասել ուսրիք՝
Թէ վասն այսորիկ եօթանասնամեայ կենաց տուան
և գաւթի. զորմէ տես ի Համեմատութիւն։ Լչ և.
Թէ տասեակ լինցի մինչև ցեօթսունն՝ այն տեսիլն լի-
նի ցաւոք և հեծումն. որում յուցանի Թէ ոչ միայն
տակաւտեսն է կենաց մարդկան, այլ և ցաւագին, և
Քշտասուրբ լի. զոր յայտնի ասաբ յակոբ Տահապետ
՝ի խոսիլն առ փարաւոն. (ՅՆՆ. խէ. 9.) * տասւրբ
,, ամաց իմոց՝ ասէ, զորս պանդխտեցայ՝ Հարիւր և
,, երեսուն ամ է. սակաւք և դժուարիւք եղեն ա-

,, տալը ամոց կէնայ խնդ ‖ ։ Օ այսպիսի վիճակ մարդկան առաջի ոչ եղեալ մարգարէին՝ ի գիտուն նորա առնէ զմարդիկ ապաստան՝ առնլով։

Յ· Ա ԼՊ ի վերայ մեր հեղուսիր և խրատեցեր· խոչ արբ՝ ՚ո փեռացեր զդժբաղդութիւն բարեբաղդեան տո· կամ չանէր տոմին զարմանալի տո համբերացեր ։

Ոմանք տեսանեմք ի նոր գիրս և ի գանազան պատմութիւս, ասէ ի պատճէնն զայնցանս՝ երևելագոյն իւիք իւիք՝ ևս առաւել կամի խնայել ի յանցաւորն քան պատուհասակ· զի ևս պիտ վասն առելի գոյդ ևնա յանցանաց՝ յանցաւորն ևս ևս ևնա առելի· ևս այիտ՝ * առհասարակ առելի ևն ոչ ամբարշտութիւն և առ ,, բարեշտութի նորա ‖ · (իմաստ· Ժէ· 9·) բայց ասէ Հայելով յողորմելի պայման յանցաւորին, և ի տկարութի նորա՝ առաւել կամի խնայել քան պատժել· Լաւ պատճառեն է, զի ի յանցանել մարդոյ տկարութի՝ յերկիւղ ինչ Հայի ասէ· մի՝ ի չարութի յանցանաց, և մի ևս՝ յողորմելի Հանգամանս յանցաւորին· ի չարութի յանցանացն Հայելով՝ շարժի ի պատուհասել· իսկ յողորմելի գոլ յանցաւորին Հայելով՝ շարժի յողորմիլ· յանցանքն շարժէ զնա ի բարկութի՝ առ ի խնդրել զվրէժ· իսկ ողորմելի լինելն շարժէ զնա ի հեզութիւն՝ առ ի ցուցանել զդուխ· միայն թէ մարդս տարաճեալ առաջի նորա զողորմելի վիճակ իւր· ոչ զի ասէ ոչ գիտէ՝ այլ զի զոր գիտէ, կամ մի՝ զի և մարդս գիտացուցէ և խոնարհեսցի, և ինքեան ևս գիտացուսցէ զօրավիգն խնդրելով· Լաւ արդ քանզի մարգարէն սկսեալ ի 3 համարոյ մինչև ցայս վայր եղ առաջի ոչ զողորմելի Հանգամանս մարդկան բատ այլևայլ վիճակի՝ բատ տարաւրէն, բատ անցաւորէն ևն, ցուցմամբ սոցին ցանկալ պատուհիլ ոչ եթէ բարկութի նորա, այլ հեզութի նորին, յայտ ակն կալեալ, և իբրև թէ այսմ Հաղորդեալ ցուցանելով զինքն առ։

Ա ԼՊ ի վերայ մեր հեղուսիր և խրատեցեր· Կամի ասել· տեսանելով զո ասէր թէ յերկիսիս ողորմելի թշուառութեան կամք՝ փոխանակ բարկանալոյ ի վերայ մեր և խնդրելոյ ի մէնջ զվրէժ· ցուցեր զՀեզ

զանձի քո. և իբրև հայր գնացար ի մէջ. և եթէ պատժեցեր և ս, ոչ խորտակեցեր, այլ զդաստացուցեր. որով և խրատեցաք, այսինքն կրելով զպատիժս ի միտ առաք, թէ զինչ պարտ է մեզ առնել, և զինչդ պարտ է մեզ յայդպիսի գործ հարկ երկնչիլ, լ՝պա եթէ՝ ոչ հայհոյով յաղօթիցն վճռակ մեր՝ այլ ի չարութեն յանցանաց, չարժեսցիս ի բարկութիւն՝ ո՛ կարծ տանել. լ՝ոչ առ այս յարէ.

Եւ այդ՝ ո՛ փեսացն ղաղօրեն բարկանաս ես. կամ չունէ ոսմն զաղաքառէն ես համարեցար. լ՝այսու բանիւ՝ ի մէջ բերի մեծութեն բարկութեն՝ ոյ ըստ սաստկութեն և ըստ որքանութեան. ըստ սաստկութեն ասէ. ո՞ գիտասցէ զաղօրութեի բարկութեն քո. որով ցուցանէ՝ թէ այնչափ սաստիկ է, մինչև ոչ կարել ումեք հասու լինել այնմ. իսկ ըստ որքանութեանն ասէ. և չունէ քաջմտութեն քո հմարեսցի. որով ցուցանէ թէ ոչ ոք կարէ համարել կամ չափել զօրմտութեանն ոյ՝ այսինքն զպատիժս առաքեալս ի բարկութեն ոյ,

Իսկ բառդ չունէ ոսմն՝ յայտ առնէ զահացուցիչ բարկութեն ոյ՝ իբր թէ ասէր. չահացուցանել քո զմարդ բարկութեբ քով՝ ո՛ կարասցէ չափել զօրմտութեան քո. կամ թէ՝ ի բարկանալ քո ով կարասցէ գահաւորութեի բարկութեն կշռել. Ո այսոսիկ առաջի դնէլով մարգարէն՝ լուելեայն իմն ազաչէ զնա, և որպէս թէ ասէ. տեսանելով քո զտկարն մեր՝ եթէ գացես զմէզ յանցուցեալս առ քեզ խնայեա՛ ի մէզ, և առ՛ ի ձեռս զէնդելի և զաղօրմութեի քո, և մի զօրութեի բարկութեն քո. զի թէ կամիցիս ցուցանել՝ թէ արդար զօրէ բարկութի քո՝ ոչ կարեմք տանել. Ո այս բան յարէ մարգարէն՝ ի նախընթացն բառիւս ևս ասէ. որով կամի ասել. տես աչք, թէ որոց ցուցանես զօրութեի բարկութեն քո. ո՛ եմք մեք, և ո՛ և ս զօս. մեք կաս՝ և զօս ստեղծիչ մեր. անբաս ես զօրութեի քո, և անչափ ողնութեի մեր. զինչ հաւմմատութիւն է՝ ի մէջ մեր և ի մէջ քո. իսկ արդ միթէ արժան իցէ քեզ անբաս զօրութեդ վճռիս առնել յայսպիսի անարգ և տկար ստեղծուածոց քոց, որք խոնարհեալ կամք առաջի քո. լ՝այս փոխանակ

վրէժ ինդրելոյ ՚ի մէնջ բարկութիւն, ցոյց մեզ զայ-
ցելութիւն քո բարեգթութիւն· Լ չէ զայսմանէ խօսի ՚ի
յաջորդ համարն·

Ա.յլազգ մեկնեն ոմանք զայս բնաբան. իբր թէ հե-
զութիւն նշանակիցի աստ քաղցրութիւնն այ զոր ցուցա-
նէ ծերոց վասն տկարութեան նոցա, և նոքա վայելեալ
՚ի խնամն այ՝ համարին խրատելոք և հմուտացեալք
ածային բարութիւն· և ապազաւեն առ ած՝ մի ցուցա-
նել ինքեանց զբարկութիւն իւր վասն անցեալ մեղաց
իւրեանց· Լսակ այլք առնն՝ թէ հեզութիւն նշանակի
աստ հեզանալն մարդոյ՝ ըստ անցանել ամաց նորա
ծերութիւն· որպէս թէ ասէր· ՚ի ցաւոց և ՚ի հեծու-
թեանց ծերութեան եղև մեզ հեզանալ և խոնարհիլ
ընդ հզօր ձեռամբ քով· և եհաս երիվարդ ՚ի սիրտս
մեր, ՚ի տեսանելն՝ թէ զիմարդ անխնայ պատուհաս
սեւ գմեզս·

Լսակ լամբ" գրէ այսպէս· ՚ի գալ պատժոց և սպառ-
նալեաց մանաւ ՚ի վերայ մեր՝ սրաւ զմեզ հեզս, և
խոնարհս· զի թէ չէաւ յանցանաց Թագոյր զմեզ ած
անպատիժս, անզգոյ միայոյր բան դիւաց· բայց եր-
կուցեալ ՚ի պատժոց՝ խոնարհիմք և զգուշանամք·
Լչ սակայն սակաւք են՝ որք գիտացեն զայսպիսի
գործեալն բարկութեն այ, կամ՝ զայսպիսի շահն՝ որ
եղև մեզ ՚ի պատժելն այ զմեզ բարկութեբ· Եղիսպէս
սակաւք են որք համարեսցին և դիցեն ՚ի մտի, թէ
բարւոք եղև մարդոյ զայսպիսի գործ սրտմտութեան
նորա կրել, և չահ նորա խոնարհիլ, կամ երկիւղ-
լոյ ՚ի նմանէ հեզ լինել·

Լ.յլ բազումք կան որք փոխանակ երկիւղելոյ և խո-
նարհելոյ ՚ի զօրութիւն բարկութեն այ և սրտմտու-
նորա՝ համարձակ ՚ի մեզս զառաջանան· և ՚ի տագ
նապիլ իւրեանց ՚ի խղճէ մտաց՝ յուսադիր լինին ան-
ձանց՝ պատահիլ ողորմութեբ նորա, և գտանել գնե-
բութիւն· Լչ սակայն եթէ ած ՚ի սիրելիս իւր ոչ
խնայէ՝ քանի և յատելիսն· Եթէ յորդին իւր ոչ
խնայեաց վասն մերոց օտարոց, այլ ՚ի մահ մատ-
նեաց զնա, որչափ և անխնայ պատժեսցէ զօտարս·
Ջորիւատառ սպառազէտ հեռամիտսցուց ոչ խնայեաց
յորդի իւր՝ որ վասն հանելոյ զմեռս զօրաց իւրոց

պատերազմեցաւ առանց հրամանի Տ֊ոջ. զի Թէպէտ և յաղթող դառաւ, այլ ի մահ մատնեաց զնա Տէրն. յորմէ զարհուրեալ զօրացն ոչ իշխեցին և ոչ իսկ Թագուհէի խնդրել վասն անշնաղանդելոյ բանից, Օ՜ ինչ պարտ էցէ ասպա խորհիլ նոցա՝ զոր անխիղճ մեղանչեն. և զիարդ լինիցի նոցա Տամարձակ մերձենալ առ նմա վասն Թագուհէի մեղաց. եԹէ նա ոչ խնայեաց ի զաւրն զինչ պատցէ բնդ նոսն. (Դուկ. ԻԳ. 31.) Այսմ պատ յուսաբեկ լինել, այլ զգաստանալ, և դառնալով յապաշխարութիւն մեղաց՝ Ձնմարիտ սրտիւ ապաւինիլ յողորմութիւնն Աց, և զիարդ զայն գնահ որդւոյ նորա միշտորդ ունիլ առնա. և սրտի մտաք ազատիլ զնա՝ պատասխիլ գեղեցիկ և այցելութիւնն Տոգւոյ. որպէս ասացաւն և յառաջիկայ բան սաղմոսերգուին, յասել Տոգւոյ։

ժԱ. Ա յտղէս ցոյց ինչ զքէ տ֊ո. Եւ որ խնդրէն զնոսա՝ պիտոյ֊ութիւնս տ֊ո։

Ա՝րգաբէնն առաջի արարեալ ի վերոյ գՀեզեքիէն Աց, և ասպա ցուցեալ զՀեզեքիէի բարեգործն Տոգւոյ, աղաչէ՝ ասա փոխանակ Ձախոյ այսինքն փոխանակ բարեգործելոյ ցուցանել զքէ իւր և զիմաստութիւնն։ Աւր աջով իմացեալ լինի օգնականութիւնն Աց՝ ի յաջողելի բարւոյ, կամ գործք աջոյն Աց՝ այսինքն են Տնարաւոր ինչ գործ՝ որ իցէ մեծ՝ և օգուտ մեզ։ Իսկ իմաստութիւն իմացեալ լինի ասա Տոյն իսկ պարգեւն իմաստութեան. որով օրէնսգէտ առնէ Ասծ զմեզնէ ցեւալն առ ինքն, և լուսաւորէ ընձանալ անմոլար ի ՁնոտապարՀս արդարոյն։ Հայսմոսիկ Տոգւով՝ ասէ։

Ա՝յտղէս ցոյց ինչ զքէ տ֊ո. Եւ որ խնդրէն զնոսա՝ զիմաստութիւնս տ֊ո։ Ա՝յսոցանօր բառդ այսինքն՝ կրկնակի կարծ առեալ լինիլ. ի՝ իրր բազդատական. յոր միտ Կամի ասել. որպէս ցուցանէաս զարարուածն քո ի պատճէնն զմեզս, այսպէս ևս ցոյց ինձ կամ ցոյց մեզ զաջ քո ի խնամելդ զմեզ. և իմաստութիւն քոյ առաջնորդեա այնոցիկ՝ որք խնդրէն զնա սրտիւք։ Ա՝րեզրդ՝ իբր Տետեւողական, յոր միտ կամի ասել. որովՀետեւ այս

այսպէս է՝ որպէս ասացի, աշակերտ ըլլել ցոյց ինձ զօգնութեան աջոյ քո. կամ թէ՝ ուրեմն ցոյց զայցելութեան խնամոյ քոյ. ցոյց և զխնամառութիւնս քո, այսինքն զխորհուրդս քո ուղիղս՝ առ այնասիկ՝ որք խնարհչեն սրտիւք։

Լսակ լսէ՛ մեկնէ այսպէս. որպէս ցուցեր ինձ ըզպատուհաս բարիւքդ քո, այսպէս և ցոյց ինձ զաջ քո. այսինքն ցոյց ինձ այն պատուհաս և գործ աջոյ քո. իբր զի բարեաց և մեծագործ և յարեաց խաւիսիչ. և յայս սակս յաւելու ասել՝ ցոյց զխնամառութիւն քո խնարհեցից՝ այսինքն տուր նոցա խնամել զայս. որպէս զի խնամառութիւնդ կրկնով զառաւտսն կենդանդոյն՝ յաւուր հանդերձելոյն մխիթարէսցին։

Ա արդան զայսպէս վերածել յայն՝ զոր ասաց. եկն ի վերայ մեր հեղգութիւն. բան որոյ կամի ասել. որ սէս խրատեցեր զմեզ ի հեղգութիւն, այսպէս խրատեա զմեզ ի չաքազութիւն։

Ա ստանօր բառդ ինչ՝ ոչ ցուցանէ սոսկ զանձն մարգարէին, այլև զայնասիկ զորս ի հասարակի եդ ի նախընթաց տաղսն. և զի նորա կարօտ եմն աջոյն նոյ, և խնարհչեն՝ ընդունակ խնամառութեան, վասն այսորիկ հայելով յայնս ասաց ցուցանել զաջ իւր. իսկ հայելով ի խնարհչն՝ ցուցանել զխնամառութիւնս իւր։ Լ ջով մարթի և խնամալ ատ և զորդիս նոյ. յոր միտ կամի ասել. փութայ ցուցանել մեզ զորդիդ քո, և նովաւ տուր զխնամառութիւնս քո այնոցիկ՝ որք խնարհեցուցանեն զսիրտս իւրեանց առաջի քո. կամելով ասա ի քաղցրութիւն յորդորել զնա՝ յարել զկնի և ասել։

ԺԵ. Ղ՝ աբէ՛ աէր, ինձ չեզբ. խնդաբեա՛ ի ծառայ քո։

Օ՝ գայս գնէ մարգարէն հայելով ի գործս բարիւքն նոյ. որով իբր թէ հեռացեալ ցուցանէ զինքն ած ի քաղցրութիւն. և թէպէտ տայ գալ պատժոց. վա սրոյ աղաչէ զնա դառնալ և խնայել՝ ասելով։

Ղ՝ աբէ՛ աէր ինձ չեզբ։ Լսեմի ասել. դու տէր որ վա մեզաց մերոց բարկանալով ի վերայ մեր՝ հեռացար ի մէնջ, մինչ այդպէս հեռացեալ մնալոց էիցես.

մինչև ցնծալ իցէ այդ. յիշեա՝ զի տակաւ եմք. դարձ առ մեզ ողորմութիւն, և ցոյց փրկութիւն. և առ այս յարէ.

Ա. Պետրոս ՚ի ծառայս տէր։ Ստացա պետութիւն դնել ստոփոխանակ Հանդարտելոյ, կամ փոխանակ ղիջանելոյ ՚ի բարկութենէ կամ փոխանակ չատանալոյ. որպէս յաւելցի անդր. * միխիթարեցաւ ՚ի վերայ հարկացն ։ (Ա. Թագ. իե. 16.) ցուցանի՝ բաւական համարելով զպատիժն՝ հանդարտիլ. յայս միտ դնի և ասա, յասելն՝ միխիթարեա այսչափ միխիթարեցիր ՚ի ծառայս քո. որպէս թէ ասէր. պատժեցեր զմեզ՝ որք եմք ծառայք քո. և արդ բաւական համարելով՝ հանդարտեա ՚ի պատժելոյ յոր միտ լերբ՚՚ դնի վերնախնդ, այս է, և հանդարտեա (միխիթարեալ համարելով զբեզ), կամ ցածիր ՚ի պատժելոյդ՝ որպէս թէ այնու չատացեալ և միխիթարեալ եղես։ Օ այսպիսի ինչ առ մարգարէն և ՚ի սաղ. ՀԷԴ. 13. տես և անդ։

Ա. Յուզդ ևս կարէ միևնոյն բան. իբր թէ ասէր. Հայելով ՚ի ծառայս քո՝ հանդարտեա ՚ի պատուհասելոյդ զմեզ զպատասխանս պատժոց. կամ հայելով ՚ի գործս ծառայից քոց՝ դադարեա ՚ի բարկութէ քումմէ. կամ ընդունելով ՚ի ծառայից քոց զաղաչանս, ասա բաւական է. կամ հաճելով յաղաչանս և ՚ի բարեխոսութենս ծառայից քոց՝ լեր չատացեալ. և վասն հաճելոյդ ընդ նոսա խնայեա ՚ի մեզ, ցուցանելով մեզ ողորմութիւն։

Ա. Այս բան ասի և ՚ի բերանոյ մարդկայինս բնութենէ. յոր միտ կամ ասէր. մինչև յերբ յամես տէր ՚ի գալ և ՚ի փրկել. հայեաց յաղաչանս ծառայից քոց. ևկ և միխիթարեա ՚ի նոսա. կամ ցուցանելով զմխիթարութիւն քո ՚ի նոսա՝ ցոյց զբեզ միխիթարեալ։ Օ այսոսիկ եղեալ մարգարէին առաջի մտաւորանաւ և զարդիւնս ողորմութեան այլ, զոր ածէ ՚ի վերայ մեր, ըստ նմին և զուարթութենէ սրտից մերոց ՚ի ցնծալ մեր այնու ողորմութէ՛ յասելն։

ԺԴ. Եղեալ առաստաղս ողորմութէ տու. ցնծացաք և ուրախ եղեմք զամենայն առաւօտս կենաց մերոց։

Ա. Նախակարգեալ բանագէտ ցոյց մարգարէն զվերջուա-

վիճակ կենաց մերոց՝ մտածելով ի բնական կարգէ, կամ ըստ որում եմք մարդիկ անկեալք ընդ կարեաց բնութե՛, սակաւակեացք և անցաւորք իբրև զոստայնս սարդից. և յաւել եա՛ թէ այսպիսի գոլով մեր՝ ի չանդգնելիս մեզանէ՝ շարժեմք ի վերայ մեր զարտասուսն ոչ. որով և թշուառանամք։ Այժմ դառնայ ցուցանել, թէ զորօրինակ ի հասանել բարկութեանն ոչ ի վերայ մեր՝ նուաղիմք և խաւսիմք, այլ պէս և ի գալ ի վերայ մեր ողորմութեն ոչ, լցեալ նոսա՝ ցնծամբ և ուրախանամք. վասն որոյ ասէ։

Յայ աստուած ողորմեա՛ ինձ. ցնծացայք և ուրախ եղէք պանդխտի աստուծ ինձ։ Այս բան ըստ բնագրին յապառնին հայելով (այսինքն լցցուք, ցնծասցուք ևն), ի կատարեալն դնի ի մերումն ըստ երկուց. մի՝ ի ցուցանել զյաճախութեն հոգւոյ ասացին. և մի ևս ի ցուցանել զնմանութեն ասացելոյն. զի ո՛րպէս ինքեան ձգմարիտ է՝ զոր ասէ, զնա անդադրելին իբրև զժառանգեալ առաջի դնէ. ասելով լցաք առատ ուսուցեալ են։

Ահա բառիս աստուծ լուծ ինչ նշանակի. մի՝ յատուկ և բնական առաւուն՝ որ յաջորդէ գիշերոյ. որոյ ի ծագելն տեսանեմք ի վերայ մեր զառատ ողորմութեն ոչ՝ ի ընդհատել մեզ վերստին զառաջիկայ օրս, ի լուսաւորել զհոգիս մեր, ի մխիթարել զսիրտս, յարժանացուցանել զմեզ խօսիլ ընդ ինքեան, և բերկրիլ յառաջիկայութե՛ն նոցա, և օրհնել զնա ընդ երկնային զառաքեալսն, ի գործել զգործ փրկութե՛ն մերոյ, և յառնել զկարևոր պիտոյս անձանց մերոց։ Այս ի սոյն յաջողի արդարոյ յամենայն աւուրս կենաց, վասն որոյ և բերկրելից ասէ. լցաք առաւուտու ողորմութե՛ն քով, ցնծացաք և ուրախ եղաք ի հայրական իւրմէ քո. և ակնառնեմք վայելել յայն՝

ոչ զմի օր, այլ զամենայն աւուրս կենաց մերոց։ Այրկրորդ փոխաբերութե՛ն ի ձեռն առաւուտու նշանակի խաղաղութի՛ն այն՝ որ ի միջ մեր և ի միջ ոչ, կամ հաշտութե՛ն ոչ ընդ մեզ. յոր ի վայելելն առաւմբ. լցաք ողորմութե՛ն քով յառաւուտուս, այսինքն ի տեսանել մեր զքեզ հաշտ ընդ մեզ. վասն որոյ ցնծամբ և ուրախանամք յամենայն ի կեանս մեր։

Պատձեռակ բան այսմ փոխաբերուեձ բառիս առաջոց՝ նշանակի և սկիզբն յաջողութեձ իրաց, կամ սկիզբն հոգևոր կենաց, կամ սկիզբն ազատուեձ. որպէս եղև յաղաւթել որդւոյն Իսրայէլի ՚ի գերութեձ ՚ի Բաբելոն. և կամ գաբձակ՚ և իցէ գործ բարեբարութեձ՝ զոր ցուցաներ և յաջողել ՚ի մեզ ՚ասե. զի այս ամենայն օրինակի յառաւօտ. և զի սոյն այս ծագել ՚ի մեզ ողորմութիւն այ, ՚ի պատահիլ մեր այսմ՝ ցնծամք և առնմք, լցաք ողորմութեձ քով յայտնիսի առաւօտու, և յուսամք ՚ասել ՚ի սմին ուրախ և բերկրեալ զամենայն աւուրս կենաց մերոց։

Այսր մեզ բարեյաղթս առեալ ՚ի ձեռն առաւօտու նշանակի լուսաւորութեձ մտաց, կամ անդորրութեձ կենաց, կամ անմեղութեձ վարուց, կամ սրբութիւն սրտի, կամ մարգութեձ հոգւոյ ՚ի բաւիլ մեզաց մերոց խորհրդով ապաշխարութեձ, յորմէ լցեալ լինիմք ողորմութեձն այ, և ՚ի ՚ասել մեր ՚ի նմին՝ ցնծամք զամենայն աւուրս կենաց մերոց։

Այրըրդ՝ այլաբանօրէն ՚ի ձեռն առաւօտու նշանակի ծագումն արեգականն արդարութեձ, այսինքն ծագումն քոյ յաշխարհ. քանզի այս խորհուրդ նախ իրբև առաւօտ ծանուցաւ ազամայ. և ապա նահապետաց և մարգարէից, երևեցուցանելով նոցա Քէ՚ ՚ած յայտնելոց է ազգի մարդկան զողորմութեձ իւր՝ ծագելով ՚ի քէզ յաշխարհ իբրև արեգական՝ ՚ի լուսաւորել զնոսա. որոյ ՚ի կատարին՝ առՀասարակ ուրախ լեալ որպէս մարդկան՝ ազատակին. լցաք առաւօտու ողորմութեձ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Այս յայս միտ՝ բառդ ցնծացաք և ուրախ եղաք՝ եթէ ասացին ՚ի բերանոյ ազգի մարդկան՝ կի՛ մանաւանդ ՚ի բերանոյ զինուորեալ եկեղեցւոյ, ուղղակի խմբեցեալ լինին ՚ի կատարեալն. զի եկեղեցին միշտ կայ, և միշտ վայելէ յուրախութեձն քրի. քանզի Քէ՚ պատեաւ անդամք նորա հետ զՀետ բառնին, բայց ինքն առՀ միևնոյն ՚ի կատարած աշխարհի, Հանդոյն գերոյ՝ որոյ մատուցանք Քէ՚ պատեաւ հետ զՀետ Հոսին և գնան՝ բայց գերն միշտ կայ։

Իսկ եթէ ասացին ՚ի բերանոյ մերմէ, կամ ՚ի բե-

բանդ խաբեանդիւբ մարդդ՝ խնայեալ լինին յին-
թադրական միտ , այսինքն կամ ի ներկայն և կամ
յապառնին . որպէս թէ եղեալ էր . լցաք առաւօ-
տու ողորմութիդ քով՝ վասն որդ ցնծամք և ցնծաս-
ցուք զամենայն աւուրս կենաց մերոց ։ Արթ է և
ի կատարեալն առնուլ ըստ խնդուխիդ յուսոյ . զի
յուսով հանդերձելոցն ցնծացաք և ցնծամք զամե-
նայն աւուրս կենաց մերոց ։

Ողորդդ վերածաբար՝ ի ձեռն առաւօտու նչանակի
զուարճութին հանդերձեալ կենաց , յոր ի ժամա-
նել մեր՝ ունիմք յաւիտեանս յաւիտենից ասել . ահա
լցաք անձառելի ողորմութիդ յայսպիսի ամենապատա-
առաւօտու . յորում ոչ և միայ ինչ թշուառութին
կիր ողորմելի վինակ . վր որդ և ցնծացաք և ցնծամք
զամենայն աւուրս այսպիսի աքանչելի կենաց մերոց ։
Ի լինել այսր՝ կատարեացի և այն՝ զոր ասէ մարգա-
րէն ցանձն իւր ի սաղ . ձէ . ։ * ա լնու ի բարուիք
,, զցանկութիդ քո ։ * ա պակիկ զքեզ ողորմութիդ
,, և զթութիդ ։ ։ Խոսիս կատարեացի յայնժամ և
այն բան՝ զոր ասաց ի նախընթաց համարն * մխի-
,, թարեա ի ծառայս քո ։ ։ Արդ ի հասանել ողոր-
մութիդն այ ի վերայ մեր՝ և ի լնուլ նորա զմեզ և-
թէ աստ և եթէ ի հանդերձեալն , յայնժամ ունիմք
ձանաչել , թէ քանի բարի եղև մեզ տառապիլ մեր
յաշխարհի ատտ . զորմէ խօսի մարգարէն ի յաջորդ
համարն ասելով ։

Ա բաթէ եղաւ փոխանակ աստուծոյն՝ ոչ նանաչ աթաբին
պիղ . և ամայն՝ յոր պետ չլսելացաս ։

Կ՚ուղութիդ կրեալք ի մէնդ յանցանելն երթակի ա-
ւուխի լինին մեզ ուրախութիդ . մի զի տանելով մեր
զայնս համբերութիդ՝ չահեցաք ոչ միայն զառաքինու-
թիւնս , և զուսումն բարի վարուց , այլև զմեծամեծ
վարձս ։ Յերկրորդ՝ զի պատճառ եղին մեզ զերծանե-
լոյ ի բազում չարեաց , ոչ միայն որ ի ներկայս են՝
այլև որ յապագայն ։

Յերրորդ՝ որ բնական իմն է զի յանցանել նեղուչեցն
տեսանելիք զմեզ ազատեալս ի նոցունց և իբր թէ
նորոգեալս . որով և ուրախանամք ։ Գ. խաւելի է ևս ,

զի նեղութիւնք անցեալք ոչ միայն պատճառն զուբա-
խութեի՛ , այլև զառաւելութեի՛ ուրախութե՛ . զի յիշա-
տակութե՛ն նոցա կամ փորձ նոցին առաւելու զուրա-
խութե՛ին՝ կամ քաղցրացուցանի՛ յոյժ զայն , որ եթէ
չէր լեալ՝ թերևս այն հեառնալ ուրախութիւնն ոչ
այնչափ քաղցրանայր . զի որպէս նեղութիւնն որ ՚ի
ծաքաւոյ առաւել քաղցր առնէ զաբքումն ջրոյ , քան
թէ չլինէր այն նեղութի՛ , սոյնպէս և փորձ անցեալ
նեղութե՛ն պատճառէ զմեծութե՛ն խնդութե՛ ՚ի մէզ .

յայսոսիկ հայելով ասէ ,

Ա՚բաւ եղեա՛ ֆրանկաց առաքն՝ որ խանգրէ աբաքին պէղ , և ամաչ՝ յոր պեսս չլաբլաբանս : [՚առագ ֆրանկաց՝ զնո՛ ասա նախ ըստ առաքեալն . որպէս թէ եգեալ էր , ՚ի վերայ աւուրց նեղութե՛ . երկրորդ՝ ըստ պատճառի . որպէս թէ ասէր , վասն աւուրց նեղութեան . երրորդ՝ ըստ բաղդատութե՛ ընդ ամէն անցելոյս և ներկայի : [՚ստ առաքեալն առեալ՝ կամի ասել . ուրախ եղաբ և ուրախ եմբ զառաքեալութ այսմիկ զնեղութե՛բ և զաբքարանաբք զորս կրեցաբ վասն նո՛ . և երբ ջանիկ համարիմբ զաւուրսն զայնոսիկ՝ յորս տառապեցաբ , և խոնարհ եղաբ առաջի նո՛ . զի նոքիմբք սրբեալ ՚ի մեղաց՝ արդարացաբ ՚ի ձեռն հնարհաց . քանզի որպէս ասէ սարգիս հնարհալի (՚ի մեկն . ո՛ . պետ . ե՛ . 14 . Ձառ . է՛) . * չեբ այլ ինչ ՚ի բարեգործ-
,, ծութե՛ցն՝ որ այնբան սրբէ ՚ի մեղաց և արդարա-
,, ցուցանէ՝ որպէս զբարբարանն (վասն նո՛) ։ [՚յա
զի նոյն իսկ չարչարանբն՝ զոր կրէ մարդ վասն նո՛ ,
և փառք մարդոյ . յոր միտ ասէ . * մեծ է մարդոյ փա-
,, նո՛ չարչարել քան վասն նո՛ փառաւորել ։ . որպէս
և վասն պօղոսի ասէ , թէ մեծ փառք էր նմա կալ
՚ի շղթայս վասն նո՛ ՚ի բանտի՝ քան վերանալ նորա
մինչև յերրորդ երկինս ։ [՚ոյզ զայն զի ՚ի չարչարել
մարդոյ վասն նո՛ նովին վերանայ ՚ի բարձրագոյն վի-
ճակ առաքինութե՛ց երբ յերրորդ երկինս , և յենի
նախանձելի երկնաւորաց ։ [՚ստի ասէ նա ինքն ասա-
գիս հնարհալի ՚ի բերանոյ առաքելոյն ՚ի վերոյիշեալ
Ձառի . ՚ի չարչարել ձեր մեզ նո՛ * զայն առաքինութիս
,, հանդերձեալ էք գործել , ընդ որ նոքա (այսինքն
,, հրեշտակք) մեծապէս հիացեալ զարմանան . և կա-

,, մին եթէ գոյ կարողութիւն՝ անմարթիւաբար զնոյն
,, Հանգէս լսելոյն առնել՝ որ վասն քոյ յանձինս իւ-
,, րեանց կրել ։ ։ Չէ աշխ յայտնիսի արգասիս Հայե-
լով՝ ասէ մարգարէն՝ ուրախ եղիջ ևն ։

Լսա պատճառի առեալ կամի ասել . ոչ արամիմբ մի՛ աւուրցն այնոցիկ՝ որք խոնարհեցուցին զմեզ , այսինքն տառապեցուցանելով նուաստացուցին զմեզ , և ոչ և ա արտմիմբ վասն ամացն այնոցիկ՝ յորս չարչարեցաք . այլ ուրախ եմք վասն նոցա . զի ոչ միայն զերծաք ի չարեացն զորս կրեցաք ի նոսին , այլև ժամանեցաք յուրախութիւն մեծ , զոր ընկալաք ի վարձ տառապանաց մերոց . նա զի վասն տառապելոյ մերոյ՝ յոյժ քաղցր եղև մեզ այն ուրախութիւն , զոր այժմ վայելեմք ։

Լսա բաղդատութիւն առեալ՝ կամի ասել . Հայելով յայնս՝ յորս տառապեցաք զանազան քանի մի , և յայնս յոր չարչարեցաք զամն ինչ , Հայելով ապա և յայնս՝ զորս ընկալաք ի վարձ այնց նեղութեանց , ուրախացաք և ուրախանամք յոյժ յոյժ . զի փոխանակ խոնարհ աւուրց՝ աւուրս եղեն մեզ բերկրալից աւուրք , և փոխանակ տառապագին ամաց՝ տուեալ եղեն մեզ երջանիկ ամք . կամ թէ փոխանակ վշտացն՝ որոց տարաբ ի կեանս մեր՝ տուաւ մեզ Հանդիստ և զուարճութիւն և այլ և այլ մեծամեծ և բազում բարիք . մինչև

մոռանալ մեզ զայն ամենայն՝ զորս կրեցաք ։

Այդն այս պատահի մեզ և յաճախինաւէ . զի ի ստացեալն զայն՝ չարչարիմք ի սկզբան . ըստ որում և ասէ Թէ * սիրելն առաքինաւէ դժուարին է ։ բայց յետ ստանալոյ զնոյն՝ ուրախ լինիմք , և փոքր Համարիմք զաշխատութիւնն զայն՝ զոր ածաատեցաք , վասն զի չդանդ է մանկան ուսանիլ . բայց յետ ուսման բերկրանաւէ ծնողն ի նմա , մինչ ոչ և յիշել զվշտան , և ասել ընդ սիրաքոյ . * ահաւ ինչ աշխատեցայ , և ,, գտի ինձ Հանդիստ բազում ։ (սիրաք . ծա . 35 . և և ՀԲ . 20) ։

Արթն է զայս բան իբր ըղձական և առնու . ո. րով և միտ բանին լինի այս . իցէ Թէ զկնի նեղութեցս Հասցուք ի Հանգիստ . և ասացուք , ահա ուրախ եղաք փոխանակ աւուրց նեղութեանց և չարչարանաց , Հայս և ի սոյն փափաքելով մարգարէին՝ մանեթէ

առ ՝ՈՅՆ՝ Հայիլ՝ ի ծառայս իւր, և առաքեցոյց զնոսա յոյն՝ որում ըղձայն. վասն որոյ ասէ՝

ԺԵ. Վայելեա՛ տէր՝ ի ծառայս քո՝ և ի փրկեա յնեսայ զոդ. և առաքեցո՛ զնոսա. և եղիցի ըղձա՛ն ՝ՈՅՆ՝ ի վիշդոյ ձեր։

Ոչ՝ ի ժամանել մարդոյ յայնպիսի երջանիկ վիճակ՝ յորում կարիցէ ասել ուրախ եզաբ փոխանակ աւուրցն ևն, հարկաւոր է ունել ըղձալեաւն օգնականն ՝ՈՅՆ՝ և զըղձս ընդհայց նոցա. որպէս զի կարիցէ համբերելով աւուրց նեղուելոյ՝ գնալ անսայթաք՝ և հասանել՝ ի նոյն. վասն որոյ յետ դնելոյ մարգարէին զուրախանալն փոխանակ աւուրց նեղուելոյ՝ ինդրէ՝ ի նմանէ զօգնութիւն նորին և զըղձս իբրև զինքնորդ առ այն. և նախ ասէ՝

Վայելեա՛ տէր՝ ի ծառայս քո՝ ։ Վայելն կամ հայհոյն ՝ՈՅՆ՝ պէսպէս օրինակաւ իմացեալ լինի. մի՝ փոխանակ տեսանելոյ կամ դիտելոյ զայն զոր գիտէ. յոր միտ ասի. * ՝ՈՅ յերկինից նայեցաւ յամենայն որդիս մարդ՝՝ կան՝ տեսանել թէ իցէ ոք խնամատուն ։ (սաղ. ՃԳ. ՃԲ. ՃԲ.) ։ Հայս միտ առեալ՝ կամի ասել. տես թէ յոր տառապանս կան ծառայք քո. և զայս տեսանելով՝ այդ արա նոցա, և հանգո՛ւսոյս քաղցրութիւնդ քով ևն ։

Երկրորդ՝ փոխանակ հաձելոյ յինն. յոր միտ ասի (ՃՆՆ. Ճ. Ճ.) * նայեցաւ ՝ՈՅ՝ ի հարեւ և ի պա՛՝՝ տարագս նորա ։ Հայս միտ առեալ՝ կամի ասել. հաձելով ընդ ծառայս քո ընդ աբրահամ, ընդ իսահակ և ընդ յակոբ, կամ և ընդ առաքեալս քո, ևն, վասն նոցա առաքեսդեա՛ մեզ՝ որք եմք որդիք նոցա. կամ (բարձրագոչ առեալ) հաձելով ընդ մեզ՝ որք եմք ծառայք քո, և գործք ձեռաց քոց՝ հաձեայց և ընդ գործս մեր. և առաքեսդեա՛ որդւոց մերոց ։

Երրորդ՝ փոխանակ օգնելոյ և խնամելոյ, լուսաւորելոյ և քաջալերելոյ. յոր միտ ասի. * համբերելով՝՝ համբերի՛ ՝ՈՅՆ՝, և նայեցաւ առ իս ։ այսինքն եցոյց զնմանն իւր առ իս. (սաղ. ՃԼ. ՃԼ.) ։ Հայս միտ առեալ՝ կամի ասել. ցոյց ծառայից քոց զօգնութիւնդ քո՝ ի վիշտս իւրեանց. և իբրև զարեգակն՝ առ նոսա

պարձեցանելով զերեսս քո՝ ծագեաւ ի նոսա գնա-
ռագոյնն խնամոց և միխիթարութիւն քո. Ա՛յլ կա-
մելով մարդապէսին առաւել ևս սաստկել ի սոյն յա-
ւելու ասել.

Ա՛ր- ի գերծս ինձ այդ չոչ: Ուր շաղկապի Ե՛ն եթէ ըն-
արհնէոյ դիցէ, միտ բանին լինի այս. նայեաւ ոչ
միայն ի ծառայս քո, այլև յամենայն որդիս մարդ-
կան, զի ամենեքին ևս են գործք քո. բանզի դու ա-
րարեր զնոսա ձեռամբ քո՝ այսինքն ամենակարողու-
թիւ. խնայեաւ ուրեմն ի նոսա: Կամ եթէ դիցէ իբր
մեհենական, միտ բանին լինի այս. նայեաւ ի ծառայս
քո, որք են գործք ձեռաց քոց: Ա՛յլ եթէ դիցէ
իբրև շարայարիչ՝ միտ բանին լինի այս, նայեաւ ի ծա-
ռայս քո և ի գործս նոցա, առ ի յաջողել նոցա
զսյնս. զի այն գործք նոցա են և գործք ձեռաց քոց.
վասն զի դու ես որ օգնելով նոցա՝ առնես ի նոսա
զայնսոսիկ:

Ա՛յս հատուած բանի՝ որպէս և նախընթաց սորա ո-
ըչպակի ոչ դնի յերբ", այլ միայնոյնէ ընդ հետևեցե-
լոյն. զի գրի այսպէս. * Ծագեացե գործ քո (այսինքն
„ նպաստ քո) ի վերայ ծառայից քոց. և փառս քո
„ ի վերայ որդւոց նոցա ". այսպէս դնի և ի քաղդ"
և յասորի". որով նշանակի հայիցն այդ ի ծառայս իւր,
և յորդիս նոցա ի ձեռն օգնութեան և պաշտպանութե
իւրոյ, որով փառաւորի ի նոսա: Կամ ի միտս, որ-
պէս և ի Թարգ" եօթ. և լատ. և արաբ". որոշ դնի

բառիս առաքեցէալ յասելն.

Ա՛ր- առաքեցէս զբարւոյ նոցա: Ուր նոցա ասելով՝ իմա-
նայ զծառայս այդ, որոց որդիք եկին խոպանելացիք.
ուստի և որդւովք իմացեալ լինին աստ խոպանելացիք՝
եթէ ըստ մարմնաւորին և եթէ ըստ հոգևորին. ի
սոսա հայելով ապաւէն գնդ՝ զի որպէս զհարս նոցա
արար ծառայս իւր, սոյնպէս արասցէ և որդւոց նո-
ցա, և իբրև յատուկ ծառայից իւրոց ձեռնտու լինել
լով՝ առաքեցէ նոցա. և զի առ այս կարևոր է
լոյս ասէին, վասն որոյ զայն ևս խնդրելով յաղ-
զեհի և ասէ.

Ա՛նէտ լոյս ՚ն ՚ի վերս մեր: Ա՛յս լոյս է ջնորհքն
ծագեալ յայն իբրև յարեգակնէ, և կամ հոգին սբ.

և այնչափ հարկաւոր է այս ընորհք առ գործս գեղ. քնական կենաց, որպէս զգալի լոյն առ գործս տե. սութեան աչաց. զի որպէս առանց զգալի լուսոյ՝ ոչ կարէ գործել աչքն զսա տեսութեան, նոյնպէս և ա. ռանց ընորհացն ոչ կարէ մարդն գործել ըստ գերբնական կենաց, և կամ տեւանել զնանապարհ այնր կենաց՝ և զորս են յայնմ Նանապարհի։

Լ՚ըդ պաղատի մարգարէն և ասէ. այս լոյս ընորհաց նն եղիցի ի վերայ մեր. ուր փոխանակ ասելոյ առ մեզ կամ՝ ի մեզ՝ գնէ՝ ի վերայ մեր. զի որովհետև լոյս կոչէ զնորհն, օրինակաւ ծագման լուսոյ՝ ի բար. ձանց՝ խօսի։ Լ՚ե գարձեալ՝ փոխանակ ասելոյ ծա. գեացի, գնէ եղիցի, առ՝ ի ցուցանել՝ Թէ ոչ է բա. ւական սոսկ ծագելն, այլ պիտոյ է՝ զի և յետ ծա. գելոյն տպաւորեացի ՚ի նեբքս, զոր յայտ առնէ բա. ռիւս եղէալ։ Լ՚սկ Թէ զինչ ուներ ՚ն ծագ նեբգործել այնու լուսով՝ յայտ առնէ մարգարէն ՚ի յաջորդ հա. մարն ասելով։

ժԷ. Ո՚գործ յետ ծագ հերոյ ուղիղ արա ՚ի ինէ սեր. ղիտոյ յետ ծագ հերոյ յաղիղ սէր։

Լ՚ն նախընթաց համարն որովհետև կուչաց մարգա. բէն զմարդիկ և զորս են մարդկան՝ գործք ձեռացն ՚ն, յասելն * նայեաց . . . ՚ի գործս ձեռաց քոց ՚։ յայս հասկնալով և աստ զբան իւր՝ ըստ սմին և զաղաս մարդկան կոչէ գործք ձեռաց. որովք իսն. ցեալ լինին ոչ այն գործք միայն՝ որք ձեռօք լինին, այլ և այնք՝ որք խորհրդով և Նեթ կամ բերանով կա. տարին. բայց քանզի մարդիկ հասարակօրէն ձեռօք գործեն, յայտնի և ամենայն գործք նոցա առհա. սարակ ձեռաց ընծային, որով և կոչին գործք ձե. ռաց, և երբեմն ձեռք։ Լ՚ե զի ուղղուի և յաջողու. Թիւն այսպիսի գործոց ածէն զմեզ յայն փափաքելի կեանս, զոր յիշեցաք ՚ի վերոյ, զսոսին գտանել խնդրել աստ մարգարէն. վասն առաջնոյն այսինքն վասն ուղղութեանն ասէ։

Ո՚գործ յետ ծագ հերոյ ուղիղ արա ՚ի ինէ սեր։ Ո՚գործս մեր երբեք ուղիղ առնէ ՚ի մեզ ՚ած. մի՝ ՚ի ձեռն ընորհաց, որովք ՚ի նեբքուստ առաջնորդէ մեզ գոր.

ծել՝ ըստ հաձոյից իւրոց որպէս և ՚ի ձեռն նախա-
խնամութեանէ իւրոյ, որով և կատարել զկամս գործ-
մեր, թէ նէրբին ինչ, և թէ արտաքին։ Այրիրդ՝
՚ի ձեռն օրինաց իւրոց, որովք արտաքուստ առաջ-
նորդել մեզ ՚ի գործս. զի այն օրինք են անսխալելի
կանոն կենաց. որոց եթէ գործք մեր համաձայնեա-
ցին, լինին ուղիղ. ապա թէ տարաձայն գտցին, լե-
նին թիւր։ Այրիրդ՝ ՚ի ձեռն այլ և այլ արտաքին ի-
րաց՝ զորբինակ ՚ի ձեռն բարի վարուց այլոց, ՚ի
ձեռն քարոզութեան, ՚ի ձեռն պատժոց, վշտաց, նե-
ղութեանց, ևն։ Այրդ ինքիր մարգարէին՝ որպէս տե-
սանէ, չայի տիրապետս յաւաջինն՝ որ լինի ՚ի ձեռն
չնորհաց. որում փափաքելով հասանել աղաչէ զնա.
դու ասէ ՚ի ձեռն չնորհաց քոց ուղղեա զգործս մեր.
որպէս թէ ասէր. մի տար այլոց ուղղել, այլ դու
ուղղեա։

Ո այամ ուղղութիւն խօսելով լամբ՝ ըստ գործոց ըզ-
գայութեանց, ասէ, յորժամ ծագէ չնորհք ՚ի սիրտս
մեր, գործք մարմնոյ և զգայութեանց մերոց ուղղին.
զի * աչքն ուղիղ չարժի յիւր հարկաւոր գործս, և
,, ականջքն յիւր լսարն, և լեզուն ՚ի բարբառելն,
,, ձեռնն ՚ի գործելն, և ոտն յընթանալն։ Ո այս
հզեալ մարգարէին վասն ուղղութեանէ գործոց՝ խօսի
ապա և վասն երկրորդին՝ այսինքն վասն յաջողու-
թեան՝ ասելով։

Ո գործս յեռաց մերոց յաջողեա մեզ։ Յաջողելն այ ըզ-
գործս կենդանագիր զուղղութեանէ գործոցն, և յայնժամ
ասի յաջողել՝ յորժամ զամենայն արգելսն ՚ի բաց վա-
նելով՝ ածէ ՚ի կատարումն։ Այս ըստ այսմ առեալ՝
սովին բանիս մաղթէ մարգարէն, զի ՚ած ՚ի ձեռն
չնորհաց կամ ՚ի ձեռն նախախնամութեանէ իւրոյ հաս-
տատուն առնելով զգործս մեր, ժամանեցուսցէ մինչ
չև ՚ի վախճան, և հաստուսցէ ՚ի ժառանգութիւն կե-
նացն յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ Գ.

Աղօթական վիճակ յուսացեալոյն յԱստ, ի լսելն լինել աղաղակից նորուն առաջի նորա, և ի փայփայել նորա յոգւոյ. ի պատուականել աներկիւղ ի տուէ և ի գիշերի, և ի պահպանել ձեռամբ հրեշտակաց, գնալ անվտանգ ի վերայ իժից և քարեաց. ի փրկել և ի փառաւորել առ Յիսուս։

(Ընդունուած է յօժարութիւն բարեխելոյն, ընդ հովանեաւ այնչափիկ հանգիստ։ 2 Աստուած ասէ՝ ընդառաջել իմ ես, ապաւեն իմ ա՛ք, և ես յաւետ ի նա։ 3 Ոչ թէեւոյն չիւրոց ապաւինեալ որոյն, և ի բանիցն խոստացեալ է Ոչ ինձ ինչ ընծայէր պիտէ. ի հովանի ինոյ նորա յաւետեան։ 5 Ոչխարն չեն լուրջ եղիցի պահ՝ ձկնարարութիւն նորա։ 6 Ոչ երկիցես զաւ չերկիւղն փետրէ, և ոչ ի գնաց՝ որ լուսէ ի տուէ։ 7 Հիւրէ որ ղրկէ ի խաւարէ, ի փայփայութիւն գիւտ ի հաւատալ առաւ։ 8 Ոչնչէն ի ձորմանն տասնի հազարք, և բնաւ ընծայէն տասնի։ և աւ տեղ ինչ ոչ երկիցես։ 9 Ոչ այլ ինչ ալոյ տուչ հայեացես գաւ, և պատասխանութիւն տեսցես։ չի գաւ ես յայտ իմ ես։ 10 Ո՛ երկիրեան արարեր տեղ տպաւեն։ ոչ հասցեն աւ տեղ չարչ, և տանիցես ի վերչեցեալն ի չարիս տո։ 11 Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վէտ, պահել զքեզ յամենայն ճանապարհս տո։ 12 Ի բաղխիս ընծայէն զքեզ ոչխն։ չի ի երկեր հարցես զարչ զաւ տո։ 13 Ի վերայ եղէզ և տարեցի գնացես գաւ։ և աւ ոչ խոնեսցես զառիծն և զվիշապն։ 14 Ոչ ասէն չես յաւետեան, և երկիցէ զնա. հովանի եղիցէ նմա, չի ծանեաւ զնա նման իմ։ 15 Կարգասցէ աւ ի՛ս և ես լսեայց նմա. և աւ նմա եղէց ի նեղութեան։ 16 Փրկեցից և փառաւորեցից զնա. երկայն աւուրբ լցուսից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

ՎԼԻՊՈՒԹԻՒՆ

(Քրիստոսի գովքին ի գրքին (անվերնագիր ի յեբրայեցւոց ։)



ՅԼԻՒ՝ լաւ ի ՎԱՂՁ՝ ՈՉ ԴՆԻ

ինչ վերնագիր յայս սաղմոս. որպէս և ոչ ի հետևեալ վեց սաղմոս. որոյ մի ի սաղմոսս ինչ մեր գրի՝ անվերնագիր ի յեբրայեցւոց. այսինքն թէ այս սաղմոս անվերնագիր է ի սաղմոսս եբրայեցւոց։ Վասն այսր պատճառի ունիմք զնդեն ցուցանել՝ թէ այս սաղմոս, և հետևեալք սորա վերջերին սաղմոսք՝ իցեն մովսէսի. զի որովհետև ի նախընթացն սորա գնի վերնագիր յանուն մովսէսի՝ յոչ գնիլն ի սոսա՝ սովին ցուցանի ասեն՝ թէ սորա ևս իցեն նորա։

Լայց նախ առաջին ոչ է յայտ թէ նախընթաց սաղմոսն իցէ յիրաւի մովսէսի, որպէս ասացաք անդ. երկրորդ՝ թէ և մովսէսի լինելոյ այն՝ այնու ոչ ցուցանիւր՝ թէ սոքա ևս մի չուներլոյ վերնագիր իցեն նորա. զի այս պատճառ գոլով պակասական՝ ոչ զօրէ ցուցանել։

Լսակ հաւասարակաց կարծիք է՝ թէ այս սաղմոս իցէ դաւթի. որոյ մի եգիտալ է օրհնութիւն գովեստի ի դաւթի. որպէս տեսանի ի Թագ" ԻԵՌ" և լաո" և յայլս, և ի մեզուսն, ևս և ի բազում մեկնութիւնս նախնեաց։

Լ՝այլ թէ չինչ առնէ իցէ ասացեալ՝ բազում են կարծիք. ոմանք թէ գուշակութիւն իմն ասացաւ՝ հայեցեալ յԵզեկիա, որ յուսալով յԱՏ՝ զերծաւ յաւորեա տանեայց. յայս կարծիս է և վարդան։ Լ՝այլ այս է յարմարական մեկնութիւն, և ոչ՝ նկարագրական։ Ոմանք՝ թէ զայս ասաց դաւիթ ի հալածիչն ի տա. ւուղայ կամ յաբեսաղոմայ, ի յուսալ հարստ յօգնութիւնն ասէ. և կամ թէ գուցէ յետ հարուածոյն՝ որ

եկն 'ի վերայ ժողովրդեանն իսրայէլի վն թուելոյ
նորա զնոսա ։

Կան ես՝ որք ասեն, թէ զայս ասաց դաւիթ առանց իրիք առթի՝ միայն իբրև օրհնութն գովութն 'ի քն. ը որում զբանս ինչ սորա որ 'ի 11 և 12 համարն յառաջ մատոյց սատանայ՝ ասելով առ նա. * գրեալ է թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է „ վն քո, և 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի „ երբէք հարցես զքարի զոտն քո‖. (մատ. դ. 6.) բայց սատանայ զայս ոչ մատոյց առաջի իբրև զայն ինչ՝ որ գրեալ իցէ վն քսի. այլ իբրև զայն ինչ որ գրեալ է վն հաւատարիմ ծառայից այն, կամ վն նոցա՝ որք իբրև որդիք հպատակ կան կամացն այ, և յամենայնի պաշտպանեալ լինին 'ի նմանէ. յորմէ կամէր ձեռնարկել, թէ ուրեմն՝ եւս առաւել վն քո է այն պատուէր. որովհետև որդի այ համարիս զքեզ. այլ զայսմանէ տես 'ի ստորև 'ի համարն 11 ։

Նայց արդ որովհետև ոչ է որոշակի յայտ առիթ յարինելոյ սաղմոսիս, մեք 'ի մեկնելն ոչ յառիթն հայիմք՝ որով ասացաւ, այլ յայն՝ որոյ վն ասացաւ. և ըստ այսմ վերնագիր սաղմոսիս բացատրի այսպէս. այս սաղմոս դաւթի երգի իբրև օրհնութն, առ 'ի գովել և մեծացուցանել զգթասիրութին այ, զոր ցուցանէ ծառայից իւրոց՝ որք բոլորովին յուսան 'ի նա ։

Այս սաղմոս չորեքումբք գերազանց գտանի. մի՝ ը նիւթոյն՝ յորում առաջի դնին զարմանալի ներգործութիւնք խնամոցն այ 'ի վերայ ծառայից իւրոց ։ Երկրորդ՝ ըստ քաղցրութն ոճոյն՝ որ առաւել եւս անոյշ է յիւրում բնագրի. որպէս վկայեն թարգմանիչք ։ Երրորդ՝ ըստ նմանաբանութեցն՝ որովք վսեմաբար 'ի մէջ բերի օգնութն և պաշտպանութին այ ։ Չորրորդ՝ ըստ փոփոխելոյ դիմաց բանին. զի է ուրեք՝ ուր խօսի մարգարէն, և է ուրեք՝ ուր խօսի արդարն, և է՝ զի այ խօսի. զորմէ տես 'ի սկիզբն 14. համարոյն ։ Եւ վն այսպիսի գերազանցութեան սորա յամենայն եկեղեցիս 'ի սկզբանէ և այսր յաճախ ասի այս սաղմոս, առ 'ի քաջալերելոյ սովամանկանց եկեղեցւոյ յարել յած և յուսալ 'ի նա յամի ։

ԲԱՆ

ԱՌ. Ո բնաիւթ է յօգնութիւն բարբրելոյն, ընդ հովանեաւ ոյ յերկինս հանգչեցե։

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Աղօթեաւ յամենայն ի կեանս և ի գործս մեր կա-
րօտ եմք օգնութեան ոյ և պաշտպանութեան նորա, եր-
կնչանիկ համարել նա, զոր ոչ երբեք պակասէ անտի,
այլ միշտ ունի և ժառանգէ զայն. նովին վարի, և
նոաւաւ գործէ. ի նմա պահպանի, և ի նմին հանգ-
չի։ Հայա ակնարկելով մարգարէին՝ ասէ սկիզբն
առնէ առաքեալս, լուսաւորչին իմն երանի տալով այն-
պիսեաւն։

Յոկ օգնութիւն ոյ ընդհանրապէս առեալ նշանակէ
զի և իցէ խնամն նորա, զորս ցուցանէ առ բանաւոր
արարածս. այլ մասնաւորապէս առեալ նշանակէ
զայն նպաստ, զոր կընդունիլ մեր յոյ՝ բաւական լի-
նիմք առ այլևայլ իրս յայլևայլ կարգի. ի բարեպա-
կան կարգի՝ գործել զբարին և խորշիլ ի չարէ. ի
բնական կարգի՝ ունիլ զգոտակարն և զգատիլ ի վնա-
սակարից. ի գերբնական կարգի՝ առնիլ զշաճոյսն
ոյ և տառնել զանհաճոյս նորա։ Չէ թէպէտ նշանա-
կութիւն օգնութեան ըստ ինքեան առեալ՝ մտածի առ
ի բարին, բայց քանզի և զերծ լինելն ի չարէ՝ է
բարի ինչ, այն ևս վերածի ի ներգործութեան օգնու-
թեան. և յայս միտ առեալ լինի ասա յասելն։

Ո բնաիւթ է յօգնութիւն բարբրելոյն (ընդ հովանեաւ ոյ յեր-
կինս հանգչեցե։) Կամ ասել, որ գնելով զոյս իւր յոյ՝
գտեալ է զօգնութիւն նորա, և զայն ստացեալ ունի
երբև իւր բոյն կամ բնակութիւն, այնպիսին զտցէ
հանգիստ ընդ հովանեաւ նախախնամութեան ոյ երկ-
նաւորի։ Չէ զայս ոչ է պարտ մասնաւորել առ ոմանս
և ևթէ, այլ տարածել առ ամենեսին. ուստի ոչ տակ
մարգարէն՝ արդարն կամ երկիւղածն բնակեալ յօդ-

նուելէ բարձրելոյն ես, այլ թէ ո՛չ բնակեալ է յօդնուելէ ես. Այլ բառդ՝ դնի՛ ի տէղի բառիս ոչ, և յուժգնուելէ նշանակելէ իբրու ընդարձակագոյնս տարածէ զինս բանին. որպէս թէ եդեալ էր. ոմն ոք և իցէ՝ եթէ արդար և եթէ մեղաւոր ապաչխարող, եթէ իմաստուն և եթէ տգէտ, եթէ մեծատուն և եթէ տգրկան, եթէ ազատ և եթէ ծառայ, եթէ այր և եթէ կին, եթէ ծեր և եթէ մանուկ. յայսպիսեսայ ասեն եթէ՝ ոք ապաւինեալ իցէ յինձ, և զնա ունիցի իւր օգնական, այնպիսին արդարև. Հանգիցէ. զի ասծոյ զմեծատուէնն խոսի և ոչ զաղքատն անարդէ. վերջի ոչ է ակնառուելէ առաջի նորա. * բառական յա,, մենեսին՝ որք կարդան առնա՝. (Հռոմ. Դ. 12.) միայն թէ այս յայս նորա իցէ բոլորական, և միշտ, և անկասկած.

Ա՛սացի նախ՝ բոլորական, զի յայսմ է բանն, որոյ վերջ ոչ ասէ մարդ արեւն՝ որ գտեալ է յօգնուելէ բարձրելոյն, այլ՝ որ բնակեալ է յօգնուելէ բարձրելոյն. արդ որ բնակի յիմիք՝ բոլորովին անդ է, և ոչ թէ մնասմբ ինն անդ, և մնասմբ ինն այլուր. ուրեմն և որ բնակի յօգնուելէ ոյ՝ բոլորովին՝ ի նմին պարտի լինել. և զայս ոչ կարէ առնել՝ բայց եթէ բոլորովին յուսալով յասծ, և զինքն բոլոր յօգնուելէ նորա զետղելով.

Ա՛սացի երկրորդ՝ միշտ, այսինքն հաստատ և անշարժ. վերջ զի ոչ ասէ մարդ արեւն՝ որ գնայ յօգնուելէն ոյ, կամ որ բնակի, այլ որ բնակեալ է, այսինքն որ միշտ հաստատուն յուսով կայ յօգնուելէն ոյ. յոր միտ լերը" դնի ենդէվ, որ նշանակէ հաստատուելէ բնակող կամ զետղեալ.

Ա՛սացի երրորդ՝ անկասկած, այսինքն ոչ կասա կալով ի յուսոյ ի ձեռն կասկածանաց, կամ ոչ թաժանելով կասկածանօք զյոյս իւր յօգնուելէն ոյ. զի ոչ ասէ մարդ արեւն սոսկապէս, որ յուսացեալ է յօգնուելէն ոյ, զի այս կարէ ընդ երկբայութէ անկանել, այլ որ բնակեալ է, այսինքն որ արաբեալ է զայն՝ իւր բնակուելէն. այնպէս, մինչև անկասկած՝ ի նմին կալ, ի նմին հանգչել, ի նմին ննջել և ի նմին ու-

հել զկենսս իւր՝ հանդերձ ամ կրիայիւ՝ որ ու երբեք տա-
րակուսի ելանել արտաքս քան զտուն իւր, այլ՝ ինձմա
կեայ և՝ ի նմին շարժի. և՝ ի սահիլելն յերկիրագ՝ ՝ի
նմին գալ և՝ ի նմին ծագել. յոր միտ յերբ՝ փոխա-
նակ օգնութեան՝ գրի պէտքիս. այսոքիւ՝ ի ծածկեալ
կամ՝ ի գաղտնիս. իսկ ծածկութիւն կամ գաղտնեաց
ոչ այլ ինչ իմացեալ լինի ասա, բայց եթէ նոյն իսկ
օգնութիւն ոչ. վասն զի այն օգնութիւն նորա, յորում
բնակի մարդ, ոչ է երբեք երևելի աչառորակ կանդ-
նեալ, այլ գաղտնի, և միայն հաւատալ տեսանելի՝
յորում լինին յաւէտ գաղտնի և՝ ինալ անմատչելի
և անհասանելի՝ ի ծշմարտից իւրոց. և կալ՝ ի նմին
յաներկիւանութեան երբեք՝ ի գաղտնի և յանդիսանելի
ամենայն, մնալով յինքեան անդորրացեալ և ապահո-
վացեալ. զի ոչինչ դիպէ ևս՝ թէ յկրկնիսի և
յորջ օգնութեան բնակի.

Իչ որպէս զի զայս անդորր ապահովութեան ստուգ-
գոյն լինել ցուցցէ մարդարէն՝ վարէ ստահանոր զաս-
ւոյդ էքզէկեա՝ յասելն, բարձրելոյն. կարօղ եր ասել՝
ձեռ կամ՝ ոչ, կամ ամենակալի, ևն. բայց բարձրեալ
դնելով՝ կամն առաւել ստուգել զաներկիւանութիւն
ապաւինելոյն յԱծ՝ ըստ երից. ով՝ ի կողմանէ նոյն
իսկ բարձրելոյն. զի նա գոլով յանչափ բարձրութիւն՝
զամենայն տեսանէ, և ամենեցուն իշխէ, ընդ որս
տեսանելով և զայն որ ինձս ի մէջ, նմանապէս և
զոյն՝ որ օգտակար է, ըստ տեսանելոյն իմում.
Իրկիրդ՝ ի կողմանէ քնակեցելոյն, զի յայտ է թէ՝
որ բնակի ի տեղի անմատչելի բարձրութեան՝ յայտա-
հովս է ի ձշմարտից. ապա և որ քնակի յօդնակա-
նութիւն յանբաւս բարձրելոյն, ինայ ապահովագոյն
ըստ ամենայնի. Իրկրդ՝ ի կողմանէ եղանակին.
իբր զի այնպիսին ի բարձրութիւն ոչ և յանչափութիւն
նորա գրեթէ իբրև ի ծածկութիւն ամպոց պարագ-
րեալ պահի. որպէս որ ի բարձր լերինս ելեալ չքնա-
պատեցի ի բարձրացեալ ամպոց եղելոյ անդր ծած-
կեալ լինելով ի տեսութիւն թշնամեաց և գազանաց,
և իբրև թէ պատսպարեալ ինալով աներկիւղ և
հանգիստ. որպէս պատահեցաւ բազմից. ի սոյն
հայելով առաջի դնէ մարգարէն զառաղ հանձն յա-

սեր ։

Ի՞նչ հաւանեաս այ յերկինս հանգիչե ։ Լսեաղ հաւանի՝ կրկ-
կին մտաք ի գործ ածի. մի՝ փոխանակ այնը որ ի
տապտ սբևու հովացուցանի, զեզեան ի՝նեքրոյ իւր-
և յայս միտ դնի ի համարն 14. յատկին. * հովանի
,, եղէց նմա ‖. որպես ասի և ցամաքին՝ թէ հովանի
լինիցէ իսրայէլի ։ Լչկերդ՝ փոխանակ այնը ստուեր
արկուլեան կամ փոխանակ այնը ստուերի՝ զոր պատ-
ձառէ հովանաւորմն ի հովանաւորեալ տեղին ։ և
յայս միտ գնի ասա. և բան այսմ ածի ասի հովանա-
ւորիչ՝ կալով յերկինս ։ իսկ իմնամբ պահպանուիլն
և պաշտպանուիլն նորա՝ իրրև հովանաւորութիւն ,
ընդ որով հանգչի յուսացեալն ի նա և ինոյ անվնաս.
զի որպէս որ կայ ի տօթագին աւուր ընդ ստուե-
բաւ ստուոց ծառոց, պահպանի ի տապոյ ջերմութիւն,
այնպէս և որ կայ ընդ խնամովն այ, պահպանի ի
տապոյ ա և իցէ փորձանաց ։

Լայց զի ցուցցէ մեզդարձն, թէ քազում առաւե-
լութիւն պարտ է իմանալ զայս յաւելու զբառդ երկին՝
ասելով, յերկինս ։ Օ այս դնելով յայս առնէ թէ
զորօրինակ երկիրս պատեալ կայ բարձրութիւն երկ-
նից, այնպէս և յուսացեալն յոյժ յամենայն կողմանց
չորքոտնակի պատեալ կայ հովանաւորութիւն այ՝ որ
է յերկինս. իբր զի այնպիսին ոչ յայսմ կամ յայնմ
ևէ պակի անվնաս, այլ յամենայն վտանգս չուր-
քանակի բոլ հոգւով և ի մարմնի. և ա այնուհետև
համարձակեսցի մերձենալ առ նա՝ ի վնասել, ոչ ան-
մարմին վիշապ, և ոչ վայրենի գազանք, ոչ յորձանք
ջուրց, և ոչ հրոյ բորբոքմունք. զի սոքա ամենեքին
ձանաչեն զհովանին այ. և զնոյն նշմարելով ի վէ
այնպիսեացն՝ գրեմ պատկառելով ի նմանէ՝ թնաւ
ոչ իչեն մերձենալ առ նա, կամ իւիք վնասել նմա.
զի թէ բոլ արտաքին պատմելոցն կայսբանան եղ-
ջերու մի ունելով ի պարանոցի իւրում գրեալ զայս
բան միայն՝ * ինքնակալին եմ ես, մի մերձենար յիս ‖.
այնպիսի երևիւր, որում ոչ ոք իչեն վնասել, քանի
ևս այնմ՝ յորոյ վերայ կայցէ ոչ եթէ լոկ անուն այ
գրեալ, այլ ամենաթարմ և ամենահնամամ հովանի տես-
լեամբ նորա ։

Թո՛ղ զայն՝ զի արարածք ամենայն տեսեալ թէ նա եղեալ է գլուխ իւր ոչ յայն՝ որ մեծ է առ ինքեանս յերկրի, այլ յայն որ բարձրեալ է յերկինս, և ինքն իբրև բոց 'ի նոյն ցոլանայ սիրով, փոխանակ վնասելոյ օգնեն նմա, առ 'ի յառաջանալոյ նմա 'ի նոյն. քանզի որոց սիրենն զԱ̃ծ ասէ առաքեալն՝ (Հռովմ. Ը. 28. ըստ լատ.) ամենայն ինչ գործակից լինի նոցա 'ի բարին, այսինքն է առիթ յառաջանալոյ 'ի բարին. իսկ եթէ ընդ հակառակն ընդդէմ յարիցեն, որպէս և յարեան երբեմն բազումք ընդդէմ այսպիսեաց բազում փորձանօք, հասանէ առ նոսա պաշտպանութիւն Ա̃յ երրակի.

Նաև թէ զիա՛րդ, ա՛ռ քեզ օրինակ զգործս մարդկան. որք երրակի պաշտպանեն զայլս. մի՝ շարժելով զսուր կամ արձակելով զնետս 'ի վերայ թշնամեաց. երկրորդ՝ 'ի բաց վանելով զնետս յարձակեալս 'ի թշնամեաց. և երրորդ՝ անձամբ անձին յինքեանս ունելով զպաշտպանեալն. սոյնպէս և Ա̃ծ երրակի պաշտպանէ զյուսացեալս իւր. մի՝ արձակելով զնետս ը̃դդէմ վտանգից զի խափանեսցին. երկրորդ՝ զյարձակեալ վտանգսն վանելով. և երրորդ՝ իբրև թէ անձամբ անձին 'ի մէջ բազկաց իւրոց առնլով զնոսա.

Նաև ըստ այսմ պաշտպանիլն այսպիսեաց օրինակի յայն՝ որով պաշտպանին ձագք արծուեաց և հաւուց. զի որպէս սոքա ընդ հովանեաւ թևոց մօր իւրեանց յապահովի մնան, սոյնպէս և որք Ա̃ծապէս յուսան յԱ̃ծ՝ ընդ հովանեաւ պաշտպանութե̃ նորա ապահովանան. և ոչ ևս կրեն ինչ կասկածանս. զի պաշտպան իւրեանց յերկինս գոլով՝ ըստ ամենայն շրջահայեցութե̃ պահէ զնոսա.

Այլ ասելով աստ՝ յերկինս, ոչ է պարտ իմանալ թէ Ա̃ծ հեռի գոլով պահիցէ, այլ թէ նա ինքն բարձրեալ գոլով ըստ ամենայնի՝ մերձ է ամենայնի, և կայ յամենեսին. և որ ոք ապաւինի 'ի նա՝ հանգչի ընդ հովանեաւ նորա ոչ իբրև երկրաւորի, այլ իբրև այնր, որ է յերկինս, և տիրէ ամենայն էից՝ երկնաւորաց և երկրաւորաց. և յայս միտ դնէ աստ մարգարէն զբառդ յերկինս. որ քերականօրէն առեալ՝ լինի իբրև պատահական ինդիր բառիս Ա̃ծ՝ կամ իբրև ածա-

կան, որպէս թէ ասէր. ընդ հովանեաւ այլ՝ որ յերկինս է, կամ այլ երկնաւորի. որպէս դնի ի Թագդ" եօթն", լաւ", եւթնովք", և արաբ". որոյ փոխան ի մեռնել եգեալ է * այլ յերկինս ||. որ է նոյն. այսինքն այլ երկնաւորի. յոր միտ ասի. * հրեշտակը նոցա ,, յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ ,, որ յերկինս է ||. այսինքն հրեշտակք երկնից. (մատթ. ԺԸ. 10:)

Լսկ յերբ" դնի միայն սոսկ՝ կամ սադգայի, որ նշանակէ շատ, այսինքն ամենաբաւական, կամ բաւական լինելեան, կամ ինքեամբ կարող ամենայնի ի վանել, այսինքն է ած բնակեալ յերկինս. որով առաւելու զօրութիւն բանին. զի ըստ այմ որ յուսայ յած, ոչ միայն պաշտպանի ի նմանէ յամենայնի, այլ և զամենայն բաւականութիւն գտանի ի նմա" անկասկած հանգչի ընդ հովանեաւ նորա. վասն որոյ յարի զպատգ հաւգչէ" ասելով.

Հաւգչեղ. ||է ասէ կացցէ կամ ինասցէ, կամ նստցի ||ե, որ կարէ լինել առ ժամանակ մի՝ երբ անցցոյ պէս. այլ հանգչիցէ. կամ ||ե այլոց Թագդմանութեանց" տեսեսցէ, կամ յամենայն. որով ցուցանի անշարժ ինալն ի խնամս այլ. և յայսմանէ յայտնի և այս լինել հաստատութեանն երջանիկ կենացս յաւասարչէն յած. զի այնպիսին գիտելով Թէ ո է նա՝ յոր ինքն եգեալ է դպրոց իւր, ոչ երբէք դադրի ի նմանէ, այլ կայ և ինալ ի նմա. որով և ոչ իսկ շարժի ի կայից հանգստեան իւրոյ, անհակած և անբեկեան լինելով յամենայն պատահարաց.

Լասցի՝ գիտելով. և այս ||ե բազում իրաց. զի այնպիսին գիտէ նախ՝ Թէ ի ձեռին այլ է ամենայն ինչ, և առանց նորա կամայ՝ և առանց նորա շարժութեան ոչինչ լինի. Գիտէ երկրորդ՝ Թէ ոչինչ արարածական զօրութեան կարող է զինքն բաժանել ի նմանէ, Թէ և ամենէքին իսկ՝ եթէ երկնայինք և եթէ երկրաւորք և եթէ ևս և ամենարարածականք ի մի միաբանեսցին ընդդէմ իւր. Գիտէ երրորդ՝ Թէ նա ոչ երբէք Թողու զինքն՝ յոր եգեալ է բոլոր զինքն. զոյն իւր այս միայն է՝ զի մի՝ ինքն Թողեալ զնա. և յայս բերի Տառաջանդ նորա, յասելն. մի Թողուր

զիս Թողուլ զքեզ։ Վասն չորրորդ՝ զի ՚ի կարդալ իւրում առնդ լսէ նմա, և ձանաչէ՛լով և Թէ հա՛ձի նա և աղօթիւ ընդ կարդացումն ընդ այն՝ համարձակ կարդայ։ որով ոչ միայն հաձոյական ընծայ նուիրէ նմա զկարդալ իւր, այլև առնու ՚ի նմանէ զՀաձոյն իւր։ Վասն հինգերորդ՝ Թէ յամենայնի իւր ձեռնտու է և օգնական, պահպանող և պաշտպան, ՚ի գոլն արԹուն և ՚ի լինելն ՚ի քուն, յուտելն և յըմպելն, ՚ի կալն և ՚ի գնալն, ՚ի գործելն և յանգործ մնալն. վասն որոյ ոչ էս ունի ՚ի հոգս առնելոյ։ Վասն վեցերորդ՝ Թէ արտաքոյ նորա ամենայն ինչ մնասի է և ունայն, պատրանք և խաւար. վասն որոյ ՚ի նա միայն յարելով՝ ՚ի նմա միայն պարտիլ դանձն, ՚ի նմա միայն զհետեղէ զամենայն, և ՚ի նմա միայն ունի զՀոգն. մինչև ոչինչ միայն նմա՝ որ իցէ իւր. ուստի և առ այնպիսին բառդ է՝ կամ չ՚ պիտակապէս ՚ի գործ ածի, զի չունի ինչ. վասն զի զամենայն զոր ասի ունել, ունի յայն՝ որ է ամենայն. և ինքն յայլ ինն փոխակերպել, զայն ևԹունի՝ յորմէ է, որով է, և յորում է։ Վասն եօԹնեքորդ՝ Թէ քանի հզօր է նա, քանի բարձր, և քանի մեծ. զիարդ քաղցր է, զիարդ գեղեցիկ, զիարդ բարի, և այս և արքան գԹած է և բարերար, քանի խնամական է և մարդասէր։

Օ այս ամենայն գիտելոյ, ՚ի ակարանալն զօրանալ, ՚ի չշտանալն դիւրանալ, ՚ի տրտմիլն զուարԹանալ, և ՚ի վտանգիլն ապահովանալ. և որ անհնարին Թուի, ՚ի խաւարիլն պայծառանալ, ՚ի խստանալն կակղանալ, ՚ի մահանալն կենդանանալ, և ՚ի մերձենալն իակ ՚ի դրանն դժոխոց, յարբայաԹէն երկնից վերանալ։ Ոչ հալածանաց բռնուԹէն խորտակել զղօրուԹէն նորա, ոչ աղքատուԹէն նսեմացուցանել զուրախուԹէն նորա, ոչ վշտացին հիւանդուԹէն նուաղեցուցանել զհաղաղուԹէն նորա, ոչ յարձակմունք նախատանաց վերաբերեն զընդարձակուԹէն սրտի նորա, ոչ կրից յարուցմունք վրդովին զանդորրուԹէն հոգւոյ նորա, ոչ բանտարկուԹիւն վատաԹացուցանէ զնա, և ոչ շղԹայահատուԹէն վաստակեցուցանէ, և ոչ այլ ինչ արարած բան գրելոյն պողոսի. (Հռոմ. Ը. 35.)

քանզի յամենայնի հանգուցեալ կայ ընդ հովանեաւ ամենաբաւականին իւրոց, որ էն յերկինս յանմատոյց սեթոռ բարձրութեանէ. մինչև ինքն ևս բաձրացեալ ՚ի նոյն. յորում ոչ ևս ՚ի հովանին, այլ ՚ի հովանաւոր բիւրն հանգիցէ, գեամ յանդիմանն տեսանելով զնա և ըստ բոլորին ժառանգելով.

Ի՛ դրաբև մեծ է այս՝ այսինքն ընդ հովանեաւ նորա հանգչել, բայց մեծ ևս է ՚ի նոյն ինքն ՚ի հովանաւոր բիւրն հասանել. զի յառաջինն գոյ խառնուածն ստուերաց. որովհետև պէսպէս խաւարային խորհուրդք, և բազմադիմի այլափոխութիք ստորին մասին անձնիշխան կամաց նսեմացուցանեն զհոգի նորա. այլ յերկրորդումն՝ այսինքն ՚ի հասանել անդ ՚ի հովանաւորիչն՝ տեղի տացէ այս ամենայն, և յաջորդեացէ այն՝ յորում ոչ ևս իցէ ստուեր խաւարի. Յիս ահա ասէ այս է քաջալերութիւն մեծ յուսացելոյն յայծ, առ ՚ի անգորը հանգչել ընդ հովանեաւ նորա, գիտելով թէ յետ ստուերախառն հովանւոյն հասցէ այն՝ որ է լոյս անստուեր.

Յե՛ սայս միտ յերբ՚՚ փոխանակ հանգչելոյ՝ դնի ինքեան այսինքն օթևանի կամ օթի. զոր ե՛օթ՚՚ և լատ՚՚ և այլք թարգմանեցին՝ յամ, և ասորիք՝ փառաւորի; Իսկ ոմանք թարգմանեն՝ ապատի, և այլք ուղղագոյնս՝ երեկօթս առնէ, որ է անցողաբար օթևանել ուրեք ՚ի գիշերի. որով յուցանի նախ՝ թէ ՚ի կալ մեր ՚ի գիշերի կենցաղոյս չունիմք այլ ուրեք օթևանել կամ հանգչել, բայց միայն ՚ի հովանին այ՝ որ յերկինս. երկրորդ՝ թէ յաստի կեանս միայն է այս հովանի այ ՚ի վերայ մեր, և ոչ ՚ի հանդերձեալն. զի անդ ոչ գոյ երեկօթս առնել, այլ պայծառանալ անստուեր լուսով. երրորդ՝ թէ փութով վերջացցի այս ամենայն, և անցցէ իբրև գիշեր միոյ աւուր պանդխտութեան, և եկեսցէ տիւն յաւիտենական հանգստեան.

Ի՛ այլ ասա գիտելի է՝ զի յայսմ առաջին տան սաղմոսիս՝ կրկին օրինակաւ կարէ լինել սրտհոգւոյ երկուց հատուածոցն. մի՝ իբրև ուրոյն. որպէս թէ ասէր. երանելի է՝ որ քնակեալ է յօգնութիւն բարձրելոյն, և երանելի ևս՝ որ հանգիցէ ընդ հովանեաւ այ՝ որ

յերկինս է։ Յերկրորդ՝ երբև մի քան, յորում մին ինչ հեռաւորէ միւսոյն, որպէս թէ ասէր. որ միանգամ բնակեալ է յօդնութեան բարձրելոյն, այնպիսին հանդիպէ ընդ հովանեաւ ոյ որ յերկինս. և զի այս ուղղագոյն տեսանի, և չարադրութիւնն իսկ զսոյն ցուցանէ. մեք ևս ըստ այսմ կարգեցաք. նաև զի քնագիրն երբ" ըստ այսմ խմացեալ լինի. քանզի բառ առ բառ թարգմանի այսպէս. * բնակեաւն ի ծած՝ ,, կոյն բարձրելոյն՝ ի հովանի բաւականին օթի ‖։ Յամբ" զառաջ ն, առնու առ նաև կոչականապէս, և յերկրորդ դէմս վերածէ զայս բան, որպէս թէ գրեալ էր. * ով անձն իմ բնակեալդ յօդնութիւն ,, բարձրելոյ՝ ը հովանեաւ ոյ յերկինս հանգիցես ‖։ Իվ մարդ ոյ ասէ՝ հովանին ոյ ի վերայ քո է. հանգիցը ի ներքոյ նորա աներկիւղ յամենայն գժրանաց հակառակամարտիցն. և հանդիպս հաւատով. զի թէ հաւատաս, յուսաս. և թէ յուսաս, վայելես ի խնամեն. և յորժամ վայելես՝ տիրես, և լինիս ոչ միայն ընդ հովանեաւն ոյ, այլև ինս ի քեզ բնակեցուցանես։

Յատանօր արժան է ի քննութիւն մատուցանել և զգեղեցիկ կարգ շարադրութիւնն բառից այսր չասնորոյ, որ տպաւորի ի ձէ վեցանկիւնի՝ երրեակ չարաբերութիւնք։ Յառաջինն տեսանի ի բառագ՝ բնակեալ է, և հանգիցէ։ Յերկրորդն տեսանի ի բառագ յօգնութիւն, և ընդ հովանեաւ։ Յերրորդն տեսանի ի բառագ բարձրելոյն, և ոյ յերկինս։

Յայս համեմատութիւն բառից յայտ առնէ զհամեմատութիւնն զոյն՝ զոր ունի հոգին ընդ ոյ, ըստ համաձայնութիւնն կամաց, ըստ հանգիստութիւնն գործոց, և ըստ միաւորութիւնն հոգւոյն, մինչև լինել նմա ձմարտիւ ի պատկեր ոյ՝ յորում ստեղծաւ ի սկզբան։ Յայս է ահա վիճակ մարդոյ՝ որ բոլորովին եգեալ իցէ զոյս իւր յայն՝ որ արար զնա։ Յայսթեսումն չկայ այլ ինչ առնել՝ բայց եթէ ի լիութենէ սրտի իւրոյ օրհնել զնա, և գոհանալ զնմանէ. զի չունի ըզբաղձս յայլ ինչ. քանզի ոչ է յինքեանս՝ առ ի խնամից զինքն, և ոչ յայլս՝ առ ի հոգալոյ զնոցանէ. այլ յնա միայն, յորում ունի և զինքն և զամենայն

իբրև յայմմ, որպ է. ուստի ձշմարտիւ կարէ ասել առնա, ած իմ, և ամենայն ինչ. ած իմ, արտաքոյ որպ ամենայն է ոչինչ. ած իմ ընդունող իմ, ապաւէն իմ. և զայս յառաջ քեզ մարգարէն ի յաջորդ համարն ասելով։

Ած. Աստուած ես՝ ընդոծնելի իմ ես. ապաւէն իմ ես, և ես յուսամ ի նա։

Այս բան կրկնակի յարի ի նախընթացն. մի՝ յառաջ գասելով. որպէս թէ եդեալ էր. որ յուսալով յած աստուած նմա, դու ես ընդունող իմ, և դու միայն ապաւէն իմ, այնպիսին քնակեալ եղիցի յօգնութիւն բարձրելոյն, և հանդիպել ընդ հովանեաւ նորա՝ ասելով. նա փրկեացե զնա յորոգայթէ որսողին ևն. այս շարադարութիւն թէպէտև ուղիղ իբրեւ զկարգ բանին, բայց զկարգ շարադրութեն չհոմանայ կացուցանել։ Այրիորդ որ ուղղագոյն ևս է քան կարգելոյ մեր յարի իբր հետևութեն նախընթացին՝ որպէս թէ եդեալ էր. որ քնակեալ է յօգնութի բարձրելոյն ևն, այնպիսին գոհասցի զնմ, և ասասցէ ցնա. ընդունող իմ ես դու, ապաւէն իմ ած ևն։ Այս բան այսմ առեալ՝ սոյն այս բան դնի իբրև շնորհակալութեն առ ած վասն երբեակ բարերարութեանց՝ մի՝ վն այնց զորս տեսեալ է մարդ. երկրորդ՝ վն այնց զորս տեսանէ. և երրորդ՝ վն այնց՝ զորս տեսանելոց է. վն առաքելոյն ասէ։

Աստուած ես ընդոծնելի իմ ես դու։ Յառաջ աստուած՝ դնի աստ քան այնմ նշանակութեն՝ որ հայի ի քառդ փոխսիկ կամ ընդհակառակ ի յայտնի լինի աստուածութեն կամ ասելով՝ վն որպ դնի, աստուած ես՝ ընդունելի իմ ես դու։ Ընդհակառակ ևս կոչէ զած. զի զնա միայն ձանաչէ ևս, և ոչ մի ինչ այլ՝ գերագոյն քան զնա, և ոչինչ հաւասար նմին. մանաւանդ զի զամենայն ինչ տեսանէ կախեալ զնմանե՛ ի գոյն և ի գործելն. և ընդ նոսա հրամանաւ և կառավարութեամբ կարգեալ և պահեալ. այսպիսի ձանաչելով զնա աստուած նմա։

Ընդունելի իմ ես դու։ Ընդունիլն է առնուլ յինքն զայն ինչ զոր կամ ոչ ունի, և կամ զոր չէ առեալ.

և այս ՚ի կողմանէ առաջին մնաճեալ՝ կարծ լինել համ՝ հաճուելոյ, որպէս այն՝ որ ասի. * ընկալաւ ,, զնա ՚ի տուն իւր ուրախանալով ||. կամ՝ հաճուելոյ՝ որպէս այն որ ասի. * ընկալայ նախատինս յաջակաց ||. Լակ ՚ի կողմանէ առեալ իբրև մնաճեալ՝ կարծ լինել համ՝ ըստ եզերն յորմէ, այսինքն ըստ զերծ լինելոյ. որպէս այն որ ասի (՚ի սաղ. ՃԺԷ. ւ3. * եղե ,, մերձ ՚ի գլորիլ, և ոտք ընկալաւ զնա (՚ի վտանգէ ,, գլորման)||. կամ ըստ եզերն յորոմ. այսինքն ըստ պատուական լինելոյ, որպէս այն որ ասի. * որպէս ,, գողջակիզս զոհի ընկալաւ զնոսա||. (Ի մատթ. Ը. 6.)

Լ՚որդ աստուածոր որպէս և կարգ քահանի ցուցանէ, բառդ ընդառնէլէ այսինքն ընդունող՝ ՚ի կողմանէ ոչ մնաճեալ՝ առեալ լինի ըստ հաճուելէ. իսկ ՚ի կողմանէ մարդոյն մնաճեալ՝ առեալ լինի ըստ զերծ լինելոյ. որպէս թէ եղեալ էր. ՚ի թեղեառումէն կենդ ցաղոյս՝ յորում յանձն իւ փրծամբեցեց պատեալ պաշարեալ կամ, հաճեցար ընդունիլ զնա իբրև զոյր. և հանդուցեր զնա ընդ հոլանեաւ նախանձնամբեցեն և պաշտպանեցեն քո։ Լ՚ս այս հայի ՚ի շնորհակալութէն այնը բարերարութէն՝ զոր ետես. իսկ հայելով ՚ի նեղկայն՝ այսինքն յայն՝ զոր տեսանէր, ասէ։

Լ՚պաւէն էմ ած։ Լ՚պաւէն ասի այն ինչ, յոր ՚ի դիմել ուրուք՝ զերծեալ ՚ի վտանգէ՝ փախստեայ նուիրեն. որոյ վը բարձր տեղիք կամ ծառք վիմաց ասին ապաւէն նապաստակաց. զի յայն անկանելով նոցա՝ յապահովի լինին ՚ի յափշտակող գազանաց և յորսորդաց. և քանզի լի է աշխարհս վտանգօք, առ ապաւէն՝ յոր կարասցուք զերծանիլ։

Լ՚որդ որոց յոյս է ՚ի մարդիկ, զնոսա առնէն իւրեանց ապաւէն. և որոց յոյս է փաթեամբեցեն մեծութէն, յայն անկանին իբրև յապաւէն. իսկ որոց յոյս բաժանեալ լինի՝ մնասցեն իմն յանծ, և մնասցեն իմն յինքեանս, կամ յայլ ինչ, ապաւինութէն նոցա է խառն ՚ի խուռն։ Լ՚ստ որոց յոյս է միայն ած, ՚ի նա միայն գիմին, և զնա միայն ունին իբրեանց ապաւէն. և զի ած է ամենազօր և ամենախնամ պաշտպան, յապաւինել նոցա ՚ի նա, ինան ամենևին ապահովացեալ, մին

չև ոչ իմիք կարել սանանել նոցա, ոչ յերկրաւորաց, և ոչ յերկնաւորաց, և ոչ իսկ ի բանալիք լուծանոյ գունդ սանդարամետականաց։

Ոյա ակնարկելով՝ ասէ. ապաչէ եմ ես. որպէս թէ ասէր. մեծատանց ապաւէն է փարթամութիւն ստացուածոց, թագաւորաց ապաւէն է իշխանութիւն բանից, ժողովրդեան ապաւէն է ամբոխութիւն քաղաքաց, իմաստնոց ապաւէն է ձարտարութիւն բանից. իսկ իմ ապաւէն դու միայն ես, դու ինքն ած ինձ զիս՝ որ արարիչ ամենայնի, ամենահայեաց, ամենազօր ես։

Զիս դու ինձ ասասցես թէ զիարդ տաժանին մարդկի ի գտանել իւրեանց ապաւէն, և յետ գտանելոյ և անկանելոյ ի նոյն՝ որքան տագնապին և ի հատածանս մտչին ի խորհիլն թէ զինչ պարտ իցէ նոցա առնել։ Իսկ յուսացեալն յած՝ առանց տաժանելոյ գտանէ զած՝ իւր ապաւէն, և կայ ընդ հովանեաւ նորա առանց կասկածանաց. և չունի ամենևին հոգալ թէ զինչ ունիցի առնել։ Զայսմանէ բարւոք կարէ չափիլ հանձար իմաստութեն որդւոց աշխարհիս այսորիկ և որդւոցն լուսոյ։

Այլ որ առաւել մտածելիս է՝ այն է, զի եթէ մարգս լինիցի ապաւէն ումիք՝ բարերար և երախտաւոր հայմարելով զինքն առնա՝ պահանջէ ինչ ի նմանէ՝ կամ յայտնապէս, և կամ լռելեայն, զկնի ընդհակալութեն ինչ. իսկ ած ըմ լինելոյ ապաւէն ոչ պահանջէ ինչ, այլ ասէ. Այդ այս բարերարութեն հայի յայն՝ որ մտածի իբրև նեղեալ, կամ զոր նեղեալսաբաւ առանել յուսացեալն յած. ուստի և իբրև զնեղեալ ընդհակալ եղև մարգարէն. իսկ հայելով յապաւէնն այսինքն յայն՝ զոր ունի ապաւանել, յարել զինքն և ասէ.

Այս ես յուսամ ի նա. Այս յուսալը՝ զոր զնէ ասա մարգարէն, է իբրև լուծումն ամենայն տարակուսանաց՝ զոր կարէ ոք առաջի մատուցանել յուսացեալոյն յած. զի թէ ասացես նմա, դու կարծես թէ յուսալով յած՝ ապաւէն քեզ արարեր զնա. և զինչ լինիցի եթէ նա ոչ հաձեսցի ընդ քեզ. պատասխանէ այսմ. յուսամ՝ ի նա. Այնէ ասացես, զինչ օգուտ

եղև քեզ ի յուսալոյ քոյ յԱստ, զի տէր յուսացաւ ի նա, և անկաւ հրդեհ ի տուն քո, յափշտակեցան ստացուածք քո, մեռան որդիք քո, որբին ի հեշտա-ռութեն կեանք քո ևն. պատասխանեն, յուսամ ի նա, լռեն ասասցես, գուցէ ի յաւետեն վհիս հա-տեալ է մի քո ոչ ևս օգնել քեզ, և զի ևս յուսաս. պատասխանեն, յուսամ ի նա: Իսկ յամենայնի պա-տասխանի նորա այս է, յուսամ ի նա. որպէս թէ ասէր. այս ամենայն զոր ասէք, է ի ներքոյ ակնար-կութեն այնր, յոր ես յուսամ. յոյս իմ ոչ է ի սոսա, կամ ի մի ոքոյ, զորս առաջի առնէք ինձ, այլ յայն միայն, որոյ հրամանաւ կատարածի այս ամենայն:

Ի ասացելոցս այսոցիկ ոմն քեզ ապացոյց զանց ևս նե-լուցոյ յորոյ. որոյ ընդդէմ բազում ինչ եդին եղի-փազ թէ ևնացի, բաղդատ սոքեցի, սուիար մինեցի, և եղիւս բարաքեւլի բուզոյի. որոյ ամենայնի ա-րար պատասխանի հիանալի նմանութիւնք, թէ ասէ էյոյս իմ. նա ևնար ասէ զիս. նորա եմ ասէ ես, ի նմա եմ, ասէ, և նովաւ, ևն: Ընդեալ մարգարէին զոյսն առաջի, ի մէջ մատուցանէ այժմ զարդ ինչ յուսացելոյն՝ այսինքն զայն զոր առնէ ասէ յուսացելոյն մի ապաւինելոյ նորա առ ինքն. և նախ խօսելով ի բերանոյ նորին իսկ յուսացելոյն ասէ.

ՀՂ. Ով երկնաւոր էիս յորժամ ինքն որոշէին, և ի բանիցն խռովութիւն:

Վախճան բազմապատիկ և բազմատեսակ փորձուիք պատահին այնմ՝ որ ոչ յոյս իւր եդեալ է յԱստ, սա, կայն երբեմն այն փորձութիւնք ոչ հասանեն կերպա-րանօք իւրեանց, այսինքն իբրև յայտնի, այլ իբրև այնպիսիք՝ որք ոչ երևին լինել փորձութիւնք. որով և լինին վտանգաւոր յոյժ. որոյ մի և մարգարէն պէսպէս նմանութիւնք ի մէջ բերէ զկերպարանս նո-ցա՝ առ ի ցուցանել թէ յորպիսի վտանգս շրջի ար-դարն ի տուէ և ի գիշերի:

Ասացի՝ լինին վտանգաւոր յոյժ. մի զի եթէ փոր-ձութիւնք յայտնի ընդ առաջ երևնէին՝ չլինին այնչափ վտանգաւոր. զի իւրեանց չարութիւն և գաղտուիք աբհամաբհեալ լինին. այլ զի կերպարանեալ լինին

ընդ այլով իւիք դիմակաւ, ոչ երբեմն որպիսի են կին-
քեանս. որով և լինին վտանգիչ. զի գժաւորին լի-
նի զգուշանալ ի նոցունց։ Այլ քանզի յուսացեալն
չէ՝ ոչ է ապաւինեալ ի Տանձաւ իւր առ ի Ձանա-
չելոյ զայնս, և ոչ ի զօրութեէ իւր՝ առ ի վանելոյ
զնոսին, այլ յայն և ևս՝ որ տեսանէ զամենայն, և
իշխէ ամենայնի, նմա միայնոյ յանձնէ զինքն, զի նա
փրկեսցէ զանձն իւր յամենայնէ անվտանգ, և պա-
հեսցէ յամենայնի անվնաս. յայս Հայելով ասէ։

Այս էրիեցէք զնա յորդայնէ որողն։ Որոգայթիւ իմա-
ցեալ լինի ատտաքին և ներքին փորձութեէ գա-
ղեալ Հնարիւք որսողին. իսկ այս որսող երբեակ է.
առաքինին է աշխարհս, և ևս և իւիք իր կամ մարդ՝
որ արտաքուստ լարէ զփորձութեէս երբև զորոգայթ.
երկրորդ՝ է սատանայ՝ որ առաջի Հոգւոյն ի ներ-
քուստ թակարթէ զորոգայթ. և երբեմն արտաքուստ
եւս, որպէս արար եւայի, և այլոց բազմից. երրորդն
և վտանգաւորն է մարմինն կամ անձնասիրութիւնն,
որ ի զգայարանս սփռէ զինքն. յայսմ ամենայնէ ասէ
փրկեսցէ զնա ինքն բարեգործն, յոր եդեալ եմ
դժոյս իմ. նա որ ընկալաւ զիս և եղէ ինձ ապաւէն։
Իսկ այս փրկելս բազում օրինակաւ լինի. մի՝ ունայ-
նացուցանելով զզօրութեէն փորձութեէն, կամ խորտա-
կելով զազդուրութեէն նորին առանց բառնալոյ զփոր-
ձութիւնն զայն. երկրորդ՝ յայտնելով զգաղտնութեէն
որոգայթին, և զգոյշ պահելով յայնմանէ զմարդն.
երրորդ՝ յորոգայթէ անտի ի բաց կորզելով. իբր զի
թէպտեւ երբեմն թոյլ տայ Տէր անկանիլ յորոգայթն,
բայց ոչ թոյլ տայ անկանել ի չարն. այլ յրմբռնիլ
նորա՝ ձեռն կարկառեալ Հանէ ի բաց։ Այս փոր-
ձութիւք՝ զորս եդաք՝ յերն մնածին, իսկ որք բանիւք
լինին՝ զայնցանէ որոշակի խօսի ասելով։

Այս ի բանէդ խոստովանէ։ Այանք խոստովանէ ասին այն
խօսք կամ ղողջք, որք թէ և չերբեմն արտաքուստ
ելոյ, բայց ունին յինքեանս զայնպիսի ազդումն, մին-
չև պղտորել և խաւսել զՀոգին, քանզի այն բանք
ընկալեալք ի լսելիս, նկարեն զպատկերս առար-
կայից իւրեանց յերևակայութեէն. յոր Հայեցեալ մը-
տացն, և տեսեալ թէ նորին գառնան ի նախատինս

կամ՝ ի նուաճ համարուճն անձին, կամ յանարդուն իւրոյ պատուոյն, կամ ընդ հակառակն ի ստացումն մեծութեանէ, կամ փառաց, կամ իշխանութեանէ, կամ՝ ի վայելումն հեշտութեանց. Եթէ յամենայն յոյժ, ազգէ տպատութենէ ինչ՝ ի զգայական բաղձանս, և՝ ի խոցմէ նոցա՝ զերծանի և յորդորումն ինչ՝ ի կամ, որով և ծագի խռովութենէ՝ ի հոգին, յոբում եթէ լեցի յամենայն՝ խռովութենէն զօրանայ. և գաւառումն մտաց մերձանայ, և կարզոզութենէ կամացն թուլանայ. և այսմ հետեւի հաւանութենէ յոչ բարին. և հասանէ չարութենէ մեզայն, որ խաղատ խռովէ զհոգին. որոյ զհետ գայ և խռովութենէ խղճի մտաց՝ Ա. յաւ որ բոլորովին ապատրեհարէս է յանձ, և կեայ ընդ հովանեաւ երկիւղի նորա, ունի զնա իւր պատ. հասան, որ փրկէ զնա յայսպիսի խռովեցուցիչ բերմանց, այսինքն յազդմանէ կամ՝ ի ներգործութենէ այսպիսի բանից։

Ա. ստանօր բառիւս ԹԱՒ՝ մերթ է իմանալ և զայնպիսի իրս, որք ոչ միայն առաքինին լսելեաց, որպիսի են զրոյցք՝ զրոց խօսեցաք, այլև որք առաքինին այլոց զգայարանաց, այսինքն տեսանելեաց, ձեռնհասելեաց, հոտոտելեաց և շօշափելեաց, և խռովին զհոգին. զի բառս ԹԱՒ՝ փոխանակ իրի՝ ի գործ ածի երբեմն. և մեկնի ըստ վերոյդրելոցդ։ Ա. դէ եգեալ մերգաբերն՝ ի հաստատակի զիրկութենէ յայսպիսի բանից և յորոգայթից որսողաց՝ առաջի առնէ այժմ և զօրինակ մանուածոց խնամոց փրկութեանն այ, և ասէ։

Ղ. Ա. Ի ՆԻՒՒԱՒԷ իւր ընթացէ ղէզ. ՚ի հովանի նոցա նուա յառաջէ։

Ա. յս նմանաբանութենէ հայի՝ ի գործ արծուոյ, յոր օրինակի խնամք տեսչութենէ և պաշտպանութենէն այ, զորմէ գրեաց և մովսէս, հայելով յայն՝ զոր արար ած ժողովրդեան իւրում. (Ե. օրինաց. լԲ. 11.) * որպէս զարծուի առէ՝ ի ծածկել զբոյն իւր, և ՚ի ,, ձագս իւր գթացաւ. տարածեաց զթևս իւր, և ,, ընկալաւ զնա. և բարձեալ բերեր զնա ՚ի վերայ ,, միջոցոցաց իւրոց։ Ա. զի արծուին ըստ գրելոյ բաղմաց՝ ուսնելով զդուճ ՚ի վերայ ձագուց իւրոց ա-

առաել քան զայլ թռչուսն, երկրբուքը պաշտպանէ զնոսա. մի՛ տարածելով զթև իւր ՚ի վերոյ նոցա, և ծածկելով զնոսա և զբոյն իւր ընդ նոսա, զոր դնէ յանմատչելի բարձրութենէ. որոյ վա՛ տ ասէ. * որ ,, պէս զարծուխ ||. ես։ Յերկրորդ՝ զի ձայն տուեալ ձագուցն՝ ընդ իւր թռուցանէ զնոսա. և իբրև տեսանէ թէ վաստակեալ են նոքա ՚ի թռչելն՝ տարա ծէ զթև իւր ՚ի ներքոյ նոցա, և ընդունի զնոսա ՚ի թիկնամէջս իւր, և այնպէս տանի զնոսա անվտանգ։ Այս զի այսպիսի ինն օրինակաւ խնամէ և պաշտպանէ ած զյուսացեալս իւր, վա՛ որոյ ասէ.

Ի ՒՒՒ

զոր էգ ՚ի վերոյ՝ այն էր ՚ի կողմանէ ՚ին. իսկ զոր ասա գնէ՝ և ՚ի կողմանէ մարդոյ· իբր թէ ասէր· երանի է քեզ մարդ՝ որ յաւուցարս յիսծ· զի որպէս ձագք արծուոյ յապաւինել ՚ի թևս մոր իւրեանց՝ պաշտպանին ՚ի նմանէ, այսպէս և դու ՚ի յաւուրդ յիսծ՝ ըստ պաշտպանութեանդ նոցա պաշտպանիս ՚ի նմա նէ, զի որոյ զնա ունելով քեզ այսպիսի պաշտպան՝ միշտ յաւասցես ՚ի հովանաւորութեան նորա։ ||Երանելոր բայդ յաւասցէս՝ ոչ ցուցանէ թէ չէր յաւասցեալ, և յորդորելի յաւասլ, այլ թէ յաւասցեալ էր, և յաւասլ, և յաւասցի, և ՚ի նմին գաղէ զՀովանաւորութեանն թևացն ՚ին,

լամբ՚՚ թիկնամիջով խմնայ զլանջամիջս. և մեկնէ այսպէս· « որպէս որ գմնմուկ փախուցեալ ՚ի հարս ,, կանոզէ՝ տարածէ զթև և ՚ի մէջ երկու թիկանցն ,, մերձ առ սիրտն ՚ի նէրբոյ լանջացն թևացն հովա- ,, նեաւ պահէ, և այնուհետև հալածիչն այլ ոչ ինչ ,, կարէ նմա ստնանել։ ՚՚այսպէս և ՚ին դյուացեալս ,, յինքն պարսպեալ պահէ ՚ի հալածող օրսոզին սա- ,, տանայի յորդոյն թիւ. և այսու հաստատէ թէ ա- ,, մենայն ընթացք մեր առաջի է ամենահայեաց ա- ,, չացն տեառնէն թէ, և խնամք նորա է ՚ի վերայ ամե- ,, նեցուն, որք հաւատան և խնդրեն լինել ընդ նո- ,, վաւ ||։

լ՚՚յաբանօրէն, ՚ի յաւալ ազգի մարդկան յիսծ՝ ևկն եհաս առ նոսա որդին ՚ին իբրև զարձուի. և ժողո- վեաց գնոսա ՚ըն թևօք վարդապետութեանն իւրոյ կամ ՚ըն զօրութեանէ երկուց կտակարանաց. և տարածեալ զազուկս իւր ՚ի խաչին՝ էառ գնոսա ՚ի թիկնամիջս անհաս խնամոց իւրոց. և թռոյց հաւաստօվք և գոր- ծովք իբր երկու թևօք ՚ի փրկութեն յաւիտենական. (տես ՚ի նուագարանն օրհն. ՚ի չ· օրհնութեն· ՚ի համարն· ւչ·)

լ՚՚յ՚ աստ գխաւիլն է, զի այս երանելոյ պաշտպանու- թեն ՚ին, զոր էգ մարգարէն, մեռածի ըստ այմ- դեռաբութեն նորա, զոր հաստատօրէն ցուցանէ առ այնոսիկ՝ որք տակաւին չէն հասեալ ՚ի չափ կա- տարելութեն, որպէս թէ ՚ի դէռահասեալ տիս իցեն՝ հանդոյն ձագուց· իբր զի թէպէտ և ըստ ամենայնի

յիսի են եղեալ զայս խրատից, և զնա միայն ունին ասելոյն, բայց ի չափ սիրոյ կատարելութենէ դեռ և չեն ամրացեալ. իսկ ի հասանել այսպիսեաց ի չափ կատարելութենէ, որչափ կարիցէ տանել վիճակ մարդոյ, որպէս սեռանի ի բաղում ծառայս ոչ, այլով ինն օրինակաւ ցուցանէ նա զպաշտպանութենէ իւր առ նոսա. մի որոյ ի նոյն գործոցեալ մարգա-

ԵՒ ԵՐԵՔ ԶԻՆ ԶՈՐՔ ԵՂԻՑԷ ԱՂՔ ՃՇմարտութենէ նորա,

Ճշմարտութիւն բազում ինչ կարէ իմացեալ լինել ասա. մի՝ յաբեղենական իմաստութենէն, այսինքն բանն նա՝ որ ասաց. և եմ ճշմարտութեն. որ և յամենայնի որպէս զնոյն շարժի զեկեզեցեալ իւրով, Արդարդ՝ նոյն իսկ անսահման և ակն ճշմարտութիւն ոչ, յինքեան յիւրում իսկութենէ, որ և է առաքեալ ճշմարտութենէ հաւատոյ. Արդարդ՝ յայտնութիւնք ոչ, այսինքն այն բանք զորս յայտնեալ է մեզ նա՝ ի ձեռն ծառայից իւրոց, պարունակեալք ի սք գիրս, և ա-սին բանք հաւատոյ, այսինքն այնպիսի բանք, որք առաջի առնեն մեզ զհաւատալի իրս, կամ որովք հաւատամք. Ողորդդ՝ անխոտ և անենդ հաւատարմութենէն ոչ՝ ի կատարել զոյն՝ զոր խոստացեալ է առնել պատպանութենէ, օգնութենէ, վարձատրութենէ. Հինգերորդ՝ ըստ լամբ՝ իմացեալ լինի արդար իրաւունքն ոչ. յայս միտ առեալ ասա լամբ՝ ճշմարտութենէն ասէ, (ձէ նա արդար իրաւամբք պահանջէ՝ զի նախ մարդ յուսացի և ինդրեսցէ, և յայնժամ խնամք ողորմութենէ և օգնութենէ նորա լինիցի նմա զնա շարքանակի. Վեցերորդ՝ իմացեալ լինի նոյն ինքն հաւատոք մեր. և ասա ասի ճշմարտութենէ, զի է անբաստելիս համաձայնութենէ ձանաչման ըստ այնս՝ որք յայտնեալ են մեզ յոյ. ասի և ճշմարտութենէ ոչ, զի թևկտա և ի մեզ է, և է ինն մերոյ ձանաչման, բայց է առ յոյ, և առ նա ոչ, և Վեցք թևկտա ըստ վեցեցունդ ըստ պղոցիկ. կարէ իմացեալ լինել ասա բառդ ճշմարտութենէ, բայց հաւատականագոյն և է իմանալ զայնս զճշմարտութենէ հաւատոյ, ըստ

ժամ և զամս հաւատոյ, զորմէ ասէ լինել զնոսա ընդ
զյուսացեալսն։

Ասէ զնոսա որպէս այլսեր ասացաք, ի կրկին. մին ասէ պաշտպանիչ. զորօրինակ զԴաւիթ, և այլ սոցին նմանք, որով պաշտպանի մարդ ի նեռից, ի սուտերից, ևն. միւսն է վանիչ զորօրինակ սուր, նետ, ևն։ Այս Թէպէտ բառս զնա դնի ասա փոխանակ պաշտպանիչ զինուց, բայց կարէ իմացեալ լինել նաև փոխանակ այնր որ իցէ վանիչ. զի ըստ երկուցդ ըստ այդոցիկ ձշմարտութեանն հաւատոյ լինի մարդոյ զնա ընդդէմ ամենայն փորձութեց. վասն որոյ ասէ.

Ընդէս զնա ընկալ եղիցի ձշմարտութեն նորա։ Ոչ ա-
ւ պաքէնս իբրև զփորձութեն են մարդոյ ի վէ-
ր երկրի։ ասէ յոր. (Է. 1.) որպէս թէ ասէր՝ բո-
վանդակ կեանք մարդոյ յորս վարի լի է փորձութի՝
եթէ ըստ հոգւոյ և եթէ ըստ մարմնոյ, եթէ ար-
տաքոյ և եթէ ի նեբերոյ, եթէ ի կողմանէ յոյժ-
դութեն որ յարփշտակ զհոգին ի փառասիրութեն, ի
հեշտասիրութեն ի զեղծութեն, ի մեղկութեն, ևն.
և եթէ ի կոզմանէ ձախորդութեն, որ բնկեն զհո-
գին ի տխրութեն, ի դառնութեն, յատելութեն, ի
կսկիծ, ի տրտունջ, ի բամբասանս ևն։

Ոչ երբ թողուցէ ասյա զվայրկեան փուչ, զորս սերմա-
նէ սկզբնաւորն սատանայ, և բուսուցանէ անիծա-
կուռս մարմին. յորս և տրածէին ասպականութեամբ բեր-
մունք բաղձանաց։ Ոչ երբ ասյա զորս յայսմ նշմարեմք
ընդէմ մերոյ ձանաչման, և ընդէմ մերոյ հաճութեն,
և ա և ընդէմ վայելուչ կարգի և ուղղութեն, յորոց
մերկին ի մեզ ի վերոյ այլոց սրանեղութենք, և
վրդովմունք մեաց ի դատեն երկիւղածին զԴաւիթ այս-
պէս առնէ, ընդ այնպէս խօսի, ընդ այսպէս վա-
րի, ընդ այնպէս վերնի, ևն։ Ամէն զգաստութիսն
յարձակմունս նեռից վերաւորիչ բանից ի բերանոց
այլոց. Թէն և զորոտմունս երկիւղածին զԴաւիա-
ծոց և ցաւագին հաբեաւծոց, և Թշուառացուցիչ
պատահարաց, և զայլ ևս յայտնի, զորոց ուրեք ու-
րեք յընթացս սաղմոսիս բանք եղեն։ Հայեմ ամե-
նայն ի կոզմանէ այ մատեանս՝ կարօտիմք բարեխ-

նամ պաշտպանութեանն նորա, զորմէ խօսեցաւ մարգարէն ի նախընթացս համարձակ. իսկ ի կողմանէ մերմէ՝ կաթօլիկէ այնպիսի զինու, որ իցէ պաշտպանիչ և վանիչ. պաշտպանիչ անձին, և վանիչ փորձութեանց.

Ի. Զի այս զինի է ասէ Աշմարտութիւնն այդ, այսինքն Աշմարտութիւնն Հաւատոյ՝ որ առ ՅՕ այս զէն թէպէտ և քաղցուք ունին քայց քաղցուքն այն են որք ոչ ի պաշտպանութենէ և ոչ ի վանողութենէ ի գործ ածեն. զի ոմանք ծալեալ զայն, նմանին ի վերայ նոտրա, և ոչ առնուն չուրջ զինքեանք ի պաշտպանել. և ոմանք եդեալ ունին զայն ի պատանս, և ոչ առնուն ի ձեռս ի վանել. կան և այլ որք հագիւ երբէք ի գործ ածեն, և մեծ անվարժութենէ՝ փութով վաստակին. են և այլք՝ որք թէպէտ և ի գործ ածեն, բայց կամ անզգուշութենէ, և կամ թերութենէ. և այլք սրտմտգին ժանտութենէ, կամ տարակուսական տատամսմամբ. իսկ այլք խարեբայութենէ, կամ ակնառութենէ. իբր զի այնպէս ի գործ ածեն զայս զէն, զի և զինք սխտից իւրեանց ներգործեսցեն ինչ. որպիսի են այն բարեպաշտ երևեալ սխտաւորք՝ որք չարաչար մեկնելով զՀմարտութիւնն Հաւատոյ՝ զոր ունէն, Հաշտեցուցանել կամին զայն ընթերցողութենէ սխտիցն՝ ասելով, թէ այսպէս պարտի լինել, կամ այլազգ ոչ կարէ, կամ յայդ ինչ ոչ պարտաւորիմ, կամ այդ է Հասարակաց ։

Ի. Այսոցիկ Հաւատ թէպէտ և զէն է Աշմարիտ, բայց ոչ է յաջողեալ մեծ անձանց իւրեանց. զի չազդէ ինչ. և պատճառն է՝ զի պակասեալ է ի ջերմութենէ սիրոյն ՅՍ, և ի Հաստատութենէ յուսոյ առ ՅՕ. իսկ որ կայ ի սէրն ՅՍ, և Աշմարտապէս յուսոյ չՅՕ, այնպիսին Հաւատք չուրջ պատէ զնա իբրև զզէն անգրծելի՝ ի պաշտպանել, և իբրև զզէն անխորտակելի՝ ի վանել. Ո՛ի զորբրինակ երկաթի զէն ի Հոր ջեռուցեալ, և ապա ի ջուր կամ ի ձէթ մխեալ լինի անգծելի և Հատու՝ մեծ պահպանեալ միալոյ ի նոսա զօրութենէ Հրոյ, սոյնպէս և Հաւատք ի Հուր սիրոյ ջեռուցեալ և ի ձէթ յուսոյ մխեալ լինի անգծելի յԱ և ի իւէ փորձութենէ, և Հատու ընդ Հոգին։

Ի. Պաքէն որ ունի յինքեան զայս Աշմարտութենէ Հա-

աստուց, թէ ամենայն ինչ ի ձեռն նոյ է, և որ ինչ լինի՝ ի հրամանէ նորա յաջողի, այս չշմարտութեան լինի նմա զկնի ըղձմ փորձութեանց պատահելոց նմա՝ եթէ բանիւք և եթէ իրօք. իբր զի եթէ լուիցէ այսպիսին զառաս նախատանացն և բամբասանացն՝ ի դորձ ածէ զայն զկնի ընդ դաւթի ասելով. * թէպէտ ,, տուբ նմա թէզ անիծցէ այնպէս զի ինձ ասաց նմա ,, անիծանել զդաւիթ ‖. (բ. թագ. ԺԶ. 10.) ‖ Թէ ընդձեռնեցի՝ ի հեւանդութեան կամ ի ցաւագարութեան՝ այնու չանապատմամբ վարելով՝ իբրև զեղ առնու զայն ի ձեռանէն այ, և յոչ կարելն ժողովել՝ նմա յանձնել և զոչ կարել իւր, ասելով. * զինչ է զօրութիւն իմ, ,, թէ համբերից . . . եթէ ոչ ի նա սպասինէի ‖. (յոբ. է. 11.) ‖ Չթէ անկեալ ի յեւթն աղքատութեան և ի թշուառութեան, որպէս ի պակասել ընչից, ի հրդեհիլ տան, և և ի բառնալ որդւոց, ևն, ըստ նմին չանապատն աղաղակէ. * տէր էառ և տէր էառ. ,, որպէս ան հաճոյ թուեցաւ, նոյնպէս և եղև. և ,, զերկի անուն տեղ օրհնեալ ‖. (յոբ. ա. 21.)

Ջնա ահա՝ զի յայսմ ամենայնի և յայլ սոցին նմին պատահաբար այն չշմարիտ չանապատն ձորը ունի արդարն՝ թէ ամենայն ինչ ի հաւուէ բարեբար կամացն այ դիպի, և առանց նորա հրամանի և ոչ մազ մի ի գլխոյ յերկիրն չանկանի, լինի շուրջ զնովաւ որպէս զկնի, մինչև ասել նմա առ. * ձոր ,, որպէս զինուս հաճոյիցեր քով պահեցեր զմեզ ‖. (սաղ. ե. 12.)

Դարձեալ՝ որ չշմարիտ հաւատով չանապէ, թէ նա որ ցանկոյ անցաւոր փառաց, և մեծութեանց, և որ գկնի լինի վաղշտութեան, կամ որ վարի գոզութիւ, կամ որ սուտ վկայէ զընկերն, որ բամբասէ, և որ հայհոյէ, կամ որ բռնանայ, կամ որ առնու կաշառս, կամ որ թիւրէ զդատաստան ևն, մեզանէ ընդդէմ այ, և զրկի ի ժառանգութենէ նորա, և լինի պարտական յաւիտենական գատապարտութեան, ի պատահել սորա փառաց և մեծութեանց կամ ի պաշարելն ի վտանգ վաղշտութեան, կամ ի դիպիլ առաքի զոզութեան, կամ ի ստիպիլ ի վկայութեան սուտ, կամ ի շաբթելն ի բամբասանս, կամ ի յորդորելն

ի բանականութենէ, և ի վարիսաութենէ անն, այն ձըշ-
մարտութենէ հաւատոյ զոր ունի, լինի շուրջ զնոսա
իբրև զէն պատգանիչ և վանիչ. պատգանիչ ընդդէմ
ազգութենէդ այնպիսի առարկայից, և վանիչ անկար-
գութենէ յաժարութենէդ սրտի, որ մոլեգին բերի յայս-
պիսիս.

Ա՛սա այսոցիկ մարթ է իմանալ և զայլոց դիպուածոց
առ հասարակ ըստ ամենայն փորձութենէդ, և ոչ սոսկ
ըստ միոյ կամ ըստ այլոյ. վա որոյ ոչ ասէ մարգա-
րէն, թէ չէմարտութենէ նորա լինիցի քեզ որպէս
զէն, այլ թէ շուրջ եղիցի զքէ որպէս զէն, որ է ա-
նել. յամենայն կողմանց և ընդդէմ ամենայն փորձութ-
շուրջանակի լինիցի քեզ զէն, կամ վահան անգծելի.
որով յայտնի տեսանի՝ թէ քանի երջանիկ է որ զի-
նեալն է այսպիսի զինուք. Հայա ահաւասիկ և քան
առաքելոյն. (յԵփես. զ. ւ3--ւ7.) յասէն. * վա
,, այսորիկ առէք զսպառազինութենէն ՚ի, զի կարող
,, լինիջիք ՚ի դէմ հարկանել չարին յաւուրն չարու-
,, թեան, և իբրև զամենայն ինչ կատարիցիք, հաս-
,, տատուն կացէք. զտէգի կալջիք սնդկեալ զմիջս
,, ձեր չմարտութենէ և զդեցեալ զդրահն արգա-
,, րութենէ, և ագուցեալ զոտս պատրաստութենէ աւե-
,, տարանին խաղաղութենէ. Լուր ՚ի վերոյ ամենայնի
,, առէք զվահանն հաւատոց որով կարող լինիջիք
,, զամենայն նետս մեխս չարին շիջուցանել. Լուր
,, առէք զսաղաւարտն փրկութենէ, և զտուսեր հոգ-
,, ւոյն՝ որ է բանն ՚ի ։ Հաւատակ քեզ այնպիսի
զէն, որով յամենայնէ պաշտպանիս. Հանապատիդ
առասպելչին, թէ էնկաս և աքիւլա երկիւղին ինն
վահանաւ պատապարեալ անվէրս ՚ինային. իսկ սա
զինուք. Չէմարտութենն երկնային լինի քեզ վահան այն-

պիսի, որով յամենայն նետից ՚ինաս անվէրս.

Ա՛յլ գիտելի է, զի ՚ի ձեռն չէմարտութենէ՝ որպէս
յիշեցաք ՚ի վերոյ՝ մարթ է սա իմանալ և զՀաւա-
տարմութենէ խոստմանն ՚ին, որով խոստացեալ լինիլ
պաշտպան և փրկիչ յաւասելոց իւրոց. և ահա այս
Հաւատարմութենէ ևս լինի նոցա շուրջանակի զէն. և
ըստ այսմ միտ բանին առաքի դնի այսպէս. որ Ձըշ-
մարտապէս յուսոյ ՚ի՞ն, նա ինքն ՚ի՞ն զոլով հաւա-

տաբիմ, շուրջանակի պահէ զնա յամենայն փորձա-
նաց, կամ հաւատարմութեամբ պաշտպանութեամբ նորա,
կամ ըստ լսմբ՚ բնաւից նորա լինի շուրջ զնովաւ իբ-
րև վահան պատապարիչ՝ ըստ ամենայն փորձուէց։
Չայս միտս երևի լինել և յայնմ խնամատարս· զի
զան աղաչանաց Համառօտիւ յառաջ բերեալ՝ կարգս
պաշտամանց ևկեղեցւոյ՝ (երես· 347·) Ձմնորատուչ
իմանալ անչիաւս պահպանութեամբ յորոգայթէ որսողին·
և բանք նոքա են այս· * սաղմոսգրքն հաւարակ մաղ-
,, թեն՝ ըստ հովանեաւ բարձրելոյն լինել, և յերկինս
,, հանգստեանն արժանաւորել· և աստէն (՚ի հա-
,, մարն 5·) յորսողին փրկել որոգայթի՝ զնմանէ ձըշ-
,, մարիտ պահպանութեան ։

Ա՚յս մեկնութեան ևս ընտրէ յոյժ· և մտածէ՚ ի կող-
մանէ այ, առ որ կարէ և նախակարդեալ մեկնութիւ
վերածել՚ի կողմանէ յուսացելոյն մտածել· վա զի
այն հաւատարմութեան խոստմանն այ՚ի պաշտպանել
և՚ի փրկել՝ պահանջէ և՚ի յուսացեալն զհաւատար-
մութեան այսինքն զհաստատութեան յուսոյ· երբ զի յու-
սացեալն միայնի հաստատուն, որպէս ասացաք՚ի
համարն ։

Ա՚յդ՝ որ յուսոյ յոյժ յոյժամ միայ հաստատուն, յոր-
ժամ յոյս նորա հիմնի՚ի Ձմնորատութեան հաւատոյ· վա
զի յոյն է իբրև նաւախաբխոխս յուսացելոյն յոյժ· իսկ
հաւատքն է իբր անշարժ երկիր գաղեալ ըստ ջրով
ծածկին բանից· ապա զորօրինակ խոբխոխն յոյժամ
հաստատուն ունի զնաւն, յորժամ հասանէ երկիրը՚ի
յատակ ջուրց, և ըմբռնէ զայն, և ոչ թէ յորժամ
՚ի կախ կայ՚ի մէջ ջրոյ, սոյնպէս և յոյսն յոյժամ
հաստատուն պահէ զյուսացեալն յոյժ՚ յորժամ ըմ-
բռնէ զերկիրը հաւատոյ՝ այսինքն զՁմնորատն հաւատն·
և ոչ թէ յորժամ՚ի կախ կայ սոսկ՚ի բանս, իբր
թէ այսպէս իցէ ասացեալ կամ այնպէս· Ըբեմնի՚ի
հաստատել յուսոյ այսպիսի օրինակաւ՝ զնոյ յուսացե-
լոյն լինի՚ի կողմանէ այ հաւատարմութեանն պաշտպա-
նութեանէ նորա· իսկ՚ի կողմանէ մարդոյ Ձմարտութեան
հաւատոյ նորին· որով և գտանի զանբեկեւանութեան
յոյսին այսինքն զորոց խօսք մարգարէին՚ի յա-

Ղ. Ա՛ԷՐԷՅԷ՝ ԴՈ՛ ՅԵՐԷԻ՝ԼՂ ՓԷՂԷՐՔ. Ե՞Ա Լ՚ ՆԵՔ ՈՐ ՆԱԷՔ Լ՚ ՈՏՆԵ։

Ղ. ՅԷՐԵ ՈՐ ՂՐՔՔ Լ՚ ԽՈՏՐ. Լ՚ ՓԱՅՆԵՓՂՈՒՆՔ ԴԷՈՏ Լ՚ ՀՈՏԱՐԱՔ ՈՏՈՐ։

Ի մէջ ինասակար սովոյց և գազանաց յորեքկին սքա անուանի են, իժ, քարբ, առիւծ և վիշապ· զի երկոքին առաջինք, այսինքն իժ և քարբ՝ են չարաթոյն տեսակք օձից՝ որոց խայթոտածն անբժշկելի ասի· ի վերայ սոցա բառդում են զոյդք· զոր ասեն ոմանք, Թէ իժն իցէ եգն՝ զոր եղնակ կողացի կոչէ, * քարբս իգակերպ ։ ի գլ· ԺԷ· և քարբն՝ առնուն և թևաւորն, որ չարագոյն ևս է։ Իսկ պէք վասն քարբի ասեն՝ Թէ իցէ այլ ինն տեսակ սողոյ չար յոյժ, որոյ և Հայեցուածն Թունաւորէ զմարդ· տես և ի սաղ· ԾԷ· 4· Իսկ առիւծն է հզօր պատուոյ, և վիշապն չարաչար կլանող։ Օ այսոսիկ գևաւորք ինասող գազանս ի մէջ բերելով մարգարէին, զայս ևս ըստ սոքօք տայ իմանալ, յասելն։

Ի վերայ էնէց և տաբէց գնասցես դու· և առ ոսն էոհեսցես զառիծն և ղվէշտն։ Կամի ասել· դու որ զամենայն յոյս քո եդեր յՅԻ, եթէ պատահեսցիս իսկ

կամ քաջբէն, առիւծու կամ վիշապի և այլոց չար գազանաց, ոչ միասնոցին, այլ անհնաս ձեռացիս, մանաւանդ թէ կոխեացիս և ի վերայ նոցա ոտամբ քոյ։

Լ՚այ յայտնի ցուցաւ ի բազումս։ Լ՚ասիկ դանիէլ արկաւ առաջի առիւծուց ի գուբն (դան. ՚ի. 16--24) եւ և ընդդէմ վիշապին, և սպան զնա միով գնդակաւ՝ զոր արար յիւղոյ և ի մազէ (դան. ԺԴ. 26) Այնպէս և պօղոս առեալ զիժն էարկ ի խարոյկ (գործ. ԻԸ. 3--6) Քանզ զորս ընտրեաւուքք ի վարս ծրց։ Լ՚ըդ եթէ այսպիսի գազանք ոչ միասեն յուսացելոց յիմ, ապա և ոչ այլք՝ որք տակաւ են քան զսոսա. միայն թէ այս ոչ միասելս մարմնոյ նոցա (որպէս ասացաք ի վերոյ) չիցէ միաս հոգւոց նոցին. զի ամ առաւել դիտէ զոգուստ հոգւոց նոցա՝ քան մարմնոց նոցին։

Ամենք ի միասակարութիւն այսոցիկ գազանաց հայելով, և ըստ ղպայութեանց միայն վարելով՝ յանդգնեցան ասել, թէ ի չար արարչէ եղեն սոքա, և որք նմանի իցեն սոցա. որպէս բաբբանջէին մանիքեացիք. ընդդէմ որոց երկար խօսի եզնակ կողբացի. և ի գԼ. ՚ի. գրի այսպէս. * Լ՚ու թէ գազանք վասն միասարութեան ի չարէ ումեքէ արարչէ կարծիցին, ,, զմարդիկ առաւել արժան է ի չար արարչէ իմա- ,, նալ, և ոչ զնոսա. զի սոքա աւելի միասակար են ,, գազանացն, քան թէ գազանքն սոցա. զի սոքա ,, եղեալ ի քաղաքաց և ի գիւղից՝ հետամուտ լինին ,, կոտորել զդազանսն ։

Լ՚ու հետևեցուցանէ այսմ սակս. * վասն որոյ ոչ ,, ի չարէ ումեքէ պարտ է զդազանսն և զձձիսն ի- ,, մանալ, այլ ի միոջէ բարի արարչէ. զկնի ի ,, պէտս, և զկէսն ի չարդ. և զկէսն զարհուրեցու- ,, ցիչս՝ վասն զտարապարտս հպարտութեան մարդոյն ,, ցածուցանելոյ։ Վարձեալ ի նոցա միասակարու- ,, թեան հայելով՝ միմեանց չհրամայել. զի թէ զնո- ,, ցայն միասակարութեան՝ որ ոչ խորհրդով լինի՝ ա- ,, տել պարտ իցէ, արդեաւք և առաւել զմարդկան մե- ,, ղանչականութեան՝ որ խորհրդով և նենգութեամբ ,, լինի ։

,, եւ ասպա զանաբգան եւս ի մէջ բերեալ ասէ. * Զհանա
,, չքոտեօքն զկծեցուցանէ զմեզ, որպէս լուսով եւ
,, ձանձիւ, մժեխով եւ գոռեխով, սիով եւ միամբ, եւ
,, պլովք նոյնպիսեօք՝ որք ընկնիքն են, եւ զմեզ աշ-
,, խատ կարեն առնել. զի եւ ինչ ի նոցանէ՝ որ զմեզ
,, աշխատ առնէ, և է ինչ, որ (ոչ մեզ, այլ) մե-
,, րումն ինասակաբ լինի, որպէս մուկն, և կեց, և
,, որդն, և որ ինչ նոցա նմանիսող իցէ. և նոքօք ցա-
,, ծուցեալ նստուցանէ զմիտս մեր. զի յորժամ գի-
,, տիցեմք, թէ և փոքունքն կարօղ են մեզ ինասա-
,, կար լինել՝ իմացաք ի տարապարտ հպարտութէ՛
,, չունել զանձինս առ մեծարգիս ։ և այսու իմամբ
եւ խոնարհութէ՛ օգնութէ՛ գտեալ առ յոյ՝ կարօղ
եմք անվնաս մնալ ի սոցունց, և ըստ տեղւոյն կո-
խել եւս և գնալ ի վերայ սոցա ։

Փոխաբերութէ՛ առեալ՝ այսօրինաք սողնովք և գա-
զանօք՝ զորս լիշէ աստ մարգարէն՝ իմանալք զեւս.
զի որովհետև առաջին սրար մարգարէն զՀրեշտակս
նոյ՝ թէ զինչդ յօժար են ի պահպանել զմարդիկ,
ըստ որում և Հրամայէ նոցա յոյ, ի մէջ բերէ ապա
և զեւս, առ ի ցուցանել, թէ զինչդ յօժար են ի
վնասել մարդկան, յորժամ թոյլ տուեալ լինի նոցա.
և առ ի յայտ առնել զչարաչար վնասողութէ՛ նոցա՝
նմանութէ՛ թիւնաւոր սողնոց և չար գազանաց ա-
ռաջի մատուցանէ զնոսա. որպէս արար և ՚ի ձեռն մեր,
կուչելով զնոսա օձս և կարիձս (զուկ. Ժ. 19.) յո-
բոյ վերայ ասէ իգնատիոս վարդապետ. * զդաժանա-
,, գոյնն ի կենդանեաց դնէ օրինակ իշխանին մա-
,, հու . . . ըստ այսմ է (ասէ) և գաւթայ ասելն. ի
,, վերայ խժից և քարբից գնասցես ։

Կոչէ խժ՝ որք են օձք չարք, պատուհասք որովայնի.
զի իշխան նոցա սատանայ ի նոյն կերպարանս խոյ-
թեաց զնախահայրն, և պատուեաց եւս զորովայն
երկնից ինքն և իւրքն. ըստ որոյ ասէ Յոբոզրեցին
(ի մեկն. մատ. Ժ ։) * խժ զպատանայ անուանի
,, ըստ գաւթի, ի վերայ խժի գնասցես դու ։ Կոչէ
և քարբս. զի ըստ քարբից հայեցուածով թիւնաւո-
բքն զորդիս ադամայ։ Կոչէ առիւծս՝ զի շրջին և գո-
չեն որսալ զմարդիկ, և պատառել. կոչէ և վիշապս,

վասն զի կատաղութեամբ կլանէն զորս առ ինքեանս ձգեն ։

Լ.ՀԼոր միանգամ հաստատեալ է զոյս իւր յԱծ, գնասցէ ՚ի վերայ նոցա, և առ ոտն կոխեսցէ զնոսա, մանաւանդ որ ունի յինքեան քնակեցուցեալ զզօրութիւն քան . ըստ որում ինքն ասաց . * ահա եւտու ,, ձեզ իշխանութիւն կոխել (զգևս իբրև) զօձս և զկա,, րիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն (սատա,, նայի ,) և ձեզ ոչինչ մեղանչիցէն ։ (ղուկ . Ժ . 19 .) մանաւանդ թէ նա ինքն ևս խորտակեսցէ զնոսա վաղվաղակի ըստ գրելոյն սլօղոսի . հռոմ. (ԺԶ. 20.) * և ևս խաղաղութիւն խորտակեսցէ զսատանայ ընդ ,, ոտիւք ձերովք սիրտ ընդ սիրտ ։

Լ.սիցէ ոք թերևս . արդէն խորտակեաց քո զգևս , զի՞ ևս իշխեն զօրանալ ՚ի վերայ մեր : Լ.յո՛ խորտակեաց զնոսա առն մերն , և խորտակէլոյն այնչափ տկարացոյց՝ մինչև համարձակիլ ամենեցուն կոխել զնոսա . առ որ և համարձակեցուցանէ նա ինքն տէր զՁառաքեալսն իւր . և որպէս ասէ իգնատիոս վարդապետ (՚ի մերն . ղուկ . իԶ . 14 .) * ամրացուցանէ զոտս ,, աւետարանչացն խաղաղութիւն , զի համարձակ լի,, ցին գնալ ՚ի վերայ իժից և քարբից ։

Յակ որք կամովին անկանիմն ընդ ոտիւք նոցա՝ փոխանակ կոխելոյ՝ կոխին ՚ի նոցանէ . ընդ որս տրամաբանէ սուրբ սարկիս հնորհալի (՚ի մերն . ԸՀ . յովհ . համաձ . 13 . յոբդ .) և ասէ . * զոր առաքէ հրամանն ԸՀ ոտիւք ,, կոխել (զօձն առաջինն) տեսանեմք ՚ի վերայ գլխոց ,, մերոց շրջել . և ուստի լինի այս . ՚ի մէնջ , ՚ի ,, մերմէ ծնունդէն . եթէ կամիմք մեծ առնեմք զնա . ,, և եթէ կամիմք՝ փոքր ։ զի մեք եմք (ասէ) պատ,, ճառն . ուստի յարէ զկնի ասելով . * զի եթէ ՚ի մէնջ ,, զպատճառն ոչ առնուցու ՚ի չարութէն, չկարէ ինչ ,, ՚ի մեզ ազդել յաւարացոցն ։

Ջէր ընկէց զնա և զգևս նորա յիշխանութէն նոցա . և ոչ ևս կարեն ըստ առաջնոյն տիրել . սակայն իբրև աւազակք ասպատակեն զայնոսիկ ՚որք գնան ընդ Ճանապարհ նոցա : Ջառաքն իբրև վիժ խածանէին և իբրև զքարք Թունաւորէին . իբրև զառիւծ պատռէին և իբրև զվիշապ կլանէին . և ունէին իշխա-

նուէրն առնելոյ զոր կամիցին. այժմ ևս զսոյն խրնդրեն, բայց ոչ կարեն. զի երբարձ քո՛ի նոցանէ զայս իշխանութիւն. և մերկեաց զնոսա քան առաքելոյն. (կող. բ. 15.) մանաւանդ թէ խեղդեաց զնոսա. և ինաց միայն խորհս նոցա և մերթ նոցին. վիշապ եբևին և առիւծ ձևանան. բայց խորհս են վիշապի և մերթ առիւծոյ՝ առնելու դիւրակոխելի. ուստի թէ պէտ և յառաջն յամենայնի յաղթող լինէին, բայց այժմ յամենայնի յաղթին, և միայն հեռուստաց իւրեանց սիրեն։

Կարեաց ինեցիք բազում անգամ ապստամբեալ՛ի հաւատացելոց՝ պատերազմին ընդ նոսա՝ յաւազեալք՛ի զօրութենէ կարեաց քաղաքին. քակեցին հաւատացեալք զկարեաց ինել, և չինեցաւ՛ի տեղի նորա քաղաք տիար. որ անուանէ միայն կոչեցաւ կարեաց գինել, և ոչ զօրութեան և աշատութեան։ Այնպէս քակեցաւ և զօրութիւն դիւաց. և թէպէտ անուանէ կոչին առիւծք և վիշապք, բայց են տկար մրջնէից և անարգ որդունք. զորս և մանկունք և աղջկունք առաւօտ կոխեն, և գնան՛ի վերայ նոցա։ Այլ այնմ է՝ որ յայսպիսի տկար և անարգ գաղանաց խօսեցաւ և պատուէր, և՛ի խորխոց օձից խայթի։ Այնէ հարաւ յայսպիսի օձից՝ Հայեաց յօձն յայն՝ զոր կանգնեաց մովսէս յանապատի (Թուոց. իմ. 9.) և հայցն երկնաւոր՛ի լեառն գողգոթա, որ խմաստանագոն է քան զամենայն հնդկաստի, այն ինքն է խմաստութիւնն այ. (յովհ. բ. 14. 15.) Այնէ վիշապացն ընդդէմ քո՛ հար՛ի բերան նորա զնդակ լիւղոյ և՛ի մեզ, զանգելով զկեանս քո՛ի սիրոյ և՛ի խանարհութենէ. (գաղ. ե. 16—24.) եթէ առիւծացն՝ պատառեաւ զնա. (դան. ժ. 6.) եթէ գողեսիացոյն՝ լեր գաբէթ հինդատառեան անուամբ, և հնդեքսիմբք քարամբք հնդից տագից անուանն յոի, և հնդից վերաց նորա իբր ամենայաղթ վիմի՝ հար զձկատ նորա. և սրով նորին սպան զնա (ա. Թագ. ժ. 49. 51.) Այնէ երևեր քեզ զևն՝ զինչ առնիւր, միթէ անասնքը նմա, միթէ հետևիւրը չար կամաց նորա. միթէ սիրելիը զնա։ Կու զնա ոչ տեսանելով՝ զիթոր ձուէն նորա ոչ համարիս՛ի նմանէ. նա զքեզ տե-

սանձ. գուշ զՆաթան տես, և կոխեաւ զայն ըստ ոտիւք.
արթուն ըլր և հակեաւ (ա. պետ. Ե. 9.)

Այլաբանօրէն, դաժանութիւնք այսոցիկ չորից գազանացս Հայկն ի դաժանութենէ չորիցկին Հալածանաց՝ որք յարեան ի վերայ եկեղեցւոյ. մին է Հալածումն հրէից՝ որք նմանին խժից վասն խնդրոյ զականջս խնքեանց՝ զի մի լուիցեն զձայն դուչէ. Երկրորդն է Հալածումն հերձուածոցս՝ որք հանգոյն քարոյն Հայկ. ցուածով միայն՝ այսինքն բանիւք միայն թունաւորելոյն զլսուցն. Երրորդն է Հալածումն հեթանոսաց, որք իբրև գառիւծս կամեցան պատառել զքրիստոնեայս. Իսկ չորրորդն է Հալածումն հերձուածոցն, որ զօրութեամբ փչեսցէ և գօշեսցէ. Իսկ եկեղեցի քոյ անչնաս պահեսցի ի սոցունց՝ մինչև ժամանեսցէ յայն յորում ոչ եւս տեսցէ զՀալածանս ինչ։

Աստղայոգիս, այսոքիւք չորեքմասեաւք գազանօք նշանակին այլեայլ չար մոլութիւք. խժիւ՝ ժանտութենէն և ագահութենէ. քարբիւ՝ նախանձ և չարաչնութենէ. առիւծով՝ չպարտութենէ և յանդգնութենէն. վիշապիւ՝ բարկութենէ և որկրամոլութենէ, և տիրապետ վիշապն վաղաղութենէ. զորս այր արգար առցէ ընդ ոտիւք իւրովք, այսինքն նուաճեսցէ ընդ զգայական գնացիւք. իբր զի քաղցրութենէ և անբնդութենէ գնասցէ ի վերայ խժից, սիրով և բարի կամելով՝ ի վերայ քարբից. խոնարհութենէ կոխեսցէ գառիւծն, հեզութենէ և ժուժկալութենէ զվիշապն։

Իսկ լամբ" գրէ այսպէս. չաղութենէն քոյ * կոխան ,, լիցի մեր ի՛ծն պոռնկութենէ, և քարքն արծաթասի. ,, բութենէ, առիւծն բարկութենէ և վիշապն ամբարտա. ,, ւանութենէ ։ Այս ամենայն տիրապետ և քարեպետ յաջողեսցի արդարոյ ի հաստատել նոքօք զայս իւր յաճեալ բարձրեալն։ Իսկ զայս յայտ առնէ մարգարէն ի յաջորդ համարն ասելով։

ԺԲ. Բանէր ինէ յոտացաւ, և էրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Յարդ յայնեալ դէմն խօսեցաւ մարգարէն. մի՝ ի գիմաց արդարոյ առ ձաճ և առ անձն. որպէս ի Համարն 2. և 3. և ի վերջ 9. համարոյն։ Երկրորդ՝

'ի դիմոյ իւրոյ. և այն՝ կամ առ այլս 'ի հասաբակի խօսելով զարդարեայն. որպէս 'ի Համարս ։. և կամ առ նա ինքն արդարն, որպէս 'ի Համարս ՟ա. մինչև 'ի ։՟։ Իսկ ասա և 'ի յաջորդ երկուս Համարդ խօսի 'ի դիմոյ ՟ա՝ Ի՟ա. որպէս և ասեանէս զոր միանգամ խօսեցաւ մարգարէն 'ի դիմոյ արդարայն՝ պարզ եղ առաջի. իսկ զոր խօսեցաւ 'ի դիմոյ իւրոյ՝ նմա նաբանուածք և խրթնաբանուածք. և ապա 'ի խօսիլն 'ի դիմոյ ՟ա՝ զարձեալ պարզ բանիւք խօսի։ Լ՟ս այսպէս յերկից դիմոյ խօսելով, և զնոյն բան երեքիցմիոք 'ի մէջ բերելով՝ զՀնմարտուածն ասացելոց իւրոց հասատատ իբր յերկից զօրաւոր վկայից՝ ըստ օրինաց։ Ի՟ասցի զօրաւոր. զի յայտ է թէ վկայուածն արդարոյն զօրաւոր է յայմ. քանզի իբրև փորձ վկայե առելով՝ 'ի յուսալ իմում յ՟ած՝ նա եղև ընդունօղ իմ և փրկիչ իմ. իսկ վկայուածն մարգարէին՝ զօրաւորագոյն է քան զայն. քանզի իբրև փող հոգւոյն ՟ած, և իբրև պատգամաւոր ՟ա վկայե՝ թէ 'ի յուսալ արդարոյն յ՟ած՝ 'ի թիկնամէջս իւր ընկալեցէ զնա ։՟։ Լ՟ս վկայուածն ՟ա է ամենազօր. որպէս և յայտ է։

Լ՟ըդ յայմ ՟ածային վկայուածն (որ է 'ի յերից հատարդ ;) բովանդակի այն ամենայն՝ որ ինչ առացաւ 'ի սաղմոսիս, և ինչ ինչ եւս առելի. և զայսոսիկ վերածեն մեկնիչք յուածքին խոստմանն, կամ յուածն նպաստս, զոր խոստանայ ՟ած ցուցանել արդարոյն. այսինքն է փրկել զնա, պահպանել զնա, լսել նմա, լինել ընդ նմա կեցուցանել զնա, փառաւորել զնա, ածել զնա յանմոց կենաց, և տալ նմա զիրկուածն իւր յաւիտենական։ Լ՟պա 'ի մէջ բերելով զայս արդարոյն՝ ակիզն առնէ յառաջնոյ անտի, և ասէ։

Ի՟անդ չէս յ՟ած՝ և էլեցէղ զնա ։ Լ՟ստդ ՟անդ՝ դնի աստ փոխանակ բառիս որովհետև. և բառս է՝ փոխանակ բառիս վասն այսորիկ. որպէս թէ ասէր. որովհետև չէս յ՟ած՝ վասն այսորիկ փրկեցից զնա։ Լ՟յ յոյս թէպէտև է այն՝ զոր բազում անգամ յիշեցաց 'ի սաղմոսիս, բայց աստ դնի փոխանակ նախապէս յուսալոյ, և նշանակի զներգործուածն կամ՝ յարբերոյ յ՟ած բան ամենայնի՝ և յանձնելոյ նմա զամենայն, և ունելոյ զնա իբր ապաւէն յամենայնի։

Լասցին դնի փոխանակ նախապէս յուսալոյ. զի այս յոյս Տէրն յայտնիսի ոք, որ ի տատանիլն խորհրդովք, եթէ զինչ պարտ իցէ ինքեան առնել առ ի զերծանելն ի փորձանաց, կամ ի վտանգէ չարեաց, կամ ի տանջանաց խղճի մտաց, և կամ որ մեծն է ի շղթայից մեղաց, կամ ի բռնութէ ախտից կամ ի տագնապութենչիչ խեղդմանէ հոգւոյ, կամ յանկնարբին վարանմանէ մեծի վատահամբաւութէ ՚ի՛՚, և ոչ տեսանել լոյս ուստեք իւր նպատ՝ հաւատալ դիմել առաձ, և բոլորովին նմա յանձն արարեալ զանձն, և զամենայն, և ա՛ւ զիորձանսն, յարի ՚ի նա յամենայն սրտի և յամենայն զօրութէ իւրմէ։ Լէ զորօրինակ ի յարել երկաթն ի մագնիս, մագնիսն ևս ձգէ զնա, և յինքն յարէ, աղնսի՛ս և ած տեսեալ թէ առ ինքն տպաւիրեցաւ մարդս իբրև երկաթ, ինքն ևս ձգէ զնա, և փրկէ յայնմ ամենայնէ, յորմէ տագնապելով դիմեաց առ ինքն. վա՛ որդ ասէ, և ես փրկեցից զնա։

Լէ զորօրինակ կերկնչիլ մանկան ՚ի գազանաց, և ՚ի դիմել լալով առ մայր իւր՝ մայրն ոչ մերժէ, այլ ընդունի զնա, և ընդգրկէ և փրկէ, աղնպէս առնէ և ած յուսացողսդ իւրոց։ Լթէ տպաւիրնիս ՚ի քեզ, քեզ տայ ած զքեզ. զի ոչ ևս իւր համարի զքեզ, այլ քո։ Լոկ եթէ ՚ինա տպաւիրնեացիս, և նմա յանձնեացես զքեզ և զբոյդ, իւր համարի և իւրև զիւր փրկէ։ Լէ քանզի յետ փրկելոյ ևս ոչ պակասին և այլ միաասկար փորձութիք և վտանգք, յայնցանէ ևս պաշտպանէ զքեզ. սմին իրի յարէ և գայն զինի՛՚ ի մէջ բերելով զերկրորդ խոստումն և ասէ։

Ձուլանի եղէց նմա ի ծանեաս զանուն իմ։ Լաստի ասել. յետ փրկելոյ զնա՝ առից զնա ի ներքոյ հովանաւորութէ իմոյ, և ես ինքն եղէց նմա հովանի, պաշտպանելով զնա ոչ միայն ի չարեաց անտի յորոց փրկեցից, այլ և յա և իցէ վտանգից և ՚ի վնասուց, զի մի և ՚ի նոցանէ ըմբռնեսցի. և զայս արարից ասէ վասն այսորիկ՝ զի ծանեաւ զանուն իմ։

Լայս ձանաչելս ոչ է սոսկ հայեցողաբար դիտելն, զի զայս նաև չարք և ամբարիշտք կարեն ունել, և ա և հերձուածս փիլիսոփայք. զորոց ասէ պաւղոս. * ծա-

,, Նեաեան զՅած , և ոչ իբրև զՅած փառաւորեցին ‖ . (Հռոմ. ա. 21 .) այլ և գործնականաբար գիտելն , այսինքն այնպիսի Ճանաչմամբ՝ որ լծէալ իցէ ՚ի կառս դիմելոյ յԱծ անուաք յուսոյ և սիրոյ , և նոքօք յարձակ ՚ի նոյն . զորպիսի ունին նոքա որք ՚ՈյՀ են , և կիր ՚ՈյՀ միայն կամին լինել , զորոց ասաց տէրն . * Ճանաչեմ զՀիմն , և Ճանաչիմ յիմոյն ‖ . (յովՀ· Ը· 14·) Լ՚աստնօր ոմանք զՀովանի լինելն վերածեն առ Հայր . և զանուն առ Հոգին Ծր . և զիրկելն առ որդին .

այլք ևս այլազգ կարգաւորեն ըստ Հաճոյս ։

Լ՚ԱՀ գիտել է՝ զի բառդ ՄՈՒՏ՝ նշանակէ աստ զայն՝ որ անուամբ ցուցանի . զի անուն է Հատուած սահմանի , որով յանդիման լինի իբր . ապա որ Ճանաչէ զանուն ՈյՀ , նովին Ճանաչէ և զԱծ , այսինքն Ճանաչէ՝ Թէ նա միայն է տէր և արարիչ ամենայնի . նա միայն է ամենակարող , ամենիմաստ , ամենանէր , ամենաբարի , ամենագԹած , ևն . ոչ զի զայս ամենայն յայտ յանդիման ըմբռնէ , զի այս պահի ՚ի Հանդերձեալն , այլ զի անդ ըմբռնեմամբ Ճանաչելով՝ յայտ լի ՚ի նա Հոգւով . Օ այսպիսի Ճանաչումն և գայթ բուեան Հաստատուն ունելով արդարոյն լինիցեան , ՚ի կարգալ նորա առ ՅԱծ յո և իցէ վանգս ոչ լինի անտես ՚ի Նմանէ . զոր և յայտնի ցուցանէ յաջորդ բանիւն՝ ՚ի մէջ բերելով զերկրորդ և զերրորդ խոստումն , և ասէ ։

ԺԸ . Կարդասջէ առ իս՝ և ես լռեայց նմա . և առ նմա ե-
ղեց ՚ի ՆեղոտԹԵ ։

Լ՚այս կարգալն է ՆերգործուԹիւն յուսոյ՝ արտաքին կամ ՆերքինՀ ձայնիւ . կամ Ն. նոյն իսկ ՆերգործուԹԵ յուսալն յԱծ . և զայս կոչէ կարգալ առ ՚ի ցուցանել զաստուԹԵ կամ զառաւելուԹԵ յուսոյն . որով Հետև կարգալն կամ գոյԹէն ՚ի մէջ բերէ զաստուԹԵ Թէ ինչ ։ Ո՚նդ այսու յուսոյ խմացեալ լինի և Հաւատքն . որ յառաջէ քան զյոյսն , և Հարկաւ պահանջի . ըստ որոյ ասէ Մովսէս վարդապետ ՚ի մեկին . Ժամագրբ . (ԵբԷս . 184 ·) Թէ * զկարգալն Հաւատով՝ կամ՝ և ոչ ԵրկմտուԹԵ . խնդրեացէ ասէ առա,, քեալն Հաւատովք , և ոչ երկմտեսցէ ‖ ։ Այլ ըստ

այսմ հաւատքս խնդրէր արմատապէս, եւ յոյն մեր-
ձաւորապէս. ի դնելն այսր գրեթէ սահիլ ոճն լսել.
վասն որոյ ասէ.

Այրդասէք առ ի ես լուայդ նմա. Կամի ասել. որ բա-
լորովքն եդեալ է յիս ղայդ իւր, ի գոչելն առ իս՝
կամ ի դիմել նորա ի հովանի թեւոց իմոց յո՞ւ եւ իցէ
դիսլուածս՝ յօժարութիւ՞ լուայդ նմա. որպէս թէ ա-
սէր. միշտ բաց են ականջք իմ առ այնպիսին առ ի
լսել ձայնի նորա։ Եւկ այս լսելոյն ընդունիլ զինդ-
րուածս. եւ որ սիրէն եւ կատարել զնոյն՝ յօժարու-
հասանելով ի պիտոյութեանս, եւ հովանի լինելով ի
փորձութե՞ կամ ի նեղութե՞. եւ առ այս յարել զինչ,
ի միջ բերելով զերրորդ խոստումն եւ ասէ.

Լ՞ա՞ առ նմա եղէդ ի նեղութե՞. Ոչ ասէ հեռացուցից
կամ բացակից ի նմանէ զնեղութե՞ս, կամ արարից՝
զի մի հասցէ նմա նեղութե՞ ինչ. զի այս ոչ է մեզ
օգուտ. այլ թէ առ նմա եղէցի ի նեղութե՞. եւ թէ-
պէտ միշտ առ մեզ է ոճն ի նեղութե՞ եւ ի հանգըս-
տեան, բայց մանաւանդ ինն օրինակաւ ասէ լինել
առ նմա իբրեւ առ խաբուսի օգնելոյ՝ մխիթարելով
զնա, քաջալերելով, զօրացուցանելով, պաշտպանե-
լով, եւ. եւ հոգւով յետոյ՝ ի կէտ կատարածի կենաց
փրկելով զնա յամենայն նեղութե՞է. եւ զայս յայտ առ-
նէ ի յաջորդ համարն, ի միջ բերելով զչինգերորդ
եւ զվեցերորդ խոստմունսն, եւ զայլսն եւս, եւ ասէ.

Ժէ. Փրկեցից և ծածկեցից զքեզ. երկնաւորբէ-
լցուցիչ, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Ի համարն 14. ասաց փրկեցից զնա. որով եղոյց
փրկեալ ի պատահս վտանգից եւ ի զեռասուց, բայց
առանց ի բաց առնելոյ զնեղութե՞սն. վասն որոյ եդ
զչինի ի համարն 15. առ նմա եղէցի ի նեղութե՞.
ապա ի կրկնելն զսոյն զինի այնր, սովին ցուցանել՝
թէ փրկի ոչ միայն ի վտանգից եւ ի զեռասուց, այլև
յո՞ եւ իցէ նեղութե՞ց բաժանմանէ նոցին ըստ ամենայ-
նի. Եւկ այս լինի ի կատարածի կենաց. զի ցորչափ
կեաս ի մարմնի աստ, նեղութե՞ք ոչ պակասին, և
ոչ եւկ ի հանգստեան՝ զոր ունել կարծեմք. վասն
զի յաստի կեանս հանդիսա անվիշտ ոչ լինի. թէ և

վիշտ անհանգիստ կարիցէ լինել. զի ըստ առակին կարէ փուշ առանց վարդի բուսանիլ ՚ի մէզ, այլ ոչ վարդ առանց փշոյ. այս միայն ՚ի դրախտի անդ կաբելը լինել. իսկ լրջդունիլ մեր զանիծն զայն՝ թէ փուշ բուսուսցէ երկիր քո, ընդ հակառակն չըջեցաւ. իբր զի որ ՚ի դրախտին անփուշ վարդանայր, ՚ի մեզ անվարդ փշանայ. և եթէ վարդացի, փշով ածեսցէ, մինչև հասցէ ժամանակ քաղելոյ, այսինքն է ժամ մահու. յորում խոստանայ ած փրկել զյուսա-

ցեալսն իւր. վասն որոյ ասէ.

Փրկեցէ (և տառապեր արթիւ ըմա.) Կամի ասել. Թէպետև կրեսցէ արդարն ՚ի կեանս իւր զազգումն նեղութիւս, բայց եկեսցէ ժամանակ՝ յորում ՚ի լռանալ չափու՝ փրկեցից զնա ՚ի նեղութէ անտի, մինչև ոչ և տեսանել նմա զնեղութիւն ինչ յաւիտեան, այլ զարդիւնս և զվարձս նեղութէն. որով հանդերձեալ եմ փառաւորել զնա. և առ այս յասէ.

Ա՞ր տառապեր արթիւ ըմա. Ի՞նչ փառաւորութէն ուղղակի հայի ՚ի վարձս յաւիտենական կենաց, որով հանդերձեալ է ած աքանչելի ցուցանել զծառայս իւր յիւրքեանս և առ այլս. յիւրքեանս՝ երանական փառօք, և առ այլս՝ արեգակնակերպ պայծառութէ. ըստ որում ասաց տէրն մեր. * յայնժամ արդարքն ,, ծագեսցեն իբրև զարեգակն յարքայսէ երկնից ‖. (մատ. ԺԳ. 43.) յոր հայեցեալ պօղոսի ասէր. (հռոմ. Ը. 18.) * ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մէզ ‖. և այս՝ ոչ եթէ սահմանակ ինչ ժամանակաւ, այլ յաւիտեանս յաւիտենից. և առ այս յասէ.

Ա՞յլեւսյտաւորբիւ ըզտէրն (ըմա.) Ի՞նչ աւուրք մեր կարճ են և ցաւագին՝ թէ և յաճս քաղցումն ձգեսցին. և չէ և մեծ ինչ յաւուրս աղցաւոր կենաց երկարել ՚ի կեանս. զի են տառապեր, որովք ոչ է հնար լռանալ մէզ. իսկ աւուրք հանդերձեալ կենաց երկայն են, այսինքն անվախճան և երանական. որովք միայն մարթէ մէզ լռանալ. և զի զկնի եթէ աւուրց առաջի դնէ աստ, յասելն, յաւուրց երկայնաւորբք՝ զայս պարտ է իմանալ զկնի եթէ յաւիտենական աւուրց.

Եւ թէպէտ մի միայն է այն օր, բայց բազմաւորաւիկ
ևս կարէ ասել աւուրը ըստ որում պարագրէ յիմքեան
զամենայն աւուրս տեառդութեան. նաև զի նմանութիւն
աւուրց մերոց նկարէ զայս բան առաջի մեր, ուստի
և բազմաւորաւիկ զնէ։ Յայսխի յաւետեանն ա-
ւուրքդ և կենաց ասէ. Հանդերձեալ եմ լցուցանել
զնա. մինչև ոչ ևս միտ նմա իւիք դատարկ՝ այլ ա-
մենևին լի։ Յլ թէ զինչ է այն՝ որ յայսմ յաւետե-
նականութեանն լինելոց իցի իրօք լիացուցիչ՝ յայտ առ-
նել ասելով.

Եւ ցաւեցից նմա զչարութիւն նմ։ փրկութիւն խմացեալ լի-
նի աստ եղջն փրկութեան. յոր միտ բազում ուրեք՝ ի
գործ ածէ զոր գիրն զայս բան. ըստ այսմ (յեր.
ա. 14.) * որք ժառանգելոց են զփրկութիւն։ և
այս կոչի փրկութիւն վասն փաղանչանելոյ զղեցիկ լի-
նելն ի դատաստանութեան։

Յայս փրկութեան, կամ այս եղը փրկութեան է կեանքն
յաւետենական. այսինքն է ժառանգութիւն ծածուկ՝
անսիսխալ յաւետենականութեան. և այս է ինձառն
այն, որոյ գին եղև կեանքն այդ. զի վասն այսր մե-
ռաւ որդին այդ ի վերայ խաչին։ Յորդ զայս փրկուն
ասէ ցուցից նմա, և սովին լցուցից զնա յանեզր ա-
ւուր յաւետենականութեան։

Յանգը այսր վերջին հասարակ, զոր մեք հայելով ի
հանդերձեալ կեանս մեհկացաք, կարեն մեհկել հան-
դերձ առաջնովք ըստ աստի կենաց և՝ ի վերայ
արդարոյն. որում առցես օրինակ գյոմսի ի նահա-
պետ, թէ զիարդ փրկեաց զնա ած նախ ի գրոյ
անտ՝ յոր արկին զնա եղբարք իւր. և զիարդ հոգա-
նի եղև նմա յայնժամ. և ապա զիարդ յանկանիլն ի
փորձութիւն ամենատանգ լուաւ նմա ած. և ի մտա-
նելն ի բանտ՝ առ նմա եղև ի նեղութիւն. զիարդ և
ոտտի փրկեաց, և իշխան եգիպտացւոց կացուցա-
նեալ՝ փառաւոր արար զնա. լցոյց զնա երկայն աւ-
ուրբք, և եցոյց նմա զփրկութիւն իւր՝ յայտնելով թէ
առաքելոց է զորդի իւր փրկիչ. զորոյ զանունն ետ
կրել յիմքեան ի կոչիլ նորա փառաբեմութեանն՝ այս-
ինքն փրկիչ աշխարհի։ Օգոյն կարես տեսանել և
յայլս բազումս. և ի քեզ իսկ՝ եթէ ըստ առաջա-

դրուեցան սաղմոսիս քնակեսցեն յօդնութիւն քարձրելոյն, և հանգիցես ընդ հովանեաւ նորա, մինչև ժամանեսցես ի փրկութիւնն յայն՝ յորում և կեսաքն յաւիտենական։



ՍԱՂՄՈՍ· Գ·

Յաւուրս աղաղակեցի առ Տէր վասն ողորմութեան նորա և վասն Հնազանդութեան, զոր ցուցամբ մեծութեան սքանչելի գործոց նորին. միանգամայն և յայտարարութիւն յիմարութեան և կորստեան ամբարշտից. և ցոյցք երջանիկ վիճակի արդարոց՝ նմանութեամբ արմատնեռեաց և մոլորեցաւ լիբանանու։

Աղաղակ օրհնութեան յաւուր ղաբաթոյ։

1 Բազմ է խռովեալ լինել ինձ. սաղմոս ասել անուան տեառն քարձրելոյ։ 2 Պատմել առաւօտուն ողորմութիւնդ տ, և ճշմարտութիւնդ տ ի գիշերի։ 3 Յանաղեամ սաղմոս սարանա, ի յայն օրհնութիւն փոխել։ 4 Իբրեւ սրտեր ընծայ ինձ յարեաքծ տ, և ի գործս ձեռաց տոյ ցնծացայց։ 5 Իբրեւ ազի ինձ են գործք տ սքէ, և յոյժ խոր են խորհուրդք տ։ 6 Այր անգիտաց չգոյ ազ ծանիցէ. և անխոհ գոյ ազ առնու ի գիւ։ 7 Ի բուսանել մեղաւորաց որպես խոտ. ի ծաղիել ամենայն՝ որ գործեն զանօրէնութիւն։ 8 Յաւասիկ յաւիտեան յաւիտենից. և դուն քարձրեալ ես յաւիտեան սքէ։ 9 Օ՛ք ահա ընկունիք տ սքէ. ազ ահա ընկունիք տ խորհեցին, ցրուեցին անիրաւեան՝ այլ գործեն զանօրէնութիւն։ 10 Խորհեր եղեալ որպես փեղկերոյ եղէալ իմ, և ծերեսուն իմ ի չեղ զարարեալ են։ 11 Աչես այն իմ ի ընկունիս իմ, այլ յարուցեալ են ի վերայ իմ չարեսն, ի նոսա լուիցեն ականջ իմ։ 12 Արդարն որպես արմաւենիս ծաղիեսցին. որպես մայրն ընձեռանոս բազմանա եղեցին։ 13 Ընձեալք եղեցին ի գան տէ, և ի գաւիթս այ մերոյ ծաղիեսցին։ 14 Այս և բա-

ղեամ եղիցին՝ ի ծերոնիան պարբառունեան. գիրք՝ և քա-
ղեամ եղիցին՝ ի պարիզ, ուղիղ է տեր ձի մէր, և ոչ գոյ
՝ի նմա անիրաւունեան։

ՎՆՐԳՈՒԹ

Աղմոս օրհնուածէ յաւուր շաբաթուց։



ԵՍ ՄԱՂ ՔՈՍՈՍ ԻՆՁ, ԸՅՕՒՆՐՆԶՆ յուխ ձեռագիրս յաւելեալ լինի աստ և բառս ՝ի դաւիթ, որ ոչ գոյ յայլ ձեռագիրս, և ոչ ՝ի լամբ", և ոչ ՝ի վարդ", և ոչ յերբ", և ոչ յայլ Թարգ", բայց միայն յարաբացւոցն ։ Ի տպագրեալ սաղմոս մեր յաւելեալ լինի և ասել. * անվերնագիրք ՝ի հերքայեցւոց ։ որպես և ՝ի սաղմոն լամբ". այլ այս սխալմամբ է եդեալ. զի ոչ գոյ այդ բան ՝ի ձեռագիրս մեր, և ոչ ՝ի վարդ", և ոչ յայլ Թարգ". և ոչ իսկ կարեր դնիլ, քանզի յերբայական գնի վերնագիրք այսպէս՝ դվմօ ղէօ լէ եօմ հասպոն. այս է * սաղմոս. երգ յաւուր շաբաթուս ։ կամ * սաղմոս օրհնութիւն վասն աւուր շաբաթուս ։ իսկ Թէ որոյ իցէ այս սաղմոս, և երբ յօրինեալ, և յինչ միտս, սէսպէս են կարծիք. հրեայքն համարին՝ Թէ ՝ի նահատեղծ մարդոյն ասացաւ այս՝ յետ ելանելոյ նորա ՝ի դրախտէ վասն երդելոյ յաւուր շաբաթուս. ուստի ՝ի մէկն քաղդ" դնի այսպէս. * գովուս ,, Թէ և օրհնութիւն, զոր ասաց մարդն առաջին վասն ,, աւուր շաբաթուս ։ Այլք անհին և անտեղի երևի այս կարծիք. մի՝ զի ՝ի համարն 6. և որ զկնի յիշէ զայր անզգամ, ընդ նմին և զմեղաւորս. և զիարդ նախ քան զծնանել ադամայ զորդիս՝ յիշէր զմեղաւորս. երկրորդ՝ զի ՝ի համարն 10. և 14. խօսի ընդ ծերոնիէ, որում դեռ ևս չէր գիտակ. երրորդ՝ ՝ի համարն 3. ՝ի մէջ բերէ զտանջանեալ սաղմոսարան, որ դեռ ևս չէր յօրինեալ. չորրորդ՝ զի ՝ի համարն

12 • լինել զմայրան լիբանանու. և յայտ է թէ չկայը
յայժամ անուն լիբանանու. Այլ չէ ևս ի գէպ ա-
սել, թէ գուշակութիւնքն ինն լիշատակեալ ի՜ցեն Նորա
զայսոսիկ, զի չկայը ինչ Հարկ գուշակութեան այս-
պիսեաց.

Իսկ այլք ի բաբունեաց՝ գաւթի տան զայս սաղմոս՝
ասացեալ վասն մեսիային. և ոմանք Հայելով ի բառդ
շաբաթուց՝ յաւելուն ասել, թէ այս դնի վասն այ-
սորիկ՝ զի յետ կատարածի աշխարհիս շաբաթանալոց
է մեսիան՝ այսինքն Հանգչելոց է ընդ արդարս Հա-
զար ամ՝ ի վերայ երկրի. Այս կարծիք զոր ընկա-
լան ոմանք ի սկզբան՝ (որպէս և պապիոս) մերժի
յեկեղեցւոյ և յամենայն խոհական մտաց, ոչ միայն
իբրև մոլորական, այլև իբրև յիմարական և տղայա-
կան. զորմէ չէ տեղւոյս գրել.

Վաղումբ ևս կան որք պնդեն, թէ այս սաղմոս իցէ
ասացեալ ի ժամանակս գերութեանն բաբելացւոց ի
հոգեկիր արանց եղելոց յագգէ դևամտաւոց, վասն ա-
զատելոյ ի գերութենէ, և Հանգիստ գտանելոյ. յոր
միտ մեկնեն զառաջ շաբաթուց՝ որ նշանակէ Հան-
գիստ. Կան ևս՝ որք յաւուրս եգեկիայ արքայի վե-
րածեն զսա ի շաբաթանալ Նորա՝ այսինքն ի Հանգ-
չիլ Նորա յերեսաց ասորեստանեայց.

Ճշմարտական կարծիք բազմաց է՝ թէ զայս սաղմոս
ասաց դաւիթ ի գովութիւն ողջոյնութեան և Հզմայրու-
թեան՝ որ ի գալ Նորա, և տեսլութեանն որ Հոգւոյն
սրբոյ, և զիջուտս վիճակ ամենայնիւ՝ Հանգչելոյ ա-
ռաջնեւորդ սաղմոսի, և ևս և երեւելվեցորդի.
իսկ բառս շաբաթուց՝ ցուցանէ՝ թէ այս սաղմոս եր-
գեալ լինէր ի նախնեաւն յաւուր շաբաթու՝ առ ի
խելամուտ լինել ժողովրդեան՝ թէ պարտ է Նոցա ի
շաբաթու՝ ածոյնոց պարապիլ, և ի նա ևեթ ուրախ
լինել.

Ի սոսին յաւելու վարդան գրել յայլոց զայսպիսի
ինչ. * ասի թէ դաւիթ չորքոտի պահու
,, գիշերոյն, և եգիտ զքահանայն ի քուն, և զար-
,, թուցեալ զնոսա սկսաւ երգել Նոքօք‖, և ասել.
բարի է խոստովան լինել Նմա։ Իսկ զառաջ շաբա-

թուց մեկնէ 'ի վերայ շաբաթանալոյ ժողովրդեանն այ 'ի նորս եկեղեցի ։ Զայս վերածելով և լամբ″րդ-բառդ շաբաթուց կամ շաբաթու՝ գրէ այսպէս. * Եւ
,, ո՛ր է (ասէ) որ շաբաթու եթէ ոչ այսօրս առաջի
,, կացեալս՝ յորում եբարձ ած զարտօսր յամենայն
,, աչաց, և շաբաթացոյց զմեզ յաշխատութենէ մեղաց.
,, որպէս ասէ պօղոս ։ Քանզի 'ի նոցանէ յիսրայէլէ՝
,, նուազեցաւ շաբաթանալն, վասն այսր այլ որ շա-
,, բաթու սահմանէ 'ի դաւիթ յետ այնչափ ժամա-
,, նակաց. և զայսպիսի հանգիստ քնիւ ազդէր 'ի մեր
,, յաշխատութենէ մեղաց. ծանուցեալ մարգարէին և-
,, կեալ 'ի մէջ ժողովոց մեր. երգակիցս առնու զմեզ
,, 'ի սաղմոսս, ոչ յաղօթից և ոչ արտասուաց երգ.
,, որպէս մինչ ասէ, տէր մի սրտմտութբ.... կամ
,, ողորմեա՛ ինձ զի կոխեաց զիս մարդ. այլ զի՞նչ,
,, սաղմոս օրհնութենց. քանզի գիտէ զայս ժամանակ
,, գոհութե առաւել քան ապաշխարութե, ուրա-
,, խութե և ոչ արտասուաց կամ տրտմութե. վասն
,, զի մեղք վասն որոյ հարկ է ապաշխարել, եղև այն
,, փոխանակ մեր՝ որ ոչն գիտէր զմեղս, և մեք որ-
,, դեգրացեալք նովաւ ձրի, միայն հարկաւոր է զբե-
,, րանս բանալ 'ի գոհութի բանիւքս, որովք առաջ-
,, նորդէ մեզ մարգարէս երգել ։

Բ. Ր. Ն

ա. Բարի է խոստովան լինել տն, սաղմոս ասել անուան քում բարձրեալ ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Խոստովան լինել առ ած նշանակէ աստ գովութի մատուցանել նմա 'ի փառս մեծվայելչութե նորա, և գոհանալ զնմանէ վասն զարմանալի գործոց նր, և վասն բարերարութեց նորին ։ Նոյնպէս և սաղմոս ասելն նշանակէ աստ զերգս օրհնութե մատուցանել առ ած սաղմոսարանաւ ։ Զայսպիսի պատարագս

Ի

փափաքելով մարգարէին ընծայել՝ ասէ ։

Բարի է խոստովան լինել ՅՀ, սաղմոս ասել ՅՀ, ամենայն հոգի բարի ասի խոստովան լինել և սաղմոսել առ ՅՀ. նախ՝ ըստ պարտաւորելոյ իրաւանց արարածոցն, ուստի ի սմին՝ պարտական եմք յարգար իրաւանց խոստովանիլ և մեծացուցանել զմեծութիւնն ՅՀ և զարութիւնն նորա ։ Երկրորդ՝ ըստ օգտակարութեան, զի խոստովան լինելով ՅՀ՝ գրեթէ բռնադատեմք զնա ցուցանել մեզ զողորմութիւնն իւր. նա զի վարձուց և լինիմք արժանի ։ Երրորդ՝ ըստ բերկրութեան, քանզի նովաւ զուարճանայ սիրտ մեր, և խաղալին ամբոխմունք խորհրդոց, և և գոչաբերն շարժմունք կրեցց ։ Չորրորդ՝ ըստ քաղցրութեան, զի առակ է՝ թէ քաղցր է սիրտն գովել զսիրելին. և զինչ քան զնա սիրելի ունիցիմք մեք. ուրեմն քաղցր լինի և մեզ գովելն զնա ։ Հինգերորդ՝ ըստ պատուոյ, վասն զի այս խոստովանութիւնն գառնայ ի պատիւ մեր. որովհետև սոսկ նմանիմք երկնային զուարթնոց՝ որոց գործ է օրհնել և գովել զնա ։

Ըստ այսոցիկ մեծածելով բարի կոչէ մարգարէն զխոստովան լինելն առ ՅՀ. և սովին յայտ առնել նաև զիւր նեբբին փափաք խոստովան լինելոյ նմա. որպէս թէ եղեալ էր. ով թէ քանի բարի է խոստովան լինել քեզ, և օրհնել զքեզ՝ ոչ միայն սրտիւ և բերանով, այլև սաղմոսարանաւ. և յայս միտ յարէ, թէ բարի է սաղմոս ասել անուան քում բարձրեալ. այսինքն բարի է սաղմոսարանաւ օրհնել զանուն քո ով բարձրեալդ ՅՀ ։ Կամ վասն բառիդ բարձրեալ տես ի սադ. ղ. ։

ամէն՝ ասա զանազանութիւն ինչ դնելով ընդ սաղմոսասացութիւնն և ընդ խոստովանութիւնն, կամ ընդ օրհնութիւն, գրէ նախ այսպէս. * օրհնութիւն է (ասէ)
,, յիւրում բարեաց եղեալ մեր ՅՀ բարեբանութիւն.
,, իբր թէ ասելով՝ դու արարեր զմեզ պատկեր.
,, բանիցս. և մեք փոխանակ այսորիկ՝ օրհնեմք զքեզ ։ Իմ գովեասն՝ վասն հրաշելոյն գովասանութեան,
,, որպէս յօրժամ ասէ, ամենայն հրեշտակք իմ գո.
,, վեցին զիս յօրժամ եղէն աստեղք յիջիք ։ Կամ սաղ.

,, մնս ի՝ երաժշտական նուագարանաց գործւոյ յա-
,, րակցութիւն բարբառոյ իբր տանտաղւոյ կամ փողոյ
,, կամ այլոյ այսպիսւոյ , որովք բարիոք վարկանի
,, այժմ մարգարէս զնոճ օրհնել ։ Ո՛չինի այսորիկ
վասն սաղմոս ասելոյ անուանն ոչ յաւելու զբեղ
այսպէս . * սաղմոսեմք բարձրացեալդ մեր ոչ ան-
,, ուան , և ո՛չ քնութիւն ։ Վասնզի էութիւն սահմանն
,, անձառ է ստեղծուածոցս հասմանն , և ոչ եմք կա-
,, րող զորպիսութիւն դորա գովել կամ քննել . իսկ
,, զանունդ գիտեմք բարի , ողորմած , մարդասէր ,
,, և զոյն յերեղէալ փաստաւորեմք ։

Ամենք աստ խոստովանութիւն ընծայեսցեն զայսպիսի բանի մեզաց առաջի ոչ . և յաւելցուն ասել թէ՝ յայս միտ ըստ պատշաճի դնի նախ խոստովան լինել , և ապա սաղմոսել . զի պարտ է նախ խոստովանութիւն մատրիլ , և ապա յօրհնութիւն մտանել . բայց այս մեկնութիւն թուի արտաքոյ գիտման բանին . քանզի աստ խոստովան լինելն ՀՀոյի ՛ի պատճառ առաջի ոչ՝ ոչ զմեզս մեր՝ այլ զբարերարութիւնս նորա , կամ մանաւանդ զողորմութիւնս և զՀՀմարտութիւնս նորա . զորոց իսօսի ՛ի յաջորդ համարն . ՛ի միջ բերելով և զպատշաճաւոր ժամն խոստովանութեան , յասելն ։

Պարտ է առաւօտս ղողորմութիւնս տ , և զՀՀմարտութիւնս տ ՛ի գիշերի ։

Որպէս առաջագոյն այլուր , երկոքին այս բառք ողորմութիւն և ՀՀմարտութիւն՝ բազում ուրեք ՛ի միասին վարին , և ըստ այլևայլ կարգի Հային առ միմեանս . մի՝ զի զորս արար ածն ողորմութիւն՝ խնամոյ զոյնս ՀՀմարտութեամբ , այսինքն այնպէս՝ որպէս պարտ էր ինամել . և ըստ այսմ բառս ՀՀմարտութիւն՝ ակնարկէ յանվրէպ նախախնամութիւնն ոչ ։ Կրկրորդ՝ զի զորս խոստանայ ողորմութիւն , կատարէ ՀՀմարտութիւն . և ըստ այսմ բառս ՀՀմարտութիւն՝ նշանակէ զհաւատարիմն լինել , որպէս դնի յերբ՝ Կրկրորդ՝ զի որոց ցուցանէ զբարերարութիւն իւր ողորմութիւն՝ ցուցանէ երբեմն և զարկութիւն իւր ՀՀմարտութիւն և արդարութիւն . և ըստ այսմ բառդ ՀՀմարտութիւն՝ դնի փոխանակ բառիս յիրաւի կամ իրաւունք , և Հայի յան-

ՍԱՂՄ. ՂԱ. ՝ ՝ ՝

մտութեան մտաց, խռովութեան խորհրդոց, խստութեան կամաց, ձախորդութեան իրաց, եւն, որք ըստ ճշմարիտ և ըստ գաղտնի խորհրդոցն Ա՟յ գան 'ի վերայ մեր․ վասն որոյ և յայնպիսի ժամանակի արժան է մեզ գովել զճշմարտութիւն նորա, և գոհանալ զնմանէ․ Կամ ը լամբ"․ գիշերաւ խմացեալ լինի աղջամուղջն մեղաց, և յայնժամ պարտ է մեզ յիշել զճշմարտութիւն Ա՟յ, և ապաշխարել․ և գոհանալ զբարերարութէ նորա, և գովել զնա վասն ողորմութեանն, որում արժանացաք․

Չորրորդ՝ նմանաբանութիւն առեալ, առաջին գալուստ Ք՟ն այլաբանի 'ի տիւ վասն լուսաւորելոյ զաշխարհս․ իսկ երկրորդ գալուստ նորա ըստ ասելոյ մարգարէից՝ օրինակի 'ի խաւար վասն մեղաւորաց․ Նա զի յառաջնումն եցոյց տէր զողորմութիւն իւր, և յերկրորդումն ունի ցուցանել զճշմարտութիւն դատաստանաց իւրոց, սմին իրի դնէ պատմել առաւօտու զողորմութիւս նորա, և 'ի գիշերի զճշմարտութիւն նորին․ այսինքն գոհանալ զողորմութէ նորա, և արդարացուցանել զդատաստան նորին․ Զայս գոհանալս և արդարացուցանել բացատրէ մարգարէն բանիւս պատմել․ և այս հայի յայն՝ զոր ասաց, բարի է խոստովան լինել Ք՟ն․ և զի յաւել՝ թէ բարի է սաղմոս ասել, որով կամէր ցուցանել՝ թէ բարի է նաև գործեօք՝ այսինքն սաղմոսարանաւ գովել զԱ՟ծ․ Յետ դնելոյ զպատմելն բերանով՝ առաջի առնէ այժմ և զգովելն սաղմոսարանաւ՝ յասելն․

Գ․ Տասնաղեան սաղմոսարանաւ․ 'ի ձայն օրհնութեան քնարաւ․

Տասնաղի սաղմոսարանն է նուագարան՝ տասն աղեօք կամ տասն (թելիւք) կազմեալ․ որով հարկանէր դաւիթ յերգելն զսաղմոսս, նոյնպէս և ղևտացիք առաջի Ա՟ն․ Գլխաւոր վախճան կամ դիտումն այսր էր առաւել ևս հռչակել, և առաւելապէս գովել զմեծ վայելչութիւն Ա՟յ․ Իսկ մերձաւոր վախճան կամ դիտումն էր յորդոր ջերմեռանդութե՝ ոչ միայն լսողաց, այլև հարկանողաց․ յայսոսիկ հայելով խրախուսանս իմն առաջի մատուցանէ, և ասէ․

Տաճարէս սաղմոսարան. ի յայն օրինակէն փոխել. Ամի սաել. բարի է սաղմոս ասել անուան քումմ, և այնու գովել զքեզ ոչ միայն հնչելով զձայն օրհնութ, այլև հնչեցուցանելով զտանդաղեայ սաղմոսարանս։ Տէս վասն տանդաղեայ սաղմոսարանայ ի սաղ. լէ. 1. ի վերջն. զորոյ զնմանն ունիս աեսանել և ի սաղ. ձիզ. 10։

Յաւէլ ի սոսա և զորս գրէ ասա՝ լսաբէն այսպէս. * տասնաղի տիրապետս խնամանքս զհոգի և զմարմին և իւրաքանչիւրոցն հինգ զգայարանաց։ Որովք լսայ առնէ՝ թէ այնքան առատացաւ գիտութիւն հոգւոյ քո ի սիրտ սիրելեաց քոց, որ ոչ թէ միայն հոգւով գովէն զքեզ յանմտունչ հեծութիս ըստ հոգեղինացդ, այլ ասիպեին խառնել զլեզու խնամոյ սոքա՝ ընդ զգայարանս մարմնոյ. և որպէս զատանդաղ երգ ասան զուգաձայնեալ զհոգին և զմարմին ասան զգայարանօք, բաւձրացուցանեմք զձայն մարմնոյ առնիւ հոգւոց, և այսպէս իրաւունս վարկանիմք զքեզ ասծ օրհնել։ Դաւիթ անյաղթ ի մէջ բերելով նաև զհեծնաղին գրէ ի նախերգանս սաղմոսին այսպէս. * և նշանակէ զհեծնաղն քնարն հեծնարուի հնորհս հոգւոյն սրբոյ. որով բոլորովին զմարդն հոգի հացուցանէր. և զհոգի և զշունչ և զմարմին. որովք լցեալ լինի Թէ տանդեկին. զոր նշանակէր տանդաղ սաղմոսարանն։ Լսեմ կասիս, տես և ի վարդանայն. բայց Թուի Թէ այն բանք չեն նորա. զի չեմնին ինչ կարգ և ոչ զտանգաւթէն։ Լսյլ Թէ զնոչ էր՝ որ շարժէր զմարդարէն բերել ցծնուէ յայսոսիսի սաղմոսաստացութիս՝ յայտ առնել յաջորդ բանիւն ասելով։

Է. Որբն որդեր զնս տէր յարբածս ես. և ի գործս ձեռաց քոց երգեցայ։

Լարբածք այ ասին այն ամենայն, զորս ըմբռնեմք արտաքոյ այ. և զի սոքա յառաջ գան ի ձեռացն այ՝ այնինքն յամենակարողութէ նորա՝ ասին և գործք ձեռաց նորուն։ Լդդ երբակի հնար է մարդոյ ուբանս լինել յարբածս այ. մի՝ յարեալով ի նմանս իրս իւր ժառանգելի բանիս. և այս յատուկ է մարմ

նապաստից և աշխարհաբերաց, որք զօրէն անբանից
ի զգալիս ելեալ բերէին։ Յորմէրոք՝ հանգստեամբ վա-
րելով ի նոսա իբրև յոյնս՝ զորս տուեալ է ած առ-
ի պէտս պահպանութեան կենաց։ Յորմէրոք՝ ի տեսու-
թէ արարածոց ցնծալից բերելով ի տեսութէն կա-
տարելութեանն ։

Յոկ կատարելութիւնքն այ կրկին օրինակաւ տեսանին
յարարածս. մի՝ ըստ բաղդատութեանէ, և մի և՝ ըստ
մակաբերութեան. ըստ բաղդատութեան մտածեալ՝ որ
ինչ կատարելութիւն տեսանի յարարածս՝ նովին համե-
մատութեամբ տեսանին և կատարելութիւնքն այ յանսահ-
մանն գերազանցելոյն. զի որպէս ի տեսանել մերո
զսուտերը մարդոյ՝ ի ձևոյ անտի տեսանելոյ զմարդն,
ոչ որպիսի է սուտերն անարգ և գատարկ, այլ գե-
րազանց յոյժ, սոյնպէս և ի տեսանել մերո զարարածս
այ՝ ի կատարելութենէ նոցին իբր ի սուտերէ տեսա-
նելոյ զկատարելութիւնս այ այնչափ գերազանց, որ
չափ մեծ է ած. զորօրինակ ի տեսանել մերո յարա-
րածս զափաւոր ինչ գեղեցկութիւն՝ նովին ըմբռնելոյ
զանչափ գեղեցկութիւն ի յած. ի վայելել մերո յարա-
րածս զափաւոր ինչ քաղցրութիւն՝ նովին ըմբռնելոյ
ի յած զանչափ քաղցրութիւն. սոյնպէս իմն և զայլոց
կատարելութեանց։ Եթէ ըստ մարմնոյ ևս և եթէ ըստ
հոգւոյ. * զի ի մեծութէ և ի գեղեցկութէ արա-
,, րածոց ըստ նմին համեմատութեան և արարչագործն
,, նոցա երևի։ (իմաստ. ԺԳ. ՟ե։)

Յոկ ըստ մակաբերութեան մտածեալ՝ ի տեսանել մերո
զարարածս՝ նովին ըմբռնելոյ զի կայ անեղ և՝ որ
արար զեղեալսս. անսահման յէութէն իւրմէ, և
ամենակարող՝ ի գործել զայս ամենայն, և ամենէ-
միասո՝ ի գնել զկարգ աբանչելի յամենայնէ յայսոսիկ,
և և ամենաբարի ի խնամել զամենայն ։

Զդէ զորօրինակ ի յարել զդայութէն ի յարմար ա-
ւարիայ իւր՝ բերելոյ, որպէս լինի ի յարել քմոյ ի
քաղցրութէն, ի յարել աչոյ ի գեղեցկութէն, ի յա-
րել ականջաց ի ներդաշնակութէն ։, սոյնպէս և ի
յարել հոգւոյն այսպիսի ձանաչմամբ ի գերագոյն
կատարելութեան այ՝ զորս ըմբռնեալ յարարածս՝ բերել
բերի գերագոյն իմն ցնծութէն։ Յայսոսիկ հայելով՝

ասէ ։

Ա՛յսր՛ւհետև արարեր զնա տէր յաբարածս ։ Ա՛ւ ի փոքս ինչ ժամս չոգ ցնծացոյց ։ Վասն ասելոյ. ի սեանձելս իմ յաբարածս քո զբազմադիմի կատարելութենէ՝ զորօրինակ ղչքնաղատիպ գեղեցկութենս, զգաղանածածուկ զօրութենս, զքննազան ազդուռւթենս, զազգի ազգի օգտակարութենս, զհմանալի կազակցութենս, զզարմանալի կարգս, և զհմնրական շարժուածս, զպէս պիսութիւն տեսակաց կենդանեաց և անկոց, հանքոց և ականց. զբարձրութիւն երկնի, և զդիրս աստեղաց, և զայլ բազում սքանչելի գործս, սոքիմքը վերանալ բմբռնել զկատարելութիւնս քո, այսմիքն զանբաւ գեղեցկութիւն քո, զանսահման զօրութիւն քո, ևն ։ որով և ուրախ լինիմ յարարածս քո ։ և ցնծամ ի գործս ձեռաց քոց ։

Լ՚արարածսպաշտք Հայեցեալ ի վայելչութենս արարածոց՝ փոխանակ զարարիչ նոցին Աստուածոյ՝ զնոսին յօժարեցան պաշտել ։ այլ որպէս ասէ եղնիկ կողաքեայ (ի գլ. ը ։) * մեք ոչ անարգեմք զնոսա (այ զարարածս), և ոչ պաշտօն մատուցանեմք նոցա ։ այլ Հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և գյօրինիչ ։ զի մեզ ի պէտս են, և կարգչին խնդրեմք ի փառս ։

Այս աստ գիտելի է, զի յարարածս ամենայն երկուքինչ մարթ է նկատել, օգուտ և փառք ։ օգուտն վերոյ մերոյ է ։ փառքն՝ այլ ։ որպէս ի պտուղս ծառոց բազում օգուտք և լաւութիւնք տեսանին ։ և զայսոսիկ տեսեալ է մեզ ածի ի վայելել ։ տեսանին և փառք արարչութեանն և նախախնամութեանն նոցին, ի նկատելն՝ թէ քանի սքանչելի զօրութիւք գոյաւորին, զիարդ ամենայն, և արդեօք կատարին ։ և այս հայի ի փառաւորութենէ ամենակարող զօրութեանն այ ։ յոր միտ ասաց կողազային ի նախահայգեալ բանիդ, թէ արարածք մեզ ի պէտս են, և կարգչին խրթնոց ի փառս ։ * մեզ ի պէտս են, և կարգչին խրթնոց ի փառս ։

Այս որ միանգամ ուղիղ մտօք հայի և կշռէ զնոսա, այնպիսին աղաղակէ բանիս ։ * ուրախ արարեր զիս ՚՚ ՚՚ ՚՚

վերայ աչիսարկիս. և որ ցնծայ ի սոյն՝ մերձեալ է
ի վիճակ կատարելութեան. զի այս է նշան ճշմարիտ
ճանապարհութեան. և որպէս կէտքն ձանձն լերակաց,
այսպէս և կատարելութիւն մարդոյ ի ցնծութիւն հոգ-
ւոյն. [1]թէպէտ չկայցէ ի քեզ այս ուրախութիւն քննու-
արարածոց, մնաս ի նոյն ըստ երկուց. նախ ըստ վե-
րոյդրելոցդ. և երկրորդ ըստ յորդոր լինելոյ քեզ.
զորօրինակ, ի տեսանելդ զձառս ծաղկեալս, ասա,
ես ընդհէր ոչ ծաղկիմ առաքինութեամբ. ի տեսա-
նելդ զարևածաղկունս հայեցեալս յարն արևու, ա-
սա, ընդհէր ես ոչ ծարաւիմ սիրով յարեգակն արդա-
րութեան. ի տեսանելդ զձուկունս վերացեալս և
սլացեալս, ասա, ընդհէր ես ոչ բարձրանամ ի խոկ-
մունս. ի տեսանելդ զթռչունս կենդանեացս առ հասա-
րակ, ասա ընդհէր ես ոչ փութամ ի գործս բարեաց.
ի տեսանելդ ցնծալ արարածոց՝ ասա, ընդհէր ես ոչ
ուրախանամ յամէ փրկիչ իմ. [2]Յառնելդ քո այսպէս
յառաւոտեան ըստ կարի՝ յառաջանաս ի բարի խոր-
հուրդս, և սկսանիս բերել և բերկրել յարարչին
ամենայնի. և երջանկանաս ընդ այնոսիկ՝ որք յա-
րարածս ոչ հայեցուի՝ ուրախանան և ցնծան ի նոյն:
[3]Քանի է ասատ քննել, զի մարդ արևն յառաջնումն
դնէ յերկրորդ գէմն յասելն, ուրախ արարեր. իսկ
յերկրորդումն դնէ յառաջինն գէմն յասելն, ցնծա-
ցայց. [4]Ոչ պատճառն է, զի յայնժամ ճշմարտապէս
ցնծամք մեք յարարածս ոչ, յորժամ նա ինքն ած ու-
րախ առնէ զմեզ ի նոսին, որով և ցնծամք. ապա
եթէ ինքն ած ոչ արասցէ զմեզ ուրախ յարարածս
իւր, արարածք ոչ տան մեզ ցնծալ. այլ յանդգնիլ
ասել մեր՝ լինին որոգայթք կորստեան. որպէս եղև
առաջին մարդոյն, և որոց զկնի:

Հայեցաւ Եւայ ի պտուղն. զկայ էառ ի գեղեցկու-
թեան նորա, և եղև նմա այն որոգայթ. Հայեցաւ
և ադամ ի Հաճոյս Եւայի, և զկայ էառ ի նմին, և
եղև նմա որոգայթ կորստեան. Թող զսա ինքն ըզ-
դաւիթ. որ հայեցեալ եաւս զոր եաւն՝ յորոգայթ
անձին իւրոյ. մերձեցաւ և այրեցաւ: [5]Ի բեռն (այս-
ինքն փերվանէն) տեսեալ զոյս Ճրագի՝ բերկրի ի
նոյն. և կամելով վայելել զայն՝ և իբրև Թէ ձառակել՝

պատյարբ չուրջ զնովաս. և ՚ի մերձենալն ՚ի նոյն՝ չև վայելեալ՝ այլև. այսպէս գիսի և որդւոց մարդկան. որով և անկանին յորոգայթս. ՚Ի՞նձնել արժան է և զայս՝ զի մարգարէն ոչ գնէ սոսկ զարաբածս, այլ յաւելու ևս զբառդ ՚ի՝ յասելն, յարաբածս քո, և ՚ի գործս ձեռաց քոց. որով ցուցանէ թէ ոչինչ իր ուրախ առնէր զնա՝ եթէ ոչ այն՝ որ էր ՚ի՝ ՚Ուստի և արարածք ըստ որում սոսկ արարածք՝ չէին նման ուրախացուցիչք, այլ մանաւանդ որպէս ասացաք՝ որոգայթք. դարձեալ և արարածք այսինքն արարք մարդկան ըստ որում էին մարդկան, քանի և գերազանց էին՝ ոչինչ ազգէին ՚ի նա, բայց եթէ զորսումեալ ՚ի լինել՝ ՚ՆՁ ընդգմՀաՃՀչՀՅ ՚ՀՅ. իսկ արարածք ՚ՀՅ՝ ըստ որում են ՚ՀՅ՝ որչափ և անարգ իցեն՝ ուրախ առնեն զայնոսիկ՝ որք նոքիմքք վերանան ՚ի ՃանապՀում կատարելութեանցն ՀՅ, տեսանելով ՚ի գործս նորա զիմաստութիւն զօրութեան նորուն, զհոգութիւն խորհրդոց նորին են. զորմ խօսի մարգարէն ՚ի յաջորդ համարն՝ զարմանալով ինն, և ասէ.

Ը. Որդիս ազի ՚ՀՁՅ են գործք ՚ո ՀՅր. և յոյժ խոր են խորհուրդք ՚ո։

Ղոտրծք ՀՅ կրկնակի մտածին, նիւթապէս և տեսականապէս. նիւթապէս մտածին ըստ գոլոյ գործ ինչ. իսկ տեսականաւէս մտածին ըստ գոլոյ այսպիսի և այնպիսի և ըստ գոլոյ այսչափ և այնչափ, կամ ըստ Հանգամանաց օգտակարութեան և օրգանութեանն զոր ունին. զորօրինակ ծառն նիւթապէս առեալ՝ է գործ ինչ ՀՅ. իսկ տեսականաւէս առեալ՝ է այնպիսի ինչ՝ յորում ըմբռնին բազում զարմանալիք. այն թէ, զիարդ աՃՀ, զիարդ մնանի, զիարդ արձակէ զտերեւս, զիարդ տայ զպտուղ իւր, զինչ ազդուրեան ունի, յինչ բերի քնութեն նորա, յորքան տեղիս տարածեալ իցէ. որչափ իցէ են. զորս եթէ ոք սկսանելցի քննել, և ՚ի կրճռ ևս մտաւորանալ՝ թէ որպիսի զօրութեամբ լինի այս, խոստովան լինիցի, թէ անհասանելի է. ոչնպէս իմն և յայլ ամենայն գործս ՀՅ եթէ յերկրի, և եթէ ՚ի բարձրութեան երկնից. Կա յայս միտ մեծ կոչէ մարգարէն զոտա

ասելով։

Որդեա՛ք ջո՛ւք են գործք ոչ պէտ։ Ի՛բր բառդ որդեա՛ք է զարմացական՝ հարցականապէս եդեալ՝ կամելով առնել. ոչ թէ զիարդ մե՛ծ են գործք քո՛ որ։ Այլ զի անհաս է՛ ի մի՛նչ խորհուրդն այ կամ դիտաւորուն նորա՛ ի գոյացուցանելն զայսոսիկ, սակն իբրէ յարել զկնի, և ասէ։

Այ՛ո՛ յոյժ խոր են խորհուրդք ոչ։ Կամ ասէ. զայս ամենայն արարեր և առնես այնպիսի խորհրդովք և համայնպիսի իմաստութի՛ւ՝ որ ամենևին անհասանելի են ի մի՛նչ. զի են յոյժ խոր։ Այլ թէ յիրաւի անհասանելի խորհրդով և իմաստութի՛ւ արար և առնէ, հայեաց յերկինս՝ ի վեր և յերկիր՝ ի խոնարհ. հայեաց՝ ի գիրս աստեղաց և՝ ի կարգ ստորայնոցս, ՝ի փոփոխութի՛ն և՝ ի կապակցութի՛ս նոցա. ՝ի հայելդ խոստովան լինիցիս յայն՝ թէ խոր են խորհուրդքն այ՝ ի սոսա։ Հայեաց և՝ ի հանգամանս յետին ստեղծուածոյ, զբօրբլնակ՝ ի հանգամանս անարդ որդան միոյ. սե՛ս զիարդ չարժէ, զիարդ վարի, զիարդ յետ ամենայնի՝ ի թիթեռն գեղեցիկ կերպարանի, զիարդ թագանի, զիարդ արկանի, զսերմն իւր, զիարդ այլափոխի, և՛ն, թո՛ղ զկենդանական նեղքին գործոցդ։ Օ՛ սոսա եթէ բաւեսք քննելով խնդալ կամիցիս, և գիտել, թէ որո՛վ խորհրդով այսպէս արարեալ է և առնէ ամ՝ աղպակեսցես ընդ մարգաբէին. անհաս են գործք իմաստութի՛ն քո, և յոյժ խոր են խորհուրդք քո։

Օ՛ այս ասացաք հայելով յարարածս այ ըստ նմանութեան նոցին, ըստ որում բաւիւս գործք այ՝ նշանակին արարածք. իսկ եթէ հայեացուք ՝ի գործս նախնամութե՛ն այ՝ որք կարեն նշանակիլ ասա բանիս գործք, առաւել և՛ս զարմանալի տեսանելեաւք զայնս. և՝ ի քննելն՝ թէ որո՛վ խորհրդով լինին՝ անհաս խոստովանիմք. զբօրբլնակ եթէ կամիցիմք քննել՝ թէ որո՛վ խորհրդով այս թագաւորութի՛ն բարձրանայ, և այն նուաստանայ, այս աշխարհ պայծառանայ, և այն ամայանայ, կամ թէ որո՛վ խորհրդով ոմանք՝ ի ծնանելն մեռանին, և ոմանք՝ ի ծերանալն. որո՛վ խորհրդով ոմանք տկարամիտ լինին և ոմանք

որասիցե. որով խորհրդով ոմանք առեալ լինին ՚ի վեր, և ոմանք թողեալ լինին ՚ի վայր. որով խորհրդով ոմանց թոյլ տուեալ լինի մոլորեցուցանել զայլս՝ մանաւանդ թէ զաղգս, և ոմանց ազգի ուղղել զնոսին. այս ամենայն և այլ ևս անհամար գործք նախանձուն՝ են՝ յիւրեանս են մեծ չոյժ, և խորհուրդք նոցին ծածկեալ կան յանհասկնալի խիստ տեղեան նոցա։

Պատկերհանք ՚ի ձեռն ընդհայեցողական արհեստի նկարին ՚ի վերայ բոլորածին տախտակի զայնպիսի նկարս՝ զոր անդէնք ոչ ըմբռնեն. զի արտաքոյ ձեռնասնի իւրեանց տեսանէն ուրեք սեաւ և ուրեք դեղին. ուրեք կարմիր և ուրեք կանաչ. ուրեք կապոյտ և ուրեք սպիտակ, ամենևին անհամաձայն հասողութեամբ մտաց իւրեանց. իսկ յորժամ նկարօղն դնէ ՚ի միջի՝ բոլորչի գլանաձև պողպատ մաքրափայլ՝ ՚ի պտղպատի անդ յատակ տեսանի պատկեր մարդոյ կամ այլոց իրիք աքանչելի։ Այնպէս և նախախնամութեանն՝ նկարէ յաչխարհի զայնպիսի իրս և զազգի ազգի գործողութիւնս որ ամենևին անհաս տեսանի մեզ, մանաւանդ թէ անհամաձայն ձևոնասնման մերում. և սակայն եթէ հայեսցուք յամենալոյս գաղափար մըտացն՝ զոքանչելիս նորա ըմբռնեմք. այլ այս տեսութիւն պահի ՚ի հանդերձեալն։ Զայս իսկ այլ արգաւ հայեցեալ ՚ի գործս նախախնամութեանն՝ և գիտացեալ զանհաս լինել նոցին յիւրեանս՝ աքանչացայ, միանգամայն և ուրախանայ յաւարիչ նոցին։ Վարձեալ հայելով և ՚ի գործ մեծի փրկութեան՝ որ նկարեցաւ ՚ի ձեռն խորհրդոյ մարդեղութեան՝ բազում առաւելութիւք ցնծայ, և գոհանայ. իսկ այլ անզգամ ընդ հակառակն բերի. վասն որոյ յարի զինի

մարգարէն և ասէ։

Ջ. Այր անդիմ զայս ոչ ծանիցէ. և անդիման զայս ոչ առնո ՚ի գիս։

Յառաջ անզգամ՝ նշանակէ յորերգին. մի՝ զի և իցէ մարդ չար. երկրորդ՝ զմանպատառ ամբարշտաբանն. որ երբ պատ (որ է պիտառ կամ առարկ և անամբեն). երբորդ՝ զայն՝ որ կարի զգալ և ոչ զգայ, որ և այ-

լով անուամբ յիմարը կոչէ . չորքորդ՝ զայն որ կամ-
ւորապէս ոչ զգայ , կամ որ ոչ կամի զգալ և գիտել .
և ոչ կամելովն՝ կամաւորապէս մեայ ի տգիտութեն .
որոյ զհետ գայ արհամարհել զաւրինն և ախորժել լը-
ւարն : Հայոց միտ դնի աստ բառդ անզգամ. այնպէս
և բառդ անմիտ , փոխանակ այնր՝ որ ոչ կամի առ-
նուլ ի միտ . զի որ անզգամն է՝ անմիտ է . ուսօր
ասէ կիրակոս վարդապետ . (ի մեկն . Տարեւր՝ եւս-
գրի . ՟ք . 8 .) * Տգիտիք ըմբռնեալք ի լարիւ՝ ի մը-
,, տաց եւս անկանին ‖ . Ի սոսին Հայելով ասէ .

Լաւ անգիտ զայս ոչ ծանիցէ . և անիկն զայս ոչ առնու ի
գիտ : Կամի ասել . արդարև մեծ են գործքն այ , և
խորին խորհուրդք նորա , բայց զայս ոչ ձանաչէ ան-
զգամն . զի կամովին մերժեալ է յիւրմէ զգիտութէն
այ . սոյնպէս է և անմիտն : Նմ պատճառն է՝ զի ան-
զգամք որպէս և անմիտք ոչ զայլ ինչ խորհին յաւա-
րածս այ , բայց եթէ զնաձոյս անձանց իւրեանց ,
դնէ չտուեթէն , զփափկութէն , ըն , որ ի կարգէ , հան-
գոյն անբանից : Այնպէս Հայեցեալ և ի կատարա-
րութէն տիեզերիս , և սեսեալ զայլևայլ ինչ Հակա-
ռակ ձանաչման և Հաձոյից իւրեանց՝ ոչ ի միտ առ-
նուն , թէ այս է յանբնութէն խորհրդոցն այ . վասն ո-
րոյ և սկսանին զանտեղիս խորհիլ . մանաւանդ թէ
տրտնջել . զի ոչ Հային ի վախձանն . այլ ի նեղկայն
եթէ , և ի նոսին կամին զուարձանալ , և ի նոսա
ցանկան վայելել զայն՝ զոր ախորժելի ցուցանէ զգ-
գայութէն իւրեանց ;

Այս բան Հայի և յանզգամութէն սատանայի և յանմի-
տութէն ժողովոյն Հրէից , զոր ցուցին ընդդէմ ձեռն մե-
րոյ . յորում յիմարեցաւ սատանայ . զի ըն որում գրի
իգնատիոս վարդապետ . (ի մեկն . զուկ . ժԸ . 9 .)
* անմիան (սատանայ) զայս ի միտ ոչ էառ , թէ
,, զիարդ էջ խոնարհութէն և ըն մեզ ած եղև մարդ
,, կապէս , և սատցաւ զմեզ՝ նորոգել վերստին ‖ .
Սոյնպէս և մեզաւորք առ Հասարակ ոչ առնուն ի
միտ՝ զորս արար ած վասն նոցա . այլ անզգամութէ-
թիկունս դարձուցեալ՝ ոչ Հաւատոյ անսան , և ոչ
բանի ուշ դնեն , և անմտութէն վարեալ առ ժամա-
նակ մի ըն Հաձոյան մտուին առանց ժամանակի ի կո-

բուստ. և զայս յայտ առնէ մարգարէն ի յաջորդ
համարոդ՝ ասելով՝

Ճ. Ի բառանալ ձեռաւորաց զրկես նոա. ի ծաղիկ այն-
պէս՝ որ է՛րծէն ընձօղեալն։

Ը. Սահմանեցին յաւիտեան յաւիտենից. և զոա քաջալերել
ես յաւիտեան հեր։

Այս բանք և յաջորդք սոքա Հայկին լսոյս, զորս ա-
սաց ի սաղ. (ղԲ. 1 . և 20.) այսինքն է * մի
,, նախանձիր ընդ չարս և մի ըլ այնսոսիկ որք գործեն
,, զանօրէնութիւն. զի որպէս զխոտ վաղվաղակի ցա-
,, մաքեսցին ։ որպէս զդալարի խոտոյ վաղվաղակի
,, անցցեն ... Այլ ձեռաւորք կորիցեն. այլ թշնա-
,, միք նո՛ւ ի փառաւորել և ի բարձրանալ իբրեւ զ՝
,, պահասեսցին ։ Այս այսմ խօսի և ասա մարգա-
բէն, ի մէջ բերելով նախ զանէլ և զդաստիարակ մա-
նկաւարաց, և ապա զփառաւորիլ նմ և զմեծանալ նո-
ցին, և հուսկ յետոյ զկորուստ նոցա. և նախ վասն
անէլին և բառնալոյն ասէ՝

Ի բառանալ ձեռաւորաց զրկես նոա։ Կամի ասել. մի
զարմանար՝ թէ մեռաւորք փութով բառանին, և
որդւոց յորդիս աձէն և բազմանան. զի այն անհնա-
նոցա է հանգոյն խոտոյ, որ թէպէտ և փութով ա-
ձէ և յաճախէ, բայց փութով և չորանայ, և ոտնա-
կոխ լինի. և կամ յայրուածն մանրի, կամ յաղբևս
անկանի. սէս զայսմանէ՝ ի նախահարգեալ տեղիդ,
Լեսոյ ապա և վէ փառաւորեալ լինելոյ և մեծանա-
լոյ մեռաւորաց և ասէ՝

Ի ծաղիկ այնպէս՝ որ է՛րծէն ընձօղեա՛նի։ Կամի ասել.
մի նախանձիր և մի զարմանար ի սեռսոնեից՝ թէ
զիարդ որք զանօրէնութիւն գործեն, փոխանակ ա-
ռաքինութեան ծաղկին, այսինքն փառաց և մեծու-
թեան զարդարին. այլ Հայեաց ի կատարած նոցա։ Հայ-
եաց և յարդարս՝ թէ զիարդ ծաղկին, և զնշխարս
ծաղկիս առաքինութեանց երևեցուցանեն, և արդեւս
զախտս իբրեւանց փութան ի բաց հատանել. որով և
բերկրեալ ի սիրտս իբրեանց ասէ. * ծաղիկք ե-
,, բևեցան յերկիրն մերում. ժամանակ հատանելոյ ե-

,, հաս ։ (երդ . ի . 12 .) այս ծաղիկք են սկզբնաւորութիք յաւարքինութիւն . ըստ որում ծաղիկն օրինակ է սկզբնաւորութե . որով և այս բան երգոց երգոյն առաջի դնի՝ ի բերանոյ արդարոց այսպէս . սկզբնաւորութիք առաքինութեց երևեցան ՝ ի հոգիս մեր . և հաս և ժամանակ հատանելոյ զաւր յաժամանս ։ Իսկ ծաղկիլ ամպարշտաց ոչ է սկսանիլ յառաքինութիւնս , այլ ծիլել ՝ ի մոլութիւնս , և շաղախիլ յաղբևս անտից , մինչև հասցէ ժամ հատանելոյ նոցա ՝ ի կենաց և մատնելոյ ՝ ի դժոխս . զոր և յայտ առնէ մարգարէն յօրդոր բանիւն՝ ասելով ։

Աստիճանս յարեկեալս յարեկէնէ ևն ։ Աստակիլ ասի զնոցանէ՝ որք ՝ ի մեռանիլն կամ չքանան՝ որպէս անբանք , և կամ ՝ ի թշուառ վիճակ փոխադրին՝ որպէս ամպարիշտք . և զի զամպարշտաց է աստ բանն , վը

այսորիկ սատակիլ դնէ , ասելով ։

Աստիճանսն ևն ։ Յայնքան ՝ ի մեռանիլ ամպարշտաց՝ թշուառացեալ յարիութենս յարիտենից ։ Յայս յարիտենականութիւն հայէ կամ յերզն սատակման , և կամ ՝ ի նոյն իսկ սատակումն . յերզն սատակման հայելով ցուցանէ զմնայուքիե տևողութե . ըստ որոյ կամի ասել . սատակեացին մեղաւորք և իջցեն ՝ ի դժոխս , և մնասցեն անդ յարիտեանս յարիտենից ։ Իսկ ՝ ի սատակումն հայելով ցուցանէ զմնայութե սատակման . ըստ որոյ կամի ասել . միշտ մեռցին մեղաւորք յարիտենական մահուամբ . որ է ասել . այն սատակումն մեղաւորաց միշտ սպանցէ զնոսա՝ պահելով կենդանի ՝ ի սատակման անդ . և այս այն է զոր այլուր ասաց .

* մահ հովուեսցէ զնո ։ (սաղ . խը . 13)

Յայս սպառնալիք սարսափելի հնչէ յականջս ամբարշտաց . վը որոյ բազումք ՝ ի նոցանէ չհանդուրժեալ ընդ այս՝ համարձակեցան ուրանալ՝ թէ կայցէ յաւիտենական պատուհաս , կամ յաւիտենական տանջանք , բայց խաբեցան . զի որովհետև պատժոյն է յաւիտենական՝ հետևի պատժել յաւիտեան . վասն զի ՝ ի գտանել նորա զոր իւր թշնամի յետ մնուհ , յայտ է թէ ոչ ընդունի զնա , այլ մերժե յիւրմէ . և զի մերժեալն այն ոչ ևս կարէ դառնալ առ նա՝ նայ միշտ ՝ ի մերժման ցորչափ կայ ածի յինքեան . և զի

ձեռ յաւիտեան կայ, մերժեալն ևս յաւիտեան մերժեալ մնայ ի նմանէ, և մնասի յայն՝ ուր արժան էր մանալ։ Ուստի և մարգարէն կանխելով ցուցանէ, թէ յաւիտենից յաւիտենից մերժեալ մնալոց են նոքա, ի մէջ բերել զայ յաւիտենականութիւնն այ բազդատութեամբ անցաւորութեան ամբարշտաց յաւերն։ Այս դու բաբշրեալ ես յաւիտեան։ Այս քան հայի նախ ի նախընթաց հատուած այսր համարոյ. երկրորդ հայի ի համարն 7։ Չայելով ի նախընթաց հատուածն (որպէս ասացաք) ցուցանէ զհաստատութիւն յաւիտենական կորստեան ամբարշտաց. որպէս թէ ասէր. ամբարիշտք բարձրանալով առ ժամանակ մի՝ ոչնչ երկեան ի քէն, և ոչինչ համարեցան ըզքեզ. բայց դու բարձրեալ և յաղթօղ ցուցցիս նոցա յաւիտեան և յաւիտենից յաւիտենից։ Իսկ հայելով ի համարն 7. ի մէջ բերէ զբազդատութիւնն տեառն ամբարշտաց, որպէս թէ ասէր. ամբարիշտք առ ժամանակ մի իբրև զխոտ բարձրանան, և յաւիտեան նանրանան. իսկ դու՝ որ յաւիտենից բարձրեալ ես և փառաւորեալ։ Այս առ ի ցուցանել, թէ փութով լինելոց է այն կորուստ ամբարշտաց՝ յորմէ զկնի և ասէ։

Ի. Օ ի ահա թշնամիք քո կորիցեն. ի ահա թշնամիք քո կորիցեն. ցրուեսցին ամենեքեան՝ որ գործեն զանօրէնութիւն։

Օ ամբարիշտն և կամ զանիրաւսհասեալս կոչէ Թշնամի՝ ոչ՝ ըստ որում ասէ առաքեալն յակոբոս. (դ. 4.) * սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Աստուած. ,, ոք որ կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի առնի ,, զանձն իւր ոչ ‖. ապա որ առաւելուլով ի նմին ամբարշտանայ, և առաւել լինի թշնամի ոչ։ Այլ ըստ բովհետև ոչ յարելով յայն՝ որ արար զնոսա, այլ յայն՝ որ արարած ման նոցա, անարգելոցն զնա, մի ոքոյ և ունիցն անարգել ի նմանէ և կորնչիլ. սմին իրի ասէ։

Օ ի ահա թշնամիք քո կորիցեն։ Այս բառդ ահա՝ ի մէջ բերէ զխութանակի կորնչիլ թշնամեացն ոչ. իսկ կրկնումն բանին ցուցանէ զհաս-

տատուածին կորնչելոյն, եւ և զառաւել տանչի լինել նմ. որպէս թէ ասէր. Թէ նախ քո՝ որք տանչի են քեզ, վաղվաղակի և անտարակոյս կորիցեն. իսկ թէ զիարդ իցէ լինելոց կորուստ նմ, յայտ առնէ ստելով.

Յիսուսեան ախներին՝ այլ գործեն պանծալուն։ Ի ցերուել և ի ցնդել մարդոյ բարկութիւք զիրս՝ այնու ի մանաւանդ զատելոյն նմ առ ցրուեալսն. և զցրուեալսն տեսանել մի գնալ յանարգութիւն, և կամ անկանիլ ի ձեռս չարչատղաց։ Ի չարսն պատահելով և թէ նախատեցան նմ. զի տանչի գալով նոցա՝ ցրուելոց են բարկութիւք նորա, և անկանելոց են ի ձեռս դիւաց յանարգութիւն յաւիտենական։ Ի չարէ լալ ի չամարն 7. այս ցրուումն չայտ առնէ և զանպիտան լինելն ամբարշտաց. յոր միտ կամի ասել. ամբարիշտք որք երբէք խոտ բուսանին. ի մեռանիլն՝ երբէք զորք խոտ ցրուեսցին ի հողմոյ բարկութիւն նմ, և ոչ եւս երեւեսցին։

Ի ամբ" մեղաւորքդ խմանայ զմեղանչական խորհուրդս, զորս սերմանէ սատանայ ի միտս արդարոց. և ի բուսանիլ նմ՝ եթէ արդարն սրբեսցի զիմիջ մտաց, և չաշակերտի ի մարմնոյ և չարենէն քոյ՝ սատանիկն նոքա և կորչին։ Ի չէ այս մեկնութիւն է, ըստ չարմանբուսիճ միայն. և ոչ ըստ խորհրդոյն. և ոչ եւս ըստ նկատ բազբին՝ որ ուղղակի չայի ի վինակ մեղաւորաց. զորոց զիշատութիւնն եդեալ մարգարէին առաջի, ի մի մատուցանէ այժմ զերեչկին այնը՝ այս ինքն զերջանիկ վինակ արդարոց՝ յանձն իւր առակելով, չայտնէ.

Ժ. Բ ոյէ եղիցէ որպէս գերեզիքոյ եղէնք իմ. և ծնբունք իմ ի չեն զարթոնքն։

Կիսանք մարդկան առ հասարակ եգեալ կայ ի կշռաչխատութիւն և հանգստեան. զի երբեմն աչխատին, և երբեմն հանգչին. աչխատին առ ի հանգիստ գործանել. և հանգիստ տուեալ լինի նոցա չայ առ ի աչխատիլ։ Ի չխատութիւն նոցա չերկուս տեսանի. մի՝ ի գործել զոյն՝ զոր բարի համարին, թէկն չիրում չեղէ բարի՝ այլ չար. և երկրորդ ի խափանել զոյն՝

Ի

զոր չար համարին՝ թեև իրօք չիցէ չար՝ այլ բարի. ըմդ չարին իմն և զնեղութիւնս յո՛ և իցէ կարգի, Հանգիստ նոցա եւս յերկուս առաքեալսն. մի՛ բացասաբար ի գադարման, այսինքն յոչ աշխատիլն յեմիք, կամ յոչ կրելն ինչ նեղութիւն. երկրորդ՝ դրական նպատակս ի ժառանգութի՛ն իրիք, այսինքն ի վայելելն

բերկրութի՛ զարին.

Արդ այս աշխատութիւն և այս հանգիստ՝ որ հասուցանեմք է իւրաքանչիւր ըստ իւրում կարգի և վիճակի, յարգաբար գեղեցիկ իմն կարգաւ յաջողի՝ ոչ միայն ըստ հանապազորդեան ընթացից կենաց նոցա, այլև ըստ վիճակի հասակաց նոցին, այսինքն ե՛ մանկութե՛ և ե՛ ծերութե՛, զոր նմանաբանութի՛ իմն առաջի նկարէ մարգարէն ասա՛, և՝ նախ Հայելով ի կարգ աշխատութե՛ն ի մէջ բերէ զարձրանալ զօրութե՛ն յաշխատիլ. և ապա Հայելով ի կարգ հանգստեան ի մէջ բերէ զանդորրութի՛ն կենաց ի ձէթ պարարտութե՛ ի հանգչիլ։ Այսա առաջնոյն այսինքն ըստ կարգի աշխատութեանն օրինակաւ իմն խօսի և ասէ.

Աւուրբ եղիցի օրհնեա՛ գեղջուկ եղէ՛ն եմ։ Օ զօրութիւն մարդոյ՝ որ տուեալ է նմա յաշխատիլ, կամ զանձինս խանգարական կարողութիւն նորա նմանեցուցանէ մարգարէն եղջեր, որ ի կենդանիս է գործի վանելոյ քան գործելոյ. և քանզի մարդս ի գործելն ինչ՝ վանելով զարգելոն աշխատի. վասն որոյ և զօրութի՛ն նորա եղ ջիւր կոչի։ Այս իմ եղ ջիւր ասէ ի գործելս զարին և ի վանելս զչարն՝ բարձրացի՛ զօրութի՛ն այ. որ է ասել. զօրացի՛ և հաստատեցի՛, աճեցի՛ ի բարձրութի՛ն և փառաւորեցի՛, և յինէն ո՛չ զեղ ջիւր այլոր կենդանեաց՝ որ կոչի մեղջերու։ Օ այս բերէ ի նմանութի՛ն, զի եղ ջիւր այսր կենդանեայ մի միայն գոլով ի ձախան՝ զօրաւորագոյն է քան զեղ ջիւրս այլոց կենդանեաց, սրածայր բարձրացեալ, և ի դեղորայս օգտակար ի զովացուցանել զտապ նեբջին, և ի թափել զոյն։ Արդ յերկուսին արդարոյ զօրութի՛ն յայ՝ մանաւանդ զպատասխանորհայ նո՛ր՝ զօրութի՛ն հոգւոյ նորին յայսպիսի իմն որակութի՛ն հաստատի, և երբեմն ի կարևոր ա-

տոյս՝ նաև մարմնաւոր զօրութիւնն ի նոյն կազդուրի. օրպիսի եղև ի դաւիթ՝ ի գործել նմ զմեծամեծս, և ի վանել զդժուարինս. բստ օրում տեսանի ի գիրս ։ա. և ։բ. թագաւորութեանց. Այլ զի միեզջերուն ի վեր հայելով ընթանայ, յայս սակս վանական վարդապետ (՝ի մեկն. յոբ. դլ. լ՚.) ասէ. * միեղջերու է մարդ ոք՝ որ միայն առ ՚ած հայի, և ,, զնա առնէ փրկութիւն պատճառ. և զօրութիւն նմ ,, հարկանէ զսատանայ. զի օձահալած է կենդանին ։ մեք զօրս ասացաք ՚ի սաղ. ի՚ը. ճ. Հայելով սակս մարդարէին և ՚ի կարգ հանգստեան արդար մարդոյ՝ փոխաբերութիւն խօսի և առէ.

Այ- ծեր-ուկ էմ ՚ի յերկ պաբաբ-ուկ, Այնքանացք կենաց արդարոյ ՚ի մանկութենէ մինչև ՚ի ծերութիւն, հաստատութեամբ միտ աւուր. և զորօրինակ յիւրաքանչիւր աւուր յետ աշխատութեան հեռանի հանդիստ, այնպէս և յայսմ մեծի աւուր՝ յորում է բովանդակ կեանք արդարոյ, յետ աշխատութեան հեռանի հանգիստ. իբրև զի յետ աշխատելոյ ՚ի հաստատի մանկութենէ և յերկար տառապութեան ՚ի նուաստ դասուս բստ միեղջերուի, և ՚ի ստանալ զառաքինութիւնս, ՚ի ժամանակին ՚ի հասակ ծերութեան և ՚ի լաւ կատարելութեան՝ գտանի հանգիստ անդորրութեան. որով իբրև թէ պարտ ձիով օձանի ծերութեան նորա. վասն որոյ ասէ՝ ՚ի ձիէ պարարտութեան.

Օ այս գնէ հայելով ՚ի սովորութեան արևելեան ազգաց, այսինքն պաղեստինացւոց, արաբացւոց, հնդկաց ։ը. որք օձանիւն իւղով՝ Այրդ զրօրինակ յօձանիլ նոցա մարմինք նոցին փափկանային, և ՚ի խըստութենէ հանգիստ առնուին. Այնպէս և արդարն յետ բազում աշխատութեանց ՚ի ժամանակին ՚ի հասակ ծերութեան, կամ ՚ի լաւ կատարելութեան՝ փափկանայ ՚ի հոգին, և հանգստանայ ձիով պարարտութեան՝ այսինքն պարարտ առաքինութեաբ, և մանաւանդ առաւելութեամբ չնորհաց հոգւոյն սրբոյ, ևս և առաւելութեամբ ՚ածային գիտութենէ.

Այս բան կարէ մեկնել և ՚ի դիմաց ազգին իսրայէլի, ևս և ՚ի դիմաց իւրաքանչիւր ազգի կամ թագաւորութեան, և առաւել ևս ՚ի դիմաց եկեղեցւոյ. և

ըստ այսմ կամի ասել. տացի ինձ զօրութիւն, և բարձ-
րասցի այն իբրև եղջիւր միեղջերուի. որով և լինիմ
ցի ինձ ճեալ յամենայն կեանս իմ մինչև ի ծերու-
թիւն ի ձէթ պաթարտութեամբ այնինքն ի հանգստեան։
Կամ այսպէս. յաչխատիլս իմ՝ յաջողեսցի զօրութիւն
իմ ի գործել և ի վաստակել և ի հասանելս ի ծե-
րութիւն, կամ ի լրումն աշխատութեան՝ լիցի ինձ հան-
գիստ։

Խորհրդաբար, միեղջերուաւ նշանակի աստ քրիստոս. որ-
պէս ասէն զոր Տարբք, ընդ որս և դաւիթ անյաղթ և
վանական վարդապետ (ի մեկն. յոբ. գլ. լե.) Այս
ըստ այսմ եղջերաւ իմացեալ լինի զօրութիւն նորա.
որով եհար զօձն առաջին. զի որպէս ասացաք օձաս-
պան է միեղջերուն։

Այս դարձեալ՝ եղջիւր միեղջերուի ըստ գրելոյ մեր
այժմ դեղեցիկ է ընդդէմ թունից, և առողջարար.
սոյնպէս և զօրութիւն քան իբր դեղեցիկ հատանի
զչարութիւն թունից մեզաց և ախտից. և առողջացու-
ցանէ լով զհիւանդութիւն հոգւոց մերոց՝ պատապարե-
ցուցանէ զմեզ ի կատաբելութիւն և յիմաստութիւն հո-
գևոր, որք օրինակին ի ծերութիւն. զոր և պարար-
ատացուցանէ իւղով խորհրդոց իւրոց։

Ոչ անկիր ևս, զի աբրածք՝ որք ի կողմանէ իւրեանց
բարի են, ի կողմանէ անզգամութեան մարդկան դառ-
նան ի մեսանել. որպէս յիշեցաք ի համարս. 4։ Ո այս
մեսակարութիւն արարածոց որպէս զնունաւորութիւն
թափեաց ի մէնջ տէրն մեր վարդապետութիւք իւրով
իբր եղջերաւ. ուստի որք արդարքն են՝ անմեսս կեան
ի նոսա։ Վրէ և վանահան վարդապետ ի մեկն.
յոբ. գլ. լե. առեալ ի դաւիթ անյաղթ և յայ-
լոց, զայսպիսի ինչ * ծովակ (մի) է յաչխարհն փղոշ-
,, տացուց, յորմէ ըմպեն ամենայն թունաւորք գա-
,, զանք և սազունք վայրացն. յոր ոչ իշխեն մօտիլ
,, թունաւունք և չորքոտանիք, մինչ գայ միեղջերուն և
,, բժշկեալ եղջերաւ զջուրն, նախ ինքն ըմպէ, և
,, ապա թունաւունք և չորքոտանիք։ Այս ամին ի սրբ-
բել ոճն մերոյ զջուրս ծովու աշխարհիս, այսինքն զի
և իցէ բարեաւութիւնս կենցաղոյս, որք և բարեմիտք
վայելեն յայնս ուրախութիւք։

Լաւժան է ասա յիշել և զայն, որ ասի, Թէ միեղջերուն ի դիմիլն բարկութիւն ի վերայ այլոց՝ եթէ պատահեսցի կուսի՝ զիջանի ի բարկութիւն. և փոխանակ զնա հարկանելոյ՝ հարկանի զինեամի նորին։ Այլն պէս ի դիմիլ որդւոյն ոչ բարկութիւն ի վերայ մարդկան, տեսեալ զնկեցեալ իւր՝ զոր հաստելոց էր իջուել զկոյս մի՝ զիջաւ ի բարկութիւն, և բարձրացեալ եղջերուն եհար զինեամի նորա զատամնայ. և ի կատարել այսր՝ զներուելն հին օրինացն փոխեաց ի նորոգութիւն, և զնիհարութիւն նորա ի պարարտութիւն

ՀՈՐԱՅՑ,

Լամբրոնացին և միեղջերաւ իմանալով զքո գրեալսդ։ քո որպէս միեղջերու * միով անմատչելի
,, զօրութեն յաղթեաց բազմապատիկ հնարից հա-
,, կառակամարտին։ Ոչ իմ եղջիւր. իբր զնորայն
,, բարձրացաւ. ասիցե ոք. այնպէս՝ ըստ պօղո-
,, սի ցրեաց. հայն զոր բեկանեմք հաղորդութի և մարմ-
,, նոյն քոյ, զի մի հաց մի մարմին եմք բազումքս.
,, մեք քոյ, և քո մեր։ Լրդ զայս ասէ, Թէ ոչ միայն
,, արիւնն քոյ յրմնկէն իմ զնա զինեամին կօրուաս-
,, նե և սատակէ, այլ և զիս ընդ ինքեան խառնէ,
,, և իւրով զօրութեն ես զօրանամ. զպէս ասաց քո
,, քաղաքեցարարութ, զի ես յաղթեցի աշխարհի. այս-
,, ինքն իմ զօրութիւն դուք քաղեցայք, և իմ մարմ-
,, նոյս անմեղութեն դուք կոխեցիք զինեամին ։

Ոսկ ծերութիւն իմանալ զկատարելութիւն արդարոյն. և ասէ ի դիմաց մարգարէին այսպէս. * Լրդ իմ
,, առաքինութիւնս կատարելութիւն ասէ. և խորհեցա
,, զհան մնացս իմաստուն հոգւոյ՝ քո ընդ ծեր կեա-
,, սըբելոյն ի մեզոց արեամբդ և բարձրանալ զօրու-
,, թիդ օրպէս ձիթով պարարի ։

Հարմարական մեկնութիւն այս բան հայի ի բարի կատարած ծերոց. յորում պարարտութիւն նոցա այսինքն առաքինական կեանք նոցա բարի մահուամբ օծանի, այսինքն Թէ պատիւ և հանդէս։ Լայց վայելուչ և յարմար այս ի փոխումն յովհաննու աւետարանչին. որ զօրացեալ զօրութիւն քոյ եհաս մինչև ի ձիթ ամ. և ծերութիւն նորա պարարտացաւ ի ննջման. զի յաւելոյ հոգւոյն մնաց անապական. և յետ երից ա-

ւուրց փոխեցաւ մարմին նորա յատեանս, և իշխով
երանելեաւքն պարտուցաւ առ ի լուսին բանից Տեն։
Ո այսմանէ խոսելով ծործորելոյն (՝ի մեկն. մատ.
Ժ. 3.) զրե այսպէս. « յովհաննէս (առեւտրա-
,, նիւ)... յետ ննջման կուսին գնաց յերուսա... և
,, լեալ Ձ՚ի ամաց ննջեաց (անդ)... և յետ երից
,, աւուրց փոխեցաւ ՚ի տեղի հրաւիրեալ բան Տեն, (թէ
,, ես կամիմ՝ զի կացցէ դա (անաւետեան մարմնով)
,, մինչև ես գամ»։ Ո այսոսիկ եդեալ՝ հայեցուք
այժմ ՚ի պաշտպանել արդարոյն յերեսաց Թշնամեացն
և ՚ի մեռանել նոցին. զոր իբր այօք աւետանելով մար-
գարէին՝ ասէ.

ԺԱ. Ա՚պես աչն իմ ՚ի ՚ի ընդեմս իմ. այլ յաղթողեալ են ՚ի
վերայ իմ յարուցէ. ՚ի նոսա լուեցէ ոսին իմ։
Ի՚նչպէս կամ ՚ի մեռանելս քոնման միասեալ արդա-
րոյն, և կամ ՚ի հեռուստ։ Ա՚չ սակայն եթէ ած
կացցէ պաշտպան արդարոյ, ՚ի կամիլ նոցա ՚ի մա-
ուստ միասել՝ արդարն ևս ՚ի մեռանելոյ աւետանի ՚ի
նոսա զայն միաս՝ զոր նոքա կամին հասուցանել ին-
քեան. սոյնպէս և ՚ի կամիլ նոցա ՚ի հեռուստ միա-
սել՝ արդարն ևս ՚ի հեռուստ լսէ ՚ի նոսա կատարեալ
զայն միաս. վասն առաջնոյն ասէ.

Ա՚պես աչն իմ ՚ի ՚ի ընդեմս իմ։ Կամի ասել. Թշնամիք
իմ եդեալ եմն ՚ի մօր կորուսանել զիս, և ՚ի վերայ
կորստեան իմոյ ուրախանալ. և վասն այսորիկ հա-
սեն ՚ի վերայ իմ. և ՚ի ջանալ նոցա ՚ի գործ դնել
զոր կամն իւրեանց՝ ոչ միայն չկարացին առնել ինչ,
այլև չտարաւար միասեցան և կորեան. որպէս և ետես
՚ի նոսա ակն իմ զայս միաս նոցա։ Ի՚պաքէն ՚ի կա-
միլ զօրացն սատանայ ըմբռնել զեզեկիէլ ՚ի գալիացիմ,
և մեռանել Թագաւորին իսրեանց՝ եհաս ընտա տեր
չտուեԹէ. և եղիսկ տեսեալ զնոսա այնպէս՝ ասէ
ցնոսա. եկայք զկնի իմ. և էած զնոսա ՚ի սամարիա,
և կացոյց առաջի աբքային իսրայէլի. և ապա սբձա-
կեաց զնոսա (Գ. Թագ. Ի. 13—22.) Այնմ նման
բաղում ինչ պատմի յՀին պատմու-
Թիս, և ՚ի վարս Տեր. օրոյ յուցանի՝ Թէ կիսրդ ՚ի
կամիլն Թշնամեաց միասել արդարոյն՝ ինքեանք միա-

սին . մինչեւ արդարոյն իսկ տեսանել զայն աչօք . խօ-
սի ապա մարգարէն եւ վասն երկրորդին ասելով ։

ԵՒ ՈՅՔ ՅԱՐՈՒՑԵԱԼ ԷՆ 'Ի ՎԵՐԱՅ ԻՄ ՉԱՐՈՒԹԵ̃, 'Ի ՆՈՍԱ ԼՈՒԻ-
ՑԷ ԱՆՁՆ ԻՄ ։ Այսինքն 'ի պատրաստել թշնամեաց ի-
մոց դիմել 'ի վերայ իմ չարութ̃ , որպէս զի կորուս-
ցեն զիս՝ նախ քան զտեսանելս իմ զնոսա , լուիցէ
անձն իմ 'ի նոսա լեալ այն կորուստ . որ է ասել՝ 'ի
կամիլ նոցա կորուսանել զիս՝ ինքեանք կորիցեն . եւ
զայս կորուստ նոցա լուայց ես ։

Երկոքին այս բանք ցուցանեն եւ զանկասկածութիւն
սրտի արդարոյն , կամ զաներկեան մնալ նորա յեր-
կիւղէ թշնամեաց , մանաւանդ թէ ոչինչ գրել զըս-
պառնալիս նոցա եւ զյարձակմունս նոցին , մինչեւ հա-
մարձակ հայիլ 'ի նոսա աչօք , եւ աներկիւղ լսել զնո-
ցանէ ականջօք ։ Եւ թերեւս յայս միտ 'ի Թարգ՛՛
լատ . դնի արհամարհեաց ակն իմ զթշնամիս իմ . այլ
այս բառ վրիպակաւ գրչաց մտեալ է 'ի թարգմա-
նութիւն նոցա . իբր զի փոխանակ գրելոյ ՌԷՍՓԷՔՍԻԹ՝
այսինքն հայեցաւ , գրեալ են ԴԷՍՓԷՔՍԻԹ , այսինքն
արհամարհեաց . որպէս յայտ է յեբրայականէն եւ
յայլ ամենայն թարգմանութեանց ։ Բայց միտ բանին
'ի նոյն հայի , իբր զի արդարն յուսալով 'ի պաշտպա-
նութիւն այ՝ ոչինչ համարի զդաժանութիւն թշնամեաց
իւրոց ։ Այս բան հայի եւ 'ի հանդերձեալն . ուր ու-
նին տեսանել արդարք՝ զհատուցումն թշնամեաց իւ-
րեանց ։ Զայս եդեալ մարգարէին մատչի 'ի ստո-
րագրութիւն վիճակի արդարոց ազգի ազգի նմանաբա-
նութ̃ք , եւ ասէ ։

ԺԲ . ԱՐԴԱՐՆ ՈՐՊԷՍ ԱՐՄԱՒԵՆԻՍ ԾԱՂԿԵՍՑԷ . ՈՐՊԷՍ
ՄԱՅՐՆ ԼԻԲԱՆԱՆՈՒ ԲԱԶՄԱՍՑԻ ԵՂԻՑԻ ։

'Ի վերայ 'ի համարն 7 . զմեղաւորսն նմանեցոյց դի-
րաթառամ եւ փաղանցիկ խոտոյ . եւ վկայեաց՝ թէ 'ի
բուսանել եւ 'ի ծաղկել իւրեանց սատակեսցին եւ
ցրուեսցին . իսկ աստ ԺԲ հակառակն զարդարսն նմա-
նեցուցանէ մշտադալար եւ հաստատուն ծառոց , այս-
ինքն արմաւենեաց եւ մայրեաց , ասելով ։

ԱՐԴԱՐՆ ՈՐՊԷՍ ԱՐՄԱՒԵՆԻՍ ԾԱՂԿԵՍՑԷ ԵՒՆ ։ Բազում
ինչ կայ տեսանել յարմաւենին , յորս առաջին եւ ա-

ռանձին նշմարելին է ծաղկիլ նորա · զի ի փունջս փունջս ծաղկի , և յիւրաքանչիւր փունջս ողկուզս նայ պտղովք առատ յոյժ · Այնպէս և արդարք լուռ թիւ ծաղկին ի հաւատս և ի բարի խոհեմութիւն , և ըստ ծաղկելոյ առատապէս տան զպտուղս բարի գործոց · որով և համարին կատարեալ · զի * որ հաւատ ,, տայ և գործէ՝ կատարեալ է (ասէ ծործորեցին · ,, ի մատ · իւր ·) ապա թէ ոչ՝ երկրքեան մնասեալ ,, են և դատարկ ըստ առաքելոյն ։ և ինքն որպէս արմատնի չորացեալ · Վաթսներ արմատնին ի գա դաթան ծաղկի , այնպէս և արդարք ի գագաթն ա ռաքինութեց ·

Չերկրորդ նշմարելին է քաղցրութիւն պտղոյ արմա տնոյն · և այս նշանակէ զհամբոյ լինել գործոց արդարոյն առաջի նմա և մարդկան · նշանակէ և զղուարձալի խաղաղութիւն և զանդորրութիւնն զոյն , զոր իբրև առ հաւատչեայ երանութեան յաւիտենական կենաց վայելէլ արդարն յերկրի ·

Չերրորդ նշմարելին է այս , զի կորիզք կամ կուտք արմատնեացդ որք անպտուղ ինչ թուին , լռեալ և ի մանալս եդեալ՝ հոգեն զնէ վառելի · այնպէս և ի գործս արդարոց կան ինչ ինչ որք թէպէտ և անպիտան երևին , բայց ի ձմեռնի նոցին ի մանալս վչտաց՝ հոգեն զպարարտութիւն բարեաց , և վառեալ սիրոյն նմ՝ լոյս տան այլոց ·

Չորրորդ նշմարելին է այս , զի տերևք արմատնեացդ պիտանի են ի բաղում իրս՝ ի հիւսել զամբիւղս , և ի յանկանել զսփրիճս , և գայլ սոցին նման իրս · և և ոստք նորա են պիտանի ի կազմել զվանդակս , զմահիճս , և . և երբեմն ի վառել իբրև զդաւազան · այնպէս և արատքին գործք արդարոց՝ որք տերևոյ նմանին՝ կարգին ի հիւսել զարդիւնս իբրև զզամբիւղս ընդունօղս վաթսոց , և յանկանել զդիծս խոտ հարհուրեալ իբրև զսփրիճս՝ յորս դադարին վաստա կեալքն ի մեղս · և ոստք նոցա այնինքն խոստեղիք վարուց նոցա կազմին այլոց զբաժանելոյ իբրև զմահիճս՝ առ ի գտանել հանգիստ յաշխատութենէն ախտից · և կամ իբրև զդաւազանս առ ի զօրանալ ի գործս բարեաց · Այնին արմատնիք և զխուշս , և

ի Ծայրս տեսեալ զսրամբէն. որով ցուցանի Հարկաւոր նել արդարոց զմեզս և զանոս, և խոցել զսատանայ։ Հինգերորդ նշմարելին է մշտագալաբն լինել արմատենից. որով ցուցանի մշտագալաբձ կալ արդարոց յատաքինութիւն։

Վեցերորդ նշմարելին է բարձրանալ արմատենից ուղղորդ ի վեր ի ձև վայելուչ. որով ցուցանի անսոսեբիբ վերանալ արդարոց վարուք և մտօք յԾայնս. * ուր առաքինութիւն յերկինս է։ (փիլ. ի. 20։) Վասն զեղեցկութեն ձևոյ արմատենից ցուցանե զվայելչութեն հոգւոյ արդարոցն։

Յօթնեերորդ նշմարելին է այս՝ զի արմատենիք արձակեն յարմատոյ իւրեանց և զարուսնակս իբրև ըղձաձա, և նովքն անձն և բազմանան. այսպէս և արդարքը բերեն զաղգսմ հոգևոր որդիս, որք իբրև զնոսա անձն և ծագիկն. որպիսի եղեն առաքեալքն ըստ որում գրէ սուրբ գիրս ընօրհալի (ի մեկն. ա. յովհ. ա. 3. Հառ. ա. յորդ.)

Վասն այսր ամենայնի արմատենից նմանեցուցանէ մարգարէն զարդարան. և վասն պատուական երևեցուցանելոյ զնոսա՝ զծագիկն ևեթ ի մէջ բերէ ասելով. արդարքն որպէս զարմատենիս ծաղկեսցին։

Ասայ կայ և այս ինչ տեսանելի յարմատենին, զի փայտ բունոյ նորա չէ ինչ պիտանացու ի շինուածս և ի պատրաստման գործս. որով կարէ նշանակիլ տկարութեն մարմնոյ արդարոց. զի նիհարացեալ գոլով նոցա չեն պիտանացու ի մարմնաւոր գործս և յարտաքին աշխատութեն։ Վասն այն և այնպէս ըստ երկուց առատելոյն. մի՝ զի օրշափ տկար երևին, այնշափ երկարակաց լինին՝ վասն բարեխառն պահելոյ զինքեանս յաւելորդ իրաց և ազատ ի բռնութենէ սխտից. և մի ևս՝ զի օրշափ տկարացեալ ասին մարմնով, այնշափ հզօրացեալ և ճոխացեալ գտանին հոգւով. զոր և յայտ առնէ մարգարէն այսով ինն նմանութեամբ, ի մէջ բերելով և զաւգմատուրութեն նոցա յառելն։

Երեք մայրն լիբանանու բազում եղէին։ Ի մայրսն լիբանանու առաջին տեսանելին է բարձրութեն նոցա. որով նշանակի վեհմութեն վարուց արդարոցն։

Երկրորդն է ուղղութեն նոցա ի բարձրութեէ. որով նշանակի միշտ ի վեր ուղղեալ միալն արդարոց։ Երրորդն է հաստատութեէն նոցա. որով նշանակի անշարժութեէն առաքինութեէ արդարոց. զի թէ և յատուկն էօթեն անգամ անկցի՝ կանգնեսցի. (առակ. իդ. 16.) Չորրորդն է, զի բուն նոցա անօսա ի վեր ելանէ. որով նշանակի անզբաղութիւն կենաց արդարոց. զի կան յաշխարհի մարմնով իբրև քնով՝ ոչ ի զբաղել յոստս մարմնաւորաց, այլ միայն ի մտանել։ Հինգերորդն է վայելուչ տեսիլ նոցա. որով նշանակի պատուական կենցաղավարութեէն արդարոց, և գուարճալի տեսութեէն նոցա։ Վեցերորդն է ամրութեէն փայտի նոցա մանաւանդ անփտութեէն. որոյ վասն յաղթիւ չինուածս ի գործ ածին. ուստի և որմունք տաճարին փայտիւք մայրեաց պատեալ եղեն, և տախտակք խորանին և սիւնակքն և տապանակն իսկ անտի շինեցաւ. որով նշանակի աղնուութեէն և անփտութիւն գործոց արդարոցն. յորոց շինին ապաքինք ի քաղաքն վերին, ուր ոչնչին նոքա զէտեղել։ Եօթներորդն է պատուականութեէ իւղոյ նոցա, յորմէ եթէ օծանիլն ինչ, միայ անապական յամս բազումս ըստ աւանդելոյ բազմաց. որով նշանակի ներգործութեէն օծութեէ այսինքն քաղցրութեէ բանից արդարոցն և քարոզուեէ նոցա, կամ ազդուութեէ բարի օրինակ լինելոյ նոցա այլոց, առ ի միայոյ և նոցա անապական ի մեզաց։ Իններորդն է աշխուժն նոցա, զի ոչ առնուն զկայ ձեռս՝ այլ միշտ աճեն. որով նշանակի միշտ յառաջանալն արդարոց ի բարիս։ Տնեներորդն է տևողութեէն նոցա, զի ըստ ասանդելոյ բազմաց՝ քան զանհնացն ծառս երկար տևեն, և ոչ գիտեն ծերանալ. որով նշանակի անեղծանելի տևողութեէն արդարոց ըստ անուան որ ի վերայ երկրի, և ըստ փառաւորութեէ՝ որ ի յերկինս։

«Այս ամենայն Հայելով մեզդ արեւին՝ մայրիոյ նմանեցուցանէ զարդարսն, և վկայէ զազամանալոյ նոցա յատենին. * որպէս մայրին լիբանանու բազումք եղին ,, ցին ». Եւ այս բազում լինելս ըստ երկուց մտաց ծէ յարդաբան. մի՝ ըստ արդեանց, իբր թէ արդեամբք բազում եղիցին, որ է ասել, արդեամբք աճեսցին,

այսինքն բազում արդիւնս ունիցին , կամ բազում բարունակս գործոց բարեաց արձակեսցեն արժանիս բազում վարձուց ։ Այս մեկնութիւն բազմանալոյ առաւել համաձայն ելանէ բնագրին եբր". զի այն եբրայական բառ , որոյ փոխան 'ի մերումս դնի՝ բազումք եղիցին , ունի նաև զնշանակութիւն ուռճանալոյ կամ բարձրանալոյ . յոր միտ ոմանք բարձրանալ թարգմանեն ։

Երկրորդ միտծի ըստ անձանց , որ եթէ ըստ թուոյ առեալ լիցի , միտ բանին լինի այս . արդարք ոչ երբէք պակասեսցին , այլ միշտ բազմասցին . կամ որ նոյն է՝ արդարք ոչ են այնպէս սակաւք , որպէս կարծեն ամբարիշտք , այլ բազում են , և միշտ բազմանան , այսինքն միշտ ծնան բազում ։

Իսկ եթէ ըստ աճման միտծեսցի , այս բան տիրապէս հայի 'ի նորս եկեղեցի՝ ուր աճեն հաւատացեալք յազգս ամենայն 'ի սկզբանէ անտի . որպէս աւանդի 'ի գործս առաք . (բ . 41 .) յասելն * և յա-
,, ւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրև երեք հազար . . .
,, և տէր յաւելոյր 'ի փրկեալսն հանապազօր 'ի նոյն ‖.
և թէ . * և առաւել ևս յաւելուին հաւատացեալքն
,, 'ի տէր բազմութիւն արանց և կանանց (գլ . ե . 14 ։)
Այսմ աճման ասէ լինել 'ի լիբանան , որով նշանակի եկեղեցի աստուծոյ . յորում ոչ երբէք լինիցի պակասիլ արդարոց՝ մանաւանդ 'ի յաղթանակօղն , այսինքն յարքայութեան երկնից , ուր օրըստօրէ բազմանան հագիք արդարոց կատարելոց մինչև 'ի կատարած աշխարհի իբրև զմայրսն լիբանանու , բերկրեալք և զմայլեալք յաւիտեանս յաւիտենից ։

Բարսեղ 'ի մեկն . մարկ . (գլ . ժա .) այսու բանիւ օրինակ առեալ քրիստոսի զարմաւենին՝ գրէ այսպէս . * ար-
,, մաւենին բարձրութիւն օրինակ է քրիստոսի՝ որ է բարձր
,, և երկնաւոր . և ուղղութիւն՝ ուղիղ դատաստանին
,, քրիստոսի . իսկ քաղցրութիւն՝ զի քաղցր են ուսմունք
,, իւր . . . իսկ սրութիւն տերևոյն նշանակէ զյաղթու-
,, թիւն քրիստոսի , որ խոցեալ սպան զսատանայ սրով խա-
,, չին . յաղագս այսպիսի խորհրդոյ ընծայեցին և
,, արմաւենիս փրկչին՝ տեառն մերոյ յիսուսի քրիստոսի 'ի գալըս-
,, տեան նորա յերուսաղէմ ‖ . և յաւելու ասել . * ար-

,, դալարքն եղեն յարմատն . և լայնացան 'ի ծաղիկն ,
,, և 'ի պտուղն յառաջացան ։

Իսկ Լամբրոնացին գրէ աստ այսպէս . * Լիբանան 'ի
,, գրոց հակառակամարտ երուսաղէմի դնի , զի այնմ,
,, փշրեսցէ տէր զմայրսն Լիբանանու ։ Այսպէս և
,, կռոցն բագինք և ժողովարանք նոցին հակառակէր
,, երկնային երուսաղէմի . և բազումք՝ զորոյ բազ-
,, մութին ընկալեալ քն արդարացոյց և շինեաց նո-
,, քօք զեկեղեցի իւր իբր զմայրքն Լիբանանու , որք
,, հաստեալ շինեցին զզգալի տաճարն որ յերուսաղէմ.
,, և զի եղև այս , յառաքելոյ ուսիր , որ գրեաց
,, զամենայն միտս 'ի Լիբանանէ և ած յերուսաղէմ
,, 'ի հնազանդութի աւետարանին քնի , շինեալ նո-
,, քօք տաճար հոգևոր քահանայապետին քնի ։

Նարեկացին ('ի պատ . խաչին . 'ի բանն Դ.) զայս բան յարմարեցուցանէ գործոյ ստեփաննոսի եպիսկոպոսին , յասելն . * Իբրև զծառսն տն և զմայրսն Լի-
,, բանանու լերինն ծուրայ աստապէս պայծառա-
,, զարդեաց ։ Արդ եդեալ մարգարէին զծաղկիլ և զձոխանալ արդարոց՝ յաւելու խօսիլ զտնկելոյ նոցա և զտեղւոյն , և ասէ ։

ԺԳ. Տնկեալք եղիցին 'ի տան Տեառն . և 'ի գաւիթս այ մերոյ ծաղկեսցին ։

Մեղաւորք առանց տնկեալ լինելոյ իբրև զանպիտան խոտ բուսանին և չորանան . իսկ արդարք շնորհօքն այ տնկեալ լինին , և խնամեալ 'ի նմանէ՝ աճեն և ծաղկին ոչ 'ի վայրի՝ այլ 'ի տանն այ , և 'ի գաւիթս նորա . սմին իրի ասէ ։

Տնկեալք եղիցին 'ի տան Տեառն . և 'ի գաւիթս այ մերոյ ծաղկեսցին ։ Այս բան երրակի մեկնի . նախ ըստ փոխաբերական մտաց . և զի այսմ բառդ տան այ՝ հայի 'ի հաւատարիմ ծառայութիւն այ . իսկ բառդ գաւիթ այ՝ հայի 'ի ներքին ընտանութի նորա . յոր միտ կամի ասել . արդարքն 'ի ձեռն շնորհաց մերձենալով առ ած , և ծառայելով նմա՝ սովին այսու իբր թէ տընկեալ լինին 'ի տան նորա , և յառաւել ընտանենալն՝ ծաղկին պէսպէս գործովք բարեաց , որպէս թէ էին 'ի գաւիթս նորա . կամ որ նոյն է , արդարքն պաշ-

տեսլով զ͞ած գրեթէ կան 'ի տան նորա հաստատուն իբրև անկեալք և արմատացեալք. և 'ի միաւորիլ իւրեանց ը͞ն նմա սիրով՝ լինին իբրև թէ 'ի գաւիթս նորա ծաղկեալք առաքինութ͞բք:

Երկրորդ մեկնի ըստ համեմատութ͞ն, հայելով 'ի ժողովել ժողովրդոց և քահանայից 'ի տաճար տ͞ն. յոր միտ կամի ասել. ժողովուրդք ա͞յ և քահանայք նորա որք են արդարք, կացցեն 'ի տանն ա͞յ իբրև մայրք կարգաւ անկեալք, և 'ի գաւիթս նորա իբրև արմաւենիք ծաղկեալք, յորհնել զ͞ած և 'ի փառաւորել:

Երրորդ մեկնի ը͞ն խորհրդոյն յայլաբանական միտս. յոր միտ կամի ասել. արդարք անկեալ լինին 'ի տանն ա͞յ, այսինքն յեկեղեցւոջ 'ի ձեռն մկրտութ͞ն և հաւատոյ. և անդ արմատացեալք սիրով և յուսով՝ ծաղկին պէսպէս առաքինութ͞բք: Ի.ԺԼ քանզի զինուորեալս եկեղեցի է իբրև գաւիթ արքայութե͞ն երկնից՝ վ͞ս գաւիթ եւ ասէ: Եւ հայելով 'ի բազմութիւն մասնաւոր եկեղեցեաց՝ յոգնակի դնէ զգաւիթն: Բայց քանզի մի է եկեղեցի բաղկացեալ 'ի յաղթանակողէ և 'ի զինուորելոյ՝ եզակի խօսի զնմանէ, կոչելով զնա տուն տ͞ն:

Յայսմ տան ասէ լամբ" անկեալք ազգք հեթանոսաց
* ծաղկեցին զանազան երանգօք, ոմանք մարտիրո-
,, սական արեամբ իբր զվարդ. այլք խոստովանողա-
,, կան դաւանութ͞բ որպէս զմանիշակ, կուսութ͞ն
,, պատկառանօք որպէս զքրքում, ժուժկալու͞բ իբրև
,, զշուշան. և այսպէս անթիւք մեզ և 'ի թիւ ար-
,, կեալք նորա, որ զանազան աղօթից նոցա հոտով
,, հեշտացաւ. և ճգնութեցն պէսպէս պայծառ ե-
,, րանգօք զուարճացաւ, և շտեմարանեաց զնոսին
,, յարքայութ͞ն իւր և 'ի փառս ||:

Որոշակի կամելով խօսիլ, այս բան նախ հայի 'ի հաւատացեալ քրիստոնեայս, մանաւանդ 'ի փրկեալս. յոր միտ ասէ Իգնատիոս վարդապետ. ('ի մեկն. ղուկ. ժ͞դ. 20.) * 'ի լուծանիլ մեղացն (գալստեամբն
,, ք͞սի) կոչեսցին նոքա ազգ արդարութե՝ որ է ա-
,, նուն քրիստոնէութ͞ն, տունկ տ͞ն 'ի փառս, նորոգ-
,, անկեալք ամենակեցոյց ձեռամբն ք͞սի...նմանե-

„ դուցանէ տնկոյ և գաւիթ զիրկեալն՝ յասելն .
„ տնկեալք եղիցին ի տան նոր , և ի գաւիթս նոյ
„ մերոյ ծաղկեացին ։

Երկրորդ՝ հայի ի մանաւորի առ առաքեալսն ի պատգաբերել նոցա զաղջս ի փրկութէն հոգւոց . յոր միտ առ սարգիս շնորհալի (ի մեկն . ա . յովհ . 3 . Ճառ . ա . յորդ .) թէ * նմին իբր տնկեցան ի տան
„ նոր , և ի գաւիթս նոյ ծաղկեցան իբրև զձիթե .
„ նիս , և որպէս զարմանիս ։

Երրորդ՝ ըստ յարմարութէն հայի ի կրօնաւորս . որպէս գրէ սարգիս շնորհալի (ի մեկն . ա . պետ . գ . 22 . Ճառ . ը . յորդ .) այլ առեալ զոմանս ի նոցանէ դասացեալս , և զոմանս քանցեալս և պղտակորոյս լեալս՝ ցաւելով ասէ . * գիտութիւն առագեալք (եղեալք)
„ և ի տանն նոյ տնկեալք , և ի գաւիթս նոյ մերոյ
„ ծաղկեալք , գարձեալ գոսանամբք , և անպիտան
„ զմեզ առեղծողին նոյ առնեմք , իբրև զարմաւենի
„ ոստաբանս , և պտղակորոյս որպէս ձիթինի ։
Այսպիսիքս ոչ կինքեանս քաղցրանան , և ոչ զայլս քաղցրացուցանեն . տնկեալ են ի կրօնի իբրև վայրենիք և ժանտաբերք (նարեկ . ե .) ժողովեալք ոչ ի շինել , այլ ի քակել . իբր օտարք , և փշաոսկարք . իբրև գազանք և իշմեղուք . իբրև բզեզք և ձձիք գարշք . Եւ ժողովին մեղուք ի կուտել զգարշուխս , այլ ի շինել զմեղր . սոյնպէս և կրօնաւորք՝ ոչ ի տալ ծել զմտաւութիս և ի յարուցանել զչփոթս , այլ ի կազմել մեղր առաքինութէն և բարեկենդանութէն . և
ի տալ զպտուղ արդարութէն ։
Այսացեալոցս զհետ գայ՝ թէ որք միանգամ չիցեն տնկեալ ի տան նոր և կամ ոչ կան ի նմին՝ որպէս արժանն է՝ նոքա չեն ի թիւս արդարոց , այլ ի թիւս մեղաւորաց իբրև վայրի խոտք . Ասէ թէ ի միտ արդարոց ի տան նոր՝ զիարդ ունին պարարիլ հոգւով մինչև ի ծերութէն , յայտ առնէ ի յաջորդ համարն
ասելով ։

ԺՂ. Լաս Ե բազմամբ եղէցին ի ծերուկն պարապուել. գէրգիս Ե ձախոյս եղէցին. ի պատճ, ուշադ
է պէր ած վր, Ե ոչ գոյ ի նմա անբաւութիւն.

Օրը ի վերոյ ի համարն 10 եդ մի անձին իւրոյ, թէ ի ժամանելն ի ծերուկն ունի քնակիլ և բերկրիլ ի ձէթ պարարտութեան, ասա նաև մի այլոց դնել զայն. բայց ոչ բառիւս ձէթ, այլ սոսկ բառիւս պարարտութեան. և թուի թէ զայս ասէ այլաբանելով ի պարարտութեան տեղւոյ տանն ՚այ. զի որովհետև աստղ, անկեալք եղեցին արդարք ի տանն ՚այ, ի պարարտութիւն տեղւոյն հայելով յաւելու զսոյն ասելով.

Լաս Ե բազմամբ եղէցին ի ծերուկն պարապուել. կամի ասել. արդարքն որպէս զարմանալիս ծաղկեսցին. և անկեալ գոլով ի տանն ՚այ աձեսցեն. և քաղուք ի նոցանէ բազմամեայք եղիցին, որպէս զմայրսն լիբանանու. և ժամանեալ ի ծերուկն յայնմ հասակի առաւել և պարարտասցին ի հնորհաց հոգւոյն, որով գեղեցիկ և ծաղկեսցին, և պտղաբերեսցին առաքինութիք. Լաս եթէ ոչ հասցեն ի ծերութիւնն՝ կենդանք նոցա իբրև զհարիւրամեան ծերոյ լի գտցին. յոր միտ ասէ Եսայի. (կե. 20.) թէ * մի լինի անդ ,, տարաժամ աւուրց, և ծեր՝ որոյ ոչ իցէ լցեալ զժ- ,, ժամանակս իւր. զի եղիցի կրտսեր որդին հարիւրեամ. ,, իսկ թէ ասէր՝ մի մեռցի ոք ի տանն ՚այ ի տարաժամու, այսինքն յանկատարութիւն. այլ ծերացեալ և լի աւուրբք ըստ հնորհաց և ըստ կատարելութիւն վարուց. և եթէ կրտսեր ևս իցէ, հարիւրամեան համարեսցի, այսինքն ուշով կատարելութիւն այնը որ հարիւրամեայ աշխատեալ իցէ յառաքինութիս. Օրոյ զներհային է տեսանել ի մեղաւորն, զի թէ և ի հարիւրամեան հասակի մեռանիցի՝ քան զտարաժամ մեռեալն անարգ համարի և անիծեալ. Լաս ըստ այսմ յորմէ ծերութիւն և իցեն արդարք՝ է թէ ըստ հոգևորին և եթէ ըստ մարմնաւորին՝ ասէին լինել ի պարարտութիւն, ևս և ի գրգռութիւն, և ի փափկութիւն հոգւոյ. և զի այս առաւել ևս փայլէ ի բոլն իսկ ի ծերսն՝ ի նոսին հայելով յարէ զնոսն և

տսէ ։

Գիրգք և փափուկք եղիցին ։ Այսինքն արդարք 'ի ծերութեան անդ եղիցին իբրև գիրգք և փափուկք . և այս ասի ըստ երից . մի՝ ըստ անմեղութեան . զի արդարք մաքրելով զինքեանս 'ի մեղաց , և զարդարելով զհոգիս իւրեանց առաքինութբ՝ 'ի հասանելն 'ի ծերութի՝ նման անմեղք հանդոյն գիրգ տղայոց , և փափկանան 'ի զուարճութի հոգւոյ . որով կրկին ևս ծաղկին գերազանց առաքինութբք ։ Այս փափկութի այնպիսի իմն է՝ որ ծնանի զուարթութի սրտի և զխաղաղութի խղճի մտաց ։ Փափկութի մարմնոյ կոչի մայր ամենայն չարեաց . զի ծնանի զդստերս չարս , 'ի մարմնի զտկարութի և 'ի հոգւոյն զչար խայթումն խղճի մտաց . իսկ հոգևորն զհակառակն սոյին ։

Երկրորդ՝ ըստ հանգամանաց նորատունկ արմաւենեաց և մայրեաց . զի արմաւենին 'ի նորատունկ հասակի՝ յորժամ չորեքամեայ կամ հնգամեայ է՝ ուժգին ծաղկի . նոյնպէս և մայրք աճելով աճեն ։ Նոյն ըստ այսմ նմանութեան արդարք 'ի հասանելն 'ի ծերութի , որչափ զառամեալ տեսանին մարմնով , այնչափ գիրգք և փափուկք են հոգւով՝ 'ի ծաղկիլ գործովք բարեաց , և 'ի յաճիլ 'ի սէրն այ ։

Երրորդ՝ ըստ զգուշութեան . իբր զի արդարք հասեալք 'ի ծերութիւն ոչ համարելով զինքեանս կատարեալ՝ զգոյշ կան , գիտելով թէ են մարդիկ տկարք և դիւրաճզմելիք իբրև զգիրգս և զփափուկս , որք սակաւուք կարեն ճզմիլ ։ Այս զգուշութի յայտնի տեսանի 'ի վերս հարանց . որպէս յերանելին յայն ծեր , զորմէ պատմի անդ , թէ 'ի հասանել նորա 'ի յետին շունչ՝ երևեցաւ նմա դևն և ասէ . զերծար ծեր 'ի ձեռաց իմոց . առ որ պատասխանի ետ և ասէ . * դեռ-
,, ևս ոչ գիտեմ ած գիտէ ‖ ։ (եր. 263 ։)

Լամբ″ հայելով 'ի նորս եկեղեցի գրէ աստ այսպէս ։
* ` Ո՛ի մի կարծեսցես՝ թէ երբեմն ժամանակ եղև
,, ծաղկել ածպաշտութեն և քնի շնորհացն՝ և ապա
,, դադարեաց , յաւելու՝ թէ օրըստօրէ առաւելապէս
,, բազմանան առողջեալք յաղբիւրէ հոգւոյն ծաղիկք
,, եկեղեցւոյ առաքինեացն անձինք՝ 'ի ծերութիւն
,, պարարտութեան . այսինքն խորհրդական լինել և

,, կատարեալ լինմասս խորհրդոյն քրի. Ա՛ազմանայ
,, յանձինս արդարոյն ծաղիկ առաքինութեցն. ըզ այմ՝
,, գրեմ ձեզ Տաքք, զի ծանեայք գոք զայն՝ որ ի
,, սկզբանէն. Լաւ յորժամ եղէ այր զտզայութեամն
,, ի բաց խափանեցի. Ա՛րդ ասէ՝ Թէ արդարքն ծաղ-
,, կով առաքինութեցն բազմանան, յորժամ ընդեր-
,, կարին յարդարութիւնն՝ Տամատաւտն և անշարժ
,, խորհրդովք. և Տնանան ի նոյն, որոց Տանդիպեի
,, պարարիլ Տոգևոր գիտութեն. գիրգք և փափուկք
,, եղէցին ի պատմել. Այսպէս նա՝ որ մարմնական
,, պարկեշտ կերակրովք պարարի, փոխի յառաջին
,, որակութէնն մարմինն և գիրգ և փափուկ. այսպէս
,, և միաք զերծեալ յիրաց աշխարհիս՝ և յարդարու-
,, թեն փութացող, որքան պատմելն ածաղուսնչ գրոց
,, կերակրէ զնա, գրգռի և փափկանայ զուարճացեալ
,, նոքօք, և պարարեալ՝ յայլ իմն որակութեն փոխի
,, մտացն նեղգործեն. որպէս առաքեալ ծերացեալ
,, ի նոյն՝ ասէր. զտզայութեն թանձրութեն մտաց՝ ի
,, բաց խափանեցի, և անօսրացեալ գիրգ և փափուկ
,, գոլով, տեսանեմ իբր ընդ հայելի օրինակաւ. այս
,, պէս աւանդէր և աշակերտին՝ միտ դիր պատմելն
,, գրոց ընթերցուածոց միսիթարութեն ||. Ո՛այսոսիկ
խօսեցեալ մարգարէին զարդարոց՝ աւարտէ բանիւք
նոցա զքան իւր ասելով.

Ի պարել՝ ուղիղ է տէր ճամբայ, և ուղիղ ի նմա անբաս
առնել. Կամի ասել. այս ամենայն յաջողեալ լինի արդարոց՝ առ ի պատմել նոցա, այսինքն առ ի հրաւիրել նոցա զփառս ոյ, ասելով. ուղիղ է տէր ճամբայ մեր. և ոչ գոյ ի նմա անիրաւութիւն. Այս ուղիղ գոլս կրկնակի մնացի. մի՝ հայելով յարդարոն. յոր միտ կամի առնել. ուղիղ է տէր ի յաջողել արդարոց, և ոչ գոյ ի նմա անիրաւութէն ի թոյլ տալ նոցա կրել արդարոց զպատուս տառապանս. Երկրորդ՝ հայելով ի մեղաւորս, յոր միտ մեհենի այսպէս. ուղիղ է ճամբայ ի թոյլ տալոյ մեծանալ և փառաւորիլ մեղաւորաց առ ժամանակ մի. և ոչ գոյ ի նմա անիրաւութիւն՝ ի պատժելն զնոսա ի հանդերձեալն. զի նոքա զառաջամանակեայ բարիս սիրելով և գյաւիտենականն մերժելով՝ արժանի գտան զառաջամանակեայս միայն վայելելոյ, և

'ի յաւիտենականացն մերժելոյ ։ Իսկ արդարք զառաժամանակեայ բարիս արհամարհելով· և զյաւիտենական սիրելով՝ յառաժամանակեայսս հրաժարեալ ժամանեսցեն 'ի յաւիտենականն ։

Ա.յլաբանօրէն՝ այս բան հայի 'ի դաւձ իսրայէլացւոց բազմաց· զի բազումք 'ի նոցանէ 'ի հասանել հին օրինաց 'ի ծերութիւն և 'ի մտանել նորին 'ի պարարտուն նորոյս՝ մտին յեկեղեցի տր, և ունին և՛ մուսնել յորժամ լիասցի չափ հեթանոսաց· և եղիցին գիրքք և փաթուիք մր աղաչութիւն՝ այսինքն մր նորոգ դառնալոյ իւրեանց· և յայնժամ պատմեսցեն, թէ՝ ուղիղ է տէր ամէն մէր· օրհնեալ յաւիտեան ։

ՍԱՂՄՈՍ· ՂՂ·

Հայտարարութիւն ինքնիշխան թագաւորութեան նմ, և մեծվայելչութիւն և զօրութիւն նմ 'ի սաեղծագործուածս աշխարհի· և 'ի նորոգ արարչութիւն ։

Հաւատն առաջին ընթերցուած, յոր հաւատացաք երիէք· օրհնութիւն գովութեան 'ի դասին ։

1 Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ· զգեցաւ տէր զօրութիւն· ընդ որ իւր ածաւ ։ 2 Հաստատեաց երկիր՝ որ ոչ սասանեսցի· պատրաստ է աթոռ նո 'ի սկզբանէ· յաւիտենից դու ես ։ 3 Ընդքնեան գետք տէր· և ամբարձին գետք ձայնս իւրեանց· յարձրեցին գետք 'ի գնացս իւրեանց ։ 4 Ի ձայնէ ևսրց բազմաց· սքանչելի եղեն զբաւանք ծովու ։ 5 Սքանչելի են դուռք տէր 'ի բարձրութեան· վկայութիւնք քո ճշմարիտք յոյժ հաստատեալք ։ 6 Զան դոմ վայելչութիւն տեսցուսէ տէր՝ ընդ երիսն աւուրս ։

ՂԵՐՆԱԳԻՐ

Յաւուրն առաջին շաբաթուս, յոր հասցաւեցաք երկիր. երկ-
նաւիման գովեցին ի գործին։



ԵՏՊԵԳԻԱՅԻ ՍԿՁՄԱՆՆ ոսկանայ լեալ առաջութիւն դնի այս վերնագիրս ըստ լատինացւոց. բայց զոր ես դաք ասա՝ ի համաձայն եօթանասնից և ձեռագրաց մերոց։ Ու թէպետ ի նոսա ևս կան քանի մի տարբերութիւնք, բայց ոչ այնպէն զմիաս բանին։ Յերբ՞. և ի քաղդ՞. ոչ դնի ասա վերնագիրս ինչ. ման որդ և ի հին սաղմոս ինչ յոնոց ըստ վիպելոյ նախնեաց ոմանց՝ յաւելեալ են բառիդ անվերնագիրս յերբայեցւոց. յորմէ առեալ ոմանց յագդմերմէ՝ գնոյն եգեալ են ի սաղմոս ինչ, որպես և ի

քանի մի տպագրեալս, և ի սաղ՞. լամբ՞։

ՄԲդ ի վերնագրի ասա բառիս՝ յաւուրն առաջին շաբաթու՝ նշանակի օրն ուրբաթու, որ է առաջին օր նախ քան զշաբաթն կամ նախընթաց օր շաբաթու. յորում աւուր երկիր հաստատեցաւ այսինքն կատարեցաւ ամենայն իրօք. ոպս դնի ի գիրս ծննդոց. (ը. ։.) քանզի և կարդ սաղմոսս ի նոյն հայի, այսինքն ի հաստատել ոյց զերկիր կի՞ զաշխարհն բոլոր։ Յայս հայելով ոմանց աւանդեն, թէ զայս սաղմոս երգելին յաւուր ուրբաթու ընդ երեկս՝ ի ցոյց բովանդակ լման ասիւքերիս։ Իսկ թէ երգելիցէ այս՝ յայտ առնէ վերնագիրդ բառիւքս օրհնուել զովութէ. որպէս թէ ասէր. այս սաղմոս է օրհնութէ նուագելի՝ ի գովել զթագաւորութիւն ոյ, և զամենակարողութէն նորին ի հաստատել նորա զաշխարհս, և ի տիրել ի վերայ ամենայնի ։։։

Բանք սաղմոսիս հային և յերկրորդ արարչագործութէն աշխարհիս՝ որ եղև յաւուրն ուրբաթու, յորում արարիչն աշխարհի մեռանելով ի վերայ խաչին՝ զա-

տապարտեաց վասն ըստ գրելոյ առաքելոյն. և զի գՀանդիպ այսը փրկագործութեանն եցոյց ի յարութեանէ իբրեւմ, ուղղակի յայն Հայի գիտումն բանից սաղմոսիս, վասն որոյ և եկեղեցին յաւուրս յարութեանն երգէ զայս սաղմոս։

Ի քանի՛ մի ձեռագիրս մեր Թէպէտ և ի սակաւս յոյժ, նոյնպէս և ի տաղ". լամբ". փոխանակ ասելոյ առաջին շաբաթու, գրի միաշաբաթու, և դնի այս պէս * օրՀնուեցի երգ ի դաւիթ յաւուր միաշաբաթու ,, Թուս, յորում երկիր Հաստատեցաւ ". Այլ զի միաշաբաթին է օր կիրակէի, յայն վերածէ լամբ". զսոյն ասելով, Թէ ի նմին աւուր սկսաւ արարչութեանն աշխարհիս. և ի նմին աւուր եղև յարութեանն ձեռն։ Քայց որպէս յայտ է ի թարգ" եօթ" և լատ" և եթէոփ", և և ի տաղ" վարդ". այս քան Հայի ի նախընթաց օր շաբաթոն, այն է ուրբաթն, և ոչ ի Հետևեալ օրն որ է կիրակէն։ Այլ սակայն Հայելով ի յարութեանն ձեռն՝ յարմարագոյն և դնի միաշաբաթին։ Սակ Թէ յինչ առնէ իցէ սաղմոս այս՝ ոչ է յայտ. ոմանք դնեն Թէ ի քեռել դաւթի զտապանակն կերուսաղէմ երգեաց զսոյն։ Այլ և այ քաղմք՝ որք առ դաՀճն գերուեցեն քաքելացւոց վերադարձեն զայս. այլ մեք ըստ վերոյգրելոցդ Թողեալ զայն, ի նիւթն ի նիւթեն միայն՝ այսինքն յարարչագործուեանն աշխարհիս Հայելով՝ ունիմք մեկնել զաման սորա. քանզի այս է Հասարակաց կարծիք։

ԲԱՆ

Ա. Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ տէր զօրութիւն, ընդ որ իւր ածաւ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Բառս թագաւորել, նոյնպէս և անուն թագաւոր՝ երբեմն կարի խմացեալ լինել. ինչ ըստ նորոգ ստացեալ զթագաւորութեանն. և յայտ է Թէ աստ ոչ գնի

փոխանակ այսը. զի անտեղի է ասել զայլ ստանալ նորոգ զԹագաւորութիւն, Լրկրորդ՝ ՚ի ունելոյ զԻշխանութիւն Թագաւորութեան. ՚ի այսմ ևս ոչ դնի աստ բառս Թագաւորել. զի այս ինքնին իմացեալ լինի, Լրկրորդ՝ ՚ի վարելոյ զԹագաւորութիւնն՝ զոր ունի, կամ ըստ երևեցուցանելոյ զայն. ՚Ձայս միտ առեալ լինի աստ բառս Թագաւորել յասելն.

Տէր Թագաւորեաց։ Կամի ասել. ՚ած որ յաւիտենից էր ՚ի՛ր, ՚ի ժամանակի գոյացուցանելով զամենայն ստեղծուածս՝ զերևելիս և զաներևոյթս՝ Թագաւորեաց ՚ի վերայ նոցա, այսինքն ՚ի գործ կած ՚ի վերայ նոցա զիշխանութիւն Թագաւորութեան՝ զոր ունէր ՚ի յաւիտենից. և զի այսու սքանչելի եղոյց զնոսա ՚ի՛ որոյ չարէ զկին և ասէ։

Ա յնլսրուեն զՓեցաս։ Լ՚այնքան երևեցոյց առ ստեղծուածս զվայելչութիւն Թագաւորութեան իւրոյ, կամ զգործառս իւր. որ է ասել. գործառութիւնք եղոյց զնոսա. զի որ զգենու արտաքուստ զգեստ շքեղ՝ այնու երևեցուցանէ զինքն գործառոյ. արդ ածէ յատաջ քան զստեղծանելն զաշխարհս՝ Թէպէտև յինքեան էր անսահման վայելչութիւն գործառոյ, բայց ոչ առ արտաքս. իսկ յորժամ ստեղծ զաշխարհս՝ երևի Թէ ըզգեցաւ զոյն վայելչութեի. որով նաև առ արտաքս երևեցոյց զինքն այսպիսի. զի այնու ծանեան զնա արարածք՝ լինել ամենատարի, ամենագէղեցիկ, ամենաշնոր, և ծանեան և զամենակալ զօրութեի նորա.

զոր ՚ի մանուածոյ ևս յիշէ մարգարէն յասելն։

Օ գեցաս գէր զբոնէ։ Լ՚այնքան արարչագործելովն զոյ զաշխարհս, և պահելով զամենայն արարածս ՚ի գոլ իւրեանց և ՚ի գործել, եցոյց զինքն ամենազօր. կամ յայտնի արար ամենեցուն՝ Թէ անասկման է ՚ի զօրութեի իւրում։ Լ՚ալ Թէ զինքդ աքանչելի օրինակաւ վարէ զայն զօրութիւն՝ յայտ առնէ ասելով։

Բնդ ձէ էօ ածաս։ Կամի ասել. ած այնպէս կառուցեալ զաշխարհս, որպէս որ գոտի ածեալ է մէջ գործէ զգործ ինչ. կամ աշխարհաբառ ասացից, որպէս որ (սոգտվէլով) գործէ. և այսու ցուցանի ամենակատար նախախնամութեին նոյ. որ է գրելոյ իմաստնոյն * ձգի ՚ի ծագս մինչև ՚ի ծագս օդատա-

,, կար առողջութք, և դարմանէ զամենայն քաղց-
,, րութք∥. (իմաստ. ը. 1:)

Այլաբանօրէն այս բան հայի յերկրորդ արարչութին. յորում որդին այ փրկելով զազգ մարդկան՝ թագաւորեաց 'ի վերայ նոցա, և առաւել ևս 'ի վերայ հաւատացելոց, զորս հաստեաց 'ի մի եկեղեցի. և զգեցաւ զվայելչութիւն 'ի յառնելն. զի յայնժամ զվայելչութի մարմնոյ իւրոյ՝ զոր զգեցեալն էր, ըստ ամենայն կատարելութեան պայծառացոյց: Զգեցաւ և զզօրութի 'ի խորտակելն զդրունս դժոխոց, և 'ի վանելն զիշխանս խաւարի. և պնդեաց զմէջ իւր 'ի տարածել զթագաւորութի իւր 'ի ձեռն քարոզութե աւետարանին մինչև 'ի ծագս երկրի, և մինչև 'ի կատարած աշխարհի:

Նոյն միտս վերածէ և մեծն Խոսրով զայս բան. 'ի 'ի մեկն. ժամագր. (երես. 355.) մանաւանդ ըստ թագաւորելոյն, յասելն. * տէր թագաւորեաց, վայ-
,, ելչութի զգեցաւ խաչիւն. զի թէպէտ և ածուք
,, էր թագաւոր յառաջ քան զյաւիտեանս, այլ ընդ-
,, մարմնով թագաւորելն ասէ. և զի արար խա-
,, ղաղութի արեամբ խաչին իւրոյ, վս որոյ և թա-
,, գաւոր խաղաղութե կոչէ (եկեղեցի, յասելն. թա-
,, գաւոր խաղաղութե, օգնական անձանց մերոց)∥:

Լամբ՛՛ սստանօր զբառդ զօրութի՝ վերածէ 'ի տկարութի մարմնոյ. և ասէ, թէ զայս մեր տկարութի մարմնոյ իբրև զզօրութի ընդ մէջ իւր եած ը ածութի իւր, և տանելով վշտաց և մահու՝ վայելչութի զգեցաւ: Նաև եկեղեցւոյ իւրում ես զգեցոյց զփառս 'ի վայելչութե իւրմէ 'ի պայծառացուցանելն զնա. յոր միտ վերածէ զայս և շարականն ծք. ասելով.
* Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց՝ եկե-
,, ղեցւոյ իւրում զգեցոյց զվայելչութիւն∥: Նաև զի նորս եկեղեցի 'ի հեթանոսաց կազմեցաւ, սմին իրի 'ի վերայ նց յարմարէ շարականն զայս բան ասելով. ծք. * թագաւորեաց ած 'ի վերայ հեթանոսաց∥:

Յարմարական մեկնութք այս բան կարէ հայիլ մանաւորապէս յընտրութի ազգին իսրայելի, զոր էառ ած յիւր ժողովուրդ սեփական, և թագաւորեաց 'ի վերայ նոցա, ցուցեալ նոցա զվայելչութի իւր և զզօ-

բուէն՝ և զմնացուորս խնամս։ Արդ հայիլ այս և յաջաւուէն նշ՝ ի գերուէն. զի ի գերիլ նոցա՝ ոտարք թագաւորեցին ի վերայ նոցա. իսկ ած ազատեալ զնոսա ի գերուէն անտի՝ ինքնին թագաւորեաց նոցա։

Ա՛յլ աստ գիտելի է, զի երեք սաղմոք էն, որք սկսանին բառիւքս ՝որ թագաւորեաց. առաջինն է սոյն սյս ղ՝ սաղմոս. երկրորդն է ղշ. և երրորդն ղը՝ Ալա՝ ասի ՝որ թագաւորեաց ՝ի ստեղծանէն. երկրորդ՝ ասի ՝որ թագաւորեաց ՝ի կամիլը ՝ի հրնաւմն անդ զեկեղեցի յերն խաչելէն յեգիպտոսէ. երրորդ՝ ասի ՝որ թագաւորեաց ՝ի կանգնելը զնորս եկեղեցի. Ետը թագաւորեաց յառաջնումն՝ յորժամ սկսաւ թագաւորել. տէր թագաւորեաց յերկրորդումն՝ յորժամ սկսաւ ցուցանել զթագաւորուէն իւր. ՝որ թագաւորեաց յերրորդումն, յորժամ թագաւորեաց և ըստ մարգարէին։

Ա՛րդ քանզի յառաջինն հայելով այս թագաւորելս ասի որպէս ասացաք՝ ըստ Հաւէն ակնարկէ յաջորդ. դրծուէն աշխարհի, ի մանաւանդ և առաջ քեր աստանօր մարգարէն զսոյն ասելով։

Ա՛շխարհաւ իմացեալ լինի աստ բովանդակ տիեզերքս՝ և ա որ ինչ յերկինս և յերկրի, եթէ երևելիք իցեն, և եթէ աներևոյթք. եթէ մարմնաւորք իցեն, և եթէ անմարմինք. քանզի ի սոսին պաղագրի քովանդակութէն աշխարհի. զորոյ զհաստատութէն խոսի աստ մարգարէն։ Իսկ այս հաստատութէն աշխարհի կրկնակի մեծածի. մի՝ ըստ գոլոյ յինքեան. և մի և՝ ըստ գոլոյ անասանն. որոյ վասն ասէ։

Ա՛սպատեաց ղշխարհս՝ ղի ոչ սասնեցի. կամի ասել, ած զբովանդակ տիեզերս յօշոյէ գոյացուցեալ՝ պահ ինչ գնա հաստատուն ի գոլ իւր, և անսասան յիւրում կարգի. և կառավարէ որ ինչ է ի նմա զամենայն ըստ ամենայնի. որով և թագաւորէ ի վերայ ամենայնի, որք ի նմա իցեն։ Այլոց զի մի կարծեսցի՝ թէ ած յայնժամ սկսաւ ստանալ զթագաւորու-

թէն զայն, յարէ զկնի և ասէ.

Պատրաստ է սիրտ իմ ո՛ Աստուած՝ պատրաստ է սիրտ իմ ։ Լինել ասա թագաւորութեան. զի աճումն գոլով տեղի նաեւէ յայ թագաւորէ՝ և նշան թագաւորութեան, ըստ ոմանց ձարտասանից դնի փոխանակ թագաւորութեան. և ըստ այսմ կամի ասել. աճում թագաւորութեան քո, կամ թագաւորութեդ քոյ, կամ ինքնիշխան տէրութեդ քո՝ է՝ ի սկզբանէ յառաջ քան զլինելն աշխարհի ։ Կամ պատրաստ է ասելոյն ցուցանել՝ թէ ոչ նորոգ պատրաստեցար, այլ էր և է՝ ի սկզբանէ՝ ի յաւիտենից ։

Արթն է և աճումով իմանալ ասա զերկինս. ըստ որում նա ինքն ասէ բերանով եւայեայ (կղ. ։) * երկինք աճում իմ են, և երկիր պատուանդան ոտից իմոց ։ Ոչ յայս միտ կամի ասել. ի սուեղծանելդ զաշխարհս՝ զերկինս պատրաստեցեր քեզ իբրև զաճում. և ըստ այսմ բառդ ի սկզբանէ՝ նշանակէ զսկզբնաւորութեդ աթոռագործութեդ ։ Այլոց առաջին իմացուածն է հարազատ. զի դիտէ մարգարէն ցուցանել, թէ թագաւորութիւնն ոչ ոք կարող ժամանակ և զաբաթոց. զի էր յառաջ քան զյաւիտեան, և ինքն կայ յաւիտեան. և առ այս յարէ և ասէ ։

Հաստատեաց զոր ։ Հաստատ յաւիտեան՝ ըստ որում դնի ասա՝ պարագրէ զամենայն յաւիտենականութեդ ըստ ամենայն տեւողութեդ՝ յանփոփոխ գոյութեդ ։ Կամ ասելով ։ , հայի յայս ամենայն՝ զոր ցուցանի, բառդ որ էն, որպէս թէ ասէր. յաւիտեան յաւիտենից դու ինքն ես որ էն ամ, ինքնագոյ էութեդ. և դու ինքն ես ամենիշխան թագաւորութիւն, ամենակալ զօրութեդ, ամենալի մեծութեդ, ամենավայել գեղեցկութեդ, ամենատես իմաստութեդ, ամենագանակալ երանութեդ ։

Ասելիմբ գիտէ յայտ առնել՝ թէ ամ ոչ վասն կարօտութեդ ինչ արար զաշխարհս՝ որպէս թէ մեծութիւ աշխարհիս փարթամացայ, կամ չքնաղութիւ սորա վայելչացայ, և կամ տիրելով աշխարհի՝ թագաւորութեդ ինչ ստացայ, այլ գոլով ինքն որ էն անհուն՝ ի բարութեդ և յամենայն կատարելութեդ՝ կամեցաւ

հաղորդել արարածոցս զարաւելեն իւր՝ իւրաքանչիւր
ըստ իւրում կարգի. և այսու ի գործ եած ի վերայ
նոյ զծագաւորութեն իւր, վասն այսորիկ ասաց Թէ
Թագաւորեաց ի Հաստատութեն գաշխարհս։

Ի յիւրաքանչիւրն, յերկրորդ արարչութեանս որդին նոյ՝
որոյ Թագաւորութեն է ի սկզբանէ յաւիտենից և
յաւիտեանս, և աճեալ նորա յերկինս, մարմնացեալ
ի ծո կուսէն՝ հաստատեաց զաշխարհս ի հաստատս,
մնանեանդ գնացս աշխարհի զկենդանի ծո,
և այն այնպիսի հաստատութեն՝ որ ոչ սասանեսցի և
ոչ ի ղանց դժոխոց. և զայս այսպէս հաստատեալ
համբարձեալ փառօք յերկինս և նստեալ յաճոյ փա-
ռաց ընդ աջմէ հօր ըստ օրում մարդ ընդ որ ցնծա-
ցեալ եկեղեցի երգէ ի շարակ. ծէ. ասելով. * Թա-
,, գաւորին յաւիտենից մատուցցուք զօրհնեդութեն՝
,, որ ի կուսէն մարմնացաւ. հաստատեաց զաշխարհս
,, ի հաւատս. փառք նմա այժմ և յաւիտեան։

Ի ասեն". զայս հաստատութեն այսով իմն գեղեցիկ մեկ-
նութեն առաջի դնէ յասելն. * Ի՛որդւոյ հաստատե-
,, ցաւ աշխարհ յորժամ խաթխոյ իւր ընդաջմէ հօր
,, բազմացաւ. որպէս ասէ առաքեալ, զոր իբրև խա-
,, րիսխ անշարժ՝ ունիմք մեզ ի նեբբին կոդին վա-
,, րագուրին զկարապետան յիս։ Այս աշխարհս իմացիր
,, զընակիչս սորա. քանզի այնմ, ոչ կարէ աշխարհ ա-
,, տել զձեզ։ Ի՛որդի վերովին եմն և ասասանեալ բնա-
,, կիչք աշխարհի՝ յիւրաքանչիւր Հնամարդս, Թէ
,, զինչ յետ մնացեալ ունի պատահել մեզ. յայսոցիսի
,, խոովութենէս հաստատեաց զամենեսեան քո՝ յարու-
,, ցեալ ի մեռելոց, և վայելչացեալ անմահութեամն
,, գեղով և Թագաւորեալ մեզ. զի ամենեքին ի նա
,, յեցան, և երկիւղի մնացու՝ գեր ի վերոյ գոյան.
,, ըստ առաքելոյ՝ որպէս ազամանէն ամենեքին մեռա-
,, նին, նոյնպէս և քրիս կենդանասցին։ Ի՛որ որպս
,, քոյ՝ չիք կրկին մահ, նոյնպէս և ոչ աշխարհի յայս
,, յետոյ հաստատութեն՝ գրգռումն կամ սասանութեն.
,, զոր գիտեալ առաքեալ առաջ, սկիզբ կալցուք ըզ-
,, խոստովանութեն հաստատուն և անշարժ յուսոյն.
քանզի հաւատարիմ է՝ որ խոստացաւն։

Հարմարական մեկնութեն՝ այս բան կարէ հայիլ յեր-

կիրն աւետեաց, զոր Տաճառատեաց ՚ած իւրում ժողովրդեան. և բազում ինչ արար վասն անառատան ՚ինալոյ այնմ. եդ ՚ի նմա և զտաճար իւր, զի անդ պաշտեսցի. ու զի կարօտեր, որովհետև ինքն և ինքնաբաւ որ էն ՚ի յաւիտենից, այլ զի տացէ կարօտելոց ըզլուսաւթի բարեաւեհան իւրոյ. և Թէպէտ զայս երկիրս վեր ՚ի վայր դարձուցին քաղդէացիքն և տարբեստացնեցէք, քայց ՚ած ՚ի ձեռն ծածկոյ իւրոյ, այսինքն ՚ի ձեռն կիւրոսի Տաճառատեաց վերստին՝ յօրինակ վերըստին նորոգուել աշխարհի, որ եղև ՚ի ձեռն քրիստոսի,

զորմէ խօսեցաւ այժմ.

Ամենք աստ քառիւս աշխարհ՝ իմանան զերկիրս, և պնդեն այսու ցուցանել՝ թէ երկիրս անշարժ կայ ամենեին, որովհետև ասէ՝ Թէ Տաճառատեաց զան՝ զի մի սասանեսցի: Ո՛չյամ չունիմք ինչ հակառակիլ, մանաւանդ ՚ի քննել մեր զգան Ա՛ՂՐ. սալմոսին ՚ի Տամարն. ՀԵ. և սակայն Տայելով երկիր". և յայլ Թարգ". պատշաճագոյն ևս Թուի ասել, Թէ քանի աստ ոչ է զերկիրն, այլ զրավանդակ աշխարհն. զորմէ ընդՀանրապէս խօսի աստ մարգարէն. և ապա գառնայ խօսել ՚ի մանաւորի՝ ոչ զերկիրն, այլ զրաժ անմանն՝ զոր ցերեւոյթ երկրի՝ յորմէ սկսաւ զարդարել աշխարհս. վասն որոյ յարէ զվինի և ասէ.

ՀԱ. Ա ՄբաբյանԳԼՈՒԽ ՊԵՐ. և ամբարիշՆԳԼՈՒԽ ՊՅԱՅՈՒ ԽՈՐԵՆՆ. յարիչներԳԼՈՒԽ ՚ի գետս խորենոյ.

ՀԲ. ՚Ի ՅԱՅՆԷ ԼՈՒՐՑ ԲԱՂՄԱՑ. ուռանչէլ եղիՆԳԼՈՒԽ ՊՈՎ.

՚Ի ստեղծման աշխարհիս որպէս ասացաք ՚ի գիրս ծննն. (ա. 1-10) Լերկիրս պատեալ էր ջուրբք. և ՚ի հրամանէ՝ ՚ած՝ բաժանեցան և ամփոփեցան այն ջուրք յերեսաց երկրի ՚ի ծով, և ՚ի լիճ, ՚ի գետս, և յունցս ստորերկրեայս. և յայտ է Թէ ամիսուսին ոյսչափ ջուրց յոմանսիսկ անօթս յայնպիսի ամենազօր հրամանէ՝ եղև մեծաւ ասատկութիՀ շարժման, և արագութիՀ ընթացից ՚ի միւսմ աւուր. իսկ շարժ ուին ջուրց այնչափ ահեղ կերպարանի յերկնանալ և ՚ի հնչել՝ որչափ ասատիկ արագութիՀ ձգի, և որքան

յորդութիք մղի. որով յայտնի երևի թէ՝ ի սկզբան անդ՝ ի բաժանիլ ջուրց յերեսաց երկրի և՝ ի ձգիլ նոցա արագութիք՝ ի սահմանեալ տեղիս իւրեանց՝ յուժգին ընթանալով՝ և՝ ի վերայ միմեանց յառնելով՝ ահեղ ինչ հնչիւն։ Այր եթէ լինէր ումիք տեսանել զայն, ի սոսկումն հիացման ըմբռնեալ՝ ի պակուցումն թմրութիք պաշարիր։ Այլ զի այսպիսի ընթացք ջուրց և գոլմունք՝ ի գետս և յալիս ծովու նշմարին մեզ, սմին իրի մարդարէն զանուանս գետոց և աւեաց ծովու՝ ի մէջ բերելով՝ նկարագրէ զայս, յասելն։

Ամբարյան գետ՝ ած. և ամբարչին գետ՝ չհայնս էրբեանց. յարէցեն գետ՝ ի գնացս էրբեանց։ Այսմ ասել. ի հրամայել քո՝ ի սկզբան՝ զի երևեսցի յամանքն՝ առ՝ ի լինել տեղի տնկոց և կենդանեաց՝ և բնակութիւն մարդկան՝ ի հրամանէ այսի քումմէ ջուրք, որք պատեալ էին զցամաքն, ամբարչան շարժմամբ և պատրաստեցան գնալ իւրեւ զգետս. և յընթանալն ուժգին արագութիք՝ ահեղ ինն համբարչին զձայնս իւրեանց. կամ թէ՝ ի բաժանիլ ջուրց յերկրէ՝ որընթաց դիմելով՝ ձայն ետուն. յոր միտ ասէ վարդան * յորժամ ,, ծովք սահմանեցան, գետք ամբարձան ‖։ Այս այս յայնմանէ եղև ասէ մարդարէն, զի ասացեր * յարի- ,, ցեն գետք՝ ի գնացս իւրեանց ‖. այսինքն յարիցեն ջուրք յերեսաց երկրի և հոսեսցեն՝ ի գնացս իւրեանց՝ բաղխելով զմիմեանս, որպէս թէ գետք իցեն։

Այս յետին բան կարէ իմացեալ լինել և զդոյաւորելոյ գետոց զոր յիշեցաք. և յայս միտ յասելն, յարիցեն գետք՝ ի գնացս իւրեանց, միտ բանին լինի այս. ի դիմել ջուրց՝ ի ծով, հաստեցան և առուք, զի ընթասցեն՝ ի նա գետք ուժգին գնացիւք։ Այսսկ ապա և զձայնէ ջուրցն, և զալեաց ծովու ասելով՝

Ի ձայնէ ջուրց բազմաց ուժգնագնի եղեն զբօսանք ծովու։ Այս բան երրակի կարէ մեկնիլ. նախ՝ թէ յաւիտենից ջուրց բազմաց յերեսաց երկրի ձայնիւ մեծաւ՝ սքանչելի ինն նմանութիք ալեաց ծովու երևէր՝ ինն։ Երկրորդ՝ թէ՝ ի բաժանիլ ջուրց՝ գոյացաւ ծով, յորում սքանչելի եղեն զբօսանք նր, այսինքն ալիք նր, որ է ասել. ի ժողովիլ ջուրց և՝ ի գոյանալ ծովու՝

երևեցան ի նմա աչեղատեսիլ ալիք, Լրբողդ՝ թէ ի հասուիլ ծովու և ի յառնել ալեաց նը՝ զարմանալի եղեն այն ալիք վս հնչելոյ ձայնն ջուրց· Լալազդ ևս կարէ մեկնել այս բան ընդ նախընթացին, յերեանակ զարմացական վերածելով· որպէս թէ ասէր· ով որպիսի ահեղ լինն են գնացք գետոց յընթանալ իւրեանց ուժգնի, և ի հնչել ջուրց նոցա ձայն· որպիսի ևս զարմանալի երևին ալիք ծովու ի յառնել և ի գոլել իւրեանց· Որում կամ հեռաւորացուցանել, թէ մարդիկ յայս հայելով և զարմանալով՝ պարտին խոստովանիլ թէ կայ արարիչ և կառավար սոցա, և իշխէ ի վերայ սոցա աբանելապես ի բարձունս· զորմէ խօսի ի յաջորդ համարն·

Լ Այլաբանօրէն գետովք ամբարձեալք՝ նշանակին նախ մարգարէք, որք ամբարձեալ զձայն իւրեանց՝ ետուն զաւետիս ազգի մարդկան· Լրբողդ նշանակին առաքեալքն, որք ընթացեալք ըստ տիեզերս՝ ոռոգեցին զամենեսին· և ձայնիւ իւրեանց սաթսեցուցին զՀՂԵՐս· և ի բազմանալ ջուրց՝ այսինքն հաւատացեալ ժողովրդոց՝ աբանելի ցուցան ալիք ծովու, այսինքն այնորիկ անձինք՝ որք ի ծովու աշխարհիս իբրև զալիս ուռուցեալք էին, որպիսի էին փիլիսոփայք և Թագաւորք, մեծատունք և հզարաք՝ որք խոնարհեցան ըստ քարոզութիւն առաքելոցն·

Լ Ընդ հակառակն ևս մեկնի այս· յոր միտ գետովք յարուցեալով իմացեալ լինին հրեայք, որք բազում իրօք յարեան ընդդէմ հեղգեցուց ի սկզբան անդ, և ջանացան նուաճել զՀաւատացեալս· ամբարձին ընդդէմ նոցա և զձայնս իւրեանց, և բանիւք ածաղուծնէ զրոց՝ իբր անոյշ ջրովք կամին խեղդել զնա· Լսակ ծովովք որոց դառն է ջուրք՝ նշանակին ազգք հեթանոսաց, որք բազում ալիս հալածանաց յարուցին ընդդէմ եկեղեցւոյ· Լայց այն ալիք եղեն աբանելի, զի որչափ յանախ եղեն և զօրաւոր՝ այնչափ բազմացուցին զՀաւատացեալս, և առաւել ևս հաստատեցին զնա· Լամ դարձեալ նորին խոկ կայսերք, այսինքն ներսն, դամեհանոս ևն, որք թէպէտ իբրև աւլիք յարուցեալք կամէցան աբանելի ցուցանել զնա, բեանս ընդդէմ հաւատացելոց, բայց ոչ՝ որ աբան-

չելին է՝ ի բարձունս՝ նկուն արար զնոսա։
Լամբ". գետով իմանայ աստ զՀոգին Ա՛ծ, որ ամբարձաւ և ի յայն սաստիկ սիրեցեալ յաչխարհս, և հեղեալ ի հոգիս սիրց՝ ծաղկեցոյց ի նա զանազան շնորհս։ Լակ թէ յոգնակի զնէ՝ այն է վասն զանազանութեան պարգեւաց իւրոց, զորս բաժանմամբ բաշխեաց սրդւոց մարդկան։ Լաւ ի յայնէ այսոցիկ պարգեւաց՝ այսինքն յագդմանէ Հորհոյ Հոգւոյն սիրոյ՝ և և ի յայնէ ձաշաւունէ գրոյ՝ զօսանալ Ծովու եղեւն սքանչելի։ Որ լամբ". զոօսանօք ոչ իմանայ զալիս՝ որպէս է յայլ Թարգ", այլ զսփոփումն. քանզի սքանչելի սփոփումն և զուարճութիւն եղև ասէ՝ ի Հոգիս մանկանց եկեղեցւոյ, զոր Ծովու նմանեցուցանէ. կամ Թէ զուարճութիւն եղև խորհրդոց իմացակաւ նին՝ որ բարոյապէս ի Ծով օրինակի։
Ո երանաբար յարիցեն գեղք հրեղինք ի կատարած ի աշխարհիս ՚ս դանիելի։ Հարիցեն և առաքեալք իբրև գեղք ի գառել զերկոտասան ազգս իսրայէլ. և յայնժամ ի ձայնէ ջուրց բազմաց, այսինքն յօրհնութէ բազմութէ արդարոց՝ սքանչացոյին այսինքն զարհուրմամբ զարմացոյին ալիք գԾովսյին Ծովուն։ Կամ ընդ հակառակն, յայնժամ որք միանգամ յաչխարհի աստ իբրև զալիս Ծովու հոգմակոծեալ տառապէին վասն նոն՝ սքանչելի երևեացին։
Դարձեալ՝ ի հոսիլ և ի խառնիլ իմաստից նորոյ օրինաց ի հանդերձեալն ի Ծով ածային տեսութէ՝ ալիք ուսմանց Ծովու աշխարհիս հրեշ ինն երևեացին, և կամ իբրև ցնորք երազոյց համարեացին։
Լարոյապէս, զոօսանօք Ծովու նշանակին փորձութիք. և սորա սքանչելի լինին ոչ յինքեանս՝ այլ ի գործս իւրեանց՝ այսինքն յառաքինութէնս, որք ի փորձութէց ստացեալ լինին. և այս ի ձայնէ ջուրց բազմաց, այսինքն ի բանից ածային գրոց, կամ ի ձայնէ քարոզեաց, կամ ի գայթնոյն խղճի մտաց. յորոց այնպէս արամադրի Հոգւ մարդոյ, մինչ զի ի յառնել փորձութէց՝ նոքին իսկ փորձութիքը պատահեն ի նմա զառաքինութէնս. զի զորօրինակ չիւազդէլք ի բաղխմանէ ալեաց կուտին առ ափամբ Ծովու, սոյնպէս և առաքինութիք ի յառնել փորձու-

ԹԷ՚ց ՚ի սիրտ մարդոյ։ Ա՚ղբ քանզի զոր միանգամ ասաց մարգարէն՝ յայնմ ամենայնի սքանչելի երևի ՚ած՝ վասն այսորիկ յարէ զկնի, և ասէ։

Ե. Սքանչելի ես դու տէր ՚ի բարձունս. վէմայոյթ ՚ած մեծ յոյժ հաստատեաւ։

Սքանչելի ասի ինն վասն ունելոյ յինքեան զայնպիսի ինչ՝ որ անհաս է այլոց. եթէ այս ՚ի բնական և ՚ի բարոյական կարգի իցէ՝ ասի զարմանալի, և յոտնաւէնն անհաս լինել՝ ասի հիանալի. (բայց ՚ի սովորութէ երբեմն սքանչելի և այն կոչի. զորօրինակ մարդնիմն ՚ի բնական կարգի սքանչելի կարէ ասել՝ զի ունի զայնպիսի ձգուռն բևեռի, որ անհաս է մեզ յերկնել. յոր միտ մարգարէն սքանչելի լինել՝ ասաց զայնոսն ծովս. որպէս և ՚ի բարոյական կարգի սքանչելի ասի զդաստուածն վարուց, զի ունի զայնպիսի ինչ՝ որ անհաս է մըլի մարդկան ՚ի հետևիլ). բայց որպէս ասացաք, այսորիկ յաւէտ զարմանալի ասին քան թէ սքանչելի։

Իակ տիրապէս սքանչելի ասի այն՝ որ մտածի ՚ի վեր քան զկարգ բնութէն. յոր միտ դնի աստ այս բառս։ Օ՛ի յետ խոսելոյ մարգարէին զստեղծագործութէն աշխարհի, և զզարմանալի գործոց ջուրց՝ կամելով ցուցանել՝ թէ որ արարն զայս ամենայն, է ՚ի վեր քան զամենայն՝ և անհաս ամենայնի՝ սքանչելի դնել, յասէն։

Սքանչելի ես դու տէր ՚ի բարձունս։ Ի՚ր բառդ ՚ի բարձունս՝ երբեակի կարէ խմնգեալ լինել. մի՝ ըստ անհաս լինելոյ. զի որ բարձրացեալ է քան զամենայն՝ ոչ ևս հասեալ լինի, այսինքն ոչ ըմբռնի. և յայս միտ նոյն լինի ասել՝ անհաս լինել, և ասել՝ ՚ի բարձունս գոլ. որպէս թէ ասէր. սքանչելի ես դու տէր վասն անհաս գոլոյ յաթոռոյդ, Երկրորդ՝ ըստ գերազանցեալ գոլոյ քան զամենայն. և յայս միտ կամի ասել. սքանչելի ես դու ՚ած, զի յամենայնի գերազանց ես։ Երբորդ՝ ըստ փառաւորելոյ յերկինս. յոր միտ կամի ասել. դու փառաւորեալ գոլով յերկինս՝ սքանչելի ես ՚ի նոյն։ Չ՚ըստ այսմ թէպետ և առ ամենեսին է ՚ած սքանչելի, բայց առաւել ևս առ երկնաւորս.

զի նորա ժառանգելով զա̃ծ՝ զարմանալի իմն օրինակաւ սքանչանան ընդ նա ըստ ամենայն կատարելութե̃ց նորա, այսինքն ըստ ամենակարողութե̃ն՝ որով արար զաշխարհս, ըստ ամենահայեաց տեսչութե̃ն՝ որով խնամէ զարարածս, ըստ ամենացանկալի քաղցրութե̃ն՝ որով երանելի առնէ զնոսա, ևն։ Զի թէպէտ զայս ամենայն տեսանեն յա̃ծ՝ բայց վասն անսահման գոլոյ այսր ամենայնի՝ սքանչանան եւս, եւ լցեալ ցնծութբ̃ օրհնեն զնա. որով եւ ճշմարտապէս սքանչելի լինի ա̃ծ առ նոսա։ Իսկ մեք զուրկ գոլով ՚ի ժառանգութե̃ն ա̃յ՝ զայս եղանակ սքանչանալոյ ոչ ունիմք, այլ ըստ հաւատոց միայն. զի հաւատով գնամք ըստ առաքելոյն. (բ̃. կոր. ե. 7.) քանզի առանց տեսանելոյ՝ հաւանիմք այնմ ամենայնի, զոր աւանդեաց մեզ ա̃ծ։ Զայս ակնարկելով մարգարէին՝ յարէ զկնի, եւ ասէ։

Վկայութիւնք քո եղեն յոյժ հաւատարիմ։ Վկայութիւնք իմացեալ լինին աստ՝ այն ամենայն բանք՝ զորս ՚ի գիմաց ա̃յ խօսեցան մարգարէք՝ եւս եւ առաքեալք։ Այսմ ամենայնի ասէ՝ մեք հաւատացաք. եւ այն՝ յոյժ, այսինքն ըստ ամենայնի, եւ առանց իրիք տարակուսութե̃։ Զի եթէ հեթանոսք հաւատան վկայութե̃ց դիւրապատիր հեղինակաց իւրեանց, ապա մեք զիարդ ոչ յոյժ հաւատասցուք վկայութե̃ցն ա̃յ՝ զորս աւանդեցին մեզ ծառայք նորա հաստատուն եւ ցուցմամբ սքանչելեաց։

Արդ այս հաւատալս զոր դնէ աստ մարգարէն՝ հայի նախ մասնաւորապէս յայն՝ զոր ասաց ՚ի վերոյ վասն ստեղծագործութե̃ աշխարհի. ե̃ որում աւանդեաց զայն մովսէս այրն ա̃յ՝ վկայութեամբ բազմապատիկ հրաշից. եւ ըստ այսմ կամի ասել. զոր միանգամ ասացի յօրհնութե̃ս յայսմիկ՝ ճշմարիտ է, զի դու ինքն յայտնեցեր զայս ամենայն ՚ի ձեռն մովսէսի. եւ մեք զոր լուաք ՚ի քէն՝ հաւատացաք յոյժ. որով գրեթէ պատասխանի տայ մարգարէն այնմ, զոր հնար էր ումեք առարկել ընդդէմ իւր, թէ ուստի գիտես զայդ զոր ասես վասն ստեղծման աշխարհի. որում պատասխանէ. վասն զի ա̃ծ վկայեաց։

Զսոյն առնէ եւ պետրոս առաքեալ ընդդէմ այնա

ՅՒՆԴԱՒ· ԴԲ· ՝ ՝ ՝

Ձ. Տա՛ւ Տէր վայելել սբբուհիսն պէս՝ ընդ երկայն ա-
ռաքս։

Վերջ՛ի եդ՝ թէ՝ ասե զծանուցուլ զարքայածս հաս-
տեաց նոր իմն թագաւորութիւն, որով և եղոյց զվայ-
ելչութիւն և զզօրուն իւր առ արտաքս։ Այլ զի չայս-
պիսի մեծի թագաւորութիւն արժան էր կառուցանել
և վանն իւր սքանչելի իմն պալատ առանձինն, զայն
և ասէր ասե՝ եթէ՝ յերկինս և եթէ յերկրի։ Իսկ
թէ ո՛րպիսի ինչ պարտ էր ընծայիլ այսմ պալատանն՝
յայտ առնել ասելով։

Տա՛ւ Տէր վայելել սբբուհիսն պէս՝ ընդ երկայն առաքս։
Սրբութիւ իմացեալ լինի ատ՝ նախ կատարելութիւն
անբծութիւն կամ անարատութիւն. երկրորդ՝ վայելչու-
թիւն բարձրութիւն փառաց. երրորդ՝ յարգութիւն գերա-
գոյն արժանապատուութիւն, և չորրորդ՝ ընծայութիւն
սբբազան իրի, որպիսի են պատարագք, նուիրմունք,
ետ։ Այս ամենայն ասե վայել է տան քում աեր ընդ
երկայն աւուրս այսինքն միշտ, կամ ցորչափ կայ
տուն քո։

Այս տուն ոյ եթէ յերկինս մտածեացի՝ է սքանչելի
մեծութիւն արքայութիւն՝ յորում յայտնի ետ զփառս
իւր, և զզօրութիւն, ուր և քնակեցուցանէ զընտանիս
իւր, այսինքն զսբբս։ Ոչ այսմ տանէ իսօսելով բարու-
քայ ասէ * ոմ իսբայել. որպէս զի մեծ է տունն ոյ
... մեծ է և ոչ գոյ բաւ։ (բարօք. Ջ. 24.)

Իսկ եթէ յերկրի մտածեացի՝ տուն ոյ ասի տաձար
նորա, զի ի վերայ նորա կոչի անուն ոյ. անդ ցու-
ցանի ներկայութիւն նորա ի ձեռն սբբազան իրաց և
ի ձեռն պաշտամանց. անդ ընդունի ետ զաղօթս
հաւատացելոց, և անդ բաշխէ զշնորհս. ոչ զի կա-
պեալ է ընդ այն, կամ թէ արտաքոյ նորա ոչ առնէ
այսպիսի ինչ, այլ զի առաւել հաձի անդ առնել՝
քան արտաքոյ նորա։

Ընդ հանուր եկեղեցին ևս ասի այլաբանօրէն տուն
ոյ, ըստ որում միշտ ի նմա բնակի ետ, և միշտ ի
նմա պաշտի և երկրպագի, և միշտ ի նմա զբօսնու
իբրև յիւրում ժառանգութեան. որում և վայելէ
բերանոյ նորա՝ առ ՚ի մեռանել նմա այնու բանիւ. որ-
պէս արար օձն հին ընդ նախամայրն. որպէս արարին
և փարիսեցիք ՚ի մատչել նոցա նենգաւորք առ տէրն
մեր, և հարցանել զնա վասն տալոյ հարկս կայսեր.
զի եթէ ասէր քո՛ արժան է տալ, նոքա այսու բա-
նիւ որսային զնա, թէ ուրեմն սա չէ մեսիայն, զի մե-
սիայն գալոց է առ ՚ի ազատ կացուցանել զմեզ ՚ի հար-
կաց. իսկ սա ասէ թէ արժան է հարկս տալ. իսկ
եթէ ասէր, չէ արժան, նոքա այսու ևս որսային
զնա՝ թէ ուրեմն հակառակ է դա կայսեր։ Այլ քան-

զի այսու օրինակաւ ոչ կարացին որսալ զնա՝ եղէն իբրև որսորդք սատանայի, զի գիշերային գէտ եղէն նորա, և մատուէն անօրէն առաջնորդի իբրեանց որսացան զնա առ՝ ի սպանանել ոչ՝ ի ծածուկ. այլ յայտնի. զորմէ խօսի մարգարէն՝ ի յաջորդ հատուածդ ասելով.

ԱՒՐ զքարն անբիծ պարտաւոր առնէին՝ Ա՛յս ոչ քանի ըստ Ձարտասանից կոչի ձև խեղամտուէ, որով կրեւլին դնի փոխանակ կրողին, կամ մանն փոխանակ բնոյրին. ուստի և բառդ աբէն՝ դնի աստ փոխանակ ունողի արեան, և բառդ անբիծ՝ հայի յունաղն. և միտ բանին է այս, թէ զայր անբիծ և անպարտ արեան՝ պարտաւոր մահու առնէին. որ է ասել. առանց իբրանաց վճռելոյ՝ թէ մահապարտ է.

Օ այս գործեն և անօրէնն իշխանաք կամ դատաւորք՝ ի պէսպէս առիթս. զի կամ վա յափշտակելոյ վինչա անմեղին՝ պարտաւոր մահու ցուցանեն զնա, որպէս արար աբաւա՝ մանաւանդ թէ կին նորա յեզաբէլ ընդ նաբովթ՝ առ՝ ի յափշտակելոյ զայգի նորա (գ. թագ. իա. 1-14.) կամ վա հանելոյ զքէն իբրեանց՝ զոր յոյցեալ են վասն իրիք անօրէն պատճառս. որպէս արարին բարեբացիք ընդ դանիէլ. (դան. ղ. 13.) որպէս արար և ուսուբ ոստիկան ընդ սմաատ (պատմ. ը. 15.) կամ վասն ոչ կարելոյ և ոչ կամելոյ տանիլ բանից արդարոյն, որպէս արար հերովդիադա ընդ յովհաննէս. և որդիքն յակոբայ ընդ յովսէփ. (ծնն. լէ. 27.) որպէս արարին և իսրայէլացիք ընդ երեմիա, և ընդ այլ մարգարէս (գործ. է. 52. զուտ. ժ. 34. ևն.) և հուսկ յետոյ ընդ ինքն մարգարէից. զոր՝ ի խաւարի որսացան՝ ի պարտիզի. և պարտաւոր մահու ցուցին զնա սուտ բանիւք. ուրուք և կատարեցին զայս գործս.

Օ այս քանան առնել և դևք յորսալ նոցա խաբէութիւք զանպարտն և պարտաւոր առնել զնոսա յանիրաւութիւն. կան մահու. Ա՛յսպէս խաբէութիւք. զի այսպէս առնեն որսորդք. կէսնս տալ ցուցանեն՝ ի ձեռն խայծի, (որ է եմ). և՝ ի մահ ձգեն զորսն. Ցուցանեն և դևք տալ զաբրիս, ոչ զի տայցեն, այլ զի խաբեսցեն. Օ՛րինակ աբար՝ ի դրախտի քանաքարկուն սատանայ ընդ

եւայ. եցոյց նմա զանմահութիւն. ասելով * ոչ ե-
,, թէ մահու մեռանիցիք ‖. և որսացաւ զնա 'ի պար-
տաւորութեն մահու. զի * նախանձու բանսարկուին
եմուտ մահ յաշխարհ ‖. (իմաստ. բ. 24.) Եցոյց
նմա զածութեն ասելով * լինիցիք իբրև զած ‖. և որ-
սացաւ զնա 'ի հաւասարութեն անասնոց. * մարդ 'ի
,, պատուի էր և ոչ իմացաւ. հաւասարեցաւ անաս-
,, նոց անբանից, և նմանեցաւ նոցա ‖. (սաղ. խը.
11.) Եցոյց նմա զամենայն գիտութեն բարւոյ և չա-
րի՝ ասելով * ճանաչել զբարի և զչար ‖. (ծնն. գ.
5.) և որսացաւ զնա 'ի կուրութեն. * խաւարեցան
,, անմտութբ սիրտք նոցա ‖. (հռովմ. ա. 21.) և
թէ * ամենայն մարդ սուտ է ‖. (սաղ. ճժե. 2.)
Խոստանան դեք և այլոց բազում ինչ, մինչև որսա-
ցին. բայց ոչ ինչ տան. զի ոչ ինչ ունին 'ի բարեացն
զորս խոստանան. քանզի յամենայնէ մերկացան. * մեր-
,, կեաց զիշխանութիւնս և զպետութիւնս ‖. (կող. բ.
15.) Մերձեցաւ իշխան նոցա առ քս, և ասէ ցնա.
իմ է ամենայն մեծութեն, ում և կամիմ տամ. տամ
ահա և քեզ զամենայնն՝ եթէ երկիրպագանիցես ինձ.
(ղուկ. դ. 5-7.) Տեսանես՝ թէ զինչ խոստանայ. և
որպիսի խաբէութբ որսալ ջանայ. զի զոր չունէր՝ իւր
համարէր. բայց թէ և իւր էր, ոչ տայր. զի թէ
տայր զամենայն՝ զինչ մնայր ինքեան. նա զի՝ յիմար
է որ կամիցի տալ զամենայն ծառայս իւր առ 'ի շա-
հիլ զմի միայն ծառայ: Պատառ մի հացի ոչ ունէր՝
մատուցանել առ քս 'ի խաբել. քար մատոյց նմա.
ոչ խնդրեաց փոխարկել զքարն յազնիւ ինչ ուտելի,
այլ 'ի հաց, զի յայնմանէ եւս զուրկ էր. նաև զի ոչ
ինչ էր փոյթ նմա զհամագամ ուտելեաց, շատ հա-
մարէր ինքեան փոքումբ խաբել զքրիստոս. զի որ-
պէս ասեն ոմն հարք. եթէ սատանայն կարացէ փո-
քումբ որսալ զմարդ, ոչ հոգայ զպատուականօք. Ե-
թէ քար մատոյց քսի, զինչ ունիցի մատուցանել այ-
լոց. չունի՝ զինչ մատուցէ. եթէ արդարև ունէր՝
միթէ ոչ տայր ծառայից իւրոց:
Յայսմանէ յայտնի ստի կարծիք նոցա՝ որք ասեն,
թէ սատանայն տէր է կորուսեալ իրաց և ծածկեալ
գանձուց, եթէ տր էր նոցա, տայր անտի այնոցիկ՝

զորս ծառայեցուցանէր ինքեան, բայց չունի ինչ տե-
րութիւն. ցուցանել միայն ունել՝ առ ի խաբել և որ-
սալ զարիւն անպարտ, և պարտաւոր առնել զնա
մահու. Ո՛վ որ ապաւինեալ է յԱստ՝ օգնական իւր
ունելով զնա՝ զերծանի ի խաբեութենէ նորա. յայս
ակնարկելով մարդարէին՝ յարէ զԿնի, և ասէ.

Ե. Ա՛ղէ սէր ապաւէն իմ. աճ օգնական յաւուր իմում։

Ո՛ճ բազում օրինակաւ լինի ապաւէն և օգնական
արդարոյ. երբեմն յառաջ քան զպարարիչն ի վտանգ,
երբեմն ի պարարիչն, և երբեմն յետ պարարման. և
Թուի Թէ ասաց ըստ միջնոյն և ըստ վերջնոյն խօսի
յասելն։

Ա՛ղէ սէր ապաւէն իմ. աճ օգնական յաւուր իմում։ Կամ ա-
սել. յորժամ որսացեալ եղէ յանօրինաց, և պարա-
բեալ եղէ ի վտանգ մահու. ասէ՝ որ տէրն է կենաց
և մահու, եղիւ իմ ապաւէն՝ պահպանեալ զիս ի չար
կամաց նոցա. և եղիւ օգնական յաւուր իմում. այսինքն՝ ի
յուսալ իմում առ նա՝ օգնեաց ինձ՝ ազատեալ զիս ի
մահուանէ անտի. որովհետև պարտաւոր կացուցին զիս։
Կամ հայելով առ քո՝ այս ապաւէն և օգնական լի-
նելս եղիւ յայսմ՝ զի Թէպետ և տիրասպան հրէայք
մատնեցին զնա մահու, բայց նա այնու մահուամբ
սպան զմահ. և յարուցեալ ի մեռելոց կենդանացոյց
զազգ մարդկան, և ազատեաց զնոսա ի յաւիտենա-
կան մահուանէ։ Ո՛վ այս ամենայն եղեալ մարգարէին
առաջի մատուցանէ ի վերջոյ և զայն, զոր ունէին
գտանել ամբարիշտք. այսինքն է հատուցումն ըստ գոր-
ծոց իւրեանց յարդար իրաւանցն այլ. վասն որոյ ասէ։

Ի՛ն. Ա՛ռաւօտեան նոցա սէր ըստ անօրէնութեան նոցա. ըստ
յաղագս նոցա խորհանեսցէ զնոսա սէր աճ մէր։

Ո՛վ որ միանգամ գործեն ամբարիշտք ընդ արդարս՝
համարին նոքիմիք ձեռնասէր նոցա, և չահիլ ինչ ան-
ձանց իւրեանց. բայց ամենևին ընդհակառակն լինի
յերում. վասն զի նովին չարժեն զնա ի գութ ի
վերայ արդարոց, և ի բարկութ ի վերայ իւրեանց.
և այն զոր համարէին ի ձեռն նոցա դառնայ ի շահ

նոցին, և զոր համարէին շահ անձանց՝ լինի նիւթ
ձեռաւոյ իւրեանց. զի ոճ որ է դատաւոր արդար,
ոչ պատչայան լինի արդարոց, և հատուցանէ վարձս
ըստ համբերութեանն նոցին, զորոց խոսեցաւ մարգա-
րէն՝ ի վերոյ, սոյնպէս վերաժխդիը լինի ամբարշ-
տաց, և հատուցանէ նոցա ըստ չար գործոց նոցին։

Ցայսոսիկ Հայելով ասէ։

Ապաքէն նոցա տէր ըստ անօրէնութեան նոցա եւ։ Այս-
ինքն ոճ որ տէր է արդարութեան, հայեցեալ ի գործս
ամբարշտաց՝ առնէ զայս ի ձեռս, և մատուցանէ ի
փորձաքար դատաստանի իւրոյ. և տեսեալ ի նոսա
զանօրէնութեանն նոցա, զամբարշտաց ասեմ, հատուց-
ցէ նոցա զպատիժս ըստ անօրէնութեան նոցին։ Այլ զի
նոքա կամէին յաղթահարել զարդարս, և արկանել
զնոսա ընդ իշխանութեանէ իւրեանց, կամ ընդ չար կա-
մաց իւրեանց, ոճ կործանեսցէ զնոսա եւ չարութեանն
նոցին. և զոր նոքա կործանել կամէին՝ բարձացուս-
ցէ զնոսա ի փառս։ Աղբիւրք զինի եղեալ կողոպտի
ընդդէմ այնոցիկ՝ որք ասէին, Թէ չիք կատարին չա-
րիք. * եթէ (ասէ ի գԼ. Ժ.) ոչ կամաք գործէիմ
,, այնպիսի չարիք, ընդդէմ ի գործողացն չարեաց
,, վերածս պահանջէ։ Այս Թէպէտ որք չարքն են՝ ան-
իրաւ համարին զվերաժխդրութիւնն ոչ, բայց այս հա-
մարեաւն նոցա է ի չարութենէ նոցին. վասն զի որպէս
գրէ նոյն կողոպտին ի յիշատակել տեղեաց, * այն-
,, պիսի են բարք չարագործաց՝ զիրաւունսն (որով
,, պատժին) անիրաւութիւնս ասէլ։ Այս Թէ ոչ
ոճ գոլով բարի և բարեբար՝ չոչ ինչ խիթ անիրաւի,
և ոչ ումեք երբեք չար ինչ կամի. զի * ի բարին և
,, ի բարեբարն (ասէ նա ինքն կողոպտին անդ) չա-
,, րութիւն ինչ ոչ մերձենայ։ Այ Թէ չար ինչ ոչ գտանի,
կհատեալ արժան է ասել, զի մարգարէն ոչ ասէ՝ հա-
տուցէ նոցա տէր ըստ գործոց նոցա. որպէս դնէ
այլուր, այլ ըստ անօրէնութեանէ նոցա և ըստ չարու-
նոցա. վասն զի ոճ ոչ վասն այսոցիկ պատժէ զամ-
բարիշտս, վասն զի գործեցին, այլ զի զանօրէնութեանէ
գործեցին, կամ անօրէնութեանէ գործեցին, և չարու-
թեանէ կատարեցին զկամս իւրեանց։

Ապաքէն զքո՞ր մեր ի մահ մատնեաց յուդայ, ի

մահ մատնեաց և հայրն երկնաւոր. և ահա վ՟ այսր մատնութեան զմիոյն գոհանամք, և զմիւսոյն գանգատեմք. գոհանամք զհօրէ ասելով. մեծ եղև սէր նորա առ մեզ. զի *յիւր որդին ոչ խնայեաց, այլ վ՟ մեր ամենեցուն մատնեաց զնա‖. (Հռովմ. Ը. 32.) և ընդ հակառակն անիծանեմք զյուդայ, զի չարութ՟ե և վասն խրոյ շահու մատնեաց զնա: Ուստի և ա՟ծ 'ի դատելն զամբարիշտս և զարդարս՝ հատուցանէ ոչ սոսկապէս ըստ գործոց նոցա, այլ ըստ չարութե՟ն և ըստ բարութե՟ն գործոց նոցին:

Վասն զի յայտ է թէ մի և նոյն գործ կարէ լինել բարի, կարէ լինել և չար ըստ պարագայիցն, եթէ բարի՝ բարի, և եթէ չար՝ չար. ուստի գրէ եզնիկ կողբացի. (գլ. Ժ.) *յայտ է թէ ասէ ինքն (յայն-
,, ժամ լինին բարիք՝ յորժամ ըստ օրինացն կատա-
,, րին. և) չարք յայնժամ լինին, յորժամ պէտքն օ-
,, րինօք ոչ վճարին ... (զօրօրինակ) եթէ զճշմա-
,, րիտ ա՟ծ որք պաշտիցէ՝ գործ աղնուական գործէ.
,, ապա եթէ թողեալ զճշմարիտն՝ քարանց և փայ-
,, տից պաշտօն մատուցանիցէ, անհնարին վնաս գոր-
,, ծէ. զի (թէպէտ նոյն պաշտօն է, բայց) զօրինակ
,, պիտոյիցն յանպատեհ իրս դարձոյց ... (և դար-
,, ձեալ) որ պարգև 'ի մ՟նէ առնուցու՝ ոչինչ չա-
,, րութի գործէ. իսկ որ բռնաբար յանաւագէն հա-
,, նիցէ՝ չարութի գործէ. առնուլն երկոցունց նոյն
,, է, բայց օրինակ առնլոյն ոչ նոյնպիսի‖:

Ուրեմն և ա՟ծ 'ի հատուցանելն ոչ հայի լոկ 'ի գործն, այլ 'ի բարութի կամ 'ի չարութի գործոյն. և այն ևս ոչ ըստ այնմ չափու՝ որ հայի 'ի գործն, ըստ որում է չափաւոր ինչ, այլ ըստ այնմ չափու՝ որ հայի 'ի չարութի կամ 'ի բարութի գործոյն. և զի չարութի գործոյն լինելով ընդդէմ ա՟յ՝ ունի յինքեան ըղբարոյական ինչ անչափութի, վ՟ որոյ արժանի առնէ զառնօղն անչափ պատժոյ, այսինքն է յաւիտենականին: Նոյնպէս և բարութիւն գործոյն որովհետև յառաջ գալով 'ի շնորհաց հոգւոյն ս՟բյ և հաղորդ գտանելով արդեանցն ք՟սի ունի յինքեան զփաղանշանութի ինչ բարոյական անչափութե՟, արժանի առնէ զառնօղն անչափ վարձուց 'ի կեանսն յաւիտենականս:

ՍԱՂՄՈՍ ՂԴ.

Յորդորումն խրախուսանաց յօրհնութիւն եւ ՚ի պաշտօն փառացն այ, ուրախ լինելով առաջի նորա. եւս եւ ազդարարութիւն ՚ի լսել ձայնի նորուն, եւ մի խստանալ սրտիւք, որպէս արարին որդիքն իսրայէլի յանապատի։

Օրհնութիւն գովութեան ՚ի Դաւիթ։

1 Եկա՛յք ցնծասցուք ՚ի տէր. աղաղակեսցուք առ ած փրկ-
չին մեր։ 2 Կանխեսցուք առաջի նորա խոստովանու-
թեամբ. սաղմոսիւք աղաղակեսցո՛ւք առ նա։ 3 Զի ած մեծ է տէր.
թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի։ 4 Զի ՚ի ձեռս նորա են
ամենայն սահմանք երկրի, եւ բարձրութիւնք լերանց նորա են։ 5
Զի նորա է ծով՝ եւ նա արար զնա, եւ զցամաք ձեռք նորա ստեղ-
ծին։ 6 Եկա՛յք երկրպագեսցուք նմա. անկցո՛ւք եւ լացցուք ա-
ռաջի տն արարչին մերոյ։ 7 Զի նա է տէր ած մեր. մեք
ժողովուրդք ձեռին նորա, եւ խաշն արօտի նորա։ 8 Այսօր
եթէ զձայն նորա լուիցէք, մի խստացուցանէք զսիրտս ձեր՝ որ-
պէս ՚ի դառնութեան։ 9 Յաւուրն փորձութեան յանապատին. ուր
փորձեցին զիս հարքն ձեր, քննեցին զիս՝ եւ տեսին զգործս իմ
զքառասուն ամ։ 10 Զզուեցայ ընդ ազգին ընդ այնմիկ, եւ
ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք. եւ նոքա ո՛չ ծանեան զճա-
նապարհս իմ։ 11 Որպէս երդուայ ՚ի բարկութեան իմում. թէ
մտցեն ՚ի հանգիստ իմ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Հրդեհուրիւն գովեստեան ի գաւիթն։



ԳԵՐԱՐԺԱԿԱՆՆ ԼԻՒ Ի ՔՐԻՂ դիականն վերնագիրը ինչ ոչ դնի յայս սաղմոս. որոյ վասն յօրինակս ինչ եւս Թանանցից յաւելեալ լինի անվերապէր հեերոյեցոց. որպէս դնի և՝ ի տպագրեալ սաղմոսս մեր, և՝ ի լատ՛. իսկ յայլս առ հասարակ գրի ըստ այնմ՝ զոր եդաք. այսինքն է օրհնութիւն գովեստից ի գաւիթն, որ նշանակի՝ Թէ այս սաղմոս ասացեալ է ի դաւիթայ երգել ձայնիւ օրհնութեան՝ առ ի յորդոր ժողովրդեան՝ գովելոյ զնա և փառաւորելոյ զնա։

Կազումք ի հրեից համարին՝ Թէ զայս սաղմոս ասացեալ էցէ մովսէսի մօտ ի կատարած կենաց իւրոց յետ քառասնամեայ ճանապարհորդութեան անապատի, ըստ որում ի համարն 8, և որ զինի՝ յիշելն անդր ինչ այնր ճանապարհորդուե. իբր Թէ զիարդ ժողովուրդք խորայելի խստացուցին զսիրտս իւրեանց, փորձեցին զնա և՛. որպէս տեսանի ի գիրս Թուոց. (ԺԴ. 22։) և ելից. (ԺԷ. 2-7.) և՛ն. զորս և յառաջ բերէ պօղոս (յերբ. Գ. 7 և Դ. 3։) Կամ այս կարծիք լուսին ինչ հաստատութեան։

Կան և որք զայս սաղմոս ասեն յօրինեալ ի դարձի գերութեանն բաբելացւոց առ ի յորդոր ժողովրդեան։ Քանզի այլք առհասարակ դաւիթ տան զսա, որպէս և առաքեալն պօղոս, որ յանուն նոր բերէ զանս սորա։ Կամ Թէ յինչ առԹէ իցէ ասացեալ դաւիթ՝ բաց զումն կարծիք. ոմանք ասեն Թէ զայս երգեաց նա ի բերելն զտապանակն ի տանէ աբեդդարայ գեԹացւոյ ի իորանն՝ զոր արար նա ինքն դաւիթ ի սիոն (Բ. Թագ. Զ. 11-18։) Կազումք և սմանեն Թէ զայս ասաց դաւիթ հայելով ի գործսն, զորս ունէը առնել յուխտ արքայ յուդայ ի սրբել նորա

գտուն ՚ձեռն. զորմէ երկար գրի ՚ի ՟ի· գիրս Թագ՚. (գԼ· իբ՟· և իգ՟·) նոյնպէս և ՟ի· ինաց՚՚· (լՀ՟· և լՁ՟·) Յայս կարծիս գոլով և վարդանայ՝ գրէ այսպէս. * ովսիա քարեպաշտ Թագաւոր սրբեաց ՚ի կռապաշ-
,, տութենէ զիսրայէլ· և հաւաքեալ զամենայն ժողո-
,, վուրդն ասէ՝ եկայք ցիծասցուք ՚ի տէր ձեզ՚՚· Լայց ոչ կայ ինչ հարկ յայդ վերածելոյ զսա· զի է պարզ յորդոր ժողովրդեան յօրհնութենէ ՚ին, և ՚ի գործմանառաջ։

Հաղուագ ևս ՚ի բարեհնեացն հրէից հաստատեան՝ Թէ այս սաղմոս ասացաւ ՚ի գաւեթայ հայելով ՚ի ժամանակ մեսիային. իբր զի ՚ի գալ նորա՝ անսպյգեն նմա իսրայէլացիք. և մի իբրև զհարս առաջինս խոստացուսցեն զսիրոս իւրեանց. յայս միտս են և թագուագք ՚ի սքց հարց՝ հաստատեալ ՚ի վկայուեն առաքելոյն, որ ՚ի սոյն սակս յառաջ բերէ զսա այսր սաղմոսի առեալով· (եբր· ՟ի· 5-12։) * ՚՚Ովսիա հաւատարիմ է
,, ևն ... Ա՚ որպ այսպէս ասէ հոգին սրբ· այսօր
,, եԹէ ձայնի նորա լուիցէք, մի խստացուցանիք զը-
,, սիրտս ձեր իբրև ՚ի գաստութեն յատուցն փորձու-
,, Թեն յանապատի. ուր փորձեցին զիս հարքն ձեր.
,, քննեցին զիս՝ և տեսին զգործս իմ զքառասուն
,, ամ. վասն որոյ տարակացայ ազգիս այնմիկ, և
,, ասացի, միշտ մոլորեալ են սրտիւք. և նոքա ոչ
,, ծանեան զձանապարհս իմ. որպէս երդուայ ՚ի բար-
,, կութենէ իմմէ՝ Թէ մտցեն ՚ի հանգիստ իմ։ ՚ՁԷ-
,, ւէք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի յումեք ՚ի ձէնջ
,, սիրտ չար անհաւատութեան՝ ապստամբ լինել յՅՀ
,, կենդանւոյ՚՚։ Ա՚յլ քանզի ՚ի մեկնել մեր զսան սաղմոսիս՝ ինքնին կարէ վերածել ՚ի դէմս մեսիային այսինքն քեզ, սակս իրի ընթերցողաց Թողումք կատարել զայս գործ։

ԲՆԸՆ

ՈՒ. Աչեայ ցնծասցուք ՚ի պէր. աղաղակեսցուք առ ՅԾ էըհիւ մեր։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Աայս խրախոյս բանի է իբրև բոց բորբոքեալ սրտի առ Ծած, զոր առաջի մեր ցոլացուցանէ մարգարէն ՚ի լուսաւորել զմիտս մեր և ՚ի ջերմացուցանել զկամս. որպէս զի զգաստութիւնք մտաիցուք առ Ծած, և վառեալ սիրով օրհնեսցուք զնա։ Եւ զայս առ ՚ի դիւրաւ տպաւորելոյ ՚ի մեզ՝ զախորժելին մեր առաջի դնէ՝ այսինքն զցնծալն, ասելով։

Աչեայ ցնծասցուք ՚ի պէր։ Հառաս եւայ՝ դնի աստ ոչ միայն իբրև հրաւիրական, այլև իբրև յորդորական կամ շարժողական՝ ՚ի միասին ցնծալոյ. զի այս բառ յայսպիսի տեղիս՝ իբրև շարժիչ դնի առաջի՝ հայեցողի ՚ի մեծութիւն այնը, առ որ հրաւիրեալ լինի. որպէս որք կամին զառաջինն կանգնել զքաղաք, առ ակին ցմիմեանս. * եկայք չինեսցուք մեզ քաղաք և ,, աշտարակ ։ (Ծնն. ժա. 4.) որով ոչ եթէ զմիմեանս կոչէին ՚ի չինուելիսն, այլ զմիմեանս շարժել կամէին։ Հայսպէս և մարգարէս եկայք ասելով՝ կամի շարժել զմեզ ՚ի միասին օրհնել զնա. և զի մի կարծեսցուք՝ թէ ձանձրալի ինչ է այն՝ ասէ ցնծասցուք. այսինքն ուրախասէր հոգւոյ մատիցուք առ Ծած. որպէս թէ ասէր. ոչ է մեզ արժան տրամել և դառնութիւն ներկայանալ առաջի այսպիսի թագաւորի, այլ քերկրալից սրտիւ. և արդարև զինչ օրհնութիւն կարիցէ բղխել ՚ի սրտէ անտի՝ որ տրտմութիւն նէխեալ իցէ և հոռեալ. իսկ ՚ի մաւժիչն զուարթութիւն՝ յայտ է թէ բղխէ ձայն օրհնութեան. յոր հայելով յարէ զինի և ասէ։

Աաշակէսցուք առ Ծած էրէնէ մեր։ Որպէս գետ յորդահաղաց ՚ի գլանէն զուարթութիւն ՚ի ծով՝ կարկաչե-

լով ընթանայ. այսպէս և սիրտ մարդոյ յորժամ յորդառատ զուարթութբ դիմէ յօրհնութիւն այ՝ մեծաձայն աղաղակելով բերէ առ նա իբր առ ովկիանոս ուրախութեան : Եւ զայս մեծութիւն աղաղակի մի իմասցիս ըստ սաստկութեան գոչման կամ ըստ բարձրութեան բարբառոյ, այլ ըստ սաստկութեան զգածմանց սրտի, յորմէ շեղեալ լինի և ընդ բերանն ձայն բերկրալից օրհնութեան. զի որպէս բոցն յառաւելուլն և 'ի ցոլանալն սաստկութբ՝ ձայն հանէ, այսպէս և սիրտ լցեալ ածային բերկրութբ յօրհնելն զած ձայն արձակէ : Զայս թէպէտև արժան է մեզ առնել յամենայն ժամու, բայց առաւել ես յառաւօտուն պահու.
վասն որոյ յարէ զկնի և ասէ :

Բ. Կանխեսցուք առաջի նորա խոստովանութբ. սաղմոսիւք աղաղակեսցուք առ նա :

Կանխել առ ած յառաւօտու՝ բազում իրօք պատշաճ և հարկաւոր ցուցանի. մի՝ զի յայնժամ զգայութիւնք մեր դեռ ամփոփ կան և չեն ցնդեալ յառարկայս իւրեանց. որով մարթ է մեզ զգաստութբ կալ առաջի այ. երկրորդ՝ զի այն լինելով առաջին գործ աւուրն՝ լինի իբրև դրօշակ մեր՝ 'ի ցուցանել թէ մեք յառաջ քան զամենայն կամիմք մատուցանել արարչին մերում զպաշտօն ծառայութեան մերոյ. երրորդ՝ զի այնու ձօնելով զանդորրութիւն զգայութեանց մերոց 'ի գութ շարժեմք զած 'ի վերայ մեր. և դիւրաւ առնումք 'ի նմանէ զխնդրուածս մեր :

Եւ թէպէտ ոչ յիշի աստ բառդ առաւօտ, բայց իմացեալ լինի ընդ բայիւս կանխեսցուք՝ ըստ պահանջելոյ մտաց բանին՝ 'ի ցուցանել՝ թէ յառաւօտու յառաջ քան զամենայն պարտ է դիմել առ ած : Զայս նաև առ որդիս աշխարհիս այսօրինակ տեսանեմք. զի բազում անգամ կանխելով նոցա առ իշխանս կամ առ թագաւորս վաղ ընդ առաւօտս՝ դիւրաւ պատահին խնդրուածոց իւրեանց. որպէս զհամանայ պատմի. (Եսթեր. Զ. 4 :) Եթէ առ մարդիկ այսպէս, քանի ես առ ած. վասն որոյ յորդորէ մարգարէն ասելով :

Կանխեսցուք առաջի նորա խոստովանութբ. սաղմոսիւք աղա-

ղպէնսցուած առ նա։ Ասի ասէ. յառաջ քան զյառնել մարդկան ի ծառայութեն իւրեանց կամ յառաջ քան զկանխել այլոց՝ մեզ կանխեացուք յառաւօտու յանդիման լինել առաջի նոյ խոստովանութեն՝ այսինքն օրհնութեն և գոհութեն. և սաղմոս ասացուք նմա աղաղակելով, այսինքն յանձնայն սքանչելոյ կարգալով առ նա։ Ոգեւորապէս, այս կարէ հայել և ի կանխուն աւրհնութեն՝ որպէս ել ասէր. Մինչեւ հասեալ ի ժամանակ դատաստանի և վրէժխնդրուէ մեզաց մերոց՝ մեզ աշապարեացուք խոստովան լինել նմա զմեզս մեր. և սրբեալ լինելով ի մեզաց՝ սրբութեն գոհութեն մատուսցուք նմա. (սիրաք. ժե. 9։) Նոյս միտ մեկնեն բազումք ի նոր հարց զայս բան՝ իբր յարմարութեն. բայց առաջին մեկնութեն երեւի լինել ըստ նկատողին, այսինքն է կանխել՝ ի գոհութեն և յօրհնութեն՝ ոյ, ընդ նմին և ի ինդրուածս քաւուն մեզաց. որպէս է տեսանել ի գիշերային պարեհին, և ի քաղցրոյն պարեհոգեալս. և ի մեկն լսեմք". Աղէտ քանզի յորդորեաց մարգարէն կանխել առ նմա օրհնութեն, այժմ առաջի մատուցանել՝ զարժանաւորութեն այսր գործողութեն, ի մէջ բերելով զպատճառ և գնիւթ այսպէս առնելոյ. վասն որոյ յաբէ զկնի և ասէ։

Ջ. Զի մեծ է աեր. Խոփառէ մեծ ի վերոյ ակնայն երկրի։

Լայ քան՝ նոյնպէս և յաջորդք սորա, զորս գնի ի համարն 4. և 5. կրկնակի յարին ի նախընթացն. մի՝ որպէս ասացաք իբրև պատճառ կանխելոյ մեր առ նմա. որպէս թէ եգեալ էր. արժան է կանխել առ նմա՝ զի նա մեծ է նա։ Երկրորդ՝ իբրև նիւթ օրհնութեն. որպէս թէ եգեալ էր. կանխեացուք առ նմա, և օրհնեացուք զնա, և յօրհնէն մեր ասացուք, նմա մեծ է ի։ Այլ քանզի կիրք" և այլ ամենայն թարգ", նոյնպէս և ի լամբ" գնի աստ պատճառական շաղկապս զի, պատշաճագոյն է համարիլ զայս իբրև պատճառ քան իբրև նիւթ, յասելն։

Ջ. Զի մեծ է աեր. Խոփառէ մեծ ի վերոյ ակնայն երկրի։ Ասի ասէ. Նա զոր մեք կոչեմք տէր կամ Եհովա, է նա մեծ. զի զոր ինչ և կարիցէ միտք ըմբռնել քան

զայն ամենայն մեծ է ՝ուժ , եւս և քան զնոսա՝ որք ՝ուժք
կոչին ։ Այնպէս և քանի՛ մեծ իշխանութիւն կայցէ և
ինքնակալ թագաւորութիւն ՝ի վերայ երկրի , քան զա-
մենեսին զայնոսիկ՝ թագաւոր մեծ է ՝ուժ ։

Ամէ՛ն՝ զայս ամենայն որպէս և դիւրաւորդ բանան ՝ի
դէմս քո՛ի վերածել , ցուցանելով թէ՝ արժան է մեզ
կանխել առ նա՝ զի նա է ՝ուժ մեր և թագաւոր ։
* Օ՛ի թէ՝ (ասէ՝) մարմնաւոր թագաւոր զայս պա-
,, հանջէ ՝ի պաշտօնեից , զկանխելն առաջի նորա ՝ի
,, պաշտօն , հրաւառակիւ լինել յաղթութեաց նորա ,
,, և գոհացողք երախտեացն և խնդրող կարօտութեն .
,, ապա օ՛րշափ եւս առաւել ՝ուժ , որ մեծն է քան զա-
,, մենայն մեծս , և թագաւոր ՝ի վերայ ամենայն երկ-
,, րի , յորոյ մնասուն տիրին մարդիկ և թագաւո-
,, րեն ։ Ա՛րդ՝ խոստովան լիցուք ընդ մարմնով թա-
,, գաւորեացն նորա , և զընական տէրութիւն ՝ուժութեն ։ ։
Ամէնքո՛վ սոպա մարգարէին ցուցանել զմեծութիւն տէ-
րութեա՛ն և զօրութեա՛ն ՝այր՝ զինչ և ասէ ։

Ճ. Ահա՛ յիւ՝ սա նորա են ամենայն պէտքն երկրի . և բարձ-
րութիւ՛ն լերանց նորա են ։

Ճ. Ահա՛ է ծով՝ և նա արար զնա . և ցամաք յիւ՝ սա նո-
րա ստեղծին ։

Զհռամբքն ՝այ խնայեալ լինի ասա ամենակարողին
նորա ՝ի գոյացուցանելն և ՝ի նախախնամելն զամե-
նայն . իսկ յոգնակի դնելն ցուցանի լինել ըստ փա-
դանչանելոյ ձանաչողութեա՛ն և կամեցողութեան . յորս
ըմբռնի ամենակարողութեա՛ն ՝այ . զորմէ՝ ասացեալ է
մեր պյուռ . և զի ամենայն որ ինչ է յամենակարողու-
թենէն ՝այ , ՝ի նմին ամենակարողութե՛ն նախախնամել
լինի , վասն որոյ ասէ ։

Ճ. Ահա՛ յիւ՝ սա նորա են ամենայն պէտքն երկրի ։ Ի՛սաւս տիւ-
զերք ՝ի հաստարակ գործածուե՛ն նշանակ աշխարհա՛
ըստ անկանելոյ ՝ի զերաց նորա ընդ տեսութե՛ն ալաց ։
Իսկ ՝ի վարիւն ընդ բառիս երկիր , որպէս դնի ասա ,
նշանակէ զծոյր սահմանս երկրի , յորս եզերի լայնու-
թե՛ն և երկայնութե՛ն նորա , եւս և խորութե՛ն և բարձ-
րութե՛ն նորին ։ Ա՛ւ ըստ այսմ կամի ասել՝ ամենայն

ինչ՝ որ է յերկրի՝ ի ձեռս այլ է. և նոյն իսկ երկիրս բոլոր և ամենայն սահմանք նորա ի ձեռս նորա են ըստ լայնութեանն և ըստ երկայնութեանն՝ ըստ բարձրութեանն և ըստ խորութեանն. ըստ լայնութեան յայտ առնէ բառիւդ պետէդ. նոյնպէս և ըստ երկայնութեանն. իսկ ըստ բարձրութեանն յուցանէ ի յաջորդ հատուածդ յասելիս՝ Բարձրացեալ երկնից նորա են: Ասի ասել. ո՛ և իցէ բարձրութեանց երկրի, և՛ և բարձրութիւնք մեծամեծ լերանց՝ նորա են. կամ երկիրս ըստ ամենայն բարձրութեանն իւրոյ՝ որ առաւել երևի ի լերինս. այլ է, և՛ ի ձեռս նորա կայ. ըստ խորութեանն և՛ մտածեալ՝ ասէ:

Ալոտ է ծով և նա արար զնա. և ցամաքս ձեռք նորա սպեղծին: Որովհետև յատուկ է ծովու կոչել խոր՝ զայն ի մէջ բերկրիլով՝ կամի յուցանել, թէ երկիրս բոլոր՝ և ըստ խորութեանն՝ այլ է. զի և ծովս բոլոր, որ է խոր յոյժ, նորա է. վասն զի նա արար զնա, և պարապ պահեաց զնա ցամաքաւ չուրքանակի. և զնոյն ցամաքս ծով և՛ եդ չուրջ զցամաքաւ. զի և ցամաքք ձեռք նորա ստեղծին: Այս որպէս խորութեանն ծովու՝ նորա է. նոյնպէս և խորութեանն ցամաքի. և որպէս սոքա, նոյնպէս և որ ինչ գտանին ի սոսա, ի ձեռս նէր են: Այս ամենայն բանք յուցանեն, թէ բոլոր աշխարհս այնպէս է ի ձեռս այլ, որպէս փոքրիկ դնդակ մի ի ձեռս մարդոյ. և այն բազում առաւելութեամբ. զի մարդն ոչ է արարող դնդակին ըստ ամենայնի այլ ըստ իմի, իսկ ած է արարող և պահպանող բոլանդակ աշխարհի, և ամենայնի՝ որք են ի նմա: Օ այս և հեթանոսք ծանեան, որպ վասն ի նկարեին զպատկերք միոյ ի չորց՝ այսինքն գևսայ, նկարեին և զաշխարհս իբրև զփոքրիկ գնդակ ի ձեռս նորա:

Այսքիւք բանիւք դիտէ մարգարէն միանգամայն յանդիմանել զայնոսիկ, որք այլ և այլ մասանց աշխարհի զայլ և այլ ածս դնէին. և՛ և զածս լերանց և զածս ծովու եւ: Սոցա ամենայնի արարիչ նա է ասէ, զոր մեք պաշտեմք. նէր ե տիեզերս և ոչ գևսայ. նորա են բարձրութիւնք լերանց, և ոչ ապողոնի. նորա է ծով և ոչ պիսիդոնի. նորա է ցամաք և ոչ դեմետրեայ. զի սոքա ոչ են արարիչք այլ արարածք.

Ի ժամադիրս մեր երիս այս առնէք սպասիս. այսինքն է 4. և 5. որք են յալէլուս ի տուի այլա-
կերպութեամբ, առաջի դնին այսպէս. * բարձրութիք
,, լերանց նորա են, նորա է ծով, և նա արար զնա.
,, և զցամաք ձեռք նորա ստեղծին ‖. զի որովհետև
յայնմ աւուր ցնծայ եկեղեցի ընդ փառս քոյ՝ որ
եղև ի Թաբոր լերին, զարձրութիս լերանց յա-
խտութիք այնր լերին հրաւիրէ, տեսանել ի նմա զփա-
ռաւորութիք արարչի իւրեանց, և զհաստիչն ծովու
և ցամաքի. որովք խորհրդաբար հրաւիրէ նաև զի-
մանալոյ լերինս, այսինքն զհրեշտակս ցնծալ ընդ
մարդկան վասն տեսանելոյ ի միջի նոցա զփառս մար-
դացեղնին այլ՝ ի տիրել նորա՝ ծովու և ցամաքի. ուր
ծովով օրինակին հեթանոսք տատանեալք յալիս կռա-
պաշտութեանն, իսկ ցամաքով հրեայքն, որք ձեռամբն այ
ընտրեցան, և անկեան յերկրի.

Ապաքէն առեալ զայս բան մարթի ի միտ առնել ի վերայ խորհրդոց մտաց և չարժմանն զգայարանաց. որպէս գրէ և լամբ՝ յասելն. * ծով խմանայ զխոնար-
,, հական միտս. և ցամաք՝ զառոգեալ յիմաստութիւն
,, նորա զզգայարանս և զմտաբմինս. զի զայս լուաք
,, գոլ ստեղծուած ձեռին այլ. որպէս ասէ, առ ծո
,, հով յերկիր, և փչեաց ի նա հոգի կենդանի. և
,, սա ասէ՝ թէ ձեռք նորա ստեղծին ‖. Ի դէպ կէս առաջի գնելոյ մարդաբնին՝ թէ այլ է ամենայն, և նա արար զամենայն եթէ զծով և եթէ զցամաք, դնէ-
ապա և ի յաջորդ համարն ի մանաւանդ՝ թէ զմեզ և նա արար. վասն որոյ և արժան է մեզ կանխել առ նա յերկրպագութիւն և յօրհնութիւն նորա. ուստի յորդորել և ասէ.

Ձ. Ա՛նկայ երկիրպագցուք նմա. անկցուք և լացցուք առաջի տեառն որ արարչին մերոյ.

Ա՛յս հրաւիրութիւն է յաւելուած բացատրութեան այնր՝ զոր եզ ի համարն 1, և 2. զի անդ ասաց, եկայք ցնծասցուք ի տէր ‖. իսկ աստ զերկրպագութիւն եւս ի միջ բերէ հանդերձ լալով, և ասէ.

Անկայ երկիրպագցուք նմա. անկցուք և լացցուք առաջի տեառն որ արարչին մերոյ: Լաւն ասէ. որովհետև ինձ արար զմեզ

յոյնէ, և վասն մեր առեղծ զամենայն երևելիս, և խնամ քաղցրութիւնք, իրաւունք են, զի ամենեքեանս երկիբպագցուք նմա, անկանեալ առաջի նորա. և լացցուք և յանդիման նորա։

Ա. Այս լալս կրկին մեռօք կարէ իմացեալ լինիլ աստ. մի՝ փրխանակ հեղգիդ զարտասուս յառաւելութիւն ուրախութիւն սրտի, և մի և՝ փրխանակ ողբալոյ ի ցաւոց սրտի՝ թէ զիարդ զայսպիսի բարեբար մեր դառնացուցանեմք յանցանօք մերովք։ Արկաքանչիւրն ևս ի բարի. զի որպէս վասն բարեբարութեանն այ արժան ի մեզ ծունր կրկնելով գոհանալ զնմանէ, սոյնպէս և վասն ապերախտութեանց մերոց արժան ի մեզ զարտասուս հեղգիդ ողբալ առաջի նորա՝ ակն ունելով թէ որպէս բարեբար գտաւ մեզ, սոյնպէս և քաւիչ լինիցի մեզոյ մերոց. որովհետև նորա եմք արարած, և նա ինքն է որ իբրև հովիւ դարմանել զմեզ. և զայսմանէ խօսի մարգարէն ի յայնմ հատորն առելով։

Հ. Ով՝ ինն է պէս ձեզ մեր. ի՞ թողվո՞ղ յեղյն նորա, և խաչն արօրի նորա։

Օ այս ոճ բազում ուրեք ի գործ ածէ ըստ գիրն մանաւանդ սաղմոսերգուն, ի ցուցանել զիրաւունս այ ի վերայ մեր ի խնամելն զմեզ. զոր և համեմատէ խնամածութեան հովուի. բայց գերագոյն օրինակաւ, զի հովիւն իբրև վարձկան խնամ զնաչն. իսկ այծ իբրև տէր. վասն որոյ ասէ։

Ով՝ ինն է պէս ձեզ մեր։ Արդարև ասել. արժան է մեզ կանխել առ այծ՝ զի նա է արարիչ մեր և տէր. նա է պահապան մեր, և հովիւ. և մեք հօտ նորա. և առ այս յաւելու ասել։

Ո՞ւր ի՞ թողվո՞ղ յեղյն նորա, և խաչն արօրի նորա։ Ուր յաւելուլով զառադ ձեռնին՝ ցուցանի նախ թէ ձեռն նորա ժողովուրդ իւր արար զմեզ. երկրորդ՝ թէ ձեռն նորա խնամէ զմեզ, կամ թէ իբր ձեռամբ հայրապետ դարմանել զմեզ, որպէս զնաչն արօտի իւրոյ, այսինքն որպէս զհօտ իւր, և ոչ իբրև զհօտ օտարի. զի զայս ցուցանի ասելն՝ արօտի նորա։ Օ այսմանէ տես և՝ ի սաղ. ղէ. ՝ յ և ի՞ք. ՝ ։

Ա՛մէն՞ զայս բան՝ որպէս և զնախընթացս առաք վե-

բանէ ՚ի դէմս քոյ. և արտաքս իմանայ զնոր գործս, և գրէ այսպէս. * Նա որ արար զծով և զցամաք, նա է ,, մեր արարիչ. նոյն և փրկիչ, որ ՚ի փրկագործէն ,, առաջս զմեզ իւր ժողովուրդ. և խաչն՝ առելոյն ,, ես եմ հովիւ քաջ. հովիւ քաջ՝ զանձն իւր դնէ ՚ի ,, վերայ ոչխարաց. և զի մեք՝ նորա զանձն դնելով ,, փրկեցաք, և խաչն եղաք նմա. պարտական եմք ,, կանխել առաջի նորա օրհնութիւն և երկիր պագա- ,, նել նմին արտասուօք։ Իսկ արօտ խաչինս կոչէ՝ ,, զծածկումն գրոյ բանս, որք ծածկեն յանդատանէ ,, իւրեանց մեզ զմարմինն քոյ կենդանւոյ՝ և ըմպելի ,, զարիւնն, զոր յատուկն և յըմպելին հոգւով՝ լինի ,, առ մեզ ասացեալն, որ ուտէ զմարմին իմ և ըմպէ ,, զարիւն իմ յիս բնակեսցէ և ես ՚ի նա»։

Ա յտանօր ուարտի առաջին մնան սաղմոսիս, որ էր յորդոր կանխելոյ առ ած. և սկսանի երկրորդ մնան, որ է ազդարարութիւն զգուշանալոյ և լսելոյ ձայնի նմա. իբր զի որպէս յաղագս մեր առ նա՝ լսէ մեզ, մեք ևս ՚ի խօսիլ նորա առ մեզ՝ լռիցուք նմա. վասն որոյ ասէ.

Ը. Այսօր եթէ ձայնի նորա լսիցէք, մի խոպոպացանէք ընդերս ձեր. որպէս ՚ի դառնութիւն։

Թ. Ցաւեցաւ ինձ սերնդովս. ասէ ընդ միտս ինձ ամս ոչ սակաւս, և ես ոչ գիտացի զճանապարհս իմ։

Ժ. Զոր անացայ ընդ ազգին ընդ այնմիկ, և ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւ. և նոքա ոչ ճանեան զճանապարհս իմ։

Այսոսիկ համարտգ ամենևին այլազգ բաժանումն դնի յերբ" և յայլ ժարգ". այլ մարթի է ևս ըստ կարի համաձայնեցուցանել զսոսա ընդ միմեանս, գնալով գՀետ կարգի բանին. որպէս տեսցի յառաջիկայդ։ Այլ գիտելի է՝ զի այս բանք ոչ ասին ՚ի բերանոյ մարգարէին, այլ ՚ի բերանոյն ՚ով. որպէս և առա- քեալն գրէ (Երբ. ՚ի. 7.) թէ * այսպէս ասէ Հոգին ,, Սբ. այսօր եթէ ձայնի նորա լսիցէք՝ մի խստա-

,, ցուցանէք զսիրտս ձեր իբրև ՚ի դառնութիւն . յա-
,, ւուրն փորձութեան յանապատին են ‖ : Իսկ թէ դնէ
զքառադ Նորա՝ այս չէ ինչ , զի ՚ի բանս մարգարէից էր-
բեմն ՚ի խօսիլն ՚ոյ՝ այսպիսի օրինակաւ առաջի դնի
բանն՝ որպէս թէ լինիցէ երկրորդ դիմի , կամ որպէս
թէ էր յայլմ , և կամ զօսարէ . զորօրինակ յասելն
բերանով ովսեայ . (՚ի . 6 .) * զողորմութիւն կամիմ և
,, ոչ զպատարագ , և զգիտուն ՚ոյ քան զողջակէզս ‖ .
ուր այնպէս առաջի դնէ զինքն՝ որպէս թէ այլ ոք էր .
զի փոխանակ ասելոյ զգիտութիւն իմ , ասէ զգիտուն
՚ոյ : Այնպէս է և ատ . ուր փոխանակ ասելոյ ձայնի
իմում , դնէ ձայնի նորա կամ ձայնին ՚ոյ . և յորդոր
լինելով լսել այմ ասէ :

Լսեսջ երկի յայնի նոր լսելէ , զի խոսացուցանէ զերբա-
յեր . որպէս ՚ի դառնութիւն : Ստադ այսօր՝ դնի ատ փո-
խանակ բառիս այժմ , կամ և արդ , և կամ այլ արդ ,
կիմ ըստ պօղոսի փոխանակ ներկայ ժամանակիս (երբ .
՚ի . 13 .) որպէս թէ ասէր . այլ արդ ահա այժմ է
ժամանակ , յորում եթէ լսիցէք՝ զոր միանգամ ա-
սեմ ձեզ , և տալաորիցէք զայն ՚ի սիրտս ձեր , բարի
լինիցի ձեզ . վասն որոյ խոնարհեցուցէք զականջս
ձեր , և կակղացուցէք զսիրտս . և մի խոսացուցանէք
զայն :

Ստարայատիս , այս բան է յորդոր առ այնոսիկ՝ որք
զայսօրն վաղիւ առնէին . զորօրինակ յայդ առնել ՚ոյ
յաւետարանին՝ ցուցանեն զյաժարուն կատարելոյ՝
բայց ոչ այսօր , այլ վաղիւ . այսօր ունիմք ասել առ-
նել զայս ինչ , և ՚ի գալ եօթնեկի խոստովանեացուք :
Ստ որս ասէ ՝ . * անմիտ էայմ գիշերի զոգիդ ՚ի
,, քէն ՚ի բաց պահանջիցեն ‖ . և յետոյ զինչ լինիցի
քեզ . (զուկ . ժբ . 20) : Զայս միտ զքառադ այսօր՝ սար-
գիս ՀՀորհալի առնու ՚ի տեղի իւրաքանչիւր աւուր ,
իբրև ՚ի տեղի դէպ ժամանակի յասելն . (՚ի մէկն . ՚ք .
պետ . ՚գ . 9 . Ստառ . Ե . յորդ .) * վասն զի դէպ ժա-
,, մանակ է որչափ զայս օրս ՚ի ձեռին ունիմք . այսօր
,, եթէ ձայնի նորա լսիցիք ասէ՝ մի խոստացուցանէք
,, զսիրտս ձեր ՚ի բարկութիւն ‖ .

Ստաքելիայ այս բնաբան դնի և իբր զդուշացուցումն
առ այնոսիկ՝ որք կետ լսելոյ ձայնի ՀՀն՝ մինչ ՚ի յա-

բիս. և ըստ այսմ բառդ խոպոպացանել՝ յայտ առնէ՝ թէ ձայնն ոչ է իբրև հուր. առ որ եթէ մերձենայր մարդս, սիրտ նորա ջերմանայ և կակղանայ. բայց ղերբօրինակ հրացեալ պողովատիկն ՚ի ջուր արկեալ խստանայ՝ մինչև լինել անգծելի, սղոպէս և մարդս յորժամ ղջերմացեալ սիրտ իւր մխէ ՚ի ջուր չարուն թէ, խստացուցանէ զնոյն. մինչև ոչ ևս ազդել ՚ի նա ճնշային քանից, և հակառակիլ ևս. առ որս ՚ի դէպ գայ ասել. * գուք հոգւոյն զոյ հակառակ կայք ‖. (գործ. է. 51.) որպէս արարին խօսակ ելացեք ՚ի դառնութէ յանապատի անդ. սմին իբրև չարէ զկնի և ասէ.

Որպէս ՚ի գառնութէ * ձայնարձակ եղէք յանապատի. որ բերէին զիս հարձակ ՚ի ձեր. փնտռեցին զիս՝ և տեսին զգործս իմ չորեսուն ամ. Ուր բառդ գառնութէն որոյ փորձն յերբ գնի դէպ վհ, ըստ նկարագրին ցուցանէ զսեղմն՝ մեռայ ասացեալ՝ որ կոչեցեալ եղև գառնութէ (ելից. ժե. 23.) և այս՝ ոչ միայն վասն գառն լինելոյ ջուրց տեղոյն՝ որոյ վասն ՚ի գիրս Թուոց (իդ. 8.) կոչի գառն աղբիւրք, այլև վասն գառնացուցանելոյ անդ իսրայէլացւոց զնծ, տրտնջելով զնմանէ. և ըստ այսմ կամի ասել. մի առնէք զսիրտս ձեր խիստս, որպէս արարին հարքն ձեր յանապատի անդ՝ ՚ի տեղւոջն որ կոչեցաւ գառնութէն. Իսկ ըստ փոխաբերական մտաց ցուցանէ սոսկ զդառնացուցանել որդւոցն իսրայէլի զնծ յանապատի անդ. յոր միտ առնու առաքեալն.

(եբր. գ. 16.)

Այնպէս և բառս գոլոնթէ, որ յերբ՚՚ գնի մասն, ըստ նկարագրին նշանակէ զսեղմն զայն՝ որ կոչեցեալ եղև փորձութէ ՚ի ռափիդիմ (ելից. ժէ. 7.) իսկ ըստ փոխաբերութեանն նշանակէ զբարբառ փորձել որդւոցն իսրայէլի զնծ. Այս ըստ այսմ կամի ասել. մի առնէք այնպէս, որպէս արարին հարքն ձեր յաւուրն փորձելոյ իւրեանց զիս՝ ՚ի տեղւոջն՝ որ կոչեցաւ փորձութէ. Այս թէպէտ բազում անգամ տեսին նոքա զզաղտս սքանչելի գործս նմա, որով և փորձեցին՝ այսինքն փորձել կամացին՝ թէ ամենակարող է նա, և քննեցին զնա, այսինքն պէսպէս իրօք տեսին՝ թէ քանի զթութէ խնամէ զնոսա նա, բայց այսու ամե-

նայնիւ անհատանն գտան նմա. և այս քառասուն ամ։ Տես և ի սաղ. ՀՂ. 18-22. 41. 42։ Խարդախ և իւր յարմարական մեկնութիւն այս դառնութիւն հոգւոյն ի սիրտ այնոցիկ՝ որք խոստացեալ են ի տարիս, և բերեն հանապազ պտուղս դառինս, երբեմն երբեմն քաղցրանալ, այլ ի դիպել առիթն առաւել ևս դառնանան. իսկ որք ձմարտիւ խոնարհեալ՝ խոստովանութիւն մարբեն ի բայ զդառնութիւն իւրեանց՝ նոքա արդարև բերեն զպտուղ քաղցր։ Խսկ թէ ի ծակել զստորոտ դառն նշենւոյ ելանէ հիւթ զառն. և յայնմ հետէ բերէ նուէ քաղցր. ըստ սմին և թէ պատառեցի ստորոտ սրտի մարդոյ դառնացեալ, այսինքն եհան ձմարտապէս ապաշխարեցի, և զստորին մանն հոգւոյն նուաճեցի ըստ վերնոյ՝ մերժին ի նմանէ դառնութիւնք, և բերէ պտուղ բարի. և ոչ ևս հանդրի խստացեալ և դառնացեալ։

Ա՛լ ասա դիտելի է՝ զի բառդ պատառեա՛ ասի որ դնի յառաջնիկայ բնաբանիդ, միապէս յարի ի վերադրեալ բանդ և ի յաջորդդ. բայց առաքեաղն ի վերայ բերելդ յարի. որպէս դնի և յասոր՛՛ և յարաբ՛՛. իսկ յայլս յարի ի յաջորդդ յասելն։

Ո՛ անոյ (պատառեա ամ) ընդ ապիեն ընդ ամին, և ասոյն՝ գլուխ ծոլրեալ են սրտիւ։ Խստանօր բառս կանչ երբակի դնի. մի՝ փոխանակ սկսալս իրօք գուն գրծելոյ առ ի առնել ինչ, կամ առ ի կատարել գսկսեալն. և ըստ այսմ կամի ասել. յանապատի անդամն քառասուն բաղմադիմի իրօք գուն գործեցին հատանել ցուցանել զազգն իսրայէլի անսալ բանից Լմոյ. զի տարայոյ զնոսա յերկիրն՝ զոր խոստացայ. բայց տեսին զնոքա Թոդեալ զրանս իմ՝ մոլար ձանապարհան իւրեանց անսացին, և միշտ զՀետ այնր գընացին սրտիւք իւրեանց, այսինքն ախորժակօք իւրեանց. և ի տեսանելն իմ զնոսա այսպէս՝ ասացի.

միշտ մոլորեալ են սրտիւք։

Խրկերդ՝ դնի փոխանակ գրգռելոյ. ըստ որոյ յերբ՛՛ գրի ասէ. այսինքն գրգռեցայ կամ կռուեցայ. յոր միտ կամ ասել. քառասուն ամ ոչ հանդուցին զնա իսրայէլացիք, այլ հակառակ կացին. որով և գրգռեցին զնա չարչարել զնոսա և խրատել. բայց ի խրա-

տիրն և ոչ ուղղեցին զսիրտս իւրեանց ։
Լ[ր]երդ՝ դնի փոխանակ վաստակելոյ մինչև՝ ի ձանձ-
րանալ, կամ փոխանակ տաղտկանալոյ. որպէս առ-
նու առաքեալն. կամ փոխանակ վշտանալոյ, որպէս
դնի յԵովՔ՝՝ և՝ ի լուա՝՝ յորս միտ կամի ասել. զամն քա-
ռասուն աշխատ եղէ՝ ի վերայ իսրայէլացւոց յանա-
պատի անդ, և ոչինչ շահեցայ. վասն որոյ և ձանձ-
րացայ՝ ի նոցանէ, վշտացայ և ասացի. * մինչև չ[ր]երբ
,, բարկացուցանիք զիս ժողովուրդդ այդ, և մինչև
,, չ[ր]երբ ոչ հաւատան ինձ ամենայն նշանաւքն, զորս
,, արարի՝ ի մէջ նոցա ևս ։ (Թուոց. ԺԴ. 11։) կամ
որպէս առաքեալն դնէ. (երբ. Բ. 10.) * տաղտկա-
,, ցայ ազգաւն այնուիկ ։ զի միշտ ընդդէմ դաշնի
բանից իմոց. և չհաւատային եղեն ոչ այմ՝ զոր ես
հրամայէի, այլ այնմ զոր սիրտ իւրեանց ախորժէր.
և զի մեզաք էր ախորժակ սրտից նոյ, նոքա ևս միշտ
մոլորեալ մնացին սրտիւք. իսկ արդարն այսր մոլորու-
թեանէ և յիմարութենէ նոցա այն էր, զի խորհուրդք նո-
ցա զչգայութիւքն միայն յածէին, և ոչ զանիւք նոն.
վասն որոյ և ոչ կարէին ձանաչել զկամս նորա, և ըստ
այմ կեալ. և առ այս յարէ.

Լ[ր]ե նուա ոչ ծանեան զձանապարհս իմ։ Որ բառդ է՝ ե-
թէ դիցի փոխանակ պատճառականն շաղկապիս էր,
միտ բանին լինի այս. պատճառ մոլորելոյ նոյ սրտիւք
այս է, զի ոչ ծանեան զձանապարհս իմ. ոչ զի ոչ
իմանային կամ ոչ հասկանային, այլ զի ոչ կամէին
յարել յայն։ Իսկ եթէ դիցի փոխանակ բաշխեա-
կան շաղկապի, միտ բանին լինի այս. այսպէս ինչ
պարծէր նոցա, և ամենայն իրօք ցուցի նոցա զձանա-
պարհս իմ, այսինքն զՀաճոյս կամաց իմոց, այլ նոքա
ոչ կամեցան ձանաչել առ՝ ի կատարել։ Լ[ր]ե զի այս-
պէս վարեցան նոքա ընդ իս, ես և ա՝ որ հանի զնոսա
յԵգիպտոսէ՝ տանիլ զնոսա յերկիրն աւետեաց, թո-
ղից զնոսա՝ ի ձեռաց, և ոչ ածից զնոսա անդր. և
առ այս յարէ.

ԺԱ. Որպէս երդուայ՝ ի բարկութենէ իմում, թէ մտցեն՝ ի
հանգիստս իմ։

Հայտ կ՝ ի գրոցն մնվսեսէ, զի ասէ զորս միանգամ

եհան յեգիպտոսէ՝ զայնոսիկ ևեթ էած յերկիրն խոս-
տացեալ. որք էին ի քանամնինից և ի վայր. իսկ
զայլսն քաց յեսուայ և ի քաղեբայ առ հնասաբակ տա-
պաստ էարկ յանապատի անդ։ Ի՝անզի տեսեալ զան-
հնարին խոտասպուռնէն նոցա՝ տպատկացաւ ի նո-
ցանէ. երդուաւ և ասէ. * կենդանի եմ ես, և կեն-
,, դանի է անուն իմ. և լցցեն փառք ամն զամենայն
,, երկիր։ Օ՛ի ամենայն արք որք տեսին զփառսն իմ,
,, և զնշանս զոր արարի ես յեգիպտոս և յանապատիս,
,, և ոչ լուան ձայնի իմում. թէ տեսանիցեն զեր-
,, կիրն զոր երդուայ հարցն նոցա ։ (Թուոց ԺԴ.
21-24։)

Ի՝սյս է ահա զոր ասէ։

Յաւէր տպա ասէլ. * մինչ յերբ զժողովուրդ զայդ
,, չար կրիցեմ. և զոքա տրտնջիցեն առաջի իմ. Օ տըր-
,, տունդ որդւոցն իսրայէլի՝ որ տրտնջեն զձենջ՝ լուայ։
,, Ի՝րդ ասասցես ցնոսա. կենդանի եմ ես ասէ տէր,
,, եթէ ոչ որպէս խօսեցայք յականջս իմ, նոյնպէս ա-
,, րարից ձեզ. յանապատիս յայսմիկ անկցին ոսկերք
,, ձեր, և ամենայն հանդէս ձեր, և մեռեալքն ի
,, ձենջ ի համար ի քանամնինից և ի վեր որ տրտընջ-
,, ջեցէք զինէն, թէ մտցեն յերկիրն՝ յոր համբարձի
,, զձեռն իմ բնակեցուցանել զձեզ ի նմա. բայց քա-
,, զէք որդի յեփոնեայ, և յեսու Նաւեան. և ոսկերք
,, ձեր անկցին աստէն յանապատիս. և որդիք ձեր
,, ձարակեսցին յանապատի աստ՝ ամ քառասուն ...
,, և ծանիջիք զսրտմտութիւն բարկութիւնէ իմոյ։ Ի՝ա
,, տէր խօսեցայ. եթէ ոչ արարից ժողովրդեանդ այդ-
,, սիկ չարի յարուցեալս ի վերայ իմ. յանապատի աստ
,, ծախիցին և աստէն մեռանիցին ։ (Թուոց. ԺԴ.
27-35։)

Որպէս երդուայ ի բարկութիւնէ իմում, թէ մտցեն ի հանգիստ
իմ. Ի՝սյս ոչ եբրայական՝ զօրութիւն ի մէջ բերէ ըզ-
բացասութիւն, որպէս թէ ասէը. երդուայ նոցա բար-
կութիւն, թէ ոչ մտցեն ի հանգիստ իմ. ուստի և ի
Թարգ" ասոր" և արաբ" և եթէոպ" դնի՝ ոչ մտցեն։
Ի՝ւ ըստ այսմ բառդ որպէս՝ դնի փոխանակ բառիս
ըստ. որպէս թէ ասացեալ էր. ըստ որպիսութեան
գնացից նոցա կամ թէ ըստ բարկութեանն իմոյ երդուայ՝
թէ ոչ մտցեն ի հանգիստ իմ.

Օ երկիրն աւետեաց կոչէ աստ ա̃ծ հանգիստ իմ՝ (որպէս և ՚ի սաղ. ճլա̃. 13.) վասն երկուց. մի՝ զի անդ տալոց էր ժողովրդեան իւրում զհանգիստ իւր՝ այսինքն զայնպիսի հանգիստ, որ տուեալ և պահեալ լինէր յայ̃. Երկրորդ՝ զի անդ դնելոց էր իւր հանգիստ այսինքն տեղի անուան իւրոյ.

Բարեբանօրէն՝ այս հանգիստ հայի ՚ի նորս եկեղեցի. ուր մտին հեթանոսք. իսկ հրէայք բաց ՚ի սակաւուց ոչ կարացին մտանել անդ, և ոչ ժառանգել զնոյն.

Վերածաբար՝ այսու հանգստեամբ նշանակի արքայութիւն երկնից. և որք միանգամ են յեկեղեցւոջ՝ են ՚ի ճանապարհի առ ՚ի գնալ անդ. և սակայն եթէ ըստ որդւոյն իսրայէլի կամիցին գնալ՝ ոչ կարասցեն մտանել ՚ի նոյն. Զայս միտս մեկնէ պօղոս առաքեալ զայս բան ՚ի թուղթն առ եբր. եթէ կամիս տես նախ ՚ի գլ. գ̃. 12-18. և ապա ՚ի գլ. դ̃. 1-11.

Բարոյապէս՝ այս հանգիստ ցուցանէ զառաքինական կեանս. իսկ անապատն յայտնէ զճանապարհն առ ՚ի նոյն. եթէ ոք անհաւանութե̃ գնայցէ, ոչ ժամանէ յայն. իսկ եթէ հաւատով, և յուսով գնայցէ, ունելով առաջնորդ զսիւն ամպոյն ժամանէ ՚ի կատարելութի̃ կենաց. որով և արժանի լինի հասանելոյ ՚ի հանգիստն յաւիտենից.

ՍԱՂՄՈՍ ՂԱՀ

Օրհնութիւն և գոհութիւն ի վերայ բարեբարու-
թեանց սեառն. և հրաւէր հեթանոսաց յերկիրպա-
զութիւն Ձմեռնային ոյժ։

Աղօթս ի դառնութ՝ ի ձմռանային չի դաշտն լինեցաս
յեղ փերտունեն։

1 Օրհնեցէ՛ք զերկինս յօրհնութիւնէ նոր. օրհնեցէ՛ք զերկիր ամենայն երկիր։ 2 Օրհնեցէ՛ք զերկինս և օրհնեցէ՛ք զանուն նորա. աւետարանեցէ՛ք օրըստօրէ զփրկութիւնէ նո։ 3 Պատմեցէ՛ք ի հեթանոսս զփառս նորա. յամենայն ժողովրդս զսքանչելիս նորա։ 4 Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ ահարկու է նա ի վերայ ամենայն էից։ 5 Զի ամենայն էութեանց հեթանոսաց դեռ են. և տէր զերկինսն արար։ 6 Խոստովանութիւն և վայելչութիւն է առաջի նորա. օրհնութիւն և ուժ վայելչութիւն ի սրբութիւնի նորա։ 7 Տուարջք՛ ազգաց տուէք տէրանց. տուարջք՛ զփառս և զպատիւ. տուարջք՛ զքառս անուան նորա։ 8 Բարձեա՛ք պատարագս և մտէ՛ք ի սրահս նորա. երկրպագեա՛ք տէր ի փառեաս սրբութեան նորա։ Եւ խռովեսցի յերեսաց նորա ամենայն երկիր։ 9 Բայց ի հեթանոսս թէ տէր թագաւորեաց. հաստատեաց զշրջարն չի ի սասանեսցի. և դատի զժողովուրդս իւր ուղղութեամբ։ 10 Ուրախ եղիցին երկինք և ցնծասցի երկիր. զգաբաստցի ծով լրութ իւրով. ցնծասցին դաշտ, և ամենայն որ է ի նոսա։ 11 Ցնծասցեն ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց տեառն. չի գայ և գայ նա ի դատել զերկիր։ 12 Դատի զերկիրս ի ճշմարտութեան և զժողովուրդս ամենայն ճշմարտութեամբ իւրով։

1 Օրհնեցէք Տէրը ամենայն երկիր. պատմեցէք օր ըստ օրէ
փրկութիւնը նորա։ 3 Պատմեցէք ի հեթանոսս զփառս
նորա. յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա։ 4 Օ՛ի մեծ
է Տէր և օրհնեալ է յոյժ. ահաւոր է ի վէր ամենից
աստուածս։ 5 Զի ամենայն աստուածք ազգաց դիւահարք են. և Տէր
զերկինս արար։ 6 Փառս և փառաւորութիւն առաջի երեսաց նորա. զօրութիւն և պատ-
կառանք ի սրբութեան նորա։ 7 Տուէք ազգաց ազգաց, տուէք փառս և պատիւ
զանուն Տեառն։ 8 Տուէք Տեառն անուան նորա փառս։ Առէք պատարագս և մտանեցէք առաջի երեսաց նորա. և երկրպագեցէք Տեառն ի սրահ սրբութեան նորա։ 9 Երկեսցի յերեսաց նորա ամենայն երկիր. յանդիմանեսցէ երկիր և մի սասանեսցի։ 10 Ասացէք ի հեթանոսս՝ Տէր թագաւորեաց. Հաստատեաց զաշխարհս և մի սասանեսցի՝ դատեսցէ զազգս ուղղութեամբ։ 11 Ցնծասցեն երկինք և ցնծասցէ երկիր, շարժեսցի ծով լիութեամբ իւրով, դաշտք անդաստանք՝ և ամենայն որ ի նոսա։ 12 Ցնծասցեն ծառք անտառաց առաջի Տեառն. զի եկն դատել զերկիր։ Խոստովան եղիջիք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։ Եւ ասացէք ձեզ՝ զի փրկեա զմեզ, Աստուած փրկչի մերոյ, զի ժողովեա զմեզ և ապրեցո զմեզ ի հեթանոսաց՝ խոստովանել անուան սրբութեան քում, պարծենալ ի քեզ։ Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտենից մինչև յաւիտեան։

ՎԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ

Ամէն՝ ի դասուն՝ ի ծամանակի՝ զի պատճառն լինիցի յեղ
ձերոյն։

ՅԻՇԻՐ ԼԻՑԻ Ի ՔԱՀԱՆԱՅՍ ԶՈՂՈՒՆ

*վերնագիր. ասեն որպէս ի հին սաղմոսս
ինչ յաւելաց, և ի քահանի մի սաղմոս մի,
որպէս և ի սաղարեայսն գրի անվերծանելի հնձողոյ. ուստի որպէս զնախընթացիցն սորա առացաք*

յայլոց յաւելեալ եղև այս վերնագիրս. դուցե յեօ-
թանասնից անտի, և կամ՝ ի յետնոց ոմանց։

Իսկ վասն բառիդ յետ գերութեանն՝ գիտելի է, զի՝ ի
բազում ձեռագիրս մեր զանց առնի այդ. և միայն՝ ի
չորս ձեռագիրս դնի. և զի այդ է համաձայն եօթն"
և լաւ", արաք" և եթէով", ըստ այդմ եդաք և մեք։

Ա.յս սաղմոս որպէս յայտնի տեսանի (ա. մնաց. ԺԶ.
23.) ասացաւ՝ ի դաւթայ յածել նորա մեծաւ հան-
դիսիւ զտապանակն ետն՝ ի տանէ աբեդդարայ յերու-
սաղէմ՝ ի խորանն զոր շինեաց նա ինքն դաւիթ. զոր-
մէ տես ա. մնաց. (Ժե. 1-28. և ԺՁ. 1-7.) յորում
և երգեաց և զերգն զայն՝ որ սկսանի * խոստովան
,, եղերուք տեն ||։

Ա.յս երգ՝ զոր ասաց դաւիթ, բովանդակի՝ ի 30 հա-
մարս (՝ի ա. մնաց. ԺՁ. 8—36։) որոց հնգետա-
սանքն սկսեալ՝ ի ծայրէ՝ դնին՝ ի սաղ. Ճ՝. չորեք-
տասան համարօք։ Իսկ մնացեալ հնգետասանքն սկը-
սեալ՝ ի միջնոյ՝ դնի յայս սաղմոս երկոտասան համա-
րօք։ Եւ զի այս սաղմոս այլայլութիւն բառից դնի
աստ քան զոր՝ ի ա. մնաց, ստիպեցաք հանդէպ սմին
դնել և զայն. որպէս տեսանի յառաջիկայդ։ Իսկ
զայս բաժանումն արարին նոքա, որք ուրոյն երգեցին
զայս. և կամ հեղինակն այն՝ որ կարգաւորեաց զսաղ-
մոսս՝ ի մի գիրք։

Յասացեալոցս աստի երևի՝ թէ բանն այն՝ որ դնի՝ ի
վերնագրիդ * ՝ի ժամանակի՝ զի տաճարն շինեցաւ ||.
Հայի նախ՝ ի շինուածն խորանին՝ զոր կանգնեաց դա-
ւիթ, որ տաճար ևս կոչիւր հանդերձ գաւթիւն
(է. Թագ. Ճ. 17։ ա. մնաց. ԺՁ. 1.) զորմէ այլուր
ևս խօսեցաւ (մանաւանդ՝ ի սաղ. ԺՁ. 1։) Նայի
երկրորդ՝ ի շինուածն տաճարին զօրաբաբէլի յետ գե-
րութեանն. զի որպէս սաւանգեն բազում երևելի մեկ-
նիչք, ՝ի դառնալ որդւոցն իսրայելի՝ ի գերութէ
բաբելացւոց. և՝ ի կանգնել նոցա նորոգ զտաճարն՝
իբրև քաղուածով ինն առին և երգեցին զայս յեր-
գոց անտի դաւթի. և երևի թէ յայս միտ եդեալ
եղև՝ ի վերնագրիդ * սաղմոս՝ ի դաւթի՝ ի ժամա-
,, նակի ևն ||. որպէս թէ եդեալ էր, այս սաղմոս է
քաղեալ յերգոցն դաւթի, և ասացեալ՝ ի ժամանա-

կի երկրորդ շինութեան տաճարին՝ որ եղև յետ դարձի գերութեան ։

Ուստի և բանք սաղմոսիս ասին միանգամայն 'ի բերանոյ դաւթի, և 'ի բերանոյ այնոցիկ՝ որք դարձան 'ի գերութենէ՝ իբրև գոհութիւն առ ած, և իբրև յորդոր և հրաւէր հեթանոսաց 'ի պաշտօն ճշմարտին այ, և 'ի կանգնել զտաճարն իմանալի, այսինքն զեկեղեցի սուրբ 'ի բանաւորացս ընդ ամենայն տեղիս. զորմէ այսպէս գրէ լամբ"։

* Քանզի տաճար ած բնակութեան իւրոյ՝ զբանականս
,, շինեաց մարդ 'ի դրախտին, սա գերեցաւ 'ի սա-
,, տանայէ, և աւարեցաւ յամենայն վայելուչ առա-
,, քինութեան փառաց. զոր վրէժխնդրութիւն այ՝ ի-
,, մաստութբ ճշմարիտ զօրաբարելին քսի, շինեաց
,, վերստին տաճար հանգստեան իւրոյ. որպէս գրէ
,, առաքեալ, քս իբրև որդի 'ի վերայ տան իւրոյ,
,, որոյ տունն մեք իսկ եմք, և դուք տաճար էք այ.
,, ըստ որում ասաց ած, բնակեցայց 'ի նոսա. քանզի
,, զանմարմին բնութիւն այ և զփառս՝ զգալի նիւթ
,, ոչ կարէ տանել. այլ բանաւոր և իմանալի հոգիս,
,, որ շինեցաւ տաճար փառաց նորա. և մի եկեղեցի
,, ընդ ամենայն տիեզերս 'ի վերայ հիման առաքելոց
,, և մարգարէից. յայս տունս որ նորոգեցաւ քսիւ 'ի
,, հնութենէ մեղացն ադամայ, հրաման տայ նորոգել
,, տանն նոր օրհնութիւ երգել ամենայն երկրի. զի
,, և ամենայն երկիր եղև տուն այ և լցաւ փառօք
,, նորա և գիտութբն ‖։ Զայս հայելով ունիմք մեկ-
նել և մեք զայս սաղմոս ։

ԲԱՆ

ա. Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զտէր ամենայն երկիր ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նոր իմն եղև և ընդհանուր՝ բարերարութիւն այն՝ զոր եցոյց ած ազգի մարդկան 'ի փրկելն զնոսա. նոր՝

զի չէր երևեալ այնպիսի ինչ. վասն զի փրկօղն էր ած և մարդ, և եղանակ փրկութեն ոչ գնոու զօրութեամբ, այլ խոնարհութիք և մեծութիք. ընդհանուր և՝ զի ոչ միոյ ազգի, կամ միոյ աշխարհի, այլ ամենայն ազգաց և համբերն տիեզերիս. սին իրի ի հրաւիրել մարդարէին զմարդիկ ի փառաբանուի ոյ վասն այսր մեծի բարեբարուե՝ յորդորել ոչ եթէ զայս ազգ կամ զայն, այլ զամենայն երկիր, և այն յօրհնութի նոր ասելով։

Օրհնեցէ՛ն զեր յօրհնութի՝ նոր. օրհնեցէ՛ն զեր ամենայն երիւր։ Յորութի օրհնուին՝ ըստ պ՛սալս իւաց կարի մտածիլ։ Ի՝ ըստ նիւթոյ, իրը զի այնպիսի իւր այն օրհնուի կամ փառաբանութի մտաուցեալ առ ած, յորում իրը նոր ցուցցի բարեբարուե՝ նորա, այսինքն փրկագործութի նորին։ Յերկրորդ՝ ՚ը օրհնողաց, իրը զի յայնպիսեաց երգեսցի՝ որք նորոգեալ իցեն ի հնութե մեղաց։ Յերրորդ՝ ըստ զօրութե կամ ըստ հոգւոյն, իրը զի այնպիսի հոգւով երգեացի՝ որպէս թէ նոր իմն լիներ և իրը նորոգ երգեալ։ Չորրորդ՝ ըստ եղանակին, իրը զի գեղեցիկ իմն հանմատութե և հոգեշարժ բարբառով իցէ նուագելի։ Հինգերորդ՝ ըստ տարածութե, իրը զի այնպիսի իցէ՝ որ կարիցէ երգիլ ընդ ամենայն տեղիս որով և իցէ լեզուաւ, և մի օրպէս ի հնուելն որ յերեսաղէմ միայն երգիւր, և ոչ արտաքոյ յօտար երկրի։ յոր միտ գերեալքն ի բաբելոնի ասեն. * զի ,, արդ երգեսցուք զօրհնութե՞ն յերկիր օտար ։

(սաղ. ՃԼԷ. 4.)

Ոչ ասեն որոյ ոչ առ երուսաղէմացիս ևեթ իսօի մարգարէն, այլ առ ամենայն երկիր. որով նշանակին ամենայն բնակիչք երկրի, եթէ հրեայք իցեն և եթէ հեթանոսք. որպէս թէ ասէր. որովհետև ամենեցուն ձեզ հասանելոց է փրկութի նոր յիս, ամենեքին առհասարակ նոր օրհնութի օրհնեցէ՛ք զիս։

Ուր յաւելու գրել լսէ՛ և զայսպիսի ինչ. * առ ,, ի՞նչ հայի օրհնուին, զոր ած իրը կարօտ ինդրե ,, ի մէնջ, և գիրք հրամայեն տալ նմին. օրհնութի՞ ,, սիրոյ է պատուղ, զի ոչ զոք կարեմք օրհնել, զոր ,, ոչ սիրեմք, և սէրն իւրաքի յորդորի օրհնել զսիրե-

,, ցեան, Լ՚ըդ քննել հրամայէ մեզ զթութիւն ու
,, և սիրել զնա, և ի սիրոյ անտի բռնել նմա զօրհ-
,, նութիւն որ անկաթուած է նմին ||

Լ՚ա. Միայ ոչ դնի նոր օրհնութիւն. այլ միայն * օրհ-
,, նեցէք զաւր ամենայն երկիր ||. վասն զի այն օրհ-
նութիւն՝ զոր յայնժամ մատուցին, ոչ էր աւետաւո-
րութիւն հեթանոսաց, այլ յորդոր խրատական. իսկ
այս է աւետաւորութիւն հեթանոսաց ի ձեռն նորոյ
փրկութեան վասն որոյ դնի և օրհնութիւն նոր. առ որ
առաւել ևս յորդորել կամելով զնոսա՝ յաւելու և
ասէ.

Յ. ( ) ՕրՆեցէք ղԱՐ և օրՆեցէք զանուն նորա. աւե-
րանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա.

Լ՚այս կրկնութիւն օրհնութիւն յայտ առնի բազում ինչ.
նախ՝ զմեծութիւն երկին, որոյ վասն յորդոր լինի յօրհ-
նութիւն. երկրորդ զմեծութիւն փոփոխութեաց յորդո-
րելն յօրհնել զաւր. երրորդ՝ զմեծութիւն ուրախութեն,
զոր ժառանգելոց կէին յորդորելն. չորրորդ՝ զմե-
ծութիւն այնմիկն զկատարելութիւն օրհնութեն զոր ու-
նէին մատուցանել. առ որ խրախուսելով մերգարե-
ին ասէ.

( ) ՕրՆեցէք ղԱՐ և օրՆեցէք զանուն նորա. ՑԱՐ ասէ, և
անուն ևս ասէ՝ ի նոյն հայի. զի անուն ևս է բառա
ձեր. վասն որոյ միտ բանին լինի այս. օրհնեցէք զԱ-
տեր, և յօրհնելն գնա՝ ասացէք, օրհնեալ է տեր.
կամ բառ երբ, օրհնեալ է եհովահ. քան օրուամ առ
նոսա գնի * օրհնեցէք զեհովահ, բարեբանեցէք
,, (զայս) անուն (նորա) ||. Մարթի է անուամբ իմա-
նալ ատ և զգօրութիւն անուանին այ և ամենակարո-
զութիւն նորա, զոր եցոյց յայսաւիկն զորդիս խոպանչելի
ի գերութենէ, և ի փրկելն զաղգ մարդկան ի ձե-
ռաց սատանայի. այլ զայսմանէ օրոշակի ևս գրէ ա-
սելով.

Ա. Հետաւորանեցէք օրըստ օրէ զփրկութիւն նորա. Լ՚ետաւորա-
նելն է՝ աւետիս տալով յայտնել զփափաքելի ինչ
բան բարի. և քանզի ամենափափաքելի է փրկու-
այն, որում ակնկալեալ սպասէին ազգ մարդկան, վա-
այսորիկ ասէ, աւետաւորանեցէք զփրկութիւնն՝ զոր ցու-

ցանելոյ է ասե,

Նա զի այն փրկութիւն ոչ եր վասն միոյ աւուր կամ վասն միոյ ամի՝ այլ վասն ամենայն աւուր և մշտնջեն. նաւուր, վասն որոյ յաւելու զօր ըստ օրէն. որպէս թէ ասէր. զօրօրինակ օր յաջորդէ աւուր, սոյնպէս յաջորդեսցէ հանապազ և աւետարանելն. որ է ասել. զամենայն աւուրս աւետարանեցի՛ք զիրկութիւն նորա։ Նա այս բան կարգի նախ՝ իբրև յորդոր առ խոյանել լինել աւետարանիչ հեթանոսաց։ Կարգի երկրորդ իբրև յորդոր առ ամենեսին՝ լինել միմեանց աւետաւոր վասն փրկութեն նոյ,

Ի ։ ։ ասաց. Ժէ. փոխանակ բառիս աւետարանեցի՛ք՝ դնի. * պատմեցի՛ք օր ըստ օրէ զիրկութիւն նր։ զի որպէս ի վերոյ ասացաք, յայնմ մտածի մանաւանդ փրկուի ցուցեալ առ ազգն խորայէլի. իսկ յայսմ մտածի ընդհանուր փրկութիւն ազգի մարդկան. վասն որոյ զոր անդ պատմեցի՛ք ասաց՝ աստ աւետարանեցի՛ք դնէ. Ի. ՀԱԼ զի որպէս յայնմ՝ նոյնպէս և յայսմ կայնի պատմելի ինչ բազում, վասն որոյ յաւելու և աստ ասել.

Ը. Պատմեցէ՛ք ի հեթանոսս զփառս նորա. յամենայն ժողովրդս զսքանչելիս նորա։

Փառաբան ասի իմացեալ լինի նախ՝ մեծ վայելչութիւն նորա ըստ ամենայն կատարելութեանէ, այսինքն թէ կարողութեանէ, ըստ ողորմութեանէ, ևն. Երկրորդ՝ իմացեալ լինին այնպիսի գործք նորա՝ որք յայտնեն զայն մեծ վայելչութեանէ նորին, յորս առաւել փայլէ սքանչելիքն՝ զորս եցոյց ած ի փրկել նորա զազգն խորայէլի, և զազգ մարդկան առ հասարակ։ Երրորդ՝ իմացեալ լինի ըստ լսոյ" կամաւոր խաչելութենէն քրիստոսի, զի զայն համարեցաւ իւր փառք. մի զի փառք Թագաւորի ասէ ոչ միայն է զարդն և իշխանի, այլև խոնարհին կամաւ յանգստութենէն։ Չորրորդ փառքն այդ կրկնակի յայտնեցան մարդկան. մի՝ առաւելաբար ի հնումն առ խորայէլացիս. և մի ևս՝ իրապէս ի նոցունն առ համարէն ազգս. (Թող զդէմ յանդիմանն՝ որ պահի ի հանդերձեալն)։ Ո այս ամենայն պատմել յորդոր մարգարէն ասելով։

պաճուճեալ՝ ի հեթանոսս պճոյս նորա։ Կամի ասել. զոր միանգամ արար մեզ Աստ, և զոր միանգամ հանդերձեալ է առնել օտար ազգաց, որպէս ունի յայտնել առնելոցն զիւրաքանչիւր ի մէջ հեթանոսաց։ Իսկ հեթանոս ասելով իմանալ զամենայն ազգս եղեալս արտաքոյ ազգին իսրայէլի. և առ ի բարւոքս և իմացուցանել զայս՝ յարէ զկնի։

Ցնծացարո՛ ի նոյնէ՛ ժողովրդոյ ուրախացէ՛ք նմա։ Կայսիրքն ի պատմել ձեր զփառս այդ առաջի դիմելիք և զաքանչելի գործս նորա, զորս արար՝ և զորս ունի առնել. և զայս ասէ արասջիք մի միայն առ այս ազգ կամ առ այն՝ որպէս առնելին մարգարէք որք ըստ պարտականն իւրեանց հասարակօրէն իսրայէլացւոց պատմէին, այլ առ ամենայն ազգս և ի մէջ ամենայն ժողովրդոց, որպէս արարչին առաքեալքն։ Այլ զի Աստ ի ձեռն յայտնութեան փառաց՝ ասի մեծ, և ի ձեռն աքանչելեացն՝ սքանչելի։ Վասն որոյ յաւելոյ ասել մարգարէն,

ՀՀ. Մեծ է տէր՝ և օրհնեալ է յոյժ. անբաւ է նա ի վեհոյ ամենայն իւոց։

Մեծութիւն այլ կրկնակի կարէ մտածել ի մէնջ. ի՝ ըստ վայելչութեան փառացն՝ զոր ունի յինքեան. ըստ որում ասացաք ի վերոյ։ Երկրորդ ըստ յայտնութեանն մեծ վայելչութեամբ ի ձեռն ազգի ազգի գործոց ամենակարողութեան, և իմաստութեան, բարութեան, և ողորմութեան, ևն։ Իսկ այսմ մեծութեան ասի՝ թէ լի են երկինք և երկիր փառաւք նորա, և այս մանաւանդ յետ փրկագործութեան նորին։ զի այնու գրեթէ առաւել և մեծ և փառաւորեալ ցուցաւ Աստ ընդ ամենայն տեղիս. և մեծութիւն փառաց նորա լցոյց զաշխարհս ըստ հռչակելոյն, որպէս և օրհնեցաւ և օրհնի յամենեցունց. սոյնպէս և ի ձեռն աքանչելեացն առ ամենեսին ցուցաւ և ցուցանի աճառոր. վասն որոյ ասէ.

Մեծ է տէր՝ և օրհնեալ է յոյժ. անբաւ է նա ի վեհոյ ամենայն իւոց։ Կայ ասացուած ըստ նշանակեցելոյն դնի երբեմն առարկայ օրհնութեան՝ երբ զի Աստ գործով մեծ և աճաքարոյ աքանչի է օրհնել յամենեցունց։ Իսկ ըստ նշանակողին, այսինքն ըստ որում է բան

նչանակօղ դնի իբրև պատճառ օրհնելոյ զնա. որպէս թէ ասէր. օրհնեցէք զնա և պատմեցէք զփառս նորա. վասն զի նա միայն է մեծ, և ահարկու առաւելոյն արարածս, և և առ կուռս, որք իբրև ոչինչ պաշտին ի հեթանոսաց. ուստի ի սա. մնաց.

դնի. * ահաւոր է ի վերայ ոչ ոց ||:

Լ յսու յետին ասացուածով երկու ինչ կամի ցուցանել մարգարէն. մի՝ զայս թէ այնոքիկ կուռք որք իբրև ոչինչ պաշտին ի հեթանոսաց, ոչ միայն չունին ինչ նմանութեամբ ընդ այլ կենդանեսն, այլև ոչ իսկ կարեն երևիլ առաջի նորա, զի նա ահարկու է ի վերայ նոցա. և զայս ասէ՝ հայելով ի յիմիսը կարծիս հեթանոսաց, առ որս ահաւոր երևէին այն կուռք նոցա, յորոց սարսէին իբրև յոչ. զորս յանդիմանէ մարգարէս ասելով, թէ նոքա չեն քաջ սարսելի. զի նոքին իսկ կուռք սարսին յոչ, որպէս յայտ է ի կուռս եգիպտոսի, որք սասանեցան ի մտից նորա (Եսայ. ԺԹ. ։ ։) որպէս և գագան կուռք, որ կործանեցաւ առաջի տապանակի տեն (։ Թագ. Է. ։) |ծողզորս միով բանիւ խորտակեցին առաքեալքն։ |չրկրորդ կամի ցուցանել՝ թէ իրաւամբք ասաց պատմել հեթանոսաց զփառս և զսքանչելիս նմ. զի այնքիւք հանդերձեալ էին ազատել ի ծառայուէ գաղջելի կռոց, և գտանել զնծ կենդանի. իսկ թէ սրպիսի ինչ էին այն կուռք, յայտ առնէ ասելով.

Ե. Ա. զնայն կռա՜ք հեթանոսաց դե՜ւ են. և մեր ՀԱՐՑԱՆՔ ԱՐՔ։

Հեթանոսք թէպէտ և համարէին՝ թէ գոյ ՚ծ յերկինս, |՚այց անհաս գոլով այսմ՝ զայնևայլ չունծս հնարեցին. նախ չնծ երկնից և չնծ փառաց դնէին զարամազդ. զոր պարսիկք զրուան կոչէին։ |՚պա զերկնեին չնծ երկրի զհուռոմս. ըստ սոցին և զայլս. զորս յիշէ և սարգիս Շնորհալի (՚ի մեկն. Է. պետ. ։ ։ 16. Ձատ. Է.) յասէր՝ թէ հեթանոսք * զարամազդ ,, (առասպելէին) երկնից ասել արարիչ, և զհուռոմս ,, երկրի, և զպիսիդոն՝ ծովու, և զՏեառս՝ օդոյ, և ,, զՏեփեստոս հրոյ ||. և զդիոնեսիոս, այն է բաքոս՝ գինւոյ և արբեցութեան. (որպէս դնի ՚ի մեկն. ։ ։.

յովհ. Ե. 21. Հառ. Թ. յորդ.) Այնպէս իմն և վասն այլոց չնաշոց. որոց վասն և պրօշեալս կանգնեցին խաչաձեւիւբ ապրք ըստ խրեանց պաշտամանն. և որպէս երևի առ Հարքն աբրահամիւ առաւել Հանդիսացան Հանդամանիք նոցին. ըստ որում դրէ Եզեկիէլ կողացի (՚ի գլ. ծՂ.) * դրօշելոց ասէ ,, Հանդամանիք առ Թարպիւ Հարք աբրահամիւ (առ ,, առաւել պատիւ ընկալան)։ (տե՛ս և՛ ի սաղ. ղՂ. 7. և ՀԺՂ. 12.)

Լրդ այսոքիկ չնաշք հեթանոսաց կոչին ՚ի Հայ բարբառ՝ կուռք, ըստ երկուց. մի՝ ի նշանակել զպատկեր ինչ. զի բառս կուռն՝ որոյ յոգնակին և կուռք, նշանակէ զոյժ սաստիկ. և զի հեթանոսք զչնաշն Համաբերին զօրութեն մեծ՝ վասն որոյ կոչին կուռս։ Լրկիրորդ՝ ի նշանակել զնմանութիւն ինչ կռեալ. զի շինեալ լինին կամ ՚ի փայտից, կամ ՚ի քարանց, և կամ ՚ի Հրահալելեաց, որք կռեալ լինին այսինքն կռտնաս իւիք ձևանայիս։ Կոչին դարձեալ դիք, որ թէպէտ ՚ի մեզ Թարգմանի դէշք, բայց դնի իբր յոգնական դիոս բառիս, որով կամին իմացուցանել՝ Թէ այլ կուռք ոչ են դիոս (այսինքն արամազդ չնաշն) այլ դիք, այսինքն դիոսիկք։

Օ սոսա կոչ սատ մարդ արկն գէս՝ որ երևի լինել նուազականն նոյն դիոս բառին որպէս Թէ սատցեալ լինել ըստ յիշելոյ մեր այժմ դիոսիկք. որով նշանակին փոքր չնաշք, այսինքն սուտ նաշք. և զի չար հրեշտակք կամ՚ին և կամին պատուել և պաշտել ՚ի մարդկանէ իբրև աստուածս՝ վասն այսորիկ և նոքա կոչեցան դևք։ Չայս ամենայն Հայելով ասէ.

Քանզի կռտ հեթանոսաց դեւ են. և մեք պիտի ասք. Կռտ՝ հեթանոսաց դեւ են. և մեք պիտի ասք. Կռտ՝ եթէ իմացեալ լինին արձանքն կամ իրքն կանգնեալք իբրև չնաշք, դևին սատ պատուհաս կաղաբար, այսինքն ըստ այնց՝ որք պատուհասին զդևս, որպէս Թէ եղեալ էր. կուռք հեթանոսաց պատուհաս նախոյ են դիւաց։

Լսակ եթէ իմացեալ լինին այնք՝ որք ՚ի ձեռն արձանացդ պաշտեալ լինէին, դևին սատ ուղղակի փոխանակ պատուհասելոցն, որպէս Թէ եղեալ էր. այնք՝ որք ՚ի կուռս պաշտին՝ դևք են. իբր զի նոքիմբք դևք

դժոխոց պաշտօնն, և կամ այնպիսիք, որք են մարդիկ կամ իրք սուտք, և չա͞ծք, կամ ըստ եբրայականին էլէլէմ. զոր բազումք Թարգմանեն ա͞ծիկք, այսինքն փոքր ա͞ծք՝ ըստ ստուգաբանութե͞ դիք և դևք բառիցն՝ զորս եդաք այժմ.

Այլ եթէ իմացեալ լիցին միանգամայն ըստ պարունակողին և ըստ պարունակեցելոյն, յայնժամ բառս դև՛՝ դնի պատճառաբար. իբր թէ եդեալ էր, կուռք հեթանոսաց հնարք են դիւաց. յոր միտ ասէ եզնակ կողբացի. (գլ. լե͞.) * Նոյն զի դիւաց դիւտ է կռա-
,, պաշտութիւն՝ վկայէ դաւիթ, թէ ամենայն ա͞ծք
,, հեթանոսաց դևք են (այսինքն 'ի դիւաց հնարեալք)||.

Համառօտիւ առեալ՝ այս բան բացատրի այսպէս. կուռք հեթանոսաց ոչ են ա͞ծք. զի ոչ են արարիչք, այլ արարեալք և կռեալք 'ի մարդկանէ, գիւտք դիւաց. անզգայք և անշունչք, և բազում իրօք ճնաոիչք: Իսկ ա͞ծ մեր զերկինս արար, և զամենայն որք են ընդ երկնիւք, և ամենեցուն բարերար: Զայս ասելով մարգարէին կամի աւետիս տալ հեթանոսաց. որովհետև հանդերձեալ էին ազատիլ յայնպիսի սուտ ա͞ծոց, և պաշտել զա͞ծ կենդանի.

Դ ա͞. մնաց. ժդ͞. դնի * վասն զի ամենայն ա͞ծք ազգաց կուռք են, և ա͞ծ զերկինս արար||. Այս ևս զնոյն նշանակէ, զի կամի ասել. այն ամենայն զորս պաշտեն հեթանոսք անուամբս ա͞ծ՝ ոչ են ա͞ծ, այլ կուռք՝ այսինքն սուտ ա͞ծք. զի են կռեալ կոփեալ կազմուածք գիւտրնակք. իսկ զոր մեք պաշտեմք՝ է ա͞ծ ճշմարիտ՝ արարիչ երկնի և երկրի:

Այլ քանզի հեթանոսք 'ի ձեռն կռոց իւրեանց պաշտէին նաև զերկինս, զարեգակն, զլուսին ևն, որոց գեղեցկութիւն յայտնի տեսանի, յաւելլով մարգարէին զայն՝ թէ ա͞ծ զերկինս արար՝ այսու ցուցանէ, թէ նաև նոքին երկնային մարմինք թէև գեղեցիկ երևիցին՝ ոչ են ա͞ծք. զի են արարեալք 'ի ճշմարտէն ա͞յ. և գեղեցկութիւն նոցա ոչ է յիւրեանց, այլ յա͞յ. զի նա է արարիչ ամենայն գեղեցկութե͞. և ինքն է գեղեցկութիւն անսահման. զորմէ խօսի 'ի յաջորդ համարն ասելով.

ԺԴ.

ջ. Խաղաղանալ և վայելչանալ է առաջի նորա, որ բանիւն և ձեռվայելչութիւն ի սքեմսին նորա։

Ո փառաւորութիւն այդ նկարե իբրև վեհապետի, ո րոյ առաջի են փառք, պատիւ, և շնորհք գիրեա մեծութեան ։ և յայս միտ ասի ի տուրգ (ի սաղ. ՃԽ. 2.) * խաղաղանալ եւ մեծվայելչանալ զգեցար՝ արկար զլոյս որպես զօձոց , ։ ։ Կամ ասա փոխանակ նախ ասելոյ զգեցար , դնի՝ առաջի , յասելն ։

Խաղաղանալն և վայելչանալն է առաջի նորա ։ Կատարեալ խաղաղանալն կրկնակի կարէ առնել լինել ասա. մի՝ առաքինական՝ փոխանակ փառացն այլ. որ խոտովանելոյ լինի. և ըստ այսմ կամի ասել. միայն յոյժ է Աշխարհիս փառք անսահման. ուստի ի ։ ։ մեաց. փոխանակ խոտովանութեան՝ փառք դնի. որպես և յերբեմն որ զնոյն նշանակէ. Լրկրորդ առեալ լինի փոխանակ խոտովանեալ լինելոյ. և ըստ այսմ կամի ասել, ածէ իւրով անձամբ զի փառաւորութեան խոտովանեալ լինի յամենայնի՝ զորս ունի առաջի իւր յերկինս և յերկրի յանմարմին քաղցրութեան, և ի մարդկանէ ։

Այնպէս և բառդ վայելչութիւն կրկնակի կարէ առնել լինել ասա. մի՝ փոխանակ գեղեցկութեան այլ. և ըստ այսմ կամի ասել. յոյժ է միայն անսահման գեղեցկութեան։ Լրկրորդ՝ փոխանակ գովութեան. և ըստ այսմ կամի ասել. ածէ վայելչացեալ լինի գովութեամբ, կամ վայելչութիւն այլ երև ելով առաջի իւր՝ գովի և փառաւորի. յոր միտ ։ ։ մեաց. դնի գովութեան։ Չէ համառօտիւ միտ բանին է ցուցանել՝ թէ այլ ի փառաւորութեան և գեղեցկութեան. և նմին միայն վայելէ օրհնութեան և գովութեան. զի նա յինքեանս այնպիսի գոլով՝ ճանաչի և յայլոց այնպիսի լինել. վասն զի որպէս արեգակն ունելով զգեղեցկութիւն լինքեան՝ տեսողաց ևս երևի գեղեցիկ, այնպէս և ածն. և զայս կամելով ցուցանել մարգարէին վարի բառիւդ առաջի՝ յասելն, առաջի նորա, կամ առաջի երեսաց նորա. որով ցուցանի նախ՝ թէ ածն ոչ է ի յերեսս փառաւոր, այլ յառաջոյ. այսինքն ոչ եթէ յայլոց իբր ի յերեսս իցէ փառաւորեալ, այլ յինքեմէ և

իբրև առաջի իւր և լինքեան ։ Երկրորդ ցուցանի Թէ ամէն որպէս լինքեան է փառաւոր՝ նոյնպէս և յամենայնի և յամենայն տեղիս՝ որք առաջի իւր են. և առ այս յարէ ։

Աբեռուէ և ճճվելլեռուէ ի սբեռուեն նորա ։ Իւր ի ա. ամաց. դնի. * զօրաւէ և պարծանք ի տէզւոջ նէ՝ ‖. որով ի միտ առնեմք Թէ բառդ սբեռուեան՝ որ դնի աստ երկիցս, յառաջնումն առեալ լինի փոխանակ նէրքին սբզռուԹենն այ, և կամ փոխանակ սբբարար զօրուԹէ նորա ըստ որոյ ևբբր" դնի. օ. այսինքն զօրուԹէ. իսկ յերկրորդումն առեալ լինի փոխանակ սուրբ տէզւոջ նորա, որով նշանակի երկինքն, կամ տաճարն այ. յոր միտ ևբբր" դնի, պէդեաղ. այսինքն ի սբբարանի նէ, այն է խորանն՝ որ ի սուրբ գիրս կոչի սբբուէ ։ Ուստի և միտ բանին լինի այս, սբանչելի սբբուԹիւնն այ և անհատանելի մեծ վայելչուէ նորա, կամ պարծանք նորա, այսինքն պանծալի փառաւորուԹէ նորա՝ երևի յերկինս, և պաշտի ի տաճարի նորին ։

Ալլազգ ևս կարէ մեկնիլ այս՝ Հայելով յերբ", և ի ա. ամաց. ժէ. իբր Թէ ասէ. վայել է մնառցա նել այ զփառս և զպատիւ առաջի խորանի նորա. զի անդ տեսանի զօրուԹէ նորա և գեղեցկուԹէ նորին ի ձեռն տապանակին. և այս Թէպէտ յատուկ էր ժողովրդեանն իսրայէլի, բայց ապա առնէ մարգարէն՝ Թէ չնորհելի է և հեԹանոսաց ի ժամանակի իւրում ։

Ուսաւորիչն մեր ի յամախտապատում գիրս. (Ճառ. ԺԲ. երես 205.) այսու խոստովանուԹէ իմմնայ զխոստովանիլն զմեղս առաջի այ և քահանայից, և այն է ասէ վայելչուԹիւն մեծ. ուստի գրէ այսպէս * խոստովանուԹիւն (մեղայ) ասէ մարգարէն՝ մեծ ,, վայելչուԹէ է առաջի այ և քահանայից նորա. զի ,, ասացի ասէ՝ Թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. և ,, դու Թողեաս զամենայն ամպարշտուԹէ մեղաց իմոց ‖. և խօսի անդ երկար ի վերայ խոստովանուԹէ տուն քանիւք, և և օրինակաւ ։

Ամբ. զխոստովանուԹէն վերածէ ի գոհուԹէ, և զվայելչուԹէն զոր գեղեցկուԹէ ընԹեռնու՝ վերա-

ծէ յառաքինութիւն։ Օ այս եդեալ մտրգարէին յորդորէ ասել զԺողովուրդն՝ մատուցանել իւր զփառս և զպատիւ ասելով։

Է. Ա՛ստուածէ՛ պեառն փոխի ամենց. Աստուածէ՛ պեառն ղեառս և ղպարիս. Աստուածէ՛ պեառն ղեառս անառն նորա։

Լ՚այս բանիք հային առ Ժողովուրդս հեթանոսաց, որք գալոց էին յերկրպագութիւն Աշմարտին ոյ յերևիլ փրկչին, զոր իբրև ներկայ տեսանելով խրախուսէ զնոսա և ասէ։

Ա՛ստուածէ՛ պեառն փոխի ամենց. Աստուածէ՛ պեառն ղեառս և ղպարիս. Աստուածէ՛ պեառն ղեառս անառն նորա։ Լ՚այս ինքն ոմ ազգք և Ժողովուրդք հեթանոսաց՝ ահա գայ աւետկարութիւն փրկութեան ձերոյ. եկիք ընդառաջ նմա. մի լինիք խիստ և դառն իբրև զազգ խորայելի. այլ ընկալարուք զնա՝ հաւատալով ի նա, և ընդունելով զանձն նորա. և ահա դուք որք երբեմն տառապեալ եիք յոչ՝ լինելոց էք Ժողովուրդ նորա. մատուցէք ասա նմա զփառս՝ փառաւորելով զնա զանելութիւն գովութեան. մատուցէք և զպատիւ, կամ ըստ այնմ. մատուցէք զՔ. զՀոգութիւն, պատուելով զնա գործովք բարեաց։ Ա՛տուցէք նմա և զփառս անուան նորա, այսինքն օրհնեցէք և զանուն նորա. զայսմանէ տեսի ի տաղ. իբ. ւ. և ։ Աւր երիցս դնելով զառաջ Աստուածէ՛, կամ որպէս դնի ի այ. մատ. փառ, ցուցանել նախ զկիրսէի զԵհմանն արտի յորդորողին. ցուցանել երկրորդ զմեծութիւն բարերարութենն այ, որով վասն արժան էր այսպէս փառաւորել զնա. ցուցանել երրորդ ըստ խորհրդոյն՝ թէ այս փառատրութիւն մատուցանի ամենասէրք երրորդութեան։ Լ՚այս և առ ընծայաբերութիւն յորդորելով յարել զկնի և ասէ։

Ը. Ա՛ռէ՛ պարտաց՝ և տո՛ւր ի սրտս նորա. երկիր պատ փէ՛ս պեառն ի փառիս սբեռնի՛ն նորա. և խոստ վեսչի չերեսաց նորա ամենայն երկիր։

Ժողովուրդք ազգին հրեից ի գնալն ի տաճար ամն՝ տանէին զպատարագս, այսինքն զընծայս, և մնեալ ի սրահ և ի գաւիթ տաճարին մատուցանէին զնո-

սին ձեռամբ քահանայից. և անդ երկիրպագեալ նմին, և ապրեալ զպաշտամունսն՝ դառնային ի տեղիս իւրեանց։ Այդ գոր երբայեցիք առնէին, զնոյն առնել յորդոր լինի և առ հեթանոսս. իսկ զայս առնել հեթանոսաց չէր օրէն, բայց եթէ ընդունելով զճշմարիտ կրօնս ածպաշտութեան։ Ապեսին ի կոչել մարգարէին զնոսա յայս վիճակ՝ սովին աւետ նոցա զդարձ նոցին ասելով։

Ահեղ պատարագ է մեզ ի սրտիս նորա. երկիր պագէ՛ք ի գաւազնիս սբեռնեն նորա։ Ասմն ասել. եհաս ահա ժամանակ դարձի հեթանոսացդ. և արդ արիք և առէք ի ձեռս ձեր զպատարագս Հաստոյ ոչ՝ զՀոգևորսն և զներքինն. և մուէք ի տաճար նորա, և երկիր պագէք նմա անդ։

Աստ սրահիւ ըստ ձառին իմացեալ լինի արտաքին սրահ տաճարին, որով ոչ Հոգևորին նշանակի մուտն յեկեղեցի քան։ Իսկ գաւթիս ոչ իմացեալ լինի այլ տեղի, այլ նոյն ներքին գաւիթ տաճարին, ուր երկիրպագանէին ժողովուրդք առաջի խորանին սրբուեան (տես ի սաղ. ԺԷ. 1.) որով նշանակի կալ ազգաց յեկեղեցւոջն քան, և մատուցանել զՀոգևոր պատարագս ոչ ի միում տեղւոջ, այլ ընդ ամենայն երկիր ըստ գուշակելոյն մալաքեայ. (ա. 11.) որոյ վասն յոգնակի դնէ. որ ըստ ձառին ցուցանէ զընդարձակութեան գաւթին, և ըստ Հոգևորին զառաքեալսն բազմութեանէ տաճարաց ի նորումն։

Բայց այս տարբերութիւնք բառիցդ սրահ և գաւիթ ոչ յարմարութեան միայն ի մէջ բերին ասա. զի այլազգ ևս մարթի էր դնել, որպէս գնի ի ա. Մնաց. ԺԷ. ուր գրի այսպէս. * առէք պատարագս, և մատուցէք առաջի երեսաց նորա, և երկիրպագէք ներ ի սրահ սբբութեան նորա։ որով այս ևս միայն գիտեալ լինի՝ զի տացի յորդոր՝ մատուցանելոյ ոչ զՀաստոյական պատարագս. ընդ նմին գուշակեալ լինի և զառնալն հեթանոսաց յերկրպագութիւն Աստուածոյն ոչ ի գալ մեսիային։ և զի այս էզև Հոգևոր իմն այլաբանութեամբ, խոստիւ կոչ զնոյն մարգարէն ասելով։

Ահա խոստովան յերեսաց նորա. ամենայն երկիր։ Այս բան

բազում ուրեք կրկին ի նոր գիրս ըստ այլևայլ կարգի. իսկ ասա դնի ըստ փոփոխելոյ երկրի ի կրօնս ծաղպաշտուԹե. յոր միտ կամի ասել. ի գալ մեսիային ամենայն երկիր այսինքն ամենայն բնակիչք երկրի խառնվեսցին յերեսաց նորա։ Ուր բառդ խառնել դնի փոխանակ երկիւղիլ այլափոխելոյ. և այս՝ կամ դառնալով յածպաշտուԹե, և կամ յառնելով ընդդեմ ծաղպաշտուԹե. որպէս արարքին ի սկզբան քարզուԹե հալածիչքն, յորժամ ընդ ամենայն ԹագաւորուԹիս, և ընդ ամենայն աղգս երկիր այն այլափոխուԹե կրեցի. որպէս յայտ է ոչ միայն յեկեղեցական աւանդուԹեց, այլև ի հեԹանոսական պատմուԹեց, յորս յայտնաբարբառ վկայի այս այլափոխուԹիւն։

Ամենք զայս բան վերածեն յերկիրդ գալուստ Տեառն մերոյ, յորում սաղսեղոց են յերեսաց նորա ամենայն ազգք և ազինք. յոր միտ ի Տ. Ութաց. դնի. * երկիր յերեսաց նորա ամենայն երկիր». այս կարծիք և ի Հիմարիտ, բայց Թուի Թէ բան մարգարէին ուղղակի յառաջինն կայի, և ապա յերկիրդն. զոր լսէ" բարեյաւսիս առնել աստ զբովանդակ տեսուԹեան բանին։ Օ այս եդեալ մարգարէին, կամելով առաւել և հաստատել զնախասացեալն յառելու և ասէ։

Թ. Ա սացէ՛ ի հեԹանոս՝ ԹԷ պէր ԹագաւորուԹիւն. հաստատեաց զչարչարեսն զի ճ սատանեսցի. և գտցէ զծոցոմորդիս նոր ոսդոսԹէ։

Ա յսիկս խօսի մարգարէն՝ որպէս Թէ եկեալ հասեալ իցէ փրկուԹիւնն հեԹանոսաց. առ որս հայելով գոչէ։

Ա սացէ՛ ի հեԹանոս՝ ԹԷ պէր ԹագաւորուԹիւն։ Ա րդարև Թագաւորեաց ձեզ ի վերայ արարածոց ի ստեղծանեն գնամ՝ զորմէ խօսեցաւ մարգարէն (ի սաղ. ղԷ. ։) և ունի և խօսիլ (ի սաղ. ղՀ. ։) և կրկին և մանաւանդ ի նմին օրինակս Թագաւորեաց ի վերայ աղգին հրէից՝ յընտրելն զնոսա իւր ժողովուրդ, և ի տիրելն ի վերայ նոցա. բայց ապակաս՝ եԹէ յայնմ և եԹէ յայսմ ոչ իբրև մարդ, այլ իբրև ձեզ Թագաւորեաց. իսկ ի գալ իւրում յաշխարհ Թագաւորեաց

և ըստ որում մարդ ի վերայ ամենայնի, և մանա-
ւորապէս ի վերայ եկեղեցւոյ. յոր ժողովեաց զՀե-
թանոսս. ուստի ուրախակից լինի նոցա մարգարէն,
և նոյն իսկ հին եկեղեցին. և յուրախութիւն խրատ-
աղաչէ. ասացէ՛ք ասէ ի Հեթանոսս, այսինքն քա-
րոզեցէ՛ք ի Հեթանոսս. կամ թէ արարէ՛ք, զի հրա-
չակեսցի ի մէջ Հեթանոսաց, թէ եկն Տէրն ՅԻ, և
լեալ իբրև զմեզ մարդ՝ թագաւորեաց ի վերայ մեր
և ի վերայ ամենեցուն, ոչ հարևանցիկ տիրելով,
որպէս եղև ի վերայ հրէից, այլ հաստատութիւն.
այս զի ի Ձեռն խաչի եղև այս թագաւորելս, ոմանք
ի նախնի հարց յաւելին ի սաղմոսս իւրեանց զառա-
ջաւ՝ ասելով. թագաւորեաց փայտիւ կամ ի փայտէ.
որպ ևան կարծեցին ոմանք թէ նաև յերբ. գոհանիւք
յառաջն այն բառ. բայց այդ կարծիք չունի տեղի.
զի ոչ յիմիք թագաւորութիւն գոհանի այն. ուրեմն և
ոչ յերբայականն, ևամենայն ապա մարգարէին ցուցա-
նել՝ թէ այն թագաւորութիւն քոյ մշտնջենաւոր է,
յարէ զկնի և ասէ.

Ասացէք զաշխարհս, զի ինասանիցի՝ [illegible]
տատեաց զաշխարհ ի մի եկեղեցի անսասանելի, կամ
հաստատեաց զեկեղեցի իբրև զնոր աշխարհ, որ ոչ
սասանիցի ըստ հին եկեղեցւոյ.

[illegible] ՅԻ. Ժէ. դնի. * յաջողեսցի երկրի, և մի
,, սասանիցի ‖. այսինքն ի գալ մեսիային յաջողես-
ցի ազգի մարդկան՝ ժողովել յաշխարհի եկեղեցի՝ որ
ոչ սասանիցի, և կամ յաջողեսցի նոր երկրի՝ այս-
ինքն եկեղեցւոյ՝ ՅԻՆՉ ցյուրեան
տեան. զայսմանէ տես ըստ ՅԱՒՒ ի սաղ. ղէ. 2.
ուր ասի. * տէր թագաւորեաց ... հաստատեաց
,, զաշխարհ՝ զի ի՛ սասանիցի ‖.

Լոկ պատճառ անսասանութեան եկեղեցւոյ է հաստա-
տութիւն հիմանն՝ այն ինքն է քո ՅՈՐ մեր. զորմէ գե-
ղեցիկ ինն գրէ լամբ" ասելով. * տեսանես զՀաստա-
,, տութիւն աշխարհի՝ ի վերայ անսասանելի հիման.
,, զի յորժամ ադամ արկաւ հիմն սորա՝ շինեալքն ի
,, վերայ նորա սասանէին ընդ սասանեցելոյն մահ-
,, ուամբ. Լոկ յորժամ քո՝ շինեալքն ի նա հաստա-
,, տեցան՝ ընդ հաստատելոյն յարութիւն, և որպէս նա

,, ոչ մեռանի, և մահ նորա ոչ տիրէ, այսպէս և ոչ
,, մեք յայսմ յուսոյ քնաւ սասանիմք ։ Լ՚որդ յետ խո-
սելոյ մարգարէին զհաստատութենէն եկեղեցւոյ՝ զոր
հիմնեաց ՚ի, խօսի այժմ զկառավարութէն դատողու-
թենն քան՝ ասելով՝

Յո՛ տէր ողորմեաց երբ ոչղղեցաք ։ Լ՚առաջ քան՝ զերբակի կարէ առնել լինել ասա. մի՝ փոխանակ կա-
ռավարելոյ, և ըստ այսմ կամի ասել. ՚ի Թագաւո-
րել մեսիային՚ի վերայ ազգի մարդկան՝ կառավարես-
ցե զնոսա ուղղութ ։ Լ՚երկրորդ՝ փոխանակ իրաւունս
առնելոյ. և յայս միտ կամի ասել. ՚ի գալ մեսիային և
՚ի Թագաւորել նորա ՚ի վերայ մարդկան՝ արասցե նո-
ցա իրաւունս, լինչ նոցա պաշտպան, և ազատեսցէ
զնոսա ՚ի բռնաւէ Թշնամեաց նոցա՝ այսինքն դիւաց ։
Լ՚երրորդ՝ փոխանակ դատաստան առնելոյ, և յայս
միտ կամի ասել. ՚ի գալ մեսիային ոչ միայն Թագա-
ւորեսցէ, այլև դատեսցէ ժողովուրդ իւր, և հա-
տուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր՝ ոչ միայն ՚ի կա-
տարածէ, այլև յամենայն ժամանակի ըստ որոյ ասաց
յովհաննէս, Թէ հեծանոց նորա ՚ի ձեռին իւրում
է. յորոյ վերայ գրէ ՀՈՐՀալին (՚ի մէկն. մատ. գլ.
ՃՀ. 12.) այսպէս * ոչ ասաց ասէ Թէ յայնժամ միայն
,, առնու (զՀեծանոցն) ՚ի ձեռս. այլ զի՝ նշ, որոյ հե-
,, ծանոցն ՚ի ձեռին իւրում է, այսինքն միշտ ընդ-
,, ինքեան կրելով. յորմէ ուսանիմք՝ միշտ ՚ի դատաս-
,, տան մտեալ՝ նմ յարաբածս, Թէպէտև ոչ համբերն
,, և յայտնի (որպէս յաւուրն յետնում), այլ մնանա-
,, տորաբար և՚ի ծածուկ ։ Լոկ Թէ քանի ուրախու-
Թիւն լինելոց էր բոլոր տիեզերիս ՚ի գալ մեսիային՝
գեղեցիկ ինն նկարագրէ մարգարէն՚ի յաջորդ համարն
ասելով՝

Ճ. Ո՛րբա՛ն եղէ՛ք երկինք՝ և ցնծացե՛ք երկիր. լերա՛ք ճաս-
ցի՛ ծով լերի՛ւ երով. ցնծացի՛ք դո՛ղք և ամենայն
որ է՚ի նոսա ։

Լ՚այս բանիք յայտ առնէ զմեծութէն այնր, յորոյ վե-
րայ է ուրախութէն, այսինքն զմեծութէն բարերա-
րութէն որդւոյն ՅՍՈՒ՝ որ եկեալ յաշխարհ ազատեաց
զազգ մարդկան՚ի բռնակալութէ սատանայէն և մա-

հու. և ինքն Թագաւորեալ ի վերայ նոցա՝ առեալ բանեաց հեռաւորաց և մերձաւորաց զհագաղութիւն յաւիտենական, և զուարթութիւն յերկինս և յերկրի.

վասն որոյ գոչէ մարգարէն.

Ուրախ եղիջին երկինք՝ և ցնծասցէ երկիր. զոռայցէ ծով լիւ իւրով. ցնծասցեն դաշտք՝ և ամենայն որ է ի նոսա: Ասէ մասնաւոր ցուցմամբ երկնից զուարթութիւն իւրեանց, և երկրի զցնծութիւն. զի թէ վասն դարձի միոյ մեղաւորի ցնծութիւն լինի յերկինս, ապա քանի՞ մեծ ցընծութիւն լինիցի ի փրկութիւն համօրէն աշխարհի. և եթէ ցնծութիւն լինի տան ի կոխել անդ Թագաւորի, քանի՞ մեծ ցնծութիւն լինիցի յերկրի ի կոխել անդ երկնաւոր Թագաւորի: Նոյնպէս և զուարճասցի խընդութիւնդ ալեաց իւրոյ, և բազմութիւն կայտառացելոցն, կամ որպէս դնի ա. ունաց. հնչեսցէ և ծով զօսանս նոր ալեաց իւրոց, և ամենայն կենդանեաք իւրովք. միաբանեսցին և դաշտք յուրախութիւն նոցա զալստեան Տեառն իւրոյ, և գեղեցիկ ծագկամբք իւրեանց: Այս և տալով ղերես ցորենոյ և գինւոյ և իւղոյ ի կատարումն խորհրդոց. նաև (որպէս դնի ա. ունաց.) փայտք անդաստանի, այսինքն անզգուշ ծառք, և որ ինչ գտանի յանդաստանս, ցնծասցեն ի միասին:

Օ այսոսոսիկ ասէ մարգարէն ոչ զի սոքա կարեն ցրնծալ իրօք, այլ զի այնպիսի և այնչափ ուրախութիւն արժանի էր գալստեան մեսիային՝ մինչև եթէ հնար էր, այսօրիկ անզգայ արարածք ևս ցնծային. զի որպէս ի գալ Թագաւորի նորոգապէս ի քաղաք ապատրանք և հրապարակք ցնծան ի ձեռն զարդուց, սոյնպէս արժան էր և ապարանից աշխարհի այսինքն երկնից, և հրապարակաց՝ այսինքն ցամաքի և ծովու ցընծալ ընդ գալուստ Թագաւորին երկնաւորի. զի ըստ գրելոյ լամբ՝ * որպէս ընդ մտանել մեր ապականութեանն և սաստկութեան մահուամբ վշտացն, տարերքս՝ այսպէս և ընդ նորոգելն և ընդ հաստատելն, ուրախակիցք մեզ եղեն, այսպէս և նորոգելոյն՝ ընդ մեզ նորոգեսցին. և զայս յայտնապէս առաքեալ՝ ի հռոմայեցւոց Թուղթն ցուցանէ՝ յասելն, ընդունայնութեան արարածք հնազանդեցան. ոչ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ, որ հնազանդեցոյցն

,, յուսով. զի և ինքեանք իսկ արարածք՝ ազատեսցին
,, ի ծառայութենէ ապականութեան՝ յաղաստեալի փա-
,, ռացն որդւոյն ՅՍ. յայտ է թէ՝ ի մեզն, զի ըստ մեզ
,, ազատեալ նորոգին՝ ի յարութենէն յԱս պայծառու-
,, թիւն. վասն այսորիկ և ուրախացեալ ցնծան ընդ
,, մեր հաստատուէն՝ ի յոյս յարութենն երկինք և եր-
,, կիր՝ ծով և դաշտ, զի և նոցա է յոյս ընդ մեզ նո-
րոգութենէ ||:

Լ. Այս ցնծութիւն երկնի և երկրի երևեցաւ յառաջ
մկրտութենէ նոցա՝ յորում երկինք բերի՝ ի ինդութենէ պա-
տառեցան, և հնչեաց ձէրկիր և՝ ի ջուր գետոյն
ձայնն Հայրական, որ լսելի եղև և՝ ի դաշտս յորդա-
նանու և՝ ի ծովն հրէաստանի:

Լ. Յաթանաւորէն, ի ձեռն երկնից նշանակին հրեշտակք,
և երկրաւ ազգ մարդկան՝ ի հաւարակի. իսկ դաշ-
տիւք հրէայք, յորս միայն խոտք և դալարիք բուսա-
նէին, և ոչ պտուղք. նոյնպէս և ծովով նշանակին
հեթանոսք՝ որք ծփային յալիս կռապաշտութե. Լ. Ա-
ՀԼ՝ ի գալ քոյ ամենեքին ոտքս ցնծասից երկն ըստ իւ-
րաքանչիւր վիճակի. Հրեշտակք՝ զի թագաւոր իւ-
րեանց տիրեաց և օտար թագաւորութե. և զծով-
վուրդ այնր կամ յընկերութենի իւրեանց՝ ի տեղի ան-
կեալցն. վասն որոյ և սկսան աւետիս տալ մարդկան
բազում օրինակաւ. Լ. զգ մարդկան՝ ի հաւարակի,
զի ամենեքին՝ ի գերութե տառապէին, և եկն ազա-
տեցուիչ նոցա. Հրեշտք, զի զորմէ գուշակին, և
որում ակնունէին՝ եկն առ նոսա. Հեթանոսք՝ զի
կային գրեթէ առանց ոյ, և գոյն զնա ոչ միայն իր-
րև ՚ած, այլև իբրև թագաւոր.

Լ. արդեաւք, երկնիւք նշանակի հոգին, կամ ըստ
լամբ՚ արք հոգևորք. երկրաւ մարմինն կամ մարմնա-
սէրք. ծովով խորհուրդք մեռց, և դաշտիւ կամքն
և բաղձանքն կամ զգայարանք. ոտքս ամենեքին՝ ի
գալ քոյ՝ ի մէզ՝ ի հաղորդութե ցնծան և բերկրին.
Լ. զդ քանզի յայսմ ամենայնի առաւել եղև ցնծութիւն
հեթանոսաց, ՚ի մանաւանդ ի սմ՝ ի մէջ բերէ զայն
՚ի յաջորդ համարն առելով.

ժա. Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց տեառն, զի գայ, և գայ նա 'ի դատել զերկիր:

Այս նմանութիւն ցնծալոյ ծառոց յայն հայի, զոր եդ զցնծութենէ երկրի և զդաշտաց, և զայլոց իրաց. (զորմէ տես 'ի սաղ կդ. 13-16.) իսկ թէ երբ լինելոց իցէ, յայտ առնէ ասելով:

Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց տեառն. զի գայ, և գայ նա 'ի դատել զերկիր: Կամի ասել. այս ցնծութիւն որով ունին ցնծալ հեթանոսք՝ յայնժամ լինիցի՝ յորժամ գայ տէր և թագաւորէ: Զգալուստն դնէ երկիցս. մի՝ սոսկապէս թէ գայ, և մի ևս՝ թէ գայ 'ի դատել: Այս կրկնումն 'ի զօրութիւն շարադրութենն հայելով ցուցանէ զճշմարտութիւն և զհաստատութիւն ասացելոցն. յոր միտ. Ա. մնաց. դնի միայն, եկն դատել զերկիր. իսկ յիրն և 'ի խորհուրդն հայելով՝ Բ միոյն ցուցանէ զառաջին գալուստ Քին, և ըստ միւսոյն՝ զերկրորդ գալուստ նր:

Յառաջնումն գայ 'ի փրկել, վասն որոյ յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի, այսինքն վայրի ծառք անտառացեալք, որովք նշանակին ազգք հեթանոսաց՝ որք չէին ընտանի իբրև զիսրայէլացիս տնկեալ առ 'ի նմանէ. յոր միտ երգեմք 'ի շարականի. * ցնծամք և մեք ծառք անտառի ընդ գալուստ
,, Քնդ կրկնակի, ևն‖. և Նարեկացին. ('ի պատմ. խաչին. ԻԳ.) ասէ. * ծառք բուսոյ բնաւին անտա-
,, ռաց (ազգին հայոց) հրճուանօք խրախուսեալ՝ ցըն-
,, ծան հոգեպէս, զյայտնութիւ երևման հաստչին
,, ծանուցեալ‖: Նաև զայս ցնծութիւ դնէ մարգարէն լինել յերեսաց Տին այսինքն յերևելոյ Տին՝ որ եղև 'ի գալ նորա յաշխարհ: Զորոյ զժամանակն կանխաւ գուշակեցին մարգարէքն. ընդ որս և յակոբ նահապետ. զոր և առաջի արարեալ շնորհալւոյն ('ի մեկն. մատ. գլ. Է. ասէ.) * Զժամանակ գալստեան Տին
,, նահապետն յակոբ նկատեաց. մի պակասեսցէ (ասէ)
,, իշխան յուդայ, և մի պետ յերանաց նորա, մինչև
,, եկեսցէ այն՝ որ կայն և մնայն. և նա է յոյս հե-
,, թանոսաց‖.

Իսկ յերկրորդ գալստեան լինիցի ցնծալ այնոցիկ՝ որք հաւատարիմ գտան յառաջնումն, այսինքն որք հաւատարմութիւք հնազանդեցան նմա, և կատարեցին զհրամանս նորա. զի յայնժամ՝ ի դատել նորա զամենեսեան, և՝ ի դատապարտել զապստամբան, նոքա եւեթ ունին ուրախանալ՝ որք զգուշութիւք և հաւատարմութիւք ծառայեցին նմա, որով յորդորիմք և մեք ըստ սմին կեալ։ Ուստի որպէս ծանուցանէ ծործորեցին. (՝ի մեկն. մատ. գլ. իե՛.) * գրէ պօղոս՝ ,, մարանաթա. այսինքն տէր գալոց է. զգոյշ կա- ,, ցեք ։ Ձայս Հայելով ասէ նաբեհացին (՝ի բանն լիե՛.) * եկեսցէ (տէր) ՝ի դատաստան հատուցմանն ,, քննել զծածկեալսն կշռութիւք չափոյ արդար իրա- ,, նանց ։ իբր զի ըստ չափու տաղանդիցն կամ քանա- քարաց՝ զորս ետ՝ ումեմն տասն, ումեմն հինգ, ումեմն մի, ունի պահանջել զհամարն. առատ ետ զտաղանդ- սըն, և ձիշտ պահանջէ։ Իսկ * տաղանդն քան- ,, քար ասի ըստ եբրայակնին, որ է հինհազար դա- ,, հեկան, կամ տասն ։ որպէս գրէ ծործորեցին (՝ի մեկն. մատ. գլ. իե՛.) Ա՛յս երկրորդ գալուստ ձեռն քարոզի փառաւոր, և ահեղ. վասն զի որպէս ասէ բաղաեղ (՝ի մեկն. մարկ. գլ. ժա՛.) * ոչ եթէ յերկ. ,, քովէ գալոց է, այլ յերկինից. և ոչ՝ ի վերոյ յա- ,, ւանահի նստեալ, այլ՝ի կառս հոգւոց բազմեալ. ,, ըստ այսմ չքջի նա՝ ի վերոյ Թևաց հոգւոց (սաղ. ,, ճէ. ։) և եթէ հոգմ երկնաւոր նորա (սաղ. ժէ. ,, ։։.) և ոչ եթէ՝ ի վերոյ հանդերձին և ոստոց ,, ձիերենեաց և արմուկենեաց ընթացեալ, այլ՝ի ,, վերոյ ամպոց արշաւեալ. զի եդ ասէ զամպս՝ ի ,, գնացս իւր. և եթէ ամպք փոշի ոտից նորա ։ յոր ունի բազմիլ փառաւք, և դատել անտի զամենայն որ- դիս մարդկան, զոմանս փառաւորելով, և զոմանս դատապարտելով։ Ա՛յլ զի ցուցցէ մարգարէն եթէ ուղիղ է դատաստան նորա՝ ի գալ նորին՝ ոչ միայն յերկրորդումն. այլև յառաջնումն՝ առաջի առնէ ըզդ- դատել նոքա զամենեսեան իբրառնոյ, և ասէ.

ժԷ. Պատուիրեցին էրատոքէս. և զթողեալսդ ամենայն ձշմարտութիւն խոսել։

Լսելոյ բանիւ դիտէ մարգարէն զամենեսեան յորդորել՝ ի հնազանդութիւն երկնաւոր թագաւորին. իբր զի՝ ի գալ նորա՝ ուրախութիւն ընկալցին զնա, և ձանձրանալով զնա իւրեանց թագաւոր և դատաւորդ՝ հրաժարեսցին նմա. և առ՝ ի ցուցանել՝ թէ արժան է այսպէս առնել, զի մի անկցին ընդ դատաստանաւորա, ասէ։

Պատուիրեցին էրատոքէս. և զթողեալսդ ամենայն ճշմարտութիւն խոսել։ Արդեօք ասացաք՝ ի վերոյ՝ ի համարն 9. դատել ասի երբեմն կարէ նշանակել. մի՝ փոխանակ կառավարելոյ. և ըստ այսմ կամի ասել. ՝ի թագաւորել մեսիային՝ իրաւամբք և ձշմարտութիւն ունի կառավարել. վասն որոյ արժան է հպատակիլ կառավարութեան նորա։ Երկրորդ՝ փոխանակ իրաւունս առնելոյ. և ըստ այսմ կամի ասել. ՝ի գալ մեսիային հանդերձեալ է իրաւունս առնել ամենայն բնակչաց տիեզերքիս, և դատաստանաւորել զնոսա, և առնել զնոսա իւր ժողովուրդ, և ցուցանել նոցա ձշմարտութիւն իւրով թէ զինչ պարտ է առնել նոցա։ Երրորդ՝ փոխանակ դատաստան առնելոյ. և ըստ այսմ կամի ասել. ՝ի կատարածի աշխարհիս գտանելոց է զամենայն ազգս մարդկան իրաւամբք, այսինքն իբրև բնական իրաւանց՝ զորս և վարեսնի մարդիկ ունին. իսկ զժողովուրդս իւր գտանելոց է ձշմարտութիւն իւրով, այսինքն աւետարանական բանիւ՝ յասել նորա առ նոսա. զինչ այն ձշմարտութիւն էր՝ զոր աւանդեցի ես ձեզ. և դուք զինչ գործեցիք. իմիանդրդեօք հետևեցայք ձշմարտութեան, թէ ձերբումբ անսացիք կեղծաւորիւք ստութեանց։ Ոչ սոյն զայս բան հանդերձ երկոքումբք նախընթաց համարօք փոքր ի շատ լսել շարադրութիւն դնի մարգարէն ՝ի վերջ. զի. սաղմոսին ասելով. * խոսովեցի ծով լսիւ իւրով, տիեզերք և ամենայն բնակիչք նորա ... գտան զարհուրեալ և զժողովուրդս իւր ուղղութիւն։ զորմէ խոսեսցուք անդ։

Ի ա. ձնաց. ժԷ. այս չեսին բան ոչ դնի՝ այսինքն

է * զատ զայիզբս իրաւամբք· և զժամդվուրգս ամենայն ձմմարտութիւնբ խրով ||, այլ ի տեղի այսր յաւելեալ լինին այլ երկու բանք· որոց առաջինն է այս· Խոտովանի եղբօրէ պետառ պի եաբէ է· պի յանիեան է ողբմութիւն նորա· Ո՞չ յս բան գնի ի սկիզբն· ձմի՞ն սաղմոսին· և զայսմանէ ունիմք խօսել անդ· Ո՛չ ապա յաւելեալ լինի ի ա· ձեաց· ժ՟ղ· երկրորդ բանն ասելով· Ո՛չ ասացէ՛ էեղ՛ պնէ ազ եօ էրկոնեան ձերոյ· և ապրեցո պնէ ի ընտեաց ձերոյ· պի օրհնեացուս պանան չս սուբբ· և պարծեացուս չօրհնուելնէս չս· ( )րհնել պեր ազ էսլելի չախերնէդ պինէ չախեան· Ո՛չս Հատուած ևս փոքր մի փոխուելոյ գնի ի վերջ ձէ· սաղմոսին, և զայսմանէ խօսեացուք անդ· Ո՛ սոսին վերջացուցանելով մարգարէին զան իւր ի ա· ձեաց· ժ՟ղ· կամի սովիմբք գոհուելի մատուցանել ձյ վասն մեծի բարեբարուելնէն, զոր եցոյց ազգի մարդկան ի վերայ երկրի՝ և զնոյն հանդերձեալ էր ժառանգեցուցանել նոցա առաւելուլէ չարքայուելնէ երկնից չաւետեանս չաւետեցից·

ՍՈՂՄՈՍ· ՂԵ·

Հայտարարուելի Թագաւորուելնէն այ ի վերայ ամենայնի, և ահեղուելնէ փառաց և դատաստանի նորա, միանգամայն և նկարագրուելնէ վիճակի արդարոց և ուղղոց·

Աղօտս ի դաւիթ· ի ջամանէի պր երկիրն հաստատեցաւ·

1 Տէր թագաւորեաց՝ յիմծասցէ երկիր· ուրախ եղիցին էղկէր բազումք· 2 Ամպ և մէժ շուրջ է պնդանս· յիրաւունս և յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա· 3 Հուր առաջի նորա գնասցէ, այրեսցէ շուրջ պնդանս նորա· 4 Լուսաւորեցան էլյատակունս նորա տեսեցէ՝ և սասանեցաւ երկիր·

ՏԷՐ։ 5 | Երբեմն որպես մեզ հալածողն յերեսաց ՝ն, յերբեսաց ՝ն ամ երկիր։ 6 Պատասխանեն երկիրն ըստ բանին նորա. թեպէտ անհնար ծաղրելոցդ պնաաս նորա։ 7 Մանեսցեն սնունդ ձեր որ երկիր պատանեն ինոյ, և ոչ պարծիս ՚ի ըստ ընելոյ խրեանց։ 8 Յերկրպագեն նմա ամ հրեղանէ նորա, ըստ լուսոյ և սորան եղեն սնունդ։ Եւ ընծայեսցեն գոտեր յոտից վանն երանեալ տոյ ՝ր։ 9 Ոչ գոս բարկեալ ես ՚ի վերոյ անհնար երկիր։ յոյժ բարկեալ ՚ի վերոյ անհնար ինոյ։ 10 | Ոչ սերեր պէր՝ սոեղէ ընդարձակութեան։ պահել ՝ր պանիկնս սրեոց էոյց։ ՚ի յերեսոյ ղեղուրի երկեսցեն վեռա։ 11 | ոչ ծաթեաց սրտորց։ հոդոյ սրտից եղեն ուրախութեան։ 12 Ոչ բան եղերոտ սրտորտ ՚ի ՝ր։ Խոսոտվան եղերոտ չեղոտնէ սրբութեն նորա։

ՎԵՐՆԱԳԻՐ

Սաղմոս ՚ի գաւթէ. ՚ի ձամանէլ զի երկիրն հաստատեցաւ։



ՅԵՐԿՒ ԼԻ Ի ՔՐԿԳ" ՈՉ ԴՆԻ

ինչ վերնագիր, որպ վասն ՚ի սաղմոսս ինչ և ՚ի լամբ" եգեալ է՝ անվերնագիր երբ". իսկ այն որ դնի ՚ի վերնագրիդ, * ՚ի ժամանակի՝ զի ,, երկիրն հաստատեցաւ։ Յայի յայն, որ դնի ՚ի վերնագրի զիշ սաղմոսի, ուր ասի. * յաւուրն առաջինն շաբաթու՝ յորժամ երկիր հաստատեցաւ։ Իթարգ" եօթն" և լաո", եթէով" և արաբ" յաւելեալ լինի և բառս նորա՝ յասէ. * յորժամ երկիր նորա հաս. ,, տատեցաւ։ և յորինակս ինչ ՝նմա՝ յասէն. * յոր. ,, ժամ երկիր հաստատեցաւ նմա (կամ դարձուցաւ ,, նմա)։ որոյ փոխան ՚ի մերս է եգեալ է տառս ն. և ՚ի միում ձեռագրի բառս էր՝ յասէն * զի զերկիր ,, իւր հաստատեաց։ իսկ ՚ի լամբ" * զի զերկիր հաս. ,, տատեցեր ևն։

Լ՚րդ՝ զտառդ ն, կամ զբառդ նորա՝ ոմանք առ դա. ւիթ վերածելով ասեն, թէ նա յետ հալածանացն

ռաւուղայ կամ մանաւանդ յետ հալածանացն աբեսա-
ղոմայ առաց զայս սաղմոս, յորժամ երկիրն այսինքն
երկիր թագաւորութե՛ն նորա հաստատեցաւ՝ ի խաղա-
ղութե՛ն՝ ժառանգել որդւոց յորդիս. և թէ զանք
սաղմոսիս ըստ Ճառին հայի՝ ի պաշտպանութե՛ն ոմն,
զոր ելոյց առ դաւիթ պէսպէս օրինակաւ։ Իսկ այլք
վերածեն յաղգն իսրայէլի, իբրև թէ զայս սաղմոս
ասացեալ իցեն ոմանք յետ դարձի գերութե՛ն, յոր-
ժամ երկիրն իսրայէլի հաստատեալ եղև յազատու-
թե՛։ Այլ սուբբ հարք վերածեն՝ ի դէմն քո՛ի, որ-
պէս թէ զայս սաղմոս ասացեալ իցէ դաւիթ հայե-
լով յառաջին և յերկրորդ գալուստն քո՛ի, ի թա-
գաւորել նորա՝ ի վերայ եկեղեցւոյ յաւիտեան. ըստ
որոյ ասի, թէ երկիրն այսինքն եկեղեցին հաստա-
տեաւ։

Լայեայ քանզի այս սաղմոս մնասմբ իմն հայի՝ ի սաղ.
ղՃ. և մնասմբ իմն՝ ի սաղ. ՀՂ. 15-18. ևս և՝ ի
նախընթաց և՝ ի յաջորդ սաղմոսդ, և ըստ բազում
բանից՝ ի սաղ. ԺԷ. ըստ նոցին ունիմք մեկնել զսա.
իբր զի ըստ Ճառին կամ ըստ նկարագրին՝ ի վերայ
թագաւորելոյն այ յաստիւնայնի և՝ ի վերայ գաւտղու-
թե՛ նորա. իսկ ըստ խորհրդոյն՝ ի վերայ թագաւո-
րելոյն քո՛ի՝ ոչ միայն յառաջսաւմ գալստեան նորա՝ ի
յարութե՛ն խնբամ, այլև յերկրորդումն՝ ի յարութե՛
ազգի մարդկան. վասն զի են՝ ի սմա ինչ ինչ՝ որք
յառաջին գալստեան վերածին. և են ինչ ինչ՝ որք
յերկրորդն հային. Թէպէտ լսմբ՝ միայն յերկրորդն
վերածէ։

ՐՒՆ

ա. Տէր խաֆաոբեաց. ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին
կղզիք բազմաց։

ՄԻՆԿՈՒՆԻՆ

Ըստ պէս ասացաք՝ ի սաղ. ղ. ։ Յերեք սաղմոսք են
սոքին սկզբնաւորութե՛ն. մինն է ղՃ. երկրորդն սոյն

այս գլխ. և երրորդն գլխ. և երեքին ևս ըստ նախադրելոցդ հայիր ի ցուցանել զԹագաւորութիւն այ ի վերայ ամենայնի. և զահեղութիւնն՝ միանգամայն և զողորմութիւն դատաստանաց նորա։ Լայլ թէ զինչ ասի գլխ՝ Թագաւորեաց, տես ի սաղ. գլխ. ։ զի ի նոյն միտս գնի և ատ, յասելն ։

Տէր թագաւորեաց. ցնծասցե երկիր. ոչթէ եղեալն հզկէ բազմաց. կամի ասել. ամ արարչագործելով զամենայն երկիր, և զորս ի նմա, եցոյց ամենեցուն՝ թէ ինքն է Թագաւոր նոցա. վասն որոյ և արժան է զի ցընծասցէ երկիր առհասարակ, գիտելով՝ թէ ունի ով Թագաւոր զնծ։ Լաւ զի երկիրս կամ է շարունակ, կեալ, և կամ ուրեք ուրեք կղզիացեալ, յետ գնելոց զերկիր՝ յիշէ ի մանաւանդ և զկղզիս, նոքա ևս ասէ գոլով բազում, Ճանաչելով զԹագաւորելն այ ի վերայ իւրեանց՝ ուրախ լինիցին ։

Լայլ այս բան ըստ խորհրդոյն Հայի ի Թագաւորութեն քոյ. զի տուաւ նմա ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. (մատ. իը. 18.) զորմէ գուշակեաց և գանիէլ. (է. 14.) Սովին Թագաւորութիւն Թագաւորաց քո ի յարուն իւրում՝ ի վերայ ամենայնի, և յատկապէս ի վերայ եկեղեցւոյ՝ եթէ ընդհանրապէս մտածեսցի և եթէ ի մասնաւորի. ընդհանրապէս մտածելով կոչէ զնա մարգարէն երկիր, և խրախուսէ ցնծալ, ասելով, ցնծասցէ երկիր. իսկ ի մասնաւորի մտածելով կոչէ կղզիս. ըստ որում մասնաւոր եկեղեցիք իբրև զկղզիս բազում են և ի բազում կողմանց աշխարհ բազխեն։ Լայլ քանզի կառավարութիւն այսր Թագաւորութեն է անհասանելի իմն, զայս կամելով յայտնել մարգարէին յարմ զկնի և ասէ ։

ՀԵ. Ամպ և ղպ ղտրլ է պեղաս. յերեսանս և յարբատրունէ ոստղեալ է աներ նոր ։

Ոստս ամպ՝ ի փոխաբերական միտս առեալ՝ զնի փոխանակ անբնութեան կամ անբնական լինելոյ իրին, կամ անտեսանելի գոլոյ. այնպէս և մեզն փոխանակ դժուարահաս լինելոյ, որպես յայտ է յարեգակն, որ ի ծածկին ամպով՝ ոչ տեսանի, Թէպէտ և տակա-

լին լուսաւորէ զաչխարհ. և ի պատիւն միգով ընդ աղօտ նշմարի. ըստ այսմ մտածելով՝ ՝որ դիրք ի բա-զում տեղիս ի ցուցանել թէ թագաւորութիւն այ և նա ինքն ած անտեսանելի է այլոց մարմնոյ, և գժուարանկատելի այսց հոգւոյ, ի միջ բերէն զնը-մանութիւն ծածկութիւնք ամպոյ և միգի. բայց քանզի յայսմ ծածկութիւնք և տեսանելիք, թէ նա ինքն է որ ուղղէ զամենայն, յայս հայելով ասէ.

Ա՛ղ և դէպ զարթ է զնուվա. յերաւանս և յարքարութիւն ուղղեալ է աշուռ նորա: Այսի ասէ. Թէպէտ և ոչ տե-սանեմք զաթոռ թագաւորութեանն այ, կամ զնած նստեալ յաթոռ թագաւորութեն՝ զի շուրջ պատեալ է գնուաւ ամպ և մէգ, բայց աթոռ նորա ուղղեալ է յերաւունս և յարդարութիւն: Որ աթոռով իմա-ցեալ լինի իշխանութիւն այ, կամ թագաւորութիւն նորա. այս իշխանութիւն կամ թագա-ւորութիւն այ ասէ ամենևին ուղղեալ է, այսինքն ըստ ամենայնի կարգաւորեալ է իրաւամբք և արդարու-թիւն. որ է ասել. ած՝ որ է ինքնիշխան թագաւոր՝ կառավարէ զամենայն ըստ իրաւանց, և կարգէ զա-մենայն ըստ պահանջելոյ արդարութիւն. և ոչ է իրրև զթագաւոր երկրի, որք ի կառավարելն՝ կամ տգի-տութիւն սխալին ընդդէմ իրաւանց, և կամ իւիք սխա-փիք վրիպին ընդդէմ արդարութեան:

Ա՛յս բան ակնարկէ և յայն հանգէս, որ ցուցաւ ի սինա լերին ամպով և միգով. յորում էտ ած զիրա-ւունս և զօրէնս իւր իրր յաթոռ նստեալ: Ա՛յս ա-ռաջադրուի բանի հայի և յերկրորդ գալուստն քրի, և ի բազմիլ նորա յամպս երկինից, և ի դատել զա-բարածս իրաւամբք օրինաց բնութեան, և արդարու-ծածկին հրամանաց. (մատ. իզ. և իզ. և յայտ. ժա.) և ըստ այսմ ամպով փոխաբերաբար իմացեալ լինի անբնութեան նորա և միգով ահեղութեան նորին. կամ ըստ լամբ՝ ամպով իմացեալ լինի * անհաս ի ,, հրեշտակաց և ի մարդկանէ արդարակիրս քննու-,, թեն նորա ի դատաստանին՝ որ ծածկեալ ի յերա-,, կանաց միգով անձառութեանն: Կամ խորհրդաբար իմացեալ լինի մարմնացեալ նորին, որով իբր ամպով և միգով ծածկեցաւ. որպէս ասէ և Տեր հա-

լին (ի մէկն. մատ. գլ. Է. 1։) Այս ևս պի մարմնով իբրև տաճարէց է ի գտանել։

Արդ է տիպով իմանալ և զառաքեալս և զմարգարսն, որք ի գալստեան նոցա շարեալ լինէին գնացս ի հաստատել զդատաստան նորա։ Այլ թէ քանի ակն լինէին էգ գալուստ նորա՝ խօսի զայնմանէ յերիս յաջորդ համարսն՝ ի մէջ բերելով միանգամայն և զնկարագրութիւն բարկութեանն ոչ, և նախ ասէ։

ՀՈՒՐ ԱՒՐԱԼԻ ՆՈՐԱ ԳՆԱՑՍԷ ՀՐԵՇՏՔ ԸՆԴԱՌԱՋ ԳՆՈՅ ՆՈՐԱ։

Այնքան ինչ է տեսանել ի հուրն. մի՝ այրեցողութիւն ըստ ջերմութեանն. երկրորդ՝ արագութիւն ըստ թեթեւութեանն. երրորդ՝ լուսաւորութիւն ըստ փայլողութեան. որովք նկարագրի նմանութիւն ազդուածն ահագին բարկութեանն ի պատժէն՝ սաստիկ, արագ, և յայտնի. որպէս արար ընդ դադան և ընդ արիերան, և ըստ այլոց, որոյ վասն ոչ գիրք նմանութիւն հրոյ ի մէջ բերէն երբեմն զբարկութեանն ոչ, և երբեմն զահ զութեան նորա, որպէս առնէ և աստ մերգարէս յանել։

ՀՈՒՐ ԱՒՐԱԼԻ ՆՈՐԱ ԳՆԱՑՍԷ. այրեցէ զերբ վրնտիս ոչ։ Կամի ասել. նա՝ որոյ աճուն ուղղեալ է յիրաւունս և յարդարութիւն, յորժամ բարկացի ի վերայ թշնամեաց իւրոց, բարկութիւն նորա իբրև հուր ցոլացի յանդուդն նորին, և յառաջոյ նորա ընդհանալով պատշարեսցէ զնոսա շուրջանակի, և այրեսցէ զնոսա, այնպիսի օրինակաւ պատճառեսցէ զնոսա, մինչև չէ ոչ ևս մնալ նոցա այնպիսի՝ որպիսի էին. այլ լինել այնպիսի, որպիսի ոչ կարծէին լինել, զի ի մխիթար դարձցին. տես զայսմանէ և ի սաղ. ԺԷ. 9. ուր յիշատակի այս հուր. ղրմէ և դանիել. ահեղ հին խօսի. (Է. 10։)

Այլն այս նմանաբանութիւն հրոյ ակնարկէ և յաղագս ուրեք քանիցն քրիստոսի զոր առելոց է ի գատաստանի առ թշնամիս իւր. * երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական։ ուր հրաբորբոք ազդեցութիւն վճռոյ նորա արկցէ զնա ի հուր անշիջանելի։ Եւ գրեալ

այսու նշանակի և ցոյց բարկութիւնն քոյ, կամ ներ. գործուածի արդարութիւնն նորա ի դատաստանի և ի դա-
տապարտելն։

Ա.յսու հրով խմացեալ լինի և տարրեղէն հուրն՝ որ յառաջընթաց լեցի գալստեանն քոյ՝ յայրել զամե-նայն ինչ որ ի վերայ երկրի, և որ ի վեր քան զերկիր. յոր միտ ասէ պետրոս (երկրորդ Թղթ. ՟բ. 7–11։) * և այժմ երկինք և երկիր նոքին բանիւ ,, գանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաստանի ... ,, եկեսցէ օր տէն իբրև զգող. յորում երկինք տագ- ,, նապաւ անցցեն. և քնութիք հրով կիզեալք լուծ- ,, ցին, և երկիր և որ ի նմա գործք գտանիցին»։ Եւ զի այն հուր ոչ ունի միասեալ արգարոց, այլ ամ-բարշտաց, վասն որոյ ասէ՝ այրեսցէ զնոսաստիս՝ այս-ինքն զանմահիկ՝ որք զսիրտ իւրեանց ոչ եդին յայ-րօդն, այլ յայրելիսն, այսինքն յանցաւորսն. իբր զի ոչ կամէցան հնազանդիլ՝ այլ հակայից իւրեանց, վասն որոյ ասէ առաքեալն. * ի բոյ հրոյ առնուել ,, զվրէժս յանցանէ՝ որք ոչ գնանային զնոտ ..... ,, Որք տայցեն վրէժս ի սատակումն յաւիտենից՝ յե- ,, րեսաց տեն և ի փառաց զօրութենէ նորա, յորժամ ,, գայցէ փառաւոր լինել ի սիք սրբ իւրոց, և սքանչ ,, ելիլ ի մէջ ամենայն հաւատացելոց»։ (Թեսաղ. ՟բ. ա. 8—10.)

Ա՝արդ և աստ հրով իմանալ ըստ ասելոյ ոմանց և զՀրակլիտոս ասողն որ երևեցաւ յերկնից յառաջին գալստեան տեն մերոյ։ Չնար և իմանալ և զՀրեշ-տակ՝ որք յառաջընթաց լինին գալստեանն քոյ, և վաթեն զնշնամիս նորա ի հուր գեհենին։ (տե՛ս զայսմանէ և ի սաղ. խթ. 6—9։) Ա.յլ կամելով ցու-ցանել մարդաբնին զլինելս այսր համանգամայն և ա-
բաղութիւն, յարել զկնի և ասէ։

Զ. Աբնեցան ի յալատակուածս նորա պիղծոց. եթէս և սա ասենցաս երիցս։

Ի փայլատակունս երեք ինչ ի նշմարելի. մի՝ փայլա-զումն. երկրորդ՝ յանկարծականութիւն. երրորդ՝ եթէևիչն միանգամայն ի ծագաց մինչև ի ծագս։ Այս-
եթէ ի փայլատակունս լինիցի նաև որոտումն և կայ-

ծակուենք, հետևի սարսիլ երկրի։ Այլ զի սոքիմբք նկարագրի գարձեալ ազդուութիւն վերկիրնդրութեան ոչ, և սաստկութիւն ահեղութեան նորա, յայս ակնարկելով մարգարէին ասել։

Արեւելեան փայլատակեալ նորա պիղծքդաց։ եթէ և սակաւ նեցաւ երէից։ կամի ասել. որպէս ՚ի հնձել փայտատականց, և յերևիլ նոցա սիեզերաց՝ սաստկի երկիրս, սղմակս և յարձակիլ վերկիրնդրութեան ոչ ՚ի վերայ երկրաւորաց՝ սսսանին նոքա առհասարակ։ Այլ զայս դնէ ՚ի կատարեալ ժամանակն՝ առ ՚ի ցուցանել ըզհաստատութիւն սասցելոցն։

Այս բան կարէ հայիլ և այն՝ որ եղև ՚ի լեառն սինայ. ուր երևեցան փայլատակունք փառացն ոչ՝ տիեզերաց՝ այլոցն ծագաց ՚ի ծագս. ըստ որում այսպիսի օրինակաւ սեռասին յարձակութիւն փայլատականց։ Այս փայլատակունս յայտ է թէ էսես յայնժամ երկիր, և լուաւ զձայն հնչման նոցին. որով և սսանեցաւ, այսինքն երերաց. Ըստ նմին սասանեցան և որդիքն իսրայէլի. (որպէս գրի ելից. ժԹ. 16.) Այս այն էր օրինակ ահեղութեանն ոչ և և վերկիրնդրութեան նորա։ Այսոյն զայս դնէ և ՚ի սաղ. հԹ. 16. զոր և այլով իմն օրինակաւ նկարագրէ ՚ի սաղ. ժԷ. 13. և 14. սղմակս և սողոմոն (յիմաստ. Ե. 22. և 23.) Այլ հայելով ՚ի գալուստ նոն մերոյ, յայլ և այլ միտս իմանալ մարթի է զփայլատակունս. եթէ յառաջինն գալուստն հայիցիմք, փայլատակամբք նշանակին առաքեալքն, որք յետ յարութեան նորա երևեցան սիեզերաց, և հնչեցին զաւետիս յարութեան նորա, և երկիրք ամենայն սեսեալ զնոսա սարսեցան և դարձան ՚ի հաւապաշտութեան։ Կամ թէ և իմանալ զքարոզութեան աւետարանին որ փայլատակեցաւ ընդ ամենայն երկիր։ Հնար է և իմանալ զփայլատակունն յարութեան քոյ, յորում սասանեցաւ երկիր։ Կամ եթէ հայիցիմք յերկրորդ գալուստ նորա, փայլատակամբք նշանակին այնք՝ զորս սասցաք ՚ի վերոյ ՚ի վերոյ. դարձեալ նշանակի և խաչն քոյ երևեալ իբրև զփայլակն. զայսր ամենայնի զազդուութեան առաւել և յայտնել կամէրով մարգարէին՝ յարի հնչի և սաս։

Ե· Երկինք որպէս մամ հալչացին յերբեսաց ան· յերբեսաց ան ամենայն երկիր։

Ա·Յս Հաստատութիւն խօսից յաձախեալ տեսանի յերգս առանդեալս ի սուրբ գիրս· որպէս յերգելն յուդիթայ * երկինք ի հնմանե ջրովքն հանդերձ սասանե,, ցան և վէմք առաջի երեսաց քոց իբրև զմամ հա,, լեցան։ (յուդիթ ժԶ· 18։) Լաւ ամբակում յերգսն իւր * հպեցաւ, և հալեցան ազգք· երկինք ,, խորտակեցան բռնութիւք, և բլուրք յաւիտենականք ,, հալեցան։ (ամբակ· գ· 6։) տես և ի միքիայ· (ա· 4·) տես· և յերգսն դեբորայ ի գիրս դատաւ·· (Ե· 5·) որովք նկատելի ահեղութիւն զօրութեանն այ, կամ ազդուութիւն վրէժխնդրութիւն նորա, որպէս գնահարելոցն ասացաք· զի մարգարէք ոչ կարէին այլով իւրք յանդիման առնել զնոյն, այսպիսի նմանա բանութիւք ի մէջ բերեն, ըստ որում առնէ, ասա և դա. վիթ՝ յասելն։

Ի Երկինք որպէս մամ հալչացին յերբեսաց ան· յերբեսաց ան ամենայն երկիր· Կայսի ասել· որպէս մնին ոչ կարէ կալ առաջի հրոյ, այլ հալի, և հեղհեղալ լինի, նմանապէս և երկինք, և երկիր առհասարակ ոչ կարեն կալ առաջի երեսացն այ՝ եթէ հրասցէ ընդդէմ նոցա, այսինքն եթէ հրամայեսցէ նոցա դառնալ յոչնչութիւն իւրեանց, կամ եթէ ահեղս ինչ գործեսցէ զնոքօք· որպիսի երևեսցաւ լեառն սինայ, որ ծխելոյ առհասարակ՝ որպէս թէ հալեալ լինէր· (ելից· ժԹ· 18։) Երամբք կարեն խնացեալ լինել ասա փոխաբերաբար ամենեքին նորա՝ որք կարծին բարձրացեալ իբրև զլերինս՝ եթէ մարդիկ իցեն, և եթէ գործք մարդկան· կամ ըստ լամբ" գունդք դիւց· սոյնպէս և երկրաւ կարեն խնացեալ լինել ա և իցէ արարածք, և առաւել ևս երկրասէրք· զի սոքա ամենեքին առհասարակ իբրև միմ հալին առաջի այ· մանաւանդ ի գալ նորա իբրև դատաւոր՝ առ ի դատել զազգ մարդկան։

Լ՝ԶՊ զօրօքինակ լերինք և երկիր առհասարակ ոչ կարելով հանդարտել առաջի այ ցուցանեն եթէ ահեղ կ նա, սոյնպէս և երկինք հանդերձ ամենայն զօր-

դուքն, և այլք ամենեքին միահամուռ՝ իբրեւ ընդ պատահելի ցուցանեն, թէ նա է ատր և վերին ժամդիր և կառավար ամենայնի, և նախախնամող ամենեցուն ըստ կարգի և ըստ իրաւանց. զորմէ խօսի մարգարէն՝ ի յաջորդ համարն ասելով։

ՀԱ. Պահպանեցէք զբնութեանն նորա. զի ոչ ամենայն ծնողաց զիա՛ս նորա։

Ա.յս բանիք ըստ առաջին հատուածոյն մնասմբ իմն Հայկեան յայն՝ զոր ասէ մարգարէն (ի սաղ. ԺԵ. 1.) * երկինք պատմեն զփառս Աստուծոյ՝ ‖ և մնասմբ իմն յայն՝ զոր ասէ ամբակում. (Ը. 5.) * ծածկեցին զերկինս փառք նորա. օրհնութիւն նորա լի եղև երկիր ‖. կամ ըստ սաղմոսարանին. * յայտնեացին երկինք զվայելչութիւն փառաց նորա. և օրհնաբանէ նորա լցան ‖ տիեզերք ‖։ Չարբերութենէն է միայն ի բառդ արտաքսին. զի ի միում եդ զիաս, յայլում զվայելչութիւն է. իսկ ասա զարդարութիւն. վասն զի ի նոսա բանն էր զմիմեանս փառացն Աստուծոյ. իսկ ասա մանաւանդ՝ զահեղութիւն կառավարութեան և վերին ժամդրութեան նորա. վասն օրոյ զարդարութիւն նորին ի միջ բերէ. զորոյ զկնի յարէ և զփառսն ասելով։

Պահպանեցէք զբնութեանն նորա ‖։ Երկինք երբեմն կու առեալ լինի. ա՛ի՝ փոխանակ վերին հաստատուածն. երկրորդ՝ փոխանակ աեղւոյ մոլորակաց. և երրորդ՝ փոխանակ գաւառի օդոյ. և այս՝ կամ ըստ վերնոյն՝ որ ասի եթէր, և կամ ըստ ստորնոյն ուր վերին ամպք և կայծակունք, ծիածանք և ասուպք, ևն։ Ա.յս ամենայն՝ որ միով բառիւ երկինք կոչին պատմեն զարգարութենէն նոյ, այսինքն ցուցանեն ամենեցուն, թէ կայ արարիչ՝ որ ուղիղ կարգաւ կառավարէ զայս ամենայն՝ ոչ վասն իւր ինչ, և ոչ վասն նոցա, այլ վասն ազգի մարդկան. այլ արդ եթէ զնոսա կառավարէ ըստ իւրեանց բնութեանն, քանի առաւել և զմարդիկ. (տես ի սաղ. ԺԶ. 1. և ի նուագարանն օրհնութեց. օրհն. Ժ. 3. 4.) Ա.յս զի ի կառավարութենէ մարդկան երևի արդարութիւն նոյ, զոր այսօրիկ դնէ, պատմել երկնից զարդարութիւնն նորա. Ա.յս ի պատմելն անդ պեղծն ասէ ամենայն ծնողաց զիաս նորա։ Ա.յս-

ինքն՝ ի միտ առցեն որդիք մարդկան՝ թէ մեծ է փառք արարչին իւրեանց։

Լ.յլ լրումն այսր բանի երևեսցի յայտնութիւն գաւառատանն, յորժամ նա ինքն որ արար զսա ամենայն, երևեսցէ փառօք, և հրապարակեսցէ զամենայն գործս մարդկան, և ըստ գործոց նոցա հատուսցէ նոցա արդարութիւն. և յայնժամ երկինք պատմեսցեն զարդարութիւն նր, եթէ էր նոցա բարբառ. և ժողովուրդք ամենայն որք տեսցին կամ լուան զանաւգամս նորա, տեսցեն և զիաւս նորա՝ ումանք ցնծութիւն, և ումանք ահ ու սոսկ։

Լ.ամբ" երկինք իմանայ զհրեշտակս, և փառօք ըզխաչն քո. քանզի ի գալ նոն մերոյ հրեշտակք պատմեցին յառաջուանն զողորմութիւն և զսէր նորա. իսկ յերկրորդումն պատմեցեն զարդարութիւն նորա, այս ինքն վկայեսցեն թէ արդար է դատաստան նորա։

Լ.չ ժողովուրդք տեսցեն զիաւս նր, այսինքն տեսցեն ազգք մարդկան զիաչն՝ որ լինիցի փառք հեռուստոյ իւրոց։ Լ.յլ թէ զինչ լինիցի նոցա որք թողեալ զայսպիսի բարեբար իւրեանց՝ փոխանակ այնր պաշտեն զառաւ ՅՈՀՈ՝ յայտ առնէ ասելով։

Է. Ա.մալէկացին անկնեցեան որ երկիրպագանն էոց. և այլ պաշտին ի բշտելաւ էաբեանց։

Լ.մալէկն է կիրք ի յայտնութիւն պահատաւորութեան. կամ կիրք խառն ի տրամութիւն և յատելութիւն, և երբեմն եւս ի բարկութիւն՝ վասն ի յայտ գալոյ տկարութեան կամ զազրութեան կամ նանիր իրի՝ զոր ունի ոք, կամ այնպիսի զազիր և նանիր գործոյ՝ յոր իցէ յատեալ մարդ իբրև ի պատուական ինչ կամ յոյժ մեծ ականն. և քանզի տկար և զազիր իմն են կռօք, և նանիրք յոյժ, ի յայտնի երևիլ տեսանելի և զազրութեն և նանրութեն նոցին՝ պատճառի ամենեսեան մեծ յերկրպագուս նէ, որք կամեակոր մտօք՝ մանաւանդ թէ կամաւորական կուրութիւն յաբեցան ի նա. վասն որոյ ասէ։

Ա.մալէկացին անկնեցեան որ երկիրպագանն էոց. և այլ պաշտին ի բշտելաւ էաբեանց։ Այսմ ասէ. Երկեսցէ ժամանակ՝ զի ամենեցեան ամենեքեան նորա, որք պաշտեն

զկուռս, և պարծին ևս նոքօք, ասելով՝ զորս մեք պաշտեմք, այսպիսի ինչ են նոքա, զայս ինչ գործեն և զայն են։ Ի այս ամենեցուն յերկուց ծագի. մի՝ առ ի յայտ գալոյ յիմարութեն պաշտողաց, և մի ևս՝ առ ի յայտ գալոյ անաթգութեն պաշտեցելոցն։ Ի դադրմանէ յիմարուէ պաշտողացդ անշնորհին լինի ամօթն. զի ոչ տգիտութեք, այլ կամակար ընտրութեք պաշտեցին. վասն զի յաղագս երկնի և երկրի թէ կայ արարիչ ամենակալ և ամենաքաջ, և նա միայն է պաշտելի, նոքա խցեալ զսիրտս իւրեանց առ այսպիսի յայանաբերքառ քարոզութեն, ընտրեցին զՀայնոյս իւրեանց պաշտել, և առ այս հնարեցին զկուռս դիւաթնակս, և կամեցան՝ ի նոսա յարել, և նոքօք պարծիլ և նոքիմբք զգանկութեն իւրեանց կատարել։ Այնպէս և ի կողմանէ անաթգութեն պաշտեցելոցն լինիցի ամօթ մեծ, զի գոլով յինքեանս անարգք և գաթչելիք՝ պաշտեալ եղեն իբրև պատուականք և ազնիւք։

Օ այս ամօթ կրեսցեն և որ միանգամ թողեալ զՀայոյն՝ պաշտեցին զկամս իւրեանց, և նուիրեցան չար սխտից այսինքն ամբարտաւանութեն, ագահութեն, վավաշոտութեն, և այլոց մոլութեց իբրև կռոց իւրեանց։

Ի այս ամենեցուն թէպէտ և ըստ կարգի բանին Հայի՝ ի ժամանակ գատաստանին, յորում յայտնի լինիցի ամենայն ինչ, բայց կարէ Հայել և ի ժամանակի սուտի կենացս ըստ երկուց. մի՝ յորժամ որք պաշտեն զկուռս՝ ի կամին առնել ինչ յանուն նոցա՝ յեանկին և անպիտան գտանին, որպէս եղև քրմացն բահաղու առ Եղիայիւ մարգարէիւ. (զորմէ տես ի Գ. գիրս Թագ. ժա. 19—40։) Յորկորդ՝ ընդ հակառակն՝ յորժամ պաշտօղք նոցա Թողուն զնս, և պաշտեն զՅԱ. զի յայնժամ տեսանեն՝ թէ յորպիսի յիմարութեն գեգեբեալ կային՝ ի պաշտելն զայնպիսի գաթչելիս. և յայս միտ ասէ պօղոս. * Իսկ արդ զինչ պտուղ ունէիք յայնժամ՝ որովք այժմ զամօթն Հարեալ եք։ (Տէ. ռոմ. Զ. 21։)

Ի. յԵրեք ամօթալի իր իցէ պաշտել զկուռս, քնարկան լուսով ևս յայտնի լինի. վասն զի որ պաշ-

ոյժ՝ պարտի լինել գերագոյն քան զայն՝ որ պաշտէ. իսկ արգ կուռք ոչինչ իւիք գերագոյն են քան զմարդ, այլ սատրին յոյժ, և անարգ, և սուտ. և ըստ առաքելոյն ոչինչ, մանաւանդ թէ դևք. ապա ոչինչ իւիք են պաշտելի. և որք պաշտենն զնոսա, անարգագոյն լինին քան զնոսին, որ է իր ամենայն յոյժ. Այս զի ամ որք կարծեցին՝ թէ ըստ այդմ մարթ է պաշտել զհրեշտակս զի են գերագոյն յոյժ քան զմարդիկ, յայս հայեցուլ թերևս մարգարէին ցուցանել ի յաջորդ համարն՝ թէ պաշտօնեայք են նոքա ոչ, և ոչ թէ պաշտելի. վասն որոյ զնոսա ևս հրաւիրէ յերկրպագութիւն ոչ, ասելով՝

Ը. Արձիբոպգեն նմա ասէնայն հրեշտակ նորա, չի լաս և ուրախ եղիս ասէն. և ցնծասցեն գոբերբ յոյգոյ վասն երեսանց գոյ պէր։

Բառիս հրեշտակք՝ ըստ Թարգ" եօթ" և լատ" և այլոց, ևս և ըստ մերումն նշանակին աստանօր անմարմին գոյացութիւնք, որպէս իմանայ և առաքեալն. իսկ ըստ քննագրին երբ" նշանակին ասծք, այսինքն Թագաւորք, իշխանք, և գատաւորք, ևս և նոքին իսկ հրեշտակք. որպէս ասացեալ է մեր (՚ի սաղմ. ւ.) և (Ձիա. ւ.) զսոցունց առհասարակ խոսելով ասէ.

Արձիբոպգեն նմա ասէնայն հրեշտակ նորա. Լսամի ասել. ամենայն բանաւորք արարածք, և որք գերագոյնքն են ի նոսա հրեշտակք, մատուցանեն այ զերկրպագութիւն. և եթէ մարգիկ պակասիցին յերկրպագութենէ այ, նոքա ձշմարիտ երկրպագուք իւրեանց լցուսցեն զտեղի այնր։

Ա. Այս երկրպագութիւն հրեշտակաց ոչ է ըստ արտաքին արարողութենէ, որպիսի առնեն մարդիկ՝ ծունր կրկնելով կամ զերեսս յերկիր դնելով, այլ ըստ ներքին ներգործութենէ մտաց և կամաց. ըստ մտաց՝ ի ձանաչելն զնա ձշմարիտ ած՝ առաջին սիրելն, և վերջին վախձան ամենայնի. ըստ կամաց՝ ի հպատակիլն հրամանաց նորա, որ կարէ լինել կամ ըստ սերոյ, որպիսի է բարի հրեշտակաց. և կամ ըստ բանադատելոյ, որպիսի է չար հրեշտակաց, այսինքն

դիւաց. զի և նոքա կամայ և ակամայ բանադատին երկիրպագանել արարչին ամենայնի. և զի ընդ այս երկրպագութիւն ոչ ուրախ լեալ եկեղեցի որ ցծծայ ի փառս մեծ վայելչութեամբ նորա, յայս ակնարկելով յարէ զկնի մարգարէին և ասէ.

Օ՜ լեռ և սարեր եղէք ուրախ. և ցծծացէն գոհութիւն դոյ վասն իրաւանց տոյ պէս։ Արդ սիրեալք իմացեալ լինիմ ժողովրդեան ոչ. որոց պաշտամունք կատարէին ի քաղաքի անդ ի սիոն. նոյնպէս և գտեալքդ յուդայ ի մացեալ լինին միանգամայն ժողովրդեանդ ազգին իսրայէլի, կամ այլ և այլ տոհմք ազգին յուդայ, կամ այլ և այլ քաղաքք. զի ըստ սովորութեան որ գրոց բառս գոհութ՝ դնի փոխանակ ժողովրդեան ազգին, կամ փոխանակ քաղաքի. որպէս յասելն, գոհ ացար ծուրայ, իմացեալ լինի ժողովրդ ծուրայ,

Արդ ասէ՝ ժողովուրդք նոն՝ ի լսելն ի մարգարէից՝ թէ արարածք ամենայն, և և հրեշտակք երկիրպագանեն ոչ իւրեանց, ուրախ եղիցին, տեսանելով՝ թէ զոր ինքեանք պաշտեն, ոչ է սուտ ած, որպիսի են ածք հեթանոսաց. այլ ճշմարիտ ած. մինչև հրեշտակք և երկիրպագանեն նմա։ Ուրախանան և և՝ զի զոր պաշտեն՝ պաշտպան է ինքեանց և վարձատրող է. և առ այս յաւելու ասել. * ցծծացին վասն ,, իրաւանց քոց տէր ։ այսինքն թէ տեսանելով՝ զի դու առնես նոցա իրաւունս ընդդէմ թշնամեաց իւրեանց, և պաշտպանես զնոսա, ցծծացեն ի քեզ. և դարձեալ, գիտելով՝ թէ դու հանդերձեալ ես ի բառամբ և արդարութիւն հատուցանել նոցա զվարձս, և թշնամեաց նոցա զպատիժս, յայդ յաւետով կացեն ի ցծծութիւն. և ոչ որպէս հեթանոսք, որք չունին զճշմարիտ ինչ յոյս։

Այս բանիք հայելով յորդին ոչ ցուցանեն՝ թէ ի մարգանալ նորա՝ երկիրպագին նմա ամենայն հրեշտակք ոչ. յոր միտ յառաջ բերէ պօղոս զայս բան առելով. (եբր. ա. 6.) * այլ յորժամ միւսանգամ ,, մուծցէ զանդրանիկն յաշխարհ՝ ասէ. երկիրպագ ,, ցեն նմա ամենայն հրեշտակք ոչ ։ և այս՝ ըստ ո բում մարդ. զի ըստ որում ած՝ միշտ երկրպագեալ եր ի նոցունց. իսկ ըստ որում մարդ՝ ի ժամանակի

եղև երկրպագեալ 'ի նոցանէ. որպէս տեսանի և յաւետարանի. ուր գրի՝ թէ * հրեշտակք պաշտէին զնա || յանապատի անդ. (մարկ. ա̃. 13.)

Իսկ յասել առաքելոյն՝ միւսանգամ, այդ բառ 'ի կրըկին միտս կարէ վերածիլ. մի՝ հայելով 'ի նորոգուե̃ աշխարհի. յոր միտ կամի ասել. 'ի հանել այ̃ նորոգել զաշխարհս միւսանգամ 'ի ձեռն որդւոյ իւրոյ, յորժամ եմուծ զնա յաշխարհ մարդեղութեամբ, յայնժամ երկիրպագին նմա ամենայն հրեշտակք. և 'ի լինել այսր՝ ուրախ եղև եկեղեցի սուրբ, և որդիք նորա ցնծացին վասն իրաւանց նորա, որով դատապարտեալ զսատանայ՝ փրկեաց զնոսա՝ 'ի ձեռաց նորա.

Երկրորդ՝ հայելով 'ի յարութի̃ն քնի, որով գրեթէ միւսանգամ եմուտ նա յաշխարհս. զի նախ եմուտ ծնանելով յարգանդէ, և ապա եմուտ յառնելով 'ի գերեզմանէ. յորում երկիրպագին և ծառայեցին նմա հրեշտակք և աւետարանեցին զյարութի̃ նորա. զոր իբրև լուաւ սիոն՝ ուրախ եղև, և ցնծացան առաքեալք և այլ հաւատացեալք.

Մարթ է և ասել՝ թէ այս հայի 'ի միւսանգամ գալուստ նորա. Զայս միտս է յոհան ծործորեցի. յասել նորա. ('ի մեկն. մատ. ժը̃. 28.) * Երկ-
,, րորդ գալստեանն ասէ, յորժամ միւսանգամ մուծ-
,, ցէ զանդրանիկն յաշխարհ ||. և 'ի գլ. թ̃. ասէ.
* յորժամ լրումն ադամածին բնութեանս ըստ թուոյ
,, սահմանի ... արարչին, յայնժամ միւսանգամ մտա-
,, նէ անդրանիկն յաշխարհ ||. և յայնժամ յայանի առաջի ամենեցուն երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք այ̃, և ամենեքին տեսցեն զմեծութի̃ փառաց նորա երկրպագեալ յամենեցունց. Է̃ որ ունի ցըն ծալ վերինն սիոն և դստերք յուդայ առհասարակ. և զի յուդայ թարգմանի խոստովանութի̃, դստերօք յուդայ յարմարութք̃ իմն նշանակին նոքա՝ որք ճըշմարտութք̃ խոստովան եղեն զքս̃ որդի այ̃, և հետեւօղ գտան նմա. կամ ըստ լամբ" եղեն դստերք և որդիք խոստովանութեան հաւատոյ. որով և ունին վայելել զվարձսն իրաւամբ. Զայս եղեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ և զարմացեալ գոչէ այ̃

ի վերայ ամենայնի. որով և յամենեցունց երկրպա-
գի. վասն որոյ ասէ.

Թ. Օ՜ Է դու բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի. յոյժ
բարձրացար ի վերայ ամենայն էութ։

Կարձրեալ ասի Աստուած երից. ի՝ յինքեան մնացեալ. յոր միտ բարձրութիւն ոչ է մեծվայելչութիւն փառաց նորա։ Կրկրորդ՝ ըստ փառաւորեալ լինելոյ ի վերոյ քան զամենայն։ Կրրորդ՝ համեմատութիւն արարածոց. իբր զի ո՛ և իցէ արարածք Թէ առանձինն առեալ և Թէ միանգամայն՝ Թէև անբաւք իցեն, ոչ կարեն իւիք Հաւասարիլ նմա. զի յամենայնի անսահմանաբար բարձրեալ է Աստ. յայս միտ ասէ.

Օ՜ Է դու բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի. յոյժ բարձրացար ի վերայ ամենայն էութ։ Այր բառդ էր զայս բան յարէ նախ ընդ առաջին Հաստուածոյ նախընթաց Հաստուածոյն. որպէս Թէ ասէր. Չնմանութեամբ ասացի՝ երկրպագեն քեզ ամենայն հրեշտակք. վասն զի դու բարձրեալ ես. ։ Կրկրորդ՝ յարէ ընդ երկրորդ Հաստուածոյն, որպէս Թէ ասէր. ստուգութեա՛ր ասացի՝ ուրախ լեցին ժողովուրդք քո, վասն զի ոչ ունին իւրեանց Աստ զկուռս անարգս, այլ զքե՛զ՝ որ ես բարձրեալ ի վերոյ ամենայն երկրի, այսինքն բարձրեալ ի վերոյ ամենայն Թագաւորաց և իշխանաց, ի վերոյ ամենայն մեծութեանց և զօրութեանց, որք են յերկրի. և բարձրութի՛ւն փառաց քոց երևի յամենայն տեղիս։ Կու Թէպետ հեթանոսք ևս կարծեն՝ Թէ նաև կուռք իւրեանց իցեն մեծ և բարձրեալ, բայց դու առ և ի վերոյ նոցա բարձրացար յոյժ. ուր ասելովն յոյժ՝ ոչ ցուցանի զսուի բարձրանալոյն, այլ զանչափութի՛ն բարձրութե՛ան։ Կու կամ կամի ցուցանել զբարձրութի՛ն արտաքին պաշտամանց և գործոց, յորս յոյժ առաւել բարձրացեալ ցուցաւ Աստ ի պաշտոնէից իւրոց ըստ ուղղութե՛ն պաշտամանց՝ քան Թէ կուռք ի պաշտոնեայս իւրեանց։

Կ. յս բարձրութի՛ն Հայի և ի բարձրութիւն փառացն քոյ, որ առաւել ևս յայնմի ցուցցի յաւուրն դատաստանի առաջի ամենայն արարածոց։ Կսկ ըստ լամբ՛ Հայի ի վեհ՛ինգրութե՛ն նորա ընդդէմ այսոցիկ՝ որք

պաշտեցին դիւռւս և զախտս իւրեանց ։ Լ՚ոդ որով-
հետև եցոյց մարդաբնն զթարձրութիւն ոյ, և զանար-
գուելի կռոց, առաջի դնել այժմ, թէ որք կամին յա-
բիլ յայծ, պարտին զգուշանալ ՚ի գնացից նոցա՝ որք
յարբին ՚ի կուռս, և կեալ անարատութիւբ. վասն որոյ
ասէ ։

Շ. Ա՚ր տէրէ՛ ղէրէ՝ ասեցէ՛ ղլարուրէ. պահէ զէր զան-
յինս ոբէ իւրոյ. ՚ի յեռաց վերաբէ երկնից ընդ ։
Լ՚առաջին հատուած այսր բանի է հաւաքաբանութիւն
ինչ ազգու և անլուծանելի. զի յայտ է թէ որ սիրէ
զկենանս՝ ասէ զմահ. և որ սիրէ զլոյս՝ ասէ զխա-
ւար. և դարձեալ՝ որ սիրէ զսրբութիւն՝ ասէ զպիծու-
թիւն. և որ սիրէ զուղղութիւն՝ ասէ զթիւրութիւն.
ըստ այսմ խմն և զայլ ամենայն ներհակութեց. իսկ
արդ ՚ուծ է կենդանք և լոյս, սրբութիւն և ուղղութիւն.
իսկ չարութիւնն է իբր մահ հոգւոյ, խաւար մտաց,
պղծութիւն սրտի, և թիւրութիւն կենաց. ուրեմն որ
սիրէ զՆծ, պարտի ատել զչարութիւն. զոյն զայս կա-
մի ձեռնարկել մարգարէն յասելն ։

Ա՚ր տէրէ՛ ղէրէ՝ ասեցէ՛ ղլարուրէ ։ Լ՚այս բան ոչ Հայլի
առ ամենեսին, այլ առ այնոսիկ՝ որք դարձեալ էն
առ Նծ, և ծառայէն նմա. զի նոքա էն որք սիրէն
զառէր. վասն որոյ ասէ՝ որք սիրէք զառէր ։ Լ՚այց ահ
դիր. զի ոչ հետևեցուցանէ այսմ ասել, զգուշացի՛ք
՚ի չարելէ, այլ ատեցի՛ք զչարութիւն. զի բազումք
էն՝ որք զգուշանան ՚ի չարելէ առանց ունելոյ զամ-
բողջ ատելութիւն առ այն. բայց սակաւք էն՝ որք ամ
բողջ ատեն զնոյն ։ Լ՚րկոքին էս էն բարի, սակայն
առաջինն է սկանաողաց, և յետինն կատարելոց. նա
ատէ վասն զգուշանալոյ. իսկ սա զգուշանայ վասն
ատելոյ. ՚ի նմա զգուշութիւնն է պատճառ ատելոյ, ՚ի
սմա ատելութիւնն է պատճառ զգուշանալոյ ։
Լ՚պաքէն յապաշխարել ազահին և ՚ի դառնալ նորա
առ Նծ՝ թէպէտ և զգուշանայ ՚ի չարելէ մանր.
նայի, գիտելով թէ է մեզք, վասն որոյ և սոխալ
ատել, բայց յօժարուէ սրտի նորա զԳուարանայ առ
այն. այնպէս և որ դառնայ ՚ի չարելէ պղշկու-
թէ, սովրուէ նորա գԳուարացուցանել ատել զնոյն.

թէպէտ և այս դժուարութիւն ոչ համարի նմա ՚ի յանցանս, այլ մանաւանդ առիթ վարձուց՝ եթէ զուսումնիցի. իսկ որ կատարեսցի և կատարեալ ՚ի սէրն ՚ոյ՝ այնպիսին ատելով ատէ համ ամբողջ ատէ զչարն. և վասն ատելոյն զդուշանայ անտի. ՚Այլ եթէ չունիցի զայս ատելութիւն ամբողջ, թէպէտ այսու ոչ պակասէ ՚ի սիրոյ, բայց պակասի ՚ի կատարելութենէ սիրոյ։

Այսացի ամբողջ. զի ատել զչարութիւնն համ զմեղս հրկնահի մտածի. մի՝ սոսկասցես. որ է ատել զչարն ըստ էութենէ չարութեան. և մի և ըստ տաբածութեան. որ է ատել զչարն ոչ միայն ըստ էութենէն, այլև ըստ պարագայիցն։ ՚Այսոքինն էապէս պահանջի առ սէրն ՚ոյ և առ ապաշխարութիւն. մինչ զի առանց այնր ոչ կարէ ոք սիրել զինծ կիճ ապաշխարել. իսկ երկրորդն՝ որ է ատելութենի ամբողջ՝ վերաձի առ կատարելութենէ մանաւանդ յայնոսիկ՝ որք ցանկան հաստատուն մնալ ՚ի սէրն ՚ոյ։ Այնի իրի յորդորէ մարգարէն՝ եթէ որ սիրէ զինծ, քանասցէ, զի ատելի լինիցի ինքեան ի և իցէ չարութիւն։ ՚Այ ՚ի լինել այսր՝ այնուհետև նա ինքն ևս յատուկ լինի օրինակաւ զդուշանայ զնոսա. և լինի նմա պահապան։ ՚Այ զայս յայտ առնէ մար-

գարէն յայնմդեմ բանիւն ասելով։

Պահէ սէր զանիւնս սէց ի-ուց. ՚ի յիւ-ոց ձեռս-ուր ձրինս-ցէ վնաս։ Լսորհրդով յաւելու զդատ ի-ուց. որով ո-

րոշէ զնոքան ՚ոյ. զի բազում են արդարս չարք. բայց ոչ են բազում չարք ՚ոյ. քանիք երևեցան չարք յայս մարդկան. բայց առաջի ՚ոյ համարեալ և՛ին պիղծք և անարդք. վասն որոյ և մարգարէն որոշել կամելով՝ ոչ ասէ սոսկ, պահէ տէր զանձինս չարց, այլ չարք ի-

րոց. իսկ այս պահելն է այն, զի ՚ոճ տեսանելով Թէ նոքա չարք պահին զՀոգիս իւրեանց վասն նոցա, նա ինքն ևս պահէ զՀոգիս նոցա չարս վասն իւր. կամ որ նոյն է, լինի պահապան անձանց նոցա՝ զի մի մեր-

ձեսցի ՚ի նոսա չարութենէ։

Ա՚յս պահպանութենէ եթէ ըստ Հոգևորին մտածեսցի, է հանապազորդ. զի ՚ոճ ՚ի կողմանէ իւրմէ միշտ պահէ զչարս իւր։ Իսկ եթէ ըստ մարմնաւորին մտածեսցի, այլև այլ օրինակաւ կատարի. բայց միշտ յո-

դուստ Հոգւոյ Նոցին։ Պարսպէս է իմանալ և զիրկել նորա վնասս ի ձեռաց մեզաւորի, այսինքն՝ի ձեռաց առն ամբարշտի. և և ի հարից սատանայի, որ գլուխն է մեզաւորաց. կամ ըստ լատ" * ատ պահէ ,, ի փորձանաց, և ի հանգիստեանէն ի պատժոց մե- ,, զաց. ատ փրկէ ի ձեռաց մեզաւորին սատանայի ,, ի գայթակղեցուցանելոյն, և յայտժամ ի նորին ,, հրոյն ։

Այս դարձեալ թէպէտ և յաշխարհն ատ թէպէտ տայ ածատաւել՝ որք իւրոց՝ բայց յիմի ցուցանէ առ նոս զիրկութեի իւր ըստ Հոգւոյ։ Այս ոչ այսպէս միայն, այլ և պէսպէս իրօք փայփայէ զՀոգիս նոցա, լուսաւորելով, և ուրախացուցանելով. զորոց խօսի մար- գարէն ի յաջորդ համարն սահելով.

ժա. Ի այս ծագէաց արդարոց. ասղղոց որոյ եղև ուրա- խութիւն։

Այս բան նոյնանայ ընդ այնմ՝ զոր ասէ մարգարէն (ի սաղ. ղ. 6.) այն է * նշանեցաւ առ մեզ լոյս է ,, բեսոց քոց, և ետուր ուրախութի սրտից մերոց ։ զորմէ տես անդ, մանաւանդ ըստ ածային լուսոյն։ Այլ կամելով ատ ևս խօսիլ ինչ՝ գիտելի է, զի լոյսն ածային այլ և այլ նշանակութիւ կարէ առնել լինել- մի՝ փոխանակ այնը, որով ատ յայտնէ մարդոյ ի բնաւ- կան կարգի զՀնութեան ինչ. կամ ի բարեպահան կարգի ցուցանել թէ այս ինչ է առնելի, և այն ինչ խորշելի. և զայս լոյս ծագել ատ առ ամենեսեան՝ յոր միտ ասէ. * լուսաւոր առնէ զնմա մարդ որ գալոց է ,, յաշխարհ ։ լոյս վերածի և լոյսն բնական օրինաց։ Արիւրդ՝ փոխանակ այնը, որով ատ ցուցանի ի գերբնական կարգի զգերագոյն ինչ բարի, կամ զգաղտնի խորհուրդս. որպիսի է լոյսն հաւատոյ, և լոյսն ածային ներքին յայտնութե։ Լոյս վերածի և լոյսն ածային օրինաց. (զորմէ տես ի սաղ. ղ. 6.)

Այս լոյս ևս ի կողմանէ այ ծագէ առ ամենեսին.

իսկ որք չընդունին՝ իբրեւ ոչ յանցանքն։

Արիւրդ՝ փոխանակ այնը, որով ատ այնպէս պայծառ տայ բմբռնել զինն, մինչև յարել Հոգւոյն ի նոսն. և զոյս առնել ատ երբեմն նաև առ ամբարիշտս, յոր-

ժամ կամ՝ի խաւարէ մնջորեւէ ածէ՝ի լոյս ածսպաշտուեթէ, և կամ՝ի խաւարէ մեզայ՝ի լոյս արդարուեթէ. և այս է յատուկ ինն ներգործուեթէ ընորհացն Ոչ։

Յոկ յարդարան բազում օրինակաւ գործէ զայս. մի՝ յորժամ՝ի փորձել նոցա պայծառացուցանէ զմիտս նոցին ձանաչել զպատրանսն, և զգուշանալ։ Յերկրորդ՝ յորժամ՝ի գլորիլ նոցա՝ ցուցանէ թէ չար է՝ զոր առարին, և թէ քանի բարի է փոխարէն՝ի յաւետնել. որպէս արար ընդ պետրոս և ընդ այլս բազումս։ Յերրորդ՝ յորժամ՝ի տարակուսիլ նոցա՝ի հոգևոր ձանապարհի՝ յայտնէ նոցա՝ թէ ընդ որ պարտին գնալ, և զիարդ։ Չորրորդ՝ յորժամ՝ի պարս պիլ նոցա ածէ այնոց, և՝ի խոհալն, կամ՝ի յաղթելն, յայտնէ նոցա զիրս զարմանալիս, կամ զգաղտնիս կամաց իւրոց. և այս է ըստ լամբ՚՚ յատուկ ինն ներգործուեթէ հոգւոյն Ոչ։ Յայլսպի օրինակաւ, և այլ ևս բազմապատիկ եղանակաւ լուսաւորէ՝ ածէ զմիտս արդարոց յաստի հետանս լուսով նպաստից իւրոց։ իսկ՝ի չհանդերձելոսն լուսով փառաց։ Չայս ամենայն հայեցեալ մնրգաբրիէն ասէ։

Ա ՚՚ջր ծգենայ արքարոց։ Յերէկ լուսով իմացեալ լիցի աստ լուսաւորութէն հաւատոյ, և ածսյին օրինաց, միտ բանին լինի այս, թէ լոյսն հաւատոյ և օրինաց ծագեցաւ ժողովրդեանն ՚՚ոյ, զորս արդարս կոչէ։ Յոկ եթէ իմացեալ լիցի ազգուսեթէն ներքին ածսյին լուսաւորութէն, կամի ասել. ոչ պահասեցաւ յարդարոց լոյսն ածսյին, այլ յամենայնի ծագեցաւ նոցա՝ ըստ բացատրելոյ մեր այժմ։ Յայլ եթէ իմացեալ լիցի լոյսն փառաց, միտ բանին լինի այս. ի ժամանել արդարոց առ ածն յերկինս՝ ծագեցի՝ի նոսա լոյս փառաց. որով և կարասցեն տեսանել զնա, և այնու ժառանգել զփառս նորա։ Յոչ զի այսպիսի լուսաւորութէն մնաց զՀետ գայ ուրախութէն կամաց, վասն որոյ յարէ զինի և ասէ։

Ա՚՚ղջյ սրտից եղեալ ուրախութէն։ Յառագ սէրա՝ որ է մանն մարդոյ, զնի աստ ըստ թարգմանութէն մերում փոխանակ բոլորին. որպէս թէ եղեալ էր. եղև ուրախութէն նոցա՝ որոց ուղիղ են սիրտք. որ է ասել.

եղև ուրախութեի ուղղաբարից, զորս նախ արդարա
կոչեաց. և այս յիրաւի, զի արդար ասի նա՝ որոյ
սիրան՝ այսինքն կամքն և յօժարութիքն են ուղիղ,
այս է՝ ուղղեալ առ բարին, մանաւանդ առ ծայրա-
գոյն բարին Աստ, համաձայնեալով ընդ նմա։

Լ՚արդ՝ ի ծագել սակ առ սուսա ճաճային լուսոյ՝ եկն
՚ի սիրտ սուգա ուրախութեի։ Լե պատճառն է, զի
ուրախութիւնն ծագի՝ ի ստացմանէ բարւոյն, որ ինչ
ներիակ՝ կամ իրօք և կամ յուսով. և զի՝ ի ծագել
ճաճային լուսոյ՝ ի միտս արդարոց, և յուղղել սրտից
նոցա, այսինքն՝ ի համաձայնիլ կամաց նոցա ընդ
ճաճային կամաց՝ առաջիկայ լինի նոյ ստացումն բար-
ւոյ, նմին իրի ծագի՝ ի սիրտ նոցա ուրախութեի, և
և յափշտակութեի՝ ի սէրն ոչ. այլ թէ զինչ և սրպէ-
սի ինչ այն առաջիկայութեի, և այն ուրախութիւն,
նոցա միայն է գիտելի՝ որք վայելեցին՝ ի նմին։

Ո արդարան լեալ և զուղիղն առաջի առնել մար-
գարէն, զի թէպէտ և առ ամենեսեան ծագէ ճաճ գլոյս
իւր, բայց արդարք միայն վայելին՝ ի նոյն, և ուրա-
խանան. և ոչ ամենարիշտք. որք փակեալ ունին զա-
միտս իւրեանց առ լոյսն ճաճային, և զսիրտս իւրեանց
խոտացեալ առ ցնծութիքն երկնային։ Ո այս յայտ
նապէս տեսանելիք՝ ի պատմութեե նահարարացն մե-
ծոց առ գևռնդեամբք՝ զի՝ ի խաւարային բանտի անդ
լուսաւորեալ առ յոյ՝ կային ցնծալից ուրախութեք
ըստ ուղղութեե սրտից իւրեանց. և ընդ հակառակն՝
որք ուրացեալքն էին, ՚ի դառն տրտմութեե խեղ-
թեալ լինէին։ Խիղճ մտաց առաջնոցն իբրև արև
լուսաւորէը զնոսա, կամ ասացից՝ վիշապութեե խղճի
մտաց նոցա իբրև ծագումն արևու փարատէը ՚ի նո-
ցանէ զմիգ և զմռայլուղ տրտմութեե. * պարծանք
մեր այս էն, վկայութեե մտաց մերոց։ (Ա. կոր. Ա.
12։) Իսկ վկայութեե մտաց այլոցն իբրև ամպ իջեալ
՚ի վերայ հոգւոց նոցա՝ խաւարաւ տրտմութեե պաշա-
բեբ զնոսա։ Ալ ասն զի խիղճ մտաց մարդոյ է այնպէ-
սի իրաիսնան, յորում առողջն բերկրալից վայելէն.
իսկ հիւանդն տխրալից հեծէն։ Կայծակին արկեալ
՚ի լեռ չիջանի. և տրտմութեե անկեալ ՚ի բարի խիղճ
մտաց չքոտի, այլ ՚ի չարն իբր ՚ի փուշ բորբոքի։ Կառ

րն խիղճ մտաց իբրև մեղք ազնիւ քաղցրացուցանէ զՀոգին. * քաղցր է նա քան զմեղու խորիսխ ‖ . (սաղ. ԺԹ. 10.) Իսկ չար խիղճ մտաց՝ է իբր մեղք ժանտ որ ցաւեցուցանէ զորովայն. * Պատուղ Հոգւոյն է խնդութիւն ‖ խղճի մտաց. (գաղ. Ե. 22.) Իսկ պտուղ մարմնոյ այնքան մարմնասիրութիւնէ դառնութիւն է և կոծումն սրտի. Իսկարի խիղճ մտաց ուղիղ կանէ և ուրախութիւն յարդարն. չար խիղճ մտաց խանգարեալ ժամացոյց սրտմտութիւն է, յամբարիշտս. ուստի միայն ուղղոց սրտից ընծայի մարգարէն զուրախութիւնն.

Ամենք աստանօր լուսով իմանան զպայծառութիւն յաջողութիւնք գործոց, ազատութիւն անձանց, առատութիւն երաց, լիութիւն բարեաց, ևն. և սակն, թէ այս առնային առաքեալ լինի արդարոց ի հասանել կարևոր պահու՝ որով և լինի նոցա ուրախ ինալ ի սրտս իւրեանց. Իսկ զայս ամենութիւն տան նոքա, որք վերայծեն զայս բան ի գարձ գերութիւնն բաբելացւոց. իբր զի ի գարձի նոցա՝ ծագեաց նոցա այս ամենայն, և եղև ուրախութիւնն սրտից նոցա. Իարդ տեսեալ մարգարէին զարդարն յուրախութիւն՝ ինքն ևս ի նոյն խրախացուցանել զնոսա. որպէս եթէ ոք նստեալ ի ինջոյս և տեսեալ զգազմելսն անդ յուրախութիւն՝ խրախուսեսցէ զնոսա. ըստ սակն կարդէ և մարգարէն ասա զբան իւր՝ ասելով.

ԺՂ. Աբրահամ եղբայր արդար ի գէր. խոստովան եղբայր յիշատակի արձանին նորա.

Ուրախ լինել արդարոց ի տէր՝ կարէ լինել հրկնակի. մի՝ յորժամ ի ձանձրելն զգարութիւն նորա և զգեղեցկութիւնն կամ զկարողութիւնն նորին և զբաբերութիւնն ևն, ցնծան ի նա իբրև յառարկայ լիութեան բարեաց. Իբրհորդ՝ յորժամ ի վայելելն զբարիս կենցաղոյս, կամ ի կրելն զչարիս, բերկրին ի բարի հնամն ոյ՝ և ի հաճոյս կամաց նորա, իբրև ի պատճառ լիութեան բարւոյ. Իարդ որովհետև ասաց ի վերոյ, ուրախ լինել արդարոց և ուղղոց, զայն ուրախութեանն յայծ վերածէ և ասէ.

Աբրահամ եղբայր արդար ի գէր. Կամ ասէ՝ ով երա-

նեալք արդարք՝ ձեզ միայն վայելէ ուրախանալ ի նոր. զի որովհետև սիրաք ձեր ուղղեալ են և համամայն նեալ ընդ սրտին ոյ, յայն միայն մարթի ձեզ ուրախանալ. ուր գեղեցիկ իմն գրէ լամբ՝ ասելով այսպէս։ * Օ այս ուրախութիւն որ ի տէր է՝ անհնար ,, է նմա վայելել, որ չէ արդարացուցանէ զխոհուն ,, մտաց և զդործս մարմնոյ. զի թէ միաքն է անիւ ,, բաւեալ և ծանրացեալ զաղանաւոք աչխարհիս և ի ,, սորին ցանկութիւն, և ոչ բնաւ՝ թէ զի՞նչ է ի տէր ,, ուրախութիւնն կարէ ձանաչել. իսկ թէ միաքն ,, անեալ է երկիւղիւն ոյ և գիտութեն՝ և մարմինն ,, ըմբռնեալ ի տոհմից մեղացն՝ ոչ կարէ ուրախա- ,, նալ ի տէր, թէ և կամն և գիտէ զդեղանակ ու- ,, րախութեն. զի խիղճ մտացն զգործս մեղացն խոչ ,, հանէ ընդ աչս նորա և խաւարեցուցանէ տգիտա- ,, նօքն և տրամութեն. այլ ուրախանան զանձաս ,, ուրախութիւս նորա՝ որք զերկասիս փութան պա- ,, հել ի կէտ արդարութեն, մտացն տալով կերա- ,, կուր զգիտութեն ոյ և զսէր. և մարմնոյն զգործ ,, օրինաց նորա արի ձգնութեբ, որոց սիրէ ուրա- ,, խութեն ցնծութեն խնդութեբ ի քո։ Լէ զի յայս սիսկ ուրախութէ գոհեն և գովութեբք առ ած՝ վա- որոյ յարէ զկնի ասելով։

Աստուած եղերաւ չելաւոյն սբերութէ նոր։ Սբերութէբ երեք ինչ մարթի խմանալ աստ. մի՝ զներքին սբերութեն ոյ, ըստ որում է սբերութէն անաչհմեան. և յայս միտ կամի ասել. խոստման եղերաւք, այսինքն գովեցէք և հռչակեցէք զչիշատակ սբերութէ նորա, որ է ասել. գովութէբ չիշատակեսջիք զսբերութէ նորա. կամ թէ մի մոռանայք զչիշատակ անաչհմեան սբերութէ նորա. կամ տանեցէք զսբերութէն նորա, և օրհնեցէք ասելով. ապ, ապ, ապ.

Լչկերորդ՝ սբերութէբ խմացեալ լինի այն ամենայն՝ զոր ետ ած ի սբերութէն, որպիսի են խորհուրդք, տանք, տաճարք, սեղանք, ևն. և յայս միտ կամի ասել. գոհացիք զոյ՝ չիշատակելով, թէ զայս ամենայն արար և ետ նա ձեզ վասն սբերելոյ զձեզ. կամ օրհնեցէք զած վասն տալոյ ձեզ զայսպիսի չիշատակս ի սբերութէ անձանց ձերոց։ Կամ դարձեալ, չիշեցէք զած այսո-

քիւբ՝ որ իրօք, և սոքիմբք խոստովան եղէրուք նմա ։ Արդարդ՝ իմացեալ լինի այն սրբութիւն՝ որով ՚ած՝ նք աբար զարդարմն, կամ՝ որով արդարացոյց զնոսա . և յայս միտ կարի ասէլ . խոստովան եղէրուք, այսինքն գովելով Հաշակեցՙՙք զիշատակ այնր սրբութիւն , զոր ընկալաք յՙՙդ . կամ ըստ լուծ՚՚ զիշատակ սրբարար անօրէնութիւն նորա , որով սիրեաց զմեզ . զի չէ արժան մոռանալ զիշատակ այսպիսի բարերարութիւն , որով արդարս արար զմեզ և նոքս ։

Զիշատակաւ մարթ է իմանալ ասա և զայն՝ որով մեզ քՙՙ յերկինս , և բարեխօսակ վասն մեր առ Հայր ։ Այսմ յիշատակութիւն նորա արժան է մեզ խոստովան լինել , այսինքն հնորհակալութիւն մատուցանել . որպէս զի Հաճեացի ոչ միայն յիշել զմեզ , այլ և առնուլ առ ինքն , և մնծանել յարքայութիւնն իւր ՚ի ցնծութիւն յաւիտենական ։

ՍՒՆՈՒՈՑ· ԳԼՈՒԽ·

Յորդոր օրհնելոյ զՙՙծ վՙ սքանչելեացն նորա , և վՙ յայտնելոյ զփրկութիւն և զարդարութիւն իւր՝ ըստ սնդրաւ ազգութիւնն իւրում՝, և ըստ անստեղի Հմմարտութեն բանից իւրոց , և ՚ը ուղղութՙՙ գատելոյն ։

Սաղմս ՚ի դաւիթ . օրհնութիւն ։

1 Օրհնեցՙՙ տէր յօրհնութիւն նոր . չի օծանչիւս սրաւ ։ 2 Վիպեսց ընՙՙ ամ իւր , և քաղաքՙՙ սուրբ իւր ։ 3 Այցոյց տէր ՚ի ծովս իւր , առաքի ապՙՙց յայտնեաց զարդարութիւն իւր ։ 4 Հիշեցաց ողորմութիւն իւրով և յարութիւն , ՚ընդ մարդուբՙՙ իւրով զառնն խոսչեալ . և աչքն ամենայն ծագս երկրի տեսին զփրկութիւն ՚ած մերոյ ։ 5 Աղաղակեցՙՙ առ տէր ամենայն երկիր . օրհնեցՙՙ ցնծացՙՙ և առնՙՙ առաչե ։ 6 Սաղմս առաչե ՚ած մերոյ օրհնութիւն , օրհնեցՙՙ և ՚ի յոյն առաքեալս ։

7 Ի յայն օրհնութիւնէ հաճոյ իմոյ. օրհնութիւնք ցնծութեան՝ և
ի յայն եղջեր փառաց. և ալաղաղեսցէ առաջի Տեառն փափաքութիւն նա։
8 Յաւիտեանի ծով լերինս խորով, պիղծքդ և ամենայն բնակիչք
նորա. և փեսայ ծածկ հարցին ի գիսին յեռամբ։ 9 Երջանիկ
ցնծասցեն առաջի նո, ղի գայ և հասանել է սեր ի գտնել
երկիր։ 10 Լուարի զանձրևս սրբութեանէ, և ցնծացեալ ասասցեն
ի ննջարանս իւրեանց։

ՎԱՂԻՆ ԳԻՐ.

Աղաչս ի գաւխն. օրհնութիւնէ։

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԷՈՒՆ ԻՆՁ

դնի * սաղմոս ինքեան գաւթի ։ և այս ըստ լատ՚՝ նման ըստ եօթ՚. յորում դնի * սաղմոս յինքն՝ ի գաւթի ։ իսկ ի ձեռագիրսս այլ և այլ օրինակաւ գրի. յերկամեայսդ միւսմ դնի. * ի գաւթի սաղմոս օրհնութեան ։ յերիս դնի. * օրհնութեան գովեստի. սաղմոս ի գաւթի ։ յերկուս դնի. * սաղմոս ի գաւթի օրհնութեան ։ յերկուս և միայն * սաղմոս ի գաւթի ։ և ի լսեմ * սաղմոս գաւթի ։ իսկ յայլս ըստ վերոյ գրելոյդ դնի * սաղմոս ի գաւթի օրհնութեան ։ այսինքն սաղմոս օրհնութեան առաջեալ ի գաւթայ ։ Ոչ երբ ոչ դնի բառս գաւխն. այլ միայն բառս դպչմոս ,

այսինքն սաղմոս ։

Բազումք ըստ վերնագրի առաջոց համարին, թէ այս սաղմոս ասացեալ իցէ ի գաւթայ՝ հայելով յառաւելութեն որդւոցն իսրայէլի ի ծառայութենէ եգիպտոսի. բազումք և՝ թէ այս ասացաւ հայելով յառաւելութեն նոցա ի գերութենէ բաբելացւոց ։ Այլ զի այն ազատութեն՝ եթէ առաջինն և եթէ երկրորդն՝ էր օրինակ ազատութեն ազգի մարդկան, վասն որոյ ի մեստ սաղմոսիս յայն հայի, այսինքն ի գալուստ որդւոյն ոյ՝ եթէ յառաջինն և եթէ յերկրորդն ։ Զայս միտ մեկնեն զայս սաղմոս ոչ միայն ըզ հարբ յոհնաց

և լսահնացուց, այլև աւարքիք հրեից, ի հաստատել նոցա, թէ քանիք սաղմոսիս ըստ նկարագրին հային ի գալստեան Տեսիչին. վասն որոյ և մեք ի սոյն հայելով ունիմք մեկնել զսա։

ԲՒՆ

ա. Որդնեցէք ղեր յօրհնութիւն նոր. ի սաղմոսէն արար։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Սովին բանիւ սկսաւ և զսաղ. ղե. ։ յասելն. * օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր ևն ։ զորմէ տէս անդ, բայց քանզի աստ նոր իմն սքանչելի առիթ առաջի ժառուցանի, վասն որոյ դարձեալ ի նոր օրհնութիւն յորդորէ՝ ասելով.

Որդնեցէք ղեր յօրհնութիւն նոր, ի սքանչելիս արար ։ Այսմ ասել. արժան է ձեզ վերստին առնուլ օրհնութիւն նոր. և նորոգութիւն իմն մատուցանել զայն ինչ. զի արար զնոր սքանչելիս ։ Պաւլէն նոր իմն ցուցաւ. և նոր սքանչելիք տեսաւ, զի նա ինքն ածի կամելով փրկել զաղգ մարդկան՝ ինքնին էջ յերկինից, ոչ ա հեղուածիք ամուսնի իբրև յայլ տակաւածիք մարմնոյ. և նոր իմն սքանչելեօք յոյցաւ յորդանանի կուսին հոգեւով տեղւ. և ծնաւ առանց խախտելոյ զկուսութիւն մօրն, որ է սքանչելիք սքանչելեաց. և գոլով արարիչ ամենայնի և նախախնամող տիեզերաց՝ մնաւ կաթամբ, և առեաց, և սկսաւ գործել յայնս ևս զնոքանոր սքանչելիս. զկոյրս լուսաւորեաց, զկամերս ի՛ոտեցոյց, զկուլս լսեցոյց, զկաղս գնացոյց, զբշխիւանդս բժշկեաց, զմեռեալս յարոյց. և հուսկ յետոյ մահուամբ իւրով մահացոյց զմահ, և յաղթեալ ամօք՝ ինքնին յարեաւ առանց օգնութիւն այլոց, և ինքնին եւ՛ի բարձունս երկնից։

Եւ այլ նոր իմն սքանչելիք, զի առաքեալ զհոգի իւր Սուրբ առ սուգեաւ և առ ակմամբ աշակերտս իւր, նոքիմք

զտովանդակ տիեզերս սատսեցոյց և լուսաւորեաց· յիմարեցոյց և գիմաստութեն աշխարհիս այսորիկ ոչ իշխանութեք, այլ զօրութեք աւետարանին։

Վ՚րդ որովհետև զայս սամնայն սքանչելիս արար որ. դին ոչ վասն փրկելոյ զմեզ, արժան է, ասէ փրկելոյս մեզ նոր օրհնութեամբ օրհնել զնա· զի ըստ գրելոյ լսեմք· այսմ սքանչելեաց * փոխարէն ոչ այլ ինչ կա,, ղաղ եմք տալ՝ բայց միայն զօրհնութեն բղխեալ՚ի ,, սիրոյ· ոչ թէ նա՝ որ ծայրն է սամնայն բարեաց, ,, առ՚ի մէնջ օրհնութեն առաւելութեն ինչ առնու, ,, այլ զանչքն՝ որպէս կարօտի մարդասիրութեք չան,, գուցանէ և խառնի՚ի նա՝ յօդակապութեն օրհնու,, թեան»։ և ապա յարէ զկին ասելով· պարտ է մեզ օրհնել զնա ոչ վասն այնոցիկ՝ զորս արար՚ի սկզբանն, զի անցին այն սքանչելիքք և նոցին օրհնութեքն հնաւցան· այլ վասն նոր սքանչելեացս, որով փրկեաց ըզմեզ· վասն որոյ և նոր օրհնութեք պարտ է օրհնել։ Վ՚այս բան կարէ վերածել և՚ի գէմս հօր· քանզի որ. պէս արար որդին, նոյնպէս և հայրն· որովհետև՚ի ձեռն որդւոյ իւրոյ գործեաց զայս ամենայն՝ իբրև՚ի ձեռն աջոյ իւրոյ, յոր միտ ասաց տէրն մեր· * Հայրն որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն»։ յովհ· ժ՚դ· 10։ Վ՚չ այս առ՚ի փրկել զաղգ մարդկան· վասն որոյ յարէ զկին և ասէ։

Փ՚ըւեաց ընա ալ է՚ր, և բաղուխ սուրբ է՚ր։

փրկութեն ազգի մարդկան որպէս յայտ է՚ի նախագրելոցդ՝ գերագոյն եղև՚ի սքանչելիսն այդ, մանաւանդ թէ վախճան սքանչելեացդ։ Վ՚ղև գերագոյն՝ ըստ գեր՚ի վերոյ երկանկին, զի որ փրկեացն՝ ածգոլով՝ եղև մարդ, և մարդ գոլով փրկեաց։ Վ՚ղև և վախճան սքանչելեացդ, զի ՚ն և իսկ սքանչելիքն այդ ուղղակի կամ կողմնակի կարգեալ եղեն յայս խորհուրդ առ՚ի փրկութեն մարդոյ· իբր զի մարդս՝ որ բաժանեալ էր յայդ մեղաբ՝ այնու փրկութեք միաւորեսցի վերստին ընդ նմա ընդհանր և փառաւոր· և զի այս եղև աջողին այդ, և բազում նորա, վ՚ա որոյ ասէ։

Փ՚ըւեաց ընա ալ է՚ր, և բաղուխ ոչ է՚ր։ Վ՚այս բան եթէ

'ի դէմն որդւոյն ասիցի, աջով իմացեալ լինի զօրուեթեն նորա 'ի փրկել զմարդիկ. և բազկաւն իմացեալ լինի նոյն զօրուեթեն նորա 'ի վանել զչնաւին ազգի մարդկան. որպէս թէ ասէր. զօրուեթէն որդւոյն այ փրկեաց զազգ մարդկան՝ խորտակելով զզօրուեթիւն սատանայի, որ գերեալ էր զնոսա։

Կամ եթէ ասիցի 'ի դէմն Հօր, աջով իմացեալ լինի որդին 'ի փրկելն. նոյնպէս և բազկաւ իմացեալ լինի նոյն որդին 'ի վանելն զսատանայ. որպէս թէ էդեալ էր. որդին այ՝ որ է աջ նորա և բազուկ, փըրկեաց զազգ մարդկան։

Ասա այսոցիկ մեկնութեանց բառդ ընդ՝ դնի փոխանակ բառիս զմարդ կամ զազգ մարդկան. կամ փոխանակ բառիս խօսիլ, որպ փրկութեին եղև օրինակ փըրկութեանէ ազգի մարդկան։ Այսոյս հայի և ասացեալն այն բերանով եասայեայ. * փրկեաց զնոսա բազուկ իմ, և սրտմտութեի իմ միայն զդէմ կալաւ։ (Եսայ. կդ. 5։ և 'ի գլ. ծԼԹ. 16. ասի.) * Հատոյց նոցա բազկաւ իւրով, և ըստ ողորմութեէ իւրում Հաստատեաց։ (տես և. ծԼ. 10։) Այլ զի զայս փրկութեի ոչ աթաթ ասէ 'ի ծածուկ, այլ յայտնի, վասն այսորիկ յարէ զնոսն և ասէ։

Ա. Այլ ինքն եբէ ելից ի մեզ զաղէտս յայսմ ազգի, ընդդէմ եբրայեցւոցն։

Ասաս էրէմեն՝ եբրայեցի կարէ առեալ լինել. մի՝ փոխանակ այնը գործողութեէ, որով լինի փրկիլ։ Այրկրորդ փոխանակ եղեր փրկութեէ, այսինքն փոխանակ այնը՝ յոր 'ի ժամանել ումեք՝ Համարի փրկեալ. որպէս արդարութեին ասի եղը փրկութեէ մեզ։ որ զի 'ի ժամանել նորա յայն՝ ասի փրկեալ 'ի մեզ. ըստ որոյ և արդարութեին այն ասի փրկութեէ. այնպէս առաջնորդութեէն ասի եղը փրկութեէ Հիւանդին. ըստ որոյ և այն առաջնորդութեէն՝ փրկութեէն կոչի. սոյնպէս իմն և զայլոց. և Հաստատիօրէն ըստ այսոցիկ երկուց նշանակութեանցս 'ի գործ ածի բառս էբէեմեն։ Այրկրորդ՝ առեալ լինի իբր 'ի Թանձրացեալն՝ փոխանակ փրկչի յոր միտ գնի կոչեմք փրկութեէն մեր. այսինքն փրկիչ մեր։ Այսպէս ըստ այսոցիկ

կարէ իմացեալ լինել ատ առաս փրկութիւն՝ յա-
սելն ։

Այլոյն տէր պիտոյ է ։ Այս բան եթէ զՀօրէ ասի-
ցի՝ բացատրի այսպէս . փրկութիւն ազգի մարդկան
ծածկեալ էր , և ոչ երեւէր . սակայն եղոյց զայն
երկնաւոր . զի կամելով փրկել զնոսա առաքեաց զորդի իւր ի փրկութիւն նոցա , և յայտնեաց զնա լինել արդարացուցիչ ամենեցուն ։ Իսկ եթէ ի դէմս որդւոյ ասիցի , միտ բանին լինի այս . որդին այ է կին յաշխարհ , և յայտնի եղոյց ամենեցուն զփրկութիւն իւր . զի յայտնդիմին խաչելեացն և բազում սքանչելիսք որք գործեցան ի խաչելութենէ՝ յայտնի քարոզեաց զաստուածութենէ , և եղոյց եթէ ինքն է՝ որ փրկէ զամենեսին . և այն՝ ոչ եթէ առանց իրիք վճարման , այլ հատուցմամբ արդարութենէ . զոր և յայտնի եղոյց ամենեցուն . և առ այս յարէ ։

Բայց ապա յայտնեաց զարդարութենէ ։ փրկութիւն մեր թէպէտ և կարէր կատարել պարզ ողորմութենէ , բայց կամեցաւ այդ զի լինիցի արդարութենէ . կամին՝ յիրաւի ողորմութենէ եղև , բայց կատարելն՝ արդարութենէ . (զորմէ տես ի սաղ . ՃԺ . 10 .) և այլուր . յորս առասցաք թէ արդարութին այ պահանջէ զի լինիցի հատուցումն ի մարդկանէ վճ անարգանացն՝ զոր արար մարդն . ապա որդին այ լեալ մարդ Ճշմարիտ՝ եւ արար զհատուցումն արդարութենէ . որով և փրկութենէ մեր եղև արդարութենէ ։

Զայս մեր արդարութենէ փրկիչն ասէ յայտնեաց Յհ առաջի անհնային ազգաց . իբր զի եղոյց ամենեցուն , մանաւանդ անմարմնոց՝ թէ արդարութին իւր ոչ նեթէր մարդկան , եթէ միջնորդութենէն որդւոյն ոչ էր արարեալ զհատուցումն այնր արդարութենէ , զոր արար մարդն փրկիչն ասէ յայտնեաց զայս և որդին . զի ինքնին կատարեալ զայս գործ արդարութենէ՝ յայտ արար , թէ հատոյց վճ ամենեցուն , և ոչ միայն նոցա այլ ինչ առնել , բայց եթէ զոր պատուիրեացն՝ զգուշանալ ի պահել . Ասէ յառաքելն զաշակերտս իւր առ ի յայտնել առաջի ազգաց զայս արդարութենէն , պատուիրեաց նոցա և ասէ . * ուսուցէք նոցա պահել զա-

մենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ։

Արթո՛ւն աստ արդարութի՛ւն խնդալ զօրէնս այ՝ զորս յայտնեաց մարդկան. և և զայն օրէնս զորս յայտնեաց օրդին միածին. և կամ դարձեալ զարդարանալ մեր Հոգեաւոր. բայց այսոքիկ երկրորդաբար մտածին։ Այլ արդ քանզի որպէս ասացաք՝ այն արդարութի՛ւն հիմնի յողորմութի՛ն Նորա, վասն որոյ յաւելու մարգարէն ի յաջորդ համարն և ասէ՝

Ո՛ւղեաց ողորմո՛ւթիւ խոտով չարիւք. ճշմարտութի՛ւն խոտով պտուղս իւրոյ ընծայէլ. և ոչ ոքեւէն ամենայն ծագէ երկրի պիրկո՛ւթի այ վերոյ։

Ի մեղանչել անդ ազգիս՝ եգաւ չարդարութի՛ւն այ վրիս. զատապարտութի՛ւն ի վերայ Նորա, և ի վերայ որդւոց Նորին։ Այլ աձապարեաւ ողորմութի՛ւն այ հաձելցոյց զնա գթալ և տալ և՛ս վրիս զատապարտութի՛ւն ի զատապարտութի՛ւն անտի. որով վասն սահմանեաց Հայրն առաքել զորդի իւր. և այս թէպէտ ի յաւիտենից կարգեալ եղև, բայց մեր մարդկօրէն խօսելով, և ի յայտնութի՛ւն վճռոյն Հայելով՝ այսպիսի բան նիւթ վարիմք։

Օ՛յսպէս վրիս զոր արար ազգիս մերում ողորմութի՛ւն իւրով վասն առաքելոյ զմիածին որդի իւր՝ նախ յայտնեաց ազատմա՝ և յետ Նորա սքոյ նահապետաց. ընտրեալ ապա իւր ժողովուրդ զազգն Եբրայեցոց՝ յայտնեաց և նոցա ի ձեռն խօսակցի՝ այսինքն ի ձեռն յակոբեայ նահապետի, և ապա ի ձեռն մովսէսի. և խոստացաւ ճշմարտութի՛ւն, թէ հանդերձեալ է փրկել զնոսա, և զամենայն մարդ առհասարակ։ Այլ ի հասանել ահսհմանեալ ժամանակին՝ յիշեաց Նովին ողորմութի՛ւն զխոստումն իւր՝ զոր արարեալ էր, որով վասն առաքեաց զփրկիչն։ Այսպս Հայելով ասէ՝

Ի՛ւղեաց ողորմութի՛ւն խոտով չարիւք. ճշմարտութի՛ւն խոտով ընդառնս խոտոյնէն։ Այսելովն յիշեաց՝ ոչ ցուցանէ, թէ մնացեալ էր, և երբէք ի միտս, այլ թէ այնպէս ա բար՝ որպէս առնեն Նորա, որք յետ ժամանակաց յիշեն զայն՝ զոր յառաջն կամեցան առնել. յոր միտ ասի (Ծնն. ը. ւ.) * Այս յիշեաց Աստ զնոյ ևն։ Այս յայտ է թէ այս յիշելս այ էր ի գործ դնել զայն՝ զոր խոս-

տացաւ. և բան այսմ կամի ասել. Թէպէտ և յամենայնի ասի զխոստումն իւր, բայց ՚ի վերջոյ կատարեաց զայն։

Լսակ բառդ ողբոմութիւ՚ և ճշմարտութիւ՚ որք դնին ՚ի գործական հոլովին, առաքել լինին աստ բան կրկին բանի. մի՝ իբրև միջնորդ, և մի և՚ իբրև առաջակայ յիշելոյ. եթէ իբրև միջնորդ իմացեալ լիցին, կամի ասել. ասծ որ ողորմելով ազգի մարդկան՝ խոստացաւ տանն յակոբայ առաքել զքրիստ, միջնորդութիւ՚ այնր ողորմութեան յիշեաց զառունն յակոբայ, այսինքն յիշեաց զոր յայտնեաց նմա. սոյնպէս և՚ որ ճշմարտութիւ՚ խոստացաւ տանն իսրայէլի զքրիստոս՝ միջնորդութիւ՚ այնր ճշմարտութեան յիշեաց զազգն զայն։

Լսակ եթէ իբրև առաջակայ իմացեալ լիցին, փոխաբերութիւ՚ իմն խոսելով՝ միտ բանին լինի այս. ասծ ուշաբերեալ եղև իւրով ողորմութիւ՚ և իւրով ճշմարտութիւ՚, որովք կամեցեալ էր փրկել զազգն իսրայէլի, և ՚ի յուշաբերելն արար և կատարեաց զայն, որ և ասէլ. ասծ յիշեաց զողորմութիւն իւր և զճշմարիտ խոստումն իւր՝ զոր արարեալ էր առ ազգն յակոբայ, և յիշելովն կատարեաց. յոր միտ ասաց առնիսկ կայսն * յիշել զողորմութիւնս, որպէս խոսեցաւ առ ,, Տաբս մեր ։ (ղուկ. ա. 54.) Լ՚այ երկրորդ մեկնութիւն է համաձայն երբ" և այլ առնիսկ նմարդ" ։ Լ՚զդ քանզի յիշելն ոչ զիրկութիւն մարդկան, որպէս առացաք՝ է կատարել, իբրև զգեղալ գնելով զայն մարդարէին՝ հետեւեցուցանէ, և ասէ ։

Լ՚ր պէսն անուան ծագ երկրի դիւ՚ն այ ձեր։ Լ՚ծ Թէպէտև ազգին իսրայէլի խոստացաւ առաքել փրկիչ, բայց փրկութիւն ոչ նոցա միայն եղև, այլև հեթանոսաց։ Լսասի Թէպէտև առ տուն իսրայէլի եկն ՚ի ձեր մեր, բայց այն էր վասն առ նոսա լինելոց խոստմանն. և յայս միտ ասէր. * ոչ ուրեք առաքեա ,, ցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայ ,, ելի ։ (մատ. ժե. 24.) բայց ՚ի գալ նորա առ նոսա բան ճշմարտութեն խոստմանն՝ հեթանոսք գային զողորմութեն նորա։

Լ՚ր յայս հայելով ասէ պօղոս. (հռոմ. ժե. 8.)

* քան սպասաւոր Թլփատութեն լինել՝ վասն ճշմար-

,, տալ[ն] ՚ի հաստատուն առնելոյ զա-
,, ւետիս հարցն. այլ հեթանոսք վասն ողորմելի[ք]
,, փառաւոր առնեն զՅԺ ։ այսինքն է թէ պատճառ
գալոյն քոյ առ իսրայէլացիս՝ որք ասին թլփատուել,
վասն այսորիկ էր, զի ՅԺ չհմայուտիւնք խոստացեալ
էր հարց նոցա գալ առ նոսա. բայց ՚ի գալ նորա առ
նոսա, հեթանոսք ժառանգեցին զփրկուելի նորա ո-
ղորմութիւնք նորին։

Այս զի յամենայն ծագս երկրի էին ազգք հեթա-
նոսք, և ամենեցուն յայտնի եղև այն, վասն այսորիկ
ասէ, ետես ամենայն ծագք երկրի զփրկուելի ՅԺ
մերոյ՝ այսինքն ամենայն ազգք հեթանոսաց բնա-
կեալք ընդ ամենայն երկիր մինչև յաւարտուին եղե-
բաց նորին՝ քարոզութիւնք առաքելոց լուան և տեսին
զայն փրկուելի։

Այլ գիտելի է, զի այս տեսանելս թէպէտ և կարէ
հայիլ առ ամենեսին՝ որք լուան զաւետարանն և տե-
սին զփրկուելի յայլս՝ բայց տիրապէս առ նոսա հայի՝
որք ընկալան զայն, և հեաւեցան նմին. զի առքա
տեսին զփրկուելի յինքեանս և ոչ սոսկ յայլս. և ին-
քեանք փրկեալ լինելով՝ տեսին զինքեանս ժառան-
գօղս այնր փրկուելի։

Այս ամենայն՝ զոր մինչև ցայս վայր ասացաք՝ կարէ
միկիւ և ՚ի վերայ ազատութիւն ազգին իսրայէլի ՚ի
ծառայութիւն եգիպտացւոց, և և ՚ի գերութիւն բա-
բելացւոց. զոր իւրաքանչիւր ընթերցօղ ինքնին կա-
րէ հայեցուցանել. զի յայտ է թէ աքսորելեօք փըր-
կեաց զնոսա աջն ՅԺ. և եցոյց նոցա զփրկուելի իւր.
և յայտնեաց ազգաց բազմաց զարդարութիւն իւր. և
զայս արար ՅԺ յիշելով զայն՝ զոր ողորմութիւն իւրով
խոստացեալ էր ազգին իսրայէլի՝ թէ ազատեցից ըզ-
նէզ. և յազատելն անդ լուան և տեսին զայն ազգք
ընկեալք ՚ի վերայ երկրի։ Այդ վասն այսր ամե-
նայնի՝ այսինքն վասն ազատութիւն իսրայէլացւոց ՚ի
գերութիւն, և առաւել ևս վասն փրկուելի համօրէն
ազգի մարդկան՝ ՚ի գոհութիւն մատչի մարգարէին. և
զամենեսին ՚ի նոյն յորդորելով ասէ։

Ե. Զղաւակիցք՝ սա՛ ինչ ակնարկ երկիր. օրհնեցէ՛ք զՆիձ-
ղէ՛ և սաղմո՛ս ասացէ՛ք։

Զ. Սաղմո՛ս ասացէ՛ք այ ներա՛մ օրհնո՛ւթիւ, օրհնո՛ւթիւ և՛ ի
յայն սաղմոսաց։

Ա՛յսօրիկ բանք են զեղմունք ուրախութեան սրտի՛ ի
շնորհակալութեան մեծի փրկութեն այ. և զի այն եղև
ընդ ամենայն ծագս երկրի, վասն որոյ որպէս սաս-
յաք՝ զամ երկիր՝ ի նոյն խրախուսել ասելով։
Զգաւակիցք՝ սա՛ որ ակնարկ երկիր. օրհնեցէ՛ք զՆիձղէ՛ և
սաղմո՛ս ասացէ՛ք։ Ա՛յսինքն ամենեքին որք միանգամ
բնակեալ էք ընդ ամենայն երկիր, ուրախութի՛ւ ա-
դաղակեցէ՛ք առ Նի՛ձ. և յաղաղակել ձեր օրհնեցէ՛ք
զնա, և ցնծացէ՛ք ընդ աղօրմութեի՛ նորա, և սաղմոս
ասացէ՛ք նմա վասն փրկելոյ զձեզ։ Ա՛յս բան որպէս
և յայտ է՝ տիրապէտս առ հաւատացեալս ասէ. զի նո-
քա վայելեալք՝ ի փրկութե՛, նոքին ունին ազատա-
կել, օրհնել, ցնծալ և սաղմոսել։ Ա՛ղաղակէ՛ ձայ-
նիւ. օրհնել՝ շնորհակալութի՛. ցնծալ՝ հոգւով. և սաղ-
մոսել՝ նուագարանաւ. և զայս կրկնէ ասելով։
Սաղմո՛ս ասացէ՛ք այ ներա՛մ օրհնո՛ւթիւ, օրհնո՛ւթիւ և՛ ի յայն
սաղմոսաց։ Վասն է, զի որպէս ասացաք այլուր,
բառս օրհնութի՛ւ յայսպիսի տեղիս դնի փոխանակ օրհ-
նարանի, այսինքն փոխանակ այնը նուագարանի, ո-
րով սաղմոս ասի. ուստի լերթ՛՛ և յայլ տա՛մ թարգ՛՛
ասասնոր լերկուս տեղիս ևս դնի գՆիձ՝ այսինքն
քաջ. որ է բազմազեայ կամ բազմահեղ նուագա-
րան սաղմոսելոյ. ըստ որում և լամբ՛՛ դնի յասելն.
* սաղմոս ասացէք այ մերում քնարիւք, քնարիւք և
,, ձայնիւ սաղմոսաց՛՛։ Այլ յայս միա կամի ասել. սաղ-
մոսեցէ՛ք այ նուագարանաւ, և ձայնիւ. իսկ կրկնումն
բառից ցուցանէ զառաւելութի՛ն իրին. կամ ըստ վեր-
դասոյ ցուցանէ տալ զօրհնութի՛ն ըստ հոգւոյ և ըստ
մարմնոյ։
Ամենք ասա սաղմոս բառիս որ դնի յերկրորդումն
հատուածի՛ զայլ ինչ սաղմոսարան իմանան, այսինքն
է տասնադեայ գործի, և մեկնեն այսպէս. քնարաւ
և սաղմոսարանաւ օրհնեցէ՛ք զտէր։ Ասէ գեղեցիկ

ինն գրէ լամբ" յասէլն . * որպէս քնարն ոչ իւրովի
,, ունէլ զեղանակն , Թէ ոչ արհեստաւորն շարժէ
,, զմատունսն . և Թէ առանց նորա հնչէլ անյարմար
,, է և անպատշաճ . այսպէս և մարմինս զոյացանօքն
,, իւր , արուեստաւորն ի մտացն ի ձեռս քնարէ .
,, նմա հրամայէլ զսա շարժել , և ոչ երաժշտական
,, երգովք սաղմոսել . և Թէ մարմինս առանց մտացն
,, շարժի՝ ունայն է երգն : Օ այս հրաման ընդուն գոր-
,, ծով՝ տիեզերաց եկեղեցիք , որք տեսին զիրկու-
,, Թիւն քո . զի աղաղակեն հանապազ առ նա օրհ-
,, նուԹիւն , և զբնար մարմնոյս շարժեն բնական մտօք
,, յերաժշտական օրհնուԹիւն՝ սաղմոսել յիւրաքան-
,, չիւր հանդիսս և ի ժողովուրդս ‖ : Օ այս եդեալ
մարգարէին՝ այսինքն ի զօրհնուԹիւն նուագարանաց ,
ի մէջ մատուցանել և զաղաղան փողս և ասէ :

Շ . ’Ի յոյն օրհնութիւն խաղոյ փողոյ . օրհնութիւնք գնդա-
պետաւք՝ և ’ի յոյն եղջիւր փողոյ . (և) աղաղակեցէք
առաջի թագաւորին տն :

Արկին ազգ փողոց հինն առ երթայելիս զորս քահա-
նայից միայն օրէնն էր հարկանել . մին պղնձի կամ
արծաԹի կառաջոյ . որպէս յիշի Թուոց . (ժ . ։ .) և
միւսն եղջերեայ այսինքն յեղջերէ ձեռացեալ . որպէս
յիշի յեսուայ . (ՀՃ . ։ .) ևն : Այս զի այսորիւք փո-
զովք և սաղմոսին իսրայէլացիք ’ի տաճարին , զոս-
սա և ’ի մէջ բերել , և ասէ :

’Ի յոյն օրհնութիւն խաղոյ փողոյ . օրհնութիւնք գնդապետաւք՝ և ’ի յոյն եղջիւր փողոյ (և) աղաղակեցէք առաջի թագաւորին տն : Ասի ասէ . օրհնեցէք զնմ հնչեցուցանելով զփողս կառաջոյս , և ցնծացէք առաջի նորա հնչեցուցանելով զփողս եղջերեայս . և օրհնուԹիւն աղաղակեցէք առաջի նորա . զի նա է տէր մեր , և նա միայն Թագաւոր մեր :

Ա . յս յետին բան , այսինքն է . * աղաղակեցէք առա-
,, ջի Թագաւորին տեն ‖ . կրկնակի կարծ առեալ լի-
նել . մի՝ իբրև մնան առաջինն , որպէս Թէ եդեալ
էր . աղաղակեցէք առաջի Թագաւորին տեն ձայնիւ
կառաջոյ փողոյ և ձայնիւ եղջերէ փողոյ . և այս երևի
համաձայն առօրեայ և քահանայ" : և մի ևս՝ իբր առան-

ձին. որպէս և եղաք ի վերոյ. և այս երևի ուղիղ, զի այս ազաւաղակ է երգեցողաց. իսկ այն ձայն է գոռ ծեաց, ուստի յայլևայլ գոռծողութիւն Հայի. [1]և և՝ զի ասա յայլ Թաբգ" միջակիւտ դնի (թէև զերբայականն), և ի ձեռագիրս ինչ մեր դնի շաղկապս և, որով ցուցանի որոշումն այսր հատուածոյ յառաջնոյ անտի.

Կարդալոյն կռածոյ փողով նշանակի հոգի որ կռանեաւ ձգանց կուիեալ իցէ. իսկ եղջերեայ փողով նշանակի մարմինն՝ ի մարանչիլ նորա ընդ սիրոյ և և՝ ի խեթիկել գնասին. որպէս և լինի ուղիղ սաղմոսել՝ իբր կրկին օրհնութիւն. [2]և զի Հայելով յայլ Թաբգ" և յայլոց մեկնութիւս՝ յորս նուագարանք Հոգւոյն ասա. այսինքն է քահ, սաղմոսարան, փող կռանածոյ, և փող եղջերեայ, առքիմբք նշանակին յորք երևելի առաքինութիւնք, այսինքն են խոհեմութիւն, արդարութիւն, արիութիւն, և բարեխոհութիւն. և և այլ այսպիսի գերազանց յորդորգութիւնք. զորս լեհ ունիցի ոք լինելեան, արժանապէս օրհնել զնած, և լիապէս ցնծալ առաջի նորա.

Լարդ կամ հրաւիրելոյ մարգարէին զմարդիկ օրհնել զնա վասն մեծի այնր փրկութեանն, և սաղմոս ասել նմա, գառնոյ ազդ առնել ևս և անդրադարձոյ արարածոց, ծալոլ և գետոց, անասնոց և լերանց՝ գոհութեան մատուցանել իւրեանց բարբառով առ նա և ցնծալ. վասն որոյ ասէ.

[1]Օրհնեցէք զնա ամենայն ազգք նորա. և գովեցէք զնա ամենայն ժողովուրդք նորա. [2]Զի զօրացաւ ողորմութիւն նորա ի վերա մեր, և ճշմարտութիւն Տեառն յաւիտեան.

[1]Օրհնեցէք զՏէր յերկնից, օրհնեցէք զնա յերկինս և ի բարձունս. [2]Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրք նորա.

[1]Օրհնեցէք զնա արեգակ և լուսին, օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս. [2]Օրհնեցէք զնա երկինք երկնից, և ջուրք որ ի վերոյ քան զերկինս են զանուն Տեառն.

[1]Զի նա ասաց, և եղեն. նա հրամայեաց, և ստեղծան. [2]Կացուցանէ զնոսա յաւիտեան յաւիտենից, հրաման եդ, և ոչ անցանէ.

[1]Օրհնեցէք զՏէր յերկրէ, վիշապունք և ամենայն անդունդք. [2]Հուր, կարկուտ, ձիւն, սառն, հողմ ամպրոպի որ առնէ զբանս նորա.

[1]Լերինք և ամենայն բլուրք, ծառ պտղաբեր և ամենայն մայրի. [2]Գազանք և ամենայն անասունք, սողունք և թռչունք թևաւորք.

[1]Թագաւորք երկրի և ամենայն ազգք, իշխանք և ամենայն դատաւորք երկրի. [2]Երիտասարդք և կոյսք, ծերք ընդ մանկունս օրհնեսցեն զանուն Տեառն.

[1]Զի միայն բարձրացաւ անուն նորա, տէր ի տոհմէ ընդ տոհմ. [2]Խոստովանութիւն նորա ի վերա երկրի և երկնից.

[1]Եւ բարձրացոյց զեղջիւր ազգի իւրոյ, օրհնութիւն ամենայն սրբոց նորա. [2]Որդւոց Իսրայէլի ազգի մերձաւորի նորա. [1]Օրհնեցէք զՏէր.

Ի ՍՐԱՎԱՐ ԴԱՆ.

Ա. [1]Օրհնեցէք զՏէր յերկրէ, վիշապունք և ամենայն անդունդք. [2]Հուր, կարկուտ, ձիւն, սառն, հողմ ամպրոպի որ առնէ զբանս նորա.

Ա. [1]Օրհնեցէք զՏէր յերկրէ, վիշապունք և ամենայն անդունդք. [2]Հուր, կարկուտ, ձիւն, սառն, հողմ ամպրոպի որ առնէ զբանս նորա.

զի նոքին եւս ի սոսա Հային։ Այլոց քանզի կան եւ այսպէսքումնիք ինչ, ըստ այնց եւս մեկնեացուք ասա։

արդ նախ ասէ։

Աստուածպէս ծով լիս։ Այս խոստովիւն ոչ է ըստ երկիւղի կամ ըստ սրտմուէ, այլ ըստ զուարճանալոյն. յոր միտ ի սաղ. ղե. 10. եդ. * զուարճասցի ,, ծով լիս իւրով ". իսկ զուարճանալ ծովու տեսանի ի շարժմանն ալեաց իւրոց. եւ զի այս շարժումն երեւեցուցանէ զնա իբրեւ խոստովանել, վասն այսորիկ խոստովիւն դնէ, փոխանակ ասելոյ շարժեացի. որպէս դնի ի Թագ. եօթ" եւ լատ". ասոր" եւ եթէով". եւ յերբ" եւ ի քաղդ". սուբ յարաբ" դնի յուզիւ։ Որպէս եւ դիցի, միտ բանին է այս. ուրախասցի ծով, եւ յուրախութիւնէ անտի հնչեսցէ զձայն ալեաց իւրոց. նոյնպէս եւ որք կան ի ծովս՝ եթէ կայտառք իցեն, եւ եթէ բոյսք՝ ցնծասցեն, եւ ուրախ լիցին։

Այլ սորին‌միոյ որպէս եւ յայտ է՝ ոչ ցուցանել մարգարէն, թէ այսպիսիքս կարիցեն տիրապէս ուրախանալ, այլ յայտ առնել զառաւելութիւն ուրախութեանն սրտի իւրոյ, եւ զմեծութիւն երկիւղ, յորոյ վերայ էր այն ուրախութիւն. իբրէ զի այնչափ մեծ եւ ընդհանուր եղև բարեբարութիւնն այդ ի փրկելն զազգ մարդկան, մինչեւ արժան էր ամենայն արարածոց եւս եւ անդգայից ցնծալ ընդ այն. որոյ վասն եւ զուարճագին տիեզերս ի նոյն հրաւիրէ ասելով։

Տիեզերք և ամենայն բնակիչք նորա։ Այսպիսքն բոլոր աշխարհս եւ որ ինչ կան ի նմա՝ եթէ բանաւորք եւ եթէ անբանք՝ առնեսցին փոխեացին ի սրտմուէնէ յուրախութիւն, եւ ի միասին ընդ ծովու զուարճասցին ի վերայ մեծի փրկութեանն զոր եցոյց Աստուած ազգի մարդկան։ Այս զի ի վերայ գետոյ սկսաւ հրատարակութիւն այսր փրկութեանն ի սկզբանէ ահա մերոյ ի յորդանան, զգետս եւս կոչէ յուրախացուցի ասելով։

Այս գետ ծափս հարցեն ի դաշն յեռամբ։ Այ խօսինն զծովն՝ զայսպիսի ինչ ոչ եդ, այլ միայն ասաց խոստովիւ, այսինքն զուարճանալ հնչմամբ ալեաց իւրոց. եւ զի գետք որպէսզի եւ զուարճասցին, ոչ կարեն հաւասարել զձայնս իւրեանց հնչմանն ալեաց ծովու, վասն որոյ յորդորէ, զի յաւելցեն եւ զծափահարութի

իւբեանց՝ այսինքն զՏարիանել զաւիս ընդ ալիս առ՛ի
Հաւատարեցուցանել զձայն ուրախութեան իւրեանց՝
ձայնի ուրախութեն ալեաց ծովու։ Կ՚ասի փոխարե-
րութեի բանի որպէս ասացաք՝ ցուցանէին գնձուրթիւն
առարկայի ուրախութեի. մինչև եթէ Տնաւ էր գե-
տոց ունել զձեռս՝ արժան էր նոցա ծափս Տարկանե-
լով ցնծալ ընդ այն. և որպէս գետոց և ծովու,
սոյնպէս և լերանց արժան էր զնոյն առնել. ասա-
որոյ յարէ զկնի և ասէ.

Լերինք ցնծասցեն առաջի ն՚, զի գայ և հատել է զր՚ի
դատել երկիր։ Վերկեաւս զոր ասաց՝ի վերոյ * զուար-
ձասցին տիեզերք՝, Տովին խմացեալ լինելին և ծովք
և գետք և լերինք և այլ ամենայն երկրաւոր արա-
րածք, զի ամենեքին սոքա են՚ի տիեզերիս, բայց
զի՚ի տիեզերս երեւելի են այսորիկ, և զահեղութեի
ինչ ցուցանեն, զսոսա էա՚ի մտածուորի յիշել. ասասի
յետ դնելոյ զծով և զգետս, ՚ի միջ բերել և զերկիրսն
ասելով։

Լերինք ցնծասցեն առաջի ն՚։ Լերինք ցուցանեն զու-
րախութեի իւրեանց ծաղկամբք և ծառոք, թռչնովք
և անասնովք եւ։ Այլ զի այս ցոյց հաստատակ է նո՚
ոչ զայս խնդրէ, այլ զառաւելն. և զի նոքա ոչ են
ընդունակ այսմ, սովին կամի ցուցանել՝ թէ արժան
էր և նոցա ուրախանալ, եթէ ունէին յարմարութեի
առ այն. որով ցուցանի թէ այնչափ առաւելեալ էր
սիրտ մարգարէին յուրախութեի՝ մինչև ցանկալ զան-
զգայս եւս ուրախ տեսանել՝ իբրև զինքն, և այս՝ վը
գալատեան փրկչին, սմին իբրի յարէ զկնի և ասէ.
Օ՚ն գայ և հատել է պէր է դատել երկիր։ Ի սաղ. ղ՚.
ւ։ եզ. * զի գայ, և գայ նա՚ի դատել զերկիր՝։
իսկ ասա առ՚ի ցուցանել զնշմարիտ լինել գալատեան
նորա՝ ասէ. * զի գայ և հաստել է եւ։ որպէս թէ
ասէր. արժան է ամենայն արարածոց ուրախ լինել,
զի ահա գայ նոր մանաւանդ թէ եկեալ հաստել իսկ
է՝ ոչ՚ի կորուսանել զնոսա, այլ՚ի դատել զեր-
կիր. իսկ թէ զինչդր, յայտ առնի յաջորդ բանիւն
ասելով։

Ժ. Պատ ղալխարկս արբարութիք. և զիաղվեարդս իւր ոչղրութիք։

Ի սաղ. ղե. 11. եգ * դատի զտիեզերս իրաւամբք, ,, և ժողովուրդս իւր ամենայն Ձմարտութիք ։ և զայս իբր բացատրել կամելով այլովք բառիւք, փոքր մի սլատկս դնե և ասէ ,

Պատ ղալխարկս արբարութիք. և զիաղվեարդս իւր ոչղրութիք ։ Որպէս ասացաք ի յիշատակեալ սաղ. ղե. 11. և 12. գոեթէ երբեմն կարի իմացեալ լինել ասա. մի՝ փոխանակ իրաւունս ունելոյ զրկելոյ. և զզրկողն առնելոյ ցուցանելոյ և դատապարտելոյ ։ Երկրորդ՝ փոխանակ արդարութիք կառավարելոյ և զամենայն ըստ սլատշաճի կարգաւորելոյ ։ Երրորդ՝ փոխանակ դատաստանաւ յանդիման առնելոյ զբարին և զչարն, և ըստ գործ վարձատրելոյ կամ պատժելոյ ։ Ըստ առաջնոյն ասէ. * դատի գաղխարկս արդարութիք ։ կամ * զտիեզերս իրաւամբք ։ ըստ երկրորդին ասէ. * դատի ժողովուրդս իւր ուղղութիք ։ կամ * ամենայն Ձմարտութիք իւրով ։ Իսկ ըստ երրորդին դատելոց է յերկրորդ գալստեան ։

Ընդ առաջինն եղև փրկչեալ զաղք մարդկան ի ձեռաց սատանայի. զի տէրն մեր ի դան յաղխարկս՝ դատեաց զնա, և եգիտ ի նմա զզրկողութիւն որդւոց մարդկան, այսինքն հետս՝ զի կրեալ նմն և կրկին նոքա ի նմանէ զզրկանս. վասն որոյ արար իրաւունս զրկելոցս՝ արդարութիք, և դատապարտեաց զզրկողն. ուստի և ասաց. * այժմիկ դատաստան է աշխարհիս ,, այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընդ ,, կեսցի արտաքս ։ (յովհ. ժիբ. 31.) Երկրորդն եղև՝ Ձանապարհ ցուցանելով ազգի մարդկան, յորոց արար իւր եկեղեցի, և կառավարեաց և կառավարէ զայն ուղղութիք և Ձմարտութիք ։ Իսկ երրորդն որպէս ասացաք լինիցի յաւուրն յեսմում յերկրորդ գալստեան Նորա, յորում դատեսցէ զաշխարհ, այսինքն զամենայն որդիս մարդկան արդարութիք ըստ գործոց նոցին. դատեսցէ և ժողովուրդս իւր, այսինքն զՀաւատացեալս՝ ուղղութիք, բարեացն տալով զյաւիտենական կեանս, և չարաց զանվերջանալի

պատիժս։

Այսմ դատաստանի յայտնի տեսցեն ամենեքին՝ թէ նա է՝ որ կենդանեաց և մեռելոց. և կատարեսցի յայնժամ այն որ ասի. * գալոց է՝ ի դատել զկենդ՚՚ դանիս և զմեռեալս»։ որով ոչ ցուցանի՝ թէ՝ ի դատաստանի անդ գալոց են մարդիկ զեռաս ոչ մեռեալք, այլ թէ նա ունի իշխանութեամբ դատելոց զամենայն՝ թէ՝ մեռեալք իցեն և թէ կենդանիք, թէ՝ ի վաղ ժամանակաց մեռեալ իցեն, և թէ յայսմ պահու։ Ամ որպէս գրէ սարգիս Շնորհալի (՝ի մեկն. ՚ի. պետ. ՚ի. ՛ե. Ճառ. թ.) որ ասա՝ ի հեշտասիրութեան կենդանի է՝ անդ դատի իբրև մեռեալ. իսկ որ ասա մեռուցեալ իցէ զինքն՝ անդ դատի իբրև կենդանի։ Յաւելու և զայլ քին մեկնութեի անդանօր ՚ի երկուց կենաց ասելով. * աստանօր զկենդանիս (եւ ՚՚ բևի) դատել սակս մեղացն՝ ի պէսպէս և յայլգ ՚՚ ազգի տանջանս, երբեմն՝ ՚ի սուր, երբեմն՝ ՚ի գե՚՚ բութեի ... և զմեռեալս ունի դատել ... ՚ի վերջ ՚՚ նոյ ասուրն»։

Ա.ՍՏ յանդգնեցան ոմանք ասել, թէ ընդհ՚ դատելոց իցէ՝ ասծ զմարդիկ, Ա.յսմ պատասխանի տայ բաբաեզ (՚ի մեկն. մարկ. գլ. ԺԵ. ՚ի յորդ.) և ասէ. թէ վասն զի չէմարտութեի է ստութեի չհաւանիլ, և արդարութեի է իբաւունս առնել, և զանիրաւութեիս ստգտանել. ապաքէն * ՚ի մեղանչելն ստգտանես ա՚՚ սէ զքեզ. զի մեծ իմաստութեի է այս. որով դու ՚՚ զքեզ դատապարտես. իսկ որ քեզ զդոյն (իմաս՚՚ տուրն) ընդհ՚ ՚՚ վայր Թողուցու»։

Ա.ստանօր հայելով ՚ի նախընթաց համարն՝ մարթի է ասել, թէ զորօրինակ յառաջին գալստեան ՚ն ցրնծացան տիեզերք և լերինք, ծով և դաշտ, սոյնպէս ցնծասցեն և լերկրորդ գալստեան նորա. զի յայժամ ազատ լինիցին ՚ի ծառայէլոյ մեռաւորաց. յոր միտ ասէ առաքեալն։ * Օ՚ի ակնկալութեի արարա՚՚ ծոց յայտնութեի որգեղն ՚ոյ սպասէ, զի ընդու՚՚ նայեսէ արարածքն հնազանդեցան, ո՚չ իւրեանց ՚՚ կամաւ՝ այլ վասն այնորիկ՝ որ հնազանդեցոյցն զինք ՚՚ յուսով. զի և ինքեանք իսկ արարածքն ազատես.

,, ցին ՚ի ծառայութիւնէ սպասկանութիւնէ յաւատութիւն
,, փառաց որդւոյն ՚ին ‖ : (Հռոմ. ԺԵ. 19—21.)

Զայս երկրորդ գալուստ Տեառն լուել, քանզի 8. և 9. համարքն սաղմոսիս այլազգ ևս մեկնին. իբր զի ՚ի գալ ՚ին մերով, և ՚ի պահանջել ՚ի ծովէ, և ՚ի գետոց, ՚ի լերանց և ՚ի դաշտաց զմարմնոյ մարդկան՝ աձապարեսցեն նոքա տալ զոյնս, ծովն խառնվեսցի և տացէ զոր ունի. գետք իբր ձեռամբ կարկաւեսցեն. նոյնպէս և լերինք և դաշտք և տիեզերք ամենայն ՚ի յայրել և ՚ի հալել իւրեանց՝ արագութիւն տացեն ըզմարմինս նոցա. այլ թէ զիարդ՝ նա միայն գիտէ՝ որ կարէ յարուցանել զմեռեալս. ըստ որումն և բերանով իւրով յայտ արար՝ թէ ինքն է՝ որ յարուցանելոց է զնոսա. (յովէլ. Ե. 22—31.)

Իսկ թէ երբ լինելոց իցէ այս, ոչ յայտնեաց, և զիւրմէ ևս վկայեաց ոչ գիտել զօրն զայն. բայց զայրմանէ է, եթէ գիտէր զդալ իւր և զդրօթել զամենայն ՚ի գալստեան անդ, զիարդ սպաս ոչ գիտէր զօրն։ Ասատի Հարցանէ բարեզ (՚ի մեկն. մարկ. գլ. ԺԳ.)
* զիարդ կարէ լինել, ասէ՝ զոր ինչ լինելոցն է յօրն յայն
,, գիտել, և զօրն ոչ գիտել... որպէս օք զայն որ
,, արտաքոյ է պարսպին և զայն որ ՚ի ներքս ասէ գի-
,, տել. իսկ զպարիսպն՝ որ ՚ի միջի գոյ՝ ասէ ոչ գի-
,, տել ‖ : Այսմ տայ պատասխանի ասելով. * յայտ
,, է թէ ստոյգ գիտէր զօրն և զժամն, այլ ձևանայ
,, զանգիտութիւն. որպէս և Հայր ասաց. ուր էս ա-
,, գամ. և ընդ կայէն՝ ուր է աթել. և առ մնվեհս,
,, զինչ է այդ՝ որ ՚ի ձեռին քոյ է. և թէ իջեալ աե-
,, սից, զի աղաղակ սոդոմացւոց եհաս առ իս. և առ
,, մարգարէսն, թերևս լուիցեն, և թէ թերևս ա-
,, ռնեսցեն յորդւոյ ասաի իմմէ. և ինքն որդին ե-
,, տարց, ուր եդիք զղազար, և ընդ պետրոս՝ թէ
,, սիրէս զիս. և առ այլս ասելոց է՝ երթայք յինէն
,, անիծեալք, զի ոչ գիտեմ զձեզ. ոչ եթէ ոչ գի-
,, տէր ընդ, այլ վասն չարեաց իւրեանց ասէ չգիտեմ
,, զձեզ։ Այնպէս և աստ գիտէ նա զժամ գալստեան
,, իւրոյ. այլ զի մի հարցցեն ցնա վասն նորա ասաց
,, ոչ գիտեմ ցնա. որպէս զի արձեռն լինիցիմք. և
,, մի կարծեսցէ իւրաքանչիւր մարդ ՚ի միջոյ եթէ

,, 'ի ժամանակս իւր ծագեսցէ , զի եթէ յայտնեալ
,, էր՝ թէ երբ գալոց է՝ անհամ լինէր , և ոչ լինէր
,, ցանկալի ‖ ։

Իսկ դարձեալ ասէ անդ , ոչ զի ոչ գիտէ որդի՝ վասն այսորիկ ասէ ոչ գիտել , այլ զի ցուցցէ՝ թէ ինքն մարդ է . * զի յատուկ է մարդոյ ոչ գիտել զհան-
,, դերձեալն . զի թէ ասացեալ էր գիտեմ , հօր իւ-
,, րում միայն նմանէր , և ոչ մեզ ... և յաղագս այ-
,, սորիկ ընտանեցոյց զինքն մեզ անգիտութ՟ն . որ-
,, պէս քաղցիւն և ծարաւովն , և այլովքն ‖ . զայսպի-
սիս գրէ և 'ի գլ. ժբ ։

Իսկ 'ի գլ. ժը. գրէ թէ որք հարքն մարդկութեանն ընծայեցին զոչ գիտելն . ոչ զի համարէին ասէ թէ որդին ըստ որում մարդ ոչ գիտէր , այլ թէ մարդկութ՟ն նորա այնպիսի էր , որպիսի է մերս . այսինքն է ճշմարիտ մարդկութ՟ն , որ 'ի կողմանէ իւրմէ անգէտ է , բայց ինքն ոչ էառ զայն համդերձ անգիտութ՟բ , այլ լիութ՟բ գիտութ՟ն , որով գիտէր զամենայն ըստ ամենայնի . և այս նմա միայն էր սեպհական և ոչ մեզ . վասն որոյ ասէ դարձեալ նոյն բարսեղ . ('ի գլ. ժը.) * առ որդի է պահած ամենայն
,, գանձ գիտութ՟ն և իմաստութ՟ն՝ մեզ չէ պարտ գի-
,, տել . վասն որոյ ասաց , ոչ է ձեզ գիտել զժամ՟ն ‖ ։

Դարձեալ՝ տէրն մեր արձակապէս ոչ ասէ ոչ գիտել , այլ թէ * և ոչ որդի ‖ . և դարձեալ ոչ ասէ զօրն , այլ թէ * վասն աւուրն ‖ . (մատ. իդ. 36. մարկ. ժգ. 32.) որպէս թէ եղեալ էր , վասն աւուրն այնորիկ խօսիլ այժմ ոչ է որդւոյ , և ոչ հրեշտակի . հայր միայն գիտէ զայն , և զոր գիտէ՝ ետ և որդւոյ . մինչև ներկայ տեսանել նմա զամենայն , և և զժամանակ գալստեան իւրոյ . Ե՟ որում և ասաց . * գայ ժամանակ , և արդէն իսկ (առաջի իմ ներ-
,, կայ) է , յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն
,, այ՟ , և որք լուիցենն՝ կեցցեն ‖ . (յովհ. ե. 25.)
Տես և 'ի սաղ. ճլը. 4. Այսոսիկ եղեալ՝ մատիցուք 'ի հոգեւորական տեսութ՟ն երից տանցդ ։

Այլաբանօրէն՝ ծովով նշանակին ազգք և ազինք , որք 'ի գալ ք՟ն մերոյ յաշխարհ խռովեցան , այսինքն կռոնից 'ի կրօնս փոխեցան . և ունին եւս այլափոխել

Երկրորդ գալստեան Տեառն։

Պետռվ իմացեալ լինին մարգարէքն եւ առաքեալք, որք ծոփս հարին եւ հարցեն ՚ի միասին ձեռամբք. իբր զի զորս պրեցին ձեռամբք, եւ զորս աղաղակեցին բերանովք վասն գալստեան նոին մերոյ՝ եթէ՝ մա առաջնոյն եւ եթէ վասն երկրորդին, որպէս եղեն ՚ի միասին միաբան ըստ երկուց ծոփից, տոյնպէս լինի ց յն եւ յամենայնի համաձայն։

Նոկ լերամբքն իմացեալ լինին նոյնս հրեշտակք բարձբացեալք՝ որք ցնծացան ՚ի գալստեան նոին մերոյ, եւ ունին ցնծալ յերկրորդումն։ Երկրորդ՝ իմացեալ լինին սքք, որք նմանապէս ցնծացան եւ ցնծան եւ ցընծացեն ՚ի գալստեանն քո։ Երրորդ՝ թագաւորք բարձրացեալք իշխանութիւք, եւ փիլիսոփայք ամբարձեալք իմաստութիւք. զի սոքա ՚ի գալստեան նոին ընդունելով զՀատատ Նորա ցնծացան, եւ ունին եւս ցընծալ յերկրորդումն, եթէ առաջնոյն գտան հաւատարիք։ Պարձեալ ըստ գրելոյն վարդապետ. * լե ,, բինք ցնծացեն մանաւանդ ոք եկեղեցիք եւ խաչք ,, եւ խաչագեաց կրօնաւորք լեալ են. ցնծան՝ զի ,, առաւել փայլէ շնորհն ՚ի վերայ այնպիսի լե ,, րանց եւ գաշտաց ։

Նարոյակս ըստ լսելի ծովով իմացեալ լինին խորհուրդք մեռոց մերոց, որպ եգերք են ասէ մարգինս եւ զգայարանքս. եւ սոքա ուրախ լինին ՚ի յիշատակել զքրկագործ շնորհն քո։ Նոկ գետովք իմացեալ լինին ժառանգաւորք եկեղեցւոյ. որոց է ծոիս հարկանել ՚ի միասին, այսինքն բանիւ եւ գործով ձայն տալ ժողովրդեան։ Ի երամբք իմացեալ լինին մանաւանդ եկեղեցիք պարուճակեալք յընդ հանուրս եկեղեցւօք, որք ցնծան եւ ցնծասցեն ՚ի գալստեան նոին ՚ի վայելել նոցա ըստ բարերին զկեանսն յաւիտենական։

Այս ամենայն որպէս ՚ի վերոյ եդաք, կարեն ըստ չափոն հայիլ յաղաւաքէն որդւոյն իսրայէլի ՚ի գերութենէ. որպէս ասէ եւ գնորդ վարդապետ. (՚ի մեկնեսայ) եւ ցուցանէ եթէ այսպիսի փոխաբերութիւնք յայտ առնեն զառաւելութիւն բարեացն որք եղեն իսրայէլացւոց յետ դարձի գերութենէն. առ որս սկսաք կելոյ մարգարէին յորդորել զարթարծս՝ ցնծալ եւ օրհ-

նել զնա, որ արար դատաստան արդար ընդ իսրայէլ-
լացիս, և փրկեաց զնոսա ի ձեռաց թշնամեացն նո-
ցին. այլ որպէս եգաք, այս փրկուելոյ չկայ է ինչ ել
օրինակ այնմ՝ զոր արար որդին նմա՝ ազատելով զաղգ-
մարդկան ի դատապարտութենէ և վերածելով զնոսա
յերանութեն յաւիտենական։

ՍԱՂՄՈՍ· ՂԶ·

Յայտարարութեն թագաւորելոյն նմա յանդիման թըշ-
նամեաց ի վերայ ժողովրդեան իւրոյ արդարութեն
և ուղղութեն. միանգամայն և յորդոր երկիւղածա-
նելոյ նմա, և բարձր առնելոյ զնա, և կարգելոյ առ-
նա հանգոյն մովսէսի, ահարոնի և սամուէլի։

Առաջս ի դասին։

1 Տէր թագաւորեաց, բարձրացան ծովակողքք՝ որ նախս ի
չրովբէս, սասանեցաս երկիր։ 2 Տէր ի սիոն մեծ
է, և բարձր է ի վերայ ամենայն ծովակողոց։ 3 Խոստովան
եղիցին անուան քումմ մեծի, զի ահաւոր և սուրբ է. և
պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ։ 4 Դուն պատրաստեցեր
ղուղղութիւն. զիրաւունս և զարդարութիւն յակովբայ դուն արար
զբնութիւն։ 5 Բարձրացուցէք զտէր աստուած մեր, և երկիր-
պագէք պատ-
առնեկանն ոտից նորա՝ զի սուրբ է։ 6 Մովսէս և ահարոն
ի քահանայս նորա. սամուէլ ընդ անուանէ նորա, որ կոչեն
զանուն նորա։ 7 Կոչէին առ Տէր, և նա լսէր նոցա. ի սիւն
ամպոյ խօսէր ընդ նոսա։ 8 Պահէին զվկայութիւնս նորա, և
պատուիրանս զոր ետ նոցա։ 9 Տէր Աստուած մեր՝ դուն լսէիր նոցա,
Աստուած դուն թողութիւն լինէիր վրէժխնդիր ի վերայ ամենայն գոր-
ծոց նոցա։ 10 Բարձրացուցէք զտէր Աստուած մեր, երկիր պագէք
ի լեառն սուրբ նորա. զի սուրբ է տէր Աստուած մեր։

ՎԵՐՆԱԳԻՐ ։

Սաղմոս 'ի դաւիթ ։

ՅԵՐԲ″ ԵՒ Ի՛Ր ԱՂԱԳՍ″ ՈՉ ԴՆԻ ինչ աստ վերնագիր ։ Եւ մի՛ այսր պատճառի՝ այսինքն մի՛ անվերնագիր լինելոյ սմա, ևս և վասն իրիք յարմարութեան բազումք 'ի րաբունեացն հրէից, ընդ որս և բազումք 'ի քրիստոնէից՝ մովսէսի տան զայս սաղմոս, մանաւանդ հայելով 'ի յաջողութիւն՝ զոր արարին եբրայեցիք յաւուրս մովսէսի ընդդէմ մադիանացւոց. (Թուոց. լա. 6-18.) ըստ որում դնի 'ի վերնագրի Թարգ″ ասոր″ ։ Բայց այս կարծիք նահանջի 'ի բանից անտի որ գրի 'ի սաղմոսի աստ 'ի համարն 6. ուր յիշի և սամուէլ. որ յայտ է թէ ոչ գո՛յր յաւուրս մովսէսի ։

Իսկ այլք բազումք դաւթի տալով զայս սաղմոս՝ ասեն թէ երգեալ իցէ նորա զոյն յածելն 'ի սիոն զտապանակն ա̃ն ։ Ոմանք ևս պնդեն թէ զայս ասաց գուշակութ̃ ազատութեան իսրայէլացւոց 'ի գերութ̃ բաբելացւոց, և շինութեան երկրորդ տաճարին ։ Կան ևս որք ասեն, թէ այս սաղմոս՝ որ ասացաւ 'ի դաւթայ, փոքր մի փոփոխութ̃ երգեալ եղև 'ի մարգարէիցն եղելոց 'ի ժամանակի շինութեան երկրորդ տաճարին, յօրինակ շինութեան նորոյս տաճարի այսինքն եկեղեցւոյ, յորոյ վերայ թագաւորեաց քս ։ Յայս յետին կարծիս հաստատեալ և մեր ունիմք մեկնել զայս սաղմոս, հայելով համանգամայն եթէ 'ի ժամանակ դաւթի, և եթէ 'ի ժամանակ դարձի գերութեանն ։

ՐՃՀ

ՈՒ. Տէր ընթասուրեաց· բարւոյն ծողովեսցէ զոր նորէս ի տրվեբէս, սասանեցաս երկիր։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Թագաւորեն ոմն մտածի ընդհանրապէս և մանաւանդ ընդհանրապէս մտածեալ հոյի յընդհանրական խնամն նորա, զոր ցուցանել ամենայնի իբրև ամենայնի տէր։ Ոչակ մանաւանդապէս մտածեալ հոյի ի մանաւանդ խնամն, զոր ցուցանել առ մանաւանդ ազգս, կամ առ մանաւանդ ծողովուրդս· յորոց վերայ իբրև թէ մանաւանդ իմն օրինակաւ տիրել, կամ ասացից թագաւորել։ Չայս միտ այսինքն ըստ մանաւանդի առեալ դնի ատ թագաւորելն ոմն յասելն։

Տէր ընթասուրեաց· բարւոյն ծողովեսցէ։ Ի զօրանալ դաւթի ի վերայ ազգին իսրայէլի, և ի կարգաւորել նորա զթագաւորութիւն իւր, ոյնպէս և ի դառնալ իսրայէլացւոց ի գերութենէ բաբելացւոց, և ի շինել նոցա զտաճարն ձեռամբ զօրաբաշխելի և յեսուայ յովսեդեկեայ, և ի կանգնել նոցա զպարիսպն երուսաղէմի ձեռամբ նեհեմիայ, յայսանէ եցոյց ած՝ թէ ինքն որպէս յառաջին մանաւանդ իմն օրինակաւ թագաւորէր ի վերայ նոցա, նոյնպէս և ի նմին ժամանակի թագաւորէ։ և զի ըստ այս գառնացան յոյժ, և բարկութիւնք ընդդէմ դարձան նոցա մանաւանդ ի դարձի գերութենէ՝ շրջակայ ազգք՝ որք էին ի սամարացւոց և յամմնացւոց և ի մաբաքացւոց, վասն այսորիկ ասէ թէ ի թագաւորել ոյ ի վերայ իսրայէլի՝ բարկացան ծողովուրդք։ Այլ թէ ուր նստեալ թագաւորէր յայտ առնէ ասելով։

Ոչ նորէս ի տրվեբէս։ Այս ասացուած այսինքն է որ նստիս ի քրովբէս, կամ որ նստի ի քրովբէս, ի բեռանս իսրայէլացւոց յածիւր իբր ստորադրեալ պատուոյն ոյ։ Իբր զի փոխանակ ասելոյ ած՝ յաձախակի

ասէին. որ նստի ՚ի քրովբէս. և սորա պատճառն էր՝ զի նէ ըկայութիւն նորա յանդիման լինէր ՚ի տապանակի նստեալ ՚ի քրովբէս. որովհետև կային երկու քրովբէք ՚ի վերայ քառութեանն. այսինքն ՚ի վերայ կափարչի տապանակին. և յայս միտ գրի (ա. Թագ. ը. 4.) Թէ * առին զտապանակ ուխտի տեն զօրու ,, թենէ՝ որ նստի ՚ի քրովբէս ||. (տես և ՚ի ը. Թագ. ը. 2.) Հայսմանէ նաև ՚ի խօսիլն ՚ի հասարակի և յերգս իւրեանց՝ ասէին զնոյ՝ որ նստի ՚ի քրովբէս, կամ որ նստի ՚ի վերայ քրովբէից. որպէս յասել եզեկիայ արքային * տէր ՅՀՃ իսրայէլի՝ որ նստես ՚ի քրովբէս ,, բէս ||. (ը. Թագ. ԺԹ. 15.) և եսայեայ. (լէ. 16.) * ՅՀՃ իսրայէլի՝ որ նստես ՚ի քրովբէս ||. և երից մանկանցն. * օրհնեալ ես որ նստես ՚ի քրովբէս ,, բէս ||. (դան. ը. 54.) ըստ որում ետես և եզեկիէլ. (Ա. 1. և 2.)

Եւ զի բառս ՏԷՐՈՎԲԷ՝ Թարգմանի լուծօք խմացուէ, ասէին զնոյ՝ նստիլ ՚ի վերայ քերովբէից՝ ոչ միայն ցուցանել զայս, Թէ ՚ի քրովբէս փառաւորի, այլև Թէ ՚ի վերոյ է ըստ ամենայնի քան զամենայն լուծեալն իմացականութեամբ և իմաստութեամբ, և ամենայն գիտութեամբ և հանճարով։ Եւ զդ ասէ դու որ նստես ՚ի քրովբէս՝ դու ինքն հաձեցար իբրև Թագաւոր նստիլ ՚ի միջի մեռուս, այսինքն իբրև յատուկ Թագաւորութեանդ մեզ։ Եւ ակ Թէ զինչ զայսր եկն զՀԷՏ՝ յայտնէ ասելով.

Ասացեալ էրիէ։ Եւ յայտնած բանի կրկնակի յաբրի յառաջինն. մի՝ իբրև նախընԹաց, յոր միտ կամի ասել. Թէպէտև ասասնեցաւ այսինքն շարժեցաւ յոյժ երկիրս ՚ի վերայ մեր, այսինքն Թէպէտև բոլոր շրջակայ աղգք բնակեալք յերկիրս յայսոսիկ՝ շարժեցան ընդդէմ մեր առ ՚ի նուաձել զմեզ, կամ առ ՚ի յետս նահանջել զդարձ գերութեանն մերոյ, և առ ՚ի խափանել զշինութեանն տաճարի քո և քաղաքիս, բայց դու որ նստիս ՚ի քրովբէս՝ Թագաւորելով ՚ի վերայ մեր՝ պաշտպան մեր եղեր, և ոչ Թողեր նոցա առնել զոր կամին։ Եւ երկրորդ՝ իբրև հետևորդ, յոր միտ կամ ասել. վասն Թագաւորելոյ քո ՚ի վերայ մեր որ նստիս ՚ի քրովբէս, շարժեցան ընդդէմ մեր աղգք

երկրի ։

Զսոսա երկիր կոչելով, իսկ զԱ՟ծ 'ի քրովբէս նըստեալ ասելով՝ մեզ ևս քաջալերս տայ, թէ ոչինչ կարեն առնել բնակեալքն յերկրի ընդդէմ Թագաւորին մերոյ Ք՟ի, և ընդդէմ մեր ․ զի են երկիր, այսինքն իբրև հող անարգ, միայն թէ և մեք լինիցիմք քերովբէք, այսինքն լցեալք իմաստութ՟ն Ա՟յ, և ունիցիմք նստեալ 'ի մեզ զԱ՟ծ ․ զի ո՞ յայնժամ կարիցէ վնասել մեզ ․ զի * եթէ Ա՟ծ 'ի մեր կոյս է՝ (ասէ ա-
,, ռաքեալն) ո՞վ իցէ մեր հակառակ ‖ ։ (Հռովմ․ Ը․ 31 ։)

Արդ որպէս 'ի ժամանակս դաւթի, և 'ի ժամանակ դարձի գերութ՟ե իսրայէլացւոց, սոյնպէս և 'ի դարձի մարդկայինս բնութ՟ե 'ի գերութենէ սատանայի՝ մանաւորապէս Թագաւորեաց Ք՟ս 'ի վերայ եկեղեցւոյ իւրոյ ․ ընդ որ բարկացան ժողովուրդք, և սասանեցաւ առ հասարակ ամենայն երկիր ․ զի ոչ միացին տեղիք՝ և ոչ ազգք, որք ոչ խռովեցան ․ ոմանք ընդդէմ զինելով և հալածելով և զբաղումս նահատակելով, ընդ որս յարեան և դեք կատաղութ՟բ ․ և ոմանք, մանաւանդ թէ բազումք ընդհակառակն 'ի կռապաշտութ՟ե յԱ՟ծպաշտութի դառնալով, և կամ 'ի չարեաց յետս նահանջելով ։

Բարոյապէս, 'ի Թագաւորել Ա՟յ 'ի վերայ հոգւոյն՝ բարկանան դեք, և յարձակին 'ի վերայ, թէպէտև ոչինչ կարիցեն առնել ․ իսկ 'ի հանգչիլ Ա՟յ 'ի յառաքինութիս հոգւոյն՝ իբրև 'ի քրովբէս՝ սասանի երկիր՝ այսինքն նուաղի երկրաքարշ ցանկութիւն կամ ախտն անձնասիրութ՟ե ։ Զայս եդեալ մարգարէին՝ յիշատակէ այժմ և զքաղաք Թագաւորելոյն Ա՟յ, և ասէ ։

Բ․ Տէր 'ի Սիոն մեծ է․ և բարձր է 'ի վերայ ամենայն ժողովրդոց ։

Թագաւորութիւն Ա՟յ 'ի վերայ իսրայէլացւոց մանաւորապէս առեալ՝ 'ի սիոն երևէր, և անդ ցուցանիւր մեծ․ որպէս և Թագաւորութիւն Ք՟ի ըստ որում մարդ՝ մեծ երևի յեկեղեցի ն՟ր․ 'ի սոսին հայելով ասէ ։

Տէր 'ի Սիոն մեծ է ։ Այսինքն, Ա՟ծ Թագաւորելով 'ի

վերայ խօսելն ի սիոն՝ մեծ ցուցանի ըստ այլևայլ իրաց, այսինքն ըստ Հմարիտ կրօնից, ըստ արդար օրինաց, ըստ ուղիղ պատասխանից, և և ըստ բազում իրօք պատասխանելոյ նորա վերայելացիս և խորտակելոյ զհերձուածս նոցա, յոր միտ յարել զկնի և ասէ.

Ա.– Բարձր է ի վերոյ սիոնի ժողովուրդոյ՝ Ա.յսինքն ի յառնել ժողովրդոց ի վերոյ սիոնի՝ բարձրացեալ ածի ի վերոյ նոցա, և ի վերոյ ածոց նոցա, և զօրութեանց նոցին. և այս այն է՝ զոր ես ի նախընթաց համարն, թէ * տէր Թագաւորեաց, բարկացան ժողովուրդք ‖. զոր աստ ըստ տեղւոյն միայն այլափոխ զգաման՝ թէ * ձեր ի սիոն մեծ է, և բարձր ի վերոյ ամենայն ժողովրդոց ‖. ուր ասէին * տէր ի սիոն մեծ է ‖, հայի յայն՝ զոր ասաց * տէր Թագաւորեաց ‖. իսկ ասէին * բարձր է ի վերոյ ամենայն ժողովրդոց ‖, հայի յայն զոր ասաց * բարկացան ժողովուրդք ‖. որպէս թէ ասէր. տէր Թագաւորեալ ի սիոն՝ ցուցանի մեծ, և ի բարկանալ կամ ի յառնել ժողովրդոց՝ բարձրանայ ի վերոյ նոցա. Ա.յլ այս յայտնի եւս տեսանի ի Թագաւորութեանն քրիստոսի, զի ի ցուցանիլ նորա մեծ՝ այսինքն ածի Հմարիտ ի նորս սիոն՝ Հեպէտ և ժողովուրդք բազումք և դէմ առ հասարակ յարեան ընդդէմ նորա, բայց նա յամենայնի բարձրացաւ, և սիոն միաց անվնասելի. մինչև ամենեցուն իսկ կամայ և ակամայ խոստովանել, եւս և ազատակել և ասել, մեծ է ածն քրիստոս նեից. և զի անհաս է ի նոցանէ, սմին իրի գնել և բարձր։ Հայսոսիկ հայելով մարգարէին մեսրոպ ի խոստովանութեան գովութեան և ասէ.

Ձ. Խոստովան եղիցին անուան քումդ մեծի. զի սուրբ է և ահեղ է. և պատիւ Թագաւորի զիրաւունս սիրէ. Պատրաստեալ անուն Թագաւորի յայտ առնէ զորպիսութեան նորա, հասարակօրէն այնպիսի հնչել անուն նորին՝ որպիսի է նա ինքն Թագաւորն. իբր զի եթէ Թագաւոր ոք իցէ աշխարհ ի բանս, և զօրաւոր ի գործս, և անապատ ի կառավարել, և վերակացիս յամենայնի, յորժամ լսի անուն նորա, այնպիսի հնչէ, այսինքն աշխարհ, զօրաւոր եւ։ Այնպէս

ԼԹԻ Թագաւորը որ իցէ արդար, որ և բարի, անուն նորա ևս ի լսելիս նոյնպիսի հնչէ. և որը լսէնն՝ այնպիսի խոստովանին: Իւ արդ քանզի առնիացօր է մեծ, և ամենաբարի, վասն այսորիկ և անուն նորա այնպիսի է խոստովանելի. յայս Հայելով ասէ.

Աստուածն եղիցի անուան հոմ հիծի, չի ահաւոր և սքանչելի քարոզելով կամ գովելով Հալակեացուք զանուն քո, որ է անուն մեծ, զի է ահաւոր և որ, ահաւոր՝ ըստ առնիացօր կարողութեդ և ըստ արդար վարժիչդրութեդ. և որ՝ ըստ առնիացօրդը բարութեդ և ըստ Հայրախնամ մարդասիրութեդ. և առ ի ցուցանել թէ այս խոստովանութիւն անուանն ոչ, որով Հալակի լինել ահաւոր և որ, արժանի է նմա ըստ պահանջելոյ իբրն, յաբէ զինի և ասէ.

Ոսկ ցամաքայինն՝ որ է նման կռնկան, քնակի յանմարդաբնակ տեղիս կամ յանապատս, և գնէ զլոյս իւր յանմատոյց տեղիս յերկիրս. օձից, ընդ որոց պատերազմէալ իբրև զարագիլ՝ որպայ զնոսա, և նոքիմբք կերակրի. զսա համաքի լսէք դիտելոյն հաւ, գուցէ հայելով ի յաջորդ համարն.

Լսի ևս զամանէ՝ Թէ յածելն զձուս իւր վերաւորէ կոտցաւ զկուբծս իւր, և սրսկեալ զարիւն իւր ի վերայ նոցա՝ Թիսէ, և յարուցանէ ձագս ի նոցանէ. որով և բերի յօրինակ զԹոյն ձեզ մերոյ. որ սրսկեալ զարիւն իւր ի վերայ որդւոց մարդկան իբրև ի վերայ մեռելոց սկզբնական մեղաց՝ կենդանացոյց զնոսա. Ոչ կամ հեղգալ զարիւն իւր ի վերայ մարդկան իբրև ի վերայ ձուոց՝ հանձնեցաւ յարուցանել զնոսա. յորոյ յարացոյց յաւուրս զատկի սովոր են քրիստոնեայք ընծայել միմեանց զկարմիր ձուս. ի ցուցանել՝ Թէ իբրև զձուս կարմիրացեալս արեամբն քոյ՝ հանդերձեալ եմք յառնել ընդ նմա.

Ոսկ դիտելիս մարդարէին է ցուցանել՝ Թէ զորօրիհաս հաւս այս յանապատ տեղիս քնակի, և զամպուռն սիրէ, սոյնպէս և մարդ հարեալ ի սրտի յորժամ բմբռնի ի տխրութիւն, նման նմին փափաքի ամպոռել կենաց՝ վասն երկուց. մի վասն սաստկութիւն Թաղծութեն՝ ի վերայ հարուածոյն. որով ոչ տանի սիրտ իւր ի մէջ մարդկան զուարճանալ. որպէս յայտնի տեսանի այս ի Թաղծեալս սրտիւք. և մի և՝ զի մի կրկին հարուածեսցի սիրտ իւր ի Թիւնից օձից՝ այսինքն ի փորձութիւնց, և ի վտանգից, և՝ Ո այս

վիճակ ամայաբնակութեան կարէ ընծեռցուին յարմարել և թշուառութեանէ մարդկային բնութեանէ. զոր այլով ինչ առաւելութեամբ կամելով յայտ առնել մարգա-
բեին՝ միւս ևս այլ օրինակ ի միջ բերել ասելով.

Ահա էս որդեա էս յաւերժից։ Արկու տեսակ են բուս, որ յերդը գրի ջօ. մին կոչի գիշերահաս, և մնա-նալոր անուամբ կասկամ, որ և է յայժ գաղշատեսիլ և մեծամարմին. քնակի միշտ յաւերակս, և կամ յաւերակամանն տեղիս, և ողագին վայէ ի գիշերի. զսա ոմանք համարին լինել հաւպատիր, բայց այլ է այն։ Լոկ միւսն է հասարակ բուս, այսինքն (պայզուշ.) որ գրեթէ նմանն առաջնոյն ի խոռոչս միահանից և ի տանիս աքսեալ տրամագին աւազէ։ Եւ դարդ յայս բան բառագ էս՝ դնի փոխանակ առաջնոյ տեսակի այսինքն փոխանակ գիշերահասու. զի ի յոյնն և ի լատ՛՛ գրի (նիքթի քօռաքս՝) որ է սոյն այս գիշերահասու։

Եւ յայսիսի հասու նմանութեցուցանել մարգարէն զմարդ տխրեալ. զի այնպիսին հանգոյն գիշերահասուս ոչ ըստ գերեզկութեան ապաքանից զմայլի, և ոչ ըստ վայելչութեան իւոց բերկրի. այլ գիշերանալ ախորժէ յանարգ տեղիս. և եթէ ի պալատան գոյի, սիրտ նորա յաւերակս գեգերի, և կամ յայնպիսի տեղիս, ուր կարէ ծածկիլ ի մարդկանէ, և աքսութեանէ կեալ. և զայս կամելով հաստատել մարգարէին հրկիռէ և ասէ.

Տէ՛ր ես էս որդեա ձնձղուկ ձայն ի ծանից։ Առաս ձնձղուկ, կամ ըստ երդ չիքօ ոչ նշանակէ ասա զայն Թռչուն՝ զոր մանաւանդ անուանէ ծիտ կոչեմք, և այլազգ անի բառիս (սէրշէ,) որ հասարակօրէն առ տանիս գեգերի. այլ զայն երկրորդ տեսակ բուսոյ՝ զոր յիշեցաք այժմ. և կամ զտեսակ ինչ գիշերային և առանձնասէր Թռչնոյ. որովհետև յօրինակ աքսուեթէ և առանձնութեանէ երեթ վրա ասա մարգարէն. ըստ որում յայսա առնէ բայդ փոխեցոյ, և բառս ձայն. արդ յայտ է Թէ ծիտն ոչ է այսպիսի. զի ի գիշերի ոչ աքսի, և միայնակ ոչ կայ։ Ձայս Հայելով Հարկիմք ասել, Թէ ասա ձնձղկամբ ոչ նշանակի ծիտն, այլ որպէս եզաք, այն երկրորդ տեսակ բուսոյ, որ ի գիշերի միայնակ ի վերայ տանեաց նստեալ աքսի և

ձուաղէ ։ Կարէր մարգարէն այլոց թռչնոց ևս նմանեցուցանել զմարդ տխուր․ բայց այսպիսեաց նմանեցուցանելով՝ կամի զառաւելութի տխրութեն բացայայտագոյնս նկարել ։

Արդ որպէս յայտնի տեսանի յընթացից սաղմոսիս, այսպիսի բանք յերից դիմաց ևս կարեն ասել․ մի՝ 'ի դիմաց այնր՝ որ կայ մատնեալ 'ի տառապանս․ որպիսի էին իսրայէլացիք 'ի գերութե անդ ։ Երկրորդ՝ 'ի դիմաց այնր՝ որ պաշարեալ կայ տարակուսական տրտմութե 'ի վերայ կենաց իւրոց կամ 'ի վերայ անասելի դիպուածոց․ կամ որ տագնապեալն է 'ի խղճէ մտաց, և կամ 'ի վարանմանէ խորհրդոց․ զի տեսեալ զբարին՝ յոր յօժարի և ոչ վստահի, և զչարն՝ յոր պաշարի և ոչ նահանջի, 'ի մառախուղ տրտմութե ընկղմեալ՝ զայսպիսիս բարբառի ։ Երրորդ՝ 'ի դիմաց այնոցիկ որք յետ դառնալոյ առ ած՝ յապաշխարանս կան, և ողբան ։

Եւս սոքա յերիս դասս տրոհին ։ Յառաջնում դասու են նոքա, որք յանապատի առանձնացեալ ճգնին, և ընդ օձից, այսինքն ընդ դիւաց պատերազմին․ որպիսի եղեն պօղոս, անտոն, հիլարիոն ևն․ որք և օրինակին 'ի հաւալուսն, ըստ որում ասաց․ * նմանեցայ ես հաւալուսն յանապատի ‖ ։ Յերկրորդ՝ դասու են նոքա, որք թէպէտ և կան 'ի քաղաքի կամ 'ի գիւղս, բայց առանձնացեալք և յաշխարհային իրաց մեկուսացեալք, գրեթէ յաւերակս քաղաքաց բնակին և ողբան զկեանս իւրեանց, մանաւանդ 'ի գիշերի․ և սոքա օրինակին 'ի բու 'ի կոչեցեալն գիշերահաւ կամ կասկամ, ըստ որում ասաց․ * եղէ ես որպէս բու յաւերակի ‖ ։ Յերրորդում դասու են նոքա, որք թէպէտ և ամուսնացեալք իցեն, և յիրս աշխարհի զբաղեալք, որպիսի են վաճառականք, և արհեստաւորք ևա, բայց ունելով զվարս քրս տքնին և ողբան 'ի վերայ անցեալ կենաց իւրեանց՝ բարձրանալով 'ի տանիս․ իբր զի այսպիսիքս թէպէտ և կան 'ի տան, բայց խորհուրդք նոցա միայնացեալ են 'ի վերայ տանեաց․ զի ոչ յարին յայն՝ զոր 'ի կենցաղս յայս ունին, այլ յայն զոր 'ի հանդերձեալն ունել փափաքին․ և սոքա օրինա-

կին 'ի ձնձղուկս տանեաց. ըստ որում ասէ. * տրք-
„ նեցայ, և եղէ ես որպէս ձնձղուկ միայն 'ի տա-
„ նիս ‖: Ի սոսա նաև խիղճ մարդոյն կարէ նմանիլ
ձնձղկան՝ որ 'ի բարձանց իբր 'ի տանեաց ազդ առ-
նէ հոգւոյն զգուշանալ 'ի ձկտանաց մարմնոյ: Եթէ
հաճիս. տես և 'ի Լամբ:

Այլաբանօրէն, յաւերակի մարդկայինս բնութե՝
գտաք ամենեքին իբրև զգիշերահաւս և զբուս: եկն
առ մեզ որդին ա՟յ, և նմանելով մեզ՝ սրբեաց զմեզ.
տքնեցաւ 'ի վերայ մեր և վասն մեր 'ի փրկել զմեզ.
և մարմին նորա կցեցաւ յոսկերս նորուն 'ի տանջելն
անդ: Նա զի զհետ էր օձն հին յափշտակել զմեզ
իբրև զձագս նորին, փութացաւ ել 'ի տանիս այս-
լինքն 'ի խաչ՝ իբրև ձնձղուկ ճչել առ հայր. և յանձ-
նել նմա զհոգիս մեր յաղաղակելն անդ. * հա՛յր 'ի
„ ձեռս քո աւանդեմ զհոգի իմ ‖: Իսկ զորս կրեաց
'ի նախատանաց մարդկան, զայնմանէ խօսի մարգա-
րէն 'ի յաջորդ համարն առակելով յանձն իւր, և
ասէ:

Է. Նախատէին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինև երդնուին:

Յորժամ այր բարերջանիկ, և կամ արդար ոք հա-
սանէ 'ի թշուառութի, մարդիկ չարք, երբեմն և
բարիք իսկ՝ փոխանակ սփոփելոյ կատակեն զնա. որ-
պէս արարին և բարեկամքն յոբայ. որոյ վասն ասաց
առ նոսա. * այր արդար և անարատ եղէ 'ի կատա-
„ կանս ‖. (յոբ. ժբ՟. 4:) Յայս միտ դնէ աստ մար-
գարէն զնախատինս հանդերձ առաւելութե՟ իւիք
յասելն:

Նախատէին զիս թշնամիք իմ զօրհանապազ: Կամի ասել.
յայնպիսի թշուառութե՟ ժամանեցի, մինչև լինել
ինձ նախատինք թշնամեաց իմոց, եւս և դիւաց. և
եղէ առակ նշաւակի առաջի այնոցիկ, որք ատէին
զիս. և այս ոչ մի օր, այլ զօրհանապազ. բայց որ
ծանրագոյնն է, նաև ծանօթք իւր զնոյն առնէին.
և կսկծագին եւս. վասն որոյ յարէ զկնի և ասէ:

Եւ գովիչք իմ ինև երդնուին: Կամի ասել. այնչափ
թշուառացայ, մինչ զի որք յառաջն տեսեալ զերջան-

կուբեի իմ գովինն զիս, առնանելով ապա զՀՀուռուբեան իմ սկսան պարսաւել, և համարիլ զիս առնագ քան զանհնայն, և ինև ևս երդնուլ. իբր զի յորմամ կամինն երդմամբ հաստատեալ ինչ, ինև հաստատեին, և զանուն իմ՝ի մէջ բերելով ասէին. եթէ չիցէ այս այսպէս, եղիցի իբրև զնա անարգ. կամ եթէ սուտ խօսիմ՝ հանգոյն նմին պատուհասեցցի. կամ եթէ ոչ արարից՝ իբրև զնա Թշուառացցի. և կամ ընդ հակառակն խօսելով՝ ասէին. եթէ ոչ կատարեացես՝ զոր խոստացար՝ լինիցիս իբրև զնա ոգւոքմէլի ևն։ Այսոյիսի եղանակ երդման ցուցանել զանարգուեթէ նոցա, որով երդնուէք. որպիսի առնէին և բարելացիք զազգն Հրէից. զի չերդնուլ նոցա՝ի մէջ իբրեանց՝ նոքին ազգաւ երդնուին յաճէին. եթէ չիցէ այս այսպէս, եղիցի իբրև զնոսքայ ևս. որով ցուցանիւք, թէ՝ի չերդնուն անարգուեթէ կին իսրայէլացիք։ Այնպէս և յանծնէլն զմիմեանս՝ ասէին. Թշուառացցիս իբրև զնոսայէլ, կամ լինիցիս նմանի իսրայէլացւոց անարգեալ յոմէ և՝ի մարդկանէ. որպիսի և այժմ մի վիճակ նոցա, զՀՀաբաթական և երկրորդական մի կնութ այս բան կայէ՝ի նախաստինս ամբաշտացց և դիւաց, որով նախատէն զապաշխարօղն. իբր զի տեսեալ նոցա Թէ մեզաւորն դարձեալ է՝ի ձանապարհն իւրմէ չարէ, և ապաշխարէ, և՝ի գործս բարիս ձգնի, նախատակծ առնեն զնա՝ի մէջ իբրեանց. և որ յառաջն տեսեալ զնա նման ինքեանց՝ գովին, յետոյ տեսեալ՝ Թէ նա փոխեալ է զձանապարհ իւր, և հետացեալ է լինքեանց, երդնուն՝ի վերայ նորա, կամ ընդդէմ նորա. զի զանուն նորա՝ի մէջ առեալ՝ երդնուն նուաւ՝ի ծաղր և յայտն կատականաց։ Օ այս եդեալ մարգարէին՝ ապա առաջի առնէ այլով ինն նմանաբանու-

Թի զառաւելութի տառապանաց անձինն, և ասէ.

Շ. Օ մինչ որպէս հոգ ինչ էր. և չչմոռնայի իմ որոտ խառնեցի։

Աւելութեամբ էր՝ի հնոյն զկոծ սգոյ կատարել նաեւելով՝ի վերայ մեռելոյ. զի ցանեալ զմեռիլ՝ի գեանի՝ նաեւին՝ի վերայ նորա, և լային. և զայս հասարա-

կարէն առնելին ի ոգւոյն զսուգ մտօվս , քան զոր մեծագոյն սուգ ոչ կարեր լինել . և եթէ վասն այլ ինչ պատճառաւ լինէր , այնու ցուցանիւր մեծ ինչ Թագաւորեալն լինէր , այլ ոչ ի մտօվս . որպէս տեսանէք յարաբան նիհոուէսացւոց . (յոբելեան . ՟ը . 6 .)

Ա՛չ եթէ այս սուգ երկարեր , Տարի լինէր ի վերայ այնր մեռելոյ նստելով ուտել զհաց և ըմպել գինւոյ ցաւով . և զի հացն դնիւր ի վերայ մեռելոյ , յուտէին զայն՝ ասէր ուտել զհաց մեռելոյ . և յըմպելին գինւոյ՝ ասէր ըմպել գինւոյ արտասուաց . Ա՛չ քանզի այս ամենայն ցուցանէր զմեծութիւն Թագաւորին ցաւոց , կամ զսաստկութիւն ագոյ , զոր զայս յառաջ բերէ մարգարէն ասելով ,

Օ՛ խնէր տրէս հայ ինէյ . Ե՛ս ըզմտէն իմ արտասուօք խառնեցէ . Ա՛յս բան երբեակի կարէ իմացեալ լինել . մի՝ ըստ կատարմանն . երկրորդ՝ ըստ Տամեմատութեան . և երրորդ՝ ըստ փոխաբերութեան . Ա՛սա առաջինն ոչ ցուցանէ՝ Թէ լոկ մխիթր ուտէր փոխանակ հացի , զի այս է ընդդէմ բնութեան . այլ կամի ասել , Թէ յանհնարին Թագաւորն Հզեկիա՝ ստեալ ի վերայ մխիթրոյ՝ լայն զՀոգեառութիւն իմ , և ի վերայ նորա ուտելի զՀաց իմ մխրաթախաւ . կամ Թէ յուտէին զՀաց՝ կամ ինն Թաթախէի գնդին ի մխիթր , յորոյ վերայ նստէի . իսկ արտասուք իմ այնչափ էր , զի և յըմպելին իմ գինւոյ՝ Տեղեալ լիներ ի բաժակ ջրոյն և ես այնպէս արտասուախառն ըմպելի զայն ,

Ա՛սա երկրորդին ոչ ցուցանէ Թէ մխիթրն իրրև ըզՀաց եկեր , այլ Թէ զՀացն իրրև մխիթր եկեր . որպէս Թէ ասացեալ էր . յուտելս իմ ասկաւրկ մի Հաց՝ Տամ ոչ առնուի . և յըմպելս իմ ասկաւ մի ջուր՝ յարտասուելոյ ոչ դադարի . Հաց Տանգոյն մխիթրոյ Տաւրեալ էր ինձ , և ըմպելին իմ նիւթ լուղոյ ,

Ա՛սա երրորդին ցուցանէ զկնութիւն Թշուառութեանն , ձեն և զսաստկագին Թագաւորին սրտին . որպէս Թէ ասացեալ էր , յանՀնարին վիշտս գոլով և յամենից ցաւոց նախատակած լինելով՝ գրեթէ ի մէջ մխրոյ բնակիմ , և իրրև մխիթր Տամարեալ լինիմ . մինչև զՀաց անգամ մոռանալ ուտել , և զջուր իսկ յարտասուացս ոչ յիշել . զի կերակուր իմ Թշուառութիւն

էր, և ջուր՝ արտասուք։

վրդով մի այլազգ և ա կարէ մեկնիլ այս բան՝ Հայելով՝ ի գոյն սփոփանան, զոր առնոյր ի նմանէից և ի լուոյ ի վերայ մխրոյ։ որպէս թէ ասէր. ի թշուառութենէ խիստ ոչ ոք գոսւոյ ինձ սփոփիչ. զի թէ նմանիք իմ նախասիրեն, և ծանօթք իմ ծաղր առնեն ինձ. և ես ոչ և ա կարէալ իւիք միխիթարիլ՝ նայել ի վերայ մխրոյ. և այս միայն եղև ինձ միխիթարութենէ իրրև հոգ հատատիչ սրտի. և ողբալ իմ եղև ինձ զանգուածն իրրև բմպելի պատքառ անձին։ Ընդ այսմ ՀՀմնարար ասել, թէ մխիրն եղև ինձ իրրև հոգ, և արտասուքն իրրև բմպելի։

Ասարկապես, որ միանգամ խորհի զանձնէ իւրմէ լինել հոգ և մխիր, և թէ չէ տակաւ ունի ի նոյն դառնալ, և զայս մտածելով շարժեսցի ողբալ արտասուօք ի վերայ անցեալ կենցաղ իւրոց, այս խոհումն լինի հոգեոյ նորա իրրև զհոգ, և այն արտասուք լինի նմա բմպելի քաղցր։

Ալ անտիան վարդապետ. (ի մեկն. յոբ. գլ. է.) մխիրով խմանայ զնեզուածն, և բմպելեաւ զփափկութեն։ զինն ասէ իրրև զհոգ ուտեն արդարք. և բղմիան արտասուօք խառնեն. զի նեզուածք իրր հացիւ մնանին. իսկ զփափկութեան բաթեխառնեն արտասուօք և ձնշմամբ։

Ասէ՝ յայլ ինն հոգևորական միտս առեալ զայս բան գեղեցիկս գրէ ասելով. * մնացայուղ ասէ ուտել ընդ ,, հոգ իմ, զառ ած խոհումն և զվերին կենացն ,, փափաք. և զմխիրն կերայ որպէս զնա ցանկանէք ,, և փոխանակ նորա. այսինքն զդեղ պտղոյն, ընդ ,, ցանկութեն արծաթասէրն, զարկութեն եղբօրն, ,, զփափկութէ մարմնոյ, զլուր մեռաւ, զիսաս անչ ,, պատշաճ, զանեղանս փառաց. զի այսք ամենեքեան ,, մխիրը են երկրաւորք և անցաւորք։ և ապա զարտասուաց խօսելով ասէ. * բմպելի էր նորա այն՝ զոր ,, ասաց ես, եթէ ոք ծարաւի՝ եկեսցէ առ իս և ,, արբցէ. այսինքն առնաբանական խոստմունքն և ,, աւետիք երանաւետ և յաւիտենական կենացն. զոր ասէ յբմպելն արտասուաց խառնեցի. էր ինն, զի ասէի ցկամս մարմնոյս՝ ուտել զխմնալի հացն և

,, առել զմխիթն, և ոչ կամէր. վասն այսորիկ ես
,, յիմգիելն զաժաչունչ գրոց վարդապետութեան՝ աս-
,, տաւածէ, տեսանել զիս ի նոցին խոստմանցն զըր-
,, կեալ և աշխարհիս ցանկութիւն խնամացեալ ։

Լ. ԱԼ Թէ ուստի եղև Նմա այսպէս խնամարհել, յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով.

Ց երեսաց բարւոքեն սրմանութեն ։ ։ զի գոս բարբ-
ցոշեր և խնամարհեցոցեր էին ։

Արկին օրինակաւ վարի ոճ ընդ մարդոյ՝ բարուքեալ և բարկութիւն. բարուքեալ ի բարքացուցանելն ի բա-
րիս. և բարկուքեալ ի խնամարհեցուցանելն ի չարիս. և այս լինի պատժելով, կամ զրկելով զմարդն ի բարեաց, կամ մատնելով ի նեղութիւնս վասն մեղաց. որպէս ասաք իբ ադամ՝ զոր բարուքեալ ի բարքացոյց ի պատիւ և ի նմանութիւն իւր, և բարկուքեալ խնամարհեցոյց ի հող. որպէս ասաք և ընդ իսրայէլացիս, զորս բարձրացոյց ի ժառանգութիւն իւր, և ի թագաւորութիւն. և ապա խնամարհեցոյց ի գերութիւնն. և հուսկ յետոյ ի խաչանալ նոցա՝ ի կորոյզ վնասս ի լեառն Քշտառութիւն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։

Այդպէս այս տեսանի և յիւրաքանչիւր մարդ՝ մանաւանդ ըստ գերբնական վիճակի. իբրև զի ցորչափ վայելէ ի շնորհս նոյ, կայ ի բարձրութիւն, և որչափ առաւելեալ իցէ շնորհօք՝ այնչափ բարձրացեալ համարի. իսկ յորժամ մեղանչէ՝ անկանի ի բարձրութենէ անտի ։ Այլ զբոլորիսկ խեղդելն անօթ անկեալ ի բարձրութենէ խորտակի և լինի անպիտան, սոյնպէս և մարդն՝ որ ե իբրև անօթ խեղդելն ըստ յորոյ՝ յանկանիլն մեղաց ի բարձրութենէ՝ խորտակեալ անպիտանանայ, և որչափ բարձրացեալ էր, այնչափ մեծ լինի խորտակումն նորա ։

Այլ Թէպէտ մեղքն կուբացուցեալ զայս հոգւոյ նորա՝ այլ Թողու նմա տեսանել զիսրտակիլ իւր, տալ կայն եթէ նշուլիւք նախաժամանն շնորհացն նոյ լուսաւորեալ՝ նշմարեսցէ զինքն, տեսեալ զմեծ զայն զիւր Քշտառութիւն՝ յոր անկեալ է, պաշարի ի Թաղձութիւն, և մաւյն յաղր և ի սուգ. ի սոյն պաշտ-

բեալ և գաւթի՝ ասէ ։

Եբէ՞սայ բարձրանալ սրմռռանալ չո. ալ գոռ բարչբացողները և խանարհեցողները լիս ։ Հայս բան՝ երկրորդ Հատուածն Հայի ի Թշուառութիւն՝ յոր անկաւ ։ իսկ առաջին Հատուածն Հայի ի Թագաւորիւնն՝ զոր կալաւ ։ որպէս Թէ եղեալ էր ։ դու տէր՝ որ բարուրեր զով բարձրացուցեր զիս ի Հնոյն, կամ ի վայելուչն Հայրական խնամոյ քոց, տեսեալ զանզգամութիւն իմ՝ բարկացար, և ի բարկութիւն անտի սրամտութեամբ քով ի վայր ընկեցեր զիս ։ որով ոչ միայն զրկեցայ ի բարձրութիւն անտի, այլև ծանրութիւն մեղացս հաւրեալ զգեանի՝ իբրև զիրեղէնն անօթ խորտակեցայ, և յայսչափ Թշուառութիւն ցրուեցայ ։ Ցնեսեալ իմ ապա զիս յայսպիսի ողորմելի վիճակի, և գիտացեալ՝ Թէ այս վասն այսորիկ եղև ինձ՝ զի բարկացուցի զքեզ, ի բարկութիւն այսի քումմէ սաստափեալ Հալեցայ և մաշեցայ ։ ոչ կերակուր չիշխի և ոչ զրմպելեաց խորհիլ ։ ինձ կերակուր եղև մխիթը, և իմ ըմպելի դառն արտասուք ։

Ամբ" բարկութիւն ոչ խմանալ զգործ Թոյլ տալոյ նորա յանկուածն մարդոյ ։ որպէս Թոյլ եւ գաւթի, և պետրոսի յգուտ նոցին՝ առ ի խանարհեցուցանել զնոսա ։ զի որպէս բարձրացուցանելն ի մեծամեծս եւս և ի գերազանց մտածութիւնս՝ նորա է ասէ, այնպէս և խանարհեցուցանելն ի Թշուառութեան ։ * երկոքինս եւս ածային խնամոյն է միևն անախտու ,, Թէ ուղղիչ, և միւսն խանարհուԹէ ։ Վամբով ապա մարգարէին ի մէջ բերել ընդ հանրապես ըզքաւանն՝ որ եղև ի գործ անտի բարկութենն այ, յաբեկ զինեն և ասէ ։

Ժ. Վասուր իմ որպէս հովանի անդին. և ես որպէս խոցոտեալ ։

Ասուրք մարգոյ՝ եԹէ արդարոյ իցէն և եԹէ մեղաւորն, միապէս իբրև ստուեր անցանէն ։ բայց արդիւնքն եԹէ բարւոյ մասին իցէ և եԹէ չարի, Թռղուն ինչ ։ իբր զի որ արդարութիւն անցուցանել զաւուրս իւր, Թէպէտ և աւուրքն անցանէին, բայց վարձք արդարութենն գանձեալ պահին ։ այնպէս և

որ ամբարտաւանէ անցուցանել զաւուրս իւր՝ յանցանել աւուրցն՝ դիզեալ պահին պատիժըն. քանզ որոյ չիմասթի առածն այն վանական վարդապետի. * զօր. ,, ծօգըն անցին, գործըն մնացին ||. Իպար եթէ արդարն կամակար մեղիցէ, ոչ միայն աւուրըք նորա, այլև վարձք գործոց նորուն ընդ աւուրցն անցանիցեն, և ինքն միայ իբրև զնոսա չորացեալ առ'ի արկանիլ 'ի հնոցն գժոխոց, Յայս Հայելով ասէ,

Իշուր եմ զրպէս հալանի անցին (Յոբ ես ։) Կամի ասել. 'ի մեղանչել իմում՝ և'ի մերժելդ քո զիս բարեկութեամբ՝ աւուրք իմ իբրև ստուեր անցին. ուր աւուրքդ ոչ նշանակի տեւողութիւն աւուրն, այլ գործք արարեալք յիւրաքանչիւր աւուրս. զորս և նմանեցուցանէ հովանւոյ, այսինքն ստուերի. զի որպէս հովանին երևի ինչ ցորչափ ձևանայ 'ի լուսոյ, բայց ինքն ի գոատարկութիւն լուսոյ և դիւրաշարժ յանցանել, այնպէս և գործք մարդկան երևին լինել ինչ ցորչափ ձևանան 'ի չնորհացն այ. բայց 'ի կողմանէ իւրեանց են գոատարկութիւնք ինչ. ուստի և 'ի հեռանալ չնորհացն՝ պակասին և բառնին իբրև ստուեր. և միայ մարդն գոատարկ և ունայն, և ա և իբրև զնոսա չորացեալ. յոր միտ յաւելու ասել,

Իշու ես զրպէս խոտ չոռնէցայ։ Իյսինքն՝ 'ի մեղանչել իմում՝ ցամաքեալ եղէ իբրև խոտ չի և իցէ խոտնաւութիւնք գերբնական բարւոյ, և վաղեցայ 'ի թերուսաւութիւն, և ահա կամ'ի տառապանս մնանեալ, Իյս բան կարէ մեկնիլ և քան մեկնութիւնն երրորդ Համարցն, ուր ասաց. * սպառեցան որպէս ծուխ ,, աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոտ չորացան ||. յոր միտ կամի ասել. տառապանօք և հառաչանօք (կամ ասացից ախով և վախով) մաշեցան կեանք իմ, և անցին իբրև հովանի երջանիկ աւուրք իմ. որոց և ոչ հետք երևին. և ես ինքն տառապեալ 'ի սուգ և 'ի տրտմութիւն հալիմ և մաշիմ, և իբրև զխոտ չորացեալ՝ տեսանիմ,

Վարձ է զայս բան վերադնել և 'ի գէմ մարդկային բնութիւնն 'ի յայտարարութիւն միհկանացութիւնն՝ որ եղև պատիճ մեզոց. իբր զի առաջին մարդն՝ որ բարձրացեալ էր 'ի գերագոյն փառս անմահական կենաց,

ի ձեռն մեզաց յանարգութեի խնարարհեցաւ. և եղև մահկանացու. և ընդ անցանել հետ զհետ աւուրց նորա իբրև սաւեր՝ ինքն եւս որ մեռելոց էր մշտագա-

լար, իբրև զխոտ ցամաքեցաւ և մեռաւ.

Օ այս անցաւորութեի աւուրց հանդերձ մահու՝ ընկալան և որդիք նորա իբրև յատուկ ժառանգք նոցին, և ինքեանք եւս ստորագրեցին զնոյն իւրեանց մեղաց, և յաւելին վերս ի վերայ վիրաց. որպեսի տեսանի և յանձն լոյն՝ յորոյ դիմաց խոսի մարգարէն զայսոսիկ բանս, եթէ իցէ ազգն խորհրդի, և եթէ առանձին ոք հարեալ ի սրտի. Այս զայս առաջի դներ լով մարգարէին կամի ի գութ շարժել զնա. և որպէս զի առաւել շարժեսցէ զնա, ի միջ բերէ ընդդէմ դիմբարեխութեի մարդոյ զանփոխանութեի նորա այսինքն գյաւիտենականութեի նորին և զան-

ջնջելի լինել յիշատակի նորուն ասելով.

ժա. Պատ տէր յաւիտեան է՝ և չկարասի տ ազգն ինչ

լե յոչի.

Պրկեցէ վերջին ապաւէն մարգարէից տեսանի ի նոր գիրս դիմել նոցա առ նա ծած այսպիսի բանիւք՝ յառաջի մատուցանել նոցա իբրև ձեռնարկութիւն ինն զանփոփոխ յաւիտենականութեի նորա, ընդ նմին և զանդադարելի անցաւորութեի մարդկային կենաց, առ ի սոքեմբեր դադարեցուցանել զարկուածին՝ այ, և առ ի գտանել ի նմանէ զողորմութեի. Ի սոյն կերպարան ձեռացուանէ մարգարէն և ասէ զանձն ի դիմաց տատապեցելոյ անձին, և ա և ի դիմաց գերելոյ

ազգին յաւէրն.

Պատ տէր յաւիտեան է (և չկարասի տ ազգն ինչ յոչի), չկայս բան բամանդակի այսպիսի ինն ասացուած. զու դիտես աւեր՝ զի կեանք իմ իբրև խոտ ցամաքի, և չունչ իմ իբրև հողմ ցնդի. աւուրք իմ իբրև տաւեր անցանեն, և յիշատակ իմ իբրև զնաւուն պահասի. բայ զու յաւիտեան կաս յանփոփոխութեդ, և յիշատակ քո ինոյ անջնջելի յաւիտեան. և արդ միթէ զու տէր որ յաւիտեան կաս, յաւիտեան կամիցիս վրէժս պահանջել յայսպիսի անցաւոր աւուրէ. միթէ զգործ բարեաւութեի քո յաւիտեան կամիցիս հե-

զուլ ՚ի վերայ այսպիսի դիւրահաւատ խոտոյ· մինէ
դյաւիտենականութենի քո հաւատարիլ կամիցիս այս-
պիսի ցնդական հոգւոյ· Լաւ զինչ փառս լինիցի քումդ
անուան՝ ՚ի յուցանելդ զանմահականքդ զօրութենի քոյ
կուռնդ ՚ի վերայ այսպիսի եղծական պատկերի·
իսկ եթէ փոխանակ Թագաւոր զարհուրելի՝ զուս-
բութենի քո յուցցես առ նա, փառաւորեացի անուն քո,
որպէս և փառաւորեալն ի յամենայնի· և առ այս
յարէ·

Լաւ չիշատակ ես ածէք ինձ յոգւ· Լաւաս չիշատակ կարէ
առեալ լինել աստ ՚ի մարդասիրութենէ և ՚ի հաւատարիկ-
նէնէ ՚ի մանաւանդ առեալ, կամի ասել· յողորմիլդ
քո ՚ի վերայ իմ, և ՚ի յուցանելդ առիս զայցելուն
քո, յիշատակ այսր բարեբարեութենէ քո ինոյ յոգւոյ
յոգւ· Իսը զի անհաւատ մարդկան՝ և և հրեշտակաց
զայսպիսի ողորմութիւն քոյ ՚ի վերայ այսպիսի ապի-
բաստ և անարժան առեղծուածոյ, յիշեսցեն զայս
յոգւոյ յոգւ, այսինքն միտ, և հնչակեսցեն՝ թէ
անսրտակալ ես, բազմագութ և ողորմած· Լաւ ես
իսկ ցորչափ կեամ ՚ի մարմնի, յիշելով զայս՝ օրհնե-
ցից զքեզ· և յելանելս իմ ՚ի մարմնոյ ասել՝ փառա-
ւորեցից զքեզ՝ յիշատակելով յաւիտեան զայս մեծ
ողորմութենի քո, զոր ցուցեր առիս·

Լսակ եթէ ՚ի հաւատարիկ առցի, կամ ասել· դու ՝որ
յաւիտեան կաս, և ամենեցուն միտ ողորմութիւն
ցուցանես· որով և անուն քո յիշի յոգւոյ յոգւ· և
դու ինքն միտ յիշիս, և հնչակիս յամենայնի ողոր-
մած, յամենայնի գթած, և յամենայնի բարեբար·
ուրեմն ցոյց և ինձ զնոսն ողորմութենէ քո· զի մի առ-
նս պակասել ցուցցի այս յիշատակ ողորմածութեդ·
Այլն այս բան ասի և ՚ի դիմաց խօսակցացոց դերե-
լոց ՚ի բարելոն՝ առ ՚ի խնդրելոյ զազատութենէ· Լաւ
խոհզդաբար ասի ՚ի դիմաց մարդկութենէն՝ առ ՚ի
փութացուցանելոյ զնա ՚ի փրկել· որպէս աւետանի
՚ի յաջորդ համարն· Ընդայս հայկաբան մարդաբանն՝
վերջ առ ասասանօր առաջելոյ մասին այսր սաղմոսի,
և սկիզբն առնէ երկրորդ մասին ասելով·

ժՀ. Պաւս յարուցեալ գինացիս ի վերոյ սինդ. ծամա-
նակ գինելոյ նորա հասեալ է ծամ,
Ի գերիլ իսրայէլացւոց ի բաբելոն, և յայրիլ տա-
ճարին, և ի քանդիլ պարսպին երուսաղէմ՝ ըստ
գրելոյ եբեմիայ մարգարէի, այլիացաւ սինդ լցեալ
արտաքսիճ. * յալով ելայ ասէ ի գիշերի (Զաւա-
ռաւթե) և արտասուք իւր ի վերայ ծնօտից իւրոց.
,, և ոչ գոյր միխիթարիչ նմա ‖. (տես ի գիրս ողբոց.
ա. 1—5.) և առ բարւոք խնդրացաս լինելոյ այսմ
բնութեացդիս զորեսին գլուխն այնր գրոց. ուր և ու-
նիս տեսանել Թէ այն այրիութեն ըստ իսիք եր խորհ-
հրդաւոր իմն տարացոյց այրիութեան մարդկայինս
բնութեան.

Ի միայն միխիթարութեն կայր առաջի ի գուշակու-
թէ երեմիայ, Թէ յետ եօթանասուն ամաց գերու-
թենն՝ Հանդերձեալ է նա գթալոյ զիսրայէլա-
ցիս ի սրտն, և նորոգել զայն (երեմ. իե. 11; իզ.
10. տես և բարւոք. գլ. իզ. և եսայ. խէ. և իե.)
Նա յետոյ յայտնեցաւ գանիէլի, Թէ այն Է օրինակ
գարձի գերութե ազգի մարդկան, և չինութե նո-
բոյս սինդի յետ եօթանասուն եօթնեքորեց, այս-
ինքն ի լրանալ չորեքհարիւր ինհնասն ամաց. տես ի
գիրս գանիէլի. (գլ. թ.) Նա քանզի մարգարէն ըս
նիպատգրեն խոսելով՝ զայս սաղմոս կարգէ ի դիմաց
գերելոցն, և խորհրդաբար ի դիմաց մարդկայինս
բնութե, տեսեալ զմերձիլ լրման ժամանակին, ազա-
ղակէ առ Ած՝ ցուցանել զդէմս իւր, ասելով.

Պաւս յարուցեալ գինացիս ի վերոյ սինդ. ծամանակ գինելոյ
նորա հասեալ է ծամ. Կամի ասել. մինչև չերքը ներգնես
աեր, այսինքն մինչև չերքը ցուցանես զքեզ իրրև
ներգնեալ. ոչ ապաքէն զամն եօթանասուն՝ ժամանակ
եղեր քոյ գո. և արդ մինէ չատեսան ներգնիցես.
արի, այսինքն ցոյց զքեզ չարուցեալ ի քոյ. և գմա
ի վերոյ սինդի. զի ահա լցաւ եօթանասնամեայ ժա-
մանակ, և եհաս վերջին ժամ՝ յորում սահմանեալ
եիր գթալ ի վերոյ նորա. Օ այսպիսիս ասաց և
հրեշտակ նոն ի գիրս զաբաբիայ. (ա. 12.) * մինչև
,, չերբ ոչ ողբմեսցիս ի վերոյ երուսաղէմ . . . այս

,, եօթանասներորդ ամ է»։ Աստանօր բառդ ժամանակ և ժամ՝ 'ի նոյն հային. առ որոյ պարզութե՝ պարտ է ընթեռնուլ այսպէս. ժամանակ է գթալոյ 'ի վերայ սիոնի, զի հասեալ է ժամ, այսինքն ժամն սահմանեալ վասն նորա.

Այնպէս մեկնի այս բան և ըստ խորհրդոյն՝ հայելով 'ի փրկութիւն մարդկան, զոր արար որդին այ. զի մարգարէն իբրև աչօք ներկայ տեսանելով զայն, 'ի նոյն հայելով խօսի առ որդին այ 'ի դիմաց ազգի մարդկան. ահա ասէ՝ եօթանասուն եօթերորդք լրանան, յորում խոստացար գթալ 'ի վերայ սիոնի՝ այսինքն 'ի վերայ մարդկային բնութե. և արդ յարուցեալ յերկնից յաթոռոյ փառաց քոյ՝ եկ և ցոյց ըզգթութի քո.

Ամենք 'ի յարութի քո յարմարեցուցանեն զայս բան. որպէս թէ ասացեալ էր 'ի բերանոյ հաւատացելոց եղելոց յաւուրս թաղման տն. արի տէր, բաւական նեղեցեր 'ի գերեզմանի. արի և գթա 'ի վերայ սիոնի՝ այսինքն նոր հօտի փոքու. զի ահա լրացան երեք աւուրք, և եհաս ժամ յառնելոյ քո.

Սերածաբար մեկնեալ Լամբ՛ զայս բան ասէ. * Միա-
,, նձնամբք զվերին մայրաքաղաքն. առ որ մատոյց
,, զմեզ առաքեալ յասելն. մատուցեալ էք 'ի սիոն
,, լեառն և յերուսաղէմն որ յերկինս. Արդ գթա
,, տն իմ 'ի վերայ նորա յապրեցուցանել զորդիսն
,, իւր 'ի յորսող թշնամեացն, զի թէ մայր է մեր
,, ամենեցուն վերինն սիոն. ապա և մայրական ունի
,, գութ. ընդ կործանելն մեր դժուարի, և ընդ
,, կանգնելն բերկրի. Նաև առ տն, թէ ես այդ վե-
,, րին սիոնիդ որդի եմ. 'ի պօղոսէ երկնեալ և յիւ-
,, րոցն. թէ և վասն իմոյ գործոցս բարկանաս ինձ,
,, վասն հոգևոր երկամբք ծնողացդ՝ գթա 'ի վերայ
,, իմ»։

Բարոյապէս սիոնիւ նշանակի հոգի մարդոյ. ըստ որում սիոն թարգմանի նկատող, կամ հայեցող. և ըստ այսմ կամի ասել. դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ հոգւոյս, որ յառաջն էր քաղաք պանծալի և տաճար բնակութե քոյ, և ապա դարձաւ յապականութի 'ի ձեռն մեղաց. իսկ եթէ յապաղեսցես ըզ-

թաղ, խոպանացի խոպան. փուքա՛ ուբեմն և գնա՛. զի աչա հասեալ է ժամ գնալոյ ի վերայ նորա. ո՛րով և կատարեացի յիս ասացեալք առ ի քէն. (եսայ. խե. 8.) Թէ * ի ժամանակի ընդունելութեան լուայ ,, քեզ. և յաւուր փրկութեան ստեղծի զքեզ և օգ- ,, նեցի քեզ՝ ։ Այս * աշխատասիկ ժամանակ ընդու- ,, նելի՝ աչա օր փրկութեան ։ (Ջ. կորն. Ջ. 2.) Արդ մարգարէն յետ առաջի դնելոյ զչհասեալ ժամանակին գնալոյ ի վերայ սիրոյն, ի մէջ բերէ և զփափաք ծառային նորա առ ի նոյն. վասն որոյ յարէ զինի և ասէ.

ԺԷ. Ահա՛ ծառայ տ՚ ես ընդ տալին նորա. և ի հոգ նորա գնացից։

Այրաւորիքը գերեալք ի բաբելոն այնչափ վառեալ էին ի սէր սիրոյն, մինչ զի նաև զքարիւնս աւերակաց նորա առ իւրեանս ունել մեծ քին համարէին, և յամենայն օրում փափաքէին տեսանել զինացեալ քարիւնս. նոյնպէս և զհոգս այնր քաղաքի՝ իբրև զիր ինքեանց գնովք գրգել և յարգել. զոր և յարդ իսկ առնէին (որպէս և քրիստոնեայք վասն ուծ ակոր լինելոյ այնր տեղւոյ։) Ո այսոցիկ փափաք ունելով նոցա՝ հառաչեաց մարգարէն. երբ իցէ՞ զի կարիցեն գալ անդ և տեսանել զայն. և իցէ՞ արդեօք վայելել զնա ի նորոգութեան։ Եւայս փափաք նոցա հայելով ասէ.

ԺԷ. Ահա՛ ծառայ տ՚ ես ընդ տալին նորա. և ի հոգ նորա գնացից։ Կամի սուրբ յորդորել զնոսա՝ զի փութացեալ գնալ ի վերայ սիրոյն. որպէս թէ ասէր. այս այն քաղաք է՝ յորոյ վերայ կուգաս անուն քո, ուր և մատուրք պատարագ մեծի վայելութեան քո. այս այն քաղաք է, զոր մեծացուցանէին մարգարէք քո, և աշխատուր ինն ցուցանէին առաքեալ այլոց ազգաց. այս այն քաղաք է՝ որով պարծէին ժողովուրդք քո, և ծառայք քո. և ահա այժմ՝ ի գերութեան գոլով՝ զրկեալ է ի տեսութենէ նորա, և ի սոյն հառաչեն, և ի քարանձ սորա ծառայելոց յաւերակս սորին ունել փափաքին՝ իբրև զգանձ ցանկալի, և ի հոգս սորա իբրև յաղէտս խրեանց գնալով՝ ցանկան համբուրել

զայն և գգուել . նա՝ անչյան գնել զնաան ինչ ունել
անտի առ ի միխիթարութիւն անձանց իւրեանց : Այլ
զի զայս առնել ոչ կարէին , հաւատին և ազազակեն
առ քեզ . զի ողորմութիւն քով լինիցի ինքեանց անդր
ժամանել , և անդանօր փառաւորել զնոճ վայելուչ
փառաց քոց : Այլ ազդ հաձեաց և դու , գիտ ի նո-
սա , այծ գնասա անդր , և լցի գիափաք նոցա , զուա-
ցն զառապ օրանց նոցին , և սիրելեա գհաւատացեալս նոյ :
Ա՛ւլ գիտելի է՝ զի ժամանակք բազիցդ հաձիլ և գէ-
նել , որոց մին գնի ի կատարեալն՝ այս է՝ հաձեցան ,
և միւսն յապառնին՝ այս է գիտացին , ոչ են ձգեալ
որոշելի , այսինքն մին սոսկ իրրև ի կատարեալն , և
միւսն սոսկ իրրև յապառնին . այլ չ՛ը ժամանակ և
իսկ . որպէս ինչ եղեալ է . հաձեցան և հաձին և
հաձեացին . գիտացան և գիտան և գիտացին . զի միա
բանին որպէս յայտ է՝ ի նախագրելոցդ կարգի ի
ցուցանել զիափաք նոցա և զանդուանան առ քարինս
և առ հոգս սիրանի :
Ա՛յսաբանօրէն , մարգարէք՝ որք էին ծառայք նո՛ն ,
հաձեցան ընդ քարինս սիրանի , այսինքն ընդ առա-
քեալն՝ որք եղեն փիւնիք նորոյս սիրանի . և ի հոգս
նորա , այսինքն ի ժողովուրդ նորա գիտացան : Այսմ
այլ ազգ ևս . մարգարէք նո՛ն տեսեալ ինչ հինն սիրան
աւերի , գիտացան ի հոգս նորա այսինքն ի հաւատորդս
ժողովրդեան նորա . և հաձեցան ընդ հաւատեալ քա-
րինս նորա ըստ հաստատութեա , փափաքելով զի ա-
ռեալ լիցին նորին ի շինութի՛ն նորոյս սիրանի , որպէս
և եղեն իսկ : Այլ դարձեալ առաքեալքն՝ որք ընտ-
րեցան ի ծառայութի՛ն քոյն , հաձեցան ժողովել զաս-
րինս կենդանիս շինել նորոք զնորն սիրան ի վերայ
անշարժ վիմին քոյն , և ցուցին զգիտութի՛ն ի հոգս նո-
րա , այսինքն յայտնութիւ՝ որք հաւատոյ էին արատաղ իբ-
րև զհոգ , և կամ ի տիպսն ի կենդանի :
Ա՛ երանելաբար առեալ լսեմ՛ զայս բան , ասէ . * որ
,, պէս խոստացեալ գերեսին ի բարելն ընդ պաղես-
,, տին , այսպէս և հրաւիրեալքս ի քեզ երկնային ժա-
,, ռանգաւորք ընդ երկինս հաձեցաք և ի նոյնն գե-
,, թամբ . զի այս քարինքս որ յերկիրս՝ ոչ կ մեր . որ-
,, պէս խոստովան եղեն որքն՝ թէ օտարք և սպան-

,, գուխաք եմք յաշխարհի. և յայտ արարին՝ թէ ազ-
,, նուական գաւառին են ցանկացեալ. այսինքն երկ-
,, նաբուին. արդ այնր գաւառի՝ որոյ առաքեալ է-
,, ցոյց զջբան ցանկացողս, նորին ընդ քարինս ասէ-
,, սա զծառայն ոյ հաձեալս, և ի հողն իւրեանց
,, գթացողս։

Լարոյատիս՝ ծառայքն ոյ փափաքելով չինուԹե սիո-
նի այսինքն այսր և այնր մարդոյ՝ մեղաց ապականե-
լոյ՝ հաձին ընդ քարինս նորա, այսինքն ընդ այնս՝
որք իբրև քարինք և վիմք հնացեալ են ի նոսա. որ-
պիսի են հաւատ և յոյս, կամ կարողուԹիք հոգւոյ
ընդունակք ապաշխարուԹե. և գթան ի հող նոցա
այսինքն ի հնացորդս առաքինուԹե, կամ ի գործս
նոցա ի հող գարձեալս մեղաց։ Ի հաձուԹի ասցս և
ի գուԹ հայելով Թազձեալ անձին ազալ զնձ՝ զի
ըստ փափաքանաց նոցա նորոգեսցէ զհոգի իւր իբրև
զսիոն։ Լ. յԼ Թէ ի նորոգուԹե սիոնի քանի փառք
լինէր անուանն ոյ, յայտ առնէ ի յաջորդ համարն
ասելով։

ԺԵ. Եւ երկնչեն հեթանոսք յանուանէ տեառն. և ամենայն թա-
գաւորք երկրի ի փառս քո ։

ԺԵ. Զինչ պէր ըսէ. և երկնչեսցի փառօք խօսի ի
նմա։

Զայս է Թէ՝ ի ժամանակս գարձի գերուԹեն իս-
րայէլացւոց և ի շինուԹե սիոնի՝ անուն ոյ հռչա-
կեալ եղիցի յոյժ առ ազգս բազումս. և նա ինքն կիւ-
րոս Թագաւոր, և որք զհետ նորա, երկնչելով ի
փառացն ոյ՝ ցուցին հրովարտակօք՝ Թէ նա է Ճշմա-
րիտ ՅԱ, և Թէ արժան է շինել զսիոն քաղաք նորա
օրով և յառաջագոյն նկարեցին զկոչումն հեթանո-
սաց։ Զայս հայելով ասէ։

Եւ երկնչեն հեթանոսք յանուանէ տեառն. և ամենայն թագաւորք
երկրի ի փառս քո։ Լիցի Թէ ասէր. ի կամիլդ գար-
ձուցանել զգերութեին իսրայէլի, և ի հաձիլդ շի-
նել զսիոն՝ լսելով հեթանոսաց զանուն քո, և տե-
սանելով զոր առնես, երկիցեն և ասասցեն՝ մեծ է
ՅԱ, զոր պաշտեն իսրայէլացիք։ Այնպէս և Թագա-

ւորք՝ որք փառաւորեալ էն ի վերայ երկրի, տեսա-
նել[1] թէ դու միայն իշխես ի վերայ ամենայնի, և
դու միայն գարձուցանես զսիրտս թագաւորաց և իշ-
խանաց, և ի ձեռն քո է ամենայն, երկիցեն ի փա-
ւաց քոց, այսինքն յամենազօր գործոց անտի յայտնո-
ղաց զփառս քոյ և զզօրանալն զօրութեան քո. որով և
առիպեացին գթալ ի ժողովուրդ քո և խնայել ի նո-
սա, և օգնել նոցա ի շինուածի քաղաքի քո սրտին.
և առ այս յարէ.

Շինէ՛ք ըզէ՛ն. և երեեսցէ՛ փա՛ռս ի նմա։ Այս
բան կրկնակի յարի ի նախընթացն. մի՝ իբրև պատ-
ճառ. յոր միտ կամի ասել. յորժամ նորոգեսցէ տէր
զսիոն, և փառօք իւրովք երեեսցի ի նմա, յայնժամ
երկիցեն հեթանոսք, եւ։ Արկրորդ՝ իբրև հետեւու-
թիւն հաստատուածէ, յոր միտ կամի ասել. արդարև
նորոգեսցէ տէր զսիոն, եւս և կանգնեսցէ ի նմա
զտաճար իւր. որով և երևեսցի ի նմա փառք իւ-
րովք, այսինքն թէ յանդիման լինիցի անդ ներկայ-
ութիւն փառաց իւրոց. և կամ թէ փառք իւր յայտ-
նեսցին անդ ի ձեռն Հիմարիտ պաշտամանց և օրէ-
նութեանց.

Այլ այս բանք ուղղակի եւս հային յայն՝ որ եղև ի
դարձի գերութեն ազգի մարդկան և ի շինուածի նո-
ր[2]ոյս սիոնի. զի յայնժամ ազգք հեթանոսաց լուեալ
զբարոյութեի աւետարանին՝ երկեան յանուանէ նո-
մբոյ, և դարձան յերկրպագութենէ նորա. յորոց և
շինեաց քէն զեկեղեցի իւր, և երևեսցաւ ի նմա փա-
ռօք անճառելի խորհրդոց իւրոց. ընդ որ զարմացան
մանաւանդ թէ սաբաեցան թագաւորք երկրի, տես-
անելով թէ նա միայն է թագաւոր թագաւորաց
նատեալ ընդ աջմէ Հօր։ Եւ գարձեալ ի շինելն քէն
զեկեղեցի իւր՝ հեթանոսք երկիւղիւ ժողովեցան ի
նորս. եակ յորժամ եկեսցէ միաւանգամ, և երևեսցի
փառօք, յայնժամ սաբաեսցին ամենայն թագաւորք
երկրի. և անկցին ի ներքոյ ոտից նորա։

Ար[3]արեալսէ՝ ի շինիլ Հոգւոյն ի հնորհացն այ իբրև
սիոն նորոգելով, երկիւղին զկռ և իշխանք նոցա իբր
թագաւորք նոցին յանուանակ այ՝ որ կոչեցեալ է ի
վերայ այնպիսի Հոգւոյ, յորում երևի և փառքն այ.

զօրմէ գրէ և լսէք", բերելով ի մէջ և զպատմելն
ինչ ի հարց ածց յասելն ։ * Այս երկիւղս սա գործել
,, տիրէ գիւացն , յորժամ տեսանեն զինս մեր աս-
,, տաքս գնացեալ աշխարհիս ցանկութեաց , և յաներ-
,, ևոյնի փառաց խոկացողս . որպէս գրեալ է ի պատ-
,, մութիւն հարցն , թէ եր ոմն ի սրբոցն յաղթեա . և
,, այլ ծեր տեսանող նայեր , զի օրացոյ եր նա յա-
,, զօթեան , սատանայ ի գուռն եր և ոչ համարձակեր
,, մտանել ի խուցն ։ Այս ասա յաւելու ասել ։ * Ո՞վ ի
,, նէ տէր զսիոն (վերկն) և երևեացի փառօք ի-
,, րովք ի նմա ։ Այնո . այսինքն խմնալին չինի յայ-
,, որպէս խոստացաւ . ի տան հօր իմոյ օթևանք բա-
,, զումս են . և ուր են եմ , և գուք անդ իցէք ։ Արդ
,, ով անձն իմ՝ չինել տէր զսիոն ոչ վասն իմ գոր-
,, ծոցս , այլ վասն քոյ փոխանակ մեր մահուն , ո-
,, րում գոլով քո հաւատացեալ , մի ես ի քարսնցն
,, նորա . արդարացեալ ամբիծ և անարատ գաւխին
,, արեամբ ։ Արդեալ մարգարէին զչնուելն սիոնի
և զերկնչիլ ազգաց յանուանէ նոն վա այնր չինուելոյ
առաջի մատուցանէ այժմ , թէ զայս արար ած վասն
Թախանձանաց ծառայից իւրոց . սմին իւրն յարէ զչնի
և ասէ .

ԺԷ. Այեցար տէր յաղօթս խնդրից . և ոչ արհամար-
հեաց չինարարածս նոցա ։

Ի վեր անդր ի համարն ւշ . յայտ արար մարգա-
րէն , թէ ծառայքն ոյ և ժողովուրդն իսրայէլի առ
հասարակ փափաքելով չինուելն սիոնի՝ աղօթեն առ
ած , որպէս և ինքն աղօթեաց ասելով . դու յարու-
ցեալ գթասցիս ի վերայ սիոնի ։ Չեռեալ ապա
թէ ընկալաւ ած զաղօթս նոցա , և արար զոր խնդր-
եին՝ ասէ .

Այեցար նա յաղօթս խնդրից . և ոչ արհամարհեաց չինարա-
րածս նոցա ։ Վասի ասէ՝ յաղօթել ծառայից նոն՝ որք
խնդրեալ եին ի տառապանս գերութեն բաբելոնի՝
հայեցար յաղօթս նոցա , այսինքն հանձեցաւ լսել զա-
ղօթս նոցա . և զոր խնդրեին՝ ոչ արհամարհեաց ,
այսինքն ոչ համարեցաւ իբրև արհամարհելի ինչ . զի
բարի էր՝ այն է նորոգութիւն սիոնի և չինուելն

տաճարի ։

Հայեցաւ ՚ի՛ծ և յաղօթս նահապետաց և մարգարէից՝ յաղաչել նոցա կանգնել զկործանեալ բնութիւն մարդկան, և նորոգել զայն ըստ նորոգութեան սեռ նոի, և չինել ՚ի նմա զիւրաքանչիւր հոգիս՝ տաճար բնակութեան իւրոյ։ Զայս խնդրուած նահապետաց և մարգարէից ոչ արհամարհեաց, այլ լուաց մեծ կա-

տարեաց՝ ոչ ՚ի ձեռն օտարի, այլ ինքնին գալով։ Ա՛ երեսաբար՝ հայի տէր և յայն աղօթս նոցն, որ գրի ՚ի յայտ. (ՃՂ. 10.) յատեր նոցա. * մինչև յերբ տէր ,, որ և ՃՀմանրիտ ոչ դաս[ի]ս, և խնդրես զվրէժ ա- ,, րեան մերոյ ՚ի բնակչաց երկրի՛։ Զայսպիսի ա- ղօթս ոտն հայելով ՚ին՛ ՚ի հասանել կատարածի աշ խարհիս երևեսցի փառաւք իւրովք, և արասցէ զխընդ-

բուածս նոցա ։

Հայի ՚ին՛ գաբձեալ և յաղօթս իւրաքանչիւր մարգոյ որոյ բեկեալ և խոնարհեալ իցէ սիրտն. զի աղօթք այսպիսեաց հաճոյ ընծային ՚ին՛; խոնկք ՚ի մանրիլն անոյշ բուրէն, այնպէս և սիրտ մանրեալ խոնար- հութիւն և մեռուցմամբ սիրոյ անոյշ բուրէ զհոտ աղօթից, իբր * յամենայն փոշեաց իւրեքեցուց՛։ (ԵՐԳ. Ճ. 6.) մինչև զգալ իսկ հոգւոյն զՀաճիլն ՚ին՛ և զՀայիլ նորա. և Համբաւակիլ և ասել ըստ լաւ[ի]՛. * զիմ ստորաքարշ երերելոյս զաղօթս և զխընդ- ,, բուածս, գԹաձն ՚ին՛ ոչ պարտ անտես, այլ Հայ- ,, եցաւ և ազդեաց ՚ի սիրտ իմ՝ Թէ ՚ի չհնազին զսիոնն ,, վերին բազում՝ օթևանաւքն, գտանիմ միոյ յօթևա- ,, նացն և էս ժառանգաւոր և փառաց նորին տէ- ,, ող՛։ Այս զի այս ամենայն՝ բարերարութիւն մեծ է՝ արժանի յաւիտենական յիշատակի, վասն որոյ յա-

րէ զկնի մարգարէին և ասէ ։

ԺՀ. Պ ՚ՀԲՈՅՆ ՈՅՆ ՅՈՂՔ ՅՈՒՂ. ՅՈՂՂՈՔՔ ՂԸ ՈՒՈՅՆԸՂ Ի՝ ՕՐՀՆԵՑՔ ՂՔԸ ։

Հովորութիւն էր առ խոստացեալս՝ զի ՚ի տեսանէն զմեծամեծ գործս ՚ին՛, յօրինեին վերջս օրհնութիւն ՚ի վերայ այնոր գործոյ՝ առ ՚ի գոհանալ նոսիս զայն, Թողուլ զայն ՚ի յիշատակ զկնի եկելոց. Այս զի որ- պէս ասացաք մեծ էգև յայժ վերադրեալ նորոգութիւն

այն, փափաքի մարդարէն՝ զի յօրինեսցի երդ վասն այնր. ուստի ասէ՝

Պրեսցէ այս յաչէ յայլ, կամի ասել. այս գործ այլ, ո՛րով ազատեցաք ի գերութենէ, և տեսաք զչիւռեթէն սիոնի, դրեսցի ի մատեանս և յերդս. զի ճանաչէ յիշատակ սորա յապդ այլ, այսինքն յազգն՝ որ գայ զկնի. զի թէ այն գալոց ազգ ոչ ետես զայս, գոնէ լուիցէ՝ յերդ եւ ի ժողովրդեանն, և յօրհնել նոցա զնծա. և առ այս յարէ՝

Յաղագս երդ սահելն՝ օրհնեսցէ ղեր։ Վասս ծաղկեալ՝ անորոշ դնի աստ. որով կարէ նշանակիլ և թէ այն՝ զոր կուժաց ազգ այլ, և եթէ այն՝ որք անմիջապէս փրկեցան ի գերութենէ։ Յերդ ասէ այսորիկ ժողովուրդք, զորս ստացաւ ՚ածծ, բան որում փրկեալ զնոսա արար իւր ստացուածս, ի բերան առեալ զերգս յայտնիչս այսր բարերարութեն նորա՝ օրհնասցեն զնա իբրև գոհացիչ իւրեանց։

Յայլ դիտ լիէ՝ զի զոր մեք զառդ գրեցին՝ մեկնեցաք բան գրութեն երդոց, մարթ է մեկնել և բան գրութեն մարգարէութեց. և յայնժամ այս բան ուղղակի չայի ի ժողովուրդ նորոյս սիոնի, այսինքն ի հաւատացեալս քրիստոս. զորոց դիպրութեն բազմադիմի օրհնակօք գրեցին մարգարէք. որպէս որոշակի և երկար խօսի պետրոս յառաջին թղթին. (ա. 3—12.) ասելով. * Որ ուզն տեսանել և սիրեցիք. ընդ որ այժմ ,, ոչ տեսանեք, բայց հաւատացիք . . . Որոց և յայտ ,, նեցաւ իսկ. զի ոչ ևթէ անձանց, այլ մեզ մատա ,, կարարէք լինէին նոցին, որք այժմ պատմեցան այնո ,, քիւք, որ աւետարանեցինն ձեզ Հոգւովն սրբով։ Յերդ այս ազգ որ այլ է ի հնոյն, և նորոգ ստացեալ, տեսեալ զկատարումն մարգարէութեց յիւրեանս, ուրախ լինիցին և օրհնեն զիբրեանց, որ ոչ ուրացեալ զնա նոցա, այսինքն զբանս մարգարէիցն, և ոչ արհամարհեաց զնդրուածս նոցա, այլ լուաւ նոցա, և բան ձայնի նոցին եկին և կատարեաց. բան օրում և ասաց ի նոսիրնեցաց համարն թէ հայեցաւ նա յաղօթս ից. զոր և կրկնէ ի յաջորդ երկուս համարս այլով բանիւ։

Ոմանք զբառդ սահելն՝ իմանան զսահեղմանէ. իբր

թէ ասել, մարդիկ որք տեղեալ են յայլ, տեսեալ զբանդեալս նորա՝ օրհնեսցեն զնա. քայց որպէս և շարադրութիւն կարգի բանին ցուցանէ՝ այդ բառ հայի ի ժառանգութիւն ժողովրդեան նոր, այսինքն յայն ժողովուրդ՝ զոր իւր արար ած. ուստի բարեդ. (ի մեկն. մարկ. գլ. ժէ.) զայս բան աղաղակ յառաջ բերեալ գրէ այսպէս. * ժողովուրդ՝ զոր ստացեալ ,, է՝ օրհնեսցէ զնա. որ ոչ եթէ զնոր տեղծանելն ,, ասէ, այլ զտեղծեալն՝ ի կռոցն պաշտամունէն վերա- ,, ստին իւր ժողովուրդ առնուլ՝ ստանալ ասէ ‖։

Հաւատալական մեկնութիւն լը գրելոյ ուրուն՝ բառդ ածեալ կարէ առեալ լինել ներգ ործաբար. յոր միտ կամի ասել. ժողովուրդ նոր օրհնեսցէ զած վասն բարերարութեանցն՝ զոր ստացաւ ի մարդասիրութենէ նորա. և պատմեսցէ այլոյմ ազգի և այ, զի և նոքա օրհնեսցեն զնա։

Ամբ՝՝ բառիս ազգ այլ՝ իմանալ կՀրեշտակս, և գրէ այսպէս. * զիմ խնամարհելոյս մեղաւք ընդունել ,, զաղաչանս նոյ՝ և ոչ անտես առնել, պատուել գրել ,, յազգ յայլ. այսինքն յանմարմինոցն երանի. որպէս ,, զի նոցա ժողովուրդք և որոց ուրախութիւն է միոյ ,, մեղաւորին ապաշխարելն, օրհնեսցեն զիս իմոյ փրկ- ,, կութենէ զանբն իւրեանց ‖։ Կամ զի այսոսիկ բարե- բարութիւնս արար ած՝ հայելով ի սրբութենէ իւրմէ, և լսելով զձայն հնծութենէ խնամարհելոյն, վասն որոյ յարէ մարգարէն զկնի և ասէ։

ժԸ. Ուրախ-ացարո՛ ազգք ընդ ժողովրդեանն նորո՛յ. զի զարհուրանաց զինուորութեան իւրոյ հարցէ զարհուրեցուսցէ զհայհոյիչս։

ժԹ. Ելէք ընդ առաջ նոցա՛. և ասացէք ցերկիր մահ- ճակալաց՝ Մի՛ երկնչիր երկիր, ուրախ-ացարո՛ և ցնծա՛ յուրախութեան՝ զի մեծացուցանէ տէր զգործս իւր։

Ժի. Զի ի մանկութենէ ժողովրդեանն իսրայէլի՝ ի գերութենէն՝ առ արտաքս այնպէս եղեալ՝ որպէս թէ ած թողեալ է զնոսա, և զարձուցեալ է զերեսս իւր ի նոցանէ, և հեռացեալ է ի նոցունց. մի որպ հնծելին՝ մանա- ւանդ մարգարէք նոցա, և աղաղակին առ ած՝ զի նայեսցի. իբր զի եթէ ոչ կամի մերձենալ առ ին- քեանս, և ընտանեբար վարիլ՝ որպէս յառաջին, գո-

նէ հաձէացի նայիլ ի բարձանց. և այն չատ էր նո-
ցա. Ի խնայիլ նոցա այսպէս, ած և խնարհե-
ցաւ առ նոսա լսել զձայն նոցա. վ՚ր որոյ ասէ.
Այեցար դո՞ւ ի բարձանց ի տեսանել խորհ.
յերկիր հայեաս։ Այսա խօսիլ մարդկան ձևացուցանել
զաստ, որպես թէ ասէր. Ի հեծել և ի կածել գե-
րելոյն և ի գոչել առ ած, ձայն հեծութեան նոցա է-
հաս ի բարձունս երկնից, և ած լուեալ զդուչնա-
ղագաղակի նոցա՝ նայեցաւ թէ մի՞ թէեն որք գոչեն.
զի գրեթէ ոչ ևս ձանաչէր զնոսա. և տեսեալ թէ
են ժողովուրդք իւր գերեալք՝ շարժեցաւ ի գութ,
և հաձեցաւ քաղցրութեամբ հայիլ առ նոսա. վասն որոյ
կրկնէ զնոյնին ասելով՝ թէ հայեցաւ յերկինս յեր-
կիր։ Այլ թէպէտ այս հայիլ և այն հայիլ նոյն են
բստ բառին, բայց ըստ ներքին մտաց առաջինն պարզ
գանձարկէն ցուցանէ. իսկ երկրորդն նաև գՀաձուե-
Հայեցոյն ի մէջ բերէ.

Իսկ բառդ՝ ի բարձանց ի սրբութենէ իւրմէ, և բառդ
յերկինս՝ թէպէտ այլևայլ են բստ հնչմանն, բայց
բստ մտաց բանին զնոյն նշանակեն, այսինքն զնայիլն
ի բարձրութենէ երկնից. և զի երկինք աթոռ ած լի-
նելով՝ ասի սրբութենէ ած, զոր որոյ ասէ. ի բարձանց
ի սրբութենէ իւրմէ. ուր բառդ՝ ի բարձանց դնի իբրև
բացայայտիչ սրբութենէ. և այս՝ վասն այսորիկ զի մի
կարծեսցի թէ սրբութենէ խնացեալ լինի ատա տաձարն
կամ խորանն. զի այն եզծեալ էր յայնժամ։ Այլ արդ
քանզի հաձուեցաւ ած ի նայիլ յերկիր՝ էր վասն լսե-
լոյ զձայն թշուառացելոցն, և վասն ցուցանելոյ նո-
ցա զայցելութենէ իւր, զոր և ևս ի մէջ բերէ և ասէ.

Լսել ընծայեաց կոչէ. և սրյնպէս ըստ ամենայնի
Ներ ըստ ոչ զնի սոսկ փոխանակ զգալոյ զձայն կա-
պելոցն, այլև փոխանակ ընդունելոյ զձայն նոցա.
իբր թէ ասէր. Հաձեցաւ տէր նայիլ յորդիսն իս-
րայէլի. որպես զի լսելով զՀեծութենէ նոցա, (այսինքն
զՀեկեկանօք հառաչել նոյ) ազատիցէ նոյն, և տրձա-
կեսցէ զնոսա ի կապանաց գերութեան նոցին.

Ի վերոյ ի համարն 16 կոչեաց զնոսա խնարհս,
այսինքն խնարհեալս ի թշուառութեան. իսկ ատ
կոչէ կապեալս, և և որդիս մահապարտաց. զի կա-

պեալ էին նոքա ի գերութեէն, գուցէ և ի շղթայս. որպէս թագաւորք նային յերթեալս և սեդեկիա. (ՅԵ. ՀԱց. ԼՂ. 6. Երեմ. ԼԲ. 7. Նաև զի կապեալ էին ի գործս ձեռաց իւրեանց իբրև զնժդեհորս սաղ. (ԼԲ. 17.) և էին ևս որդիք մնհսպատաց. և այս հայի յայնոսիկ որք ի մնհկաւեէ գերեցան ի բաբելոն. որոց չարք մնհոս և գերուեէն էին պարտաւորք. ըստ որում դաստ վարդան և զաղաւմն ի հոյկազանց և յարշակունեաց գերելոց ընդ հրէայսն ի բաբելոն.

Այս կամ զի առ հասարակ համարեալ էին որդիք մնհապարտաց, այսինքն որդիք ունօղք զանցանս մնհապարտուեէ. զի որպէս յասելն որդիք զօրուեէ, այսինքն զօրաւորք, սոյնպէս և յասելն որդիք մնհապարտաց՝ իմացեալ լինի ասել, որդիք ունօղք զանցանս մնհապարտուեէ, որ է ասել՝ որդիք մնհու, որպէս դնի յերբայականն. ի սոսա ասէ մարգարէն հայելով ոչ, և լսելով զձայն հեծուեէ սոցա, կամեցաւ արձակել զսոսա. որով տայ քաջալերս և այլոց ամենեցուն՝ թէ ի խոնարհիլ նոցա և ի գոչել առ նմա՝ հայի առ նոսա նմա, և արձակէ զնոսա ի կապանաց թշուառութեէ իւրեանց։ Զոր առաքեան լեալ և նաբեկացոյն աղաղակէ առ նմա (՚ի բանն. ղԺ.) ա սելով. * որ լսես զհեծուեէն կապելոց, և հայիս յա-

,, զօթս խոնարհոյ ‖ ,

Այս բան ըստ վերոյգրելոցդ բաս առ բաս մնհնի ի վերայ փրկութեէն, զոր արար որդին ոչ. զի ի գոչել ազգի մարդկան առհասարակ առ նմա. և ի հեծել նոցա դառնագինս հայեցաւ ի նոսա որդին ոչ. լուաւ զհեծուեէն նոցա, և եկն առ նոսա իբրև առ կապեալս և իբրև առ որդիս մնհապարտաց. զի կապեալ կային ի առաւնս սիզնական մեղաց, և ի շղթայս նեբգործական չարեաց, և ս և ի շղթայս առտանայի. և էին որդիք մնհապարտաց, այսինքն որդիք նախասահմանեցին ադամոյ և եւայի, որք ձնշակեցան պատճառ մահապարտիցն գաւան։

Ո՛ սոսա զամենեսեան արձակեաց որդին ոչ ի կապանաց նոց անտի մեղաց, և ի շղթայից սատանայի. ընդ

որս և զիջեալն ի գԺոխս ի գոգն աբրահամու . որք՝ հեծելինն . զորոց գրէ Եսայի . (խե . 9 .) * ասէլ, ,, կապելոց՝ Թէ էլլիք , և որք ի խաւարին իցեն՝ Թէ ,, յայտնեցարուք ։ Ընդ միտ մեկնէ և մովսէս վարդապետ զայս բան (ի մեկն . ժամագրութ . երես . 159 .) * լսել ասէ զՀեծելսն Թէ կապելոց զմարգարէին՝ որ ,, ի գԺոխս , և արձակել (ի գալիւթ յաշեաբՀ) ,, զորդիս մահապարտաց ի կապանաց սատանայի և ,, յանձնբերել նորին տանջանաց ։ Եւ զի այսր արձակման օրինակ եղև այն արձակուին որդւոցն իսրայէլի , զոր եդաք ի վերոյ , վասն որոյ և մարգարէն զնոսն առաջի դնելով՝ միանգամայն և զսոյն տայ ի մտանել ։

Լամբ՚՚ զբառդ կապել՝ մեկնէ ի վերայ կապանաց մարմնոյ . և ասէ Թէ այսպիսի գոլով մեր վասն Թանձրութեան մարմնոյս և հեռացեալ յոյն՝ ոչ անտես առնէ բարեգուԹեն . այլ ի պատասիլ մեր՝ վաղվաղակի հայի ի մեզ , և լսէ զաղաչանս մեր , և արձակէ զմեզ ի կապանաց մեղաց մերոց . որ բարեյաւէս օրինակիւբ ի յարձակուին իսրայէլացւոց ի գերութէն անտի ։ Եւ քանզի ի յարձակիլ անդ նոցա , ընդ որս և որդւոց մարդկան՝ փառաւորեալ լինէր անուանն այ ի սիոն , սմին իբրև յարբ զինի և ասէ ։

Պարսել ի սիոն զնոսն գՀ . և զբնակութիւնս նորա յերուսաղէմ ։

Ի վերոյ ի համարն 17 . եզ՝ Թէ բարերարութէն այ , զոր եղոյց ազգին իսրայէլացւոց , գրեսցի . զի այնու հնազանդեսցէ անուն նորա առ ազգն այն՝ որ յաշօրդելոց էր նոցա , այն ինքն են որդիք նոյն ազգին . իբր զի զայն գուԹէի երդոց ի բերան առեալ՝ նովաւ օրհնեսցեն զանուն այ՝ ինքեանք և յաջորդք իւրեանց . և ահա զոր անդ գրէլ ասաց . ասա պատմել ի սիոն դնէ ասելով ։

Պարսել ի սիոն զնոսն գՀ . և զբնակութիւնս նորա յերուսաղէմ ։ Կամի ասել . յարձակելն այ զորդիս մահապարտաց՝ էղիցի նոցա պատմել ի սիոն զանուն նոցա , կամ Թէ փութասցին նոքա պատմել ի սիոն զանուն այն գործուԹէ . կամ Թէ ժողովեսցին ի սիոն՝ պատ.

մէլ զաբեբարուեթիւնն ոչ· և այնու փառաւորեցեն զանուն նորա ի մէջ նորաչէնն տաճարի , և և ի նորա եկեղեցի . և զայս արասցեն մտաւոյանեալ նմա զօրհնութիւն նորա կամ զերգս օրհնութեանց զոր բասա- զէմ, և նոյն իսկ երեսադէմ կոյիւբ նալ սիան , զեր- կոսն ի միասին վարէ . յառաջնումն սիոն դնելով, և յերկրորդումն երեսադէմ.

Լ ամբ՝ զայս բան և ի վերինն սիոն ասեմ . իբր թէ այս բաբեբարուեթի ոչ՝ որով հոչեցաւ ի մէջ պատ- մեսցի ի վերին սիոն , և այնու ուրախասցին նաև երկնաւորացն դասք ի վերայ փրկութեանն մերոյ : վա- փաբելով ապա մարգարէին՝ զի և այլ ժողովուրդք զնոյն արասցեն , և ամենեքին ի միասին փառաւո- բեսցեն զնա , յարէ զկնի և ասէ .

իւս . Յ ողովել ծողովրդոց ի գաւիս . և խթաւորաց ծա- ռայել ոս .

Ի դարձի գերութենէն իսրայէլացւոց՝ բազումք յայ- լոց ազգաց յարեցան ի նոսա , և բազում թագա- ւորք պատուելով զժողովուրդն զայն՝ նովին գործով արարին ծառայութիւն ինչ ոչ . որպէս արար նախ հիւբոս . ապա դարէհ , և այլք . և ս և աղբսանդր , յետոյ և այլ թագաւորք՝ զորոց գրեն նաև արտաքինս պատմիչք . ի սոսա հայելով ասէ .

Յ ողովել ծողովրդոց ի գաւիս . և խթաւորաց ծառայել ոս : Նման ասէ . ի յարձակել ոչ զժողովուրդ իւր՝ յաժարեացին և այլ ժողովուրդք ժողովիլ ընդ նոսա ի միասին, և թագաւորք և ս յաժարեացին ծառայել կամաց ոն ի յարձակել զնոսա , և ի ցուցանել զօգ- նութիւն իւրեանց առ նոսա :

Ա րթի և ս ասէ , թէ զայս յառաջ բերէ մարգա- րէն ի յայտնել զիմաքաբ իւր . որպէս թէ ասէր . ինչ արդեօք՝ զի յազատիլ իսրայէլացւոց՝ լինիցի ժո- ղովիլ և այլոց ժողովրդոց ընդ նոսա ի միասին , և և թագաւորաց՝ առ ի մեծացուցանել զնոյն և ծա- ռայել նմա ;

Ա յս փափաք մարգարէին հայելով ի հինն իսրայէլ՝ թէրէ ինաց յայտ . իսկ հայելով ի նորս իսրայէլ՝

լեագ ոչնս կատարեցաւ. զի ժողովուրդ ազգաց, և թագաւորք նոցա՝ որք բաժանեալ էին ի պաշտամանէն այլեայլ օտար ածոց, ժողովեցան ի միասին ի մի մարմին, ի մի հոգի, ի մի հաւատ, ի մի միաբանութիւն սիրոյ, և ի մի պաշտօն միոյ Աստուծոյ ոչ, և որք էին գերիք դիւաց և ծառայք խոտից և ժանդագ գեհենի, եղեն որդիք ոչ, և ծառայք Աստուծոյ կենդանւոյ, և ժառանգք արքայութեան։

Ամէն" փոխանակ բառիս ի ֆոխն դնէ առ նոսա. և վերածաբար մեկնելով՝ զի այսպէս. * ընդունելով ,, ոչ զաղաչանս կապելոցն մարմնով, զմեզ առ նոսա ,, ժողովէ յերկնաւոր քաղաքն. որպէս ասէ առա- ,, քեալ. մնասուցեալ ևք ի սիրն լեառն. յերթալս ,, զէմ նոր՝ յերկինս, և ի բերեալսդ բանակս հրեշ- ,, տակաց՝ Ա.րդ՝ քանզի բարեխեղբ ևն և մարգա- ,, սէրք՝ վասն զմեզ ոչ ի նոցա ժողովին խառնելոյ, ,, օրհնեն զանուն նորա բիւրք հրեշտակաց և հոգիք ,, արդարոցն կատարելոց։ Ա.յլ թագաւորաց ծառայ- ,, եալ ևն. կամ վերակացուացն սիրոյ գիւաց, և ,, կամ մերոյ անձնիշխանս կամաց ։

Ա.ռարկութիւն այս ամենայն բանք սկսեալ ի 16. համարոյ՝ հայեն ի նորոգութիւն հոգւոյ ապաշխարողին. զորմէ ասաց ի համարն 16. Թէ * չինչ տէր զսխտն, ,, և երբեմն փառաւք խոնարհեալ ի նմա ։ քանզի հայեցաւ յաղօթս խոնարհեցոյ՝ այսինքն կարգոցեալ անց հոգւոցն խոնարհելոց խոստա. լուաւ գՀեծութեանն նոցա, և հաճեցաւ արձակել զնոսա ի կապանաց մեղաց և ի շղթայից չար սովորութեանց, և զգործս նոյ՝ որք եկեն իբրև որդիք մահապարտաց, նորոգեաց յաւետութեան որդւոց լուսոյ, այսինքն զործոց քարեաց. որոյ վասն շարահաւատ լինելով հոգւոյն ասէ. գրեսցեն այս բարեբարութիւնս ոչ ի յիշատակ դարձի այլոց մեղաւորաց. և ժողովք առաքինութեանց պատմեսցեն ի սէրն՝ այսինքն ի մաքրութիւն խղճի մտաց ըզփառս ոչ, և օրհնեսցեն զնա. և այնուհետև բացցեն գուռն ընդարձակութեան հոգւոյն՝ ժողովել անդր ազգի ազգի բարի խորհրդոց. նոյնպէս և միաբ և կամք՝ որք են թագաւորք ի մարդն՝ ծառայեսցեն նմա, և մի աշխարհի կամ մարմնոյ,

Դեպ վայր հասուցանելով մարգարէին զերկրորդ
ժամն սազմոսիս, և ցանկանալով տեսանել զայն՝ զոր
ասաց վասն ազատութեան ազգին, յայլ ինն եղանակ
դարձուցանէ զբանն, և ասէ.

Պատասխանի եմ նմա՛ ի ձանապարհն զրօաց խոյ·
ընդառաջելոցն առաջ էմոյ ասէ ինչ. և ոչ հա-
նէր զիս՛ ի ներս առաջ էմոյ· էլ ապիեր չոփ են անց ոտ·
ի գերել իսրայէլի՛ ի բաբելոն՝ ըմբռնեալ յակիաս
տաբակուս՝ խորհէր, թէ զինչ լինիցի· գիրք սեւեա-
ցէ այն ծառայութեան· իսկ արդեօք հնար ազատուե
իւրոց· յայսմ տաբակուսութեն մարգարէ ազգին՝ և
բեմիա, բարուք, եզեկիէլ, անգէ, զաքարիա, և մա-
զաբիա, այլևայլս խօսէին՛ ի գիմաց նոյ· երբեմն
զսպառնալիս առաջի էնէլով, և երբեմն զաւետս
բարեաց մնաուցանելով, և յիմի ղոյս ազատութե
հոգա հաստատելով· իբր թէ ազատելոց իցէ զնոսա
ած՛ ի գերութեն անտի· Օ այսպիսիս լուեալ ազգին
տատպելոյ, որպէս և մարգկայինս բնութե՛ խնդ-
բէր ցոյ, թէ երբ լինիցի ինձ այդ· և ահա զայս
յայտ առնէ այս բան, զոր ասէ մարգարէն·

Պատասխանի եմ նմա՛ ի ձանապարհն զրօաց խոյ· ընդ-
առաջելոցն առաջ էմոյ ասէ ինչ· Այսինքն՛ ի խօսիլ մար-
գարէից՛ ի գիմաց նոյ զայլևայլ բանս առ ազգն իս-
րայէլ վասն ազատութե, պատասխանի եմ նոյ ազգն
և ասէ· երբ կատարեացին այդ գուշակութիւք մար-
գարէից, և երբ բարձցին աւուրք երկայնութեան
իմոյ· ապաւէմ զքեզ նոր, զնաւազութիւն աւուրց գե-
րութե իմոյ ասէ ինձ, այսինքն յայտնեա ինձ, զի
մխիթարեցայց փոքր մի·

Լակ յաւելն * ի ձանապարհի զօրութե իւրոյ՝, այս
բան չորեքկին իմացեալ լինի· մի՝ ըստ գիմելոց յա
պատմութե· վասն զի՛ ի մտանել ազգին՛ ի գերու-
թիւն, զօրութի նորա էլ՛ ի ձանապարհ կորաւանն·
և ահա յայսմ ձանապարհի յորում կորաւանիւք զօ-
րութի նորա՝ պատասխանի եմ նոյ՝ ցուցանել ինքեան՝
թէ երբ իցէ վերջանալոց գերութի իւր·

Լերկրորդ՝ ըստ հասակի կամ ըստ վիճակի· վասն զի
յայնպիսի հասակի մտանէցաւ իսրայէլ՛ ի գերութի՝

յորում զօրութիւն նորա ոչ էր բարձեալ, այլ էր ի Հանապարհի, կամ՝ ի ծաղկեալ Հասակի. վասն որոյ և յայնմ Հասակի գոլով ազատէ զնա ազատել զինքն։ Լրբորդ՝ ըստ Հանապարհի կենցաղ. զի կենդանք մարդոյ է իբրև Հանապարհ յոր գնայ զօրութիւն։ և զի այս Հանապարհ խոպանի ի գերութիւն էր, ազատէրն զնա նորոգել ըզսոյն։

Ղորրորդ՝ ըստ յաժարութիւն, յոր միտ ասէին ի Հանապարհի զօրութիւն իւրոյ, նշանակ Հանապարհաւորութիւն, որ է ասել. զօրութիւն մեծաւ՝ կամ յամենայն զօրութիւն ազատէրն զնա, զի այլ արասցէ, և ազատեսցէ. և զի փափաքէր ի կենդանութեան իւրում աշօք տեսանել զնոյն ազատութիւն, Թախանձէ և ասէ։

Լ՝ ՔՀԵՔ ՂԷ ՏԵՐԲ ՀՈԳ։ Լ՝ յսինքն՝ մի Հաներ զիս ի նուազ Հասակի աւուրց իմոց, կամ մի Հատաներ ընդ միջ զքեզ կենաց իմոց, կամ մի թոզուր մեռանիլ ի կիսել աւուրց գերութեան իմոց. այլ պահեա զիս կենդանի մինչև յօր ազատութեան իմոյ. զի տեսից զայն ազատութեան իմ, և փառաւորեցից զքեզ։ Լ՝ ԵԹԷ ոչ բաւէն աւուրք կենաց իմոց, Հաւաստեա տեառ ազատիմ զամն գերութեան իմոյ։ Լ՝ յայս ակնարկելով յաւելու և ասէ։

Օ՝ ԱՂՔԷ ՅԱՂ ՆՈՒՄ ՓՈ։ Կամի ասել. մի չափեր զամն իմ և զամն գերութեան իմոյ ընդ ամաց քոց, զի ամք իմ նուազ են յոյժ. իսկ ամք քո կան յազգէ յազգ այսինքն յաւիտեան. ապա ԵԹԷ ըստ ամաց քոց չափելով կամիցես յամեցուցանել զգերութիւն իմ, ոչ երթիք տեսից զազատութիւն։ Իսկ ԵԹԷ ըստ նուազութեան ամաց իմոց չափեսցես, անկն ունիմ Թէ զամն գերութեան իմոյ նուազեցուսցես։

Լ՝ ԱՂԱՔԱՆՕՔԱՆ Ի ԳԵՐԻՒ ԱԳԱՄԱՅ ՄԵՂՔԷ և յարտաքսել ի դրախտէ իքր ի սխոնէ յիւրում նորոգ Հասանակի՝ զօրութիւն նորա և զօրութիւն ծնողաց նորին մնանեցուս ի Հանապարհ մնհու և գտատպարտուե. և կենդանք նորա և զօրութիւն նորին կայր ի թշուառութե։ Լ՝ զի ազդեցաւ նմա յոյ՝ Թէ Հանդերձեալ է առաքել առ նա փրկիչ, և ազատել զնա, սակայն յոյս առեալ՝ պատասխանի ետ նմա, Թէ երբ լինի

ցի այդ. արդեօք ունիցի՞ ինքն այնչափ տեւել 'ի կեանս՝ մինչեւ տեսցէ զփրկիչն. որոյ վասն խնդրէր զի յետ նուազ ինչ աւուրց ցուցցէ նմա զփրկիչն. եւ մի նախ քան զտեսանելն զնա հանցէ զինքն յաշխարհէ, որ է ասել. մի յամեցուսցէ զառաքումն փրկչին։

Այլապէս 'ի շարժել այ զմարդն յապաշխարութիւն եւ 'ի Թաղձութիւն սրտի, (զորմէ խօսեցաւ մարգարէն յառաջնում մասին այսր սաղմոսի), մարդն տայ պատասխանի նմա 'ի ճանապարհի կենաց իւրոց կամ 'ի ճանապարհի գարշման իւրոյ, ցոյց ինձ թէ զիա՞րդ նուազ իցեն աւուրք կենաց իմոց. եւ նախ քան զհանելդ զիս յաշխարհէ ցոյց զփրկութիւն քո առ իս։

Այս մեկնութիւնք՝ զորս եդաք 'ի վերայ այսր համարոյ՝ թուին լինել հարազատագոյն. բայց քանզի բանք այսր համարոյ մթին են յոյժ՝ եթէ ըստ շարայարութեան բառից, եւ եթէ ըստ ներքին իմաստից, մարթ է եւ զայլ քանի մի մեկնութիւնս 'ի մէջ բերել։

Առաջինն է՝ թէ ժողովուրդն իսրայելի գերեալ 'ի բաբելոն՝ 'ի հասանել զօրութեան իւրոյ 'ի կէս ճանապարհի՝ այսինքն 'ի կէսն ժամանակի գերութեան, պատասխանի ետ այ՝ այսինքն թէ ասաց առ ած. ծանո՛ ինձ տր՝ արդեօք 'ի վախճան կենաց իմոց տեսից ըզվախճան գերութեան իմոյ. կամ տեսից արդեօք զազատութիւն 'ի գերութենէ աստի. այս մեկնութիւն մասամբ իմն հայի 'ի նախակարգեալդ։

Երկրորդն է՝ թէ 'ի դառնալ ազգին իսրայելի 'ի գերութենէ անտի, եւ 'ի նորոգիլ սիոնի՝ պատասխանի ետ նմա այսինքն խօսեցաւ առ ած յամենայն զօրութենէ իւրմէ. աղաչեմ զքեզ, արա՛ զի կեցից երկար, եւ պատմեցից զայս մեծ բարերարութիւն քո ամենայն ազգաց։

Երրորդն է՝ թէ յասելն այ յառաջագոյն ցմարգարէն՝ գրեսցի այս բարերարութիւն իմ յազգ այլ եւ՝ ետ նմա պատասխանի 'ի կենդանութեան իւրում՝ որ էր ճանապարհ զօրութեան իւրոյ, եւ ասաց. զնուազութիւն աւուրց իմոց ասա՛ ինձ. որպէս թէ ասէր. եթէ նուազ իցեն աւուրք կենաց իմոց, յայտնեա՛ ինձ՝ զի ըստ այնմ գրեցից եւ ըստ այնմ կեցից. որպէս զի մի՛ խաբեալ 'ի կենաց աստի՝ կարծեցից ունիլ զժամա-

նակ երկար . և 'ի կարծելն իմ այսպէս յափշտակե-
ցայց 'ի կենացս , և ոչ ժամանեցից ազատիլ ընդ ժո-
ղովրդեան քում ։

Զորրորդն է՝ թէ 'ի կոչելն ա͞յ զազգն իսրայէլի 'ի ձեռն մարգարէից՝ ետ նմա պատասխանի , այսինքն մատոյց գոհութիւն նմա , և զօրութիւն ա͞յ ել 'ի ճանապարհ՝ գնալ յերուսաղէմ ։ Իսկ 'ի գոհանալն ասաց՝ հ ամ կացի 'ի գերութեն , և այժմ ակն ունիմ , թէ 'ի դարձին կացից 'ի վայելչութիւն երուսաղէմի զամս բազումս յոյժ . և վասն այսորիկ աղաչէ և ասէ զնը-ւազութիւն աւուրց իմոց ասա՛ ինձ . այսինքն բաւական համարեա՛ ինձ զայն հ ամ գերութեան . և 'ի գնալս իմ յերուսաղէմ , մի՛ մերժեր զիս անտի փութով . կամ մի՛ հաներ զիս փութով յաշխարհէ աստի , որ համեմատութբ հանդերձելոյն է իբրև մասն ինչ աւուր , կամ կէսն աւուր . զի հանդերձեալն է միայն օր բոլոր . յայս վերածէ և մարգարէն զայս բան ։

Հինգերորդն է լամբրոնացւոյն . որ մասամբ իմն խորհրդաբար մեկնելով գրէ այսպէս . * Յորժամ ծա-
,, նեաւ բնութիւս թէ ա͞ծ լսէ զհեծութիւն իմ , և 'ի
,, մահու պարտուցն արձակէ զիս . պատասխանի ետ
,, նմա 'ի ճանապարհի կենցաղոյս և ասէ , ո՞վ տէր
,, որ մերձ ես 'ի հեծութիւն իմ . զնուազութիւն աւուրց
,, իմոց ասա՛ ինձ 'ի ներկայ յաւիտեանս . և մի՛ հա-
,, ներ զիս 'ի կէս աւուրց իմոց (այսինքն) 'ի հան-
,, դերձելոց ... կէս աւուրց կոչէ զհանդերձեալն ,
,, ո՛չ թէ զի թիւ ժամանակին այսմ համեմատեալ
,, է , այլ զի հաւասարք են . որք աստ փափկանան՝
,, անդ մշտանան . և որք աստ մշտանան՝ անդ հանդ-
,, չին ։ Ի՛ ինձ ասէ լուցի . վասն յայս նուազ կէս
,, յօրանալոյ՝ 'ի հանդերձեալ կիսոյ աւուրցն՝ ար-
,, տաքս անկանել . այլ տո՛ւր ինձ աստ՝ միշտ զնուա-
,, զութիւն աւուրցս և զմահն խոկալ , և այնմ կենացն
,, սպասել , որոյ յերկարութիւն մշտնջենաւոր է ։ Ի՟դ-
,, դէ յաղթ ամք քո . յայժմու ժամանակիս ազգն և
,, 'ի հանդերձելոյն դու տիրես մեզ և ընդ քոյով իշ-
,, խանութբ է այս աւուրք , և այլն ։

Ի՟սեղն ասա . * մի՛ հաներ զիս 'ի կէս աւուրց իմոց ։ հայի յայն՝ զոր ասաց մարգարէն ('ի սաղ . ծդ͞ . 24) .

Թէ մեղաւորք * մի՛ հաստատեսցեն զաւուրս իւ-
,, րեանց ‖ . այսինքն Թէ մի՛ հաստիցէ՛ ի կեանս աւուրց
իւրեանց · որ բարեյաւէտս ցուցանէ՝ Թէ մեղաւորք
որչափ և կեցցեն՝ աւուրք կենաց նոցա ոչ են ամբողջ
և լի , այլ իբր կէս · զի որպէս արդարն Թէև ի մահ
կանչեսցի հասակի մեծահիճի , հարիւրամեայ համարի՝
լի և հասուն ացեալ գոլով բարեաւք , այնպէս և մեղա-
ւորն Թէև հարիւր ամ կեցցէ և հարիւրամեայ մե-
ռանիցի՝ մանուկ յիմար համարի , մնասեալք Թէ ա-
նիծեալ · (եսայ · կէ · 20 ·) ‖ . պատ խնդիր մարգարէին՝
զի մի՛ և կեանք իւր այսպիսեաց հաւասարեսցի ·
Հայեսցուք կարես իմանալ՝ Թէ այն կեանք միայն են
յաւուրս լիս , որք բարւոք անցանեն · իսկ այն կեանք՝
որք ի չարիս ծախին՝ ոչ համարին յաւուրս , այլ են
իբրև երազք · ‖ աւուղ քաւատան ամ Թագաւորեաց ·
որպէս ասաց պէտ պաղտս · ի գործս առաքելոց (ԺԳ·
21 ·) բայց վկայէ ոմք դիրն , Թէ * երկուս ամն Թա-
,, գաւորեաց ‖ . (ա · Թագ · ԺԲ · 1 ·) ‖ ա՛ զի զամն
երկուս եհաց բաւեպաշտուԹիւ՝ ի ԹագաւորուԹիւն
իւրեամ · իսկ ի մնացեալ ամին՝ ամպարշտուԹիւ · վա
որդ և այն ամք նորա՝ ոչ համարեցան նմա յաւուրս ·
‖ . յո՛ քառասուն ամ է՝ զի քրիստոնեայ ես · պրկեաք
քառասուն ժամ կեցցէք քրիստոնէ՛ւաբար · ‖ . ասաե-
դիրս քի՛ ոչ Թուին բազում ամք , այլ բարի կեանք ·
* անուն կենդանւոյ ունիս , և մեռանիս ‖ . * քան-
,, զի ոչ գտի գործս քո կատարեալ ‖ . արդ * լիր
,, արԹուն ‖ . (յայտ · ՟ · 12 ·) և զգործ քո կատա-
րեալ կալ · եԹէ ՝ի մեռանան ժամուն և իցես՝ մի
վհատիր · աշխատեա՛ , և առնուցուս զվարձագ հաւա-
սար՝ հանգոյն այնոցիկ վարձհանաց , որոց լի եղեն
աւուրք (մատ · ի · 12 ·) ‖ . մի կենաց քոց , և և ա-
մենայն աւուրք քո չափեալ և ի վարձս տուեալ են
քեզ · բարւոք և անխնդք ի կիր արկ · զի ՝ի հասա-
նել ժամուն՝ գոյցէ ՝ի կէս աւուրց հանգիցես ՝ի քէն ·
‖ ՝ի վարձս կալեալ եղեն ոչ Թողեալ լինի անպտղ ,
այլ վարեալ լինի խաւսիՔ և փաՔով · զի յիտս
խնդրի ՝ի աւուղէն · այնպէս վարելի են և ժամա-
նակք աւուրց կենաց մերոց · զի պահանջիցի յարաք-
չէն · ոչ զի նուազին աւուրք նորա · այլ զի մերս ապա-

ւթին. իսկ նորայն մնայ ազգէ յազգ. զոր և հաստատէ մարգարէն 'ի յաջորդդ. և նախ ասէ.

ԻԴ. Ի սկզբանէ դու Տէր զերկիր հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկինք են.

Այս բան և 'ի յաջորդս սորա գլուխս մարգարէին է ցուցանել՝ ոչ այնչափ զամենակարողութիւն ա̄յ, որչափ զյաւիտենականութիւն նորա, և զայս փութայ ցուցանել յանփոփոխութենէ նորին, վասն զի բան յաւիտենականութեան կայանայ յանփոփոխութեան. զի 'ի սահմանելն զայն՝ ասեմք, անպարագիր տևողութիւն անփոփոխութեան գոլոյ և գործելոյ, կամ տևողութիւն այնպիսի՝ որոյ ունողն է անփոփոխ 'ի գոլն և 'ի գործելն. ոչ սկիզբն ունի և ոչ կատարած.

Իսկ զայս անփոփոխութիւն ցուցանէ մարգարէն ոչ 'ի յառաջագունէ՝ այսինքն յինքնագոյութենէ ա̄յ, այլ 'ի յետնագունէ՝ այսինքն 'ի փոփոխութենէ ստեղծուածոց, կամ յայնմանէ զի յանկնարկել նորա իւրով անփոփոխութեամբ՝ փոփոխէ զստեղծուածս յոչ գոլոյ 'ի գոլ. և 'ի գոլոյ յոչ գոլ. և նախ վասն փոփոխելոյ յոչ գոլոյ 'ի գոլ՝ խօսի յայս համար, 'ի մէջ բերելով զարարչագործութիւն երկնի և երկրի յոչնչէ. յայտ արարեալ թէ սոքա բանիւն ա̄յ հաստատեցան. զի ոչ եղեն յինքեանց. քանզի ոչ ինչ կարէ տալ ինքեան զգոլ զոր ոչ ունի. և ոչ ևս եղեն յայնմանէ որ ոչ է, զի ոչինչն ոչ կարէ առնել ինչ. և ոչ դարձեալ յայնմանէ՝ որ իցէ ստեղծեալ նախ քան զերկինս և զերկիր. զի արտաքոյ երկնի և երկրի չիք ինչ, քանզի երկինք և երկիր ասելով իմանամք զամենայն արարածս.

Ապա թէ հարցեալ լիցի. ո՞վ արար զերկիրս զայս այսպէս հաստատուն, նոյնպէս և զերկինս այնպէս զարդարուն, յամենեցունց վկայի, թէ նա միայն արար՝ որ ոչ է եղեալ յայլմէ, այլ է որ էն յինքնութե յաւիտենականութեամբ, այսինքն է ա̄ծ, որ կամելով հաղորդել զբարութիւն իւր առ արտաքս՝ գոյացոյց զաշխարհս զայս. և եթէ ոչ էր նա յինքեան յաւիտենից, այլ ժամանակաւ, ոչ կարէր առնել զսա որպէս և յայտ է. իսկ թէ երբ արար, պատասխանէ

մարգարէն խօսելով առ Յուդա եւ ասէ ,

Թագաւորեն մեր (ընդմանուն երկրի հաստատեցէք) : Արդ ա-
սէ . որ կերը ի յաւիտենից յիշխողութենէ քումմէ՝ յա-
ւուրս քան զլինելդ քեզ՝ արարեր զերկիրս զայս եւ
զերկինս , Ուր ասելով ի միշտեանն՝ ցուցանէ , թէ ոմն
ակիզբն գործոց արար յայսոսիկ . յորմէ եւ սկսաւ ժա-
մանակ աշխարհիս : Այլ թէպէտ ոմն ի կողմանէ
իւրմէ կարէր ի յաւիտենից առնել , եւ նոյն էր ա-
ւուրսն նոցա ի յաւիտենից կամ ի ժամանակի առ-
նել , բայց ի կողմանէ արարածոց լինէր անկարելի :
Արդ ի խօսել մարգարէին զառեղծմանէ երկնի եւ
երկրի ոչ միապէս դնէ առաջի զաւուրն , այլ՝ այլեւայլ
օրինակաւ . զի վասն առեղծմանն երկրի դնէ զհաս-
տատութիւն հիմանց . իսկ վասն առեղծմանն երկնից դնէ
զարարչագործութիւնն ձեռացն նոյ . եւ նախ զերկրէ
խօսելով որոշակի՝ ասէ ,

Ո հիմանս երկրի հաստատեցեր : Պարտ է թէ ասէր . զեր-
կիրս զայս առեղծեր՝ ոչ ի վերայ նախահաստեալ հի-
մանն , այլ ի վերայ այնը հիմանն՝ զոր դու ինքն ար-
արեր : Այլ այս երբեմն իմացեալ լինի . մի՝ ըստ հաս-
տատութեանն նիւթոյն , այսինքն ըստ հաստատուածեան
տարերաց . զի ի նոսա եւ նորոք կայ երկիրս . երկ-
րորդ՝ ըստ հաստատութեանն տեսակի կամ կարգի . զի
այնպիսի կարգ եդեալ է ամէ , որով կարէ երկիրս
կալ հաստատուն . երրորդ՝ ըստ ազդութենէ երկնից .
ըստ որում յազդութենէ նոցա հաստատեալ կայ եր-
կիրս՝ ուստի նաեւ երկինք կարեն նմանութիւն իմն կո-
չել հիմանք երկրի . յոր միտ ասի ի գիրս յոբայ .
(ԼԸ· 4·) * ուր էիր միւէ ես հիմանս արկանէի եր-
,, կրի ‖ . յորոյ վերայ ասէ վանականն վարդապետ .

* հիմն երկրի՝ երկինք են ‖ .

Արդ այս հաստատութիւն մտայորիկ է , զի ամէ ոչ արար
զերկիրս յոչնչէ , նոյնպէս պահէ զնա յոչնչութենէ նորին՝
եթէ՝ ըստ նիւթոյն և եթէ՝ ըստ կարգին . և զոյս յոչնչէ
առնելն՝ և պահելս կոչէ հիմանս արկանել . որով նշա-
նակէ հաստատութիւն հիմնելոյ . յոր միտ ունէր" և յայլս
գիրս , եւ ասացեալ այսինքն հիմնեցեր զերկիրս . Այլ զի
երկիրս է ստորին մասն աշխարհի . և համարի իբրև
միտ տիեզերիս , կամ իբրև սիրտ , նախ զնա յիշէ

մարգարէն. քան որում սիրտն յառաջագոյն ձեռանայ. և ապա լիչէ զերկինս. այլ՝ ի խօսելն զերկնից՝ որպա լիչէցաջ այժմ, ոչ ասէ հիմունս արկանել, կամ հիմ-

նել այլ գործ ձեռաց ոչ կոչէ և ասէ.

Նոյ գործ յետաց ոչ երկիցս են. Այս եղանակ խօսից յորժամ արձակ դնէ, ցուցանէ պարզապէս զարարչագործելն ոչ. յոր միա և երկիրս ասի գործ ձեռացն ոչ, այսինքն գործ ամենակարողութեանն նորա. բայց յորժամ հանմնատութիւն այլոց դնէ, յայնժամ ցուցանէ զառաւելութիւն ինչ. որպէս և ասա՝ զի յետ առելոյ հաստատեցեր զհիմունս երկրի, ի յարելն զնոսի՝ և գործք ձեռաց քոց երկինք են, համեմատութիւն այսոցիկ բառից՝ ցուցանի առաւելութիւն ամենութեան երկնից. զի ամենիւ համարի գործն այն՝ զոր հարատապահան ձեռաք իւրովք կատարէ. Յետ ասացն այսր ամենութեան մեզմէ՛ն մարգարէ՝ ի սկսանելին խօսել զառիջմանէ՝ նախ զնոսի զերկինս. Իսկ դարձեալ որովհետև՝ ի դիմաց երկրաւորացս խօսէր առ բնակեալս յերկինս, վն այսորիկ նախ զերկիրն յիչէ. Այլաբանօրէն, այս բան ցուցանէ զհաստատութիւն դիտուածոյ առ յաղթանակող եկեղեցւոյ. իբր զի որդին ոչ հաստատեաց զդիտուածոյ եկեղեցին իբրև զերկիրն, հաստատելով և զհիմունս նորա այսինքն զառաքեալս, և և զմեսիս խորհուրդս. և այս՝ այնպիսի հաստատութիւն՝ մինչև դարուց դժոխոց չկարել սասանեցուցանել. Իսկ յաղթանակող եկեղեցին՝ որ է յերկինս, կոչի գործ ձեռաց նորա, զի անդ ցուցանի զարմանալի արհեստ ձեռաց նորուն, այսինքն իմաստութեան նորին և կարողութեն.

Աւարեալս, ի դառնալ մարդոյ առ Աստ՝ գթելի նորոգ արարչագործել լինի, յորում կրկին ազգ առաքինութեց և բարի խորհրդոց հաստին. մի՝ սոսկ քան բարեչաւան կարգէ, որ յերկիրս օրինակի, այլ զհաստատութիւն յոյ ունի. և մի և՝ ի գերբնական կարգի, որ է յառնուկ գործ ձեռին ոչ. Զոր կամ ի միջ քո բերել մարգարէին զայն ինչ՝ որով Աստ փոփոխ զիրս յոչ գոլոյ ի գոլ, առաջի դնէ այժմ և զփոփոխականութիւն նոցա. որով լինի նոցա փոփոխել ի գոլոյ յոչ գոլ. ըստ որոյ ասէ.

ի՞ր. Ա՛ռա անցանէն. և դուռ կաս՝ և ոչա յաւիտեան։

Ա՛նցանել երկնից երկնակի կարէ խմացեալ լինել. մի՝ ըստ եղծանելոյ։ Երկրորդ՝ այլափոխելոյ համ Յայլ իմն կերպարան անցանելոյ։ Զմանոյ ի նահանեայ առաքինին Թուեցաւ լինել՝ երբ Թէ երկինք և երկիր ի կատարած աշխարհիս ունիցին եղծանիլ և ի տեղի նոցա յաջորդել նոր երկինք և նոր երկիր. և զայս ասէին հայելով ի բան առաքելոյն պետրոսի. (ի՞. պետ. ի՞. 10. 11.) բայց որպէս յայտնի երևի ի յաջորդ համարէն, և ի նորին խոկ պետրոսի բանիցն, երկինք և երկիր՝ ոչ Թէ ունին եղծանիլ, այլ անցանել ի գոլոյ այսպիսի՛ յոչ գոլ այսպիսի, այսինքն ի չգոյ իմն որպիսութեի փոխել, զորմէ խօսեցաւ ի յաջորդ համարն։

Աստ ասէ բարսեղ (ի մեկն. մտրկ. գլ. ժ՞.)
* երկինք երկիր անցցեն ըստ արտաքին պատկերի.
,, կերպարանացն և ինքն ինայ յամենայն ժամանակս
,, ըստ բնութեն՝։ Ւս յառաջ տաբեալ զբան իւր՝
զառաջ երկինք մեկնէ ի վերայ օդոյ ասելով * երկինք ասէ զօդ, վասն որոյ Թռչունք՝ որ չօդս՝
,, Թռչունք երկնից կոչին՝։ Ւս ի միջ բերեալ ըզբան սմին պետրոսի գրէ այսպէս. յասել պետրոսի.
(ի՞. պետ. ի՞. 7.) * երբեմն աշխարհ ջրհեղեղաս
,, ապականեալ կորեաւ. և այժմ երկինք և երկիր
,, նովին բանիւ գանձեալ կան Հրոյ պահեալք, յոր
,, ժամ չայտնապէս, Թէ այն վերին երկինք ոչ անչ
,, ցանէ Հրոյ. այլ՝ այլն (այսինքն այլ երկինք) որ
,, կորեաւ ջրով. զի այն երկինք՝ որ դատաբկ է չայ
,, տեղոց և լի ամպովք՝ նա է անցանելոց (ի չատա
,, կութիւն). և ոչ այն որ ատեղբք մնոցեալքն և
,, անմոլարիւք զարդարեալ է ... զի վարդապետք
,, ասեն՝ Թէ մարբեւոց է օդն մինչև ցայն վայր, ուր
,, երեալ է ծուխ գոհիցն՝։ Այնպէս է խմացեալ և վան ատեղաց, զի որպէս գրէ գէորգ վարդապետ, ի մեկն. եսայ. * ոչ անկանին, այլ չայլ առաւել
,, աղտուտութիւն փոխին։ ասէ և ի գիրս սղպեթաի.
(Ի. 20. երես. 475.)

Լ՚ԵԼ այսպէս, և ԵԼԵ՚ այնպէս՝ դիտուէն մարգա-
բէին՝ ոչ է աստ ցուցանել, ԹԷ սոքա ամենեքին եղ-
ծանին կամ ոչ եղծանին, այլ ԹԷ կան ընդ փոփո-
խութիւն՝ ԵԼԵ՚ ըստ ոչնչութեան և ԵԼԵ՚ ըստ այլափո-
խութեան. ԵԼԵ՚ ած հրամայէ կալ՝ կան, և ԵԼԵ՚ հրա-
մայէ ոչնչանալ՝ ոչնչանան, և ինքն միայն կայ յանփո-
փոխ յաւիտենականութեան. ուստի ասէ.

Լ՚ԱՅՍ անցանին. և դու կաս՝ և նոքա յաւիտեան. Լ՚ԵԼ
աստուածը բայդ անցանէլ դիցի փոխանակ Թողեալ լի-
նելոյ էր ոչ ևս պիտանացու, միտ բանին լինի այս.
՚ի հաստատել կատարածի աշխարհիս, անդ որժ մնացել
աշխարհ և անցցէ ՚ի վիճակ հանդստեան. իսկ դու
միշտ մնաս նոյն։ Հայս միտ առնու կիրակաս վարդա-
պետ (՚ի մեկն. Հարիւր. եւագրի. ՟ժ. ՟ւ.) և գրէ
այսպէս. * որպէս մանկունք (յորժամ) ՚ի տախտա-
,, կի ուսանին, ՚ի բաց դնեն զտախտակն. զի ոչ ևս
,, են կարօտ տախտակի, սոյնպէս և աշխարհս այս
,, տեղի ուսման և բնակութեան տուաւ մարդկան, և
,, յորժամ կատար լինի, փոփոխի աշխարհս ՚ի նո-
,, րոգ նմանութեան. այլ որ արարն՝ անսկզբնական է։
Իսկ ԵԼԵ՚ բայդ անցանէլ դիցի ըստ դառնալոյ յոչն-
չութիւն, միտ բանին լինի այս. երկինք և երկիր՝
որպէս յոչնչէ եղեն ՚ի հրամայելոյ. սոյնպէս և յո-
չինչ դարձցին յամփոփելոյ զոյութեանն քո. իսկ
դու յաւիտեան կաս. կամ որ նոյն է ըստ վարդանայ.
նոքա անցանեն, զի եղակաւք են, և դու միայն՝ զի
անեղ ես։

Լ՚ԱՅԼ ԵԼԵ՚ բայդ անցանէլ դիցի ըստ այլափոխելոյ, միտ
բանին լինի այս. երկինք և երկիր փոփոխին, և հան-
դերձեալ իսկ են փոփոխել. իսկ դու կաս և միայն
անփոփոխ յաւիտենից յաւիտենից։

Ո այս բան լինիցն մնանաւորելով նաբէ կացուցն ասէ
(՚ի բանն. ձ.) * դու ըստ մարգարէին միայն յաւի-
,, տեան կանբաւ բարձրութեամբ. և ես միշտ կոյնիմ
,, ըստ նորին բանին։ և զբաւագ յաճախեան՝ անկորն-
չելի Թարգմանելով ասէ (՚ի բանն կձ.) * դու մի-
,, այն միայն անկորնչելի։ Լ՚ս գայսոսիկ բացայայ-
տագոյն և առաջի դնէ մարգարէն ՚ի յաջորդ հա-
մարսդ ասելով նաեւ.

ին. Ա ՀԵՆԵՏԵԱՆ ԱՐԴԵՒ ՅՈՐՅՈ ՄԱՂԵՑՒՆ. ԱՐԴԵՒ ՎԵՐԱԲԱՐՈՒԱՆ ՀԵՆԵՏԵԱՆ ՊԵՏՈՍ, Ե ՀԵՆԵՏԵԱՆ.

Ա՛տ ասանկէս յածաքանիկ՝ որոց կարծիք հաստատեալ է՝ ի սկզբանէ՝ ձգ ի զոց, ի կատարածի աշխարհիս ամենայն արարածք նորոգուիլ իւրեանց փոխանակ. երկիրս հրով այրեալ նորոգեսցի, և յայլ իմն կերպարան փոխեսցի. նոյնպէս և վերին օդն՝ որ մի բարձրութենէ կուգի երբեմն երկինք, հրով զտեսցի. նմանապէս և երկինք առ հասարակ որք այլևայլ շարժմամբ զայլևայլ ինչ ցուցանեն, փոխեսցին յանյաժամէ, և յատուածել պատճառութենէ. յոր միտ գրէ առաքեալն պետրոս. (Բ. պետ. Գ. 7.) Թէ՝ ի կատարածի աշխարհիս. * երկինք տագնապաբար անցցեն ,, (այսինքն յահան թօմա ափել յայլ իմն վիճակ անց- ,, ցեն) և բնութիւնք (երկրաւորաց) հրով կիզեալ ,, լուծցին... (և վերին օդք, որք ասին) երկինք, ,, հրայրեացք լուծանիկին, և բնութիւնք (այսինքն տա- ,, բերք) հրդեհեալ հալիցին ‖. (այսինքն զտեսցին.)

Այս զորօրինակ ձորձք անհատիք յորժամ լուացեալ լինին, մաշեալք ի խտուածէ՝ և հարթեալք պայծառ երևին, և յորժամ գալարեալ կամ ծալեալ լինին, բարւոք զտեսցին. ևս և որպէս վերարկուք հնացեալք՝ փոփոխութիւն իւիք բարեկարգեալ նորոգին, սոյնպէս լինիցի երկինք և երկրի՝ ի կատարածի աշխարհի. և զի այսպիսի փոփոխութիւն սոցա ցուցանի անփոփոխութեն այնորիկ՝ որ փոփոխ զամենեսին գտոսա, զայն կամելով ցուցանել զոյս յառաջ բերեր և ասէ.

Ա՛ՀԵՆԵՏԵԱՆ ԱՐԴԵՒ ՅՈՐՅՈ ՄԱՂԵՑՒՆ. Լաւմի ասել. երկինք և երկիր և որ ի նոսա արարածք իցեն՝ ի ձեռն քում են, որպէս և կամս փոխեսցես զնոսա մինչև ի կատարած աշխարհի, յորում երևելեացն դադարեն աշխատութիւնք և մտածելք իրրև զձորձս. և ի հասանելդ նոցա ի ժամն յայն՝ յայլ իմն կերպարան փոխեսցես զերևելոսն նոցա, զոր և վերարկուի նմանեալ ցուցանել ասէլով.

ԱՐԴԵՒ ՎԵՐԱԲԱՐՈՒԱՆ ՀԵՆԵՏԵԱՆ ՊԵՏՈՍ, Ե ՀԵՆԵՏԵԱՆ. Լաւ է ինքն զերևելոսն կամ զՀնդ ամենս երկինք և երկիր՝

զբա ունին իբրև զվերարկուս , յայլ ինն որպիսութի՛ փոխեսցես . և՝ ի լինել այսր , նոքա ևս ըստ ակնաբկութեան քումմ մերկացեալ յինքեանց զայն՝ զգեցցին զայլ վերարկու գեղեցիկ քան զառաջինն . և այնուհետև սկսցին փոխոխել . որով և՝ ի փոխոխական գոլոյ գալարեսցին յանփոխոխութիւն ինչ , կամ յապականութի՛ յանապականութի՛ն . զի զրկիցեն նոքա սուգ զգեցման նոցա , և երկիրս անիծատ , աղտեպիս և՝ ի հայանել մարդոյ ըստ բոլորին յանմեղութի՛ն և յանապականութի՛ն , (որ լինի՛ ի կատարածի աշխարհիս ;) զգեցցին և նոքա զփառս ։

Այլ արժան է ասա՛ նախասել , զի որպէս և տեսանի՝ թէ պիտի՛ բաղդ վերջին՝ յարելով՝ ի դէպ ընդունդ զնոսա՝ զայլ ինն՝ ի մէջ բերել , բայց ըստ մտաց բանին տայ խմնդալ զայն՝ որ եդաւ . և նայն էր թէ ասէր . փոխեսցեն զնոսա ոչ ըստ գործոյ նոցա , այլ ըստ վերին բարկութե՛ նոցա , այսինքն ըստ երևութե՛ն նոցին ։

Գրէ եզնակ կողբացի . (՝ի գլ . հը .) թէ մարկիա՛ն նահանջ՝ ի բանիցս յայսցանէ առաստղէ՛ին՝ թէ՝ ածն օրինաց տեսեալ եմ՝ օտար ածն փառաւորագոյնս աքար գաշխարհս՝ զիւր աշխարհն քանդելոց իցէ յաբեհեան . բայց ասէ յիմարութի՛ խօսին զայս . զի եթէ . * զառաջինն կարող եղև բանիւ առնել . . . ընդ՝ դէմ ոչ առնիցէ զիւր աշխարհ նոր և գեղեցիկ քան զառաջինն . . . (ոչ նա ինքն ասաց) թէ արարիչ երկնից և երկրի՛ նոր ևս ։

Բարոյապէս առեալ՝ ասէ արդիս շնորհալի (՝ի մեկն. ՟ե . պեա . ՟ի . ւյ . ձառ . ՟ը .) * եթէ երկինք և երկիր՝ որ՝ զո՛ մեր եղեն՝ նորոգին՝ ի կատարածի , որ՝ չսե՛ւ առաւել մեք՝ եթէ զնոսին աղտեղի գործս զարանս՝ առաջինութե՛ն մերկանամք , և զնորոյն ադամայ զգենուցուք զկերպարանս մաքրութե՛ն և արդարութե՛ն ։

Աթխմեք առաջի արարեալ մարդաբնի զփոփոխակատնութե՛ն երկնի և երկրի՝ դիտել ցուցանել ըստ ասելոյ մեր՝ ի վերոյ՝ զանփոխականութե՛ն արարչի՛ նոցին . զոր և բացայայտ առաջի դնէ՝ ի վերջ սաղմոսիս՝ ասելով՝

ին. Բայց դու նոյն իսկ ես. և ամէն ոք ոչ անցանէն. որ
դէպ ծառայիդ տուր բնակեցոյն ի նմա. և վաճառի
նոցա յաւիտեան յաղագոյն։

Այդպէս միայն ոյ է գոյն նորա անփոփոխ, կամ ոչ ու
նինլն գիտութեան ամենեին. և սորա պատճառն է՝
զի ըստ փիլիսոփայից ամենայն փոփոխութեան է՝ ի կա
րողականութեան՝ ի ներգործականութեան. ուստի և ամե
նայն որ փոփոխ է՝ ի կարողականութեան առ ներգոր
ծականութեան ինչ. իսկ որ ոչ կարէ իւիք լինել՝ ի կա
րողականութեան՝ ոչ կարէ իւիք փոխել, այլ կայ միայ
անփոփոխ. և քանզի ասէ է գերամեծաւր ներգոր
ծութեան և անաւհման կատարելութեան, անշնարին է
նմա, թէ իցէ՝ ի կարողականութեան առ ներգործա
կանութեան ինչ. ապա թէ ոչ՝ լինիր անկատար. արդ
եթէ ոչ է՝ ի կարողականութեան՝ ոչ ևս փոփոխի, և
ոչ իսկ կարէ փոփոխել. ըստ այսմ. * ես եմ՝ ոչ ասէ
„ձեր, և ոչ փոփոխի՝։ (մաղաք. գ. ՛6.) և թէ * յա
„րութ չիք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր՝։
(յակ. ա. 17.) Այսպէս եթէ իւիք ոչ փոխի, ապրեմն
կայ միայ նոյն յաւիտեան կենդանին և ի ստեղծեալն.

մէջ օրոյ ասէ.

Բայց դու նոյն իսկ ես. և ամէն ոք ոչ անցանէն. կամ ա
ռեալ. ամենեքեան ի փոփոխութեան են, դու միայն ես
միշտ նոյն. և տեղութեան քո ոչ ամբք չափի, և ոչ
իւիք պակասեալ անցանեն, այլ միշտ միայ նոյն։

Ա. Պետրոսի բանս սկսեալ ի 23. համարոյ մինչև տայս
տեղի՝ առաքեալն պատուս վերածէ ի գէմս որդւոյն
ոյ, առ ի ցուցանել առքաւ թէ նա է ձշմարիտ ած.
զի գրէ այսպէս. * իսկ ցորդին ասէ. ահաւ քո ած
„յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան գա
„ւազան արքայութեան քո.... դու առ ի սկզբանէ
„զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քո երկինք
„են. նորա կորնչին և դու կաս և ամենս՝։ Եբր՝ ա.
8։ Այդ յայտ արարեալ մարգարէին զանփոփոխուիւն
ոյ, և զաւետեհնականութեան նորա, հետեւեցուցանէ

այսմ զնդրեալսն իւր և ասէ.

Այդր ծառայիդ տուր բնակեցոյն ի նմա. և վաճառի նոցա յա
ւիտեան յաղագոյն։ Այդիս ծառայից ոյ կոչէ զժողո

վուրդսն խոստացելի. զի էին որդիք աբրահամու, իսա-
հակայ և յակոբայ ծառայիցն ա̃յ. իսկ զորդիս որդւոց
նոցա կոչէ զաւակ նոցին, որք յաջորդելոց էին զկնի
նոցա. զսոցանէ խօսելով՝ վ̃ն սոցա աղաչէ զա̃ծ դու
որ ասէ անփոփոխդ ես յէութ̃ե, և կաս մնաս 'ի յա-
ւիտեան, 'ի դարձուցանելդ զժողովուրդ քո 'ի գե-
րութ̃է յերկիր իւրեանց՝ արա նոցա զայս շնորհս, զի
յաւիտեան այսինքն միշտ բնակեսցին նոքա յերկրի
անդ իւրեանց խաղաղութ̃բ, և մի ևս կրեսցեն զփո-
փոխութ̃ի ինչ տեղւոյ՝ գերութ̃բ կամ հարուածովք։
Այնպէս և զաւակի նոցա յաջողեսցի. ուր բառդ զա-
ւակ որ եզակի դնի՝ յոգնակի նշանակէ փոխանակ
զաւակաց. ըստ ոճոյ ս̃ր գրոց, որպիսի է և այն՝ որ
գրի ('ի ղուկ. ա̃. 55.) * որպէս խօսեցաւ առ հարս
,, մեր՝ աբրահամու և զաւակի նորա յաւիտեան ‖.
այսինքն զաւակաց։ Յոր միտ ասի և 'ի տէր ամենա-
կալն. * ա̃ծ աբրահամու, իսահակայ, յակոբայ, և
,, զաւակի նոցա արդարոց ‖։ Յայս միտ դնի և աստ,
յասելն. * և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի ‖.
որպէս թէ ասէր. 'ի յաճախել նոցա յորդիս կամ 'ի
բազմանալ զաւակաց նոցա՝ արա՝ զի յաջողեսցի և
նոցա գնալ 'ի բարին, և մնալ միշտ 'ի նմին։

Այս գուշակութ̃ի կատարեցաւ 'ի նորս եկեղեցի,
յորում եղեն առաքեալքն որդիք ծառայից ա̃ն, այս-
ինքն նահապետաց և մարգարէից. և նոյն իսկ եկե-
ղեցին եղև զաւակ նոցա։ Արդ յազատիլ որդւոց
մարդկան 'ի գերութ̃է սատանայի, և 'ի ժողովիլ
նոցա յերկիրս յայս այսինքն յեկեղեցի ս̃ր՝ նախ առա-
քեալք բնակեցան, և ծնան զորդիս յաջորդս մի-
մեանց. որք ըստ նոցա բնակեալ 'ի սմա՝ գտին և
գտցեն յաջողութ̃ի 'ի բարին յաւիտեան՝ այսինքն մին-
չև 'ի կատարած աշխարհի։ Իսկ ապա առ հասարակ
ամենեքին բնակեսցին 'ի վերինն սիոն. և անդ ցնծաս-
ցեն առաջի երեսացն ա̃յ յաւիտեանս յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ ՃԲ·

Շնորհակալութիւն առ Ած վասն բարերարութեան նո-
րա. և յուսադրութիւն անձին 'ի քաւել Այ զմեղս մեր,
և 'ի բժշկել զհիւանդութիւնս հոգւոյ, 'ի լնուլ՝ բա-
րութեամբ զփափաք մեր, և 'ի նորոգել զմեզ որպէս զար-
ծուի, 'ի գթալ նորա 'ի վերայ մեր. յիշելով թէ զօ-
րութիւն մեր իբրև խոտոյ է, իսկ ողորմութիւն նորա
յաւիտեան. և հուսկ ամենայնի հրաւէր առ հրեշ-
տակս և առ ամենայն արարածս օրհնելոյ զԱծ։

Սաղմոս 'ի Դաւիթ։

1 Օրհնեա անձն իմ զՏէր, և ամենայն ոսկերք իմ՝ զա-
նուն սուրբ նորա։ 2 Օրհնեա անձն իմ զՏէր. և մի
մոռանար զամենայն տուրս նորա։ 3 Որ քաւէ զմեղս քո. բժշկէ
զամենայն հիւանդութիւնս քո։ 4 Որ փրկէ յապականութենէ զկեանս
քո. պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ։ 5 Որ լնու 'ի բա-
րութենէ զցանկութիւն քո. նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն
քո։ 6 Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն զրկե-
լոց։ 7 Ցուցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի, և որդւոցն
Իսրայէլի զկամս իւր։ 8 Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ
և բազումողորմ։ 9 Ոչ իսպառ բարկանայ մեզ Տէր, և ոչ յա-
ւիտեան պահէ ոխս։ 10 Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր,
և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։ 11 Այլ որպէս
բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն
իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց։ 12 Որչափ հեռի են արե-
ւելք յարևմտից, այնպէս հեռի արար 'ի մէնջ զանօրէնութիւնս
մեր։ 13 Որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց, այնպէս
գթացաւ Տէր յերկիւղածս իւր։ 14 Զի նա գիտաց զստեղ-
ծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։ 15 Մարդոյ որպէս
խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի։
16 Հնչէ 'ի նմա հողմ, և ոչ է՝ և ոչ ևս երևի տեղի նո-

բա։ 17 Խոյց ոգբմանուն ՚ի յաւիտեան յաւիտենից ՚ի վերայ երկիրացածոյ էարդ, և արդարանուն նորա յորդոյ ինձև յորդիս։ 18 Իւր պահէն ղուխաս նորա, յիշէն ղպատուրեան նորա՝ և առնէն ընա։ 19 Ձեր յերկինս պատրաստեաց զաթոռ նորա. արայարանուն նորա ամենեցուն տէրք։ 20 Երնեցէք սէր ամենայն հրեշտակք նորա՝ հնգօրք զօրուն ձեր. որ առնէք զբան նորա ՚ի լսել ձայնի պատգամաց նորա։ 21 Երնեցէք զաթոռ ամենայն զօրուն ձեր նորա, պաշտօնեայք և արարչոյ համայ նորա։ 22 Երնեցէք զաթոռ ամենայն փորձք նորա. ընդ ամենայն տեղիս է տէրուն նորա. օրհնեա անձն իմ զաթոռ։

ՎԱՐԴԱՆԱՅ։

Աղօթս ՚ի գարնան։



ԶԵՐՈՒ ԶԱՅՍՊԻՍԻ ՄՏԵՐ ԼԻ ՚ի սաղ՚՚ վարդ՚՚ յաւելեալ լինի ՚ի վերնասգրիդ և բառս ՚ի կապաթ, որ յայլ ձեռագիրս և ՚ի տպագրեալս ոչ գտանի, և ոչ յայլսում խիռք Թարգ՚՚. և ոչ ևս յերբ՚՚. ուր դնի միայն ՚ի գաւիթ. գուցէ վրիպակաւ ինն յաւելեալ է այդ ՚ի սահաւ սաղմոս մեր։

Ո այս սաղմոս ոմանք շարայարեն ընդ նախընթացին իբրև զան ՀորհակալուԹԵ. որպես Թէ զայն զայս մեռուցեալ իցեն առ ոճ որդիքն իսրայէլի ՚ի գառնալ իւրեանց ՚ի գերուԹԵ. այսմ կարծեաց բազում են հետևողք, այլ այս մեզ ոչ երևի Հնչմարիտ. զի այդ ոչ Հայի ՚ի Հակադրակասն, այլ ՚ի յորմանաւ կասն միայն։ Իմանց ևս Թուեցաւ, Թէ այս սաղմոս իցէ սասցեալ ՚ի գաւԹայ իբրև ՀորհակալուԹիւն, յորժամ առողջացաւ ՚ի ՀիւանդուԹԵ իւրմէ. զորմէ ինչ ոչ առանդի ՚ի սբ գիրս։ Խազումբ ևս սմնդեն, Թէ զայս ասաց գաւիԹ ՚ի ծերանալ իւրում՝ յորժամ անկաւ ՚ի մանՀիձս (Ը. Թագ. ա. 1.) այսպէս դնի և ՚ի վերնագիրն ասուրաց, որում երևի Հետևիլ և վարդանայ։

Թայց որովհետև այսօրինի կարծեօք միայն ասէին, և ոչ հաստատութիւն, ոչ ե արմատն յենուլ ի սոսին, այլ որ յայտնին է՝ յայն պարտ է նայիլ ըստ որոյ այս սաղմոս՝ որ ընծայի գաւթի, ուսի գրեթէ զհինգ մասունս. առաջինն ի 1. համարէն մինչև ի 5. յորում խօսի զանս չնորհակալութեան, և յորդորանաց՝ առ ի օրհնել զնոս զանն քաջելոյ նորա զմեզ և մեր ընդ զմեզ ի բարութիւն իւրմէ։ Երկրորդն ի 6. համարոյ մինչև ի 13. ուր խօսի զգթութիւնն այ՝ զոր ցուցանեէ առ մեզ։ Երրորդն ի 14. համարոյ մինչև ի 16. ուր խօսի զգիւրաթեթևութիւն կամ զտկարութիւն մերմէ։ Չորրորդն ի 17 համարոյ մինչև ի 19. ուր խօսի զողորմութիւնն այ ի վերայ երկիւղածաց իւրոց։ Հինգերորդն ի 20. համարոյ մինչև ի 22. ուր խրատ խօսէ զամենեսին յօրհնութիւն այ։

Նչ զոր միանգամ խօսի մարգարէն ի սաղմոսի սոտ՝ այնպիսի յուսադրութիւն առաջի դնէ, մինչ դի ոմն ոք և իցէ՝ եթէ զանն սորա ի միտ առնուցու, թէ և ի յեթեն վիճակ թշուառութեան հասեալ իցէ, և և ի մեղս ծանունս ընկղմեալ՝ քաջալերի սոյնս ապաւինել վստահութիւն չոտ իբրև յամենազաթած հայր։

Յորմէ և երջանկին այն ի հռետորս ոզ գրիգոր Նազիանզացի՝ իբրև թէ քաջալերս առեալ՝ ազգի ազգի հատուածովք բանից դիւրաքանչիւր հատուած սաղմոսիս ի սոյն միտ ի թիւս արկանէ ի յուսադրական աղօթս իւր՝ (ի բանն. ծն. ի համարն 2.) որպ զինի այսոքեան ի համարն 3. յառաջ բերելով զոյնս զայս սաղմոս հաստատել թէ ձշմարիտ է զոր եդ ի համարն 2. * որպէս (ասէ) հարիւրերորդ երկրորդ ,, սաղմոսն օրհնաբան հրաշաւորական զվհատելոյս ,, սիրտ սփոփէ. և մեծ յոյս կենաց աւետարանի առ ,, փրկութենէն հանդէս. որ յաղթականն և դիւաց և ,, տարակոյս բանսարկուին. որ իբր զկնայնն տեղու- ,, նի նշան բարեբախտ պանծալի սքանչելութիւնս՝ ան- ,, խոնարհելի բարձրութիւն լուսոյ, և անպատեհելի ,, վերնոյն զօրութիւն՝ կանգնեալ է անոյեան անվա- ,, նական և անչարժական՝ ամենայնիւ յաւիտենական ,, ընդդէմ անբարի բարուց բռնութեան բնչիարայ։

,, Ոը ունի յինքեան գանձս հոգևոր օգտից՝ գիտո-
,, զաց մտաց, ընծայեալ զպարտուին մահու և զըս-
,, ծումն մեղաց, և զյոյսս երկինս յերկուս յաւել-
,, տեանս, և զնորոգումն խոստման անեղծութեանն աս-
,, զարացն, կանանս բարեհաւատս և կենդանատուս
,, զբեալս հոգւոյն այլ։

Աղաչեմք ցուցանել նաբեկացին, թէ այս սաղմոս սուրբ-
սիս մեծ տայ ամենեցուն ի զտանել զքաւութիւն մե-
ղաց և զբժշկութիւն հոգւոյ յանդիմանալ ձեռն, և զըս-
նորոգութիւն կենաց ասա և ի հանդերձեալն։ Լ ստ
սին խօսի և զբիղոր մտադիտրոս (ի Թուղթն. Ը.)
Ի սոյն իսկ ի յորդոր մատուցեալ մարգարէին ի
գէմն իւրաքանչիւր մարդոյ՝ առ անձն իւր խօսելով՝
սկիզբն առնէ բանից իւրոց, և ասէ.

Ր Բ. Ն

ա. Ո՞ (Տէր) բնակեսցէ անդն էմ վրէժ. և ո՞վ հանգուսցէ ի սուրբ
նման քո նորա։

բ. Ո՞ (Տէր) բնակեսցէ անդն էմ վրէժ. և ո՞վ հանգուսցէ ի սուրբ
տուրս նորա։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Որհնելն Հոյի ի բարութիւն օրհնեցելոյն երբակիւ
այսինքն կամ յայն զոր ունի. կամ յայն զոր առնէ.
և կամ յայն զոր ունելոց է. Եթէ Հոյի ի բարու-
թիւն յայն զոր ունի օրհնեաւն, օրհնելն նշանակէ
գովել, փառաւորել ևն. իսկ եթէ Հոյի ի բարութիւն
յայն զոր առնէ կամ զոր տայ օրհնեալն՝ նշանակէ
գոհանալ, շնորհակալ լինել ևն. Իսկ եթէ Հոյիոյ
ի բարութիւն յայն զոր ունելոց է ոք, օրհնելն նշա-
նակէ բարիս մաղթել. որպէս օրհնելն սահակայ զյա-
կոբ, և յակոբայ զյուդայ ևն. և զայսմանէ չէ ասա
բանն. այլ զաւաչնոյն և զերկրորդէն. առաջինն
Հոյի ի նեբքին բարութիւն այ. իսկ երկրորդն Հոյի

յարատաքին բարուեքն նորա· որ է բարեբարուեքեան նորին։

Լ՝սա առաջնոյն օրհնեաք զնա՛ զի յինքեան է բարի· ըստ երկրորդին օրհնեմք զնա՛ զի առ մեզ է բարի· եթէ զի բարիս ցուցանէ մեզ, և գթայ՝ի մեզ· տայ զպարգեւս իւր, և սփռէ զշնորհս ւեր· որովք ստեպիմք օրհնել զնա ոչ զի կարօտ է նա, այլ զի մեք կարօտիմք, կամ ըստ լսմբ". * ոչ եթէ առ՝ի մէնջ օրհնութեան է նմա առաւելութեի փառաց, այլ զի օրհնութիւն՝ սիրոյ է պատուղ, զսէր մեր անանձրպետ փափաքէ ունել, որ իւրովի պտղաբերել զօրհնութիւն։ Լ՝զդ արդարն, կամ՝ն և իցէ մարդ որ դառնալով առ նա՛ յարի՝ի նա, ւը երկաքանչիւր օրհնութեցդ՝ զորս եդաք՝ օրհնէ զնա· որոյ վասն և մարգարէն զերկոսին ևս առաջի դնէ յերկոսին բանիդ· յառաջնում զառաջինն, և յերկրորդում զերկրորդն։

և նախ ըստ առաջնոյն ասէ։

(Ընչեա՛ անյն էմ ղսէը· և ասիեան ասէէ էմ՝ զանառն ւեր նորա։ Լ՝առիւս անյն՝ նշանակի ատ հոգին, որպէս և այլուր ասացաք· իսկ բառիւս ասէէ՝ նշանակի մարմինն· զի ասկըն լինելով զօրաւոր մասն մարմնոյ՝ դնի փոխանակ բոլոր մարմնոյ։ Լ՝ւ թէպէտ մարմինն ոչ է յարմար օրհնելոյ զնա՛, բայց է ևս գործի օրհնելոյ սրտիւ, բերանով ւեր։ Լ՝ւստի՛ի ասաս հայելով մարգարէին դնէ օրհնել զանառնն, զի ականջօք լսելի լինի անառնն նոյ, և շրթամբք արտասանի։ Լ՝ւսկ առ հոգին խօսելով՝ ոչ դնէ զանառն, այլ զբառդ ոչ՝

յատելն՝ օրհնեա՛ անձն իմ զտէր։

Լ՝ւ զի հոգի առաւել է քան զմարմին, նախ զայն դնէ· ծանիր ասէ անձն իմ, ո՛ իցէ տէր· և ձանաչելով զնա փառաւորեա՛ զնա· մնատ նմա զօրհնութեի գալոքեի· ցնծա՛ ւը մեծ վայելչութեի նորա· օրհնեա՛ և ասա՛ դու միայն ՚ոբ, դու միայն տէր· դու միայն որ էն ՚ոձ յաւիտենական· ամենացանկալի բառակառնեի, ամենաթափաքէի ւրանալի, ամենայն բառնեի, դու միայն ամենակալ, դու միայն ամենակարող, քո է ամենայն, և՝ի ձեռն քում է ամենայն։ Լ՝ւ դու ով մարմին իմ, և ոսկերք իմ, և ամենայն մասունք մարմնոյ իմոյ օրհնեցէք զանառն նորա, զի

սուբբ է։

Ոսկերըդ մարթ է իմանալ ատ փոխաբերաբար. որպէս ասացաք այլուր՝ նաև զվարդոզութիւն Հոգւոյն՝ այսինքն է միտք և կամք, կամ խորհուրդք և մտոք. ժակք ծածկեալք իբրև ոսկերք՝ ի ներքս, և կամ գարձեալ զդայութիւնք. սոքա ևս ըստ վերոյդրելոյդ իրաւամբք յորդորին՝ ի Հոգւոյն օրհնել զանունն Ա՛ր։ Վարձեալ ոսկերօք մարթ է ըստ յարմարական մեկնութեանէ իմանալ զազգայինն, զորոց ասաց գտութիւն. * ոսկերք իմ և մարմինք իմ դուք ». (Ղ. Թգ. ժԹ. 12։) Յորժայս միտ ոչ միայն զինքն, այլև զիւրսն առ հասարակ յորդորէ մարդարէն օրհնել զնա, և փառաւոր առնել զանուն նորա։ Եւ այս ամենայն ցուցանէ զառաւելութիւն փափաքման սրտի յօրհնելն զնա. քանզի՝ ի վաւիլ սրտի յօրհնութիւս ՚ոյ՝ ցանկայ, զի և ամենայն մասունք մարմնոյ, ևս և ոսկերք փոխարկեսցին՝ ի լեզու առ՝ ի փառաւորելոյ զնա վասն ասացուածոյն բարութեանէ նորա։ Հայելով ասա մարգարէին և՝ ի բարեբարութեան ՚ոյ՝ կրկնէ զսան օրհնութեանն և ասէ։

Ընդունէ՛ անձն իմ զնէր. և ՚ի մոռանալ զամենայն փառս նորա։ Ի՞նադ օրհնել՝ որպէս յայտ է ՚ի նախընթացս բանիցդ՝ դնի ատ փոխանակ գոհանալոյ զնմ վասն բարերարութեանէ նորա՝ զոր և՝ ի մէջ բերէ բառիս փառս՝ յաւելեալ։

Ընդունէ՛ անձն իմ զնէր. և ՚ի մոռանալ զամենայն փառս նորա։ Կամի ասել. զնծայ ո՛վ անձն իմ, Հայեաց և տես թէ զինչ ինչ արար քեզ Ա՛ր, և զինչ ինչ Հանդերձեալ է առնել. և գոհացիր զնմանէ. և մի մոռանար իբրև ապերախտ՝ զտուրս նորա զամենայն, այսինքն զայն ամենայն բարիս՝ զոր տուեալ է քեզ Ա՛ր։ Ասէ բառդ ՚ոչ մոռանալ՝ դնի մանաւանդ փոխանակ յիշելոյ, որպէս թէ ասէր. յիշեա զոր միանգամ արար քեզ Ա՛ր. ըստ որում այս յիշելս լինի յորդոր գոհանալոյ. առ որ օրինակ ևս բերէ լսմբ՚ի պատմութիւնէ Տարցն ասելով. * Հայրն խրդորս ՚ի գիշերի և ,, ՚ի տունջեան գործեր և ազօթիւք յորշ ծակուցս ,, յորում արգելեալ էր, իակ երջարքն ասացին ցնա, ,, Հայր կարձեա զաշխատութիւդ, որով ծերացար.

,, ասէ , եթէ այրեսցեն զիսիդոթոս , և զմիեղն ընդ
,, օդդ սիրեսցեն զի՞նչ չնորհ է . քանզի որդին ոչ
,, եկն և վասն իմ մեռաւ . այսպէս՝ իւրովին բղխել
,, կամքն անձնիշխան՝ զվատաւոկ տառաքինութեն՝ ի
,, փառս քոյ և զդհուրեն՝ ի զմոռաւ ածել
,, զառւրսն նորս ։

Այսեփանոս սիրեցեալ՝ ի բանն որ՝ ի վերայ պատա-
մանց եկեղեցւոյ , փոխանակ բառիս գործ՝ ընթեռ-
նու սքանչելիք , և տարածէ զիւրս բանին յանցեալն
և յապագայն ասելով . * օրհնեա անձն իմ զտէր , և
,, մի մոռանար զամենայն սքանչելիսն՝ զառաքինս և
,, զայապայսն . յոր պահակեցոյ է զկամարարսն իւր՝
,, իւրով ողորմութիւն ։ Այս քանզի՝ ի առուր և՝ ի
սքանչելիս ոյ՝ որ առ մեզ՝ իբր առաջին հաստիսի սքր-
բեալն զմեզ և նորոգեալն , զնոյն նախ յառաջ բերի
մարգարէն , և ասէ ։

Ք· Ա՛ ստաւ ղիղս ոո , էթ չլէ ղանինայն հնառնդառնիս ոո ։

լ՝ մեղանչել մարդոյ՝ տպաւորի՝ ի հոգին արատ չա-
րութեն մեզոց իբրև կնիք թշնամութեն ոյ , կամ իբ-
րև դրօշակ իշխանութեն սատանայի՝ կանգնեալ ընդ-
դէմ թագաւորութեն ոյ ։ Այսպէս տպաւորի՝ ինոյն
հոգին ըստ ստորին մասին հիւանդութեի՝ ինչ տպա-
կանաբար , այսինքն է տրամադրութեի մինչ առ նոյ-
նատիպ մեզս ։ Լ՝ որդ՝ ի քաւել ոյ զմեզ՝ թէպէտ և
արատ չարութեն նորա ջնջի , բայց տրամադրութեին
այն երբեմն ոչ բառնի . զի առ այն պիտոյ է՝ ի կող-
մանէ ոյ այլ ինչ մասնաւոր աղդուութեի չնորհաց ,
և՝ ի կողմանէ մարդոյն մասնաւոր քանք ։ ❍ երկո-
ցունց զայսցանէ ևս խօսելով աստ մարգարէին
ասէ ։

Ա՛ ստաւ ղիղս ոո , էթ չլէ ղանինայն հնառնդառնիս ոո ։ Կաւ
մի ասել . նա ինքն ոյծ , որոյ ընդդէմ մեղայ՝ այնչափ
գթած է , մինչև՝ ի գառնալ քո առ նա՝ քաւէ և ձրի
թողու զմեղս քո , որչափ թուով և իցեն , որքան տե-
ակաւս տարբեր իցեն , քանի ծանր և չար իցեն . և
առնէ զքեզ՝ ի թշնամւոյ բարեկամ , յանիրաւէ ար-
դար , ի յանցաւորէ նոր , ի գերութեէ որդի , ի դա-

տապարտուելէ ժառանգ արքայութեան. և ոչ այսչափ միայն, այլև ի ցանկալի բժշկիչ ըմ ամենայնի բժշկէ զամենայն հիւանդութեանս քո՝ այսինքն զամենայն չար արարմանդ բութեանս յօժարութեան հոգւոյ քո։

Այսր է սովաւ իմանալ և գհասարակական հիւանդութեանս բոլոր մարդոյ ըստ հոգևորին՝ որք յերիս վէրածին, այսինքն ի փառասիրութեան, յընչաքաղութեան, և ի մարմնասիրութեան. ըստ այսմ. * որ ինչ ,, յաշխարհէ՝ ցանկութեան է մարմնոյ, և ցանկութեան ,, է աչաց, և ամբարտաւանութեան աստի հնոցա ‖. (ա. յովհ. բ. ւ6.) իսկ բժշկիչն յայսպիսեացդ է մանկտիր և զուսով պահիչ ի սոսին։

Ա. Յև գնեալն է՝ զի ի խօսիլ մարգարէին զքաւութեան մեղաց՝ ոչ ասէ պահման. իսկ ի խօսիլն զբժշկութեան հիւանդութեան՝ ասէ զամենայն։ Պատճառն է՝ զի յայտնացնիցէ ինքնին իմացեալ լինի այն՝ այսինքն է քաւել զամենայն մեղս. քանզի անհնարին է թէ բարձցին մեղք (յայտ է թէ մնացեալք) առանց քաւելոյ ամենայնի. զի մեղք հնորհքն քաւին. իսկ հնորհքն ոչ կարէ կալ ընդ մեզաց. ապա եթէ միացեալ մեղք ինչ, և ոչ քաւեցին ամենայնին միանգամայն, ոչ գայ հնորհքն. որով՝ և ոչ այլքն քաւին։ Այս տակայն հիւանդութեանք այսինքն տրամադրութեանք միացեալք ի մեզաց՝ կամ յօժարութեանք առ մեղս՝ կարեն ըստ մասին բառնիլ և ըստ մասին մնալ, զի թէպէտև հաղագրին հնորհացդ յերկրորդումն ներգործեսցէ, բայց ոչ հակագրին յառաջնումն։

Վոհսաբերաբար, մանաւանդ թէ յարմարաբար առեալ՝ այսու բժշկութիւն կարէ իմացեալ լինել և բարձումն տառապանաց կամ ցաւոց և կամ արամարհութեան՝ եթէ ըստ հոգւոյ իցէ և եթէ ըստ մարմնոյ՝ երկնապետութեան ինչ հիւանդութեանց։

Ա. տանօր գիտելի է, զի բառս ‖՝ որ երեքցս կրկնի յայս տաղս, որպես և յայլ բազում տաղսս, դնի փոխանակ յարաբերական բառիս ոչ, որպես թէ եդեալ էր. որ քաւէ զմեղս քո. որ փրկէ ից։ Նոյնպէս լսելի՝՝ առնու ըստ զարմացմանն, և գրէ այսպէս ։ * Ա. յս բայ (այսինքն այս բառ) ալ (կամ ս) ըստ ,, երկուց տարազաց լսի, կամ զարմացումն, և կամ

,, ընդ հակառակս հնչդնուսն. ընդ հակառակս՝ որ-
,, պէս զայն որ ասէ, ո՞ գիտաց զմիտս տեռ. և ո՞ է
,, դա որ թագուցանէ յինէն զխորհուրդս։ Ոչ զար-
,, մացումն՝ իբր զայն, ոմն խորք մեծութեանէ և խնա-
,, տութեանէ և գիտութեան ոյ. այսպէս է և այս, թէ
,, օրհնել ասացի քեզ ոմն անձն զտէր. և ոչ մնաս-
,, նալ զտուբս նորա. արդ՝ այս էն տուբքն՝ զորս
,, զմտաւ ածեալ սքանչանամ հիացմամբ ի քաւէ լըզ-
,, ուեցս քս ։ Ա՛ւ յիրաւի հիացման արժանի, մինչև
հրեշտակաց իսկ հիանալ. որոյ աղագաւ քերովբէքն
որք կային ի վէր քաւութենէն՝ անչարժ ի նոյն հայեին,
սքանչացեալք ընդ այն՝ թէ զիարդ տէր քաւութիւն
հնարէն մարդկան։
Պահել աստ լամբրոնացին և զանազանութենէ ընդ քա-
ւութիւն և ընդ թողուլն զմեղս. զքաւելն առնու փո-
խանակ անպարտ կացուցանելոյ զմեզ ի մեղաց. յայլս
հանելով զպատճառն, զորօրինակ ի սատանայ կամ
յօձն առաջին. որպէս դնէ վարդան. իսկ զթողուլն
փոխանակ ջնջելոյ զմեղս. և զայն վերածելով ի դէմն
քէմ գրէ։ Ա՛յլ վասն քաւութենէ և թողութենէ տես ի
սաղ. ծ. ։ Ա՛րդ զոյն զայս զոր ասաց մարդարէն
աստ, այլով ինն բանիւ առաջի դնէ ի յաջորդ հա-
մարն, վերածելով զբանն միանգամայն և առ հան-
դերձեալ կեանս՝ յաւէրն։

Է. Ա՛ղբէր յապաչխառնէ զինեան տ. պահէ զնէզ ողբ-
մութենէ և գթութենէ։

Ակնարք մարդոյ երբարէր Հոյլ յապաչխառնելոյ. մի՝ ըս
դոլոյն՝ որ ապականի մահուամբ. երկրորդ՝ ըստ բա-
րի գոլոյն՝ որ ապականի մեղօք, և երրորդ՝ ըստ ան-
վնաս գոլոյ՝ որ ապականի՝ այսինքն խանգարի պէս-
պէս փորձութեամբք և վշտօք, ես. և զի յայսմ ամենայ-
նի փրկէ ած գյուսացեալս իւր, վերս այսորիկ ասէ։

Ա՛ղբէր յապաչխառնէ զինեան տ. պահէ զնէզ ողբմութ-
ենէ և գթութենէ։ Ա՛յս փրկութենէ և պահպանութենէ երբարէր կա-
րէ խնացեալ լինել՝ ըստ նախապարգեալ բանիցդ՝ ի
յետոյն ակնեալ. մի՝ ըստ փրկելոյ ի պէսպէս փոր-
ձութեանց ակնեալ. մի՝ ըստ այսմ կամի ասել. թէ-
պէտև ի պէսպէս վիշտս փորձութեանց տառապիս մի

անձն իմ, քայց յուսամ չիամ. զի նա փրկիչ զքեզ և զկեանս քո ի վնասուց նորին, և պահիչ զքեզ, այսինքն չորչր պատճ զքեզ ողորմութիւբ և գթութիւբ. և ոչ թողու զքեզ ի շուառանալ ի փորձութիւնց անոտի, այլ մանաւանդ պահէ զքեզ երջանիկ ի մէջ նոցին։

Երկրորդ՝ ըստ փրկչին ի մեզաց. և ըստ այսմ կամի ասել. զի որամեալ ես ամենայն անձն իմ, և ընդկերը է քեզ տարակուսանօք մարդի. եթէ գերեալ ես՝ ի մեղաց, կարգ առ ած, և ապաւինեա յողորմութիւն նորա. նա փրկիչ զկեանս քո յապականութենէ անտի մեղաց. և ոչ այսչափ միայն, այլ և պահիչ զքեզ՝ այսինքն ղարդարն զքեզ չնորհօք ողորմութենէ և գթութենէ իւրոյ։

Երրորդ՝ ըստ փրկչին ի կորստենէն կամ ի մահուանէ. և ըստ այսմ կամի ասել. ուրախ լեր անձն իմ, զի որ արարչն զքեզ, և եդ վճիռ մահու ի վերայ քո, նա ինքն փրկիչ զքեզ ի մահուանէ անտի. զի ոչ թողուս զքեզ մնալ ի մահու անդ, այլ յարուցանէ զքեզ. ևս և փրկիչ զքեզ ի յաւիտենական մահուանէ, և վերածէ զքեզ ի յաւիտենական կեանս. և անդ պահիչ զքեզ այսինքն վարձատուր փառաւք ոչ ըստ արժանաւորութենէ քո, այլ ըստ ողորմութենէ և ըստ գթութենէ իւրոյ։

Լայլ արժան է քննել զայն՝ զի ոչ ասէ մարգարէն փրկիչ զքեզ, այլ զկեանս քո. և այս ևս թէպէտ ի նոյն հայի, բայց քանզի մարդ ի կենանն իւր ունի զգոլ, ըստ փրկութենէ կենաց չափի և փրկութենէ իւր. ըստ որում ի շուառ կենաց նորոգութիւն ինն վերա.

ծի յերջանիկ կեանս։

Պիտի արժան է և զայն՝ զի մարգարէն փոխանակ ասելոյ պաշտպանիչ զքեզ կամ զարդարիչ զքեզ կամ փառաւորիչ, դնէ պահէ. և այս՝ վասն առաւելութենէ իրին. վասն զի պահելն է բոլորական ինչ. որով և ցուցանի ըստ բոլորին չրջապատեալ առ ի պաշտպանել և առ ի զարդարել, և առաւել ևս առ ի փառաւորել յաբեպայութենէ յաղթանակաւ մեծաւ ի գործոց բարեաց. զի որպէս գրէ Դաւիթ ի մէկն. (մատ. գլ. է.) * աբեպայութինն այ...ոլ է բանից

,, պատկ, այլ գործոց յայլեմանակ ‖. իսկ Թէ յորմէմ
իրլ լինիցի այսպիսեաք պատկէր՝ յայտ առնէ յաջորդ
բանիւն ասելով.

Ե. 11 ընո՞ւ ի բաթուրէ ղշանխուրէ ֆո. Նորոգեսցի որպէս
աբծոսոյ մանկունէ ֆո.

Չանկութիւ իմացեալ լինի աստ բաղձանք մարդոյ՝ որ
ի կրկին. այսինքն բանական և զգայական. բանա-
կանն՝ զոր և կոչեմք փափաք, ի բերումն կամոյ
մարդոյ առ բարին ըմբռնեալ մտօք. իսկ զգայականն՝
որ տիրապէս կոչի ցանկութիւն, ի բերումն զգայական
բաղձանաց առ բարին ըմբռնեալ զգայութիւք. ‖. Այս
զգայական ցանկութիւն որովհետև չինքեան ե չափա-
ւոր, ի չարին ի չափաւոր առարկայ իւր՝ լցեալ լի-
նի նուազ, որպէս ցանկութիւ ուտելոյ ի չարին յոյ-
աեչիս՝ լցեալ լինի նուազ. ‖ Այլոյ բանական ցանկու-
թիւնն գոլով յանչափս ձգտեալ՝ չափաւոր առար-
կայիւք ոչ կարէ լցեալ լինել. և այս իսկ ե պատ-
ճառն, զի ի ձգտել նորա յայս կամ յայն, և ի լիա-
նալ զգայական ցանկութենէ այսու կամ այնու, զոր-
օրինակ տեսութիւ, լսողութիւ, ևն. ինքն ոչ լիանա-
լով՝ մնայ ի տատանումն. և թողու նաև զգայական
ցանկութիւնն տատանեալս, և իբրև Թէ ոչ լիացեալս.
‖ Զոր յայտ ե Թէ աստ քանն է մանաւանդ զբանաւոր
ցանկութիւ քան զգայականն.

‖ Այլոյ գիտելի է և այ, զի լուսեղէն բանաւոր ցանկութիւ
հրեշտակի կարէ լինել. մի՝ անկատարապէս, կամ
ըստ մասին. և մի և այ՝ կատարեալապէս կամ ըստ բո-
լորին. անկատարապէս կարէ լինել յաչխարհի աստ
պէսպէս բարեաւք՝ եղիւ հոգևորաւք, որպէս իմաստու-
թիւ, առաքինութիւ, ևն. և եղիւ մարմնաւորաւք, որ-
պէս ազատութիւ, հանդուստ ևն. ‖ Իսկ կատարեա-
պէս անշնարին է լինել այսմ յաչխարհի աստ, ցոր-
չափ կեանք ի մարմնի. զի այն բարին զոր կարծեմք
լիացուցիչ լինել փափաքանաց, կամ է չափաւոր, և
կամ անչափ. եթէ իցէ չափաւոր, որպէս ասացաք՝
այնու ոչ կարէ փափաք մեր կատարեալապէս լիանալ,
այլ միայն անկատարապէս. իսկ եթէ իցէ անչափ բա-
րի, այն ինքն է աճ, ոչ կարելով մեր ի մարմնի աստ

ժառանգել զնա յինքեան, այլ միայն յուսով, փափաք մեր ոչ կարէ կատարելապէս լիանալ նուաճ. ապա եթէ հասցուք ի ժառանգութէն նորա՝ յայնժամ ոչ միայն կատարելապէս լնասցի, այլև զեղցի և ։ Այսպէս ամենայն Հայելով ասէ ։

Ո ընդ ի բարութիւնն զգանխութիւն ։ Յատանօր եթէ լինուլն անկատարապէս առցի, այս ասացուած իմացեալ լինի ըստ աստի կենաց. և միտ բանին ի հասարակի խօսելով լինի այս. ած զբարի փափաք ծառայից իւրոց ոչ առնէ անտես, այլ ընդ զայն բարութիւնն ըստ տանելոյ վճռակի նոցին յաշխարհի աստ ։ Աստի առ վինն դիտել մարգարէն քաջալերել զանձն իւր. որպէս թէ ասէր. զի՞ է անձն իմ՝ զի տատանեալ կաս. զինչ կալիս, յինչ փափաքիս. կալ զփափաք քո իբրև զանօթ դատարկ առաջի նշ, և նա ընդ զայն ի բարութիւնն անտի՝ որում ցանկաս. կամ ընդ այնպիսի իւրոյ՝ զոր նա բարի տեսանէ քեզ ։

Լսակ եթէ ընդուն առեալ լիցի կատարելապէս, այս ասացուած Հայի ի լուսնի բարւոյ հանդերձեալ կեանց. յոր միտ կամի ասել. քաջալերեաց անձն իմ, զի ի փրկել նշ յապականութէն ակնանս քո, և ի պահակէն զքեզ ողորմութէ, ոչ ևս տարուբերեալ տատանեսցի փափաք քո յայս կամ յայն. զի նա ինքն յանսասխան բարութէն անտի իւրմէ ունի ընդուել զայն ըստ ասինայնի, մինչև ասել քեզ. ահա լնացայ և շատացայ. (տես զայսմանէ և ի տաղ. ի՛ա. 2. և կէ. 6 ։)

Այլ զի յայսպիսի լնութէն ըստ աստի կենաց զեղուն նորոգութէն ինչ ի բոլոր մարդն զայն ևս կամելով յայտ առնել մարգարէին, յարել զկնի և ասէ ։

Արթնեսցի որպէս արծաթոյ խնդրել ։ Հազուագիւտ բան զուտ ինչ ասէն զայսմ թուղնոյ. ոմանք թէ ոչ երբեք ծերանայ, և թէ ծերութէն ոչ մեռանի, այլ միշտ մնայ յառողջութէ, և մեռանի միայն քաղցու. վասն զի ասէն՝ կուտ նորա այնչափ կորնայ՝ մինչև ոչ ևս կարել նմա ուտել ինչ, և այնպէս սովամահ լինի։ Հոր յաւելուն ոմանք և զայս, թէ տեսեալ նորա զայսպիսի կորացումն կացոյ իւրոյ՝ հարկանէ զայն զքարի, և ի բաց թողու, և դեռաբոյս կացուն նորոգի։ Այլք ևս առասպելէն, թէ արծուին թռուց

ցեալ մեռ ի կամաւրս հրոյ փետրակիզ լինի. և ասպ նորոգ փետուրս զգենու. և այլք, Թէ ի մերձել նո- բա յարև՝ և ի կիզանիլ փետրոցն՝ արկանէ զնուքն ի ջուր՝ և փետուրքն նորոգ բուսանին,

Ի սմա սոցին և վանական վարդապետ յառաջ բերեալ զիարծիս ոմանց ասէ (ի մեկն. յոբ. գլ. լԹ.) ասելն Թէ արծիւն. * վերանայ բարձրանալիչ դիտով մերձ ,, յարփիւն. և անտուստ իջեալ լուանի յաղբերս և ,, մանկանայ. և տէրն մեր եկեալ արար նորոգուիմն ,, բնութեան, ըստ մարգարէին. նորոգեսցի որպէս ,, արծուոյ մանկութիւն քո ||: Ոմանց գրէ և գիտգր ,, վարդապետ ի մեկն. եսայ. * զի Թէ ասէ ար- ,, ծուեաց այսպիսի ինչ նորոգութիւն լինիցի, որպէս ,, ասէն մերձ կալ արեգական, և իջեալ լուանալ ,, յաղբիւրս և նորոգիլ. այսպէս բնութիւն մերձե- ,, ցեալ ի քո և լուացեալ յաւազանն ||: Իսկ լամբ" արծուոյ իմանայ ասա զանգղ, և ասէ Թէ ըստ վե- ցօրեիցն բարսղն անգեղք * ծերացեալ՝ ի ձագուցն ,, կերակրին, և դարձեալ նորոգին ||:

Այլ հասարակաց կարծիք է Թէ արծուիք քաղաւմ անգամ՝ ի կենդանութենէ իւրեանց, և ըստ ոմանց յիւ- րաքանչիւր ամի փոփոխեն զփետուրս իւրեանց առա- ւել քան զայլ թռչունս, և նորաբոյս փետրովք զար- դարին, և լինին այնպիսի՝ որպիսի էին յառաջ հա- սակի. յայս միտ խօսի և աստ մարգարէն ցանձն իւր՝ յասելն. * Նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն ,, քո ||:

Այս բան եթէ հայիցի ի նորոգութիւն աստի կենաց՝ մեկնի այսպէս. մի երկնչիր ահ անձն իմ, Թէ ի վիշաս և ի փորձութիւս մանչիս. զի ի ծնորհացն նոյ նորոգես- ցիս, և գարձցիս իբրև զաղդդ մանուկ. որպէս լինի արծուոյ. և այն առդգութիւն քո միասցէ անհաւշամ՝ Ա- ստ ըստ այսմ՝ բառդ Տանուէ՝ ոչ գնի ըստ գոլոյ, այլ ըստ լինելոյ. զի ոչ կամի ասել՝ Թէ այն մանկու- թիւն՝ որ գոյ ի քեզ, ըստ նորոգութիւն արծուոյ նորո- գեսցի, այլ Թէ կեանք քո նորոգեսցի և գարձցի գրե- Թէ ի մանկութիւն. որով և դու լինիցիս առդգացեալ և նորոգեալ ըստ նորոգութիւն արծուոյ. կամ Թէ նո- րոգութիւն իմն զգեցցիս զմանկութիւն՝ որպէս զգենու

արծուին. և կամ նորոգեսցիս, և զօրասցիս և լինիցիս իբրև մանուկ՝ հանդոյն արծուոյ զօրաւոր և բարձրաթռիչ՝ զարդարեալ առաքինութիւք. որով և եղիցիս նորոգ հաստատ՝ ի պատկեր ոյ. զի որպէս ասէ բարսեղ. (՝ի մեկն. մարկ. գլ. ժ՟ը.) * ըստ առաջին քրիստոնէիցն պատկերանան վարք ‖. առ որ և յորդոր լինի ասելով. * փոխանակ այնոցիկ (այսինքն փոխանակ նախնեացն հնութենից և մեղաց) ստացցուք զառաքինութիւն (՝ի հինն զհացուցիչս պատկերին ոյ ‖.

Իսկ եթէ այս բան հայիցի՝ ի նորոգութիւն հանդերձելոյն, յայնժամ դնի իբրև պատասխանի այնմ՝ զոր մարթ էր առարկել, թէ զիարդ փրկիչ ած յատականութիւն զանձն իմ՝ որովհետև տեսանեմ զի ահա ապականի և՝ ի հող լուծանի. առ որ ասէ. թէպէտև՝ ի հող լուծանի մարմինդ, բայց ած հանդերձեալ և յարուցանել զնա յատյդ հասակի, և առնել զբեզ իբրև զարծուի նորաթեւութիւն զարդարեալ՝ ոչ ապականացու զարդուք, այլ անապականաւոր. և՝ ընդ այս չէ պարտ տարակուսիլ. զի որպէս գրէ յիշատակելի բարսեղ. (մարկ. ժ՟ը.) եթէ * զդժուարինն արար, զի յոչնչից ստեղծ զայս ամենայն, զիարդ զեղեալն և զապականեալն ոչ կարասցէ (յարուցանել) նորոգել վերստին ‖: Զայս հայի և մեկնաբանութիւն քաղդ՟. յասելն. * որ յադեցուսցէ բարեօք զաւուրս ծերութեան քո, և՝ ի հանդերձեալ աշխարհի նորոգեսցէ զքո որպէս զարծուոյ զմանկութիւնդ քո ‖:

Զայս միտ առեալ՝ կարէր մարգարէն և յայլոց կէնդանեացդ բերել օրինակ՝ մանաւանդ՝ ի թիթառանց, որք՝ ի ագեդութիւնէ յամրաշարժ որդանց վերառեալ լինին՝ ի գեղեցկութիւնն թևաւորաց. բայց զարթնուն՝ ի մէջ բերելով կամի յայտ առնել նմանութիւնն հինն և զկատարելութիւն յարուցելոցն՝ ըստ բարձրութեան, և զօրութեան, և մեծութեան և և երկարութեան յաւիտենական կենացն։

Բարեպաշտս այսու տարաշուշիւ ցուցանի և այլ կատաբելութիւն անձին արդարոյ և արծուոյ. զի արծիւն ոչ ուտէ զդէշ, ինքն որսայ և ուտէ, բայց ոչ զամենայն, այլ զընտիր մասունս. իսկ զայլոց որսացեալսն՝ եթէ մեռեալ իցեն՝ ոչ ուտէ։ Յերկուս ձագս բերէ.

զորս կերակրէ ընդ ընկերի իւրում. իբր զի Հայրն
և Մայրն միայն կերակրեն զձագսն. և 'ի ծերանալն
կերակրին 'ի ձագուցն: Այնպէս արդարն ոչ ուտէ
զդէՀ մեղաց. սպանանէ զախտս. և զարդիւնս աշխա-
տութե իւրոյ ուտէ. ծնանի զերկուս ձուս՝ այսինքն
զերկին յոյս, մի՝ ը՟ աստի կենաց յընդունիլ զշնորհս
յայ՟ և զողորմութի, և մի ևս ըստ Հանդերձելոյն՝ 'ի
ժառանգել զյաւիտենական կեանս զի ձուն է ապա-
ցոյց յուսոյ յարութե: Զայս յոյս սնուցանեն միտք
և կամք 'ի խորհելն և 'ի կամելն զբարին: Իսկ եթէ
ըստ մարդկային տկարութե վտանգեսցի արդարն մե-
ղօք՝ դիմէ յողորմութին այ՟, և Նորոգի Հանգոյն ար-
ծուոյ իբրև զառաջինն:

Այլաբանորէն, ելից ա՟ծ զցանկութի մարդկայինս
բնութե՝ միաւորելով ընդ Նմա. որով և Նորոգեաց
զնա ըստ Նորոգութե արծուոյ 'ի ջուր մկրտութե և
'ի Հուր ապաշխարութե 'ի ձեռն սրբարար շնորհաց,
և արար արևաՀայեաց և բարձրանկատս իբրև զար-
ծուիս: Յառաջ քան զայս Նորոգութի բազումք քաղ-
ցեալ երջանիկ կենաց՝ ցանկացան լնուլ զփափաք իւ-
րեանց, և ոչ կարացին. բազումք ևս վաստակեցան
գտանել՝ զոր խնդրէին, և ոչ Հասին. և այլք բա-
զումք՝ որք ընտիրքն էին, որպէս փիլիսոփայք, ձկտե-
ցան Հասիլ 'ի բարձունս, բայց ոչ զօրեցին. իսկ որք
ակն կալեալ սպասեցին գալստեան փրկչին, Նոքա
գտան Հաղորդք, և Նորոգութե իմն արծուացան:
Յայս Հայի այն՝ զոր ասէ Եսայի. (Խ. 30. 31.)
* Քաղցիցեն երիտասարդք և վաստակեսցին ման-
,, կունք, և ընտիրք անզօրք եղիցին. բայց որք սպա-
,, սեն այ՟՝ Նորոգեսցին զօրութե. Նորափետուր զար-
,, դարեսցին իբրև զարծուիս. ընթասցին և մի վաս-
,, տակեսցին, գնասցեն, և մի քաղցիցեն ‖. զի թէ
ընթասցին, այսինքն կամեսցին, և ըստ կամելոյն
փութասցին, տէր ինքնին յաջողեսցէ Նց. որպէս
յորդորէ սարգիս շնորՀալի. ('ի մեկն. ա. պետ. դ.
22. ճառ. ը. յորդ.) ասելով. * միայն կամեա՛ց դու
,, մարդ այ՟, միայն սիրեա՛. միայն փափաքեա՛. միայն
,, փութով զՀետ եկ. և այլն ամենայն 'ի Նմանէ և
,, Նորա տնօրինի ‖. և այս՝ բազում իրօք, եթէ օգ-

Նախանձել թէ , և եթէ պաշտպանութեան ։

Զայլ ինն այլաբանական միտս մեկնի այս բան Հայելով ի հին օրէնս . զոր առանց ապականելոյ նորոգ գեաց տէրն մեր ըստ նորոգութեան արծուոյ . առացի առանց ապականելոյ . զի ոչ եթէ եղծեաց զայն , այլ լցացուցանելով նորափետուր զարդարեաց , և զտուեւրագրութեան նորին ի կենդանագրութեան վերածեաց ի ձեռն նորոյս ։ Լուսոյ խօսելով զայսմանէ ներբեւս ընորհալի (ի մեկն . մատ . գլ . ե .) գրէ այսպէս . * որպէս զպատկեր թագաւորի նախ կապարով ,, ծրագրէ արուեստաւորն ի տախտակի և ապա ծի- ,, րանափառ զարդու շքեղացուցանէ . բայց վերջին ,, յօրինուածոյն զառաջին ծրագրութեն կապարին ոչ ,, ի բաց բառնայ , այլ ընկղմեալ ծածկէ զսևագիրն ոչ ,, զանազան պայծառակերպութեամբն . այսպէս և բը- ,, նութիւն նախագիրն քո ոչ եկն լուծանել զեե- ,, րութեն տխրատեսիլ սատերին , այլ ընդ պայծառ ,, և կատարեալ օրինօքն ։ Լուսոյ աւարտ տայ մարգարէն առաջին մասին սաղմոսիս . և սկիզբն առ- նէ երկրորդ մասին . յորում Ջառէ զողորմածութեն ՚ոյ մինչ ի համարն . 13 . և նախ ասէ ։

Ղ. Ասէ ողորմութիւն պէր . և իբառանս ամենայն ըստ- ելոյ ։

Արդարն տառապանօք թշուառանայ մարդս . մի՛ յոյս- մանել՝ զոր յիւրմէ ունի , կամ մանաւանդ յիւրմէ բուս- ուցանել իբրև զփուշս յանիծեալ երկիր . որպիսի են բազմագիմի ներքին փորձանք՝ եթէ՛ ըստ հոգւոյ իցէ , և եթէ ըստ մարմնոյ . և մի և՝ յայսմանէ՝ զոր յայ- լոց կրե , որպիսի են նախատինք , զրպարտութիւնք , գանք , գերութիւնք , գողութիւնք , [illegible] ։ Այս քանզի ըստ առաջնոյն կարօտի ողորմութեն ՚ոյ և ըստ երկրոր- դին իրաւանց նորա , վասն որոյ ասէ ։

Ասէն ողորմութիւն պէր . և իբառանս ամենայն ըրիելոյ ։ Այս- ի ասել . ՚ած՝ որ ստեղծ զմարդիկ , ոչ է ի բաց թո- ղեալ զնոսա , և ոչ երբեք թողու ի խնամից իւրոց՝ այլ հայեցեալ ի նոսա , և տեսեալ զվիշտս նոցա՝ զոր կրեն ի տիսրութիւնէ բնութեն իւրեանց , ցուցա- նէ նոցա զգործս ողորմութեան իւրոյ՝ առ ի վերա-

ցուցանել նոցա. իսկ որք արտաքուստ կրեն զզրկանս 'ի բռնութ̃է հակառակորդաց, իրաւունս առնէ նոցա, փրկելով զնոսա 'ի զրկողութ̃է նոցին. որպէս արար բազում անգամ, մանաւանդ առ ազգս մարդկան՝ ազատելով զնոսա 'ի զրկողէ նոցին, այսինքն 'ի բռնակալութ̃է սատանայի ։ Եւ զի զայս ողորմութ̃ի և զիրաւունս յայտնեաց ա̃ծ յօրէնս իւր, վ̃ն այսորիկ յաւելու մարգարէն և ասէ ։

Է. Ցոյց ետ ճանապարհս իւր Մովսէսի. և որդւոց իսրայէլի կամս իւր ։

Ճանապարհաւ իմացեալ լինի աստ նախ՝ նախախնամութ̃ին ա̃յ, ընդ որ իբր ընդ ճանապարհ գնայ ա̃ծ. երկրորդ իմացեալ լինի օրէնքն ա̃յ և բանք նորա. զի 'ի նմա յայտնեալ է ա̃ծ զայն ինչ, ընդ որ իբր ընդ ճանապարհ գնալով ժամանեմք առ նա. կամ որով կատարեմք զկամս նորա. յոր միտ զնոյն զայն՝ կամք ես կոչէ. յորում և յայտնի տեսանի ողորմութ̃ին ա̃յ և իրաւունք նորա. և զի զայս յայտնեաց նախ Մովսէսի և իսրայէլի, վասն այսորիկ ասէ ։

Ցոյց ետ ճանապարհս իւր Մովսէսի. և որդւոց իսրայէլի կամս իւր ։ Այս բան երրակի յարի 'ի նախընթացն. մի՝ իբրև հաստատութ̃ի. յոր միտ կամի ասել. ճշմարիտ է այն՝ զոր ասացի, թէ * առնէ ողորմութ̃իս
,, տր̃||. վասն զի այս է ճանապարհ նախախնամութ̃ե նորա, և կամք նորուն. ըստ որում և ցոյց Մովսէսի և որդւոցն իսրայէլի՝ յասելն. * Ես եմ տէր՝ որ
,, առնեմ զիրաւունս և զողորմութ̃ի և զարդարութ̃ի
,, 'ի վերայ երկրի, և 'ի նոյնս են կամք իմ||. (Երեմ. թ̃. 24.) և թէ * առնեմ ողորմութիւն 'ի հազար
,, ազգս սիրելեաց իմոց և որոց պահիցեն զհրամանս
,, իմ||. և թէ * հատուցանեմ (իրաւամբք) զմեղս
,, հարանց որդւոց իւրեանց (հետևողաց նոցա) յե-
,, րիս և 'ի չորս ազգս ատելեաց իմոց||. (ե̃. օրին. է. 10. և ելից. լ̃դ. 7։)

Երկրորդ՝ իբրև յարացոյց. յոր միտ կամի ասել. արդարև առնէ ա̃ծ ողորմութ̃ի և իրաւունս զրկելոց. վասն զի ահա յորժամ զրկեալ տառապէին որդիքն իսրայէլի յեգիպտոս, ա̃ծ ողորմեցաւ նոցա, և ցոյց

մովսէսի զՃանապարհս՝ ասելով, այսպէս և այնպէս արա․ և հանեալ զիսրայէլացիս յեգիպտոսէ ձեռամբ նորա՝ եցոյց նոցա զկամս իւր։ Եւս և եցոյց դարձեալ զՃանապարհ իւր յամպն և ՚ի ծուխ, և զկամս իւր ՚ի բազում իրս զորս գործեաց յանապատի ձեռամբ մովսէսի։

Երրորդ՝ իբրև յայտարարութի այնր, զոր գիտէր մարգարէն ՚ի նախընթաց համարն՝ ՚ի կամիլն ցուցանել, թէ ա͞ծ ոչ է ՚ի բաց թողեալ զազգ մարդկան, այլ խնամէ զնոսա, և ցուցանէ նոցա զՃանապարհս իւր․ որպէս և արարն իսկ ՚ի ձեռն մովսէսի։

Ուր արժան է գիտել, զի ՚ի մեղանչել մարդկութես ՚ի սկզբան անդ՝ կրեաց զրկանք մեծ ՚ի սատանայէ․ զի թելադրութեամբ նորա մոլորեալ՝ զրկեցաւ ՚ի սկզբնական արդարութէ, և ՚ի շնորհաց, ևս և ՚ի դրախտէ անտի․ և մոլորեալ յուղիղ Ճանապարհէ՝ գնայր ընդդէմ կամացն ա͞յ․ և զի ա͞ծ առնէ զիրաւունս զրկելոց, տեսեալ զազգ մարդկան մոլորեալ՝ եցոյց նոցա զՃանապարհս իւր, և հայեցեալ ՚ի գընացս նոցա հակառակ կամաց իւրոց՝ եցոյց նոցա և զկամս իւր․ ըստ առաջնոյն արար զողորմութի, և ըստ երկրորդին արար զիրաւունս․ զի մոլորելոց Ճանապարհ ցուցանել՝ է գործ ողորմութե․ իսկ ՚ի հակառակողաց՝ պահանջել նուաճութի կամաց կմ հնազանդութի՝ է գործ իրաւանց։

Եւ թէպէտ մարգարէն աստանօր առ մովսէս և առ որդիսն իսրայէլի հայելով խօսի յասելն․ * եցոյց ա͞ծ „ զՃանապարհս իւր մովսէսի ||․ բայց ըստ դիտելոյն՝ է նոքօք իմացեալ լինին և այլ ամենայն ազգք․ վասն զի ա͞ծ նոցա յայտնելով՝ նոքիմբք և այլոց կամեցաւ յայտնել․ մանաւանդ զի այն յայտնութի նորա ըստ բնական օրինացն առ ամենեսին հայի, ըստ որում յամենեսին տպաւորեալ է ա͞ծ զայն օրէնսն ՚ի բնէ․ և զոր տպաւորեալն է՝ զնոյն միշտ լուսաւոր պահէ։ Իսկ ըստ ծիսական օրինաց՝ հայի դարձեալ առ ամենեսին՝ ոչ ՚ի պահպանութի, այլ ՚ի նկարագրութի այնր՝ որ հանդերձեալ էր լինել ՚ի փրկիչ նոցա, և ՚ի լուսաւորիլ շնորհօք։

Եամբ՟ փոխանակ բառիս եդոյց՝ ընթեռնու ծանոյց․

համաձայն եբր" և զայս վերածելով 'ի վիճակ նոր օրինաց, գրէ այսպէս. * զճանապարհն զոր մովսէ- ,, սի ծանոյց ա̃ծ, յայնժամ (զնոյն ճանապարհն) 'ի ,, հեղուլ զհոգի իւր 'ի վերայ ամենայն մարմնոյ. յա- ,, մենեցունց սիրտս լուսաւորեալ պայծառացոյց՝ և ,, արար զամենեսեան ա̃ծատես ճառագայթիւք հոգ- ,, ւոյն, 'ի հայելն յերկինս 'ի մարմին իւր‖. Նաւ զի զայս ամենայն արար և առնէ ա̃ծ վասն լինելոյ իւ- րոյ գթած և ողորմած՝ վասն այսորիկ յարէ զկնի մարգարէն և ասէ.

Ը. Գթած ողորմած է Տէր. երկայնամիտ և բազումողորմ։

Այսքիկ անուանք միանգամայն առեալք՝ իբր յատուկ ինչ ստորոգութիւնք ընծային ա̃յ. քանզի և 'ի տեսանել մովսէսի զա̃ծ՝ զսոյն ստորոգեաց աղաղակելով. * տէր ա̃ծ գթած և ողորմած, երկայնամիտ ,, բազումողորմ և ճշմարիտ‖. (ելից. լդ. 6.) զսոյն ասաց և յովնան մարգարէ. զոր և սաղմոսերգուն 'ի մջ բերէ. ('ի սաղ. ձե. 15.) յասելն. * այլ դու , տէր ա̃ծ իմ գթած ես և ողորմած, երկայնամիտ, ', բազումողորմ և ճշմարիտ ‖. և ահա զսոյն զայս ' կրկնէ և աստանօր ասելով.

Գթած ողորմած է Տէր. երկայնամիտ և բազումողորմ։ Գթած ասելով կամի ցուցանել, թէ ա̃ծ ծնողական և գորովական գութ ունի 'ի վերայ ազգի մարդկան. քանզի բառդ գթած՝ սկզբնաբար 'ի սոյն ակնարկէ, մանաւանդ եբրայական բառս ռախում՝ որ ցուցանէ զգորովականն.

Նաւ զի որ զայսպիսի գութ ունի 'ի վերայ ուրուք, ոչ կարէ ոչ ողորմիլ նմա, վ̃ս այսորիկ յաւելու և զողորմածն. զորմէ գիտելի է՝ զի այս բառ կրկնակի ստորոգի զէնթակայէ. մի՝ ըստ ունակութե̃, և մի ևս՝ ըստ ներգործութե̃. ըստ ունակութե̃, ը̃ այսմ զի որ ունի յինքեան զունակութի ողորմութե̃, ասի ողորմած. ըստ ներգործութե̃ ը̃ այսմ, զի որ առնէ զներգործութի ողորմութե̃, նոյնպէս և նա ասի ողորմած. արդ ա̃ծ որպէս անսահմանաբար ունելով յինքեան զողորմութի ասի յանսահմանս ողորմած,

սոյնպէս և յայնմ անսահման ողորմութ՟է ցուցանելով զողորմութի իւր՝ նովին ևս ասի յանսահմանս ողորմած. վ՟ զի ոչ սահմանաւորի ողորմութ՟ի նորա 'ի կողմանէ տուողին, այլ միայն 'ի կողմանէ ընդունողին. և ոչ ևս պարագրի իւիք որպէս մերս. զի մեք 'ի ցուցանելն այլում զողորմութ՟ի 'ի մերոյս պակասիմք, և 'ի տեղի այնր ընդունիմք ինչ փոխարէն որով և պարագրիմք. իսկ ա՟ծ 'ի ցուցանելն մեզ զողորմութ՟ի՝ ոչ յիւրոյն պակասի, և ոչ 'ի մէնջ զփոխարէնն պահանջէ՝ այլ մանաւանդ կրկին փոխարինէ. իբր զի եթէ ճշմարտութ՟բ ընդունիցիմք զողորմութ՟ի նորա, վ՟ այնր կրկին ևս տայ: Եւ եթէ տեսցէ զմեզ խիստս, կամ մերժօղս ողորմութ՟ե իւրոյ, սպասէ և երկայնամիտ լինի. և առ այս յաւելու մարգարէն զերկայնամիտն:

Արդ երկայնամիտ ասի նախ նա՝ որ ակնունելով իմիք բարւոյ՝ ոչ ձանձրանայ սպասել այնմ երկար ժամանակ: Երկրորդ՝ երկայնամիտ ասի նա՝ որ երկարէ 'ի համբերութ՟ե, կամ երկար ժամանակաւ տանի իմիք առանց բարկութ՟ե. ըստ այսոցիկ դնի աստ երկայնամիտն. իսկ թէ զիա՞րդ, ծանիր, զի ա՟ծ ակնունելով ուղղութ՟ե մարդկան՝ սպասէ այնմ երկար ժամանակ, տանի արհամարհանաց նոցա, համբերէ ստահակութ՟եց նոցին, անտես առնէ զյիմարական անհոգութ՟ի նոցուն. ոչ բարկանայ, ոչ թողու, ոչ մերժէ, ոչ դատապարտէ, այլ պէսպէս իրօք կոչէ զնոսա, մինչև հասցէ՝ որում փափաքի. որպէս առնէ գթալից մայրն առ սիրելի զաւակ իւր. զի թէ և տեսցէ զնա ապերախտեալ առ ինքն, ոչ թողու, այլ առնէ զամենայն զոր կարէ, ակնունելով շահել զսիրտ նո՟, և վերածել 'ի գութ իւր:

